ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
(հոդվածների ժողովածու)

SCIENTIFIC READINGS
(*collection of articles*)

НАУЧНЫЕ ЧТЕНИЯ
(*сборник статей*)

Հասարակական գիտություններ
Социальные науки Social Sciences

Ստեփանակերտ 2022

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Գ 602

Արցախի պետական համալսարանի՝
44-օրյա պատերազմում նահատակված ուսանող-ազատամարտիկների հիշատակին նվիրված ուսանողական գիտաժողովի նյութեր

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտաժողովի խորհուրդ
Նախագահ՝ *Սարգսյան Արմեն – ԱրՊՀ ռեկտոր*
Փոխնախագահ՝ *Ավանեսյան Վալերի- գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր*
Փոխնախագահ՝ *Յարամիշյան Վիտյա- Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր*
Պատասխանատու քարտուղար՝
Անդամներ՝ *Սահակյան Գեորգի – ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր*
Այդինյան Շահեն – Մանկավարժության և սպորտ ֆակուլտետի դեկան
Մանգասարյան Ռուզաննա – Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան
Մարգարյան Լուսինե – Բանասիրական ֆակուլտետի դեկան
Միրզոյան Վոլոդյա – Բնագիտական ֆակուլտետի դեկան
Խաչատրյան Արմինե – Պատմության և իրավագիտության ֆակուլտետի դեկան
Ներսեսյան Լուիզա – ԱրՊՀ իրավաբան
Գալոյան Վահե- Ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի բաժնի պետ
Ղահրամանյան Տաթևիկ – Ուսանողական գիտական ընկերության նախագահ
Սարգսյան Արա-Ուսանողական խորհրդի նախագահ

Գիտական ընթերցումներ: Հասարակական գիտություններ:
Գ 602 Հոդվածների ժողովածու.-Ստեփանակերտ: ԱրՊՀ հրատ., 2022.- 482 էջ:

Գիտաժողովի նյութերի սույն ժողովածուն ընդգրկում է բանասիրության, իրավագիտության, մանկավարժության, հոգեբանության, պատմության, քաղաքագիտության, տնտեսագիտության արդիական հետազոտումներ: Ուսումնասիրությունների սահմանները լայն են և օգտակար են բնագավառի տեսական կամ գործնական հարցերով զբաղվողների համար:

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-9939-1-1581-8
© ԱրՊՀ հրատ., 2022

ՀՏԴ 811.111

Մարիամ Ամիրխանյան
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
E-mail: amirkhanyanmariam-10@aspu.am

Գիտական ղեկավար՝
դասախոս Սարգսյան Սաթենիկ
E-mail: sargsyansatenik47@aspu.am

ԼԵԶՎԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՀԵՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Բանալի բառեր. *գնահատում, արժևորում, նախագծահեն ուսուցում, ռուբրիկներ, թղթապանակներ, ներգրավվածություն, հաղորդակցում։*

Հետազոտական աշխատանքը միտված է ուսումնասիրելու նախագծահեն ուսուցման գնահատումը միջին դպրոցում։ Նպատակ ունենալով բացահայտել աշակերտների ներգրավվածության աստիճանը, ինչպես նաև նրանց արձագանքը ծրագրից դուրս դասերի անցկացման և այլընտրանքային գնահատման կիրառմանը՝ տնական ժամանակահատվածում՝ անցկացվել է երկու նախագծահեն դաս միջին դպրոցի 8-րդ դասարանում։ Նախագծահեն դասը գնահատելու նպատակով ստեղծվել են վերլուծական ռուբրիկներ։ Ի հավելում, աշակերտներին հանձնարարվել է ստեղծել թղթապանակ՝ իրենց աշխատանքները մեկտեղելու նպատակով։ Նախքան հետազոտությունը առաջ են քաշվել հետազոտական հարցադրումներ՝ ներառելով կարևորագույն փոփոխականները, ինչպիսիք են՝ աշակերտների մոտիվացիան, ներգրավվածությունը, ուսուցման ռազմավարությունը և քննադատական մտածողությունը։ Հետազոտության արդյունքում բացահայտվել է նշված փոփոխականների միջև կապը և գնահատման արդյունավետությունը. պարզ է դարձել, որ աշակերտների մոտիվացիան, մասնակցությունը և քննադատական միտքը մեծապես բարելավվել են։

Mariam Amirkhanyan

INTEGRATION OF PROJECT-BASED LANGUAGE ASSESSMENT IN SECONDARY SCHOOL

Keywords: *assessment, evaluation, project-based learning, rubrics, portfolios, engagement, communication.*

This exploratory research focuses on implementing project-based learning assessment in secondary school. During two successive months, two project-based lessons were conducted with students of 8th grade to discover their level of motivation, i.e. how they react when non-curriculum based lessons are held, and non-traditional ways of assessing are exercised. An analytic rubric was formed in an attempt to introduce it to students and assess them via it. As an addition, students also made their portfolios to collect all the material they dug deep into during the project. Before starting the study, some research questions were put forward, including key variables such as students' motivation, engagement, strategic learning, and development of critical thinking. The relationship between these variables and the success of were explored. Students' motivation, participation, and increased critical

thinking were identified as increasingly improving. The results highlight how secondary school students' performance can be enhanced by avoiding traditional ways of learning.

Мариам Амирханян

ПРИМЕНЕНИЕ ПРОЕКТНОГО ПОДХОДА ПРИ ЯЗЫКОВОМ ТЕСТИРОВАНИИ В СРЕДНЙ ШКОЛЕ

Ключевые слова: *оценивание, проектное обучение, рубрики, портфолио, вовлеченность, общение.*

Исследование направлено на изучение оценки проектного обучения в средней школе. С целью определения степени вовлеченности учащихся, а также их реакции на внеклассные уроки и использование альтернативной оценки в течение длительного периода времени в 8-ом классе средней школы были проведены два проектных урока. Для оценки урока были созданы аналитические рубрики. Кроме того, учащимся было предложено создать папку для совместной работы. Перед исследованием были сформулированы исследовательские вопросы, включающие ключевые переменные, также как мотивация учащихся, вовлеченность, стратегии обучения и критическое мышление. В результате исследования была выявлена взаимосвязь между указанными переменными и эффективностью оценивания: стало ясно, что мотивация, участие и критическое мышление учеников значительно улучшилось.

The present paper seeks to address coherent information about the **topic** of assessment and evaluation in education" as well as the effectiveness of project-based learning assessment.

In Armenian schools there is a great need of introducing innovative ways of learning as the traditional ones no longer meet the needs of today's students.

Currently, there are considerations for introducing project-based learning into the educational system. With this in mind, the paper **aims** to investigate the possible effects of project-based learning in secondary school.

In order to revisit the aims, the following **objectives** are put forward:

- Defining the term assessment and the various aspects involved.
- Finding out the results of the implementation of 2 project-based lessons.
- Implementing rubrics as a way of assessment and discovering its effectiveness.
- Discussing the findings of the lessons.
- Analyzing the results of assessment.

Research design: A qualitative and quantitative research design is chosen for this study which will mainly delve into the detailed findings of the conducted lessons. Aspects chosen for qualitative analysis are the success of the conducted lessons, the detailed description of the activities done during it, students' reaction (participation, level of motivation, level of interest), and according to all the aspects mentioned above, we will make a comprehensive comparison between the two lessons with the respect of students' improving performance levels.

Methodology: A project work was implemented in the 8th grade (N=18) at school N 67 after Yeghishe Charents. We have implemented the following **methods** to exercise our research and give comprehensive answers to the research questions: theoretical, descriptive, comparative, statistical and introspective.

Assessment in Education

Assessment as part of classroom activities is a fundamental process required to promote learning and achievement. Learners need to know and understand the following before learning can take place:

- What is the aim of the learning?
- Why do they need to learn it?
- Where are they in terms of achieving the aim?
- How can they achieve the aim? [1]

According to Eileen Dial assessment is more than just submitting grades at the end of the semester. That may have been the case in the past, but grades are no longer the ultimate goal of assessment. Today, the goal of assessment is to direct instructional choices so that all students will make progress. Today teachers are more responsible than ever before for student learning. [2]

Brown (1990) defines assessment as a set of connected measures used to determine a complicated attribute of a person or a group of individuals. [3] This entails acquiring and assessing data on a student's degree of achievement of learning objectives. Assessments are also used to identify particular student problems and strengths, allowing educators to provide specialized academic support, educational programs, or social services to students.

Traditionally, assessment is used to reveal and report what students have learned and its connection to classroom activities. Assessment is an essential component of school-based teaching and learning activities, serving as a bridge between teachers and students in the classroom. [2]

To promote effective (practical, objective, transparent) assessment, teachers need to:

- explain the learning aims to learners and check their understanding,
- demonstrate the standards learners are required to achieve and help them recognize when they have achieved that standard,
- give effective feedback on assessment decisions so that learners know how to improve,
- demonstrate high expectations and make it evident to learners that they believe that they can improve on their past performance,
- provide regular opportunities for teachers and learners to reflect on the final performance and review learners' progress,
- develop learners' self-assessment skills to recognize what aspects of their own work need to improve.[1]

Project-based Learning Assessment

Much classroom practice can be described as assessment activities. Teachers set tasks and activities and pose questions to learners. Learners respond to the tasks, activities and questions, and the teachers make judgements on the learners' knowledge, understanding and skills acquisition, as evidenced in the learners' responses. These judgements on learners' performance happen naturally in the course of any teaching and learning session and require two-way dialogue, decision-making and communication of the assessment decision in the form of quality feedback to the learner on their performance. [1] In contrast to the traditional classroom lessons, the project-based approach pursues an ambitious goal whereby the students engage in independent, action-oriented examinations of socially-relevant topics which are essential to them. [4]

The project work at schools is used across the curriculum. We can use projects in a school subject separately or join more school subjects in one project.

Sometimes we call "project work" every activity that is different from a traditional way of teaching and learning.

According to Oxford Advanced Learner´s Dictionary (2000) "project" is:

1. Planned work is a planned piece of work designed to find information about something, produce something new, or improve something.

2. School/college work – a piece of work involving the careful study of a subject over a period of time, done by the school or college students. [5]

The cross-sectional research included 2 projects on different topics. The theme of the first project was "My Utopian Society", and the second project was on the topic of "Stonehenge and Zorats Karer".

Findings: The purpose of this study was to examine how effective the integration of alternative ways of language learning will be in secondary school, especially by implementing project-based learning.

We have grouped the findings of this research into two domains: students' positive and negative experiences with alternative ways of learning.

Students' positive experiences, in its turn, can be grouped as follows: engagement and effective working in teams, critical thinking and problem-solving skills, collaboration and a chance to communicate, interesting content, deep understanding of the topic, and healthy competition.

The contributing factor to forming a positive experience was the exciting and intriguing topics of the projects, and the fun and thought-provoking activities done during the lesson.

As for students' negative experiences, the grouping is the following: time management and missed content.

As we see, the advantages outweigh the disadvantages.

Some of the factors mentioned above answer the research questions initially put forward.

Positive experience

1. Engagement and effective working in teams, collaboration, healthy competition

RQ 1- What effect does the PBLA have on students' engagement and team working abilities in secondary school?

The role of project work in terms of students' higher engagement and teamwork skills is advantageous.

Herbert Gudjons rightfully describes project-based learning as a step-by-step approach consisting of phases in a continuous development process. [4] Starting from the very beginning of the project, students have undergone different stages of project work.

Variable 1- Engagement

1) Planning what to do: they thoroughly investigated the material and decided how they would approach the task. Thus, each of them had their parts of the work, which itself assures total engagement in work. Besides, they gained really valuable team working skills like helping each other, cooperating and at the same time collaborating, listening to and respecting each other's opinions and expressing theirs, brainstorming useful ideas, supporting each other and most importantly, each of them took responsibility in their turn, which is a must-have component of team working skills.

Within the 2 weeks, they collected information about the topics assigned to study. They used all the available sources to combine the data and make it a whole. Due to this, they learned how to use Google Scholar for finding valid information, and also it motivated them to visit the library and find the materials they needed from the books written by natives of English, which is a great way to enlarge their knowledge and have opportunity to dig deeper into the book and look for the wanted material.

2. Critical thinking and problem-solving skills, collaboration and a chance to communicate.

RQ 2-How can projects influence students' speaking skills and critical thinking abilities in secondary school?

2) In the realization stage, when the information was already collected and organized, students started working on it. For the first lesson, they were given to design their imaginary "Utopian Society" So they had to draw their dreamed "Utopian" country. They were also assigned to write a letter to the Armenian government suggesting their vision of a "Perfect" country. Along with all these, they needed to use conditional 2 to express their dreams and wishes. For the second lesson, the theme of "Stonehenge and Zorats Karer", they were assigned to divide into 3 groups, and the problem of the 2 groups was to find information about Stonehenge and Zorats Karer, and the 3rd

one had to compare these two ancient monuments.

Variable 1- Critical thinking

Considering the information mentioned above, we may deduce that this type of lesson, i.e. project-based lessons, boosts students' ability to think critically. Firstly, they identified the problem that they were given, generated ideas about it, made an initial "plan" of how to solve the problem, investigated additional material that could help solve it, came up with possible solutions, and exercised them. During this process, they developed their observational and analytical skills: they started to grasp and thoroughly analyze each detail that could help them solve the problem. However, we must not forget that creative thinking is a crucial result of PBLA in the classroom. For instance, in order to design their own "Utopian Society", they had to be creative. Their problem was to create an original country, something that would have a hidden message and logic in it. By analyzing the drawings and the letters written by them, we may state that as the task was catching and intriguing, we managed to boost students' critical and creative thinking.

We must also mention that with the help of the second lesson (Stonehenge and Zorats Karer), we raised students' awareness of British culture and ours in terms of having a detailed comparison of the 2 monuments done by them. The interdisciplinary connection was implemented during the project.

Variable 2- Speaking Skills

3) The presentation stage came after the hard work of students who did everything to complete the project work on time. As the activities focused on real-world issues and required the group members to speak, there was no way of avoiding communicating with each other, which made the lesson interactive.

Students gathered around a common speaking goal, expressed ideas, shared information, and listened to each other's speech, which boosted their listening and observing skills. As the tasks were mainly situational, i.e. they had to communicate within the given situation to answer on spot questions, their speech was not just words learnt by heart, and they had inner motivation and necessity to converse with their friends. During their monologues and dialogues, they unconsciously used some patterns typical of improvised speech, such as may be, indeed, of course, so, I thing\guess, I agree etc. This is a key factor in boosting their immediate response and understanding of what has been asked or said.

During the first project, students did a brainstorming activity. They were asked to brainstorm ideas about the things that were perfect, imaginary, ideal, and unreal. Some of them mentioned that it is ideal for me to live on an island, it is unreal for me to have wings etc. They brought some arguments to support their ideas and explain them. Moreover, the speaking was that they did have orientation. We tried to direct students in an intensive speaking, i.e. speaking while practising some grammatical aspects of the language. In the case of the first project, their intensive speech was mainly focused on conditionals and adjectives. By introducing their "Utopian Society", they were assigned to make up their sentences using second conditional and the subjunctive mood as well as to include adjectives in their degrees.

At the end of the lesson, each group made up five particular questions for the other groups about their designed country. This activity motivated the interpersonal (dialogue) conversation, which is essential not for just learning the language but also for maintaining social relationships and gaining skills like conversing with other people, listening to others, forming a question and learning how to answer politely.

Negative experience

1. Time management

For the realization stage of the project, we encountered some time barriers. As the lesson required multiple and fixed sequences of activities, it was necessary to cover all of them. However, we know that traditionally lessons last 45 minutes in Armenian schools, which is not enough to cover all the required activities. Students were asked

to be short in their answers and make their speeches shorter. Trying to avoid such situations, we divided our project realization stage into some blocks. That is to say, we had multiple entries of the same project lesson. We covered their designs about "My Utopian Society" for the first lesson. We read their letters during the second one, and for the other one, we had a consolidation lesson to understand the level of their understanding of what had been done during the other project lessons.

2. Missed content

The next obstacle that students came across during the stages of project work was the missing content of the topics they were assigned to work around. This problem occurred especially when they were to compile information about Armenian monuments and mainly compare "Stonehenge and Zorats Karer". Students themselves voiced their difficulties, especially telling that Google has very little information about "Zorats Karer".

Research analysis:

Analysis of the 1st Project Work: "My Utopian Society"



The results are analyzed according to the following coding.

The assessment data in the pie charts are only averages of each grade students got for each criterion in the rubric. (See appendix 1)

Portfolio	8	9	9	7	8	9	6	9	8	7	9	8	9	9	9	6	9	9
Involveme	8	9	9	6	8	9	5	9	9	9	9	8	9	9	9	6	8	9
Collaborat	7	9	9	7	8	9	5	9	8	9	9	8	9	9	9	5	8	9
Focus	7	8	9	6	8	9	5	9	8	9	9	7	9	9	8	5	8	9
Communic	6	8	8	6	9	9	4	8	9	8	9	7	8	7	8	4	9	9
Linguistic a	7	8	8	6	9	9	4	8	9	8	9	8	8	8	8	4	9	9
Average	7.166667	8.5	8.666667	6.333333	8.333333	9	4.833333	8.666667	8.5	8.333333	9	7.666667	8.666667	8.5	8.5	5	8.5	9

As it is indicated on the chart the majority of students has got "Good" from the scale of assessment standard. It is the 72.20% which equals 13 students.

Analysis of the 2nd Project Work: "Stonehenge and Zorats Karer"



The results are analyzed according to the following coding.

The assessment data in the pie charts are only averages of each grade students got for each criterion in the rubric.

Portfolio	9	9	9	8	8	10	8	9	8	9	10	8	9	9	10	8	9	10
Involveme	8	9	9	8	9	9	7	9	9	9	9	8	9	9	9	7	9	9
Collaborat	8	9	9	7	9	9	6	9	9	9	9	8	9	9	9	7	9	9
Focus	8	9	9	7	9	9	6	9	9	9	9	8	9	9	9	7	9	9
Communic	7	9	9	7	9	9	6	9	9	9	9	8	9	8	9	7	9	8
Linguistic a	7	9	9	7	9	9	6	9	9	9	9	8	9	9	9	6	8	9
Average	7.833333	9	9	7.333333	8.833333	9.166667	6.5	9	8.833333	9	9.166667	8	9	8.833333	9.166667	7	8.833333	9

The second chart illustrates the results of the second project. According to our lesson observations, students tended to show more interest in this kind of learning after the first project. The enthusiasm was higher this time and there was a boom of engagement.

As the chart itself shows, we have fifty-fifty in terms of performance level and these are only for the assessment standards “Excellent” and “Good”.

Conclusions and Recommendations

Our work has led us to conclude that an effective, goal-oriented, teaching-learning sequence contains clearly understood objectives, productive classroom activities, and a sufficient amount of feedback to make students aware of the strengths and weaknesses of their performances.

Project-based learning is an incredible addition to our educational system as a way of testing language levels. This way of alternative lessons greatly influences students’ engagement and motivation level, critical thinking and communicative abilities.

As a result of conducting two project-based lessons in secondary school, we may deduce that it positively impacted students’ performance and progress levels. Students seemed to be more interested in this kind of lesson format. It was a challenging innovation for them but, at the same time, intriguing and catching.

The main conclusions from the lessons are:

- Traditional ways of assessing students are no longer productive enough to boost healthy competition amongst students.
- The introduction of project-based learning is an excellent way to engage all students to participate and have a say in the group work activity.
- Project work is beneficial for getting knowledge about the topic restricted things and about some other

things out of the task such as the Armenian “Zorats Karer”, Thomas More’s “Utopia”, etc.

- The implementation of project work is one of the best ways to boost students’ cooperation and collaborating skills. They worked with each other to brainstorm ideas for the benefit of their group.
- The effectiveness of using rubrics as a way of assessing project work is proved by our research and can be considered as a flexible and objective tool for assessing.
- The presence of some tangible evidence of the work in the form of a portfolio is highly productive to boost students’ interest, motivation and eagerness to be confident enough to introduce their own ideas.

Reference List

1. Jones A., Assessment for Learning., 2005, pp. 4-6, http://mmiweb.org.uk/scitts/tutors/downloads/4_Assignment_2/assessment_lit_gen/%20Jones_2005_AssessmentforLearning.pdf (Accessed 25.04.2022)
2. Dial E., Assessment for Learning: A Practical Approach for the Classroom, 2016, pp 1-14 https://books.google.am/books/about/Assessment_for_Learning.html?id=gurcCwAAQBAJ&printsec=frontcover&source=kp_read_button&hl=en&redir_esc=y#v=onepage&q&f=false (Accessed 25.04.2022)
3. Brown, James Dean & Hudson, Thom. The Alternatives in Language Assessment. TESOL, 1998
4. Berner H., Isler R., Weidinger W., Simply Good Teaching., 2018, pp. 148-153
5. Mahrova A., Project work in English classroom: The e-magazine Diploma thesis.,2010, pp. 9-21 https://is.muni.cz/th/urrd6/Diplomova_prace.pdf (Accessed 25.04.2022)

Appendix

Appendix 1: Analytic Rubric to Assess Project Work

Skills	9-10 Excellent Exceeds the expectations	6-8 Good Meets the expectations	3-5 Not so good Doesn't fully meet the expectations	0-2 Bad Does not meet the expectations
Portfolio Requirements	Portfolio meets the minimum requirements and even above, is organized precisely.	Portfolio meets the minimum requirements.	Portfolio partially meets the minimum requirements. It lacks some materials.	Portfolio is missing or it contains less than the minimum requirements.
Involvement and attitude	Eagerly takes part in the discussion.	Usually takes part in the discussion. Basically displays positive attitude.	Sometimes takes part in the discussion. Rarely shows positive attitude.	Takes part seldom. Is disruptive. Doesn't show interest and involvement in the work.
Collaborating with others	Has the ability to work extremely well with others. Is open to cooperation.	Does only his part of work. Has the ability to work well with others.	Doesn't show enthusiasm to share a workload. All the time needs leadership and direction.	Doesn't do the work. Does not contribute to the team working activity. Refusing to work with others.
Focus	Manages on time and works effectively. Is able to work independently.	Doesn't interfere much to the group. Focuses on the task mainly. Isn't so much self-directed.	Not always shows team working interest. Completely focuses on the specific part of the task given to him.	Focuses neither on task nor on the time. Lefts others to do the whole work.
Communication	Is open to any discussion. Always listens to, accepts other's and freely shares his\her opinion.	Usually shows eagerness to discuss. Often shares his\her opinion.	Not always shows eagerness to discuss. Sometimes shares his\her opinion.	Doesn't listen to other's opinions and doesn't speak in a target language and about the target topic.
Linguistic and organizational accuracy	Has fluent and error-free speech. The topic of the speech is well-organized and is to the point.	Speech is generally fluent, has some errors. Mostly, the task is achieved in time.	Speech is sloppy. Work tends to be disorderly, not to the point,	The speech is full of errors, not organized at all and doesn't refer to the topic.

Մարթա Աղաջանյան
ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն»
բաժնի 4-րդ կուրսի ուսանող

Գիտական ղեկավար՝
բ.գ.թ., դոցենտ Ավանեսյան Ն.

ԿՆՈՋ ՆԵՐԱՇԽԱՐՀԻ ՀԱՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՄԱՄԻՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Բանալի բառեր՝ *կնոջ ներաշխարհ, սիրո հակադրամիասնություն, խոհապատկեր, զգայավառություն, հույզերի համանվագ, ինքնավերագտնում, ինքնաբացահայտում, կին և կղզի, ինքնապեղում, հոգեբախում:*

Հոդվածի նպատակն է ներկայացնել Թամար Հովհաննիսյանի պոեզիան՝ բացահայտելով կնոջ ներաշխարհը՝ որպես հույզերի ներքին համանվագ, սիրո հակադրամիասնություն: Թ. Հովհաննիսյանի պոեզիայում հառնում է կնոջ հավերժական և բազմադեմ կերպարը. դա ժամանակների թանձրացած անհոգիության առկայության պայմաններում սիրո, վստահության, քնքշանքի հանգրվան որոնող կինն է՝ իր ճակատագրով: Սերը Թ. Հովհաննիսյանի պոեզիայում մթությունից դեպի լույս տանող այն կախարդական զգացողությունն է, որն ընդունակ է մարդկային հոգում ծնելու նվիրվելու ու հանձնվելու անկասելի ուժ: Հոգեկան բոլոր այս ապրումները վկայում են, որ բանաստեղծուհին խորապես հասկանում է կանանց ներքին աշխարհը, որոնք բոլորովին տարբեր են իրենց հոգեբանական կազմով:

Марта Агаджанян
студентка IV курса бакалавриата

ВНУТРЕННИЙ ЖЕНСКИЙ МИР В ПРОПОРЦИОНАЛЬНОСТИ И В ЕДИНСТВЕ В ПОЭЗИИ ТАМАР ОВАННИСЯН

Ключевые слова: внутренний женский мир, противопоставление любви, вдумчивай взгляд, чувствительность, система эмоций, самопознание, самооткрытие, женщина и остров, психопатия.

В поэзии Тамар Ованисян воскресает вечный и многоликий образ женщины, именно женщина ищет пристанище любви, доверия и нежности в присутствии возросшей бездушности времени с ее судьбой.

Любовь в поэзии Тамар Ованисян – это волшебное чувство, ведущее из тьмы к свету, способное породить в душе человека неудержимую силу самоотверженности и отдачи. Все

переживания свидетельствуют о том, что поэтесса глубоко понимает внутренний женский мир, который совсем разный своим психологическим составом.

Martha Aghajanyan,

THE REVOLUTION AND CO-UNITE OF THE FEMALE INNER WORLD IN TAMAR HOVHANNISYAN'S POETRY

Key Words: the female inner world, the unity in antagonism of love, imaginary figure, ardency, a symphony of emotions, self-scrutiny, self-discovery, woman and island, self-searching, soul collision.

The aim of the article is to study Tamar Hovhannisyan's poetry. The issues of it are to reveal the female inner world as an inner symphony of emotions, to reveal the unity in antagonism in Tamar Hovhannisyan's poetry. The eternal, multifaceted image of a woman emerges in T. Hovhannisyan's poetry: she is the woman who with her fate is seeking for a refuge of love, trust and tenderness in the presence of the increased callousness of time. The love in T. Hovhannisyan's poetry is the magical feeling that leads from darkness to light, which is capable of giving birth, devoting and surrendering an irresistible power in the human's soul.All these emotional experiencestestify that the poet delves into the inner world of women, who are completely different in their psychological composition.

Ներածություն: Թամար Հովհաննիսյանն իր գրական հայտնությամբ մի նոր ու թարմ շնչառություն հաղորդեց ժամանակակից հայ պոեզիային՝ իր ազնիվ և մեղեդաշունչ գեղարվեստական խոսքով դառնալով ժամանակի և անհատի հոգեմիջնորդը: Թ. Հովհաննիսյանի բանաստեղծական ժողովածուները մեկ ամբողջության մեջ դիտարկվում են որպես մտավոր հասուն հաղորդակցության, պոեզիայի հեթանոս զարկերակների, անկեղծ զգացմունքների, հուզական պոռթկումների ու ներդաշնակ խոհերի վկայագրեր: Նա կարողացել է ինքնահաստատվել ոչ միայն որպես բանաստեղծուհի, այլև մարդկային ներկայություն, կարողացել է նրբանկատորեն ուրվագծել ժամանակակից կնոջ նկարագիրը, նրա ինտելեկտուալ-ստեղծագործական տեսակը: Իր ստեղծագործական ընթացքի առաջադրությունը Թ. Հովհաննիսյանն առավելապես համարեց կնոջ հոգեբանության, ինքն իրենից հեռացող մարդու, ներանձնական ձայների ու անսեթևեթ սիրո ամբողջաձույլ համանվագ ընծայաբերումն ընթերցողին: «Բանաստեղծություն և կյանք. մարդու փախուստ ինքն իրենից և անընդհատ նորոգվող վերադարձ ինքն իրեն ու իր շուրջը, հոգու հուսահատ պարապություն և գլխավորի, ամենագլխավորի, միակի, անփոխարինելիի հայտնություն, որ սերն է ու սիրո կանչը»,-այսպես է բնութագրել Թ. Հովհաննիսյանի սիրո պոեզիայի կերպագիծը գրականագետ Դ. Գասպարյանը[1]:

Կնոջ ներաշխարհը՝ որպես հույզերի ներքին համանվագ: Թ. Հովհաննիսյանի պոեզիան մեղեդային է, ջերմ, անկեղծ, թափանցիկ: Նրա գեղարվեստական մտքի թռիչքը հագեցած է հարուստ ներաշխարհով, զգայուն բանաստեղծական շնչառությամբ: Բանաստեղծուհու բոլոր գրվածքներից հայտաճում է զգայուն հոգեաշխարհին ներհատուկ և ստեղծագործ անհատների գրչի ուժը պայմանավորող շնորհալի անկեղծությունը: Թ. Հովհաննիսյանի

[1] ***Գասպարյան Դ.,*** *«Գարուն», Ե., 1995, հուլիս, էջ 7:*

պոեզիան ամբողջովին բաց է, հովիտների տարածությունը՝ ընկալելի, որովհետև ոչ մի քող չկա ձգված այդ ապրումների վրա: Եվ գրքի հենց առաջին իսկ էջերից բացվում է քնարական հերոսուհու այն հոգեվիճակը, որը բացառապես ձգտում է սիրող ձեռքերի մեջ հասնել կանացի կատարելությանը՝ հեռվում թողնելով անցյալի ավերակները.

Երբ երեկվա հրեշտակների աչքերում հոգու ավերակներ են բացվում,
Ու սիրո ու գորովանքի հեղեղները հանձնվում են ավազներին,
Ես կորցնում եմ անցյալս ու ոտաբոբիկ վազում դեպի քեզ[1]*...*

Սակայն հնարավոր է, որ այս հանդիպումը ևս բաժանման հանգեցնի՝ այս անգամ ընդմիշտ, որովհետև նրա գրկում ոչ թե կորցնում է անցյալը, այլ այն կրկին վերապրում, և չհասկացվածությունը վերածվում է թերահավատության.

Հիշի՛ր, վերջին անգամ եմ հավատում,
մի վերջին անգամ քեզանով,
Մի՛թող, որ կրկի՛ն տանուլ տամ հանկարծ
Ու հեռանամ այս անգամ մեկընդմի՛շտ խռով...¥Կ, 56¤

Սիրո և հավատի պակասը աստիճանաբար պաշարում և գերեվարում են նրան, և այս պայմաններում նրան մնում է մի ելք՝ ելնել դավից չխեղված մարմնով և հոգով: Եվ այս ամենից հետո հերոսուհու միակ երազանքը դառնում է՝ *«Ուզում եմ կի՛ն մնալ՝ երազանքը ծաղկած ծոցում, // Կին՝ մաքո՛ւր, քնքշասիրտ, հպարտ ու խռովքո՛տ...»:*

Թ. Հովհաննիսյանի նպատակը իր կին ընթերցողի մեջ կանացի, մարդկային և քաղաքացիական հպարտության արթնացումն է, սիրո և երազանքի գիրկը նետվելու ոգեկոչումը: Սերը երբեք չի հայտնվում ստվերում, քանի որ մարդկային նախնական բոլոր մտերմությունները կապվում են սիրո հովիտներով, և հետո միայն արտաքին խզումների պատճառով սիրո կամուրջներով միացած անհատները օտարվում են: Սակայն ամենածայրահեղ պայմաններում էլ սերը ելք է գտնում, և հերոսուհու աչքերը փնտրում են այն մեկին, ով կլրացնի համբույրների պակասը, այն մեկին՝

Որի ձեռքերի մեջ ապրում է
Հնազանդությունն իմ.
...Մեկին՝ որի աչքերի մեջ ապրում է
Վստահությունն իմ որոնած.
...Մեկին՝ որ չի խոնարհում աչքերը,
Երբ նրանցում իրեն են որոնում հանկարծ ¥Կ, 61¤:

Բանաստեղծուհու բոլոր երգերի առանցքում իր ապրումներն են, սրտի կտորներն ու արցունքները, հոգու տնքոցներն ու ծիծաղը, այսինքն՝ ինքն իր էության մեջ, որը որպես մատաղված, մասնեմասն եղած սնունդ տրվում է ամենքին՝ ընթերցողին, ով միայն կարող է «վայելել» հոգնաբեկ սրտի բաբախյունները:

Սիրո հակադրամիասնությունը Թ. Հովհաննիսյանի պոեզիայում: Սերը Թ. Հովհաննիսյանի պոեզիայում մթությունից դեպի լույս տանող այն կախարդական

[1] ***Հովհաննիսյան Թ.***, *Կինը, Ե., 2006, ՀԳՄ հրատ., էջ 442: Այսուհետ հղումներն այդ գրքից կնշվեն տեքստում՝ փակագծերի մեջ*

զգացողությունն է, որն ընդունակ է մարդկային հոգում ծնելու նվիրվելու ու հանձնվելու անկասելի ուժ: Սերը խոսքի անսպառ հնարավորություններ է շնորհում բանաստեղծուհուն, որի հիմքը կյանքն է: «Քեզ հետ և առանց քեզ» ենթաշարքի բանաստեղծությունների հոգևոր տրամադրություններում գերիշխողը ասված և չասված բառերի օտարված ու անհաղորդ դիմագծի հակադրությունն է հոգնած ու բազմաչարչար սիրուն. սերը սոսկ մի բառ-աշխարհ է, բայց ամփոփում է և՛ հիշողության կորիզը, և՛ ապրելու դասը, և՛ ցավի հաճույքը, և՛ հառաչանքի դողը, որը նաև միադիմի է ու անկերպարանք.

Բառերը երկդիմի են նաև,
Ինչպես մարդիկ ու իրենց արարքները.
Բառերը կերպարանք ունեն՝
Դիմագիծ, շրթեզրեր ու ծնոտ ¥Կ, 126¤:

Սերը՝ որպես կյանքի հոմանիշ, միևնույն ժամանակ այն հենակն է, որը թուլության ու միայնության մեջ հայտնված տղամարդուն սատար է կանգնում՝ այս անգամ կնոջ կերպարանքով.

Հենվիր ինձ, որ շունչ առնես,
Բա՛վ է մռնչաս, բա՛վ է:
Թուլությունը նույնպես մարդկային է...
Հեկեկա՛, երբ դժվար է, ես բացե՛լ եմ կուրծքս քեզ... ¥Կ, 126¤

Սա է կնոջ քնքուշ ու նրբազգաց հոգին, ով անմիջական է ու անկեղծ՝ ապրումների ու տրամադրությունների ցանկացած հոգեվիճակում, անգամ սիրո վերելքի ու վայրէջքի պահերին: Կյանքի մեջ տեսնելով սեր և սիրո մեջ կյանք՝ նա զգում է այն ապրեցնող շունչը, որը սիրո աղոթքների պատասխանն է: Եվ այդ աղոթքները սոսկ բառեր չեն, այլ շունչ ու հոգի, ինչպես սերը, որը ոչ թե թաքնված է բառերի մեջ, այլ հոգու ամենախոր անկյուններում: Հոգու նվաճումն արդեն սիրո նվաճումն է. «Ունեցի՛ր հոգիս, որ ի՛նձ ունենաս...»: Եվ այդ նվաճած սերը, անշուշտ, պետք է ներկայության ու սիրո կրակով ջերմացնել, լցնել նրա ցուրտ ու տարտամ օրերը՝ լինելությանը խառնելով մի նոր ներկայություն.

Սիրի՛ր ինձ, որ փրկես տարածքներս երաշտից,
Մի՛ափսոսա սիրուդ առատության համար...
Սիրի՛ր կարոտից, ափսոսանքի՛ց, ցավի՛ց,
Խենթորե՛ն, մեղմորե՛ն՝ մերթ հե՛շտ, մերթ դժվար ¥Կ, 159¤:

Կամ մի ուրիշ տեղ.

Սիրի՛ր ինձ սրբի պես, սիրիր ինձ խենթի՛ պես,
Սիրի՛ր երկյուղով... ¥Կ, 160¤

Ցավի, մենության ու կասկածների օվկիանը հոգնաբեկ հոգուն ստիպում է փախչել մռայլ իրականությունից ու անէանալ երկնային մաքուր ու անկեղծ սիրո մեջ: Սիրո նավահանգիստ քնարական հերոսուհին բոկոտն ու ծնկաչոք է գալիս, անքեն, մաքուր ու անչար սրտով: Սաղմոսերգության նմանվող նուրբ տողերով հեղինակն այնուհետև բացում է հոգու ներաշխարհի «հեղեղների ջրարգելը» և նրա հետ կիսում հոգու հրաշքն ու նվիրումի գաղտնիքը. *«Օ՛, քեզ համար է շնչահե՛ղձ լինող, // Լույսի պես մաքո՛ւր, հրդեհի պես տա՛ք, // Քնքշությունը իմ...» ¥Կ, 160¤:*

Սերը մեծ է իր հավիտենականության մեջ և կինը՝ որպես սիրո կրող, դառնում է նաև հավիտենականության կրողը .

Ե՛ս եմ հավիտենականությունը սիրո
Քո մեջ,
Չափանիշ՝ որը գործածելու ես
Չուզենալով անգամ... ¥Կ, 174¤

Սիրո սահմանները չեն ավարտվում անհատի անձի տիրույթում. սերն ամենուրեք է: Այն նախ մեղեդիների մեջ է, ապա բառերի, հետո միայն հնչյունների մեղմ ծածանումներում: Իսկ այդ մեղեդիները պարպվելով դառնում են երգ, մի կաթնաբույր նվագ՝ տարածվելով հոգու լույս դաշտերի վրա: Երգը ծնվում է մենության պահերին, սպասումի տարիներում, կարոտի կանչերով և նվիրումի պահին միայն փարվում որպես հուշիկ հանգեր: Բայց հիշողության կապն ու նվագարանի ձայնը լռում են իսպառ տարածության գորշ տեսիլքի պահին, ու մնում է միայն ցավախառն կարոտը.

Մեզ մի սիրուն ցա՜վ է մնում,
Տառապանքի խա՜չը վրան... ¥Կ, 205¤

Կինը սեր է, և այդ սերը թաքնված է կանացիության երկչոտ ափերում, անփորձության, վախ ու դողի մեջ: Կինը համեմատվում է նուրբ ծառերի հետ. երկուսի մեջ էլ ապրում է ծաղկավորվելու լույս երազանքը, բայց այդ երազանքը առնականության ամուր ձեռքերի ազնիվ գգվանքում է միայն ծաղկում, նրա երկթև գրկում.

Գրկիր ինձ մաքո՜ւր, անքեն ու անխառն,
Զրուցիր ինձ հետ...
Սիրի՛ր՝ ինչպես կամ
Թեկուզ հակոտնյա՜, անփո՜րձ, պարզունա՜կ,
Բայց մեկը՝ հազար-հազարների մեջ... ¥Կ, 242¤

Թամար Հովհաննիսյանի բանաստեղծական յուրաքանչյուր տող, բառ ու խոսք նեղ ու ներանձնական փորձառության վկայությունն են: Այդ ապրումներից յուրաքանչյուրը նա կարողացավ տիեզերականացնել և հաղորդակից դարձնել հոգիներին: Հովհաննիսյանն իր հայացքներով ու մտքերով ներկա ժամանակների, տիեզերական հեռաստանների, այժմեական վիրտուալ աշխարհների մեջ է:

Եզրակացություն

1. Հովհաննիսյանի պոեզիան իր խորքային հզորությամբ բխում է *Եսենին-Թակոր-Տերյան* գրական համաստեղությունից և կրում Համո Սահյանի ու Պարույր Սևակի ստեղծագործական հոգեբանությունը:
2. Ժամանակային լայն ընդգրկումներ ունեցող կնոջ կերպարը Թ. Հովհաննիսյանի պոեզիայում ներկայացավ որպես սրբագործված սիրո կենսական աղբյուր. դա ժամանակակից կինն է՝ կնոջ աչքերով:
3. Թ. Հովհաննիսյանի պոեզիայում սերը ելք է փակուղուց, ինքնաամբողջացման հնարավորություն, ինքնավերագտնումի նպատակ, կյանքի մեջ դեռևս իր տեղը հաստատել փորձող ուժ, որին շարժման մեջ դնողը հակադրամիասնության բնական օրենքն է:

4. Սերը սոսկ մի բառ-աշխարհ է, բայց իր մեջ է ամփոփում և՛ հիշողության կորիզը, և՛ ապրելու դասը, և՛ ցավի հաճույքը, և՛ հառաչանքի դողը, որը նաև միադիմի է ու անկերպարանք:
5. Բանաստեղծուհին էջ առ էջ բացում է կնոջ էությունն այնպես, որ ամեն քերթված կնոջ նոր ու թարմ հայտնությամբ է լցված, օծված անակնկալային քաղցրությամբ:
6. Հովհաննիսյանի բանաստեղծական տողերը օծված են տրտում քաղցրությամբ, հուզումն ու փիլիսոփայական խոհը ընդելուզված են իրար մեջ, իրարից անբաժանելի, լիացած կերպով՝ անբեկանելի արվեստի մեջ դառնալով երջանիկ վկայություններ:

Գրականություն

1. **Հովհաննիսյան Թ.**, Քեզ հետ և առանց քեզ , Ե., 1997, «Նոյյան տապան» հրատ., 67 էջ:
2. **Հովհաննիսյան Թ.**, Կինը, Եր., 2006, «ՀԳՄ» հրատ., 442 էջ:

ՀՏԴ 808-2

Դիանա Կասյան
ԱրՊՀ <<Հայոց լեզու և գրականություն >>
բաժնի
բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի
Արցախի պետական համալսարան
E-mail: kasyan.diana@list.ru

Գիտական ղեկավար՝
Բ.գ.թ,դոցենտ Նունե Խաչատրյան
E-mail: khachatryan.nune.@gmail.ru

ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՍԱՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Բանալի բառեր՝ *կիսապատճենումներ, հետպատերազմյան մամուլ,օտարաբառեր,փոխառություններ,բառապաշար,զանգվածային լրատվության միջոցներ:*

Մենք քննում ենք գոյականական բառակապակցությունների կիսապատճենումները Արցախի հետպատերազմյան շրջանի մամուլում : Լրատվամիջոցների լեզվում ,մամուլում տարածված են ռուսերենից կամ ռուսերենի միջոցով պատճենված կառույցները:

Բառակապակցությունների կիսապատճենումները Արցախի հետպատերազմյան շրջանի մամուլում վերաբերում են տարբեր ոլորտների: Մենք անդրադառնում ենք քաղաքական, ռազմական բնագավառներին վերաբերող գոյականական բառակապակցությունների կիսապատճենումներին :

Կարելի է նկատել,որ կիսապատճենումների կաղապարներում օտար բաղադրիչը գերազանցապես նախադաս դիրք է գրավում,հետադաս կիրառությունները սակավադեպ են:

Диана Касян
студентка 3-го курса по специальности
«Армянский язык и литература»

«ПОЛУКАЛЬКИ СЛОВОСОЧЕТАНИЙ В ПОСЛЕВОЕННОЙ ПРЕССЕ АРЦАХА»

Ключевые слова: *Полукальки, послевоенная пресса, иноязычные слова, заимствования, словарный запас, средства массовой информации.*

В статье рассматриваются полукальки номинальных словосочетаний в послевоенной прессе Арцаха. В средствах массовой информации и в прессе распространены структуры на русском языке или скопированные с русского. Мы имеем в виду полукальки номинальных словосочетаний, относящихся к политическим и военным сферам.

Примечательно, что в шаблонах полукалек иностранный компонент занимает препозитивное место, а постпозитивные применения редки.

Diana L. Kasyan
3rd year student,

"SEMI –TRACING PAPER" OF PHRASES IN THE POST-WAR PRESS OF ARTSAKH

***Key words**: "Semi - Tracing paper", post-war press, foreign words, borrowings, vocabulary, mass media, nominal phrases.*

The article deals with "semi-tracing paper" of nominal phrases in the post-war press of Artsakh. Structures in Russian or copied from Russian are widespread in the media and in the press. We mean "semi-tracing paper" of nominal phrases related to political and military spheres.

It is obvious that in "semi - tracing paper" patterns, the foreign component occupies a prepositive place, and postpositive applications are rare.

«Հայտնի է, որ բառապաշարը արտացոլում է հասարակական կյանքի փոփոխությունները, և ինքն էլ աստիճանաբար փոփոխվում դրանց զարգացմանը զուգընթաց: Այդ փոփոխությունների ընթացքում լեզվի ներքին միջոցներով ստեղծվում են նոր բառեր, ինչպես նաև այլ լեզուներից կատարվում են փոխառություններ: Դա առանձնապես ցայտուն է դրսևորվում, երբ լեզուն կրող ժողովուրդն ապրում է պատմական մեծ վերափոխումներ ու արմատական տեղաշարժեր:Նման մեծամասշտաբ քաղաքական ,հասարակական, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ տեղաշարժերն առաջացնում են նոր տիրույթներ, երևույթներ ու հարաբերություններ, որոնք անվանելու համար ստեղծվում են նոր բառեր, բառիմաստներ, դարձվածքներ, բառակապակցություններ, արտահայտություններ, հապավումներ»[1]:

Ներկայումս զանգվածային լրատվության միջոցները հեղեղված են պատճենումներով, խորհրդարանում, համագումարներում ելույթ ունեցողները հաճախ են գործածում պատճենումներ, կիսապատճենումներ:

Յուրաքանչյուր լեզու, այնուամենայնիվ, իր դռները լայն չի բացում օտար բառերի առջև և փորձում է դրանք փոխարինել սեփական բառային կազմի նոր կամ նախկին միավորներով: Հաջողում է այնքանով, որքանով կամք և հետևողական աշխատանք է տարվում, և որքան որ ճկուն են սեփական բառակազմական հնարավորությունները, բառային կազմի իմաստաբանությունը:

«**Պատճենումը** փոխառության եղանակ է: Պատճենումները հայերեն այն բառերն են, որ կազմվում են օտարազգի բառերի իմաստների թարգմանությամբ կամ նրանց կառուցվածքի նմանողությամբ»[2]: Ժամանակակից հայերենում հատկապես տարածված են ռուսերենից, անգլերենից, ֆրանսերենից կատարված բառային պատճենումները: Կարևոր է, որ պատճենված բառը ճշգրիտ արտահայտի պատճենվող միավորի իմաստը և կառուցվի մայրենի լեզվի օրինաչափություններով:

---

[1] ***Հայրապետյան Ա.,*** *Օտար բառերի բառարան, Երևան,2011*

[2] ***Ղազարյան Է.****, Բառապատճենումներ, բառապատճենման բառակազմական կաղապարները, հոդված:*

Պատճենման մի տեսակն էլ **կիսապատճենումն** է կամ, այսպես կոչված, մասնակի փոխառությունը. այս դեպքում հայերեն թարգմանվում է փոխառյալ կապակցության բաղադրիչներից մեկը:

Ընդհանրապես պատճենումն ու կիսապատճենումը կարող են նաև ժամանակի ընթացքում փոփոխություն կրել կամ էլ միջակա օղակ լինել սեփական բաղադրիչներով նոր բառ ստեղծելու ճանապարհին. օրինակ՝ военный контингент – ռազմական կոնտինգենտ:

Հետպատերազմյան շրջանի մամուլում հանդիպում ենք մի շարք պատճենված բառեր,բառակապակցություններ: Մեր հոդվածում քննում ենք կիսապատճենված գոյականական բառակապակցությունները, որոնց հանդիպում ենք 44-օրյա պատերազմից հետո արցախյան մամուլում:

Կիսապատճենված բառակապակցությունները Արցախի հետպատերազմյան շրջանի մամուլում վերաբերում են տարբեր ոլորտների: Մենք կանդրադառնանք քաղաքական, ռազմական բնագավառներին վերաբերող գոյականական բառակապակցությունների կիսապատճենումներին:

Կարելի է նկատել, որ կիսապատճենումների կաղապարներում օտար բաղադրիչը գերազանցապես նախադաս դիրք է գրավում,հետադաս կիրառությունները սակավադեպ են:Պատճենյալ նորակազմություններում մեծ ակտիվություն են դրսևորում **պատճենված բառ+հայերեն բառ** կառույցով կազմությունները: Ներկայացնենք այդ կաղապարով բառակապակցություններ.

Գոյականի ուղղական հոլով+գոյական՝ Բրահմոս հրթիռ: Հնդկաստանը փորձարկել է Բրահմոս հրթիռը (Արցախի հանրային հեռուստատեսություն, 21.04.22):

Հաճախադեպ են գոյականի սեռական հոլով + գոյական կաղապարով կապակցությունները**:** Նրանց մի մասը արտահայտում է պատկանելություն՝ **սենատորների ձայն**՝ Սենատում ջատագովել են սենատորների ձայնը (Arm.news, 26.09.21):

Նեթֆլիքսի բաժնետոմսեր՝ Նեթֆլիքսի բաժնետոմսերը Ռուսաստանից հեռանալուց հետո էժանացել են: (Արցախի հանրային հեռուստատեսություն, 22.04.22):

Արտահայտում են վերաբերություն.

Լոքդաունի պայմաններ՝ Լոքդաունի պայմաններում 1870 մարդու ուղարկեցինք բանկեր (News.am,18.01.21):

Նյուսվեկի հոդվածագիր՝ Նյուսվեկի հոդվածագիրը մեղադրում է Բայդենին Ադրբեջանի վայրագությունները անտեսելու մեջ (Արցախի հանրային հեռուստատեսություն, 21.04.22):

Մեծ մասամբ հանդիպում ենք **ածական+ուղղական հոլովով գոյական** կաղապարով բառակապակցությունների:

Այս տեսակի մեջ մտնող բառակապակցությունները հիմնականում արտահայտում են հատկանշային հարաբերություն:

Էթնիկ զտումներ՝ Տարածաշրջանում կատարվել են էթնիկ զտումներ (Արցախի հանրային հեռուստատեսություն,05.04.22):

Շաբլոն մտածելակերպ՝ Իշխանության եկած ուժերը չպետք է ունենան շաբլոն մտածելակերպ (Tert.am 05.09.16):

Վանդալ Ադրբեջան՝ Վանդալ Ադրբեջանը կեղծ տեղեկություններ է տարածել (Արցախի հանրային հեռուստատեսություն, 21.02.22):

Ինստիտուցիոնալ ընդդիմություն՝ «Հայաստան» դաշինքը դարձել է ինստիտուցիոնալ ընդդիմություն և օգտագործելու է բոլոր հնարավորությունները, որը տալիս է ՀՀ օրենսդրությունը (Իրավաբան.նեթ, 06.09.21):

Գեոդեզիական հանրույթ՝ Կատարել խորքային հորի ստեղծման տեղամասի գեոդեզիական հանրույթ (Erevan.am, 27.02.19):

Ինստիտուցիոնալ փորձ՝ Բարեփոխումներ կատարելու համար անհրաժեշտ է ինտիտուցիոնալ փորձ (irtek.am, 05.06.16):

Վիզային սահմանափակումներ՝ ԱՄՆ-ը վիզային սահմանափակումներ է մտցրել Բելառուսի մի շարք պաշտոնյաների նկատմամբ (Ազատություն ռադիոկայան, 02.04.22):

Կոնտակտային համագործակցություն՝ Կոնտակտային համագործակցության ճանապարհով լուծվեց առկա խնդիրը (Արցախի հանրային հեռուստատեսություն, 21.02.22):

Մամուլում առկա են նաև **դերբայ+գոյական** կաղապարով կազմված բառակապակցությունները:

Հիմնականում արտահայտում են հատկանշային իմաստ:

Օկուպացված տարածքներ՝ Ադրբեջանի և այլ երկրների պաշտոնատար անձանց՝ Արցախի օկուպացված տարածքներ այցերն անընդունելի են և սադրիչ բնույթ ունեն (Ազատություն ռադիոկայան, 29.07.21):

Հանդիպել ենք բառակապակցություններ, որոնց **ստորադաս անդամը արտահայտված է հայերեն բառով, իսկ գերադաս անդամը պատճենված է**:

Գոյականի սեռական հոլով+գոյական կաղապարով կազմություններն արտահայտում են պատկանելության իմաստ: Բերենք օրինակներ՝ **բանակցությունների դինամիկա՝** Կրեմլում նշել են, որ Ուկրաինայի հետ բանակցությունների դինամիկան հուսադրող չէ (Lurer.am, 18.04.22):

Կարող է արտահայտել վերաբերության իմաստ՝ **Թուրքիայի ագրեսիա**-Ամերիկան պետք է զսպի Թուրքիայի ագրեսիան, հայտարարում է ԱՄՆ-ում Հայաստանի դեսպանը (Azatutyun.am,24.02.21):

Գոյականի բացառական հոլով+դերբայ+գոյականի ուղղական հոլով: Արտահայտում են հատկանշային հարաբերություն

Ինչպես նշվեց, մամուլում հիմնականում կիրառվում են **ածական+ուղղական հոլովով գոյական** կաղապարով կազմված բառակապակցությունները: Դրանք արտահատում են հատկանշային հարաբերություն՝ **եվրոպական և ամերիկյան ինդեքսներ՝** Եվրոպական և ամերիկյան ինդեքսները նվազել են (Արցախի հանրային հեռուստատեսություն, 21.01.22):

Մասնակի սուբսիդավորում՝ Մեկնարկվում է տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման գործընթացը (Arlis.am, 07.03.19):

Դատական դեպարտամենտ՝ Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումները կազմված են վարչություններից, բաժիններից, ծառայություններից և դատարանների նախագահների խորհրդի հաստատած այլ ստորաբաժանումներից (Arlis.am,12.07.06):

Ռազմական ագրեսիա՝ Ադրբեջանի կողմից ռազմական ագրեսիա իրականացնելու դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել (hetq.am լրատվական, 16.11.21):

Ռազմական էսկալացիա՝ Անվտանգության Խորհուրդը, միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելով Լեռնային Ղարաբաղում եւ Հայաստան-Ադրբեջան սահմանին ռազմական բախումների հնարավորության վրա, անհրաժեշտ է համարում միջազգային զսպման մեխանիզմների գործարկումը՝ տարածաշրջանում նոր ռազմական էսկալացիա և էթնիկ զտում թույլ չտալու համար (Ազատություն ռադիոկայան, 28.03.22):

Պատմամշակութային էքսպանսիա՝ Երրորդ ոլորտը կարելի է դիտել որպես մշակութային էքսպանսիա (Arm.news,05.03.20):

Քաղաքական էլիտա՝ Պետք է քաղաքական էլիտան թարմացնել և իշխանության բերել նոր ուժերի (Tert.am 25.09.16):

Թուրքական բայրաքթար՝ Մահացել է թուրքական «Բայրաքթար» սարքերը նախագծած ընկերության հիմնադիրը (Azatutyun.am, 18.10.21):

Դերբայ +զոյականի ուղղական հոլով՝ Հնչեցված մեսիջներ՝ Ռուսաստանից հնչեցված մեսիջները քննարկվում են: (Արցախի հանրային հեռուստատեսություն, 19.04.22):

Ամփոփելով լեզվական նյութի ուսումնասիրությունը՝ կարող ենք ասել, որ «փոխառություններ կատարելիս կարևոր հանգամանք է այն, որ օտար բառը պետք է համապատասխանի փոխառու լեզվի հնչունական և գրաբանական համակարգին, իմաստային առումով հասկանալի լինեն, հաճախ գործածվեն լեզվակիրների կողմից»[1]:

Օգտագործված գրականություն

1. **Աբրահամյան Ս., Քոսյան Վ., Առաքելյան Վ.**, Շարահյուսություն, 2-րդ մաս, 1975:
2. **Ավետիսյան Յու., Թելյան Լ.,** Արդի հայերենի բառապաշարը, Երևան, 2020:
3. **Ավետիսյան Յու.** և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան, 2016:
4. **Բեդիրյան Պ.,** Հայ լեզուն և մեր խոսքը, Երևան, 1999:
5. **Էլոյան Ս.**, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002:
6. **Իշխանյան Ռ.Ս.,** Արդի հայերենի շարահյուսություն, Երևան, 1986:
7. **Հայրապետյան Ա.,** Օտար բառերի բառարան, Երևան, 2011:
8. **Ղազարյան Է.,** Բառապատճենումներ. բառապատճենման բառակազմական կաղապարները, Երևան:
9. Արցախի հանրային հեռուստատեսություն, «ԱզատԱրցախ» թերթ, Arm.news., Tert.am, Azatutyun.am, Arlis.am:

[1] ***Ավետիսյան Յու., Թելյան Լ.,*** *Արդի հայերենի բառապաշարը, Երևան, 2020:*

ՀՏԴ 801.6

Элеонора Петросян
Арцахский государственный университет
Email: pet265020@gmail.com

Научный руководитель:
к. ф. н., доцент Нунэ Аракелян

ИСПОЛЬЗОВАНИЕ КЛАССИЧЕСКОЙ ПОЭЗИИ В СОВРЕМЕННОЙ ПЕСЕННОЙ КУЛЬТУРЕ

Ключевые слова: *поэзия, культура, слово, музыка, стихи, жанр, романс, песня, поэт, чувства.*

Тема статьи актуальна, потому что песня, ее музыка и текст во все времена воздействовали и формировали речевую и общую культуру человека.

В статье рассматриваются особенности песенного жанра, а также на конкретных примерах дается краткая история обращений к классической поэзии как к источнику текстов популярных песен.

Էլեոնորա Պետրոսյան

ԴԱՍԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԳՈՒ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Բանալի բառեր՝ *պոեզիա, մշակույթ, բառ, երաժշտություն, բանաստեղծություններ, ժանր, ռոմանտիկա, երգ, բանաստեղծ, զգացմունքներ:*

Հոդվածի թեման արդիական է, քանի որ երգը, նրա երաժշտությունը և տեքստը բոլոր ժամանակներում ձևավորել են մարդու խոսքը և ընդհանուր մշակույթը:

Հոդվածում քննվում են երգի ժանրի առանձնահատկությունները, ինչպես նաև կոնկրետ օրինակներով տրվում է դասական պոեզիայի անդրադարձների համառոտ պատմություն՝ որպես հայտնի երգերի տեքստերի աղբյուր:

Eleonora Petrosyan

USING CLASSICAL POETRY IN MODERN SINGING CULTURE

Keywords: *poetry, culture, word, music, poems, genre, romance, song, poet, feelings.*

The topic of the article is relevant because the song, its music and text have influenced and shaped the speech and general culture of a person at all times.

The article examines the features of the song genre, and also gives a brief history of references to classical poetry as a source of texts of popular songs using specific examples.

В повести "Крейцерова соната" великий русский писатель Л.Н. Толстой пишет: "Музыка заставляет меня забыть себя, мое истинное положение, она переносит меня в какое-то другое, не свое положение; мне под влиянием музыки кажется, что я чувствую то, что я собственно не чувствую, что я понимаю то, чего я

не понимаю, что могу то, чего не могу. "[1] И действительно, правильно подобранная музыка и слова к ней имеют волшебную силу, вдохновляют, делают жизнь яркой, и в то же время могут стать причиной грусти и душевных терзаний.

Песенная культура сопровождала человечество всю историю цивилизации. Песня помогала людям в трудные, решающие и судьбоносные моменты. Вспомним, в частности, значение трагической и героической песни "Вставай, страна огромная" во время Великой Отечественной войны. И в истории армянского народа есть масса примеров, когда простые, но насыщенные сильными эпитетами песни вдохновляли и поднимали на борьбу против захватчиков. Как правильно сказано в "Марше веселых ребят":

- Нам песня строить и жить помогает,
- Нам песня любить и жить помогает.[2]

Эта песня, созданная поэтом В. Лебедевым-Кумачом и композитором И. Дунаевским, не случайно стала одной из тех задорных музыкальных произведений, которые пошли в массы и стали практически народными, потому что отражали настроения обычных людей, живущих

Музыка является важным элементом в жизни человечества еще с древних времен, царство звуков переносило человека в другой мир, помогало ему отвлечься от тяжелой борьбы за выживание и справиться с ежедневными испытаниями. Музыка сопутствовала древнему человеку во время охоты, при служении богам, при жертвоприношениях, ритуальных танцах и т.д. Появление первой членораздельной речи сразу же стало сопровождаться сочинением песен, посвящённых повседневной жизни первобытных людей.

Барельефы, живописные изображения, литературные источники свидетельствуют о важном значении песенной культуры и в античные времена. Песня в Древнем мире сопровождала танцы, пиры, театральные представления, общественные празднества, спортивные состязания (в частности, Олимпийские игры), похороны.

Богослужения в языческих храмах и различные "таинства" тоже сопровождались пением хоров и игрой на музыкальных инструментах.

В Средние века во времена крестовых походов появились авторы песен - рыцари-трубадуры (трубадур в переводе с французского означает "слагать стихи").[3] Они и стали первыми композиторами-профессионалами, посвятившими себя созданию песен. Трубадуры появились на юге Франции, в Провансе, в XI веке и писали стихи и музыку, а их спутники - слуги-менестрели пели песни своего господина, но только в том случае, если он по каким-то веским причинам не мог сделать этого сам, аккомпанировали ему, а иногда сами подбирали или сочиняли мелодию.

Это новое поколение людей, которые после грубого варварского периода вырабатывало новые этические и эстетические требования вежливого, "куртуазного" поведения, которое касалось дамы их сердца. Из этого следует, что главная тема трубадуров – тема любви, любви идеальной, полной безмерного обожания и самоотречения. И здесь не важно, что певец порой никогда даже не видел даму своего сердца. Певцы не только прославляли возвышенный образ прекрасной возлюбленной, но и славили настоящую земную любовь и все прочие радости жизни.

Искусству трубадуров подражали и в других европейских странах. У немцев в XII - XIII веках появились свои поэты-певцы, которые назывались миннезингерами. Миннезингер означает на немецком языке «minner» - любовь и «singer» - певец.[4]

На протяжении всех последующих столетий песня помогала жить и развивать цивилизацию всем народам мира. Человечество уже не мыслило себя без песен и их разнообразного практического и эмоционального влияния на жизнь.

Истоки русской песни были народными. И эта связь с фольклором после появления профессиональных композиторов и поэтов-песенников не прервалась. Народные песни являлись наиболее

---

[1] ***Толстой Л.Н.*** *"Крейцерова соната"; Собрание сочинений в восьми томах, изд. "Лексика"; Москва 1996 год; 23/28стр.*

[2] *"Русские советские песни"* ***Крюков Н., Шведов Я.****; Москва: изд. "Художественная литература", 1977 год; 164-165/ 751 стр.*

[3] *"Советская энциклопедия" словарь /Гл. Ред. А.М. Прохоров. - 4-ое изд.; Москва 1990 год; 1372/1632 стр.*

[4] *"Советская энциклопедия" словарь /Гл. Ред. А.М. Прохоров. - 4-ое изд.;Москва 1990 год; 819/1632 стр.*

любимым и доступным жанром для широкого круга людей. В Древней Руси песни слагались и пелись сказителями. Сказители - русские непрофессиональные певцы из крестьян, исполнители былин, исторических песен, баллад (Рябинины, М.Д. Кривополенова, М.С. Крюкова).[1] Жанр песни в России XVIII века был популярным и самым массовым видом словесно-музыкального творчества. Этот период известен глобальными переменами в политической экономической, социальной и культурной жизни русского обществ и совпадает с периодом реформ Петра 1-ого, его военных побед и крестьянского бунта под предводительством Емельяна Пугачева.

Песня - род словесно-музыкального искусства; жанр вокальной музыки (народной и профессиональной). Песни по содержанию бывают лирические, патриотические, сатирические и т.п.; по социальной функции – обрядовые, бытовые, военно-строевые и т.п.; по исполнительскому составу – сольные, хоровые, с инструментальным сопровождением и без него. Песня так же разделяется на жанры: концертная, эстрадная и массовая.[2]

Одним из основоположников классического стихосложения в русской песенной лирике являлся Б. К. Тредиаковский, а в становлении жанра любовной песни - А.П. Сумароков.

В XX веке произошла резкая смена культурного пространства, которая отразилась и отражается на качестве песенной культуры. Значительно расширились рамки публичных текстов, в том числе в СМИ и кинематографе, что сыграло большую роль в перемене духовно-культурного аспекта в обществе и затронуло песенный жанр. Тем не менее, интерес к классической поэзии как к одному из источников текстов популярных песен не исчез.

В период существования Советского Союза появилось много песен, чаще всего романсов, на стихи великих и известных поэтов XIX и XX столетия. Таковыми являются Александр Сергеевич Пушкин, Михаил Юрьевич Лермонтов, Федор Иванович Тютчев, Марина Ивановна Цветаева, Осип Эмильевич Мандельштам и многие другие.

Рассмотрим несколько популярных романсов и песен, украсивших жизнь нескольких поколений, в исполнении известных поп-групп, бардов и певцов.

Редко кто сейчас не знает этих замечательных строк о любви, автором которых является Тютчев.

Я встретил вас — и всё былое
В отжившем сердце ожило;
Я вспомнил время золотое —
И сердцу стало так тепло…[3]

Этот романс относится к жанру камерно-вокальной музыки. По содержанию это песня лирическая. На протяжении долгого времени мало кто знал, кому посвящено было данное стихотворение Тютчева, пока поэт не раскрыл своему другу Я.П. Полонскому этот секрет: инициалы "К.Б. " обозначают сокращение переставленных слов- Баронессе Крюденер.

К Амалии Максимилиановне Крюденер, которую поэт впервые увидел, когда ей было 14 лет и красотой которой восхищались Пушкин и Гейне, поэт испытывал чувства до конца своих дней, но близкие отношения у них так и не сложились. Родители Амалии выдали ее замуж за барона Крюденера, отказав поэту из-за его незнатного происхождения и не слишком высокого положения в обществе.

Любовные стихи " Я встретил вас" полны сердечного трепета, высоких чувств, жгучего волнения и тоски по золотым временам.

Данные стихи чаще всего поются, нежели декламируются. При жизни Тютчева это стихотворение не успело получить широкой известности. Оно было напечатано в 1870 году и спустя некоторое время почти забыто и не замечено большими русскими композиторами. Музыку на эти стихи писали в конце XIX века С. Донауров и позже А. Спирро, но и этот вариант не прижился. Лучший романс был написан композитором Л. Малашкиным в конце 70 годов XIX века. Возродился романс благодаря советскому певцу И.С. Козловскому, благодаря которому его запели повсюду.

---

[1] *"Советская энциклопедия" словарь /Гл. Ред. А.М. Прохоров. - 4-ое изд.; Москва 1990 год; 1228/1632 стр.*

[2] *"Советская энциклопедия" словарь /Гл. Ред. А.М. Прохоров. - 4-ое изд.; Москва 1990 год; 1006/1632 стр.*

[3] ***Чагин Г.В. " Тютчев Ф.И.*** *";издательство"Знание";Москва 1988 год;49/64 стр.*

Романс так же исполняли знаменитый оперный певец Георг Отс, популярные певцы Игорь Дороднов, Лев Лещенко, Олег Погудин, Александр Малинин и известное вокальное трио "Реликт". Фрагменты данного романса были использованы в кинокомедии Л. Гайдая "Бриллиантовая рука".

На стихи Ф. Тютчева было написано множество и других прекрасных романсов. Композитором Сергеем Рахманиновым был создан романс "Весенние воды". Автором музыки и исполнителем "Зима недаром злится…","Люблю глаза твои, мой друг…","Ещё земли печален вид…","Чародейкою Зимою…","Есть в осени первоначальной…", "Silentium" является Матюхин Александр Борисович-современный петербургский композитор и певец, декламатор, поэт.

Интересна и история песен на стихи Осипа Мандельштама, поэта сложного и неоднозначного, с хрупким и богатым внутренним миром. Тонкая душевная организация чувствуется в стихотворении поэта под названием" Я ненавижу свет…". Данное стихотворение было написано в 1912 году и посвящено Марине Цветаевой, под впечатлением от знакомства с которой долго находился Мандельштам. На протяжении всей жизни поэт испытывал возвышенные и нежные чувства к поэтессе.

По мнению Мандельштама, случайности не случайны, и любое событие имеет не только свое значение, но и свою цену. Поэт не принимает душевной открытости Цветаевой, считая, что нельзя открывать до конца свой внутренний мир обществу. Мандельштам затрагивает также тему вечности, объявляет о своем неприятии пустоты и предлагает свой способ борьбы с ней.

Там – я любить не мог,

Здесь – я любить боюсь…[1]

Современная версия песни на это стихотворение Мандельштама в виде философской притчи была создана в наши дни рок и поп-певцом Владимиром Золотухиным, более известным под псевдонимом Zoloto. Песня была исполнена в честь 130-летия Осипа Мандельштама и вошла в сборник "Сохрани мою речь навсегда", который вышел в свет 14 января 2021года. В сборник вошли и другие песни на стихи Осипа Мандельштама, написанные российскими и зарубежными композиторами и авторами-исполнителями.

Исполнителями песен стали: Леонид Агутин -" Золотистого мёда струя из бутылки текла", IOWA - "Возьми на радость из моих ладоней... ",Свидание- "Нежнее нежного", Alina Pash - "Среди лесов, унылых и заброшенных... ", Женя Мильковский (солист рок-группы "Нервы") - "Только детские книги читать", Noize MC — (рэп-рок исполнитель) - "Век-Волкодав" ("За гремучую доблесть грядущих веков").[2]

В современной песенной культуре особо востребована и поэзия Марины Цветаевой. На стихи поэтессы исполняли песни и романсы многие артисты и певцы: Елена Фролова – "Птица вербная", Валерия Беседина- "Лебединый стан", Алла Пугачева- "Мне нравится, что вы больны не мной"; "Реквием" ("Монолог"), Валентина Пономарева-"Под лаской плюшевого пледа", Ирина Аллегрова, Ирина Дубцова- "Я тебя отвоюю" и многие другие.

Музыку к стихотворению Марины Цветаевой "Мне нравится, что вы больны не мной" написал известный композитор Микаэл Таривердиев. Этот лирический романс был создан для всенародно любимого фильма" Ирония судьбы или С легким паром". Песню исполняла пока еще мало кому известная Алла Пугачева, и эта песня тогда стала визитной карточкой и фильма, и исполнительницы. Благодаря комедии Эльдара Рязанова стихотворение Марины Цветаевой "Мне нравится, что вы больны не мной", посвященное непростым отношениям поэтессы с мужем сестры Анастасии М.А. Минцем, получило широкую известность.

"Многие не понимают этого стихотворения, ищут подтекст, второй смысл. А никакого второго смысла нет, — поделилась Анастасия Цветаева. — Мне было 20 лет, я рассталась со своим первым мужем. На моих руках — двухлетний сын Андрюша. Маврикий Александрович впервые переступил порог моего дома (выполнял просьбу друга), мы проговорили целый день.

Маврикий Александрович сделал мне предложение. Я стала его женой.

Но, когда Маврикий Александрович познакомился с Мариной — он ахнул! Марине 22 года, и она уже автор двух поэтических сборников, у нее прекрасный муж и двухлетняя дочь. Марина в те счастливые

---

[1] ***Мандельштам Осип*** *" Сочинения ";издательство"Художественная литература", Москва 1990 год;78/638 стр.*

[2] *https://om130.ru/*

годы была хороша собой, белоснежная кожа с легким румянцем, красивые вьющиеся волосы. Маврикий Александрович любовался Мариной, она это чувствовала и... краснела. Марина была благодарна Маврикию Александровичу, что я не одинока, что меня любят... Вот об этом стихотворение. Марине "нравилось", и никакого второго смысла в нем нет".[1]

Мне нравится, что Вы больны не мной,
Мне нравится, что я больна не Вами,
Что никогда тяжелый шар земной
Не уплывет под нашими ногами.
Мне нравится, что можно быть смешной —
Распущенной — и не играть словами,
И не краснеть удушливой волной,
Слегка соприкоснувшись рукавами.[2]

Таким образом, мы пришли к выводу, что классики поэтического слова не только востребованы во все времена, но и их творчество прекрасно взаимодействует с музыкой, что увеличивает популярность классической поэзии и привлекает к ней новых читателей. Поэзия всегда была и будет тесно связана с музыкой, а когда песню можно представить в ином музыкальном стиле, сделать прекрасную аранжировку и импровизацию, то она придает новое звучание классическим стихам и способствует их новому прочтению. В этом деле немаловажную роль играют и исполнители этих песен. Если они обладают особым шармом, талантом и популярностью, то успех песни у слушателей обеспечен. Это тройное сочетание красивой поэзии, прекрасной музыки и великолепного исполнения возрождают интерес к поэзии и даруют ей долгую жизнь.

лассической поэзии вторую жизнь, вдохнув в нее весну и новое дыхание. И если слушатели и читатели существуют, как правило, в отдельности, то песни на стихи признанных классиков объединили эти два лагеря в один, что особенно важно для повышения интереса к чтению у молодежи.

Литература

1) Чагин Г.В. "Тютчев Ф.И. ";издательство"Знание";Москва 1988 год; 49/64стр.
2) Группа" Мир знаний"; Загадка стихотворения "Мне нравится, что вы больны не мной"; 30 декабря 2021 г.
3) Толстой Л.Н. "Крейцерова соната"; Собрание сочинений в восьми томах, изд. "Лексика"; Москва 1996 год; 23/28 стр.
4) Мандельштам Осип " Сочинения ";издательство"Художественная литература", Москва 1990 год; 78/638 стр.
5) "Русские советские песни" Н. Крюков, Я. Шведов; Москва: изд. "Художественная литература", 1977год ; 164-165/751 стр.
6) "Советская энциклопедия" словарь /Гл. Ред. А.М. Прохоров. - 4-ое изд.; Москва 1990 год; 819,1372/1632 стр.
7) https://om130.ru/

[1] *Группа" Мир знаний"; Загадка стихотворения "Мне нравится, что вы больны не мной"; 30 декабря 2021 г.*

[2] *Группа" Мир знаний"; Загадка стихотворения "Мне нравится, что вы больны не мной"; 30 декабря 2021 г.*

ՀՏԴ 82.09

Գայանե Միրզոյան
ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի
«Հայ գրականության պատմություն»
մասնագիտացման
2-րդ կուրսի մագիստրանտ

Գիտական ղեկավար՝ Զ. Բալայան

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ՄՈՒՐԱՑԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ «ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՄԻԱՆՁՆՈՒՀԻ» ՎԻՊԱԿՈՒՄ

Բանալի բառեր՝ *19-րդ դար, Ռուսաստան, Շուշի, Գանձասար, Ամարաս, կերպարվեստ, Վարանդա, Խաչեն, Դիզակ, 60-ականների սերունդ:*

Անշուշտ, պատմական Արցախն իր ինքնատիպ մշակույթով, հայ ժողովրդի ամբողջական մշակույթի անբաժանելի մասն է, որին տեղական երանգավորմամբ հատուկ են նույն օրինաչափությունները և ընդհանուր ազգային առանձնահատկությունները և Մուրացանը հրաշալի է վիպականացրել XIX դարի Արցախական աշխարհի մշակութային կյանքը՝ տալով նրա նկարագիրը հասարակական հարաբերություններից ծնվող նյութապաշտ բարքերը, դրա կողքին՝ 60-ականների սերնդի լուսավորական մեծ շարժումը, այն խոչընդոտող սև, ազգադավ հոսանքը:

Гаяане Мирзоян
АрГУ, магистратура 2-ый курс по специальности "Армянская литература"

ПРОБЛЕМЫ ПРОСВЕЩЕНИЯ И ОБРАЗОВАНИЯ В АРЦАХЕ И ССЫЛКИ МУРАЦАНА В ПОВЕСТИ "ТАИНСТВЕННАЯ МОНАХИНЯ"

Ключевые слова: *19 век, Россия, Шуши, Гандзасар, Амарас, искусство, Варанда, Хачен, Дизак, поколение 60-ых.*

Безусловно, исторический Арцах с его уникальной культурой является неотъемлемой частью всей культуры армянского народа, для которой характерны те же закономерности и общенациональные особенности в местном колорите, и Мурацан прекрасно романизировал культурную жизнь арцахского мира XIX века, дав характеристику материалистической морали, порожденной общественными отношениями, а также великому просветительскому движению покол ения 60-х, мешавшему ему националистическому течению.

Gayane Mirzoyan

PROBLEMS OF ENLIGHTENMENT AND EDUCATION IN ARTSAKH AND MURATSAN'S REFERENCES IN THE STORY "THE MYSTERIOUS NUN"

Key words*: nineteenth century, Russia, Shushi, Gandzasar, Amaras, art, Varanda, Khachen, Dizak.*

Of course, the historical Artsakh with its unique culture is an integral part of the entire culture of the Armenian people, which are characterized by the same patterns and nationwide features in the local color, and Muratsan perfectly romined the cultural life of the Artsakh world of the 19th century, giving characteristics of materialistic morality generated by public relations, and Also, the great educational movement of the generation of the 60s, which prevented him from the nationalist current.

Հազարամյակների պատմություն ունեցող Արցախի ինքնատիպ մշակույթը՝ տեղական երանգավորմամբ, ազգային նույն օրինաչափություններով ու առանձնահատկություններով անցել է երկար ու բեղուն ճանապարհ: Պատմական տարբեր ժամանակներում Արցախի մշակույթը ծառայել է արցախահայության պահպանման և շրջակա, հաճախ ավելի հզոր, էթնիկական հանրություններից նրա պաշտպանության գերխնդրին: Աստիճանաբար ձևավորվել է արցախցիների մշակութային ավանդույթը, որը թույլ է տվել բյուրեղացնել նրա մոտ ձևավորված ավելի բնորոշ գծեր և դրանք հաղորդել հաջորդ սերունդներին: Լինելով հանուր հայության մշակույթի մի օղակ, Արցախի մշակույթը սնունդ է առնում նրա բազմադարյան ավանդներից և իր նպաստն է բերում համազգային մշակույթի գանձարանին: Հետաքրքիր է, որ Մեծ Հայքի տասներորդ նահանգի՝ Արցախի բնակչությունը, իր քաղաքական ու մշակութային շրջահայաց գործիչների ջանքերի շնորհիվ, պատմական ամենածանր պայմաններում իսկ կարողանում էր ետ չմնալ համազգային հոգևոր կյանքի ընթացքից: Դա նկատելի է հատկապես քննության ենթակա ժամանակաշրջանում:

«Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատմա-քաղաքական խառնակ ու ծանր պայմաններում Արցախի մշակութային կյանքը շարունակեց հարատևել անհամաչափ առաջընթացով՝ իհարկե մինչև 19-րդ դարի սկիզբը»[1] [2],- գրում է Մ. Հարությունյանը:

Դարասկզբին տեղի ունեցող բախտորոշ իրադարձությունները Արցախի ժողովրդի պատմության մեջ նշանավորեցին մշակութային կյանքի էական փոփոխություններով և շրջադարձերով, որոնք որակապես փոխեցին երկրամասի հոգևոր ու նյութական մշակույթի բնույթն ու կերպարը: Այդ շրջադարձերը վճռական դեր խաղացին Արցախի ժողովրդի կյանքում՝ հիմք դնելով նոր ժամանակի պահանջների համահնչուն աշխարհայեցողությանը և մշակույթին՝ իր բոլոր դրսևորումներով:

Դարաշրջանի Արցախի մշակույթի բնութագրական հատկանիշներից էր դպրոցների, տպարանների, պարբերականների բացումը և գործունեությունը, գիտության, գրականության, տպագրության, թատերական արվեստի, երաժշտության, կերպարվեստի և այլ ճյուղերի վերելքն Արցախի ամենատարբեր մասերում՝ նրա մշակութային կենտրոններում, Ամարասում, Դադի, Գտչա, Գանձասարի վանքերում և հատկապես Անդրկովկասում առաջնային հռչակված մշակութային խոշոր կենտրոն Շուշիում: Իհարկե, դա տեղի էր ունենում բավականաչափ այլազան մշակութային մթնոլորտի պայմաններում: Հետևաբար՝ նոր ժամանակի Արցախի մշակույթը սնվում է իր պատմական և այլ ակունքներից, փոխազդեցության մեջ մտնում զանազան էթնիկ մշակույթների և մշակութային ավանդույթների հետ: Եվ պետք է ասել, որ արցախահայ մշակույթն աստիճանաբար խզում է դարավոր կապերը հարևանների ավանդույթների հետ, որոնք թշնամաբար ու միտումնավոր քաղաքականություն են վարում և ուժեղացնող առնչություններ հաստատում ռուսական մշակույթի, հասարակական-քաղաքական առաջադիմական մտքի հետ: Ինչ խոսք, որ զգալի չափով ռուսական միջնորդավորմամբ են հայ

---

[1] *http://arar.sci.am/Content/166012/file_0.pdf:*

[2] ***Հարությունյան Մ.**, 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի Արցախի մշակույթի զարգացման առանձնահատկությունները, «Կանթեղ», Երևան, «Ասողիկ» հր., 2006, էջ 114:*

իրականություն ներթափանցում արևմտաեվրոպական մշակութային արժեքները, և անմիջական շփումներ են սկզբնավորվում ռուսական միջավայրի հետ: Նման պատմական պայմաններում պահանջվում էր անդուլ գործունեություն և ջանքեր՝ արցախահայ մշակույթի առաջընթացը ճիշտ ուղիով տանելու համար, որն, իհարկե, դարասկզբին սկիզբ առած այդ շարժի զարգացման միտումն էր: 19-րդ դարի երկրորդ կեսին Արցախի մշակութային կյանքի վերելքը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով: **Առաջին,** դարաշրջանի կարևոր իրադարձություններն իրենց ազդեցությունն էին թողնում մշակույթի զարգացման ու նրա ուղղությունների վրա: **Երկրորդ,** Արցախի մշակութային վերընթացը սերտորեն կապված էր Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքում առաջացած նոր փոփոխությունների հետ: **Երրորդ,** արցախահայ երիտասարդությունը Ռուսաստանում, Եվրոպայում իր ուսումնառության ընթացքում ոչ միայն յուրացնում էր այդ երկրների մշակույթը, այլև նրանից առանձնացնում արժեքավորը, որը կարող էր առաջ մղել բազմադարյան Արցախի հոգևոր հարստությունը: Այս առումով էլ, Արցախի մշակույթը ոչ թե ընդօրինակողի կամ ազդեցություն արտահայտողի դեր ստանձնեց, այլ հենվելով իր մշակութային հարուստ ժառանգության արմատների վրա, կռահելով ռուսական, եվրոպական, ինչպես նաև հարևան երկրների մշակույթի զարգացման ուղղությունները, առավել հարստացրեց հայրենի ոչ նյութական արժեքները, որը ոչ միայն մրցունակ դարձավ, այլև ներկայացրեց արտահայտամիջոցների իր անկրկնելի դրսևորումները, որոնք հիմնականում ծնունդ էին առնում ազգային կյանքից, ազգային մտախառնվածքից և մտածողությունից, ազատագրական շարժումներից, տնտեսական կացությունից, հասարակական հարաբերություններից: Եվ, **չորրորդ,** դիտարկվող ժամանակաշրջանում՝ 50-60-ական թթ. սկսած Արցախի խոշոր մշակութային կենտրոն Շուշիում, թեմի լուսավորության օջախներում բեղմնավոր գործունեություն են ծավալում հայ գրականության, արվեստի, տպագիր գործի ականավոր գործիչները, որոնք իրենց հարուստ փորձով ու ձեռնարկումներով թարմություն մտցրին հայ ժողովրդի այդ հատվածի մշակութային կյանքում:

Դարաշրջանի Արցախի մշակույթի գլխավոր օջախներից մեկը դպրոցն էր: Հայտնի է, որ Մեծն Մաշտոցի հանճարով ստեղծած հայ գրերի գյուտից հետո հայեցի կրթություն տվող դպրոցներ են բացվում նաև Հայոց արևելից կողմանց գավառներում՝ Ամարասում, Մեծարանք, Մեծկվենք, Մեծ Կողմանք գավառներում, Ուտիքի Գարդմանում և այլ վայրերում:

Գրիգոր Լուսավորիչն ու Մեսրոպ Մաշտոցն իրենց գործունեության լուսավոր շղթայի մեջ են առել Ամարասը, որը դարձել է համայն Արցախի կրթատունն ու հոգևոր ներշնչարանը: Ամարասը համարվում էր ոչ միայն Արցախի հոգևոր (եպիսկոպոսանիստ), այլև խոշոր մշակութային ու տնտեսական կարևոր կենտրոն: Տարբեր ժամանակներում այստեղ ծաղկել են թարգմանչական արվեստը, մատենագրությունը, լուսավորությունն ու գիտությունը:

19-րդ դարի երկրորդ կեսին՝ Արցախի դպրոցի պատմության զարգացման նոր շրջանում, ընդլայնվում է նոր տիպի դպրոցների ցանցը, արմատապես վերակառուցվում կրթության բովանդակությունը, կիրառվում են ուսուցման առաջավոր մեթոդներ ու ձևեր, ամենակարևորը, որ դպրոցներում մանկավարժական բեղմնավոր գործունեություն են ծավալում արդեն գործնականում հայտնի դարձած անվանի մանկավարժներ Պ. Շանշյանը, Պ. Պռոշյանը, Ղ. Աղայանը, Առաքել և Ավետիք Բահաթրյանները, Խ. Ստեփանեն, Ս. Մանդինյանը, Մ. Աբեղյանը, Լ. Սարգսյանը և ուրիշներ:

Ուշագրավ է հատկապես Պետրոս Շանշյանի, Պերճ Պռոշյանի, Մարիամ Հախումյանի գործունեությունը Շուշիի բարեկարգ օրիորդաց դպրոցի հիմնադրման գործում (1864 թ.): Ի դեպ նշենք, որ դարի երկրորդ կեսին

Ղարաբաղի առաջին օրիորդաց դպրոցը հիմնել է տիկին Եղիսաբեթ Սարգսյանցը 1867 թ. Շուշիում, որի շրջանավարտներից էր Արցախի հասարակական, կրթական կյանքի հայտնի լուսավորիչ, մանկավարժ, գեղանկարչուհի Մարգարիտա Ալեքսանյանը (1838-1902 թթ.): Պաշտոնական տվյալների համաձայն՝ Արցախի կրթական համակարգում առանձնահատուկ տեղ է գրավում Շուշիի ռեալական ուսումնարանը (1881 թ.), որն իր 40-ամյա գոյության տարիներին սերտ կապված էր թեմական և օրիորդաց դպրոցների, ինչպես նաև հայ լուսավորչական մյուս թեմերի (Երևանի, Նոր Նախիջևանի, Աստրախանի, Վրաստանի, Բաքվի)՝ ուսումնական հաստատությունների, Մոսկվայի Լազարյան ճեմարանի հետ: Ինչպես թեմական դպրոցը, այնպես էլ Շուշիի ռեալական ուսումնարանը պատրաստել են բավական թվով ուսուցիչներ՝ հայկական դպրոցների համար, և նրա շրջանավարտներից շատերը, բարձրագույն կրթություն ստանալով Ռուսաստանի և եվրոպական համալսարաններում և վերադառնալով հայրենիք, դարձան ականավոր հայագետներ, մանկավարժներ, բժիշկներ, ճարտարագետներ, արվեստագետներ, գրողներ, գիտության այլ բնագավառների որակյալ մասնագետներ՝ Լևոն Աթաբեկյան, Արտեմ Աղամալյան, Լևոն Վարդունի, Արսեն Տերտերյան, Միքայել Արուտչյան, Առաքել Բահաթրյան, Արշակ Հակոբյան, Արշավիր Քամալյան, Աշոտ Հովհաննիսյան և շատ ուրիշներ: Այդ երկու ուսումնական հաստատությունները կարևոր դեր խաղացին Արցախի ժողովրդի հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի զարգացման, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում:

Արցախահայ դպրոցի պատմության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ ժամանակահատվածում թեմի հայկական դպրոցների հիմնական տիպերն էին՝ ծխական, հոգևոր, եկեղեցական-ծխական, իգական, թեմական դպրոցները և ռեալական՝ ռուսական տիպի ուսումնարանը: Թեմական դպրոցը հաճախ կոչվում էր նաև *դպրանոց, հոգևոր սեմինարիա*: Ունենալով համեմատաբար երկար կյանք՝ թեմական դպրոցը ժամանակի ընթացքում աստիճանաբար զարգացել է և դարձել կրթական շարժմանը գործնական ուղղություն տվող կենտրոն, մեր դպրոցական կյանքի մեջ ներդրվող նորամուծությունները հիմնականում ծնունդ էին առնում, փորձվում ու տարածվում էին այս դպրոցից: Ժողովրդին լուսավորելու ձգտումը ստիպեց հայ գործիչներին աստիճանաբար դպրոցները մոտեցնել այն վայրերին, ուր ապրում էր ժողովրդի հիմնական զանգվածը, այսինքն, դպրոցական ցանցը ընդլայնվում է նաև Վարանդայի, Դիզակի, Խաչենի, Ջրաբերդի և Արցախի թեմի մեջ մտնող մյուս գավառներում: Եվ պետք է ասել, որ նույնիսկ ցարիզմի ազգահալած, լուսավորական-դպրոցական հետադիմական քաղաքականության անբարենպաստ պայմաններում (որի ազդեցությամբ 1896-1905թթ. փակվել են հայկական դպրոցները) անգամ, Արցախի թեմում կառավարությունից գաղտնի՝ անլեգալ գործել են հայկական դպրոցներ: 19-րդ դարի վերջին հայերի կրթական գործի դեմ սկսած ցարիզմի լայն հալածանքի, ստոր քաղաքականության հանդեպ գնալով ծավալվում են դժգոհություններ, ամենուրեք տարերային հավաքներ ու ժողովներ էին կազմակերպվում՝ պայքարի ելնելու համար: Կազմակերպում էին ցույցեր՝ արևելահայ, ռուսահայ համայնքներում, հանուն ազգային իրավունքների պահպանման, ազգի գոյապահպանման լուսավոր օջախների վերաբացման: Ծավալվող հասարակական-քաղաքական շարժումներն իրենց ազդեցությունն ունեցան ցարական կառավարության քաղաքականության վրա և տվեցին դրական արդյունք: Այսպես, Նիկոլայ Երկրորդի հրամանով վերանայվում է կովկասյան իշխանության (Գոլիցինյան ռեժիմի) վարած սխալ ու հալածական քաղաքականությունը հայկական դպրոցների և առհասարակ, հայ ժողովրդի նկատմամբ: Այդ գործում մեծ դերակատարություն ունի հայերի կողմից հարգված բարոն Նոլդեն, որը ցարին ներկայացրած իր զեկուցագրում դրականորեն է արտահայտվում հայկական դպրոցների մասին, ներողամտորեն արդարացնում էջմիածնի դիմադրությունը և հայկական ընդվզումը,

բացատրում այն գոլիցինյան դաժան ռեժիմով և 1903 թվականի հուլիսի 12-ի օրենքով, որն իրեն չի արդարացրել: 1905 թվականի օգոստոսի 1-ի ցարական կառավարության հրամանագիրը սահմանում է՝ ի փոփոխումն 1903 թվականի հունիսի 12-ի օրենքի, հայ եկեղեցուն վերադարձնել նրան պատկանող գույքը, որ գրավվել էր գոլիցինյան ռեժիմի ժամանակ, և իրավունք վերապահել հոգևոր գործիչներին զբաղվելու ժողովրդին լուսավորելու գործով: Հրամանագրի 3-րդ և 4-րդ կետերը վերաբերում են դպրոցների վերստացմանը. Էջմիածնի կաթողիկոսը հատուկ կոնդակով պատվիրում է հոգաբարձական ընտրություններ անցկացնել, ուսուցչական խմբեր կազմել և նախապատրաստել դպրոցների բացումը:

Այսպիսով, 19-րդ դարի 2-րդ կեսին արցախահայ նոր դպրոցի կազմավորումն ու հետագա զարգացումն, ըստ էության խորապես առաջադիմական՝ նախադեպը չունեցող մի երևույթ էր:

Դպրոցական գործի առաջընթացն իր ներգործությունն ունեցավ նաև մշակութային կյանքի մյուս ճյուղերի զարգացման վրա:

Քննվող ժամանակաշրջանում Արցախի մշակույթի ընդհանուր վերելքի հետ միաժամանակ զարգանում է նաև նրա կարևոր ճյուղերից մեկը՝ պարբերական մամուլը՝ իր տարաբնույթ օրինակներով: Մամուլի սկզբնավորումը կապվում է արցախահայության ազգային ինքնագիտակցության, մշակույթի և հասարակական մտքի զարգացման հետ: Նրա հայտնության գործում նախապատրաստական կարևոր նշանակություն ունեցան հայկական գաղթօջախներում արևելահայ իրականությունում արդեն ձևավորված ազգային պարբերական հրապարակությունների ավանդույթները, որոնք ամենից առաջ սկիզբ են առնում հայերեն առաջին ամսագրից՝ Հ. Շմավոնյանի խմբագրությամբ Մադրասում հրատարակված «Ազդարարից» (1779-1796 թթ.): «Ազդարարից» ժառանգված այդպիսի ավանդույթներից էին ազգային ինքնության պահպանության, համախմբման ու միասնության, հայ եկեղեցու և նոր ժամանակներում ստեղծվող հոգևոր ու մշակութային արժեքների ներդաշնակության ու զարգացման, հայրենի բնաշխարհում ազգովին ամփոփվելու գաղափարները:

«Ազդարարից» է սկիզբ առնում նաև արևմտահայ «Տարեգրություն» (1802 թ.), «Եղանակ բյուզանդյան» (1820 թ.), «Արշալույս Արուրարյան» (1840 թ.), արևելահայ «Արևելյան ծանոցմունք» (1816 թ.), «Կովկաս» (1846 թ.), «Արարատ» (1851 թ.), «Հյուսիսափայլ» (1858 թ.), «Կռունկ հայոց աշխարհի» (1860 թ.) և այլ պարբերականներ: Արցախահայ մամուլի սկզբնավորման համար որոշ չափով հող նախապատրաստեցին վերոդիտյալ պարբերականների գործունեությունն ու փորձը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արցախահայ մամուլի զարգացման առաջին շրջանն ընդգրկում է 1870-1887-ական թվականները, երբ սկզբնավորվում է ազգային լրագրությունն ու հրապարակախոսությունը, մշակվում՝ Արցախի լրատվական համակարգը, որի ամենակարևոր առանձնահատկությունն ազգային նպատակաուղղվածությունն էր:

Այս առանձնահատկությունն արդեն բավական նկատելի է Շուշիի հոգևոր տեսչության տպարանում լույս տեսած անդրանիկ պարբերականի՝ «Հայկական աշխարհ» գրական, մանկավարժական, ապա նաև կրոնական ամսագրի (1874-1876 թթ.) էջերում: Ամսագրի տերն ու տնօրենը եվրոպական համալսարաններում մանկավարժական և իրավաբանական կրթություն ստացած Խորեն Ստեփանեն էր: 1868 թ. նրան հրավիրում են Արցախ՝ թեմական դպրոցում ռուսաց լեզու դասավանդելու:

Բազմավաստակ գրող, պատմաբան Լեոն իրավացիորեն մատնանշում է, որ Խորեն Ստեփանեն մի շարք նախաձեռնությունների հեղինակ էր. հիմնում է բարեգործական ընկերություն, գրադարան-ընթերցարան, դպրոցներ, նաև հանձն առավ Շուշիում հրատարակելու հայկական առաջին

պարբերականը: Պարբերականի երկու տարիների համարներում տպագրվում են լուսավորության, դպրոցի ներքին կյանքին առնչվող մանկավարժական բազմաբնույթ հոդվածներ:

Առաջ է քաշվում գիտության տվյալները ժողովրդի բարօրությանը ծառայեցնելու հարցը, կոչ է արվում բարձրացնելու գիտության մշակների հեղինակությունը:

Լինելով առաջին մանկավարժական օրգանը Արցախում՝ «Հայկական աշխարհ»-ն իր կարճատև գործունեության ընթացքում կարողացավ բավական կատարելագործվել, վերացական-խրատական ոգին փոխարինել դպրոցներին հուզող կոնկրետ խնդիրներով: 1880-ական թվականներին աննախընթաց լայն իրազեկությամբ, հասարակական կյանքի, մշակույթի, աշխարհաբարի, դպրոցի ու մանկավարժության, նոր գրականության վերաբերյալ իր հրատապ ու հարուստ հրապարակումներով առանձնանում են Շուշիի Մ. Մահտես-Հակոբյանի տպարանում 1887 թվականին տպագրված Նիկողայոս Տեր-Ավետիքյանի «Քնար խոսնակը», Սիմոն Հախումյանի «Գործ» (1882-1884 թթ.) գրական, քաղաքական և ազգային պարբերականները: Նրանց էջերում հրատարակվող նյութերը բազմաժանր էին. տեղեկությունների, թղթակցությունների, նամակների կողքին զետեղվում էին բանաստեղծություններ, արձակ գործեր, առակներ, մանկավարժական, գրականագիտական, պատմական, ազգագրական, հասարակական-քաղաքական բնույթի հոդվածներ, ուր խոսվում էր ուսուցիչների մանկավարժական պատրաստվածության, վարպետության, աշակերտների մեջ դեպի կրթությունը, ուսումը սեր պատրաստելու, ժողովրդական լայն զանգվածների լուսավորության և մշակութային կյանքին առնչվող այլ հրատապ հարցերի մասին: Առաջ էր քաշվում նաև ռուս և եվրոպական առաջավոր արվեստին և գրականությանը հաղորդակից լինելու, թարգմանելու անհրաժեշտությունը:

Նշված տասնամյակում Շուշիում հրատարակվող պարբերական մամուլում առավել խորանում են հայ երկու խոշոր հատվածների հոգևոր ու մշակութային կապերը, հարուստ նյութ է պարունակվում հայ հասարակական կյանքի, գրականության, գիտության ու արվեստի վերաբերյալ:

Պարբերական մամուլին աշխատակցում էին տաղանդավոր հրապարակախոսներ, լրագրողներ, գրողներ, մանկավարժներ, արվեստի նշանավոր գործիչներ, որպիսիք էին՝ Գրիգոր Արծրունին, Համբարձում Առաքելյանը, Ալեքսանդր Քալանթարը, Հակոբ Խոջամիրյանը, Միսաք Առուստամյանը և ուրիշներ, որոնք իրենց բազմաբնույթ հոդվածներում լուրջ և հասարակայնորեն ազդեցիկ խոսք են ասել ազգային կյանքի համար այնպիսի կարևոր հիմնախնդիրների մասին, ինչպիսիք են հայ իրականության մեջ եկեղեցու և հոգևորականության դերի, մշակութային կրթօջախների բարենորոգումների, ժողովրդի լուսավորության գործի, երկրամասի մշակույթի ամենատաբեր ճյուղերի զարգացման մասին:

Արցախահայ պարբերական մամուլի զարգացման հաջորդ փուլում՝ 19-րդ դարի 90-ական թվականներին, Շուշիում լույս է տեսնում ականավոր բանասեր, ազգագրագետ Երվանդ Լալայանի «Ազգագրական հանդես»-ը (1896-1897 թթ.): Հանդեսը մշակութային կյանքին առնչվող բազմաբովանդակ հարցերից, սոցիալականից բացի ստանում է նաև քաղաքական իմաստավորում՝ այն տեսակետից, որ ակտիվորեն քննարկում է ցարական կառավարության քաղաքականությունը ժողովրդական լուսավորության ասպարեզում, որն ավելի ծանր դրսևորումներ էր ստացել, (ծայրամասերում խիստ ուժեղացավ ազգային ճնշումը մշակույթի ասպարեզում, մայրենի լեզուներով հրատարակությունների արգելումը, ազգային մշակույթի գործիչների հալածանքը զուգակցվում էին բռնի ռուսացմամբ, ուղղափառության ստիպողական տարածմամբ, ազգահալած քաղաքականության իրագործմամբ):

Քննարկվող ժամանակաշրջանում արցախահայ մամուլի լրատվության սահմանների այդպիսի ընդարձակումը վկայում է նրա ընթերցողների հետաքրքրության նոր միտումների մասին, փաստում,

որ հայ ժողովրդի այդ հատվածում ձևավորվում է լրատվության ազգային բովանդակությունը և նրանում, որ արցախահայ մամուլը կայացել է:

19-րդ դարի երկրորդ կեսին Արցախում դպրոցական համակարգի զարգացումը, գրատպության, պարբերական մամուլի բնագավառներում ձեռք բերված նվաճումներն իրենց ազդեցությունն ունեցան նաև մշակութային կյանքի մյուս բնագավառների՝ գիտության, գրականության, թատերական արվեստի, երաժշտության, կերպարվեստի և այլ ուղղությունների զարգացման վրա:

Այսպիսով, 19-րդ դարի երկրորդ կեսին Արցախի մշակութային կյանքում նկատվող առաջընթացն իր ներդրումն ունեցավ արևելահայ հատվածի մշակույթի ընդհանուր վերելքի գործում՝ այն հարստացնելով իր ուրույն գույներով: Անշուշտ, պատմական Արցախն իր ինքնատիպ հոգևոր գանձերով, հայ ժողովրդի ամբողջական մշակույթի անբաժանելի մասն է, որին տեղական երանգավորմամբ հատուկ են նույն օրինաչափությունները և ընդհանուր ազգային առանձնահատկությունները: Գրական, կրթական, հրատարակչական, հոգևոր, մշակութային կյանքի գեղարվեստական նկարագիրը, որով Մուրացանը փորձում է ընդգծել 1860-ականների լուսավորության գաղափարակիրների առաքելությունը՝ առաջադրելով իր գյուղափրկիչ ծրագիրը, գրողը ներկայացրել է իր «Խորհրդավոր միանձնուհի» բարձրարժեք վիպակում:

Վիպակի գործողությունները կատարվում են Արցախում: Հիասքանչ բնությունն ու աշխարհագրական անկրկնելի լանդշաֆտը, Շուշի քաղաքը (բնագրում՝ Շ.) և այն ամենը, ինչ կազմավորում է երկի հիմնանյութը, արցախյան է[1]:

Միահյուսելով պատմականն ու գեղարվեստը, ներկայացնելով XIX դարի երկրորդ կեսի Արցախական աշխարհի նկարագիրը՝ Մուրացանը հատկանշում է Շուշիում սկսված լուսավորական-կրթական շարժումը՝ որպես առաջավոր մշակութային երևույթ:

Վեպում ընդգծվում է Շուշիի՝ լուսավորության կենտրոն լինելու փաստը, մանավանդ, որ այնտեղ գործում էր հայոց հոգևոր թեմական դպրոցը, իսկ 1864-ի ապրիլի 7-ին բացվում է հայոց օրիորդաց դպրոցը, որտեղ ուսանում է վիպակի գլխավոր հերոսուհի Աննան:

Մուրացանը հրաշալի է վիպականացրել XIX դարի Արցախական աշխարհի մշակութային կյանքը՝ տալով նրա գեղարվեստական նկարագիրը՝ հասարակական հարաբերություններից ծնվող նյութապաշտ բարքերը, դրա կողքին՝ 60-ականների սերնդի լուսավորական մեծ շարժումը, այն խոչընդոտող սև, ազգադավ հոսանքը:

Մի անգամ ես առանձնանշենք Արցախի մշակութային կյանքի քրոնիկոնը՝ մուրացանյան գեղարվեստի անդրադարձներով:

Մուրացանը «Խորհրդավոր միանձնուհի» երկում մի ամբողջ հեղափոխական ծրագիր է ներկայացնում, որը ցույց է տալիս 19-րդ դարավերջում Արցախի մշակութային կյանքի, կրթության հիմնահարցերի մի ամբողջ փաթեթ, լուսավորյալ և ազգադավ հոսանքի, աշխարհիկ և հոգևոր առաջնորդների գործունեության լույս և խավար շրջանակները, հատկանշում անձնվեր և անձնասեր պատմական և վիպական հերոսների հետաքրքիր համակարգը, գաղափարապես հարուստ 60-ականների սերնդի նախաձեռնած հարուստ լուսավորական շարժումը, Շ. քաղաքում՝ Շուշիում ծավալված մշակութային հզոր շարժը, կենտրոն, որն արդեն Անդրկովկասում դարձել էր մշակութային կյանքի առաջամարտիկը, Մ. Շահինյանի կողմից անվանվելով «արվեստների օազիս», իսկ պատմիչ Ապրես Բեկնազարյանի կողմից՝ «Անդրկովկասի բանալի»:

Մուրացանի հերոսներից մեկի՝ Գարեգինի լուսավորական շարժման 60-ականների սերնդակիցների գործի շարունակողի գործելու ասպարեզը լայն է, նպատակամետ, գաղափարապես՝ առաջադիմական-կրթական. «Յուրաքանչյուր մարդու վրա, կին լինի նա, թե

[1] https://www.bok.am/sites/default/files/2021-11/Zinaida-1-73.pdf:

տղամարդ, սրբազան պարտք կա որոշ չափով հասարակության ծառայելու… Փափուկ և անդորր ապրողից ավելի երջանիկ է ա՛յն մարդը, որ կյանքը նվիրում է իր նմաններին օգնելուն, մանավանդ բարոյական ձեռնտվությամբ: Սովորեցե՛ք ապրել այդ կյանքով, սովորեցրե՛ք նույնը և նրանց, որոնց առաջնորդ պիտի լինեք: Այսպիսով դուք ապագա սերունդը կբախտավորեցնեք և մարդիկ կօրհնեն ձեզ…»[1]:

Ներկայացված թեման նաև ակտուալ է, այս դիտանկյունից՝ մշակութային արժեքների նկատմամբ Ադրբեջանի դեկավարության կողմից վարած պաշտոնական հակահայ քաղաքականությունը՝ Արցախի հոգևոր արժեքների ոչնչացման գործում՝ պետք է համարել քաղաքական հանցագործություն, միջազգայնորեն դատապարտելի, անհանդուրժելի՝ արցախահայության իրավունքների նկատմամբ, որը հղի է ծանրածանր հետևանքներով:

Այս իմաստով՝ Ադրբեջանի իշխանությունների որդեգրած դիրքը՝ Շուշիի և Արցախի բռնակցված տարածքների, հոգևոր արժեքների բզկտման, ոչնչացման գործում՝ պետք է անվերապահորեն փաստել և հաստատել որպես անմարդկային՝ միջազգային իրավական օրենքների ուժ ունեցող բոլոր փաստաթղթերով:

Օգտագործած գրականություն

1. **Մուրացան**, Խորհրդավոր միանձնուհի, ԵԺ, 5 հատորով, հատոր երկրորդ, Երևան, Հայպետհրատ, 1951, 490 էջ:
2. **Ավագյան Ս.,** Ղարաբաղի մամուլի պատմություն (1828-1920), Երևան, 1989, 287 էջ:
3. **Հարությունյան Մ.,** 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարասկզբի Արցախի մշակույթի զարգացման առանձնահատկությունները, «Կանթեղ», Երևան, «Ասողիկ» հր., 2006:
4. https://www.bok.am/sites/default/files/2021-11/Zinaida-1-73.pdf:

[1] *Մուրացան, Խորհրդավոր միանձնուհի, ԵԺ, 5 հատորով, հատոր երկրորդ, Երևան, Հայպետհրատ, 1951, էջ 62-63:*

ՀՏԴ 808.2

Էդիտա Հալաջյան
«Հասարակական գիտություններ» ֆակուլտետ,
«Մանկավարժություն և մեթոդիկա» 2-րդ կուրս

Գիտ. ղեկ.՝
բ. գ. թ., դոցենտ Լիլիթ Պետրոսյան

«ՈՒՐԻՇԻ ՀԱՄԱՐ ՖՈՍ ՓՈՐՈՂԸ ԻՆՔԸ ԿԸՆԿՆԻ ՄԵՋԸ» ՀԵՔԻԱԹԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԵՐԹԱԳԱՅՈՒՄՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *դարձվածք, բայ դարձվածք, եղանակավորող բառ դարձվածք, բարդ համադասական կառույց:*

Դարձվածք հասկացությունը՝ որպես ժողովրդական իմաստնության կրող լեզվական միավոր, գործածական է «Աստուածաշունչ» մատյանում: Այն լեզվաբանների կողմից ներկայացվում է որպես «փոխաբերական-այլաբանական իմաստ ունեցող» կայուն բառակապակցություն:

«Ուրիշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» ժողովրդական հեքիաթը հարուստ է դարձվածքներով, որոնց միջոցով արտահայտվել են պատճառի և հետևանքի, պայմանի և հետևանքի, զուգադրական և հակադրական, պայմանական և հակադրական և այլ կապերով նախադասություններ:

Հեքիաթին բնորոշ են դարձվածքներով հարուստ հեղինակային և կերպարային խոսքեր, որոնք արտահայտվել են պատմողական, հարցական, բացականչական և հրամայական երանգներով նախադասություններում:

Հերոսների խոսքում գործածական դարձվածքները հանդես են եկել երկխոսություններում և մենախոսություններում:

Հատկապես գերակշռում են բայական և վերաբերական դարձվածքները, որոնք հանդես են եկել դարձվածքներով ձևավորված բարդ համադասական, ստորադասական և բազմաբարդ կառույցներում:

Эдита Аладжян

ИДИОМЫ, ИСПОЛЬЗУЕМЫЕ В СКАЗКЕ «КТО ДРУГОМУ ЯМУ РОЕТ, САМ В НЕЕ ПОПАДЁТ»

Ключевые слова*: оборот, глагольный оборот, модальное слово-оборот, глагольная, сложносочиненная конструкция.*

Понятие идиома, как языковая единица, несущая народную мудрость, употребляется в Библии. Идиома представлена лингвистами как устойчивое словосочетание с «образно-аллегорическим значением».

Народная сказка «Кто другому яму роет, сам в нее попадёт» богата идиомами, посредством которых предложения выражены с причинно-следственным, условно-следственным, сравнительно-противопоставленным, условно-противопоставленным связями.

Для сказки характерны авторско-образные речи, богатые идиомами, которые выражены в предложениях с повествовательными, вопросительными, восклицательными и повелительными тонами.

Идиомы, используемые в речи героев, появляются в диалогах и монологах.

Особенно преобладают глагольные и относительные идиомы, представленные в сложносочинённых, сложноподчиненных и многосложных конструкциях, образованных идиомами.

Edita Halajyan

"WHOEVER DIGS A HOLE FOR SOMEONE ELSE WILL FALL INTO IT HIMSELF." THE SEMANTIC SEQUENCES OF THE PHRASES OF THE FAIRY TALE

***Key words**: Locution, verb phrase, adverbial phrase, compound predicate structures*

The term idiom as a linguistic unit of folk wisdom is usable in the Bible. It is presented by linguists as stable phrases with "figurative-allegorical meaning".

The folk tale "Whoever digs a pit for another man's feet shall fall into it himself" is rich in idioms, through which sentences are expressed with cause and effect, condition and effect, comparative and contrasting, conditional and contrasting and other relationships.

The fairytale is characterized by authorial-figurative words rich in idioms, which are expressed in sentences with narrative, interrogative, exclamatory and imperative tones.

The idioms used in the heroes' speech appear in dialogues and monologues.

Especially prevailing are verbal and relative idioms, which appear in compound, complex and polysyllabic constructions formed by idioms.

«Աստուածաշունչ» մատյանում ***դարձվածք*** հասկացությունն առաջին անգամ կիրառվում է Առակք Սողոմոնի գրքում՝ «*Ճանաչե՛լ զիմաստութիւն և զխրատ, իմանա՛լ զբանս հանճարոյ. ընդունել* ***զդարձուածս*** *բանից։ Ի՛ մի՛տ առնուլ զարդարութիւն ճշմարիտ, և ուղղել զիրաւունս*» [Առակ.Ա.3] արտահայտության մեջ:

Առաջնորդվելով աստվածաշնչյան պատգամով՝ հայկական ժողովրդական հեքիաթները կարդալիս բացահայտում ենք բազմաթիվ դարձվածքներ, որոնց իմաստները «ընդունելով»՝ «ըմբռնելով»՝ իմանում ենք «հանճարի»՝ ժողովրդի խոսքը, ճանաչում խրատը և իմաստությունը՝ մտառելով ճշմարիտ արդարությունը:

Դարձվածք լեզվաբանական հասկացության՝ ժամանակակից «Բառերի կայուն կապակցություն, մեկ ամբողջություն կազմող բառակապակցություն»[1] նշանակությունը ծագում է գրաբարյան «Մանուած բանի, խրթնութիւն, խելամտութիւն»[2] իմաստից:

Թե՛ արտասահմանյան, թե՛ հայ լեզվաբանների կողմից դարձվածքներն ուսումնասիրվել են տարբեր տեսանկյուններից[3], որոնց ընդհանրական վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանք «փոխաբերական-այլաբանական իմաստ ունեցող» կայուն բառակապակցություններ են[4], որ հատկապես հատուկ են ժողովրդական խոսքին:

«Ուրիշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» ժողովրդական հեքիաթը գրառված է «Հայ ժողովրդական հեքիաթներ» ակադեմիական հրատարակության երկրորդ հատորում, որտեղ

---

[1] ***Աղայան Է.***, *Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 283:*

[2] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Երևան, 1979, էջ 605:*

[3] ***Балли Ш.***, *Французская стилистика, М., 1961.* ***Шанский Н.***, *Фразеология русского языка, М., 1963.* ***Աւետիքեան Գ., Միրմելեան Խ., Աւգերեան Մ.***, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ, 1836-1837:* ***Մուրվայան Ա.***, *Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, 1959,* ***Բեղիրյան Պ.***, *Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, 1973,* ***Սուքիասյան Ա., Գալստյան Ս.***, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975 և այլք:*

[4] ***Գևորգյան Ե.***, *Հայերենի դարձվածքները, Երևան, 1959, էջ 18:*

ներկայացված են Այրարատ նահանգի հեքիաթները՝ Հովսեփ Օրբելու խմբագրությամբ[1]: Այստեղ ներկայացված հեքիաթներից մի քանիսը վերնագրված են ժողովրդական թևավոր խոսքերով՝ «Ասու պահած գառը գել չի ուտի» [295], «Մարդիս ճակատի գրածը չի ջնջվի» [310], «Մարդ իրա յորղաննու գյորա պտի ոտը մեկնի» [413], «Չուտողի մալը ուտողին հալալ ա» [447], «Ինչ որ ցանես, ըն էլ կինձես» [487], «Աստոծ որ ուզենա հարստություն տա՝ կբերի հերդկով էլ վե կածի» [505]: Սրանցից «Ուրիշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» հեքիաթը [425] աչքի է ընկնում դարձվածքների բազմաթիվ առանձնահատուկ կիրառություններով. կայուն արտահայտությունների բաղադրիչները, սերտորեն կապակցված լինելով միմյանց, արտահայտում են փոխաբերական իմաստ:

Հայտնի ճշմարտություն է, որ դարձվածքները կազմավորվում են ժողովրդախոսակցական լեզվում և ապա գրականության միջոցով թափանցում գրական լեզու: «Ուրիշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» հեքիաթում գործածված դարձվածքներից շատերն այսօր էլ գործածական են գրական հայերենում՝ հարացուցային տարբերակներով, ինչպես՝ ***գլուխ պահել, տունը քանդվել, աշխարհով մեկ լինել, ականջ դնել, մատով ցույց տալ*** և այլն:

Ժամանակակից հայոց լեզվի դարձվածակազմական բայական բաղադրիչի մասին տեսական ուսումնասիրությունն է կատարում Ա. Պողոսյանը[2], ում աշխատանքերում քննվում են ***տալ, անել, դնել, առնել, գալ, ընկնել*** և ***գցել*** բայերին լրացնող միավորները՝ ըստ ձևաբանական արտահայտությունների:

Դարձվածքներ կազմվում են ինչպես չեզոք, այնպես էլ ներգործական սեռի բայերով, ինչպես՝ ***աշխատանքի տուտ բռնել*** - աշխատանք «սկսել» [ԴԲ[3] 565], ***տղեքանց չարը տանել*** - «մեկին հասանելիք չարիքները իր վրա ընդունել» [ԴԲ 488], ***սիրտը վեր ունել*** [ԴԲ 532] - «ախորժել, կամենալ», ***փորձանքի մեջ քցել*** - «դժբախտության, չարիքի, աղետի հանդիպել» [ԴԲ 583] և այլն:

Ինչպես առօրյա-խոսակցական ոճին, այնպես էլ հեքիաթներին բնորոշ են եղանակավորող բառ դարձվածքները, ինչպես՝ ***ես ինչ գիտամ*** դարձվածքը կիրառվել է թվարկման հնչերանգով ներկայացված անվանական միակազմ նախադասություններում՝ նշանակելով «ով գիտե, ոչ ոք չգիտե, հայտնի չէ», օրինակ՝ *....էլ մա՛լ, էլ դոլվաթ, էլ տա՛վար, էլ ոչխարի տո՛ւրու, էլ ձիու ի՛լխիք,* ***ես ինչ գիտամ*** *մեղրի փեթակնե՛ր, ջաղացնե՛ր* [203]: ***Համա ո՛ւմ ես ասում*** «ձայն բարբառ հանապատի» [ԴԲ 571] նշանակությամբ դարձվածքին հաջորդում են դարձվածք-բաղադրիչ նախադասություններ՝ համադասական հարաբերությամբ՝ ***Համա ո՛ւմ ես ասում***, *մենծ աղպերը ըսկի չէր էլ ուզում անկաջ դնի,*

---

[1] *Հայ ժողովրդական հեքիաթներ, Երևան, 1959: Գրքից կատարված մեջբերումների էջադրումները կներկայացնենք կից փակագծերում:*

[2] ***Պողոսյան Ա.***, ***Տալ*** *բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, «Բանբեր Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի», Վանաձոր, 2006:* ***Պողոսյան Ա.***, ***Անել*** *բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, «Բանբեր Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի», Վանաձոր, 2007:* ***Պողոսյան Ա.***, ***Դնել*** *բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, «Գիտական հոդվածներ, Բանասիրություն», Վանաձոր, 2011:* ***Պողոսյան Ա.***, ***Առնել*** *բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, «Գիտական հոդվածներ, Բանասիրություն», Բ պրակ, Վանաձոր, 2011:* ***Պողոսյան Ա.***, ***Գալ*** *բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, «Գիտական նյութերի ժողովածու (հանրապետական գիտաժողով՝ նվիրված պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանի ծննդյան 60-ամյակին)», Վանաձոր, 2013:* ***Պողոսյան Ա.***, ***Ընկնել*** *բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, «Վանաձորի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», պրակ Ա (հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկա), Երևան, 2016:* ***Պողոսյան Ա.***, ***Գցել*** *բայի դարձվածակազմական հնարավորությունները ժամանակակից հայերենում, «Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին», Վանաձորի պետական համալսարանի հիմնադրման 50-ամյակին, Երևան, 2019:*

[3] ***Սուքիասյան Ա.***, ***Գալստյան, Ա.***, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975: Գրքից կատարված մեջբերումները ներկայացվում են կից փակագծերում՝ ԴԲ համառոտագրությամբ:*

աղպոր կուռը բռնեց, դափ-դարդակ տանիցը դուս արեց:

«Ուրիշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» հեքիաթում գործածված դարձվածքներից հատկապես հետաքրքիր են հարադրություններով կազմված դարձվածքները, որոնցում կատարվում է կրկնակի վերաիմաստավորում, ինչպես՝ *ըսենց* ***կուչ ու ձիգ անելով յոլա էր էթում****, համա մենծ աղպոր* ***էրեսը չէր էթում*** [449] նախադասության մեջ «տանջվել, չարչարվել» [ԴԲ 208] իմաստով կիրառված հարադրությամբ արտահայտված գործողությունները դարձվածային նշանակությամբ վերագրվում է փոքր եղբորը, որին ***համա*** հակադրական իմաստով համադասական շաղկապով կապակցված է «ցանկանալ, սիրտը ախորժել» [ԴԲ 354] իմաստով բայական դարձվածքը:

Բայ դարձվածքները խոսքում կիրառվում են համադասական, ստորադական կամ բազմաբարդ կառույցներում:

1. Բայ դարձվածքներով ձևավորված բարդ համադասական նախադասություններ, որոնք պատճառահետևանքային հարաբերությամբ հաջորդում են միմյանց, օրինակ՝ .... *էրկու տղա ա ունենում, էրկուսն էլ բեդոլվաթ,* ***ասսու էրեսիցը թափած****. սաղ օրը* ***պարապ-սարապ ման ին գալի, ըսկի միտք չին անում մի բանի, մի գործի կպնեն, մի աշխատանքի տուտ բռնեն****: Սրանց հերն էլ ծերացե,* ***հայ-հայը գնացե, վա՛յ-վա՛յն էր մնացե***:[488] արտահայտության մեջ իրար հաջորդող դարձվածքները մեկնաբանում են *բեդոլվաթ* օտարաբանության նշանակությունը: Այսպես՝ *բեդովլաթ* մարդը բնութագրվում է ***աստծու երեսից թափած*** դերբայ-դարձվածով, որ նշանակում է «Չար, անպետք մարդ, որից աստված երես է դարձրել» [ԴԲ 67]: Օտարաբանության դարձվածային բացատրության օրինակ է նաև ***ընչանք ե՞ր դու պտի ըտենց քյասիբ, օրեն հացի մուրացկան մնաս*** [613] արտահայտությունը, որտեղ բացահայտվում է **քյասիբ** բառի իմաստը: «Քյասիբ» և «բեդովլաթ» մարդիկ ***սաղ օրը պարապ-սարապ ման ին գալի, ըսկի միտք չին անում մի բանի, մի գործի կպնեն, մի աշխատանքի տուտ բռնեն***, որ նշանակում է «չեն մտածում» [ԴԲ 436] «եռանդուն սկսել աշխատել, գործ անել» [ԴԲ 175] աշխատանք «սկսել» [ԴԲ 565]: Հեքիաթներին բնորոշ լավատեսությամբ այստեղ նույնպես կատարվում է բարին, ու դժբախտությանը հաջորդում է հաջողությունը: Հայրը ***տեղով-բարձով թեք է ընկնում՝*** «շատ ծանր անկողնային հիվանդանալ» [ԴԲ 561], ու ***տղեքանց չարը տանում ա՝*** «մեկին հասանելիք չարիքները իր վրա ընդունել» [ԴԲ 488]: Այսպես նաև *....մենծ աղպերը ըսկի չէր էլ ուզում անկաջ դնի, աղպոր կուռը բռնեց, դափ-դարդակ տանիցը դուս արեց* արտահայտության դարձվածքները: *Ականջ դնել* «ուշադրություն դարձնել» [ԴԲ 5] իմաստով գործողության ժխտական խոնարհմամբ կիրառված դարձվածքին հաջորդում է *դափ-դատարկ տնից դուրս անել* դարձվածային կապակցություն-գործողությունը:

Դարձվածքներով ձևավորված բարդ համադասական կառույցները խոսքում աչքի են ընկնում իրենց հաճախականությամբ և կիրառվում են ինչպես հեղինակային խոսքում, այնպես էլ երկխոսություններում՝ արտահայտվելով երկրորդ դեմքով, օրինակ՝ *վե կաց* ***գնա քու բանին****, սրանից դենը ո՛նց ուզում ես* ***գլուխ պահա*** [170]: Դարձվածքներով ձևավորված բարդ կառույցների իմաստային վերլուծությունից պարզ է դառնում, որ դարձվածքները հաճախ են գործածվում զուգահեռ կառույցներում: ***Գնա՛ բանիդ*** «նախատական արտահայտության՝ *իմ գործերի մեջ մի՛ խառնվիր*» [ԴԲ 172] դարձվածքի տրամաբանական շարունակությունը լինում է դարձվածք՝ ***գլուխ պահել*** «ֆիզիկական գոյությունը պահպանել, ապրել» [ԴԲ 170]:

Դարձվածքներով ձևավորված բարդ համադասական կառույցները գործածական են նաև մենախոսություններում, ինչպես՝ *Ասսու ողորմությունը շատ ա, — ասում էր, — ամեն մարդի իրա սրտովը կտա* [540] արտահայտությունը, որի երկու մասերն էլ ժողովրդական կայուն վերաիմաստավորված արտահայտություններ են:

2. Բայ-դարձվածքներով ձևավորված ստորադասական նախադասություններ, որոնցում գլխավոր նախադասությանը հաջորդում են քերականական տարբեր նշանակություններով լրացումներ: *Էնքամ*

հարուստ ա ըլնում, որ իրանց երկրումը սրան ***մատով ին շանց տալի*** արտահայտության մեջ դարձվածքով ձևավորված երկրոդական նախադասությունը կատարում է չափի պարագայի գործառույթ։

3. Բայ-դարձվածքներով ձևավորված բազմաբարդ նախադասություններ, որոնցում համադասությունն ու ստորադասությունը զուգահեռվում են միմյանց, ինչպես՝ *Համա մենծ աղպոր սիրտը ըտ էլ չէր վեր ունում, որ իրա աղպերը շատ թե քիչ ապրուստ ունի, մի կտոր հացի տեր ա, օր աշխատում ա, օր ուտում. հերսիցը սիրտը տրաքում էր, չէր իմանում ի՛նչ անի, ո՛նց անի, որ աղպոր գլուխը մի օղիա գա, մի փորձանքի մեջ քցի, որ սիրտը հովանա* [577] նախադասության մեջ դիմավոր բայերով ձևավորվել են դարձվածքներ։ ***Սիրտը վերցնել*** «ախորժել, կամենալ» իմաստով [ԴԲ 532] արտահայտությանը հաջորդում է ուղիղ խնդիր երկրոդական նախադասությունը՝ *ապրուստ ունի, հացի տեր ա, օր աշխատում ա, օր ուտում*՝ «Ապրուստի միջոցներով ապահովված» [ԴԲ 353]։ Այնուհետև շարունակվում են համադասական հարաբերությամբ գործողությունները՝ *սիրտը տրաքել*՝ *համբերությունից դուրս գալ* ՝ «դժբախտության, չարիքի, աղետի հանդիպել» [ԴԲ 583] *սիրտը հանգստանալ*՝ «Որևէ բանի ծարավը հագենալ, սիրտը հովանալ, դուրանալ» [ԴԲ 528]։

«Ուրիշի հմար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» հեքիաթի դարվածային բառապաշարի քննությունից պարզ է դառնում.

ա) ժողովրդական հեքիաթները պատմվում են ժողովրդական դարձվածքներով,

բ) դարձվածքները գործածվում են ինչպես հերոսների, այնպես էլ հեղինակի խոսքում,

գ) գերակշռում են բայական և վերաբերական դարձվածքները,

դ) Հաճախադեպ են դարձվածքներով ձևավորված բազմաբարդ կառույցները։

ՀՏԴ 82-9

Աննա Դավթյան
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետ
մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի
գիտական ղեկավար՝
բ.գ.թ., դոցենտ ***Լուսինե Գալստյան***

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *Հայկ Խաչատրյան, «Տիգրան Մեծ», «Արտավազդ», պատմություն, պատմավեպ, հայրենասիրություն, պատմական փաստ, դեպք:*

Հայկ Խաչատրյանի ինչպես «Արտավազդ», «Տիգրան Մեծ», այնպես էլ մյուս պատմավեպերն ընդգրկում են պատմական ժամանակագրության նոր ոլորտներ և գեղարվեստական ինքնատիպ լուծումներով պահպանում են պատմական փաստերի ճշմարտացիությունը: Հեղինակի գրչի և երևակայության շնորհիվ էլ վերակենդանանում է հեթանոսական պատմաշրջանն ու այն լրացնող դեպքերի, իրադարձությունների մինչփաստային ու հետփաստային ոլորտը: Հետազոտող գրողի բոլոր գործերում գաղափարական նպատակադրումը համընկնում է պատմությանն ու դուրս չի գալիս պատմականության հավանականի սահմաններից:

Գրողի պատմավեպերն իրենց ճշգրտությամբ և հարուստ աղբյուրագիտությամբ պատմության դասագրքի արժեք են ներկայացնում:

Анна Давтян

ИСТОРИЯ В ИСТОРИЧЕСКИХ РОМАНАХ АЙКА ХАЧАТРЯНА

Ключевые слова: *Айк Хачатрян, "Тигран Великий", "Артавазд", история, исторический роман, патриотизм, исторический факт, случай.*

«Артавазд», «Тигран Великий» и другие исторические романы Айка Хачатряна охватывают новые области исторической хронологии и оригинальными художественными решениями сохраняют истину исторических фактов. Благодаря авторскуму перу и воображению возрождаются языческий исторический период и дополняющие друг друга дофактуальные и постфактуальные сферы событий. Во всех работах писателя-исследователя идеологическая цель совпадает с историей и не выходит за возможные пределы истории.

Исторические романы писателя своей достоверностью и богатыми источниками имеют ценность учебника истории.

Anna Davtyan

THE HISTORY IN HISTORICAL NOVELS OF HAYK KHACHATRYAN

Key words: *Hayk Khachatryan, "Tigran the Great", "Artavazd", history, historical novel, patriotism, historical fact, case.*

"Artavazd", "Tigran the Great" and other historical novels written by Hayk Khachatryan cover new areas of historical chronology and preserve the truthfulness of historical facts with original artistic solutions. Due

to the author's pen and imagination, the pagan historical period and complementary to each other pre-factual and post-factual spheres of events are being revived. In all the works of the writer-researcher, ideological purposefulness coincides with history and does not go beyond the probability of historicism.

The historical novels of the writer represent the value of a history textbook for its accuracy and rich primary source.

60-70-ական թվականներին գրական ասպարեզ իջած սերնդի և հաջորդ տասնամյակներում առավել հասունացած, վարպետացած արձակագիրների շղթայում իր ուրույն ձեռագիրն ու դեմքն ունի Հայկ Խաչատրյանը:

Հեղինակի գրական հետաքրքրության դաշտը գերազանցապես պատմությունն է, իսկ վերջինիս լավագույն դրսևորումը՝ Հ. Խաչատրյան անունը ճանաչելի դարձրած, անցյալի թեմատիկայի ավանդները շարունակելու լավագույն հնարավորությունն ընձեռած և գրողի նախասիրած[1] գրական ենթաժանրը՝ պատմավեպը:

Հ. Խաչատրյանի պատմավեպերի գերակշիռ մասն առանձնանում է պատմության ժամանակագրության նոր ոլորտների, այն է՝ սակավ աղբյուրագիտական հենքով հեթանոսական ժամանակների գրեթե անմշակ նյութի ընդգրկմամբ և պատմական փաստերի կայուն «շարադասությամբ»: Թեմատիկ-բովանդակային այս ընտրությունը պայմանավորված էր ոչ միայն նախասիրությամբ, այլև գրողական ծրագրով, այն է՝ բարոյական նորոգություն, անցյալի վերարժևորում ու ինքնաճանաչում: Ահա այս ծրագրի իրագործման համար գեղարվեստական շրջանառության մեջ դրվեցին հեթանոսական ժամանակաշրջանի նշանավոր գործիչների հետ կապված ակնառու, հետաքրքրություն հարուցող, բայց միևնույն ժամանակ աղոտ քննված դրվագները:

Հ. Խաչատրյանի՝ պատմական հենքից գեղարվեստական լուծում տանող ճանապարհի ուղենշային գնահատությունը ստեղծագործական մեկ նմուշի օրինակով տվել է բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Սաֆարյանը: Վերջինս Հ. Խաչատրյանի «Արտավազդ» պատմավեպի առիթով տպագրված «Ո՞ւմ համար է պատմությունը» գրախոսության մեջ պատմական փաստի արդիական արժեքավորման առումով տարբերակում է պատմության պասիվ և ակտիվ վերարտադրությունները, գտնում՝ պասիվ վերարտադրությունն ունի միայն ճանաչողական, իսկ ակտիվը՝ ոչ միայն տեղեկացնող, այլև սովորեցնող նշանակություն: Ահա Հ. Խաչատրյանին էլ համարում է պատմությունն ակտիվորեն վերարտադրող վիպասան[2]: Ինչո՞ւ, որովհետև ակներև է՝ ինչպիսի հմտությամբ է վիպասանն օգտվում պատմությունից, ինչպես է հարգանքով, բծախնդրությամբ, զուրգուրանքով ու երկյուղածորեն մոտենում պատմական նյութին, խորանում փաստերի մեջ՝ ապացուցելով՝ «անթերի գիտե իր ընտրած դարաշրջանը»[3]: Կարծում ենք՝ ստեղծագործությանը նյութ մատակարարած դարաշրջանների անթերի իմացությունն է հենց հնարավորություն տվել հեղինակին առանց փաստական խմբագրումների որոշ դեպքերի այլ երանգ տալ: Գրախոսության հեղինակը, սակայն, այլ կարծիք ունի: Վերջինս, որքան էլ բարձր է գնահատում հեղինակի պատմական քաջատեղյակությունը, այնուամենայնիվ, նշում է՝ պատմական փաստերի որոշ փոփոխություններ վիճելի են և տեղին չեն: Օր.՝ պատմության վկայությամբ Կրասոսի գլուխն Արտաշատ է հասնում Եվրիպիդեսի «Բաքոսուհիների» բեմադրության ժամանակ, իսկ ըստ վեպի՝

[1] ***Խաչատրյան Հ.,*** *Գրական հիշատակարան / խմբ.՝ Հ. Այվազյան, Եր., 1996, էջ 11:*

[2] ***Սաֆարյան Վ.,*** *Ո՞ւմ համար է պատմությունը, «Սովետական գրականություն» / գրական-գեղարվեստական, տեսական-քննադատական ամսագիր, Եր., 1976, № 9, էջ 147:*

[3] *Նույն տեղում:*

հայերը նախքան բեմադրությունն են ստանում գլուխը, զոհաբերություններ անում և այդ ամենից հետո նոր միայն որոշում հաղթանակը ի ցույց դնելու նպատակով բեմադրության ժամանակ ներկայացնել գլուխը: Կամ՝ Արտավազդ արքան վերաձևում է և Եվրիպիդեսի ողբերգությունը հարմարեցնում տվյալ իրադրությանը: Գրականագետը վկայակոչում է պատմական փաստ-կերպարի մեկ այլ փոփոխություն ևս: Հռոմեական զորավար Մարկոս Կրասոս եռապետը վեպում դրսևորվում է որպես ապաշնորհ զորապետ, քանզի զանց է առնում Արտավազդ արքայի հորդորներն ու ետ չի կանգնում իր՝ պարթևաց աշխարհի դեմ արշավելու, իր ու արմենների համար խաղաղ կյանք ապահովելու որոշումից[1]: Արդյունքում Կրասոսը ջախջախվում է, և հաղթանակում են պարթևները: Պատմական փաստերի ճշգրիտ պահպանման հետ կապված մի քանի այլ նկատառում անելուց հետո գրականագետը առաջ է բերում այն համոզումը՝ «հանուն այսօրվա հարցադրումների, հանուն փաստի մեկնաբանման երբեք չպետք է աղավաղվի պատմությունը»[2]: Սակայն փաստ է նաև այն, որ պատմական թեմաներ մշակող գրողը չի կարող և պարտավոր էլ չէ լուսանկարչական ճշգրտությամբ վերարտադրել փաստերն ու ստեղծագործության մեջ նույնությամբ փոխադրել ամեն ինչ: Գրողը ինքն էլ մի հետազոտող է և պատմական երևույթը կարող է այլ հայեցակետով ներկայացնել, բայց այնպես, որ նրա միտքը համընկնի պատմությանն ու դուրս չգա պատմականության հավանականի սահմաններից: Այս առումով անզեն աչքով էլ երևում է՝ վիպասանի կատարածը ոչ թե պատմական փաստի փոփոխում է, աղավաղում կամ շեղում, այլ ուղղակի պատմական կոլորիտ ստեղծելու փորձ, ինչը պատմական փաստերը ոչ պակասեցրել է, ոչ էլ ավելացրել. չէ՞ որ, ինչպես նշում է ակադեմիկոս Էդ. Զրբաշյանը, «հեղինակն ունի իր պատկերած հեռավոր անցյալի խոր զգացողություն և դա կարողանում է փոխանցել ընթերցողին»[3]: Չմոռանանք՝ «Արտավազդը» ևս գաղափարական կայուն նպատակադրամբ գրված վեպ է, և հեղինակն արքայի կերպարում շեշտադրել է ոչ թե ռազմագետ-քաղաքագետ, այլ արվեստագետ-գիտնական գիծը: Եվ այն, որ արքան ցանկություն չի հայտնում միանալ Կրասոսին, մասնակցել Օրոդես արքայի դեմ արշավին, խոսում է աշխարհին ու մարդկանց բանաստեղծ-թատերգակի ոգով նայող և արվեստի ուժով պայքարել քարոզող արքայի մասին: Եվ վերջապես, Հ. Խաչատրյանն ինքը «Արտավազդ» վեպի հարուստ ծանոթագրություններում խոսում է թե՛ զորավար Մարկոս Լիկինիոս Կրասոսի, թե՛ պարթևաց արքա Օրոդեսի մասին[4], մանրամասն ներկայացնում է Եվրիպիդեսի, նրա «Բաքոսուհիների», Դիոնիսիոս-Բաքոսի և անգամ հին հայկական թատրոնի մասին տեղեկությունները[5]: Սրանք հեղինակի՝ դարաշրջանի անթերի իմացությունը ցուցանող փաստերից են: Պատմության քաջիմաց հեղինակն, այո՛, փոխել է դեպքի կատարման ժամանակը, ուշադրություն դարձնենք՝ ոչ թե դեպքը, այլ միայն դեպքի կատարման ժամանակը: Այս առիթով հիշենք Ռաֆֆու «Սամվել» վեպը, որի դեպքերը տեղի են ունենում 4-րդ դարի 50-60-ական թվականներին, երբ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևն իրենց տարիքի պատճառով չէին կարող մասնակցություն ունենալ Հայաստանի քաղաքական ու մշակութային կյանքին: Սակայն Ռաֆֆին նրանց դարձրել է վեպի գլխավոր հերոսի՝ Սամվելի գաղափարակիցը, որովհետև վերջինս մտածում և գործում էր այնպես, ինչպես իրենց դրսևորեցին Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը 4-րդ դարի վերջում և 5-րդ դարում՝ մինչև իրենց մահը: Այս օրինակները ցույց են տալիս, որ պատմական որոշ դեպքերի ժամանակը կամ դեպքին գաղափարական շեշտադրման նպատակով այլ երանգավորում տալու երևույթը ամենևին էլ նպատակ չունեն խաթարելու պատմական իրականությունը: Հենց այս

---

[1] *Նույն տեղում:*

[2] *Նույն տեղում:*

[3] ***Զրբաշյան Էդ.,*** *Հեռավոր անցյալի զգացողությամբ, «Սովետական գրականություն» / գրական-գեղարվեստական, տեսական-քննադատական ամսագիր, Եր., 1968, էջ 145:*

[4] ***Խաչատրյան Հ.,*** *Արտավազդ / պատմավեպ, Եր., 1975, էջ 265:*

[5] *Նույն տեղում, էջ 268:*

իրավունքով է վիպասանի գեղարվեստական արտացոլման եղանակը տարբերվում պատմաբանի փաստական հիմքից: Պատմավեպի փաստական հիմքն ու գրողի հայացքն ապահովող արխիվային, աղբյուրագիտական պաշարը պրոֆեսոր Ս. Արզումանյանը կոչում է պատմական «իրեղեն» փաստեր և նշում՝ «…զուտ պատմական փաստը դեռ քիչ է: Պատմության «իրեղեն» ապացույցները շատ բան կարող են հուշել, սակայն պակաս կարևոր չէ ունենալ պատմագեղարվեստական ճշմարիտ հայացք նույն այդ պատմական փաստերի կամ վավերաթղթերի, ասել է թե՝ ամբողջ պատմության վրա»[1]:

«Արտավազդ» պատմավեպի հետաքրքրություն հարուցող մի դրվագի մասին ևս: Վեպն ավարտվում է «Ե՞րբ կվերադառնա Արտավազդը» վերնագիրը կրող Փայլածու գլխով, որտեղ կարդում ենք՝ «Հայքում դեռ սպասում էին Արտավազդի վերադարձին»[2]: Հեղինակն ընթերցողին առանց բացատրության չի թողնում. վեպի ծանոթագրություններում Արտավազդի կերպարի երկու ընկալումների մասին խոսելով՝ նշվում է՝ Մովսես Խորենացու և Եզնիկ Կողբացու մոտ պահպանվել են Արտավազդին նվիրված առասպելի հատվածներ, որոնց մեջ ակնհայտ է նրա բնավորության երկվությունը. մի տեղ չար է, մի տեղ՝ բարի: Բանն այն է, որ այդ առասպելը նվիրված է երկու Արտավազդի: Առաջինը Արտաշես Ա-ի որդին է՝ Արտավազդ Առաջինը, որ իր եղբոր Տիգրան Ա-ի հետ թագավորել է մ.թ.ա. 160-95 թվականներին: Խորենացին գրում է, որ այս Արտավազդը նախանձել է հոր փառքին և ստացել հոր անեծքը. որսի ժամանակ քաջքերը բռնել են նրան ու բանտել Մասիսի վիհում: Հայերն ասում են, որ եթե նա դուրս գա՝ կկործանի աշխարհը: Երկրորդ Արտավազդը Տիգրան Բ Մեծի որդին է՝ Արտավազդ Երկրորդը, որ թագավորել է մ.թ.ա. 55-34-ին, և, ինչպես վեպում է, խաբեությամբ ձերբակալվել հռոմեացի եռապետ Անտոնիոսի կողմից, տարվել Եգիպտոս ու գլխատվել մ.թ.ա. 30-ին: Այս Արտավազդի մասին Եզնիկ Կողբացին իր «Եղծ աղանդոց» աշխատության մեջ գրում է, թե դևերի մոլորությունը խաբեց հայոց կռապաշտներին, թե Արտավազդ անունով մեկը բանտարկված է դևերի կողմից, որը մինչև այժմ կենդանի է, նա էլ ելնելու է և փրկելու է աշխարհը[3]: Հ. Խաչատրյանի վեպի վերջում ավագ քուրմ Գոշը վստահեցնում է, թե Արտավազդը դեռ ողջ է և Մասիսի վիհում մարդկանց՝ անմահության գաղտնիքը շնորհող աշխարհի ամենաիմաստուն գիրքն է գրում: Ստացվում է՝ Հ. Խաչատրյանը կրկին հավատարիմ է մնացել պատմական փաստին՝ ընտրելով Եզնիկ Կողբացու՝ Արտավազդի՝ աշխարհը վերափոխող հերոսի ընկալման ճանապարհը:

Պատմական փաստին հավատարիմ մնալու և պատմավեպով պատմություն սովորեցնելու առաքելությունը գալիս էր պատմավիպասան գրողի մուտքը կանխորոշող «Տիգրան Մեծ» պատմավեպից: Գաղտնիք չէ, որ հայ ժողովրդի պատմության ընթացքում թե՛ Հայաստանում, թե՛ Հայաստանի սահմաններից դուրս աչքի ընկած պետական գործիչների շարքում ամենից ճանաչվածը արքայից արքա Տիգրան Բ Մեծն է, որ որպես պատմական անձ, առասպելական հերոս և գեղարվեստական կերպար հանդես է եկել պատմագիտական, գեղարվեստական մի շարք ուսումնասիրություններում, աշխատություններում ու գործերում: Հ. Խաչատրյանի գլուխգործոց վեպն էլ այս շարքում իր արժանի տեղը գրավելու իրավունք ունի, քանզի ներկայացնում է հին աշխարհի մեծ տիրակալներից մեկի կյանքի ու գործունեության գեղարվեստական, բայց և ճշգրիտ տարեգրությունը: Մանրաքնին հետազոտությունը հեղինակին հնարավորություն է տվել ստեղծել պատմականորեն արժանահավատ մի պատմավեպ, որի սյուժետային հետագիծը գեղարվեստական հետաքրքիր լուծումներով ընթերցողի առջև վերակենդանացնում ու պարզում է պատմական դեպքերի, իրադարձությունների մինչփաստային ու հետփաստային ոլորտը:

Հեղինակն այս և մի շարք այլ պատմավեպերի առիթով դիմել է հայոց ազգային առաջին դասագրքի

---

[1] ***Արզումանյան Ս.,*** *Սովետահայ վեպը, 5 գիրք / հ. 3 Եր., 1986, էջ 174:*

[2] ***Խաչատրյան Հ.,*** *նշվ.աշխ., էջ 262-263:*

[3] *Նույն տեղում, էջ 281-282:*

հեղինակին՝ պատմահայր Խորենացուն[1], բայց ոչ միայն: Փաստական այլ հիմքերի օգտագործման մասին հուշում են Խաչատրյանի՝ «Տիգրան Մեծ» պատմավեպը եզրափակող հարուստ ծանոթագրությունները: Այսպես, Տիգրան Մեծի Մամիկ կամ Մանկայոս զորավարի մասին տեղեկություն հաղորդելիս Հ. Խաչատրյանը տալիս է պատմաբան Ն. Ադոնցի անունը[2]: Հռոմեական քաղաքական գործիչ ու զորավար Լուցիոս Լիցինոս Լուկուլլոսի և Պոնտոսի արքա Միհրդատ Եվպատորի մասին տեղեկություններ հաղորդվելիս Սփյուռքահայ անվանի պատմաբան Հրանտ Ք. Արմենի «Մեծն Տիգրան» աշխատության միջնորդավորված օգնությամբ տրվում են հռոմեական պատմիչ Հուստինոսի[3] և հույն պատմիչ Պլուտարքոսի[4] անունները:

Պատմահայր Խորենացու շնորհիվ փրկված հին վիպասքի «Տիգրան և Աժդահակ» ճյուղը միավորում է երկու Տիգրանների՝ Տիգրան Ա Երվանդյանին և Տիգրան Միջին Արշակունուն՝ տարբեր դարաշրջաններում ապրած և գործունեություն ծավալած արքաների: Իհարկե, պատմահոր աշխատության մեջ հիշված են նաև հայոց հնադարի մյուս Տիգրանները, սակայն պատմիչը առավել կենտրոնացել է Ք.ա. վեցերորդ դարի Երվանդյան Տիգրանի վրա և 95-55 թթ. գահակալած Տիգրան Երկրորդի սխրանքները նրան վերագրելով՝ ստեղծել միավորյալ Տիգրան Մեծի կերպար: Այս առիթով հետաքրքրական է Հրանտ Արմենի կիսաբողոք խոսքը. «Ինչո՞ւ հայերու մեծանուն պատմաբանը, Մովսէս Խորենացին, Տիգրանի պատմութիւնը ընելուն՝ համառօտակի և խառնակ ոճով մը կը գրէ: Խորենացին՝ որուն խորունկ հայրենասիրութիւնը կը բոցավառի և իւր արձակին բաբախուն շեշտ կուտայ ամէն անգամ, որ մեծ Հայ թագաւոր մը բեմ գայ, ինչպէս Հայկ, Արամ, Տիգրան Երուանդեան, Արտաշէս, Խոսրով, Մեծն Տրդատ, և այլն, կարծես իւր հետաքրքրութիւնը կը կորսնցնէ և բոլորովին անտարբեր կը դառնայ երբ թագավորներու ամենամեծին և ամենանշանաւորին դիմաց կը գտնուի»[5]: Պատմաբանի եզրահանգումը չի ուշանում. «հին Հայաստանի հռչակավոր պատմաբանը նկարագրական կուտայ հերոսի սխրագործութիւններուն, և իւր գրքի մէջ յիշատակուած երեք Տիգրանները շփոթելով՝ կ'ընտրէ Երուանդեան Տիգրանը: Իւր կողմէ տրուած մանրամասնութիւնները ճշգրտօրէն կը պատշաճին Մեծն Տիգրանի:… Խորենացին առանց գիտնալու կուտար պատմութիւնը ա՛յն Տիգրանին, զոր Յոյն և Լատին պատմիչներ կը յիշատակեն որպէս Թագաւոր Թագաւորաց»[6]:

Միավորյալ Տիգրան Մեծի կերպարը, փաստորեն, ստեղծել է գրական հետաքրքիր ավանդույթ, այն է՝ խորամուխ լինել պատմության փոշուն և ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել Տիգրան Մեծի կյանքն ու գործը: Ավանդույթի պահպանման ջատագովներից մեկը ահա պատմավիպասան Հ. Խաչատրյանն է:

Կանգ առնենք վերջինիս՝ արքայից արքա - որդիներ պատմագեղարվեստական շղթայի վրա:

Տիգրան Մեծի որդիների եռադասության խնդրի մասին տարակարծությունները շատ են: Ն. Ադոնցը հայտնում է. «Խոսելով Տիգրան Մեծի ողբերգության մասին՝ պատմիչները չեն հիշատակում նրա որդի Արտավազդին, որը հաջորդել է նրան: Նրանք ճանաչում են Տիգրան Կրտսերին և մեկ այլ որդու, որի անունը չի նշվում:… Միանգամայն պատահական մեկ նշում,-շարունակում է Ադոնցը,- մեզ տեղեկացնում է Տիգրանի ևս մեկ Զարիաստեր կամ Սարիաստեր[7] անվամբ որդու գոյության

---

[1] ***Ավետիսյան Զ.,,*** *Խորենացին մշակույթի գիտակցության մեջ, Եր., 2001, էջ 94-96:* ***Արզումանյան Ս.,*** *Խորհրդահայ վեպը, 5 գիրք / հ. 4, էջ 515-516:*

[2] ***Խաչատրյան Հ.,*** *Տիգրան Մեծ / պատմավեպ, Եր., 1990, էջ 620-621:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Նույն տեղում, էջ 627:*

[5] ***Հրանդ Ք. Արմէն,*** *Մեծն Տիգրան, Գահիրէ, 1957, էջ 6:*

[6] *Նույն տեղում:*

[7] ***Պետրոսյան Ս.,,*** *Տիգրան Մեծի որդիները եռադասության տեսանկյունից, «Տիգրան Մեծ: Տիգրան Մեծի գահակալության 2100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (2005թ.)», Եր., 2011, էջ 45:*

մասին»[1]: Այս վերջինը հավանաբար գեղարվեստական գործերից մեզ հայտնի Զարեհն է: Հ. Խաչատրյանի Տիգրանն ահա ունի 4 արու զավակ՝ Արտավազդը՝ Համասփյուռից, Զարեհը, Տիգրան Միջնակը և Տիգրան Կրտսերը՝ Կլեոպատրայից: Խ. Դաշտենցի դրամայում բացակայում են Տիգրան Միջնակն ու Արտավազդը: Իսկ ահա գրող, քաղաքական վերլուծաբան Ա. Պեպանյանի վեպում նրանք երեքն են, սերվում են Կլեոպատրայից, բայց նշվում է միայն Զարեհի անունը: «Տիգրանի կերպարի ամբոջականության համար,- գրել է պատմաբան Բ. Ուլուբաբյանը,- հեղինակն օգտագործել է պատմությունից հայտնի համարյա բոլոր փաստերը»[2]: Ինչո՞ւ համարյա: Որովհետև պատմության մեջ չի հիշատակվում Տիգրան Միջնեկի անունը: Գրողը, արքային երկու անգամ «հայրենիք թե որդի» ընտրության առջև կանգնեցնելով, կարծես փորձում է կրկնակի ընդգծել երկի հայրենասիրական պաթոսը: Պատմական աղբյուրներում որսի ժամանակ արքայի՝ ձիուց ընկնելու դրվագում հիշատակվում է Տիգրան Կրտսերը, որը, սակայն «այդ պահից հռչակվել է գահի ժառանգորդ»[3], իսկ այդ պահին առանց հապաղելու հոր արքայական թագը վերցնող որդին, որի անունը չի հիշատակվում, դատապարտվում է մահվան: Հ. Խաչատրյանը վեպում պատմական այս փաստը ճշգրտորեն է վերարտադրել, քանզի հնարաստեղծ Տիգրան Միջնակ կերպարին է տվել թագը վերցնելու «առաքելությունը»[4]: Կարծիք կա, թե Զարեհ որդին, որ հոր դեմ էր դուրս եկել, դավադիր իշխանների հետ միավորվել և իրեն ժամանակից շուտ արքա հռչակել, նույն ինքը՝ արքայի անանուն զավակն է[5]: Բայց ասվածը հստակեցված չէ: Հ. Խաչատրյանը սա ևս հաշվի է առել ու գերապատվությունը տվել պատմական ճշգրտված՝ Զարեհի՝ արտաշատցիներին խաբելու և արքայի դեմ տրամադրելու տվյալին:

Զարեհի ու Միջնակի գլխատման հրամաններն արձակելու պահերին արքան դաժանության ընդգծված շեշտերով է հանդես գալիս: Այս պարագայում, սակայն, դաժանությունն ու հայրենասիրությունը մի գծի վրա են, և հայր Տիգրանը պետք է ազատի արքա Տիգրանի ճանապարհը: «Նրանց դաստիարակությունը,- պարզաբանում է Ս. Արզումանյանը,- փառատենչության մղում է ունեցել առավելապես: Իսկ Տիգրան Մեծի համար հայրենիքից վեր ուրիշ սրբություն չկար:… Եվ Հ. Խաչատրյանը գեղարվեստորեն համոզում է, որ Տիգրան Մեծի դաժանությունը արդարացվում է: Արքա Տիգրանը հաղթում է հայր Տիգրանին՝ հանուն Հայաստանի միաբանության»[6]: Այո, արդարացվում է, բայց միևնույն է, հայրական տարրն իսպառ վերացած չէ ինչպես Հ. Խաչատրյանի, այնպես էլ Ա. Պեպանյանի Տիգրանի պարագայում. «դրանից հետո ինքը մի քանի օր փակվեց պալատի իր հարկաբաժնում աշխարհից թաքուն սգալու համար որդու մահը»[7]: Հենց հայր-արքա բախումն է, որ Տիգրան արքայի կերպարին ժամանակ առ ժամանակ ողբերգական շեշտեր է տալիս: Զարեհ արքայազնի հետ միավորված իշխանները, որդիների փառատենչությունը լավագույնս ցույց են տալիս, որ արքա Տիգրանը բավարար ժամանակ չի ունեցել զբաղվելու սեփական ու նաև երկրի զավակների դաստիարակությամբ: Ու այս է պատճառը՝ Հայոց աշխարհի «ռազմական ընտրանին» զիջում էր «ազգի ընտրանուն»: Ա. Պեպանյանը բացատրում է. «Իր պետությունն ու կայսրությունը հենված էին բացառապես իր անձի վրա, իսկ դա վտանգներ էր պարունակում իր մեջ. իրենից հետո

---

[1] ***Ադոնց Ն.,*** *Երկեր, Հատոր Դ, էջ 499-500:*

[2] ***Ուլուբաբյան Բ.,*** *Հեռավոր անցյալի վիպական մարմնավորումը, «Սովետական գրականություն» / գրական-գեղարվեստական, տեսական-քննադատական ամսագիր, Եր., 1973, էջ 144:*

[3] ***Ադոնց Ն.,*** *Երկեր, Հատոր Դ, Եր., 2009, էջ 499:*

[4] ***Խաչատրյան Հ.,*** *Տիգրան Մեծ, էջ 224-225:*

[5] ***Ադոնց Ն.,*** *նշվ.աշխ., էջ 500:*

[6] ***Արզումանյան Ս.,*** *Խորհրդահայ վեպը, 5 գիրք / հ. 4, Եր., 1990, էջ 499:*

[7] ***Պեպանյան Ա.,*** *Վերադարձ կամ Տիգրան Մեծ, Եր., 2018, էջ 147:*

խառնաշփոթն ու անկումն անխուսափելի կլինեին»[1]: Պատմությունը փաստում է՝ այդպես էլ եղավ:

Անցյալի վերարժևորմամբ դեպի ինքնության ճանաչում նպատակի իրագործմանն է ծառայել և ծառայելու բեղուն գրչով արցախցի սիրելի պատմավիպասան Հ. Խաչատրյանի հավերժ արդիական ստեղծագործությունը, այդ թվում և՝ «Արտավազդ» և «Տիգրան Մեծ» պատմավեպերը:

[1] *Նույն տեղում:*

ՀՏԴ 070:82-89

Սիրանուշ Ադամյան
ԱրՊՀ, ուսանող, լրագրության բաժին
E-mail: sirushadamyan21@gmail.com
Գիտական ղեկավար՝
բ.գ.թ., դոցենտ Զարինե Սառաջյան

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Բանալի բառեր: տեղեկատվական պատերազմ, մանիպուլյացիա, մեդիադաշտ, քարոզչություն, անվտանգություն, տեղեկատվական քաղաքականություն:

Հստակ մշակված տեղեկատվական քաղաքականության առկայությունը պարտադիր է հակամարտող երկրների համար, քանի որ նրանք մշտապես տեղեկատվական պատերազմի մեջ են գտնվում՝ փորձելով թե՛ սեփական, թե՛ միջազգային հանրությանը ներկայացնել սեփական տեսակետը: Այս պարագայում Հայաստանի համար կարևոր է Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության ուսումնասիրությունը՝ սեփական տեղեկատվական հստակ հայեցակարգի մշակման համար:

Հոդվածում ներկայացնում ենք Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությունը 44-օրյա պատերազմի ընթացքում՝ վեր հանելով առանձնահատկություններ, ցույց տալով ուղղորդված հակահայկական քարոզչությունը, որոշակի համեմատականներ տանելով հայկական կողմի տեղեկատվական քաղաքականության հետ:

Siranoush Adamyan

THE ANTI-ARMENIAN INFORMATION POLICY OF AZERBAIJAN DURING THE 44-DAY WAR

Key words: *Information warfare, manipulation, media field, propaganda, security, information policy.*

A well-designed information policy is a must for conflicting countries, as they are constantly in information war , trying to present their point of view to both their own and the international community. In this case, it is possible for Armenia to study Azerbaijan's information policy in order to develop its own clear information concept. In this article, we present the information policy of Azerbaijan during the 44-day war, revealing features, showing the directed anti-Armenian propaganda, making some comparisons with the information policy of the Armenian side.

Сирануш Адамян

АНТИАРМЯНСКАЯ ИНФОРМАЦИОННАЯ ПОЛИТИКА АЗЕРБАЙДЖАНА ВО ВРЕМЯ 44-ДНЕВНОЙ ВОЙНЫ

Ключевые слова: *Информационная война, манипулирование, медиаполе, пропаганда, безопасность, информационная политика.*

Четко разработанная информационная политика обязательна для конфликтующих стран, как для тех, кто находится в гуще информационной войны, пробуя собственную точку зрения как для себя, так и для международного сообщества. В этом случае у Армении есть возможность изучить информационную политику Азербайджана, чтобы выработать свою четкую информационную концепцию. В статье мы представляем информационную политику Азербайджана в период 44-дневной войны, раскрывая особенности, показывая направленную антиармянскую пропаганду, проводя некоторые сравнения с информационной политикой армянской стороны.

Ներկայումս տեղեկատվական պատերազմի վառ օրինակներից է Արցախյան հակամարտության կողմերի՝ Ադրբեջանի Հանրապետության ու Հայաստանի Հանրապետության միջև տասնամյակներ շարունակ ծավալվող տեղեկատվական պատերազմը, որն ակտիվ փուլ մտավ 2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակ:

Ադրբեջանական կողմը մշտապես աչքի է ընկել հակահայկական տեղեկատվական քաղաքականությամբ, բայց այն մեդիայի միջոցով առավելապես սկսել է դրսևորվել 2000-ականներից սկսած, իսկ վերջին տարիներին մեծացել է դրա դրսևորումը սոցիալական մեդիայով[1]: Համացանցի բոլոր հնարավորությունները լայնորեն օգտագործվում են ադրբեջանական քարոզչամեքենայի կողմից:

Մեր կատարած ուսումնասիրությունը փաստում է, որ վերջին տարիներին, հատկապես 2020 թվականին, Արցախի դեմ սանձազերծված 44-օրյա պատերազմին նախորդող, զուգորդող ու հաջորդող ժամանակահատվածներում ադրբեջանական առցանց լրատվամիջոցներում հաճախ են հրապարակվում հակահայկական բովանդակությամբ նյութեր, որոնք Հայաստանի դեմ տարվող տեղեկատվական քաղաքականության առանցքն են կազմում և արտացոլում են ադրբեջանական իշխանությունների ռազմական հռետորաբանությունը: Եթե ոչ պատերազմական շրջանում ադրբեջանական լրատվամիջոցներում (մեկ լրատվամիջոցում) հակահայկական նյութերի թիվը տատանվում է 50-80-ի միջև, ապա պատերազմական շրջանում դրանց թիվը հնգապատկված էր:

Ազերթաջ լրատվական կայքը 44-օրյա պատերազմի ընթացքում իրացված տեղեկատվական պատերազմի շրջանակներում հրապարակել է 510 նյութ. դրանք, ըստ թեմատիկայի, բաժանել ենք հետևյալ խմբերի.

- հայերին որպես ագրեսոր ներկայացնող,
- հայերի թուլությունը ցույց տվող,
- ադրբեջանական բանակը գովող,
- Հայաստանի իշխանությունների կողմից սեփական ժողովրդից իրականության կոծկումը ցույց տվող նյութեր:

[1] ***Հարությունյան Գ., Քոթանջյան Հ.***, *ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ, Նորավանք ԳԿՀ, Երևան, 2009:*



Ուշագրավ է, որ հակահայկական նյութերի մեծամասնության մեջ շեշտվում է հայկական կողմի՝ իբրև ագրեսորի, նախահարձակ լինելը, խաղաղ բնակչության շրջանում նրանց կատարած «հանցագործությունները»:

Նյութերում հաճախ են փորձում ապացուցել հայերի կողմից վարձկանների կռվելը. օրինակ, ադրբեջանական լրատվամիջոցներում լայն տարածում գտավ հայկական ՈՄԱ (Ողջ մնալու արվեստը) կառույցին ահաբեկչական ներկայացնող հրապարակումները, իսկ Ադրբեջանի դատախազության կողմից կառույցի նկատմամբ քրեական գործի հարուցումն ու ահաբեկչական գործողություններում անչափահասների մասնակցությունը իբրև ապացուցող տեսանյութի հրապարակումը հանգեցրին հայկական կողմից պատասխանի[1]: ՀՀ ՊՆ-ն հանդես եկավ տեսանյութով, որտեղ Ադրբեջանի կողմից նման տեղեկությունները որակվեցին «Բաքվի հերթական սուտ», իսկ ՈՄԱ-ին ներկայացրին որպես 2014 թվականին հայ հետախույզ Վովա Վարթանովի կողմից հիմնադրված ռազմահայրենասիրական կառույց: Անչափահասի մասին կեղծիքն ապացուցելու համար հրապարակեցին տեսանյութի աղջկա անձնագիրը, որտեղ երևում է՝ անչափահասն իրականում չափահաս է՝ 21 տարեկան[2]:

Ադրբեջանի բոլոր նախարարությունները, բազմաթիվ քաղաքական գործիչներ, պաշտոնյաներ հակահայկական քարոզչության մասնակիցն են եղել Արցախյան 44-օրյա պատերազմի ընթացքում, բայց ուսումնասիրության տիրույթում ենք ընդգրկել իրենց քարոզչական պայքարով աչքի ընկնողներին, որոնք էլ հանդիսացել են ադրբեջանական կողմի գլխավոր տեղեկատուները պատերազմի ժամանակ:

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը ամենժամյա թարմացումներ էր անում պատերազմում տիրող իրավիճակի մասին: Ողջ պատերազմի ընթացքում ԱՀ ՊՆ կայքէջում կատարվել է 470 հրապարակում, որոնց մեծամասնությունը պաշտոնական կարճ հաղորդագրություններ էին պատերազմական գոտում կատարվող իրադարձությունների մասին: Հաղորդագրությունների մեջ էլ մեծ տեղ էր հատկացվում հայկական կողմի՝ հրադադարի խախտումները արձանագրող, հայկական կողմից խաղաղ բնակչության վրա հարձակումների մասին հրապարակումները: Հրապարակումների զգալի մաս են կազմում նաև ադրբեջանական բանակի կողմից հայկական զորքի առաջխաղացման կասեցումը, զինտեխնիկայի ոչնչացումը ապացուցող վիդեոհաղորդագրությունները:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը 44-օրյա պատերազմի ընթացքում ակտիվորեն հարցազրույցներ էր տալիս մի շարք միջազգային լրատվամիջոցների՝ այդպիսով միջազգային

[1] https://azertag.az/ru/xeber/Generalnaya_prokuratura_Vozbuzhdeno_ugolovnoe_delo_v_otnoshenii_lic_sozdavshih_terroristicheskuyu_organizaciyu_na_okkupirovannyh_azerbaidzhanskih_zemlyah-1632561

[2] https://m.facebook.com/story.php?story_fbid=3385063691529767&id=100000785095088

հանրությանը քարոզելով Ադրբեջանի տեսակետը Ղարաբաղյան հիմնախնդրի մասին, հայերին ներկայացնելով որպես հարձակվող կողմ, իսկ նրանց կողմից տարածվող մեղադրանքներն ընդդեմ Ադրբեջանի որակելով կեղծիք: Սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում նա հարցազրույց է տվել 19 օտարերկյա լրատվամիջոցի, որոնց թվում են BBC-ն, France 24-ը, Al Jazeera-ն, EFE-ն և այլն:

Ալիևի թվիթերյան միկրոբլոգը մեծ ակտիվությամբ էր գործում պատերազմի օրերին. նրա թվիթները մեծամասամբ ադրբեջանական զորքի հաղթարշավի մասին էին: Պարբերաբար ներկայացնում էր, թե ինչ տարածքներ են անցել իրենց վերահսկողության տակ, իսկ յուրաքանչյուր գրառում ուղեկցվում էր «Ղարաբաղն Ադրբեջան է» արտահայտությամբ: Նրա՝ գրավված տարածքների մասին թվիթները պարբերաբար հերքվում էին ՀՀ ՊՆ կողմից:

Ադրբեջանի նախագահի խորհրդական Հիքմեթ Հաջիևը հայտնի է որպես 44-օրյա պատերազմի ընթացքում, նաև դրան նախորդող ու հաջորդող ժամանակահատվածներում Ադրբեջանի իշխանությունների խոսափող: Ազերթաջում կատարած ուսումնասիրությունը փաստում է, որ ողջ պատերազմի ընթացքում հրապարակված հակահայկական 510 նյութից 193-ում հենց Հաջիևի հակահայկական հայտարարությունները, հայկական կողմի այսպես կոչված «հանցագործ արարքներ»-ի ապացույցներն են ներկայացվում: Թվիթերի իր միկրոբլոգում նրա հրապարակումները լայն տարածում էին գտնում ադրբեջանական և միջազգային լրատվամիջոցներում:

Ուսումնասիրելով Հաջիևի կողմից պատերազմի ընթացքում կատարված գրառումները՝ կարող ենք եզրակացնել, որ նրա քարոզչության նպատակը միջազգային հանրության շրջանում հայերին իբրև նախահարձակ, խաղաղ բնակչությանը սպանող, իրենց բնակավայրերը հրթիռակոծող, իսկ Ադրբեջանին՝ որպես խաղաղարար կողմ ներկայացնելն էր:

Հաջիևի գլխավոր գործիքները լուսանկարներն ու տեսանյութերն էին, որոնցով փորձում էր ապացուցել իր հայտնած տեղեկատվությունը:

Նոյեմբերի 2-ին նա տեսանյութ հրապարակեց, որով փորձում էր ապացուցել, որ հայկական կողմը արգելված զենք՝ ֆոսֆորային ռումբեր է արձակել Ֆիզուլիի շրջանի ուղղությամբ[1], ինչին հայկական կողմից եղավ արձագանք: ՀՀ ՊՆ-ի կողմից կեղծիքն ապացուցող տեսանյութ հրապարակվեց, որտեղ զարմանք էին հայտնում, որ տեսախցիկները կարողացել են ֆիքսել ուղիղ պայթյունի պահը և ցույց էին տալիս Բաղրամյան 26 թելեգրամյան ալիքի տեսանյութը[2], որտեղ երևում էր, որ օպերատորներին հրահանգում են միացնել տեսախցիկները, ինչից հետո էլ տեղի է ունենում բեմականացված պայթյունը:

Հաջիևը հաճախ էր կիսվում միջազգային լրատվամիջոցների՝ ադրբեջանական կողմի օգտին կատարած գրառումներով՝ այդպիսով փորձելով ցույց տալ, որ միջազգային հանրությունն իրենց կողմից է:

Պատերազմն ուղեկցվում էր Ադրբեջանի կողմից այս կամ այն բնակավայրը գրավելու մասին լուրերով, իսկ որպես ապացույց ներկայացվում էին լուսանկարներ ու տեսանյութեր տվյալ բնակավայրից. օրինակ՝ Հադրութ քաղաքի գրավման մասին լուրը Ադրբեջանը պաշտոնական մակարդակով շրջանառում էր հոկտեմբերի 8-ից սկսած, ինչը հայկական կողմից հերքվեց լուսանկարի ու տեսանյութի միջոցով, որտեղ ՀՀ ՊՆ ներկայացուցիչը փորձում էր Հադրութի մուտքի մոտ գլխավոր վահանակի կողքից լուսանկարներ ու տեսանյութեր հրապարակելով ապացուցել Ադրբեջանի նախագահի ու ՊՆ-ի՝ քաղաքի գրավման մասին լուրերի կեղծ լինելը, իսկ Արցախի

[1] https://twitter.com/HikmetHajiyev/status/1329009531008016389?t=SpUp5IaAFtvWwoo3S8wziA&s=19
[2] https://m.facebook.com/story.php?story_fbid=3385063691529767&id=100000785095088

նախագահի խոսնակը ֆեյսբուքյան գրառմամբ տեղեկացնում է, որ Հադրութի հատվածում լայնածավալ մարտական գործողությունները շարունակվում են: Արցախի նախագահը տեսանյութ է հրապարակում Հադրութից՝ գրելով՝ «Հադրութ քաղաքի ուղղությամբ թշնամու գրոհն այսօր ետ մղած մեր քաջարի տղաների հետ»: Արդեն հոկտեմբերի 12-ին «Ազատություն» ռադիոկայանի եթերում Վահրամ Պողոսյանը հայտարարում է՝ Հադրութի շուրջ իրավիճակը գնալով սրվում է: Պաշտոնական Ադրբեջանը հակադարձում է՝ ասելով, որ ադրբեջանական բանակը չի կարող գրոհել մի բնակավայր, որն արդեն իրենց վերահսկողության տակ է: Բուն Հադրութ քաղաքում արված առաջին տեսանյութը Ադրբեջանի կողմից հրապարակվեց հոկտեմբերի 16-ին: Անկախ հետաքննություններով զբաղվող Bellingcat կայքը, ուսումնասիրելով այն, եզրակացրեց՝ տեսանյութն իրական է: Հայկական կողմից պաշտոնապես չհաստատեցին Հադրութի կորուստը. դրա փոխարեն, հայկական կողմը նոր քարոզչական հնարք դրեց շրջանառության մեջ, ըստ որի՝ ադրբեջանական բանակը այս կամ այն բնակավայրը գրավում է PR նպատակներից ելնելով:

Հակասություններ էին նաև քարտեզների պատերազմում: Երկու կողմերը միմյանցից տարբերվող քարտեզներ էին ներկայացնում, որոնցում արտացոլվում էր ռազմական իրադրությունը տարածական առումով[1]:

Հոկտեմբերի 9-ին Ադրբեջանի ՊՆ-ն տեղեկացրեց հայկական կողմից Մինգեչաուրի և Աղջաբեդիի շրջանների ինտենսիվ հրետակոծության մասին: Շուշան Ստեփանյանը հերքեց տեղեկությունը:

Հոկտեմբերի 4-ին Վահրամ Պողոսյանը հայտարարեց Ադրբեջանի Գյանջա քաղաքի օդանավակայանի՝ հօդս ցնդելու մասին՝ առանց ապացույց ներկայացնելու: Նույն օրը Ադրբեջանը հերքեց այդ պնդումը: fip.am փաստերի ստուգման հարթակը, ուսումնասիրելով Google Earth ծրագրում հասանելի դարձած արբանյակային լուսանկարները, պարզել է, որ օդանավակայանին որևէ հարված, որը տեսանելի հետևանքներ կթողներ, չի կատարվել առնվազն հոկտեմբերի 16-ի դրությամբ[2]:

Հայկական կողմը պարբերաբար Ադրբեջանին մեղադրում էր խաղաղ բնակչությանը սպանելու, մշակութային կոթողները հրթիռակոծելու համար՝ ներկայացնելով անհերքելի ապացույցներ, սակայն սա ևս ադրբեջանական կողմից իսկույն հերքվում էր: Ավելին, Ադրբեջանի նախագահը ճապոնական առաջատար թերթերից մեկին՝ Nikkei-ին տված հարցազրույցում հայտարարել է, որ իրենք երբեք չեն ձեռնարկել և չեն ձեռնարկելու ինչ-որ քայլեր ընդդեմ խաղաղ բնակչության[3]: Մինչդեռ փաստերն այլ բան են ապացուցում:

Ընդհանուր առմամբ, Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականության առանցքը միջազգային հանրության շրջանում Հայաստանին որպես ագրեսոր ներկայացնելն էր, բայց, այնուհանդերձ, Ադրբեջանի տեղեկատվական քաղաքականությունը համակարգված էր, քանի որ պաշտոնական տեղեկատուները քիչ էին, բացի այդ, վերահսկողության հստակ մեխանիզմներ էին ներդրվել: Բոլոր հայկական կայքերը արգելվեցին երկրում, իսկ սոցիալական ցանցերից միայն թվիթերը դարձավ տեղեկատվական գործիք, ինչը հեշտացրեց տեղեկատվական դաշտի վերահսկումը և եթե հայկական կողմից իրարամերժ տեղեկություններ էին լինում, ապա այս դեպքում նման երևույթը բացառված էր: Այս ամենը նպաստեց տեղեկատվական պատերազմում ադրբեջանական կողմի հաջողությանը, և կարծում ենք, որ հակառակորդին տեղեկատվական դաշտում դիմագրավելու լավագույն տարբերակը նրանց տեղեկատվական քաղաքականությունը լավագույնս ուսումնասիրելն է: Եթե

1 https://jam-news.net/ru/карты-карабахского-конфликта-что-про/
2 https://Fip.am/14023
3 https://web.archive.org/web/20201022152829/https://haqqin.az/news/192162

սոցիալական ցանցերը պատերազմական իրավիճակում քայքայիչ դեր են տանում տեղեկատվական դաշտում, լարվածություն են առաջացնում հայ հանրության շրջանում, գուցե անհրաժեշտ է արգելափակել դրանք և գործածության մեջ թողնել միայն թվիթերը, որը լավագույն տարբերակն է միջազգային հանրությանը մեր գոյությանը սպառնացող ադրբեջանական լրջագույն վտանգը մշտապես հիշեցնելու համար:

ՀՏԴ 82-9

Հովհաննես Սարգսյան
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետի
Հայ հին և միջնադարյան գրականության և
նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն,
հայցորդ
sargsyanhov79@gmail.com

Գիտական ղեկավար՝
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
բանասիրական ֆակուլտետի
Հայ հին և միջնադարյան գրականության և
նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի
վարիչ,
բ.գ.դ., պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյան
aelita.dolukhanyan@gmail.com

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՍԻՍԱԿԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր: *Մովսես Խորենացի, Ղևոնդ Ալիշան, Սյունիք, Մեծ Հայք, գավառ, պատմություն, տեղագրություն, տեղանուններ, անձնանուններ:*

Ղևոնդ Ալիշանի «Սիսական» աշխատությունը բացառիկ կարևոր է Մեծ Հայքի 15 նահանգներից մեկի՝ Սյունիքի պատմական տարածքների հայկականությունը հիմնավորելու, Սյունիքի քաղաքների, գյուղերի, բնության, բնակչության և այլ կարևոր տեղեկություններ բացատրելու, ստուգաբանելու, ինչպես նաև սերունդներին փոխանցելու առումով: Մեր ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ Ղևոնդ Ալիշանը, ճիշտ է, իր աշխատությունը գրելիս հիմնականում օգտվել է Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն տանն Սիսական» աշխատությունից, սակայն մեծ տեղ է հատկացրել նաև Պատմահայր Մովսես Խորենացու թողած ժառանգությանը՝ տարբեր տեղեկությունների համար որպես սկզբնաղբյուր ընդունելով նրա «Հայոց պատմություն» աշխատությունը:

Саргсян О. М.

МОВСЕС ХОРЕНАЦИ В ТРУДЕ «СИСАКАН» Г. АЛИШАНА

Труд Гевонда Алишана имеет исключительное значение в связи с обоснованием армянства на исторических территориях Сюника как одной из 15 провинций Великой Армении, а также этимологизацией топонимов Сюника, толкованием важнейших сведений и передачей будущим поколениям. Наше исследование показало, что Гевонд Алишан при написании своего труда в основном использовал произведение Степаноса Орбеляня, а также уделил много внимания наследию, которое оставил историк Мовсес Хоренаци, ссылаясь на "Историю Армении" как на источник по различным сведениям.

Sargsyan H. M.

MOVSES KHORENATSI IN THE WORK "SISAKAN" BY G. ALISHAN

The work of Ghevond Alishan "Sisakan" is unique in preserving the Armenianness of one of the 15 provinces of Greater Armenia, the historical territories of Syunik, checking the history of the region, the cities of Syunik, the village, nature, population and other important information, as well as the transmission of this information to future generations. Our research showed that Ghevond Alishan, when writing his work, mainly used Stepanos Orbelyan's "History of the House of Sisakan", but also paid much attention to the legacy left by the historian Movses Khorenatsi, referring to the "History of Armenia" as a source of various information.

Հայ բանաստեղծ, բանասեր, մանկավարժ, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանի թողած հարուստ գրական ժառանգության մեջ իր գիտական արժեքով առանձնահատուկ տեղ է զբաղեցնում «Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի» հսկայածավալ աշխատությունը, որը լույս է տեսել Վենետիկում 1893 թ.: 1850-ականներից Ալիշանը հանձն է առնում ահռելի աշխատանք և ջանքեր պահանջող մի գործ. գիտնականը նախատեսել էր գրել պատմական Հայաստանի բոլոր 15 նահանգների մասին պատմաաշխարհագրական բնույթի աշխատություններ՝ զետեղելով դրանք 20-22 մեծադիր հատորներում: 1855 թ. լույս տեսած «Տեղագիր Հայոց Մեծաց» աշխատության մեջ նա ներկայացրել է պատմական Հայաստանի գավառները, տվել նրանց համապատասխան գիտաաշխարհագրական բնութագիրը: Մինչև «Սիսականը» Ալիշանն արդեն հանրությանն էր ներկայացրել «Շիրակ» (1881), «Սիսուան» (1885), «Այրարատ» (1890) աշխատությունները, որոնցում հանգամանալից քննության էր ենթարկել այդ գավառների պատմությունն ու աշխարհագրությունը: «Ալիշանը բազմագիտակ էր բառի ճշգրիտ նշանակությամբ: Նա խորքով ծանոթ էր համաշխարհային պատմությանն ու գրականությանը, մարդկության դարավոր ընթացքին: Թեպետ երբեք չի եղել Հայաստանում, սակայն իր երկերում ամենատես աչքով ներկայացնում է Մեծ Հայքի գլխավոր նահանգները, ինչպես նաև Կիլիկյան Հայաստանը: Ապշեցուցիչ են պատմական բնակավայրերի նրա ճշգրիտ նկարագրերը»[1]:

«Սիսական» աշխատության մեջ, ինչպես նախորդներում, պատմա-աշխարհագրական մեթոդով Ղևոնդ Ալիշանը ներկայացրել է Սյունյաց աշխարհի տեղագրությունը՝ մանրակրկիտ նշելով պատմական Հայաստանի 15 նահանգներից մեկի լեռների, գետերի, լճերի, ձորերի, գյուղերի, քաղաքների, դրանցում առկա պատմական հուշարձանների, տեղի հայտնի իշխանական տոհմերի ծագումնաբանության և քաղաքական անցուդարձերի մասին հավաստի տեղեկություններ: Հեղինակը ստեղծել է քննական-հետազոտական երկ՝ իր աշխատությունը գրելիս օգտվելով և համեմատելով բազմաթիվ պատմիչների, գիտնականների և հետազոտողների մոտ հանդիպող տեղեկությունները: Ալիշանը պահպանել է ժամանակակից գիտական աշխարհին բնորոշ «ակադեմիական ազնվությունը»՝ հղում կատարելով յուրաքանչյուր մեջբերվող հեղինակին: «Ալիշանն օգտագործել է միջնադարի մատենագրությունն ամփոփող տպագիր և ձեռագիր հսկայական նյութ, ինչով և պայմանավորվում է քննվող աշխատության աղբյուրագիտական

[1] *Դոլուխանյան Ա., Ղևոնդ Ալիշանը հանրագիտակ (հոդվածների ժողովածու՝ նվիրված Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյա հոբելյանին), Նախաբան, Երևան, 2020, էջ 4:*

արժեքը»[1]: Ինչպես իր գրեթե բոլոր գործերում, «Սիսական» աշխատության մեջ էլ ամենաշատ մեջբերվող հեղինակներից է Պատմահայր Մովսես Խորենացին: Ալիշանը մի շարք տեղանունների, անձնանունների, պատմական իրողությունների ներկայացման համար անդրադարձել է հայ պատմագրության առաջնորդին՝ ընդգծելով նրա «Հայոց պատմություն» աշխատությունը որպես տվյալ նյութի տարածման սկզբնաղբյուր:

Սյունիքի քաղաքական տեսությունը ներկայացնելիս պատմական սյունեցիներին Ղևոնդ Ալիշանը ներկայացնում է որպես Հայկ Նահապետի ժառանգներ՝ հղում անելով Մովսես Խորենացու այն տեսությանը, թե Հայկի հետ եղել է Սիսակ անունով անձ՝ Գեղամի որդին՝ «...զայր սեգ և անձնեաց, բարեգեղ, կորովաբան և գեղեցկաղեղն: Սմա՝ զմեծ մասն ընչից իւրոց տուեալ և ծառայս անձինս բազումս՝ սահմանս հատանէ նմա ժառանգութեան ի ծովէն ընդ արևելս մինչև ցդաշտ մի, ուր գետն Երասխ հատեալ զքարանձաւս լերանց՝ անցանէ ընդ խոխոմս ձիգս և նեղս, ահագին դնդնչմամբ իջանէ ի դաշտն: Աստ բնակեալ Սիսակ՝ լնու շինութեամբ զսահմանս բնակուփեան իւրոյ. և զաշխարհն կոչէ իւրով անուամբն Սիւնիք. այլ Պարսք յըստակագոյնս ևս Սիսական կոչեն»[2]: Շարունակելով՝ Ալիշանը հիշատակում է Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհակալության ժամանակ Սյունյաց աշխարհի առաջնորդ դարձած Առանին, նրա մասին տեղեկությունը կրկին մեջբերելով Խորենացուց. «Առան անուանի և քաջ կարգեցաւ կողմնակալ բիւրաւոր ի Պարթևէն Վաղարշակայ»[3], այնուհետև գրելով, թե «Այս անուն Առան քաջ ծանօթ է առ արեւելեան պատմիչս, և ի մերոյս՝ ի Մովսիսէ Կաղանկատացւոյ և այսր, որք այնու իմանան և նշանակեն զմիջագետս Երասխայ և Կուրի, յաւէտ զերկոսին աշխարհս Հայոց զԱրցախ և զՈւտի, այլ ընդարձակօրէն և ի վերայ արեւելեան մասին Սիւնեաց ձգի, որում և ի ճահ գայր լինել կողմնակալ բիւրաւոր, որպէս և էր Սիւնեայն նահապետ գլուխ արեւելեան զորաբանակին հայոց...»[4]:

Սյունիքի գավառների անունները թվարկելիս, ճիշտ է, Ղևոնդ Ալիշանը մեջբերում է Ստեփանոս Օրբելյանի աշխատության մեջ առկա տեղանունների ցանկը, սակայն կրկին չի մոռանում Մովսես Խորենացուն, ընդգծելով, որ «Երկոտասան գաւառս Սիւնեաց համարին ամենայն պատմիչք մեր և աշխարհագիրք, յորց հնագոյնն (Մ. Խորենացին) յարեւմտեան սահմանայ աշխարհին սկսանի թուել և դասել» [5]:

Սյունիքի մասին տեղեկություններից բացի Ղևոնդ Ալիշանը իր աշխատության մեջ ներառել է նաև արժեքավոր և հսկայածավալ նյութ սահմանակից գավառների և աշխարհագրական տեղանունների մասին. Արցախ, Գեղարքունիք, Սոդք, Վայոց Ձոր և այլ շրջաններ ևս հեղինակի ուսումնասիրության տիրույթում են եղել: Սոդքի մասին խոսելիս Ալիշանը նկատում է, որ այն տարբեր պատմիչների մոտ տարբեր անվանումներով է հանդիպում, իսկ աշխարհագրական դիրքով լինելով արևելյան Արցախին սահմանակից տարածք՝ հաճախ եղել է հայ-աղվանական բախումների պատճառ: Ալիշանը այստեղ կոնկրետ փաստերով, Մովսես Խորենացուն հղում անելով՝ հիմնավորում է տվյալ տարածաշրջանի հայկական լինելը՝ հակադարձելով նույնիսկ Պտղոմեոսին, ում մոտ այդ տարածքը ներկայացվում է աղվանական կամ վրացական: Հետազոտողը փաստում է, որ տվյալ շրջանը, ճիշտ է քիչ՝ 50 հոգանոց, սակայն հայկական արքունի բանակին զորք է տվել, որը հավաստում է որ այս գավառը հայկական հսկողության ներքո է եղել: «Ի հին օրինակի միում

---

[1] ***Հովսեփյան Լ.,*** *նույն տեղում, Սյունիքի Ծղուկ գավառի գիտակրթական դերն ըստ Ալիշանի <<Սիսական>> աշխատության, էջ 49:*

[2] ***Մովսես Խորենացի****, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, էջ 41:*

[3] *Նույն տեղում, էջ 113:*

[4] ***Ղևոնդ Ալիշան****, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 25:*

[5] *Նույն տեղում, էջ 8: Այսուհետև այս գրքից արված մեջբերումների էջերը կնշվեն վերևում – Հ. Ս.:*

Աշխարհագրութեան Խորենացւոյ՝ Ոսոտք գրեալ է անունս այս: Դարձեալ ոչ գիտեմ վասն արտորայի՞ցն ինչ՝ եթե յայլ սակս՝ կոչեցեալ է երկիրս և Արտից գաւառ» (էջ 63):

Կովսական գավառի պատմությունը քննելիս Ալիշանը նշում է, որ Պատմահոր մոտ տվյալ տեղանունը հանդիպում է երկու տարբերակով. «Կովսական գաւառ, որ այժըմ Գրհամ կոչեն, և յետինք Գուրհամ. որոյ կոչմանն պատճառ և ծագումն անծանօթ մեզ, որպէս և հին անունն, որ ըստ այլեւայլ օրինակաց աշխարհագրութեան Խորենացւոյն՝ գրի և Կուսական և Կոսական, և որպէս այլոց գաւառաց ոչ ամենեւիմբ պատշաճին հին և նոր սահմանքն, այսպէս և Գուրհամայն առ յետինս, զի թուին խառնիլ ընդ մասին Արևեաց» (էջ 286):

Ղևոնդ Ալիշանը իր աշխատության մեջ մի մեծ հատված է առանձնացրել պատմական Գողթն գավառի ուսումնասիրության համար՝ ընդգծելով այն կարևորությունը, որն ունեցել է հին ժամանակներում: Նա նշում է, որ Սյունիքն ու Վասպուրականը անընդմեջ պայքարել են Գողթնը իրենց կազմում տեսնելու համար: Այս հարցի շուրջ Ալիշանը իր անհամաձայնությունն է հայտնում Մովսես Խորենացուն, որը Գողթնը դիտել է որպես Վասպուրականի մաս, համարելով դա Պատմահոր ապրած ժամանակաշրջանի քաղաքականության պահանջ և զբաղեցրած դիրքի ու տեղագրության համար այն միանշանակ ընդունելով որպես Սյունիքի տարածք: «Թէպէտ և Խորենացի յաշխարհագրութեանն ի Վասպուրական դասէ, այնպէս այնպէս թերեւս առ իւրով ժամանակաւ գոլով քաղաքական օրինօք. բայց և ինքնին Երասխ գետ որ անջրպետ է երկոցուն աշխարհացն, ի Սիւնիս կցորդէ զԳողթն, ընդ այլոցն գաւառաց ի միջի փակելով յահեկէն, որ է ի հիւսիսոյ» (էջ 309): Գավառի անվան հետ կապված՝ Ալիշանը գրում է, թե «նոյն ինքն Խորենացի խոստովանի» (էջ 310), եթէ զԳողթնեցիս՝ գտի պատմեալ ի Սիսականէն արդարև հատուած. ոչ գիտեմ, թէ յանուն արա՞նցն զգաւառսն անուանեալ, և թէ յանուն գաւառացն զնախարարութիւնսն կոչեցեալ»[1]:

Ինչպես գիտենք, Գողթն գավառում քրիստոնեական լուսավորչություն տարածելու ընթացքում է Սուրբ Մեսրոպ Մաշտոցը հղացել հայոց այբուբենը ստեղծելու գաղափարը, իսկ գրերի գյուտից հետո էլ կրկին վերադարձել է և իր աշակերտների օգնությամբ շարունակել գավառի բնակիչների հայեցի, քրիստոնեական կրթությամբ զբաղվել: Այս դեպքերի մասին էլ Ղևոնդ Ալիշանը գրել է «Սիսական» աշխատության մեջ՝ մեջբերումներ անելով Մովսես Խորենացու և Մաշտոցի կենսագիր Կորյունի աշխատություններից: «…արժանայիշատակ է լրումն գործոց նոցին ի ձեռն հօր դպրութեան մերոյ Ս. Մեսրովպայ, որ երկիցս լուսաւորեաց զսոյն, նախ յառաջ քան զգիւտ հայերեն տառիցս, իբրեւ մենասէր աստուածախոհ անձն մեկուսացեալ այսր. ուր տեսեալ զի տակաւին մնայ ղօղեալ աղանդն հեթանոսական, թաքցուեալ յաւուրսն Տրդատայ մինչև ցայն ժամանակս, և ապա վատթարել թագաւորութեան Արշակունեայ» (էջ 313): «Յետ գիւտի հայերէն տառիցն վերադարձաւ Մեսրովպ «ի նախնի աշակերտեալն Գողթն», որպէս ասէ Մ. Խորենացի, կամ «յառաջին դաստակերտն իւր» ըստ Կորիւնի, և կրկին «աւետարանեալ կարգէր յամենայն գիւղս գաւառին…» (էջ 313): Գողթն գավառը հայտնի է նաև հեթանոսական շրջանի վիպական հերոսների մասին բազմաթիվ վիպասանական պատմություններով, որոնց մասին հիմնական նյութը մեզ է փոխանցել Պատմահայր Մովսես Խորենացին: Ալիշանը այս իրողությունը ևս ներկայացրել է իր աշխատության այս հատվածում: «…զի յայսմ եւս մասին առանձնաշնորհութիւն և սեփական կնիք ունի երկիրս այս, առաւել քան զայլ կողմանս աշխարհիս մերոյ, ընդ հեթանոսական պաշտամանց՝ պահելով պնդութեամբ և զդիւցազնական աւանդութիւնս նախնեաց, և զարիական գործս քաջաց և ըզթագաւորաց Հայոց, զանուանեալ Երգս թուեալեաց և զՎիպասանութիւնս, զոր յայլոց և զոր յիւր եանց բնիկ բանաստեղծից յօրինեալս. զորս բազում անգամ յիշէ և ի վկայութիւն կոչէ պատմահայր

[1] *Մովսես Խորենացի, էջ 117:*

մեր Խորենացի» (էջ 313)։ Ալիշանը այնուհետև թվարկում է Խորենացու Պատմության մեջ հիշվող վիպական հատվածները՝ Տիգրան և Աժդահակ, Արտաշես Բ, Վահագն։

«Սիսական» աշխատության մեջ Ղևոնդ Ալիշանը առանձնահատուկ տեղ է հատկացրել Նախիջևանին, որը, ըստ նրա, մշտապես, հին դարերից սկսած, հարևանների հետ կռիվների պատճառ է դարձել։ Ալիշանը հմուտ գիտնականի և հետազոտողի մանրակրկիտ զննությամբ ուսումնասիրել է Նախիջևանի հայկականությունը ապացուցող բազմաթիվ փաստեր, իհարկե չմոռանալով անդրադառնալ Մովսես Խորենացուն։ Հայ նախարարական ամենաազդեցիկ տներից մեկը՝ Մարդպետական տոհմը, ինչպես Պատմահայրն է գրել, սերում է Նախիջևանից։ Ալիշանը մի փոքր ուղղում է Խորենացուն, ասելով, որ վերջինս Մարդպետական տան բոլոր ներկայացուցիչներին անվանել է Հայր Մարդպետ, մինչդեռ նրանցից յուրաքանչյուրը ունեցել է տարբեր անուն։ Այս երևույթը Ալիշանը նկատել է նաև այլ պատմիչների՝ մասնավորապես Փավստոս Բուզանդի և Զենոբի մոտ։

Հայաստանի և Արցախի համար այս դժվարին ժամանակներում անչափ կարևոր է Ղևոնդ Ալիշանի «Սիսական» աշխատության մասին հանրային իրազեկվածության ապահովումը, քանզի այնտեղ ներկայացված բազմաթիվ հայկական տարածքներ, որոնք դարեր ի վեր եղել են պատմական Հայաստանի կազմում, այսօր թշնամիների ոտնձգությունների կիզակետում են։ Իսկ միջազգային հանրությանը և հակառակորդ պետություններին դրանց մասին պատմական ճշգրիտ տեղեկությունների միջոցով հակադարձելու առումով Ալիշանի «Սիսականը», ինչպես նաև մյուս գիտական աշխատությունները կարևոր դեր կարող են կատարել։

ՀՏԴ 82-1

Մելանյա Թևոսյան
Գորիսի պետական համալսարան
Հումանիտար մասնագիտությունների
ֆակուլտետ, առկա բակալավր

Գիտական ղեկավար՝
բ.գ.թ. Լ. Թունյան

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ «ԲԻԲԼԻԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ» ՇԱՐՔՈՒՄ

Հանգուցային բառեր. *Աստվածաշունչ,աստվածաշնչյան մոտիվներ, սրբագործված կերպարներ, լույս, չար, հուշ, բողոք, դավ:*

Меланья Тевосян
ГГУ, 3-й курс

БИБЛЕЙСКИЕ МОТИВЫ В СЕРИАЛЕ ВАХАГНА ДАВТЯНА «БИБЛЕЙСКИЕ МОТИВЫ»

Ключевые слова *: Библия, библейские мотивы, освященные образы, свет, зло, память, жалоба, обман*

В статье мы представили стихи Ваагна Давтяна из серии «Библейские мотивы», сюжеты и герои которых библейские. Поразмышляли над связью с Библией, выделили авторские нововведения и акценты Давтяна.

Melania Tevosyan
GSU Third-year student

SCRIPTURAL MOTIVES IN VAHAGN DAVTYAN'S "BIBLICAL MOTIVES" SERIES

Keywords *. Bible, biblical motifs, consecrated images, light, evil, memory, complaint, deceit.*

The article presents the poems of Vahagn Davtyan's "Biblical motives" series, the plots and characters of which are biblical. We are talking about the connection with the Bible and the innovations and highlights made by the author.

19-րդ դարավերջին և 20-րդ դարի ողջ երկայնքով ձգվեց գրական-գեղարվեստական մի ուղղություն, որն ընդունված է անվանել *նեոկլասիցիզմ* կամ *նեոդասականապաշտություն*: Բառարանային բացատրությամբ՝ նեոկլասիցիզմի «ստեղծագործական պրակտիկան հիմնված էր հնության, վերածննդի և դասականության հիմնական ձևերի ոճավորման վրա»[1]:

Վերոնշյալ մեթոդին հարող հեղինակները առանձնանում են նրանով, որ.

- «հավերժական» արժեքներ են առաջ քաշում,
- որպես նյութ ծառայեցնում են անտիկ սյուժեներն ու մոտիվները, կերպարներն ու իրադարձությունները

[1] https://slovar.cc/rus/efremova-tolk/313040.html, 30.04.2022:

- մեծ հետաքրքրություն ունեն դեպի անցյալն ու պատմությունը,
- անդրադառնում են ազգի պատմական անցքերին, ավանդական առասպելներին և, նույնիսկ, էպոսին,
- անցյալից վերցրած կերպարներին «սրբագործում են»,
- զարգացնում են դասական ավանդույթները:

«Իսկական պոեզիան հավատարիմ է իր անցյալին, դարերի ավանդին, առաջ է գնում ազգային և համամարդկային, անձնական և հասարակական խոհերի և զգացումների խոր ակոսներով, սիրո և տառապանքի ուղիներով»[1],- իր հոդվածներից մեկում նշում է մեծ գրականագետ Հրանտ Թամրազյանը::

Նման սկզբունքների կրող է նաև մեր կողմից ուսումնասիրված հեղինակը՝ Վահագն Դավթյանը:

Դավթյանը նոր շունչ ու ոգի է դրել աստվածաշնչյան ֆաբուլա ունեցող սյուժեների խորքում, դրանք ներկայացրել նոր տեսանկյունից՝ հեղինակային հավելումներով ու հետաքրքիր լուծումներով:

Հեղինակի բանաստեղծություններում նորություն է հերոսների ազատ խոսքն Աստծու հետ, ինչն Աստվածաշնչում չենք տեսնում: Կարծում ենք՝ սա մարդու ազատագրման, երկրի վրա մարդու դերի, նրա բնական պահանջների ու ցանկությունների հանդեպ հարգանքի անհատական մոտեցման տարբերակ է: Դավթյանը չի մերժում Աստծուն, կասկածի տակ չի առնում աստվածաշնչյան գաղափարներն ու սրբագիր բովանդակությունը, պարզապես նորովի է փորձում մեկնաբանել մեզանում դարեդար արմատացած աստվածաշնչյան մեկնաբանությունները:

Մենք ուսումնասիրության նյութ ենք դարձրել «Բիբլիական մոտիվներ» շարքի բանաստեղծությունները՝ «Լույսը», «Չարը», «Վազը», «Հուշը», «Բողոքը», «Դավը» և «Երգը», որոնց կենսահիմքը Աստվածաշունչն է՝ մեզ հայտնի սյուժեներով ու հերոսներով:

«Բիբլիական մոտիվներ» շարքի յուրաքանչյուր բանաստեղծություն հատկանշվում է սիմվոլիկ պատկերներով: Կարելի է ստորագծել այն, որ բանաստեղծությունների վերնագրերն անգամ ընտրված են որևէ երևույթ կամ որևէ մեկին բնորոշելու նպատակով: Տվյալ դեպքում նյութի հերոսների և վերնագրերի միջև գոյություն ունի առանձնահատուկ կապ:

Շարքի առաջին՝ «Լույսը» բանաստեղծության մեջ Դավթյանը գովերգում է մարդկային բանականությունն ու սերը՝ այն վերագրելով լոկ մարդ արարածին, մասնավորապես՝ երիտասարդներին, քանզի Աստված էլ ծեր է և չի հասկանում դրա իմաստը:

Ուստի՝ լույսը սերն է ու միտքը, որը մարդուն դրդում է հրաժարվել նույնիսկ անմիտ անմահությունից և ճաշակել սուրբ լույսը.

-Թող ադպես լինի, հո՛ժար եմ, տե՛ր,
Իմ ինչի՞ն է պետք անմահությունը անմիտ ու կույր,
Եթե ես կյանքում չէի տեսնելու այս լույսը սուրբ[2]…

Լույսի անձնուրաց պաշտամունքը զորեղանում և խտացվում է գրքի վերնագրի մեջ՝ «Լույս առավոտի» (1984) և նման այլ շարքերի հետ համատեղ:

Ինչպես Գասպարյանն է նկատում. «Լույսի այլաձևությունների միջոցով նա ուզում է բուժել այն հիվանդությունը, որը կոչվում է հոգու մութ: Ցերեկային մտահոգությունները գիշերով դառնում են տագնապներ, դառնում են ցավ ու կսկիծ»[3]:

Լույսը դառնում է կյանքի աղբյուր, բանաստեղծի ողջ կյանքի ուղենիշն ու առաջնորդն է լինում:

---

[1] ***Թամրազյան Հր.***, *Գրական դիմանկարներ, Հայաստան, Ե., 1975թ., էջ 244:*

[2] ***Դավթյան Վ., Անքնություն, Ե.***, *Սովետական գրող, 1987, էջ 145:*

[3] ***Գասպարյան Դ.,*** *Վահագն Դավթյան. կյանքը և ստեղծագործությունը, Ե., 2007թ., էջ 135:*

Հեղինակը բազմիցս շեշտում է լույսի դերը, և նրա խոհերն ու ապրումները, մտորումներն ու զգացումները արտացոլում են ողջ մարդկության էությունը.

Գիտե՛ս դու,
Գիշերն իմ այս տարիքում ցավ է ու կասկած,
Եկ, արտույտի պես ինձ վրա թևիր,
Դիր ափերիս մեջ հավատն իբրև հաց,
Ու գնանք նորից
Արևի,
Գինու,
Հացի հետևից[1]…

Շարքի երկրորդ բանաստեղծությունը, որ վերնագրված է «Չարը», իր մեջ խտացնում է նախանձ մարդկանց ով լինելու գաղափարը, տվյալ դեպքում՝ անգամ արյունակցի հանդեպ նախանձ ունենալու մասին, որը չարի ու չարության սերմն է.

-Նախանձեց Կայենն իր Աբել եղբորն ու դաշտ տարավ,
Եվ այնտեղ՝ դաշտում, սրած դանակը սիրտը խրեց…[2]

Կրկին խոսվում է լույսի մասին, այս անգամ ներկայացվում է լույսը՝ ի հակադրություն նախանձի կամ նենգության.

Եվ ի սկզբանե աշխարհի վրա եղավ այսպես.
Երկու սիրտ՝
Մեկը լեցուն խավարի մաղձ-մրուրով,
Մյուսը՝
Լույսով արեգական…[3]

Այս բանաստեղծությամբ Դավթյանը վերհանում է շատ կարևոր մի գաղափար, համաձայն որի՝ չարությունն ու նախանձն են ընկած մարդկային յուրաքանչյուր վատ արարքի կամ հանցագործության հիմքում: Ի վերջո, նախանձն ապականում է ամեն բարիք, ինչը որ կա երկրի վրա.

Ու երբ մանավանդ
Բանաստեղծի է հանդիպում հանկարծ կամ մարգարեի,
Դանակը նրանց սիրտն է խրում…[4]

Հաջորդ և ամենահետաքրքիր սիմվոլիկ պատկերը տեսնում ենք «Վազը» բանաստեղծության մեջ: Ներկայացվում է, թե ինչպես է Նոյի տապանը կանգ առնում Արարատի սուրբ կատարին, ապա Նոյն իր զավակներով հանգիստ է առնում Արարատյան դաշտում: Այս գործի մեջ միաժամանակ երկու կարևոր կետ առանձնացնենք.

- վազը՝ որպես լինելիության, ազգի գոյի, հայի ամրության խորհրդանիշ,
- Նոյը՝ որպես նախահայր, բայց ոչ որպես Աստված:

Նոյի տնկած վազը խորհրդանիշն է ասքանազյան ազգի, քանզի Աստծու ուղարկած վայրի ցեղերն ու հողմերը անկարող եղան սմբակահարելու և հողմահարելու այդ բարակ վազը, ինչպես հայի բազկի ուժն զգացած որևէ քոչվոր ցեղ, որովհետև.

-Նահապետը վազի արմատը խո՛րն էր խրել[5]…

---

[1] https://granish.org/vahagn-davtyan-poems/, 25.04.2022:
[2] ***Դավթյան Վ.,*** *Անքնություն, Ե., Սովետական գրող, 1987, էջ 147:*
[3] *Նույն տեղում:*
[4] ***Դավթյան Վ.,*** *Անքնություն, Ե., Սովետական գրող, 1987, էջ 148:*
[5] *Նույն տեղում:*

Վազն այստեղ նաև անցյալի, մեր անհերքելի հերոսական էջերի և պատմության արտահայտությունն է, ինչո՞ւ, որովհետև հայի անցյալն անջնջելի է բոլոր դեպքերում:

Բայց որքան էլ մեծ լինի Նոյի դերակատարումը հայ ազգի լինելիության հարցում, այնուամենայնիվ, Նոյը երբեք չի կարող հավասարվել Աստծուն, որքան էլ փորձությունները հեշտությամբ հաղթահարելի լինեն…

«Հուշը» բանաստեղծության մեջ հեղինակը խտացնում է մարդու կյանքի արդեն իսկ անցած ուղին, առանց որի ապագայի ճանապարհը ծանր է ու հոգնեցնող: Դավթյանը մարդկային կյանքի շենքի բազիսը լցնում է անցյալի հուշերով և.

-Քարացան նրանք, ովքեր չուզեցին նայել հետև,
Հիշել, թե ինչ են թողել այդ ահեղ բոցերի մեջ[1]…

«Բողոքը»-ի վերնագիրն արտացոլում է Հակոբի տրամադրություններն ու լիցքերը՝ կյանքի անարդար ու խաբկանքով լի հորձանուտում.

-Ո՞վ կյանք, ինչու՞ ես այսպես նենգորեն խաբում դու մեզ[2]…

Այս բանաստեղծության մեջ Դավթյանը լույսը ներկայացնում է որպես գաղտնիքների բացահայտման, պարզության, ճշտության, անշեղության խորհրդանիշ.

Ու երբ լույս եղավ, առավոտ եղավ ննջարանում,
Հակոբը տեսավ, որ իր անկողնում Ռաքելը չէր…[3]

Ապա բողոք ուղղելով կյանքի դեմ՝ նկարագրության մեջ որպես պատճառ սիմվոլիկ տարբերակով նաև բախտի անունն է շոշափում.

…Եվ նա կույր էր, բախտի պես կույր[4]…

Եվ, իհարկե, աստվածաշնչյան երևույթների էությունը փոփոխության չի ենթարկում: Այս դեպքում՝ կնոջ համեմատությունը խարդախոտ օձի հետ.

Ասես սև մի օձ, Հակոբի սիրտը հանկարծ խայթեց[5]…

Շարքը եզրափակում են «Դավը» և «Երգը» բանաստեղծությունները, որոնցից առաջինի ենթատեքստում կինն է, ով պատճառ է հանդիսացել նաև մարդու՝ դրախտից վտարվելուն, իսկ երկրորդը բարու պատկերումն է, պարզության ու մաքրության աղբյուրներից մեկի՝ արվեստի, երգի միջոցով մարդկային հոգու բուժման կարելիությունը չար ոգիներից.

Եվ այդ օրվանից
Միշտ, երբ լռում են երգերը սուրբ,
Չարը մտնում է մարդկանց հոգու մեջ ու չարչարում,
Եվ ինքնակալ է չարը դառնում[6]…

Անդրադառնանք շարքի բանաստեղծություններում թաքնված հեղինակի հայացքներին, ինչպե՞ս է պատկերավորում Դավթյանն աստվածաշնչյան ամենատարածված տեսարանները, ինչպիսի՞ արտացոլում ունեն աստվածաշնչյան մոտիվները Դավթյանի բանաստեղծություններում: Շարքը բացող բանաստեղծության մեջ Դավթյանը նյութ է դարձնում Ադամի ու Եվայի դրախտից վտարման պատճառը, Աստվածաշնչում՝ «Մարդու անհնազանդությունը» անունը կրող հատվածը: Երկրի վրա Աստծու ստեղծած բոլոր գազաններից ամենախորամանկ արարածի՝ օձի միջնորդությամբ Եվան ճաշակեց ու իր կողակցին ևս առաջարկեց արգելված պտուղը: Եվ որովհետև սա Աստծուն

[1] ***Դավթյան Վ.***, *Անքնություն, Ե., Սովետական գրող, 1987, էջ 152:*
[2] *Նույն տեղում, էջ 154:*
[3] *Նույն տեղում:*
[4] *Նույն տեղում:*
[5] *Նույն տեղում:*
[6] *Նույն տեղում, էջ 158:*

հավասարվելու քայլին համազոր էր, Աստված պատժում է և՛ օձին, և՛ Ադամին, և՛ Եվային: Այս հատվածի առանձնահատկություններից պետք է համարել.

✔ Եվայի ու Ադամի անկաշկանդ ու ազատ խոսելաձևը Աստծո հետ.

-Ադամն իրավ է, մի հուզվիր, Տե՛ր,
Դու ծերացել ես և այդ բաները չես հասկանա[1]…

✔ սիրո տեսարանների բազմագույն նկարագրությունը, Ադամն ու Եվան անխախտ սիրով կապվածությունը գերադասում են դրախտում ունեցած կյանքից.

…Իմ ինչի՞ն է պետք անմահությունը անմիտ ու կույր,
Եթե ես կյանքում չէի տեսնելու այս լույսը սուրբ և այս ծաղիկը, և մանավանդ
Այն սուրբ թրթիռը, որով դողում է կուրծքն այս կնոջ[2]…

✔ երկրային վայելքներինն ու մարդու պահանջմունքներին առաջնայինի դիրքերից նայելը, և այս ամենի ֆոնին կնոջ կարևորության շեշտումը: Սրա լավագույն օրինակը կնոջ անվան բացատրության ներքին իմաստի ըմբռնումն է.

-Եվ Ադամն իսկույն կնոջ անունը դրեց Եվա,
Որ իր բարբառով ասել է՝ Կյանք…

Աստվածաշնչի Ծննդոց գրքում ասվում է. «Եւ Ադամն իր կնոջ անունը դրեց Կեանք, որովհետեւ նա է բոլոր մարդկանց նախամայրը»[3]:

Չնայած այս ամենին, հեղինակը տրամաբանական հանգուցալուծում է տալիս բանաստեղծությանը: Աստծո կամքին հակառակ ուղենշված ցանկացած քայլ պսակվում է անհաջողությամբ:

Լույսը ճաշակած Ադամն ու Եվան լույսի արահետով կանգնում են նեղության նախաշեմին.

-Ողջու՛յն քեզ, արև, ողջու՛յն քեզ, լույս,
Ողջու՛յն քեզ, ողջու՛յն, սուրբ տառապանք[4]…

Իրավ, ինչպես և Աստվածաշնչում ենք տեսնում, Աստված մարդուն անասելի դժվարությունների առաջ է կանգնեցնում՝ «որովհետեւ հող էիր եւ հող էլ կը դառնաս», քանզի մարդու մտքով արդեն իսկ անցել էր Աստծուն հավասարվելը:

Սա ևս ապացույցն է այն բանի, որ մարդուն առաջնորդում է Աստված, ուստի մարդը չի կարող հավասարվել Աստծուն, ավելին՝ լույսի ճանապարհն անցնում է Աստծու հանդեպ հավատի միջով:

Դավթյանի փոխանցած գաղափարը չափազանց ընդգրկուն է: Նա խոսում է բոլորի, բայց հատկապես իր և իր ժամանակակիցների մասին ու նրանց անունից, ինչպես իրավացիորեն նկատում է Հր. Թամրազյանը. «Ամենից առաջ նա հյուսում է իր սերնդի լեգենդը, սերունդ, որի ոտնահետքերը մնացել են աշխարհի կեսի վրա»[5], և որի շարունակողը ինքն է իր խոհերով ու առաջ քաշած գաղափարներով:

Ստեղծագործելով 20-րդ դարի՝ ամենաբարդ ու խառնակ օրերում՝ Դավթյանը փորձեց հին, բոլոր ժամանակների ու սերունդների կողմից «սրբագործված» թեմաներին անդրադառնալ նորովի:

Շարքի բանաստեղծությունների սյուժեներն ու վերնագրերը հենց այնպես չեն ընտրվել: Սրանք այն սյուժեներն են, որոնք առանցքային են նաև Աստվածաշնչում, այն հավերժական թեմաները, որոնց մասին խոսելը տևական բնույթ է կրելու: Մարդկության հետ զուգահեռ զարգացող բնական

---

[1] ***Դավթյան Վ.***, *Անքնություն, Ե., Սովետական գրող, 1987, էջ 146:*
[2] *Նույն տեղում:*
[3] *https://www.qahana.am/bible/OldTestament/Genesis.html#3-15, 15.04.2022:*
[4] ***Դավթյան Վ.,*** *Անքնություն, Ե., Սովետական գրող, 1987, էջ 146:*
[5] ***Թամրազյան Հր.***, *Երկեր Գ, Ե., Նաիրի, 2010, էջ 753:*

երևույթները՝ բողոքը, չարությունը, նախանձը, լույսին մշտապես ձգտելը, մինչև այսօր էլ շարունակվում են և հարատևելու են:

Գրականություն

1. Գասպարյան Դ., Վահագն Դավթյան. Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 2007, 370 էջ:
2. Դավթյան Վ., Անքնություն, Ե., Սովետական գրող, 1987, 349 էջ:
3. Թամրազյան Հ., Գրական դիմանկարներ, Հայաստան,
a. Ե., 1975թ., 427 էջ:
4. Թամրազյան Հր., Երկեր Գ, Ե., 2010, 991 էջ:
5. https://slovar.cc/rus/efremova-tolk/313040.html, 30.04.2022:
6. https://www.qahana.am/bible/OldTestament/Genesis.html#3-15, 15.04.2022:
7. https://granish.org/vahagn-davtyan-poems/ , 25.04.2022:

ՀՏԴ 070:82-83

Մելինե Սարգսյան
ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի
Գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի
ասպիրանտ

Գիտական ղեկվար՝
բ.գ.թ., դոցենտ Զ. Սառաջյան

"REUTERS" ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Բանալի բառեր: *Արցախ, 44-օրյա պատերազմ, Ռոյթերս, Արցախի Հանրապետություն, միջազգային լրատվական, Արցախի մասին:*

Սույն հոդվածում ներկայացված է «Ռոյթերս» միջազգային լրատվականի անդրադարձը Արցախի 44-օրյա պատերազմին: Նյութն արդիական է, քանի որ Արցախի խնդիրը մնում է չլուծված, իսկ միջազգային լրահոսում Արցախի հեղինակության մասին ուսումնասիրությունները կօգնեն հասկանալու նրա դերը աշխարհում և կաջակցեն հետագա քայլերին:

Meline Sargsyan

THE REFLECTION OF INTERNATIONAL NEWS AGENCY "REUTERS" ON THE ARTSAKH 44-DAY WAR

Keywords: *Artsakh, 44-day war, Reuters, Republic of Artsakh, international news agency, about Artsakh*

This article presents The reflection of international news agency "Reuters" on the Artsakh 44-day war. This topic is relevant as the conflict of Artsakh remains unsolved and it is crucial to study Artsakh's authority in the international news, so we can understand its role in the world and it will support the further steps.

Мелине Саргсян

ОТРАЖЕНИЕ 44 -ДНЕВНОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЫ НА МЕЖДУНАРОДНОМ НОВОСТНОМ АГЕНТСТВЕ РЕЙТЕР

Ключевые слова: *Арцах, 44-дневная война, Рейтер, Республика Арцах, международное информационное агентство, про Арцах*

В статье рассматривается отражение 44 -дневной Арцахской войны в новостном агентстве «Рейтер». Тема актуальна, так как Арцахский конфликт остаётся нерешённым и очень важно исследовать авторитет Арцаха на международной информационной платформе, где мы можем понять роль Арцаха в мире и этим обеспечить дальнейшие шаги.

Մայրցամաքները, երկրներն ու քաղաքներն ունեն այժմյան տեսքը նաև շնորհիվ մեդիայի: Մարդկության պատմության ընթացքում ինֆորմացիայի փոխանակումը եղել և շարունակում է մնալ ամենապահանջված գործառույթներից մեկը:

Հին Հռոմի gazetta-ներից մինչև The New York Times-ի փայլուն հոդվածներն ընկած ժամանակահատվածում կատարված իրադարձությունների լուսաբանումը որոշիչ եղավ մի շարք իրադարձությունների համար:

Մեդիայի ամենակարևոր հատկանիշը օբյեկտիվությունն է. սակայն միշտ չէ, որ այդ

օբյեկտիվությունը պահպանվում է լրատվամիջոցի կողմից, որը կարող է ունենալ իր օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները՝ լրատվամիջոցի որդեգրած սկզբունքներից, ֆինանսավորման աղբյուրներից սկսած մինչև երկրների վարած քաղաքականությունը: Մեծ է միջազգային լրատվական ընկերությունների դերն ու նշանակությունը հատկապես արտակարգ իրավիճակներում, աշխարհի բոլոր ծայրերում ինֆորմացիայի սպառումը նման դեպքերում տեղի է ունենում հենց միջազգային լրատվականներից:

Արցախի Հանրապետությունն արդեն երեք տասնամյակից ավել է, հանդիսանում է կոնֆլիկտային գոտի: Այս չլուծված կոնֆլիկտի պատճառով պարբերաբար տեղի են ունենում հայ-ադրբեջանական պատերազմներ, սահմանային զինված բախումներ, որից վերջինն էլ Արցախի 44-օրյա պատերազմն էր: 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը լայնամասշտաբ հարձակում սկսեց Արցախի դեմ: Պատերազմը տևեց 44 օր և խոսույթի մեջ մտավ *44-օրյա պատերազմ* անունով: Զինված գործողություններին նախորդել, զուգորդել և հաջորդում է Արցախի և հայության դեմ ծավալվող տեղեկատվական պատերազմը: Տեղեկատվական պատերազմում Ադրբեջանը լայնորեն օգտագործում է նաև միջազգային հարթակները, լրատվամիջոցները՝ հակահայկական տեղեկատվական պայքարում ներդնելով հսկայական միջոցներ: Այս համատեքստում կարևորվում է միջազգային մամուլում Արցախի ներկայացվածությունն ու դրա ուսումնասիրությունը, ինչին էլ ձեռնամուխ ենք եղել մեր ուսումնասիրությունում՝ կոնկրետ «Ռոյթերս» միջազգային լրատվական գործակալության օրինակով:

Այսպիսով, քանի դեռ Արցախը գտնվում է կոնֆլիկտային իրավիճակում, պետք է հասկանալ, թե ի՞նչ պատկերացում ունի աշխարհը Արցախի մասին: Ուսումնասիրության օբյեկտ ենք դարձրել «Ռոյթերս»-ի անդրադարձները հատկապես Արցախյան պատերազմին:

«Ռոյթերս»-ը միջազգային լրատվական գործակալություն է, որի գործունեությունն արդեն երրորդ դարն է, ծավալվում է՝ շարունակ զարգանալով: Գործակալությունն ունի կարևոր լուրերի՝ առաջինը հաղորդելու հեղինակություն, օրինակ՝ «Ռոյթերս»-ն էր հաղորդել ԱՄՆ-ի 16-րդ նախագահ Աբրահամ Լինքոլնի սպանության լուրը[1]:

Այժմ գործակալությունը գործում է աշխարհի շուրջ 94 երկրներում, աշխարհի գրեթե բոլոր խոշոր լրատվամիջոցները հանդիսանում են նրա բաժանորդը:

2020 թվականի սեպտեմբերի 28-ին «Ռոյթերս»-ը հրապարակում է հոդված հետևյալ վերնագրով՝ “Explainer: Who's fighting in Nagorno-Karabakh, and why does it matter?” (Ովքե՞ր են կռվում Ղարաբաղում և ինչո՞վ է այն կարևոր)[2]: Հոդվածի մեջ շոշափվում էին մի շարք հարցեր, օրինակ՝ ի՞նչ և որտե՞ղ է Ղարաբաղը, ինչո՞ւ պատերազմն սկսվեց հենց հիմա, որո՞նք են ռիսկերը և այլն: Հոդվածի հեղինակը՝ Մարկ Տրեվելյանը, ներկայացրել էր պատերազմական իրավիճակը՝ շեշտելով նաև 90-ականների և 2016 թվականի դեպքերը, նշելով զոհերի ընդհանուր թիվ երկու կողմերից: Ստույգ նշված չէր, թե որ կողմն է հարձակման հեղինակը, միայն նշված էր, որ օգտվել են ներկա իրավիճակներից՝ մասնավորապես՝ Քովիդի վիրուսից, և շեշտված էր նաև Թուրքիայի ու Ադրբեջանի միջև օգոստոսին տեղի ունեցած զորավարժության փաստը:

Հեղինակը խոսել էր նաև Crisis Croup-ի անալիտիկ Օլեսյա Վարդանյանի հետ՝ Հարավկովկասյան շրջանում տեղի ունեցող դեպքերի մասին:

Իսկ որպես խնդրի հնարավոր լուծման հեղինակ՝ անուղղակի կերպով նշված էր Ռուսաստանը:

Հոկտեմբերի 23-ին Reauters Graphics-ի[3] գրաֆիկական հոդվածը, քարտեզի վրա պատկերելով, բացատրում էր կոնֆլիկտի պատմությունը՝ սկսած 19-րդ դարից:

---

[1] https://en.wikipedia.org/wiki/Reuters

[2] https://www.reuters.com/article/us-armenia-azerbaijan-conflict-explainer-idUSKBN26J2I6

[3] https://graphics.reuters.com/ARMENIA-AZERBAIJAN/jbyprxxqbpe /

Հոդվածում անդրադարձել էին 90-ականների պատերազմին՝ նշելով, որ ըստ Ադրբեջանի՝ մոտ մեկ միլիոն մարդ ստիպված տարհանվել է, սակայն 2019 թվականի վերջին Permanent Mission of Azerbaijan-ը նշել է, որ տարհանված մարդկանց թիվը եղել է ընդամենը 651,458[1]:

Հոդվածում կային նաև լուսանկարներ Ստեփանակերտի, ինչպես նաև Գանձակի ավերածություններից: «Ռոյթերս»-ը նշում է, որ հայկական կողմը հերքել է Գանձակի ավերածություններին իր մասնակցությունը:

Բավականին մեծ պարբերությամբ ներկայացվում էր Թուրքիայի և Ադրբեջանի բարեկամական հարաբերությունների և Թուրքիայի ու Հայաստանի լարված հարաբերությունների մասին նույնպես, մասնավորապես՝ նշված էր Օսմանյան կայսրության կողմից 1,5 միլիոն հայերի սպանության մասին:

Այնուհետև ներկայացվում է Ռուսաստանը՝ որպես խաղաղության ձգտող: Նշված էր, որ Ռուսաստանը երկու կողմերին էլ զենք է վաճառում, սակայն Հայաստանի հետ ավելի սերտ կապեր ունի: Ադրբեջանի հարաբերությունները թե՛ Թուրքիայի, թե՛ Ռուսաստանի հետ նկարագրելիս շեշտվում էր գազի և նավթի մասին, ինչն ընթերցողի մոտ առաջացնում է ենթադրություն՝ նրանց հարաբերությունների հիմքի մասին:

Նոյեմբերի 9-ին Նվարդ Հովհաննիսյանը և Նայիլիա Բագիրովան ներկայացրին հոդված «Հայաստանը, Ադրբեջանը և Ռուսատաստանը ստորագրել են համաձայնագիր Ղարաբաղում կոնֆլիկտը դադարեցնելու համար»[2]: Հոդվածում նշված էր ռուսական խաղաղապահների, Փաշինյանի ու Ալիևի հայտարարությունների, նաև Արայիկ Հարությունյանի ֆեյսբուքյան գրառման մասին, ըստ որի՝ նա համաձայն է «ավարտել պատերազմը այնքան շուտ, ինչքան հնարավոր է»:

Հոդվածում նշվում է նաև Կառավարական շենք ամբոխի ներխուժման մասին, սակայն ըստ հոդվածի՝ «վարչապետի գտնվելու վայրը պարզ չէր»:

2020 թվականի նոյեմբերի 10-ին «Ռոյթերս»-ի անձնակազմի կողմից հրապարակվում է հաջորդ հոդվածը՝ հետևյալ վերնագրով՝ “Factbox: Nagorno-Karabakh: old tensions behind conflict”[3] (Փաստաղբյուր . Ղարաբաղ. կոնֆլիկտի հիմքում ընկած հին լարվածությունները): Հոդվածում ներկայացված են հայ-ռուս-ադրբեջանական համաձայնագրի պայմանները՝ ռուսական խաղաղապահ ուժերի ներկայությունը, Ադրբեջանի կողմից գրավված տարածքների պահպանումը, ինչպես նաև Շուշիի՝ Ադրբեջանի մաս անցնելը, հետաքրքիր է նշել, որ այս մասին խոսելիս «Ռոյթերս»-ը օգտագործել է քաղաքի և՛ ադրբեջանական և՛ հայկական անունները՝ “Under the deal, Azerbaijan will keep territorial gains made in the fighting, including the enclave’s second city of Shusha, which Armenians call Shushi.”:

Հինգ կետերով կարճ ներկայացված են տեղեկություններ Արցախի, մասնավորապես նրա՝ անցյալում Սովետական Ադրբեջանի կազմում գտնվելու, սակայն հայերով բնակեցված լինելու, հրադադարը պահպանելու Ռուսաստանի ու Ամերիկայի փորձերի ձախողման մասին: Այստեղ նույնպես շեշտվում են *Հայաստան-Ռուսաստան, Ադրբեջան-Թուրքիա* կապերը:

Վերջին կետը նոյեմբերի 10-ին Նիկոլ Փաշինյանի խոսքից հատված էր, որտեղ ասում էր՝ համաձայնագրի որոշումը ինքը կայացրել է սեփական բանակի ճնշման տակ[4]:

«Ռոյթերս»-ը հետևում է իրադարձությունների զարգացումներին նաև պատերազմից հետո՝ պահպանելով օբյեկտիվությունը: Արդեն 2021 թվականի փետրվարի 2-ին հրապարակել է հոդված[5] Սրցախի Թաղավարդ գյուղի մասին, որը պատերազմից հետո երկու մասի է բաժանվել: Հոդվածը

[1] https://graphics.reuters.com/ARMENIA-AZERBAIJAN/jbyprxxqbpe
[2] https://www.reuters.com/article/us-armenia-azerbaijan-idUSKBN27P1FL
[3] https://www.reuters.com/article/armenia-azerbaijan-factbox-int-idUSKBN27Q1E2
[4] https://www.reuters.com/article/armenia-azerbaijan-factbox-int-idUSKBN27Q1E2/
[5] https://www.reuters.com/article/us-armenia-azerbaijan-nagorno-karabakh-v-idUSKBN2A21P6

պատրաստել են Արտյոմ Միկրյուկովը և Նվարդ Հովհաննիսյանը:

Հոդվածի հերոսի՝ Լենսեր Գաբրիելյանի օրինակով ներկայացված է գյուղի և գյուղի բնակչության վիճակը: Հոդվածը պատմում է, որ ծնված օրվանից ի վեր Թաղավարդ գյուղում ապրող Լենսերի տունը մնացել է մի մասում՝ հայկական մասում, իսկ նրա ֆերման, տրակտորը, գործիքները մնացել են մյուս՝ ադրբեջանական մասում:

Հոդվածում նաև նշված է, որ գյուղի բնակիչները կորցրել են ջրի աղբյուրը, շշերով ջուր են կրում այլ տեղից, որը 30 րոպեի ճանապարհ է: Հոդվածում երկու անգամ շեշտվում է, որ մարդիկ ապրում են վախի մեջ և հանգիստ չունեն՝ գտնվելով այդքան մոտ ադրբեջանական սահմանին:

Մեր ուսումնասիրությունների ժամանակահատվածում Արցախի մասին «Ռոյթերս»-ում հրապարակված վերջին հոդվածը 2022 թվականի մարտի 27-ին էր՝ "Russia and Azerbaijan trade barbs over Nagorno-Karabakh" (Ռուսաստանի ու Ադրբեջանի վիճաբանությունը Ղարաբաղի վերաբերյալ)[1]: Հոդվածում նշված է ադրբեջանական ուժերի առաջխաղացման մասին, որն առաջացրել է լարվածություն ռուսական կողմում:

Հոդվածում նշվում է Ռուսաստանի արձագանքը դեպքերին, մասնավորապես՝ Ռուսաստանը նշել էր, որ Ադրբեջանը խախտել է համաձայնագիրը և մտել Փառուխ գյուղը, որը հսկում են ռուսները, նաև ավելացրել, որ Ադրբեջանը զորքերը հետ է քաշել մինչև կիրակի:

Հոդվածում նաև հակառակ կողմի՝ Ադրբեջանի հաղորդագրությունը կար, որում ժխտում էին ռուսական կողմի պնդումը՝ ավելացնելով, որ Փառուխը Ադրբեջանի մաս է կազմում, և որ ոչ մի հարձակում չի եղել: Ադրբեջանի պաշտպանության նախարարը նաև այլ հաղորդագրությունում հայտնել էր, որ Ադրբեջանի զինվորները հետ չեն քաշվել:

Այսպիսով՝ միջազգային լրատվական ընկերությունների որակը չափվում է իրենց օբյեկտիվությամբ, քանի որ մարդիկ, խմբեր, պետություններ տեղեկություն են ստանում և կարծիք կազմում այս կամ այն դեպքի մասին հենց միջազգային լրատվականներից:

Մեր ուսումնասիրած միջազգային լրատվականի՝ «Ռոյթերս»-ի գործունեությունը համարվում է օբյեկտիվ. ուսումնասիրելով Արցախի 44-օրյա պատերազմի անդրադարձը «Ռոյթերս»-ում մենք նույնպես համոզվեցինք դրանում:

Նախ, նյութերը հիմնականում պատրաստում էին լրագրողներ Կովկասից՝ հայ, ադրբեջանցի, ռուս, որոնք ծանոթ են խնդրին և կարող են տրամադրել տարբեր տեսակետներ խնդրի ծագման և զարգացման մասին:

Գրեթե բոլոր հոդվածներում գրված է և՛ հայկական կողմի, և՛ ադրբեջանական կողմի կորուստների մասին հավասար, նույնիսկ նկարների թիվն է հավասար բաշխված:

«Ռոյթերս»-ի՝ խնդրին վերաբերող հոդվածներում կա խորը հետազոտություն Հայաստանի, Ռուսաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի հարաբերությունների մասին: Բավականին հաճախ շեշտվում է նավթի, գազի մասին:

Խոսելով Շուշիի մասին՝ հոդվածում շեշտվում են անվան հայկական և ադրբեջանական տարբերակները:

Որպես ամփոփում կարելի է նշել, որ փորձելով հավասար փաստեր ներկայացնել ու անկողմնակալություն դրսևորել, միևնույն է, հետազոտության և փաստերի ճշգրտության շնորհիվ «Ռոյթերս»-ի հոդվածներում նկատվում են Ադրբեջանի սադրանքները եթե ոչ պատերազմում, ապա պատերազմից հետո: Գործակալությունը շարունակում է հետևել դեպքերի զարգացմանը և արագ արձագանքել:

ՀՏԴ 82-3

[1] https://www.reuters.com/world/azerbaijan-denies-troops-pullout-peacekeepers-zone-nagorno-karabakh-2022-03-27/

Ռուզաննա Բեգլարյան
ԱրՊՀ, «Հայոց լեզու և գրականություն» 3-րդ կուրսի ուսանողուհի

Գիտական ղեկավար՝
Բ.գ.թ., ավագ դասախոս Դավթյան Ն. Ռ.

ԿՈՐՈՒՍՅԱԼ ԳՅՈՒՂԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՀԱԿՈԲ ՄՆՁՈՒՐՈՒ ԱՐՁԱԿՈՒՄ

Բանալի բառեր- *պոլսահայ արձակ, գյուղագրություն, կորուստ, կարոտ, ահագնացող ցավ, երազային իրապատկերներ, գյուղական բարքեր:*

Արևմտահայ գյուղագրության շարունակություն դարձած պոլսահայ արձակի ծիրում անգերազանցելի, առաջնորդի դերակատարություն ստանձնեց Հ. Մնձուրին: Գրական ասպարեզ իջնելով Մեծ եղեռնից հետո՝ Մնձուրին կարոտ ունեցողի նվիրումով վրձնեց անցյալի գյուղն ու նրա՝ աշխատանքի հանդեպ բացառիկ նվիրում ունեցող բնակչի կյանքը: Իր իսկ բնութագրական արտահայտությամբ՝ տվեց «անկե առաջ»-ի՝ նախաեղեռնյան գյուղի պատմությունը: Գրողին խոսեցնողը կորուսյալ բնաշխարհի կարոտի մորմոքն էր:

Մեր ուսումնասիրության մեջ փորձել ենք տալ հայրենի բնաշխարհի՝ մնձուրիական պատկերումները: Ուսումնասիրության ժամանակ գերազանցապես կիրառվել են վերլուծական, անհրաժեշտության դեպքում նաև կենսագրական մեթոդները:

Рузанна Бегларян

ОБРАЗЫ ПОТЕРЯННОЙ СЕЛЬСКОЙ ЖИЗНИ В ПРОЗЕ АКОБА МНДЗУРИ

Ключевые слова: *стамбульская армянская проза, деревенская проза, утрата, ностальгия, возрастающая боль, желанные образы, сельские обычаи.*

Мндзури взял на себя роль предводителя стамбульско-армянской прозы, ставшей продолжением западно-армянской деревенской прозы. Войдя в литературное поприще после Геноцида армян, Мндзури с ностальгической преданностью изобразил деревню прошлого и уникальное отношение к труду его жителей. Автор описывает историю деревни, согласно его высказыванию, «անկէ առաջ» (“до”) Геноцида. Автора заставляет говорить щемящая тоска по потерянному миру.

В нашем исследовании мы попытались описать мндзуринские картины родного края. В статье применялись в основном аналитические, а при необходимости, также биографические методы исследования.

Rouzanna Beglaryan

IMAGES OF THE LOST RURAL WORLD BY HAKOB MNDZURI

Key words: *Istanbul Armenian prose, village prose, loss, longing, growth pain, dream images, rural customs.*

Mndzuri took on the role of leader of the Istanbul-Armenian prose, which became the continuation of the Armenian-Armenian agriculture. Entering the literary arena after the Great Genocide, Mnzuri painted the

village of the past and the life of the inhabitant with exceptional dedication to his work, with the devotion of someone who misses him. With his descriptive expression, he gave the history of the pre-genocide village "before". The writer spoke of longing for the lost nature. In our study, we tried to give Mzuri images of lost nature. The study mainly used analytical and, if necessary, biographical methods.

Առաջին աշխարհամարտը, ապա և Մեծ եղեռնը ընդհատեցին անցյալ դարասկզբին Վարուժանով և Սիամանթոյով սկիզբ առած գրական շարժումների ընթացքները: Արևմտահայ գրականությունը շարունակվեց օտար ափերում, ձևավորվեց հայ սփյուռքի գրականությունը. Պոլիսը դադարեց հայ արևմտյան թևի գրամշակութային օջախ լինելուց: Շատերը հեռացան Պոլսից՝ պայմանավորված նոր՝ քեմալական խստություններով, իսկ Պոլսում մնացած որոշ գրողներ բնականորեն պետք է լռեին: Եվ միայն անցյալ դարի 30-ականներից հետո մնացորդաց այս սերունդը որոշ ազատություններ է ստանում: Սերնդի գլուխ է անցնում Հակոբ Մնձուրին՝ արևմտահայ գյուղագրության, կարելի է ասել, վերջին նշանավոր ներկայացուցիչը՝ պոլսահայ արձակի վարպետը: Իր անգնահատելի վաստակով՝ «Կապույտ լույս» (1958թ.), «Արմտան» (1966թ.), ապա երրորդ՝ «Կռունկ, ուստի՞ կուգաս» (1974թ.) պատմվածքների ժողովածուներով Մնձուրին փորձեց արթուն պահել Արմտանի մասին հիշողությունները, կորսված գյուղի բարքերը, կենցաղը, մարդկանց: Կրտսեր գրչընկերոջը՝ Մ. Մարկոսյանին գրած նամակներից մեկում Մնձուրին խոստովանում է. «Հիմա յիշողութիւնս ունիմ միայն: Իմ ամէնս հոն է»: Նույն նամակում արձակագիրը շարունակելով միտքը նկատում է. «Գրականութիւնը ստեղծագործութիւն մըն է ամէնէն առաջ, կամ գեղեցիկ սուտեր յղանալ ու պատմել մըն է: Կը բաւէ որ իրաւէն շինուին ու ճշմարտանման ըլլան»: Պատասխան նամակում կարևորելով ուսուցչապետի՝ «բուն ակին» վերադառնալու խրատները՝ Մ. Մարկոսյանը մեղմ ժպիտով գրում է. «Վարպետ, օր մը Տօլապտէրէ եկուր, թանին մէջ հաց բրդենք, միասին դգալ դգալ ուտենք…: Ի՞նչ կը՝ըսես…

Կուգա՞ս:

Հէ Վարպետ, կուգա՞ս»[1]:

Այսպիսին էր Մնձուրին՝ պարզ, շիտակ, նա երբեք չշարժեց գրողի իր երևակայությունը՝ կերպարներ, պատմություններ, կոնֆլիկտներ ստեղծելու նպատակով, այլ վերարտադրեց ի՛ր գյուղի կյանքը, փնջեց գյուղի գույները, ձայները, խճանկարի պես հավաքեց հոգում, ապա հանձնեց թղթին: Մնձուրու նպատակը փրկելն էր, փրկել այն միջավայրը, որտեղ ապրել է, անց է կացրել իր մանկության լուսավոր տարիները, փրկել «անկե առաջ»՝ Եղեռնից առաջ, իր գյուղի և «անոր» իրական տերերի կյանքը, փյունիկել գոնե գրականության մեջ: Ավելի ուշ խոստովանել է «…իմ գործս գյուղը պատմելը ըլլալու է, կամ առավելապես զայն պետք է տամ: Հավանաբար պիտի չսահմանափակվեի, եթե գյուղին գոյությունը շարունակվեր: Անոր անհետացումն էլ պատճառներեն մեկն է…»[2]: Այսօր Մնձուրու պատկերած գյուղաշխարհը չկա, բայց և նրա շնորհիվ հավերժորեն կենդանի են Արմտանը և հարակից գյուղերը:

Մնձուրին հայ պատմվածքի մեծագույն վարպետներից էր, պոլսահայ գրական կյանքի կազմակերպիչը: Նա արդեն կարոտի վերածված գյուղի ու նրա հիշողության արթուն հանդապահն էր, «գյուղական կյանքի հանրագիտարան»-ը: Եթե հաշվելու լինենք Մնձուրու թվարկած տեղանունները, ապա դժվար թե կարողանանք մտապահել գոնե կեսը: Սա սոսկ թվարկում չէ, տեղանունների հիշատակումը գրողի համար ինքնանպատակ չէ, այլ կարելի է ասել, որ նա փորձում է պահպանել գյուղանունները, լեռների, աղբյուրների, քարափների անունները՝ ազգագրությանը

[1] ***Մարկոսեան Մ.,*** *Մեր այդ կողմերը, Իսթանպուլ, 1984, էջ 74:*

[2] *Տե՛ս՝* ***Գաբրիելյան Վ.,*** *Սփյուռքահայ գրականություն, Եր., 2016, էջ 318:*

հարուստ ժառանգություն փոխանցելու նպատակով նաև: Յուրաքանչյուր գործում ակնառու կերպով զգացվում է կորստի և կարոտի ցավի ահագնացող ուժը, գրողը ցավին դարման գտնելու համար դիմում է գրչի ուժին, գո՞ւցե դրանով հաջողվի փարատել վիշտը…վիշտը՝ կորցրած գյուղի ու հիշողությունների: Ահա «Կավին դարը» պատմվածքը, որտեղ գրողը փերթ-փերթ հիշում ու նկարագրում է Մանուկի կտրած-անցած ճանապարհը, ուրվապատկերում գյուղի տեղանքը, նշում ամեն քայլափոխից հետո ուր կամ որտեղով անցնելը՝ Կզնակի ուռիները, Մանուկանց, Բարիկանց պարտեզների վրայի ճամփով, «…հոնկե Արխենենց արտին տակեն, հոնկե Լեղաղբյուրեն, Քնարենց դռնեն, Գալուստի տան առաջքեն դառնալով, Շեխենց տան առջևը հասավ»[1], հայտնեց Կավին դարը փլվելու հետևանքով Տեմուրճենց հարսի մահվան լուրը: Հետագայում գրողն, ինքն էլ պիտի խոստովաներ. «Այս պատմվածքներս պատմվածք շինելու համար ստեղծագործություն մը չէ: Կավին դարը հողին տակը մնացողը՝ Տեմուրճենց հարսը, իմ մայրըս է: Ինձմով իր վերջին ամսվա մեջ հղի եղեր էր: Դեպքեն քսանըհինգ օր վերջը ես աշխարհ եկեր եմ: Բառ առ բառ՝ իմ պատմությունս է աս»[2]:

Նույն տիպական նկարագրությունն է տրված «Տյուկե մամուն եզը» պատմվածքում, բայց այս անգամ հեղինակը ոչ թե մատնանշում է գյուղի արտաքին նկարագիրը, այլ մեկ այլ՝ ավելի կարևոր, ներքինը՝ մարդկանց միջոցով: Ի՞նչն է արդյոք գյուղը դարձնում սիրելի, հոգեհարազատ, մի՞թե գլխավոր գործոնն այստեղ մարդը չէ: Հենց այս պատմվածքում էլ Մնձուրին շեշտը դնում է գյուղացու բարեհոգության, սրտացավության, հարևանի հանդեպ բարեկամական հարաբերության վրա: Տյուկե մամուն եզան սատկելու լուրը փոխանցվում է դրացուց դրացի, բոլորն էլ շտապում են արագ հայտնել լուրը: Սկզբից Նախո հարսիկին են հայտնում, սա էլ Խաշմանին, Խաշմանն էլ Թառռ մամային, վերջինս էլ Կզտանին, Մարոյին, Մչու Հարոյին: Կարեկցանքով են լցվում գյուղացիները, Տյուկե մամուն միակ ապրուստի միջոցը այդ մի եզն էր, այն էլ սատկեց: Ընդամենը մեկ նախադասություն, և ամեն ինչ ասված է գյուղացիների՝ միմյանց նկատմամբ լցված հոգատարության մասին. «Մի լա Տյուկե խաթուն, մի լա, Մեքերթմելում երկու եզ կա, տերը ծախում է, քեզ համար կառնենք»[3]:

Գյուղացու առատաձեռնության, նրա «շատ ըլլա, քիչ չըլլա» աղոթք դարձած ամենօրյա հանկերգի կրկնումով, մշակի գործի տքնաջանությունը հասկանալով Մնձուրին վեր է հանում աշխատանքի կարևորությունը և բարիքների վայելումը: Գյուղացին իր քրտնաջան աշխատանքի պտուղներն է քաղում և վաստակածն ըմբոշխնում: Հայ կնոջ մեծահոգությունը, հոգատարությունն ու առատաձեռնությունն է ընդգծված «Թամամ մամային արմանքն ու զարմանքը» պատմվածքում: Մշակի հացը պատրաստելու համար Թամամ մաման յոթ հաց է վերցնում, ամեն առավոտ հաշիվն արած ուղարկում արտը՝ «թող յոթն ըլլար, ավելի զար պակաս չգար» քթի տակ ինքն իր հետ խոսում էր մամը, հետո մառանում «նոր բացված կճիկին մեջ դգալը կոխեց, շատ ըլլա, քիչ չըլլա՝ ըսելով, ուրուպով մինչև ա՛լ չառնելու աստիճան լեցուց ամանը ու սինին բերավ», ապա «Գալենց Բարիկան» թթվանոց մտավ, «ամեն տեսակեն խառն թթուին բոլուկին գլուխը անցավ, տոլը կոխեց մեջը, մինչև շրթերը լեցուց լոլիկով, տախդեղով, ազատքեղով, ստեպղինով ու նույնպես սինին բերավ», պանրի բոլուկից հանեց չորս մեծ կտոր պանիր, չորս գլուխ էլ չոր սոխ բերեց սեղանին դրեց: Գյուղական կյանքի ողջ պերճանքը սեղանին էր: Կարդում ես, և թվում է, թե քո առաջ ծանոթ գիրք է բացված, գյուղական պատկերներն ասես քո հիշողության պահոցներից են քամված:

Մնձուրին լավագույն կերպով է նկարագրում գյուղացու ընտանեկան բարքերը «Երեկ ու՞ր էիր» և «Փշատին ծաղիկը» պատմվածքներում: Առաջինում հայ տղամարդու պատվախնդության հարցն է, իսկ երկրորդում՝ հայ կնոջ ամոթխածության: Հայ տղամարդն համբերատար է ամեն հարցում, բայց

---

[1] ***Մնձուրի Հ.,*** *Երկեր, Եր., 1986, էջ 217:*
[2] ***Նույն տեղում,*** *էջ 219:*
[3] ***Նույն տեղում,*** *էջ 407:*

երբ խոսք է բացվում ընտանիքի, կնոջ, նրա բարոյականության մասին, դառնում է անողոք, կուլ տալ ընտանիքին հասցեագրված ցանկացած խոսք չի կարող: Պատվախնդիր հայ տղամարդը չի ներում կնոջը՝ աղբյուրի մոտ կանգնելու և գյուղացի տղայի հետ զրուցելու համար, դա նրա համար դառնում է ճակատագրական, այլևս նա չի կարող կնոջը վերաբերվել այնպես, ինչպես առաջ, ամեն ինչ փոխվեց այս դեպքից հետո: Իսկ արդյո՞ք կինը մեղավոր էր, Մնձուրին անպատասխան է թողնում հարցը:

Հայ կնոջ նկարագրի ամենաէական գիծը ամոթխածությունն է, գյուղի բերանը չընկնելը՝ ինչ կասի գյուղը: Նշանած աղջկը ավանդապահ պետք է լինի, նա իրավունք չունի խոսելու անգամ իր նշանածի հետ, սա է գյուղի օրենքը: Ահա թե ինչու մայրը՝ Կեռռ հարսիկը, անիծում է աղջկան՝ Նարոյին՝ սիրած տղայի հետ փշատի տակ նստելու և «քիչ մը» զրուցելու համար: Կեռռ հարսիկը երբեք գյուղի սահմանած բարոյականության օրենքներից չի շեղվել, մատնանշում է իր ու ամուսնու «ցեղում» պատվախնդիր կանանց անունները:

Նույն կանացի հատկանիշներով է օժտված «Գարնան ճամբով» պատմվածքի հերոսուհին՝ Նանոն: Ի՞նչ կասեն դրացիները, եթե տեսնեն, որ ինքն ու ամուսինը դաշտ են գնում ոչ թե կարճ ճամփով, այլ ավելի երկար՝ Գարնան ճամփով: Կնոջ միակ մտահոգությունն այն է, թե տեսնողն ինչ կասի, գյուղ է, գյուղացիք են, իսկ ամուսինն ուզում է երկար ճամփով գնալ, վայելել նոր բացված գարնան և արևի ջերմությունը: Սրանցում Մնձուրին հակադրել է իրականն ու երազայինը, տուրք տվել նաև երազայինի հայտնությանն ու մատնանշել մեկ այլ աշխարհ, որտեղ կարելի է ապրել գյուղական ծանր բարքերից այն կողմ՝ երազային աշխարհում:

Աշխատանքի մարդիկ են Մնձուրու հերոսները, նա քննադատում է ալարկոտությունը: Ահա «Պահիկանք» պատմվածքում Մնձուրին խոսում է Պահիկյանի և նրա կնոջ՝ Խանպակի ծուլության, անբանության մասին: Պահիկանք զբաղված են միայն խոսելով ու ոչինչ չանելով, ուտելիքն էլ հոգում են հարսները: Պահիկյանն արտը չի վարում կամ էլ եթե անելու է լինում, անպայման ետ է մնում ուրիշներից: Գրողը նուրբ թելերով է մոտենում հարցին՝ «Զեզի չպատմեմ Պահիկանց տան ներսի տեսարանը,- ասում է գրողը,- միայն աս ըսեմ, որ Թեղուտը մորքուր մը ունին՝ Նաղաշենց տանը Սըլո մորքուրը, ամեն հին կիներու պես»[1]: Սըլո մորքուրի շուրթերով հեղինակը հնչեցնում է ալարկոտության հանդեպ իր վերաբերմունքը «Ճահիլ աղջիկները, մատ մը տղաքը արևին ճակատը արտ պիտի քաղեն, որ դուք հոս էրիկ-կնիկ նստիք, ուտիք», իսկ Պահիկյանը մտածում էր չգիտես էլ թե ինչի մասին:

Կենդանի և շարժուն պատկերներով արձակագիրը «դաշտային պահակի ճշգրտությամբ» գրականություն է բերում իր հայրենի գյուղը, կերտում գյուղացիների՝ Տյուկե Մամայի, Տաղլուենց Մարոյի, Շիրինի, Նուռ մամի, Ցորնիկին Գիրգորի, Նարոյի կերպարներն առանց չափազանցությունների: «...Նա ինքը նրանցից մեկն է, գյուղացու նրա խիղճը թույլ չի տալիս չափազանցնել համագյուղացիների նկարագիրները, նուրբ գեղագետի նրա խիղճը նրան արգելում է պայթուցիկ ողբերգություն դնել այնտեղ, ուր այդ ողբերգությունը, որպես օտար մարմին, չէր հանդուրժվի»[2],- գրում է Հր. Մաթևոսյանը:

Հ. Մնձուրին բառերով նկարչություն արեց, փնջեց իր կարոտները, գույները, ձայները և պահ տվեց գրականությանը՝ խոստովանելով՝ «Կը հավատամ, թե լավագույն բանը, զոր կրնայի ընել, գյուղը տալն էր: Որևէ մեկը կարդալով զիս, կրնա իմ պատմվածքներուս քարտեզը, իմ գրական աշխարհագրությունս շինել»[3]:

Գրականություն

---

[1] ***Նույն տեղում,*** *էջ 188-189:*

[2] ***http://hrantmatevqssian.qrg/hy/wqrks/id/hakqb_mndzuru_ashxarhy*** *:*

[3] *Տե՛ս՝* ***Գաբրիելյան Վ.,*** *Սփյուռքահայ գրականություն,* ***էջ*** *319:*

1. **Գաբրիելյան Վ.,** Սփյուռքահայ գրականություն, Երևան, 2016, 424 էջ:
2. **Մարկոսեան Մ.,** Մեր այդ կողմերը, Իսթանպուլ, 1984, 174 էջ:
3. **Մնձուրի Հ.,** Երկեր, Երևան, 1986, 544 էջ:
4. **http://hrantmatevqssian.qrg/hy/wqrks/id/hakqb_mndzuru_ashxarhy :**

ՀՏԴ 82-3

Սոնա Մուսայելյան
ԱրՊՀ, բանասիրական ֆակուլտետ
«Հայ գրականության պատմություն»,
մագիստրատուրա 2-րդ կուրս
mousayelyan@mail.ru

Գիտական ղեկավար՝
բ.գ.թ., դոցենտ Ստեփանյան Միրվարդ

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ-ՄՈՌԱՑՈՒԹՅՈՒՆ-ՊԱՅՔԱՐ ԿՈՆՑԵՊՑԻԱՆ ԷԼԻՖ ՇԱՖԱՔԻ «ՍՏԱՄԲՈՒԼԻ ԲԻՃԸ» ՎԵՊՈՒՄ

Բանալի բառեր՝ *հիշողություն, մոռացություն, պայքար, անցյալ, ցեղասպանություն, խորհրդանիշ, ճակատագիր:*

Հիշողության գործոնի անընդմեջ պայքարը նպաստում է անցյալի բացահատմանը: Մոռացությունը՝ որպես նահանջի խորհրդանիշ, դառնում է փրկության միջոց: Պայքարը՝ որպես հիշողություն, մոռացությունը՝ որպես փրկություն, քննվում են ժամանակակից թուրքական և ամերիկյան հասարակությունների միջոցով՝ այս բոլորը ներկայացնելով 1915 թվականի հայոց ցեղասպանության համապատկերում: Վեր հանելով այդ հասարակությունների ախտահանիչ տարրերը, թերի կողմերը, ազգային ընկալումները, զարգացման աստիճանը, քննելով հերոսների պայքարի տարբեր ձևերը՝ կենտրոնացել ենք «հիշողություն-մոռացություն-պայքար» կոնցեպտի վրա:

Сона Мусаелян

ПАМЯТЬ-ЗАБВЕНИЕ-БОРЬБА КОНЦЕПЦИЯ В РОМАНЕ ЭЛИФА ШАФАКА "СТАМБУЛЬСКИЙ БИЧ"

Ключевые слова: *память, забвение, борьба, прошлое, геноцид, символ, судьба.*

Непрерывная борьба фактора памяти способствует отключению прошлого. Забвение, как символ отступления, становится средством спасения. Борьба как память, забвение как спасение исследуются через современные турецкое и американское общества, представляя все это в контексте Геноцида армян 1915 года. Выделяя обеззараживающие элементы этих обществ, порочные аспекты, национальное восприятие, степень развития, исследуя разные способы борьбы героев, мы сосредоточились на концепции памяти-забвения-борьбы.

Sona Mousayelyan

MEMORY-OBLIVION-STRUGGLE CONCEPT OF ELIF SHAFAK IN THE NOVEL "ISTANBUL SCOURGE"

Key words: *memory, forgetfulness, struggle, past, genocide, symbol, destiny.*

The constant struggle of the memory factor contributes to the revelation of the past. Oblivion, as a symbol of retreat, becomes a means of salvation. Struggle as Memory explores contemporary Turkish American societies in

the context of the 1915 Armenian genocide. Emphasizing the disinfecting elements of these societies, their shortcomings, national perceptions, level of development, we focused on the concept of combating memory.

Հիշողությունը՝ որպես պայքարի խորհրդանիշ, գոյության երաշխիք, իր բազմաթիվ անդրադարձներն ունի թուրքական գրականության մեջ: Այս առումով մեծ ճանաչում է ձեռք բերել Էլիֆ Շաֆաքի «Ստամբուլի բիձը» վեպը: Հայ գրականագիտության մեջ Էլիֆ Շաֆաքի այս վեպի շուրջ ուսումնասիրություններում թուրքագետ Ռ. Մելքոնյանն իր դիտարկումով («Հայոց ցեղասպանության թեման թուրքական հետմոդեռնիստական արձակում. Էլիֆ Շաֆաքի «Հայրը և ապօրինի զավակը վեպը») կարևոր տեղ է հատկացրել հիշողությանը և դրա դրսևորումներին. այսպես, դասական սփյուռքահայի ընտանիք համարվող ամերիկաբնակ Չաքմաքչյանները մեծապես տարված են անցյալի և հատկապես ցեղասպանության հիշողություններով, ինչը երբեմն նրանց խանգարում է ապրել ներկայով: Մյուս կողմից Թուրքիայում բնակվող Քազանջը ընտանիքն է, որը չի հիշում անցյալը, ասես չունի հիշողություն և ապրում է միայն ներկայով[1]: Գրականագետ Լիլիթ Սեյրանյանը («Քառսը և կոսմոսը որպես ազգային տիեզերքը պատկերավորող նշաններ Ն. Սարաֆյանի «Իշխանուհին» և Է. Շաֆաքի «Ստամբուլի բիձը» երկերում») ընդգծում է վեպի առանցքում ազգային ինքնության որոնման խնդիրը, որը ձևակերպվում է քայքայված/քայքայվող հանրույթների տոհմապատումային խաչաձևումների, անտարանջատելիորեն ներհյուսված ճակատագրերի պատկերավորման, անցյալից փախչելու, հիշողության ջնջումով նոր տարածք նվաճելու և հիշողության տարածության մեջ գոյելու տարամիտվող լուծումների գեղարվեստական հանդիպադրումների միջոցով[2]: Վեպի հոգեբանական նշանակությանն անդրադառնալով՝ Լուսինե Ղարախանյանը նշել է. «Ստեղծագործության առանցքային խնդիրը ոչ միայն հիշողության ու խոստովանության , այլև ինքնության պահպանումն է»[3]:

Մեր նպատակն է վեր հանել վեպում հիշողության պայքարի դրսևորումները ընդդեմ մոռացության, որի համար **խնդիր է առաջադրվել** ուսումնասիրել կերպարակերտման համակարգը՝ առավելապես ուշադրություն դարձնելով այն հերոսներին, ովքեր պայքարել են ընդդեմ անցյալի մոռացության, նաև այն հերոսներին, ովքեր պայքարել են ընդդեմ հիշողության: Այսինքն՝ մեր կողմից կատարված աշխատանքը դիտարկվում է **հիշողություն-մոռացություն-պայքար** կոնցեպցիայի տեսանկյունից:

Գրքի հեղինակը, համադրելով ժամանակակից թուրքական ու ամերիկյան միջավայրերը, կարողանում է ներկայացնել իրարից շատ հեռու, բայց միևնույն ժամանակ իրար շատ մոտ (թերևս՝ բարեկամ) մարդկանց ճակատագրերը: Այս բոլորի համատեքստում քննվում է նաև Հայոց ցեղասպանության թեման:

Ժամանակակից թուրքական և ամերիկյան հասարակություններն առանձնանում են իրենց ընկալումներով, քաղաքակրթությամբ ու զարգացման աստիճանով: Թուրքական հասարակության մասին ընթերցողը պատկերացում է կազմում Քազանջն ընտանիքի միջոցով: Սերունդների համար այդ ընտանիքում չգրված օրենք էր դարձել Քազանջն տղամարդկանց վաղաժամ մահը: Թերևս այս պատրվակով Մուսթաֆան հաստատվեց Ամերիկայում, չնայած մյուս կողմից էլ այդ քայլով նա փորձում էր նաև մոռանալ հիշողությունը, պայքարել խղճի դեմ: Նախորդ դարի Ստամբուլից շատ բան էր փոխվել, փոխվել էին նաև ազգային, ավանդական ընկալումները: Ստամբուլն ամբողջապես գնում էր դեպի

[1] ***Մելքոնյան Ռ.,*** *Հայոց ցեղասպանության թեման արդի թուրքական գրականության մեջ: **Տես՝ Մելքոնյան Ռ., Պողոսյան Ն.,** Հայկական թեմատիկան ժամանակակից թուրք գրականության մեջ (XX դ. երկրորդ կեսին–XXI դ. սկզբին), ԵՊՀ հրատ., Երևան, 2016, էջ 82:*

[2] ***Սեյրանյան Լ.,*** *Հայեցումներ բառից անդին, Արմավ հրատ., Երևան, էջ 86:*

[3] ***Ղարախանյան Լ.,*** *«Անցյալի ու ներկայի սերունդների փոխհարաբերության դիտարկումը թուրք գրող Էլիֆ Շաֆակի «Ստամբուլի բիձը» վեպի համատեքստում», Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու», Երևան, 2020, էջ 260:*

եվրոպականացում: «Ստամբուլը դարձել է երջանկությամբ լեցուն մեծ քաղաք. ճիշտ Փարիզի պես՝ ռոմանտիկ ու կախարդական»[1]: Ներկայացնելով թուրքական հասարակությունը՝ հեղինակը ստեղծում է մի մասի կողմից անցյալն ի սպառ ջնջելու, մյուս կողմից՝ անցյալով ապրելու հակադրությունը: Ժամանակակից թուրքական հասարակության մեծ մասը ժխտում է անցյալը, մի մասն էլ իմաստ չի գտնում անցյալը քրքրելու: *«**Կաֆե կունդերան**» թուրքական հասարակության մանրապատկերն է: Այստեղ նորություն չէ հայ բառը, առավել անընդունելի է սփյուռքահայ հասկացությունը, որովհետև ըստ հեղինակի եթե կա հասարակական հիստերիա, կա նաև հասարակական հիշողություն…: Երբ մի պատմություն անընդհատ լսում ես, յուրացնում ես: Երբ յուրացնում ես, այդ պատմությունը դադարում է պատմություն լինելուց»*[2]: «**Կաֆե կունդերան**» թուրքական հասարակության համար փրկության խուց է: Այնտեղ կարելի է փակվել՝ թաքնվելով անցյալի մեղքերից, ներկայի ցավերից, կյանքի դաժան օրենքներից: Այն որպես փրկումի ու ինքնամաքրումի միջոց՝ համախմբում է թուրքական հասարակությունից իսպառ հոգնած երիտասարդներին. *«Ամեն օր սուզվում ենք հոգնածության մեջ: Սեփական մշակույթի, սեփական ժողովրդի հետ ցավալի հանդիպումներից վախենալու պատճառով խցկվել ենք նապաստակի բնի մեջ: Արևմուտքցիներն էլ կարծում են, թե Արևելքի և Արևմուտքի քաղաքակրթությունների միջև մշակութային անդունդ կա: Երանի այդքան հեշտ լիներ:Քաղաքակրթության իրական անդունդը թուրքերի ու թուրքերի միջև է: Մեր և նրանց միջև: Շուրջբոլորը քյառթուները ու գեղցիներ և գյուղացիներ են: Մենք էլ դրա կենտրոնում ենք: Մի բուռ մշակութային, քաղաքաբնակ հին հարևաններին ենք կարոտում: Ստամբուլի հայերին, հույներին, հրեաներին…նրանց փոխարեն հարևանություն ենք անում Անատոլիայի գյուղացիների հետ:Չգիտենք ուր փախչենք: Հոգնեցինք: Ամբողջ քաղաքն էր անցել նրանց ձեռքը»*[3]:

Առավել կենտրոնանալով ամերիկյան հասարակության վրա՝ պետք է նշել, որ նրանք չեն կարևորում ազգային պատկանելությունը: Ամերիկյան հասարակության կերպարներից առավել անանձնացող է Ռոզին՝ Արմանուշի մայրը, ով հոգնել էր ազգային խիստ պահպանողականությունից, ավանդական ուտեստներից և նախընտրում էր երջանիկ կյանքը: Նույնիսկ աղջկա հայկական անունն է փոխում՝ անվանելով Էմմի, որն ըստ նրա ավելի բարեհունչ է ու ժամանակակից: Այսինքն՝ Ռոզը երազում է պարզ երջանկության մասին.*«Մեծ ընտանիք, էթնիկ գիտակցություն, դժվար արտասանվող ազգանուն ու հնացած գաղտնիքներ չունեցող պարզ, սիրելի մարդ. Ռոզը դրա կարիքն է զգում»*[4]: Կարևոր չեն նրանց համար ազգային ուտեստներն ու անվանումները, նրանք նախընտրում են պարզն ու հասարակը:

Ըստ Ռ.Մելքոնյանի՝ հեղինակը ի ցույց է հանել թուրքական հասարակության անտեղյակությունը պատմության որոշակի փուլերի և մասնավորապես՝ Հայկական հարցի վերաբերյալ: Այս երևույթը աչքի է զարնում երիտասարդ հայուհի Արմանուշ Չաքմաքչյանի և Քազանջը ընտանիքի անդամների զրույցների ժամանակ[5]: Այս համապատկերում առանձնանում է Ասյայի կերպարը: **Ասյան՝** Զելիհայի դուստրը, և մայրը ընդմիշտ միմյանց արտացոլելու երդում տված երկու հայելի էին: Երկու դեմք էին, որոնցից մեկը երբեք անցյալ չի ունեցել, իսկ մյուսը նախընտրել էր հնարավորինս այն չհիշել: Ասյան չէր ցանկանում կենտրոնանալ անցյալի վրա, նրա հայացքը դեպի ապագա էր. *«Ես չեմ ժխտում ձեր անցյալը: Ընդունում եմ ձեր կորուստն ու վիշտը :Ընդունում եմ, որ ձեզ հետ վատ են վարվել: Ես միայն*

---

[1] ***Շաֆաք Էլ.,*** *Ստամբուլի բիձը, Անտարես հրատ., Երևան, էջ 27:*
[2] ***Նույն տեղում,*** *էջ 233:*
[3] ***Նույն տեղում,*** *էջ 97:*
[4] ***Նույն տեղում,*** *էջ 48:*
[5] ***Մելքոնյան Ռ., Պողոսյան Ն.,*** *Հայկական թեմատիկան ժամանակակից թուրք գրականության մեջ (XX դ. երկրորդ կեսին–XXI դ. սկզբին), էջ 85:*

հավատում եմ, որ կարիք չկա կենտրոնանալ անցյալի վրա».[1] Այսինքն՝ Ասյան չի մերժում հիշողությունը, բայց նախընտրում է մոռացությունը: Ամբողջության մեջ հասկանալի է՝ ինչու է Ասյան նախընտրում մոռացությունը: Նրա դեպքում կա անձնական հիշողության մերժում. *«Ամբողջ կյանքում ուզում եմ անցյալ չունենալ… Երազում էի սկլերոզ ունենամ:Բիձ լինել նշանակում է ոչ միայն հայր չունենալ, այլև անցյալ չունենալ…Հիմա էլ դուք կանգնել և ասում եք, որ տեր կանգնեմ անցյալիս…»*[2]:

Գաղափարական հակադրությունը առկա է նաև Արմանուշի և Մուսթաֆայի դեպքում: Արմանուշի դեպքում հանուն հիշողության, Մուսթաֆայի՝ մոռացության: Իրականում Մուսթաֆայի փախուստը փրկության համար էր: Նա ոչ թե ճակատագրից էր փախչում, այլ հիշողությունից: Ամերիկյան միջավայրը «տալիս էր» այդ մոռացության հնարավորությունը. *«Երանի մարդու հիշողությունը համակարգչի հիշողության նման լիներ: Ինչքան կուզեր հիշողության մեջ եղած բոլոր տեղեկությունները ջնջել, հին փաստաթղթերն ամբողջությամբ զրոյացնել և նորը սկսել»*[3]: Հեղինակը, ներկայացնելով Մուսթաֆայի կատարած քայլը, այն նմանեցնում է Թուրքիայի կողմից իրականացված հայոց ցեղասպանությանը, որովհետև երկուստեք ընդգծվում է մերժումը՝ անցյալի, հիշողության, գործած մեղքի:

Արմանուշը անընդհատ խորանում էր ժամանակային տարածության խորքում, հետադարձ ուղղումով ներկայից գնում էր անցյալ, երիտասարդությունից՝ մանկություն: Հիշողության պահպանման ու ապագայի համար նա անպայմանորեն պիտի բացահայտեր իր ընտանիքի պատմությունը, խորանար անցյալի որոնումներում:Այդ իսկ նպատակով նա ուղևորվեց Ստամբուլ՝ հավատով, որ կգտնի Շուշան տատի տունը:Սակայն նա չգիտեր՝ անցյալ չունեցող թուրքը սովոր է հեշտությամբ մոռանալ իր հիշողությունը ու ստեղծել նորը: Նրա պայքարի դրևսորումը դեպի Ստամբուլ ճամփորդությունն էր. *«Պիտի ճամփորդեր դեպի իր ընտանիքի անցյալը, որպեսզի կարողանար ճամփորդություն կատարել դեպի ապագան»*[4]:

Ինքնության որոնումների և հիշողության պահպանման համապատկերում Արմանուշը զարմանում է Ասյայի անշրջահայացության ու անհոգության վրա: Արմանուշի և Ասյայի կերպարների որոնման ու բացահայտման ճանապարհին հանգում ենք այն եզրակացության, որոնք նրանք լրիվ հակադիր պատկերներ են: Արմանուշը ճամփորդում է հիշողության էջերում, իսկ Ասյան նախընտրում է վերջինիս բացարձակացումը. *«Տեսնում եմ, թե որքան կարևոր է որքան ողբերգական է պատմությունը քո ընտանիքի համար, և հարգում եմ հուշերը կենդանի պահելու ձեր ցանկությունը, որպեսզի ձեր պապերի ողբերգությունը չմոռացվի: Բայց մեր ճանապարհները հենց այստեղ բաժանվում են»*[5]:

Արմանուշի նման **Արամը** /Զելիհայի ընկերը/ ևս պայքարում է հանուն հիշողության: Նրա մայրն ուզում էր, որ դպրոցում թուրքերեն, տանը՝ անգլերեն խոսի, քանի որ մեծանալով այս երկրից գնալու էր, Եվրոպայում էր ապրելու: Հայերենը նրա ինչի՞ն էր պետք: Բայց կերպարի մտատանջումներում տատիկը հաղթեց: Ի վերջո, դպրոցում թուրքերեն, մոր հետ շուկայում, դրսում՝ անգլերեն, տանը հայերեն խոսելով մեծացավ[6]: Ազգային արմատներին հավատարիմ լինելը, ինքնության պահպանումն ու հիշողությունը Արամի դեպքում ընդգծվում է հետևյալ հատվածում. *«Ո՛չ թուրքերեն, ո՛չ էլ անգլերեն երգ էր. Արամը հայերեն էր երգում»*[7]:

Քազանջն ընտանիքի անցյալի բացահայտման հնարանքը Շաֆաքը իրականացնում է Ասյայի

---

[1] ***Շաֆաք Էլ.,*** *Ստամբուլի բիձը, էջ 289:*
[2] ***Նույն տեղում,*** *էջ 291:*
[3] ***Նույն տեղում,*** *էջ 54:*
[4] ***Նույն տեղում,*** *էջ 136:*
[5] ***Նույն տեղում,*** *էջ 199:*
[6] ***Նույն տեղում,*** *էջ 277:*
[7] ***Նույն տեղում,*** *էջ 282:*

կերպարով: Ասյան պիտի ծնվեր, դրա համար այդ ծնունդը խորհրդանշվեց էզանի **(մահմեդականների աղոթքի հրավեր)** նվագով, որը նշանակում էր հուշում Տիրոջից. *«Բայց հենց վիրահատության սեղանին, երբ արդեն պիտի քնեի, մոտակա մզկիթում **սկսվեց կեսօրի էզան...** էզանը մետաքսի պես փափուկ էր: Փաթաթվեց ամբողջ մարմնիս: Հետո, դեռ էզանը չավարտած, մի հրեշտակ ականջիս շշնջաց. «Հե՛յ, Զելիհա՛, այս երեխային չես սպանելու»*[1]:

Անցյալի բացահայտման հեղինակային հնարանքներից են **Աղուլու բեյի կերպարը և նռնաձև զարդը՝ որպես խորհրդանիշներ:** Աղուլու բեյը գաղտնազերծում է նաև Մուսթաֆայի տնից հեռանալու պատմությունն ու ընտանիքի ինքնությունը: Որպես կերպար-խորհրդանիշ՝ Աղուլու բեյը բացահայտում է միմյանց հանդեպ ամենատգեղ արարքների իսկությունը: Ստամբուլի բիճի պատմությունը բացահայտվում է Հայոց ցեղասպանության համապատկերում: Բանուն դառնում է Աղուլուի հիշողության կրողը: Աղուլուն նաև Բանուի խիղճն է: Խիղճ, որ պայքարում է ընդդեմ հիշողության, բայց միևնույն ժամանակ լուծում անցյալի խնդիրը, որովհետև անցյալում են թաքնված Քազանջն ընտանիքի գաղտնիքները:**Շուշան Իստանբուլյանը,** ով ստիպված դառնում է Շերմին Քազանջն, ևս մեծ պայքար է մղում հանուն հիշողության: Նա երբեք չէր ուզում հեռանալ անցյալի հիշողությունից, բայց ստիպված հեռանալով թողնում է հոգուց մի մասնիկ՝ նռնաձև զարդ, որը հեղինակի՝ անցյալի բացահայտման յուրահատատուկ հնարանքներից է. *«Եթե զարդը չլիներ, նա ամուսնուն, որդուն լքել-հեռանալու համարձակություն կունենա՞ր»*[2]: Ինչպես արդեն նշեցինք, պայքարի դրսևորումներն իրականացվում են տարբեր խորհրդանիշներով. նռնաձև զարդը հայի տոկունությունն է: Այս առումով մենք նմանություն ենք տեսնում նաև Վիլյամ Սարոյանի հայտնի «Նռնենիները» ստեղծագործության մեջ: Երկու դեպքում էլ **նռնաձև զարդ–նռնենիներ** զուգահեռներում կա հիշողության, պայքարի ու կորուստի խորհուրդ: Այս նռնաձև զարդի էությունը ավելի է ընդծվում՝ խորհրդանշելով կյանքից պոկված մի մասնիկի գաղափարը: Շուշանը, թողնելով նռնաձև զարդը, իրենից մի մասնիկ էր հավերժ տարանջատում: Հենց այդ մասնիկով էլ բացահայտվում է անցյալի գաղտնիքը՝ Քազանջն ընտանիքի հայկական արմատները:

Հայի ճակատագրի, հիշողության պահպանման խորհուրդը Սարոյանի ստեղծագործության մեջ հետևյալ ձևով է ընդծվում.*«Պարո՛ն Գրիֆիթ, ասաց, ստիպված եմ ձեր ունեցվածքը ձեզ վերադարձնել, բայց մի փոքրիկ խնդրանք ունեմ: Քսան ակր նռնենի եմ տնկել ու շատ երախտապարտ կլինեի, եթե թույլ տայիք ծառերը խնամե*

Խնամե՞լ, զարմացավ Գրիֆիթը, ինչի՞ համար: Հորեղբայրս փորձեց բացատրել, բայց չկարողացավ: Ո՞նց բացատրես մեկին, որ կարեկից չի»[3]:

Նռնենիները խնամելու համար պետք է կարեկից լինել, ավելի կոնկրետ՝ պետք է հայ լինել: Նռնենի ծառն էլ հայի նման ստիպված է պայքարել՝ աճելու, զարգանալու համար: Ամայությունը իր դաժանություններով պարարտ հող էր նռնենիների համար: Ճակատագրի նմանությամբ հայն ու նռնենին ընդհանրանում են: Ըստ հայ գրաքննադատական ուսումնասիրությունների՝ վեպում կարևորվում է ինքնության ընկալումը, որը գրականագետ Լիլիթ Մեյրանյանը այսպես է սահմանում. «Ուշագրավ է թուրք գրողի՝ հայ ազգային ինքնության ընկալումը, որը ներկայացվում է թե՛ երիտասարդ թրքուհու՝ Ասյայի և՛ թե հայերի՝ Արմանուշի և «Անուշի ծառը» չատի զրուցակիցներից մեկի՝ պարոն Բաղդասարյանի ըմբռնումների միջոցով»[4]:

Համեմատելով Չաքմաքչյան և Քազանջըն ընտանիքներին՝ կարողացել ենք գտնել որոշ

---

[1] ***Էլիֆ Շաֆաք,*** *Ստամբուլի բիճը, էջ 35:*
[2] ***Նույն տեղում,*** *էջ 366:*
[3] *https://granish.org/wiliam-saroyan-nrneninery/:*
[4] ***Մեյրանյան Լ.,*** *Հայեցումներ բառից անդին, էջ 93:*

նմանություններ, նախ ազգանունների դժվարահնչունությունը, նաև հերոսների նման ճակատագրերը, որոնց հիմքը պատմական նույն իրադարձությունն է:

Եթե չլիներ Հայոց ցեղասպանությունը, Շուշանը չէր դառնա Շերմին Քազանջ, չէր թողնի իր ամուսնուն ու երեխաներին, և Զելիհայի հայրն այդքան կոպիտ չէր լինի երեխաների, հատկապես միակ որդու՝ Մուսթաֆայի նկատմամբ: Այսինքն, եթե չլիներ 1915 թվականը, չէր լինի նաև Ստամբուլի բիձը՝ Ասյան:

Այսպիսով՝ Արմանուշը պայքարեց հանուն հիշողության՝ բացահայտելու ազգային ինքնությունը: Ասյան մինչև վերջ պայքարեց ընդդեմ հիշողության՝ բացահայտելով անցյալը:

Մուսթաֆան նախընտրեց մոռացությունը, որովհետև հիշողությունը նրա խիղճն էր, որը մաքուր չէր: Բանուն Աղուլու բեյի միջոցով ձեռնարկում է արդար վճիռ, որով կփրկվեր և՛ ընտանիքի պատիվը, և՛ Մուսթաֆան կստանար արժանի պատիժը: Սա նման է խոստովանության, ճշմարտության ընդունման, որին վաղ թե ուշ պիտի բախվի Թուրքիան:

Վեպի հիմքում ազգային հասարակության թերությունների բարձրացումն է, կարևորագույն օրենքների խախտումը՝ 1915 թվականի Հայոց ցեղասպանության համատեքստում: Հիշողության որոնման ճանապարհին հերոսների մի մասի նահանջով, մյուս մասի պայքարով առավել են ընդգծվում հեղինակի գաղափարական ու գեղարվեստական ընկալումները՝ Հայոց ցեղասպանության նկատմամբ, ինչի համար երախտապարտ ենք թուրք գրող Էլիֆ Շաֆաքին:

Օգտագործված գրականություն

1. **Ղարախանյան Լ.,** «Անցյալի ու ներկայի սերունդների փոխհարաբերության դիտարկումը թուրք գրող Էլիֆ Շաֆակի «Ստամբուլի բիձը» վեպի համատեքստում», Մեսրոպ Մաշտոց համալսարանի «Լրատու», Երևան, 2020, 7 էջ:
2. **Մելքոնյան Ռ., Պողոսյան Ն.**, Հայկական թեմատիկան ժամանակակից թուրք գրականության մեջ (XX դ. երկրորդ կեսին–XXI դ. սկզբին), ԵՊՀ հրատ., Երևան, 2016, 148 էջ:
3. **Շաֆաք Էլ.,** Ստամբուլի բիձը, Անտարես հրատ., Երևան, 2012, 407 էջ:
4. **Մեյրանյան Լ.**, Հայեցումներ բառից անդին, Արմավ հրատ., Երևան, 2021, 369 էջ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1.https://granish.org/wiliam-saroyan-nrneninery/:
2. https://grqamol.am/article/elif-shafaq-stambuli-bichy/

ՀՏԴ 82-1/9

Ստելլա Շահինյան
Գավառի պետական համալսարան
Էլեկտրոնային հասցե՝
shahinyanstella17@gmail.com

Գիտական ղեկավար՝
Արա Առաքելյան, բ.գ.թ., դոկտոր

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՕՎԻԴԻՈՒՍԻՑ ՄԻՆՉԵՎ ԿԱՖԿԱ)

Բանալի բառեր՝ *կերպարանափոխություն, մարդ, կենդանի, անտիկ գրականություն, մոդեռնիզմ*

Կաֆկա այն ստացել է բազմաթիվ մեկնաբանություններ: Հոդվածի նպատակն է ուսումնասիրված գրականության մեջ բացահայտել կերպարանափոխության մոտիվները և ընդհանուր գծերը: Ուսումնասիրվել են անտիկ գրականությունից Պուբլիուս Օվիդիուս Նազոյի «Կերպարանափոխություններ»-ը և Լուցիուս Ապուլեուսի «Մետամորֆոզները» կամ «Ոսկե էշը» ստեղծագործությունը և երեք մոդեռնիստական ստեղծագործություններ՝ Ֆրանց Կաֆկայի «Կերպարանափոխությունը» նովելը, «Պատժիչ գաղութում» պատմվածքը և Էժեն Իոնեսկոյի «Ռնգեղջյուրը» պիեսը:

Стелла Шагинян

ФЕНОМЕН ПРЕВРАЩЕНИЯ В ЛИТЕРАТУРЕ (ОТ ОВИДИЯ ДО КАФКИ)

Ключевые слова: *Превращение, человек, животное, античная литература, модернизм*

Цель статьи-выявить особенности и контуры метаморфоз в изучаемой литературе. В статье мы рассмотрели „Метаморфозы“ Публия Овидия Назона и „Метаморфозы“ или „Золотой осел“ Луция Апулея из античной литературы, а также три произведения модернистской литературы: повесть Франца Кафки „Превращение“, рассказ „В исправительной колонии“ и пьесу Эжена Ионеско „Носорог“.

Stella Shahinyan

THE PHENOMENON OF METAMORPHOSIS IN LITERATURE (FROM OVIDIUS TO KAFKA)

Key words: *Metamorphosis , man, animal, ancient literature, modernism*

The theme of metamorphosis is not new in literature. From Ovidius to Kafka, it has been interpreted in many ways. The purpose of the article is to identify the motives and common features of the metamorphosis in the literature under study. In this article, we have studied the "Metamorphoses" by Publius Ovidius Naso and the "Metamorphoses" or "The Golden Ass" by Lucius Apuleius from ancient literature, as well as three works of modernist literature: Franz Kafka's novella "The Metamorphosis", the short story "In the Penal Colony" and Eugène Ionesco's play

"Rhinoceros".

Կարելի է համարել, որ կերպարանափոխության երևույթը որպես այդպիսին սկիզբ է առել դեռևս Դիոնիսոսյան թատրոնի ժամանակներում՝ ելնելով նոր և գոյություն չունեցող կերպարների կերտումից:

Օվիդիուսի «Մետամորֆոզներ»-ը թերևս գրականության պատմության մեջ առաջին ստեղծագործություններից է, որտեղ արծարծվում է կերպարանափոխության թեման: Այն ունի բավականին լայն ընդգրկում՝ աշխարհի ստեղծագործությունից մինչև Օվիդիուսի օրերը, երբ մեռնում է Հուլիոս Կեսարը և փոխակերպվում համաստեղության[1]: Պոեմի նյութը հունա-հռոմեական հարուստ դիցաբանությունն է, մասնավորապես՝ առասպելական այն այուժեները, որոնք ավարտվում են կերպարանափոխությամբ (մարդը վերածվում է որևէ կենդանու, ծառի ևն)[2]: Դիտարկենք առաջին գրքում առկա երկու օրինակներ՝ հունական լեգենդները Դափնեի և կովի վերածված Իոյի մասին. երկու դեպքերում էլ փոխակերպումը ենթադրում է փախուստ: *Կերպարանափոխությունը՝ որպես փախուստ* թշնամուց, համաշխարհային գրականության մեջ, հատկապես առասպելներում և հեքիաթներում լայնորեն տարածված երևույթ է[3]:

Օվիդիուսը «Մետամորֆոզների» առաջին գրքում կրկնում է Հեսիոդոսի՝ *մարդու անկման պատմությունը* ՝ ոսկե, արծաթե, պղնձե և երկաթե դարերի մասին, որոնց ընթացքում մարդու կյանքը և մարդն ինքը փոխակերպվում և անկում է ապրում՝ դառնալով ստորակարգ և դաժան: Մարդու անկման ֆենոմենը առկա է նաև Վերածննդի գլուխգործոցներից մեկի՝ Դանթեի «Աստվածային կատակերգության» մեջ, ի դեմս Կրետեի հսկայի, ում գլուխը ոսկուց է, իսկ արդեն ոտքերը՝ կավից:

Վերջին գրքում Օվիդիուսը փառաբանում է Հուլիոս Կեսարին, ով դառնում է գիսավոր աստղ, որովհետև եղել է փառավոր մարդ և կատարել փառավոր գործեր՝ այսինքն, *կերպարանափոխությունը պատահական երևույթ չէ*. ինչպես Կարմայի հնդկական կանոնում՝ մարդը համապատասխան կերպարանափոխության է ենթարկվում՝ ելնելով իր անձնական որակներից և վարած կյանքից: Եթե նրա արարքները «արդարացի ու ազնիվ» են, ապա հոգին տեղափոխվում է ավելի «վեհ ու ազնիվ» մարմին, այս դեպքում՝ մարդը, ի դեմս Կեսարի, փոխակերպվում է ավելի վեհ նյութի՝ աստղի: Այսինքն՝ տեսնում ենք կերպարանափոխություն, որը տանում է դեպի *մաքրագործում, կատարելագործում:*

Պոեմի վերջին գլխի մեջ Օվիդիուսը շարադրում է Պյութագորասի ուսմունքը հոգու տեղափոխության մասին. դրանով նա փորձ է անում փիլիսոփայության միջոցով հիմնավորելու կերպարանափոխության ռեակցիոն ուսմունքը: Ըստ Օվիդիուսի՝ նյութը հավերժական է ու չի անհետանում, անվերջ մի պրոցեսի ընթացքում մի տեսակի առարկաները փոխարկվում են այլ տեսակի առարկաների, իսկ հոգին մի մարմնից տեղափոխվում է ուրիշ մարմնի մեջ. առասպելական կերպարանափոխությունները հենց այն հարմար օրինակներն էին, որոնց միջոցով բանաստեղծը կարող էր առավել պատկերավոր ձևով ներկայացնել բնության մեջ իր կարծիքով անդադար տեղի ունեցող այդ երևույթները[4]:

Ապուլեյուսի «Մետամորֆոզներ» երկը բացառիկ արժեք է ներկայացնում գրողի ստեղծագործության մեջ: Այն գրականության մեջ հայտնի է «Ոսկե էշ» անունով, որը վեպին տրվել է ավելի ուշ

---

[1] *Տե՛ս **Առաքելյան Ա.**, Հռոմեական գրականության պատմություն, երկրորդ բարեփոխված հրատարակություն, Երևան, 1975, էջ 387:*

[2] *Տե՛ս **Թոփչյան Ա.**, Անտիկ միջնադարյան Վերածննդի գրականություն, I հատոր, Անտիկ գրականություն, Եր., 1990, էջ 28:*

[3] *Տե՛ս **Каннети Э.**, Масса и власть, пер. с нем., М., 1997, с. 364.*

[4] *Տե՛ս երկրորդ հղումը:*

ժամանակաշրջանում: Վեպի գլխավոր հերոսը՝ Լուցիոսը, որ կախարդություն էր սովորում, պատահմամբ փոխակերպվում է էշի, սակայն նա փոխվում է միայն ֆիզիկապես, պահպանում է իր խելքը և մարդկային բոլոր հատկանիշները՝ ինչպես Գրեգոր Զամզան Կաֆկայի «Կերպարանափոխություն» նովելում. «Բայց ես թեպետ իսկական ավանակ էի և Լուցիոսից դարձել էի անասուն, սակայն իմ զգացմունքներն ու բանականությունը մնացել էին մարդկային»[1]: Սակայն Լուցիոսի մարդ տեսակը ինքնին խնդրահարույց է՝ ինչպիսի մարդ է Լուցիոսը, և արդյոք արժանի է «մարդ» կոչմանը: Լուցիոսը էշի կերպարանքով ենթարկվում է ամեն տեսակ զրկանքների, ծեծվում անգթորեն՝ այդ բոլորը տանելով անտրտունջ և իշային համբերությամբ: Վեպի վերջում Լուցիոսը վերագտնում է իր մարդկային կերպարանքը: Ինչո՞ւ է Լուցիոսը կերպարանափոխվում, ինչո՞ւ հենց ավանակի, և ինչպե՞ս է նրան հաջողվում կրկին վերափոխվել մարդու: Ավանակը խորհրդանշական նշանակություն ունի տարբեր կրոնական, հատկապես քրիստոնեական պատմություններում, այն ասոցացվում է տաժանակիր աշխատանքի, տառապանքի և փրկության հետ[2]: Վեպերին և հեքիաթներին բնորոշ մոտիվ է *տառապանքի միջոցով մաքրագործման, բարոյական մաքրման մոտիվը*[3]*:* Վեպի վերնագիրը երկակի նշանակություն ունի. առաջին հայացքից թվում է, թե վերնագրի նշանակությունը պարզ է՝ վեպում տեղի է ունենում մարդու փոխակերպում անասունի, սակայն փոխակերպում է տեղի ունենում նաև հոգևոր պլանում: Լուցիոսը պատժվում է իր վարած անասնական կյանքի համար՝ վերջիվերջո անասունի վերածվելով: Ըստ հեղինակի, նա կենդանի էր դեռևս էշի վերածվելուց առաջ, թեև մարդու կերպարանքով. նա անառակ էր, լի էր պարապ հետաքրքրասիրությամբ: Վերածվելով ավանակի՝ Լուցիոսի ֆիզիկական տեսքն ու արժեհամակարգը վերջապես սկսում են համապատասխանել իրար: Սակայն նա տառապանքի միջոցով ազատագրվում է իր կենդանական բնությունից, հաղթահարում է իր կոպիտ կենդանական, զգայական սկիզբը, և արժանի դառնալով մարդ կոչմանը՝ վերագտնում է իր մարդկային կերպարանքը[4]:

Կաֆկայի «Կերպարանափոխություն» նովելում ներկայացվում է մարդու *գոյաբանական կերպարանափոխությունը կամ առհասարակ անկումը, ոչնչացումը*: Կաֆկայի հերոսն անվերջ փոքրացող մարդն է՝ ինչպես մաթեմատիկայում կան անվերջ փոքրացող միավորներ, ընդհուպ ոչնչացում: «Հաշվետվություն ակադեմիային» պատմվածքում կապիկը դաս է տալիս և ծաղրուծանակի է ենթարկում մարդուն. մարդու անկումն այնպիսի չափերի է հասել, որ կապիկը կարող է ներկայանալ որպես մարդ: Կաֆկայի շատ գործերում կերպարներն անուն չունեն, նրանք անդեմ են: «Դատավարություն» վեպի գլխավոր հերոսի՝ Յոզեֆի ազգանունը պարզապես «Կ.» է: Մեկ այլ ստեղծագործությունում՝ «Դղյակ»-ում, հերոսն ընդհանրապես զրկվում է անվանումից՝ կոչվելով միայն «Կ.» ինիցիալով: «Կերպարանափոխություն» նովելի հերոսը՝ միջատի վերածված Զամզան, սկզբում իր միջատային կերպարանքում ունի ահռելի չափեր. «Երբ նա վերջապես բարեհաջող կերպով դեպի դռան բացվածքը շրջվեց, պարզվեց, որ առանց այլևայլի ներս անցնելու համար նրա մարմինը շատ լայն է: Հայրն իր այժմյան տրամադրության մեջ, ինչ խոսք, նույնիսկ չէր էլ մտածում մյուս փեղկն էլ բացել…»[5]: Վերջին հատվածում, երբ Գրեգորի մահն արդեն մոտ է, նրան «զարմացնում էր իրեն սենյակից բաժանող հեռավորությունը, և չէր հասկանում, թե ինչպես էր ինքը այդքան թույլ լինելով քիչ առաջ անցել նույն ճանապարհն ու համարյա չէր նկատել…»[6]: Այսինքն, Գրեգորն այս ընթացքում գնալով

---

[1] *Տե՛ս* ***Կարապետյան Ար.,*** *Անտիկ գրականության քրեստոմատիա, մաս երկրորդ, Հռոմեական գրականություն, Եր., 1954, էջ 443:*

[2] *Տե՛ս* ***Фрейденберг О.М.****, Миф и литература древности, второе издание, исправленное и дополненное, М., 1998, с. 354.*

[3] *Տե՛ս https://thestrip.ru/hy/eyes/roman-kak-literaturnyi-zhanr-roman-literaturnyi-zhanr/*

[4] *Տե՛ս https://perviydoc.ru/v1079/анализ_романа_апулея_метаморфозы_или_золотой_осел*

[5] *Տե՛ս.* ***Կաֆկա Ֆ****, Դատավարություն, Եր., 1991:*

[6] *Տե՛ս նույն տեղում:*

փոքրանում է, քանզի հետդարձի ճանապարհին նրան ավելի մեծ է թվում այն հեռավորությունը, որ քիչ առաջ հաղթահարել էր: Մահվանից հետո Գրեգորն էլ ավելի է փոքրանում. դրա մասին է փաստում այն, որ աղախինը շատ հեշտությամբ ավելով հրում է նրան. «Քանի որ այդ պահին երկար ավելը ձեռքին էր…. թեթևակի բզեց Գրեգորին ու տեղից անարգել հրելուց հետո կենտրոնացավ»[1]: Նրա՝ ֆիզիկապես փոքրանալու մասին են փաստում նաև մի շարք այլ դրվագներ. «Քաջ ծանոթ չորս պատերը իրենց մեջ էին առել նրա **փոքր**, բայց հարմարավետ սենյակը»[2], նշված է 171-րդ էջում, իսկ արդեն 185-րդ էջում՝ «Սակայն բարձր, **ընդարձակ** սենյակը, ուր ինքն էր արդեն հինգ տարի բնակվել…»[3]:

Հետաքրքրականը Կաֆկայի հերոսի մասին այն է, որ նա չի մտածում վերափոխվել ետ՝ դեպի իր մարդկային մարմինը: Նա փնտրում է լուծումներ՝ արդեն իր նոր մարմնով գոյատևելու համար: Եվ անշուշտ, նա ստիպված է հարմարվել կյանքի նոր պայմաններին. ուտիճի վերածված Զամզան, փորձելով երկու ներքևի ոտիկների վրա կանգնել, ինչպես նա անում էր որպես մարդ, ձախողվում է, նա պետք է սովորի տեղաշարժվել և ապրել որպես միջատ: Այսպիսով՝ հեղինակը ցանկանում է ցույց տալ, որ կյանքի նոր հանգամանքներում գոյատևելու համար մարդը ստիպված է լինում հրաժարվել մարդկայինից: Ինչքան էլ որ Զամզայի կերպարանափոխությունը ֆիզիկական է, այնուամենայնիվ, նա սկսում է հարմարվել իր նոր կերպարանքին և անգամ հաճույք ստանալ դրա որոշ ասպեկտներից՝ նա սիրում է մտնել մահճակալի տակ, վազվզել պատերի վրայով, կախվել առաստաղից: Ընթերցողը ներկա է գտնվում Զամզայի հետևողական կղզիացմանը, մարդկային միջավայրից կտրվելուն: Նաբոկովը այս մասին գրում է. «Կաֆկայի մոտ աբսուրդ հերոսը բնակվում է աբսուրդ աշխարհում, բայց հուզիչ և ողբերգականորեն դեսուդեն է նետվում՝ ջանալով դուրս պրծնել դրանից՝ դեպի մարդկային էակների աշխարհը, և հուսահատ մահանում է»[4]: Իսկ ի՞նչն է Գրեգոր Զամզայի կերպարանափոխության պատճառը: Նախ պետք է նշել, որ անգամ ուտիճի վերածված Զամզային ավելի շատ հետաքրքրում է ոչ թե իր հետ կատարված անհավատալի դեպքը, այլ այն, որ նա ուշանում է աշխատանքից: Զամզայի կերպարը շատ նման է ռուս գրականության մեջ հայտնի «փոքր մարդու» կերպարին, կերպար, որ չափազանց կենցաղային է, զուրկ նպատակներից և ամբիցիաներից: Ինչպես Ապուլեուսի ստեղծագործության մեջ, այստեղ ևս գլխավոր հերոսի մասին կարելի է ասել, որ նա կենդանու է նման դեռ նախքան իր ֆիզիկական փոխակերպումը:

Նովելի համարձակ ինտերպրետացիաներից է քավարանի գաղափարը, ըստ որի՝ Գրեգորը կերպարանափոխության է ենթարկվում՝ համաձայն իր արժեհամակարգի, և որ նրան էությամբ համապատասխան ուտիճի կյանքը նրա քավարանային կյանքն է: Եվ ինչպես «Դատավարություն»-ում հերոսը մեռավ շան նման, այնպես էլ այստեղ սատկած ու չորացած ուտիճին տարան և թափեցին[5]:

Պետք է նշել, որ կերպարանափոխությունը նովելում վերաբերում է ոչ միայն Զամզային, այլև նրա ընտանիքի անդամներին, ովքեր սկսում են ավելի ու ավելի անհանդուրժող գտնվել Զամզայի հանդեպ, քանի որ վերջինից այլևս ֆինանսական շահ չունեին:

Մարդու *անկման գաղափարը* շատ լավ է արտահայտված Կաֆկայի «Պատժիչ գաղութում» պատմվածքում. վզկապով դատապարտյալի կերպարն ավելի շատ նմանվում է անասունի, քան մարդու. կերպարը մի քանի անգամ համեմատվում է շան հետ: Չնայած որ պատմվածքում կերպարանափոխության երևույթն ինքնին բացակայում է, սակայն հանձին այս կերպարի՝ հեղինակը ցույց է տալիս, որ մարդը սկսել է ոչնչով չտարբերվել կենդանուց: Ահա այսպիսին է 20-րդ դարի մարդը՝

---

[1] *Նույն տեղում, էջ 209:*

[2] *Տե՛ս.* ***Կաֆկա Ֆ****, Դատավարություն, Եր., 1991, էջ 171:*

[3] *Նույն տեղում, էջ 185:*

[4] *Տե՛ս https://168.am/2013/10/20/289996.html*

[5] *Տե՛ս https://grqamol.am/article/verlucelov-kafkayi-kerparanapoxutyuny/*

անդեմ, անասնական պահվածքով, ով լրիվ անտարբեր է շրջապատում և իր հետ կատարվող իրադարձությունների նկատմամբ:

Նմանատիպ մոտիվ ենք տեսնում Էժեն Իոնեսկոյի «Ռնգեղջյուրը» պիեսում: Իոնեսկոյի մեկնաբանությամբ՝ *կերպարանափոխությունը մարդու անհետացման ձևերից մեկն է:* «Ռնգեղջյուրը» պիեսում մարդիկ համատարած վերածվում են ռնգեղջյուրների: Ինչո՞ւ հենց ռնգեղջյուր. միանշանակ պատասխան չկա, կարելի է միայն ենթադրություններ անել, քանի որ գործ ունենք աբսուրդի գրականության հետ: Ի զարմանս Բերանժեի՝ պիեսի գլխավոր հերոսի, ռնգեղջյուրները հոտ են կազմում, մինչդեռ իրենց բնույթով մենակյաց կենդանիներ են: Մարդը, որ կոչված է անհատ լինելու, հանկարծ կարող է դառնալ անկանոն ամբոխի մի մաս: Առաջին ռնգեղջյուրը ինքնին որևէ վնաս չի հասցնում, երկրորդն արդեն տրորում է կատվի: Ռնգեղջյուրների քանակին զուգընթաց մեծանում են նաև նրանց կատարած ավերածությունները: Մարդը, որը որպես անհատ կարող է վտանգ չներկայացնել, խառնվելով մեծ խմբին, դառնում է վտանգավոր:

Իոնեսկոն ցույց է տալիս, թե ինչպես արտաքուստ առաջադեմ հասարակությունում կարող է ծնվել և լայն տարածում գտնել բոլորովին անընդունելի և աբսուրդ գաղափար: Սկզբում այն ընկալվում է որպես ծայրաստիճան անընդունելի, սխալ և ոչ մարդկային, սակայն ժամանակի ընթացքում մարդիկ սովորում են դրան՝ քիչ-քիչ այն ընդունելով, և որոշ կետից սկսած անգամ իրենք են դառնում այդ գաղափարի կրողները, փոխակերպությունը դառնում է ցանկալի, քանի որ մեծամասնությունն արդեն այդպիսին է: Ճշմարտությունն իր տեղը զիջում է համատարած քաոսին, որտեղ կարևոր է լինել միայն այնպիսին, ինչպիսին մյուսներն են, իսկ թե որտեղ է ճշմարտությունը, այլևս կարևոր չէ. «Նա բառացիորեն ասաց. «Պետք է գնալ ժամանակի հետ համընթաց»[1],- ասում է Դեզին ռնգեղջյուր դառնալու ցանկություն հայտնած Բոտարի մասին: Կա միայն մեկ ճշմարտություն՝ մեծամասնության ուժը: Այս առումով հետաքրքիր է դիտարկել մի հատված «Լասարիլիո Տորմեսցու կյանքը» վեպից. «…եթե բոլորն ինձ ձուկ էին համարում, ինքս էլ որոշեցի ինձ այդպիսին համարել… ձայն բազմաց՝ ձայն աստծո, ինչպես ասում են»:

Իոնեսկոն ցույց է տալիս, թե ինչպես է մարդը, կորցնելով իր անհատականությունը, դառնում մոխրագույն ամբոխի մի մաս և առաջնորդվում ոչ թե սեփական, այլ ընդհանուր գիտակցությամբ. «Իմ պարտքն ինձ հարկադրում է հետևել իմ պետերին ու ընկերներին՝ դա լինի լավ, թե վատ ապագայի ակնկալությամբ»[2]: Պիեսը այլ տեսանկյունից դիտարկելիս կարելի է նաև զուգահեռներ անցկացնել դրա և Կաֆկայի «Կերպարանափոխության» միջև: Մարդն այնքան է ընկղմված արդյունաբերական դարի խժդժությունների մեջ, որ անգամ չի նկատում իր շուրջը կատարվող սարսափելի փոփոխությունները. «Այ քեզ բան: Այս անգամ ես իրոք նրան ազատում եմ աշխատանքից»[3],- ասում է պարոն Թիթեռը, երբ բացահայտում է, որ պարոն Ցուլը վերածվել է ռնգեղջյուրի: Հատկանշական են պարոն Թիթեռի և պարոն Ցուլի անվանումները, որոնք, անշուշտ, պատահական չեն ընտրված:

Ռնգեղջյուրները, ըստ էության, պիեսում ներկայացնում են ֆաշիստներին, թեև հեղինակը զերծ է մնում կոնկրետացումներից. «Ես պարզապես բացառիկ կերպով պատկերել եմ կոլեկտիվ փոխակերպության պրոցեսը»[4]:

Այսպիսով, կերպարանափոխությունը գրականության մեջ միատարր երևույթ չէ: Գրական այս հնարն օգտագործվում է տարբեր նպատակներով և հանգում տարբեր արդյունքների: Կերպարանափոխության մոտիվները բազմազան են՝ կերպարանափոխությունը կարող է լինել

---

[1] *Տե՛ս* ***Փանոսյան Ս.****, XX դարի արտասահմանյան դրամատուրգիա, ժողովածու, հ. 2, Եր., 1986, էջ 351:*

[2] *Տե՛ս նույն տեղում, էջ 355:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 311:*

[4] *Տե՛ս* ***Куликова И.****, Философия и искусство модернизма, М., 1980, с. 192.*

փախուստի միջոց, ինչն առավել հաճախ նկատվում է առասպելներում կամ հեքիաթներում: Բոլորովին այլ, հետաքրքրական ասպեկտ է կերպարանափոխությունը՝ որպես *մաքրագործման, բարոյական մաքրման* միջոց, որտեղ հերոսն իր մարդկային տեսքին է վերադառնում միայն այն ժամանակ, երբ նրա հոգին արդեն համապատասխանում է արտաքինին՝ մարդուն: Չնայած որ Անտիկ շրջանի գրականության մեջ առկա է նաև մարդու անկման մոտիվը, կերպարանափոխությունը մեծամասամբ նշանակում է *կատարելագործում, փոխակերպում* ավելի վեհ նյութի կամ տեսակի: Կերպարանափոխությունը կարող է արտահայտել կատարելագործմանը բոլորովին հակադիր երևույթ՝ այն մարդու *անկման, փոքրացման, անհետացման* ձևերից մեկն է. վերջին մոտիվները, որոնք սերտորեն կապված են միմյանց հետ, հիմնականում կարելի է տեսնել 20-րդ դարի մոդեռնիստական գրականության նմուշներում: 20-րդ դարի մարդու մասին պատկերացումը ամբողջովին հոռետեսական է, կերպարանափոխությունը ընթանում է ցավալի տեսքով, մարդը գլորվում է դեպի անդունդը, կորցնում իր դերն ու կոչումը: «Բոլորը խելագարվել են: Աշխարհը հիվանդ է: Բոլորը հիվանդ են»,- ասում է Իոնեսկոյի պիեսի հերոսը՝ Բերանժեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Առաքելյան Ա.,** Հռոմեական գրականության պատմություն, երկրորդ բարեփոխված հրատարակություն, Եր., 1975:
2. **Թոփչյան Ա.**, Անտիկ միջնադարյան Վերածննդի գրականություն, I հատոր, Անտիկ գրականություն, Եր., 1990:
3. **Կարապետյան Ար.,** Անտիկ գրականության քրեստոմատիա, մաս երկրորդ, Հռոմեական գրականություն, Եր., 1954:
4. **Փանոսյան Ս.,** XX դարի արտասահմանյան դրամատուրգիա, ժողովածու, հ. 2, Եր., 1986:
5. **Կաֆկա Ֆ.,** Դատավարություն, Եր., 1991:
6. **Куликова И.**, Философия и искусство модернизма, М., 1980.
7. **Фрейденберг О.М.**, Миф и литература древности, второе издание, исправленное и дополненное, М., 1998.
8. **Каннети Э.,** Масса и власть, пер. с нем., М., 1997:
9. https://thestrip.ru/hy/eyes/roman-kak-literaturnyi-zhanr-roman-literaturnyi-zhanr/
10. https://perviydoc.ru/v1079/анализ_романа_апулея_метаморфозы_или_золотой_осел
11. https://168.am/2013/10/20/289996.html
12. https://grqamol.am/article/verlucelov-kafkayi-kerparanapoxutyuny/

ՀՏԴ 82-2

Վովա Արզումանյան
Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ
Արվեստի պատմության, տեսության և կառավարման ֆակուլտետ
«Սցենարադրամատուրգիական արվեստ» բաժնի 1-ին կուրսի ուսանող
vovaarzumanyan200@gmail.com

Գիտական ղեկավար՝
արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Նարինե Սարգսյան

ԱԲՍՈՒՐԴԻ ԴՐԱՄԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր՝ *գրականություն, ժամանակակից դրամատուրգիա, աբսուրդի դրամա, թատրոն*

Հոդվածում անդրադարձել ենք հայ ժամանակակից դրամատուրգներ Պերճ Զեյթունցյանի, Աղասի Այվազյանի, Դավիթ Մուրադյանի, Գուրգեն Խանջյանի, Կարինե Խոդիկյանի, Էլֆիք Զոհրաբյանի աբսուրդի դրամաներին, դրանց կառուցվածքային առանձնահատկություններին: Ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հայ աբսուրդի դրաման դեռ զարգացման փուլերով է ընթանում՝ առաջ մղելով նոր ոճ և գաղափարական ասելիք:

Вова Арзуманян
Ереванский государственный институт театра и кино. Факультет истории искусства, теории и менеджмента. Студент 1 курса сценарно-драматургического искусства

ПРОЯВЛЕНИЯ ДРАМЫ АБСУРДА В АРМЯНСКОЙ СОВРЕМЕННОЙ ЛИТЕРАТУРЕ

Ключевые слова: *литература, современная драматургия, драма абсурда, театр*

В статье мы обратились к драмам абсурда современных армянских драматургов Перча Зейтунцяна, Агаси Айвазяна, Давида Мурадяна, Гургена Ханджяна, Карине Ходикян, Эльфика Зограбяна, а также их структурным особенностям. Исследование предполагает, что армянская драма абсурда все еще развивается, продвигая новый стиль и идеологический посыл.

Vova Arzumanyan
Yerevan State Institute of Theatre and Cinematography
Faculty of History, Art Theory and Management

1st year student at the Art of scriptwriting and dramatic stage composition

MANIFESTATIONS OF THE ABSURD DRAMA IN MODERN ARMENIAN LITERATURE

***Keywords**: literature, modern dramaturgy, absurd drama, theater*

In the article, we have touched upon the absurd dramas by modern Armenian playwrights Perch Zeituntsyan, Aghasi Ayvazyan, David Muradian, Gurgen Khanjyan, Karine Khodikyan, Elfik Zohrabyan, and their structural features. The study suggests that the Armenian absurd drama is still developing, pushing forward a new style and ideological message.

Ներածություն

Երկու համաշխարհային պատերազմների ու տեղի ունեցած հեղափոխությունների արդյունքում եվրոպական թատրոնում և դրամատուրգիայում ձևավորվեց աբսուրդիստական ուղղությունը՝ մարդկային կյանքի արժեքների ու չափանիշների առանձնահատուկ ընկալում առաջ բերելով և նոր փիլիսոփայություն ձևավորելով այդ ժամանակաշրջանում:

Աբսուրդի դրաման ներկայացավ որպես կյանքի անհեթեթ երևույթների, իրականության մեջ տեղի ունեցող անորոշ, անիմաստ, անտրամաբանական խոսքի, գործի ու արարքների արտահայտություն: Դրանք հաճախ հասնում են զավեշտների և կարծես ունեն մեկ գլխավոր նպատակ՝ հասարակության կողմից «ընկալվող և ընդունվող» կյանքի միտումնավոր արմատական քանդումն ու դրանով մարդկանց մեջ անհանգստություն առաջացնելը: «Այսօր գրականության տեսաբանները հակված են աբսուրդի դրամայի ակունքը տեսնել Վիլյամ Սարոյանի դրամատուրգիայում»[1]: Հայ իրականության մեջ լինելով խորը չուսումնասիրված ուղղություն՝ աբսուրդի դրամայի ազդեցության մասին հստակ եզրակացություններ անելը դժվար է, որոշ դեպքերում էլ՝ ոչ նպատակային:

Աբսուրդի դրաման, որը ձևավորվել է անցյալ դարի 50-60-ականներին, կառուցվածքային տարատեսակ ձևերով է ներկայանում և եզակի դեպքերում հայտնվում թատրոնի բեմում: Սա պայմանավորված է դրամայի թեմատիկ, գաղափարական հիմնանյութով և կառուցվածքով: Գուցեն անընկալելի է այսօրվա հանդիսատեսին աբսուրդի թատրոնը, սակայն փաստն այն է, որ 2000-ականներին նույնպես գրվել, բեմադրվել են աբսուրդի դրամաներ, սիրվել և ընդունվել թատերասերների կողմից: Ընդհանրապես «դրամայում հերոսի խոսքի դերը բացառիկ մեծ է, քանի որ նրա օգնությամբ պիտի առաջ շարժվի գործողությունը»[2], և այս առումով աբսուրդի դրամայում նույնպես գործող անձի խոսքի դերը մեծ է, բայց դրան գերազանցում են դադարները, շրջադարձային պահերը, որոնք կարող են ստեղծել մթնոլորտ, որտեղ ամեն ինչ խառնված է, բայց նպատակային՝ վեր հանելով այնպիսի խնդիրներ, որոնք գուցե տեսադաշտից դուրս են կամ չունեն հստակ պատասխաններ: Իսկ լեզուն աբսուրդի դրամայում կարևորվում է որպես հաղորդակցման միջոցի անօգուտության գաղափար: Այս ամենի հետ հարկ է նշել, որ աբսուրդիստներն ունեն լեզուն օգտագործելու լիակատար ազատություն:

Աբսուրդի դրամայի հերոսներն ունեն ներքին «ես»-ի երկակիություն: Նրանք նաև շատ դեպքերում

---

[1] ***Ավանեսյան Ա.,*** *Արդի հայ դրամատուրգիան 1991-2008 թթ., Երևան, «Գրական էտալոն» հրատ., 2011, էջ 67:*

[2] ***Ասլիբեկյան Ա., Գասպարյան Վ.,*** *Սցենարադրամատուրգիական արվեստ. Գրական վարպետություն, Երևան, «Ղիշա» հրատ., 2022, էջ 13:*

տարօրինակ անուններ են ունենում և միահյուսում են այն հիմնական շեշտադրումները, որոնք դրամատուրգն է հիմքում ունեցել: Այս մոտեցումները չեն մղում եզրակացնելու, որ աբսուրդի դրաման չունի գեղագիտական հենք: Ընդհակառակը՝ այն առանձնանում է իր կառուցվածքային տարրերով, նպատակային հարցադրումներով, որոնք վերծանում է մարդը:

20-րդ դարի թատրոնի ականավոր գործիչներից ֆրանսիացի դրամատուրգ, պոետ և դերասան Անտոնեն Արտոն «Դաժանության թատրոն» ուսումնասիրության մեջ գրել է, որ «Հրաժարվելով մարդու հոգեբանությունը, բնավորությունը և վառ ընդգծված զգացմունքներն արտահայտելուց՝ թատրոնը կդիմի նաև համապարփակ մարդուն և ոչ թե օրենքներին հնազանդ, կրոններից և պարտադրանքներից խեղված սոցիալական մարդուն»[1]: Անտոնեն Արտոյի այս տողերը հաստատում են, որ աբսուրդի թեմատիկ և բովանդակային տարրերը ժամանակի ընթացքում են ձևավորվել և **ձևավորվում՝ կյանքի և մարդու բանականության շուրջ ընթացող փոփոխությունների ընթացքում** *(ընդգծումը մերն է- Վ.Ա.):* Այդ փոփոխությունները երբեմն-երբեմն բախումներ են առաջացնում մարդու և աշխարհի միջև, ստեղծում անհամաձայնության մթնոլորտ և դրանից ելքեր փնտրելու տարբերակներ առաջարկում: Ընտրությունը հենց մարդն է՝ իր հոգեվիճակով, քայլերով, մտքի ու ներքին ապրումների ամբողջականության մեջ: Սակայն ինչպես նկատում ենք, հայ արդի դրամատուրգիայում շատ պիեսներ կան, որոնք կառուցվում են էկլեկտիկ տարրերով և ներկայանում են որպես աբսուրդի դրամա, ինչը խառնաշփոթ է առաջացնում այս ուղղությունը հստակ պատկերացնելու համար:

Ինչպես հայտնի է աբսուրդի գրականությունը սկիզբ է առել էքզիստենցիալիզմից, «իր ներքին փիլիսոփայական տիրույթներում ձևավորվում և ինչ-որ չափով առանձնանում է վերջինիցս: Էքզիստենցիալիզմի փիլիսոփայությունը կյանքի ընկալման ու մեկնաբանման տարբեր տեսակետներ, մոտեցումներ է առաջ քաշում, և այդ մոտեցումներից մեկը՝ աբսուրդն իր կենսափիլիսոփայական ըմբռնումների զանազան դրսևորումների և ձևերի մեջ հստակորեն տարբերվում է»[2]: Այս ամենին զուգահեռ նշենք, որ դրամատուրգները բացի հիմնական կառուցվածքային չափանիշներից, հնարավորություն ունեն իրենց տեսանկյունից նորարար ձևապատումներ անել՝ սեփական դրամատուրգիական երկը զարգացման աստիճանակարգով հասցնելով գաղափարական նոր փուլ՝ հեղինակային նորարարություն: Այդ պարագայում այուժեն ինքնատիպ հղացք կունենա, որը կարևոր նախապայման է և՛ ընթերցանության նյութի, և՛ ներկայացում բեմադրելու համար, քանի որ «բեմում փնտրում ենք մի բան, որ չի տալիս իրական գործերի ու գործնական գաղափարների աշխարհը: Այստեղ են մղվում իրականությանը ներհակ հոգիները, ոմանք ոգու քաղցից ու նպատակի անորոշությունից, ոմանք էլ մի տեղից պետք է կյանք մտնեն և թվում է՝ ամենաթույլ դիմադրությունը այդտեղ է ի փրկություն նրանց, «ովքեր դավաճանել են իրենց, փախչում են կյանքի բարդ խնդիրներից և ջանում են ինքնախաբեության ու պատրանքների մեջ գտնել սեփական անօգնականության ու թուլության արդարացումը» (Ժան-Լուի Բարրո): Այսպես է մտածում մի իմաստուն արտիստ, որ շատերի կյանքում է տեսնում այս ինքնավտարանդի վիճակը»[3]:

Հայ ժամանակակից դրամատուրգներն ու աբսուրդի դրաման

Հայ արդի աբսուրդի դրաման քննելիս նախ ուշադրություն ենք դարձնում դրա կառուցվածքին ու հիմնական առանձնահատկություններին: Հիմնականում աբսուրդի դրամայում գործող անձն առարկայացվելուց բացի նաև մասնակիանում է: Այս համատեքստում ճիշտ կլինի ընդգծել, որ

---

[1] ***Тайнен Кеннет,*** *На сцене и в кино, Москва, 1969, стр. 68.*

[2] ***Ավանեսյան Ա.,*** *նշվ.աշխ.,էջ 70:*

[3] ***Հովհաննիսյան Հ.,*** *Դերասանի արվեստի բնույթը, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատ., 2002, էջ 307:*

երևույթների հետ տեղի է ունենում ճիշտ հակառակը: Սակայն, բացի այս գործոններից, անհատականության առանձնակի փոփոխություններ են ի հայտ գալիս, այսինքն գործող անձը շատ դեպքերում ներկայանում և գործում է իր զբաղմունքով, այլ ոչ թե անունով: Եվ սա կարևոր նախապայման լինելով լուրջ ազդեցություն է ունենում ասելիքի խորության տեսանկյունից: Աբսուրդի դրաման նաև պետք է ունենա համապատասխան միջավայր և մթնոլորտ, հավատից զուրկ հերոսներ, իմաստազուրկ իրավիճակներ, որոնք տրամաբանական հնարավորություններ են ստեղծում՝ իրավիճակն աստիճանաբար զարգացնելու մտածված մեթոդներով և դրանք հանգուցալուծման հասցնելու սուբյեկտիվ մեկնաբանությամբ:

Պերճ Զեյթունցյանն իր «Մի նայիր հայելուն»[1] դրամայի առաջաբանում մեջբերել է Հերման Հեսսեի «Տափաստանի գայլը» վեպից մի հատված, որը կարծես հուշում է դրամայի կարևոր ասելիքի մասին: Թյուրըմբռնում կա, որ զավեշտալի դեպքերը չեն կարող աբսուրդի հիմնական տարրերը լինել, սակայն այս դրաման այդօրինակ մոտեցմամբ է կառուցված: Դրամայի հերոսը բանկի աշխատող Վիգենն է, որն ապահով կյանք է վայելում, սակայն միշտ հավատում է ամեն ինչին, որն էլ շարունակականություն է հաղորդում դրամայի զարգացման ընթացքին և զավեշտալի նոր պահեր ստեղծում:

ԱՆԾԱՆՈԹ — Ո՞վ ես դու:

ՎԻԳԵՆ — Ես հարցնելու փոխարեն, դո՞ւ ես հարցնում:

ԱՆԾԱՆՈԹ — Ասա, ո՞վ ես:

ՎԻԳԵՆ — Ե՞ս… Վիգեն Աստվածատրյանն եմ:

ԱՆԾԱՆՈԹ — Բայց ես եմ և՛ Վիգենը, և՛ Աստվածատրյանը: Դու ինչո՞ւ ես խլել իմ անուն-ազգանունը:

ՎԻԳԵՆ — Ցույց տուր անձնագիրդ:

ԱՆԾԱՆՈԹ — Առավոտ շուտ ի՞նչ անձնագիր: Այնտեղ, դարակի մեջ է:

ՎԻԳԵՆ — Գնա բեր:

ԱՆԾԱՆՈԹ — Ո՞նց բերեմ… Եթե դու հայելու մեջ ես, ես ինչպե՞ս առանձնանամ: Պետք է միասին անհետանանք: Կարծեմ դա է հայելու օրենքը:

ՎԻԳԵՆ — Սպասիր… ո՞վ է հայելու մեջ: Ե՞ս…

ԱՆԾԱՆՈԹ — Չէ, բա ես… Իհարկե, դու:

Այս դրաման հետաքրքիր կառուցվածք ունի այն առումով, որ հերոսը հայելու մեջ իր արտացոլանքի միջոցով է սկսում գործողություններն ու հայելու ազդեցությունից կարծես կործանման և մտավոր քայքայման ճանապարհով գնում: Այն, որ «այս պիեսի խնդիրը մարդու ֆիզիկական գոյության և ներքին՝ հոգևոր տարածքի կապն է»[2], անառարկելի է, սակայն դրամատուրգը մեկ այլ կարևոր խնդիր է դրել՝ մարդու ինքնադիտումը սեփական մտքերի հորձանուտում, չէ՞ որ մարդն իր էության հետ զրուցելիս նոր բացահայտումներ է անում, որը կարող է հասնել վախի աստիճանի: Եվ այդ տրամադրություններն են գործողություններին ինքնատիպ ընթացք հաղորդում «Մի նայիր հայելուն» դրամայում:

Աղասի Այվազյանի դրամատուրգիան հուշում է, որ աբսուրդի գեղագիտությունը զուտ բանաձևում չէ, և ժամանակաշրջանը կարևոր նշանակություն ունի հեղինակի մտածական աշխարհի և անձի ներաշխարհի զուգորդման առումով: Աբսուրդի գեղագիտության հստակ տարրերն Աղասի Այվազյանի դրամատուրգիայում նկատելի էին դեռևս 1985 թվականին գրված «Առլեզ» և 1995 թվականին՝ «Կրեսոսի թագավորությունը», «Ժանգառք» դրամաներում: Թվարկածներս թե՛

[1] *«Դրամատուրգիա» հանդես, 2006 թ., թիվ 11-12, էջ 5:*

[2] ***Ավանեսյան Ա.,*** *նշվ.աշխ., էջ 79:*

կառուցվածքային առանձնահատկություններով, թե՛ այլաբանական ենթաշերտերով ազատորեն կարող են դասակարգվել աբսուրդի դրամաների շարքին: Այս ամենին զուգահեռ, 2000 թվականից հետո, Աղասի Այվազյանի դրամատուրգիան նոր փուլ մտավ հատկապես աբսուրդի յուրատիպ մի գեղագիտությամբ, որտեղ փիլիսոփայությունն ու իրականությունը ներկայանում են զուգորդված և արտացոլում են հաճախ վարագույրի հետևում հայտնվող կյանքի այնպիսի երևույթներ, որոնք տագնապների առիթ են դառնում՝ սեփական անձը ճանաչելու, գնահատելու և այլն:

Այվազյանի «Ինքնասպան նավը», «Դեկորներ» (2002), «Համակարգիչ» (2003), «Շնաձկի ստամոքսը» (2006), «Գոյություն» (2007) պիեսներում հստակ երևում է ժամանակաշրջանի փոփոխությունն ու ազդեցությունը, ինչ-որ տեղ էլ՝ անորոշությունը: Դիտարկենք «Ինքնասպան նավը» պիեսից մի հատված.

ՆԱՎԱՊԵՏ — (նայում է լուսացույցի մեջ: Ուժ տալու համար դալկացած Երգչուհուն): Տեսնո՞ւմ ես այն լույսը… Նա մեծանում է, փարթամանում, սրբագործվում: Դա հավերժությունն է: Դու գիտեի՞ր այդ…

ԵՐԳՉՈՒՀԻ — Մինչև հիմա հավերժությունը վերացական հասկացություն էր ինձ համար:

ՆԱՎԱՊԵՏ — Ոչ, դա առարկայական է: Դա մեծագույն առարկան է: Մնացածը նրա փոշին է… Եվ նա անխուսափելի է…

ԵՐԳՉՈՒՀԻ — (համերաշխության եզր ունենալու միտումով: Բռնաձիգ աշխուժությամբ): Քիչ հետո ես այլ մարդ կդառնամ… Եթե կարողանամ միջանկյալ վիճակներից խուսափել:

ՆԱՎԱՊԵՏ — Դու մեղք չե՞ս… Անընդհատ ցավերի մեջ լինել:

ԵՐԳՉՈՒՀԻ — Դա կհեշտացներ իմ վճռի կայացումը: (Սրբում է աչքերը):

ՆԱՎԱՊԵՏ — Մենք երկուսով ենք:

ԵՐԳՉՈՒՀԻ — (ուշացումով): Երկուսով ենք: Որը և…

ՆԱՎԱՊԵՏ — Ի՞նչ՝ որը և…

ԵՐԳՉՈՒՀԻ — Եթե ես չհամաձայնեի, էլի նո՞ւյնը պիտի լիներ քո պարագայում:

ՆԱՎԱՊԵՏ — Նո՛ւյնը, անպայման նույնը:

ԵՐԳՉՈՒՀԻ — (դանդաղ, ձգելով) : Իհարկե, միտքը քո մեջ է հղացել, վիճակը քո մեջ է հասունացել:

ՆԱՎԱՊԵՏ — Մենք նույն վիճակն ենք ապրել:

ԵՐԳՉՈՒՀԻ — Նման վճիռ միայն մի հոգու մեջ կարող էր առաջանալ:

ՆԱՎԱՊԵՏ — Մի՞թե քո մեջ էլ նույնը չի կատարվել… Պարզապես դու միայն մի թևի վրա ես գտնվել:

ԵՐԳՉՈՒՀԻ — Իմ մեջ երբեք չի առաջացել այդ միտքը, և երբեք չեմ հասունացրել այն: Ես պարտադրված եմ: Մենք շատ տարբեր ենք: Մեր սերն է ընդհանուր:

ՆԱՎԱՊԵՏ — (համբուրում է Երգչուհու ձեռքը: Մտերմիկ): Տարբե՞ր ենք… Մի՞թե վերջը տարբեր է: Բոլորս մեկնում ենք դեպի այդ երանելի գոյությունը, կամ՝ բոլորս հեռանում ենք այս անտրամաբան, նսեմացուցիչ գոյությունից, այս վախվորած գոյությունից, այս խեղկատակի վիճակից, որը մեզ պարտադրել է չգիտես, թե ով:

ԵՐԳՉՈՒՀԻ — Ես կուզենայի դեռ այդ խաղի մեջ մնալ՝ թող որ նսեմացուցիչ, թող որ վախվորած… Ուրախ էր, հաճելի, քաղցր… (Ձայնը խզվում է: Բռնում է կոկորդը և չի կարողանում ոտքի վրա մնալ: Նավապետը վերցնում է նրան ձեռքերի վրա և տանում, զգուշորեն պառկեցնում բազմոցին:)

ՆԱՎԱՊԵՏ — Ջո՞ւր տամ… Խմի՞չք…

ԵՐԳՉՈՒՀԻ — (սղաձայն, խեղդվելով): Մորֆի:

Հատկանշական է, որ գաղափարն այս ամենից արագորեն վերաճում և հասնում է լայն տարածքներ, որտեղ իշխում է մարդկային տրամաբանությունը, երևույթներին այլ տեսանկյունից

նայելու խնդիրը:

«Գոյարարը մեծ առևտրական է... Նա ոչինչ ձրի չի տալիս... Հանճարը, երջանկությունը, գեղեցկությունը Աստծո անշահախնդիր ողորմածությունը չէ, դրա դիմաց հատուցում է պահանջվում»[1],-կարդում ենք «Ինքնասպան նավը» պիեսում, որտեղ նույնպես կարևոր ճշմարտություն են փնտրում հերոսները, որոնք նույնպես կյանքի ճանապարհ են անցել և կարծես սեփական փորձից են վստահ խոսում: Այվազյանի աբսուրդը ինչ-որ չափով երևակայական լուրջ խնդիրներ է առաջ բերում՝ այդպիսով նաև համընդհանուր թեմաներ քննելով իր պիեսի հերոսների խոսքի և գործողությունների միջոցով. «ժանրային առանձնահատկություններին համաձայն՝ այն է տրագիֆարս, հեղինակն այլ ընթացք է տալիս գործողություններին»[2]:

Այս համատեքստում նշենք նաև գոյության իմաստը, որն այդպես էլ չեն հասկանում «Դեկորներ» պիեսի հերոսները՝ Առաջին մարդը, Երկրորդ մարդը, Երրորդ մարդը: Վերջիններս անհասկանալի նպատակներով են հայտնվել նույնչափ անկողմնորոշելի պայմաններում:

Աբսուրդի գեղարվեստական տարածության մեջ նշանավորվում է նաև **Դավիթ Մուրադյանի «Ցույց տվեք ձեր տոմսակը»**[3] պիեսը, որը բաժանված է երկու հատվածի՝ I-III-V և II-IV-VI պատկերների հաջորդականությամբ: Պայմանական գործողությունները մղում են հետաքրքիր կառուցվածքային ընթացքով: Պատկերների տրամաբանական զարգացմանը զուգընթաց պիեսի գործող անձինք կարծես հասնում են իրենց «ուզածին» (Այս դեպքում՝ հասնում են այն կայարանին, որտեղ նստում են գնացք): Պատկերները կարծես փոխլրացնում են իրար և «ստեղծվում է կյանքի կարուսելը, որն անընդհատ նույն պտույտն է կատարում»[4]: Դավիթ Մուրադյանը կարծես ընդգծում է մարդու՝ կյանքի շրջապտույտում հայտնվելն ու կարծես դրանով դրամատուրգը հերքում է կյանքում ինչ-որ բան փոխելն այդ կյանքի անխուսափելի ու անկանխատեսելի պտույտի մեջ.

ՊԵՏԵՐ – Չվախենա՛ք, ես ահաբեկիչ չեմ, ընդհակառակը, չափից ավելի բարի մարդ եմ:

ԱՆՆԱ — (ետ է քաշվում՝ նրան ճամփա տալով): Ուրեմն, ձեզ սպասում են բոլոր հնարավոր դժբախտությունները:

ՊԵՏԵՐ – Իսկապե՞ս... Բայց նախ և առաջ ինձ սպասում է փառքը: Թույլ տվեք: (Անցնում է:) Շնորհակալություն... (Ուսից իջեցնում է պայուսակը:) Իսկ դուք որտե՞ղ եք նստում:

ԱՆՆԱ—Ինչպես տեսնում եք, ես կանգնած եմ:

ՊԵՏԵՐ — (արտասանում է): «Աչքերը հաճախ են խաբում, սակայն սիրտը, որպես կանոն՝ երբե՛ք»: Ավա՛ղ, սրանք իմ խոսքերը չեն, բայց ես հաճախ եմ կրկնում: Այս բառերից հետո վարագույրը դանդաղ իջնում է, ու պայթում են բուռն ծափահարություններ: (Օսկարին.) Կարո՞ղ եմ ձեր կողքին նստել:

ՕՍԿԱՐ —Իհարկե, եթե ուզում եք:

ՊԵՏԵՐ — Շնորհակալ եմ:

Իսկ **Գուրգեն Խանջյան** «Պահմտոցի»[5] միստիկ փոքր պիեսը կարծես ամբողջությամբ պայմանականության սկզբունքներով է կառուցված: Ե՛վ գործող անձինք, և՛ բեմական առաջարկվող լուծումները նույնպես պայմանական են: Սա ունի հիմնավորում՝ ամբողջության մեջ ցույց տալ երևույթների խորհրդանշական կերպը: Այս պիեսում նույնպես հեղինակն ամեն բան իմաստավորում է՝ տղամարդուն, որը խորհրդանշում է մարդկությանը, շենքը՝ աշխարհը, Մանվելը կամ Էմանուելը՝

---

[1] ***Այվազյան Ա.,*** *Թատրոն, էջ 488:*

[2] *ԵԹԿՊԻ «Հանդես», Երևան 2010, էջ 76:*

[3] ***Մուրադյան Դ.,*** *«Մեր տան հին դաշնամուրը», Երևան, 2003:*

[4] ***Ավանեսյան Ա.,*** *նշվ.աշխ., էջ 83:*

[5] *«Նարցիս», թիվ 1, 2007:*

Աստծո որդին ու բարին: Սակայն, լինելով աբսուրդի տարրերին համապատասխանող պիես, փնտրողը չգիտի՝ ում է փնտրում և ինչու: Բայց փնտրում է անվերջ, որովհետև «պետք է»[1]: Գրականագետ Արմեն Ավանեսյանը գրում է. «Մարդն այսօր հայտնվել է դեպի կործանումը տանող իրականության մեջ և ակամա փնտրում է բարին՝ դրանից կառչելու և փրկվելու համար»[2], սակայն հատկանշական է, որ դրամատուրգը միանշանակ լուծում չի տալիս և այս իրավիճակը կարծես թողնում է առանց հանգուցալուծման, որը կրկին ապացուցում է ժամանակի փոփոխման, փոփոխությունների և մարդու գոյության ընթացքում տեղի ունեցող իրադարձությունների կարևորության մասին: Եվ պատահական չէ, որ պիեսի ավարտը փիլիսոփայական ենթատեքստով է առանձնանում:

Կարինե Խոդիկյանի «Մեծ եռագրություն» պիեսների երկհատոր ժողովածուի առաջին բաժինը կրում է «Աբսուրդ խաղեր» խորագիրը: «Դրամատուրգը հարազատ է աբսուրդի դրամայի իռացիոնալ-միստիկ առաջադրույթներին, այն կողմնորոշմանը, ըստ որի՝ հասարակական կյանքում բացակայում են արժեքները»[3], և այս ամենին զուգահեռ Կարինե Խոդիկյանը, իր դրամատուրգիայում գեղագիտական նոր նշաձող սահմանելով, աբսուրդի դրամայում ինչ-որ տեղ իր մոտեցումները թելադրեց: «Դարպասներ», «Քաղաք», «Կայարան» («Այն, որ չկար» ընդհանուր խորագրով), «Խաղի ժամանակը», «Այստեղից հետո», «Հրեշտակ՝ ցպահանջ» և այլն. այս պիեսներն են ամբողջացնում Խոդիկյանի աբսուրդի թատերագրությունը: Դրամատուրգի համար կյանքը խաղ է, ինչպես հստակորեն ընդգծված է «Խաղի ժամանակը» պիեսում, որտեղ գործող անձինք են՝ քաղաքի տիրակալը, առաջին դիմակի տակ գաղտնի խորհրդականը, երկրորդ դիմակի տակ քարտուղարը, քաղաքի ճարտարապետը, պատմիչը, բանաստեղծը, սևազգեստ կինը, տղա և աղջիկ: Սա դիմակավորների թղթախաղ է կյանքում, որն աբսուրդային է:

ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ – Դու շատ հետաքրքիր աշխատություն ես գրում: Վերնագիրն էլ գիտեմ՝ «Ճշմարտության գաղտնիքը»: Չե՞մ սխալվում: (Տղան շփոթված գլխով է անում): Բայց երրորդ գլխում, որտեղ խոսվում է մեր քաղաքի մասին, անճշտություններ կան:

ՏՂԱ – (վիրավորված): Դրանք ատճշտություններ չեն, այլ տեղեկատվության պակաս: Մի քանի գիրք ոչ մի տեղ չգտա: Կեղծ բաներ չգրելու համար այդ մասերում բազմակետ եմ դրել:

ԳԱՂՏՆԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ – Եթե չեմ սխալվում, այդ գլխում բազմակետերը բառերից շատ են:

ՏՂԱ – Լավ է բազմակետ լինի, քան՝ կեղծիք:

Դրամատուրգը կարևորում է մարդու մտածողությունը և այն մշտապես լույսի տակ է պահում: Հատկանշական է, որ Նորայր Ադալյանը գրելով Խոդիկյանի դրամատուրգիայի մասին, նշում է՝ չնայած նա որպես գլխավոր նպատակ առաջին պլան է մղում հերոսի անձնական կյանքն ու ճակատագիրը, սակայն «գրողը չի օտարանում հասարակականին, այլ ոչ առերես, թատերակ «խաղով» է հարաբերում, որը նրա գեղարվեստական մտածողությամբ է պայմանավորված»[4]:

Ժամանակի մեջ մարդկային մտածողության ու տարածության չափումները Կարինե Խոդիկյանի աբսուրդի դրամայում արտահայտվում են գոյաբանական և աշխարհայացքային նորահայտություններով: Բոլոր պիեսներում խորը հոգեբանությամբ ընթացող կյանքն է՝ իր խնդիրներով, մարդկային շեղված ճանապարհներով և այլն: Աբսուրդը հաճախ այն աստիճանի է հասնում, որ հերոսների նպատակներն ու ցանկությունները անհետանում են, և միայն առաջ են գալիս խնդիրները, որոնք իրենց հերթին նոր խնդիրներ են առաջ բերում: Խոդիկյանի պիեսներում

---

[1] *«Նարցիս», թիվ 1, 2007, էջ 87:*

[2] ***Ավանեսյան Ա.,*** *նշվ.աշխ., էջ 85:*

[3] ***Ղազարյան Ն.,*** *Գոյաբանական խնդիրները «Աբսուրդի խաղերում», «Գրական թերթ», grakantert.am, 07.06.2019:*

[4] ***Ադալյան Ն.,*** *Կարինե Խոդիկյանի աբսուրդի թատրոնը, tatron-drama.am, 22.03.2018:*

«նկատելի է հակումը պարադոքսի, ինտուիտիվիզմի, ակնարկի նկատմամբ: Պիեսներում, որպես կանոն, բացակայում է նախադրությունը. հերոսների խոսքը սյուժեն մղում է ոչ կանոնիկ ուղեգիծ»[1]:

Էլֆիք Զոհրաբյանի «Սմբակներ»[2] երկու գործողությամբ աբսուրդի դրաման ցույց է տալիս դրամատուրգի համարձակությունը գաղափարների ու տեսակետների, ներկա իրողությունների ու մարդկային մտածելակերպի բախման կիզակետում: Այս պիեսում հեղինակն անհատական մոտեցումը վերափոխում է մասսայականի, քանզի ընտրված թեման ժամանակակից աշխարհում արդիական հնչեղություն ունի:

Մարդու ներսն ու դուրսը պատկերելու խորը գիտակցումով է դրամատուրգն այսչափ ճիշտ դասավորել գործողությունները, որոնք ընթանում են մեր օրերում և մեզ մոտ: Սա պիես չէ, որտեղից կարելի է գեղեցիկ տողեր մեջբերել, կրկնել և մոռանալ: Այստեղ կարևոր խնդիր է դրամատուրգն առաջ բերել. միջավայրի ու մարդկային կյանքի փոխներգործության խնդիրը, որը խտացված է պարզ ու հասկանալի չափանիշներով ու բովանդակությամբ: Կյանքի բովանդակությունը մանրակրկիտ ուսումնասիրման նյութ է «Սմբակներ» աբսուրդի բազմաշերտ դրամայում, որը ոչ մի գեղարվեստական շղարշ չունի: «Սմբակները» տագնապներից ծնված ու մարդուն ցույց տալու պատրաստ աբսուրդի դրամա է: Սա ինքնին բարդ է հատկապես, երբ գործող անձինք երեքն են, որոնցից յուրաքանչյուրը գլխավոր հերոսի հոգեկերտվածք է ստացել:

ՏՂԱՄԱՐԴ — (հռհռալով): Դու ճանաչո՞ւմ ես նրան:

ԿԻՆ — Վերջ: Խաղն ավարտվեց: Մեզ էլ ոչ ոք չի հսկում:

ՏՂԱՄԱՐԴ — Մարդը միշտ փորձում է Մարդու դեր խաղալ, բայց չի ստացվում: Ո՞ւր գնաց ծախու արարածը: Տեսնո՞ւմ ես՝ փողին տիրանալու պատճառով ինչերի է պատրաստ…

ԿԻՆ — Երևի գնաց կոտոշավորի մոտ, բայց վտանգավոր է… Կփորփրի, թե այս տրցակը որտեղից հայտնվեց: Հենց այնպես ոչինչ չի լինում, չէ՞…

ՏՂԱՄԱՐԴ — Չէ՛, գնալ է պետք էստեղից:

ԿԻՆ — Եթե մեր մեջ կփոխվի ինչ-որ բան, արժե գնալ…

ՏՂԱՄԱՐԴ — Էն էլ ո՛նց կփոխվի: Երբ հարուստ լինես, կյանքը քեզ էնպես կժպտա…

ԿԻՆ — Հարուստ էիր, ամեն ինչ ունեիր, բայց ավելի դժբախտ էիր, քան հիմա:

ՏՂԱՄԱՐԴ — Քո պատճառով թողեցի ընտանիքս, կնոջս… Իսկ դու անցնում ես Գրիգի կողմը: Երդվում եմ. եթե ինձ տրվի էդ գումարը, էլի քեզ վրա եմ ծախսելու: Հավատա՛, սիրո՛ւնս:

ԿԻՆ — Ձեռք չտաս: Գուցե ծուղա՞կ է… Ազնիվ չէ՝ ուրիշի փողերին տիրանալ:

ՏՂԱՄԱՐԴ — Երևի ազնիվ կլիներ, որ միայն դու տիրանայիր, չէ՞: Չես գնահատում իմ արածը:

ԿԻՆ — Անընդհատ երեսով ես տալիս: Չգիտեմ՝ ինչ է պակասում քո մեջ: Դու կնոջդ չէիր սիրում… ու մի օր խոստովանեցիր, որ նրա հետ երջանիկ չէիր:

ՏՂԱՄԱՐԴ — Քե՛զ հետ երջանիկ եմ:

Պատահական ոչինչ չկա: Ինչպես կյանքում, այնպես էլ աբսուրդում մարդը սիրում է իրեն, այս դեպքում՝ մարմինն ու որովայնը, որոնց պահանջները չբավարարելը, մեղմ ասած, հիասթափության են հանգեցնում: Սակայն հաճախ ենք մոռանում կամ շփոթվում՝ արդյոք որտե՞ղ փնտրենք կյանքի ու ապրելու գեղագիտությունը, մեր մե՞ջ, թե՞ մեզանից դուրս: Էլֆիք Զոհրաբյանի աբսուրդի դրամայում ամեն ինչի հիմքում մարդն է ու մարդկային մտածողությունը, որը հաճախ օտարանում է իրականությունից, ձգտում այլ տարածքների, որտեղ բնազդային հաճույքն առաջին տեղում է: Այստեղ նույնպես հերոսները փոխում են բնակության վայրը, սակայն իրենց էությունը չի փոխվում: Դրամատուրգը պատահական թեմա չի շոշափել: Նա գտել է բանալին և բացում է կյանքում

[1] ***Ղազարյան Ն.,*** *Գոյաբանական խնդիրները «Աբսուրդի խաղերում», «Գրական թերթ», grakantert.am, 07.06.2019:*

[2]***Զոհրաբյան Է.,*** *Թեթև տարեք, Երևան, «Անտարես» հրատ., 2019, էջ 73-98:*

հանդիպող տարբեր դռներ, որոնց հետևում մարդկային բացասական արարքներն են: Սակայն սրանով ոչ թե մարդու ապրելակերպն ու մտածողությունը քննադատելու միտում ունի դրամատուրգը, այլ այս ամենով մարդու ներքին աշխարհում կյանքի ու ապրելու ներդաշնակության ուղիներ փնտրելը, սեփական անձին չհակասվելը: Եվ ինչքան էլ զարմանալի թվա, կյանքի «ազատության» մի շերտում մարդը դառնում է սմբակավոր: Այսօրինակ մարդկանց մտքերը կառավարելը սովորական երևույթ է մեր օրերում:

«Չկա՛ անհաջողակ մարդ, կա անհաջող մտածելակերպ»[1],-կարդում ենք աբսուրդի դրամայում ու հետ նայում՝ տեսնելու աշխարհն ու մարդկանց, ինքներս մեզ, ներաշխարհային նոր հարցեր առաջ քաշում՝ ո՞վ ենք, ո՞ւր ենք գնում…

Եզրակացություն

Փոխվում են ժամանակները, փոխվում է նաև մարդը: Եվ այդ փոփոխություններն են հաճախ մղում ասելու այն խոսքը, որը կարող է հասարակությանն ազդել, ինչ-որ չափով նաև ազատություն տալ: Սխալ չէր լինի, որ աբսուրդի դրաման դիտարկենք ոչ միայն այս կամ այն երևույթներից «զայրացած մարդու» տրամադրության արդյունք, այլև ազատության, ազատ խոսքի ու գործողության մի յուրատեսակ արտահայտություն, որը դեռևս նոր բացահայտումների ճանապարհ ունի:

Աբսուրդի դրաման այսօրվա բեմադրիչների համար կարող է ազատ մեկնաբանությունների հնարավորություն տալ, քանզի այն, ինչ մարդկային երևակայության արդյունքում կարող է մի նոր անսահմանություն ստեղծել, ապա կհետաքրքրի նաև հանդիսատեսին:

Այս ամենը հուշում են այն մասին, որ «ժամանակակից հայ դրամատուրգիան ամենևին էլ գրականության խորթ զավակը չէ և արժանի է նույնքան ուշադրության, որքան գրականության մյուս սեռերը, և այս բնագավառում ևս ստեղծվում են արժեքավոր գործեր»[2]: Հայ դրամատուրգիայի զարգացումը մեծապես որոշիչ է նաև ազգային թատրոնի համար: Իսկ թատրոնն, այո, ճշմարտություն է սիրում: Ինչպես ֆրանսիացի գրող Ալբեր Կամյուն է փաստել՝ անհեթեթությունը ծնվում է մարդկային մտքի բախումից և աշխարհի անխոհեմ լռությունից: Ասել է թե՝ լռությունն էլ է գործիք…

---

[1] ***Զոհրաբյան Է.,*** *«Թեթև տարեք», Երևան, «Անտարես» հրատ., 2019, էջ 79:*

[2] ***Քալանթարյան Ժ.,*** *Խոհեր հայ արդի դրամատուրգիայի շուրջ, tatron-drama.am, 07.09.2019:*

ՀՏԴ 327

Խաչիկ Աբաջյան
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
abajyan.xachik@gmail.com

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Բանալի բառեր՝ *Լեռնային Ղարաբաղ, հակամարտություն, հակամարտության լուծում, ռազմաքաղաքական միջամտություն, Մինսկի հիմնախնդիրների խումբ։*

Հոդվածի նպատակն է վեր հանել 2020 թվականի Արցախյան պատերազմին Թուրքիայի ռազմաքաղաքական մասնակցության շարժառիթներն ու առանձնահատկությունները։

Ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական (վերլուծություն, սինթեզ, պատմականության սկզբունք), այնպես էլ հատուկ (ձևական-տրամաբանական, համեմատական) մեթոդներ։

Ուսումնասիրության արդյունքում եկա այն եզրակացության, որ Թուրքիայի ռազմաքաղաքական մասնակցությունը պատերազմին պայմանավորված է վերջինիս ռազմաքաղաքական, տնտեսական, էներգետիկ և այլ շահերով։ Թուրք-ադրբեջանական համագործակցությունը հատկապես ակնհայտ էր ռազմական աջակցության ոլորտում, ինչի վկայությունն էր պատերազմի ողջ ընթացքում թուրքական զինված ուժերում գրանցված զինտեխնիկայի և ինքնաթիռների առկայությունը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնյաների մշտական ներկայությունն ու հաճախ անմիջական մասնակցությունը։ Կարելի է հստակ արձանագրել, որ առանց Թուրքիայի ռազմաքաղաքական աջակցության և հովանավորության Ադրբեջանը չէր կարողանա հասնել այն հաջողություններին, որոնք արձանագրել էր պատերազմի ընթացքում, և Թուրքիայի մասնակցությունը պատերազմին ուղղակիորեն նպաստեց Թուրքիայի տարածաշրջանային դերի բարձրացմանը. վերջինս հանդես է գալիս որպես արցախյան հիմնախնդրի կարգավորման վճռորոշ կողմ։

Хачик Абаджян

ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОЕ УЧАСТИЕ ТУРЦИИ В АРЦАХСКОЙ ВОЙНЕ 2020 ГОДА

Ключевые слова: *Нагорный Карабах, конфликт, урегулирование конфликта, военно-политическое вмешательство Турции, Минская группа ОБСЕ.*

Цель статьи - осветить мотивы и особенности военно-политического участия Турции в Арцахской войне 2020 года.

В ходе исследования использовались как общенаучные (анализ, синтез, принцип историчности), так и специальные (формально-логический, сравнительный) методы.

В результате исследования мы пришли к выводу, что военно-политическое участие Турции в войне

было обусловлено военно-политическими, экономическими, энергетическими и другими интересами последней. Турецко-азербайджанское сотрудничество особенно проявлялось в сфере военной поддержки, свидетельством чего было наличие боевой техники и авиации, состоявших на учете в турецких вооруженных силах на протяжении всей войны, а также постоянное присутствие и зачастую непосредственное участие высокопоставленных лиц. военных деятелей в боевых действиях. Мы можем четко констатировать, что без военно-политической поддержки и покровительства Турции Азербайджан не смог бы добиться тех успехов, которые он зафиксировал в ходе войны, а участие Турции в войне напрямую способствовало повышению региональной роли Турции, выступлению последней в качестве решающей стороны в урегулировании арцахского конфликта.

Khachik Abajyan

MILITARY AND POLITICAL PARTICIPATION OF TURKEY IN ARTSAH WAR 2020

Keywords: *Nagorno-Karabakh, conflict, conflict settlement, Turkey's military-political involvement, OSCE Minsk Group.*

The purpose of the article is to highlight the motives and features of Turkey's military-political involvement in the 2020 Artsakh war.

Both general scientific (analysis, synthesis, principle of historicity) and special (formal-logical, comparative) methods were used during the research.

As a result of the research, we came to the conclusion that Turkey's military-political involvement in the war was conditioned by the latter's military-political, economic, energy, and other interests. Turkish-Azerbaijani cooperation was especially evident in the field of military support, evidence of which was the presence of military equipment and air force registered in the Turkish armed forces throughout the war, as well as the constant presence and often direct involvement of high-ranking military officials in military operations. We can clearly state that without Turkey's military-political support and patronage, Azerbaijan could not have the successes it recorded during the war, and Turkey's involvement in the war directly contributed to the increase of Turkey's regional role, and the latter's acting as a decisive party in the settlement of the Artsakh conflict.

Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացը հաճախ դիտվում է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Մինսկի խմբի շրջանակներում, որը ձևավորվեց 1992 թվականի մարտի 24-ին՝ խնդիրը խաղաղ և բանակցային ճանապարհով կարգավորելու համար[1]: Սակայն պետք է արձանագրենք, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը պետք է դիտարկել նաև տարածաշրջանային անվտանգության և տարածաշրջանային դերակատարների մասնակցության տեսանկյունից: Այսպես, պետք է հաշվի առնենք, որ տարածաշրջանային երկրները՝ հատկապես Իրանը և Թուրքիան մշտապես փորձել են իրենց գործուն դերակատարությունն ունենալ հակամարտության ռազմաքաղաքական գործընթացներում: Պատահական չէին Իրանի փորձերը միջնորդական առաքելությամբ հանդես գալու թե՛ արցախյան առաջին, թե՛ 2020 թվականի պատերազմի ժամանակ: Այլ է պատկերը Թուրքիայի

[1] *Շ. Քոչարյան, «Ինչու դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը», էջ 16, Երևան, 2015 թ., հասանելի է https://www.mfa.am/filemanager/Statics/Article_nkr_arm.pdf , վերջին մուտքը՝ 11.05.2022 թ.*

դեպքում: Նախ արձանագրենք, որ Թուրքիան ԵԱՀԿ Մինսկի խմբի 9 անդամ պետություններից մեկն է և հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավված է 1992 թվականից: 1992-1993 թվականներին արցախյան հակամարտության կարգավորման հարցով գործում էր 5+1 ձևաչափը՝ Ռուսաստանի Դաշնության, Միացյալ Նահանգների, Հայաստանի, Ադրբեջանի, Թուրքիայի և ԵԱՀԿ խորհրդաժողովի նախագահի մասնակցությամբ:

Թուրքիան երբևէ չի թաքցրել և այսօր էլ չի թաքցնում իր ադրբեջանամետ դիրքորոշումը արցախյան հակամարտության կարգավորման հարցում և մշտապես աջակցել և աջակցում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը: Դեռևս 1993 թվականին Թուրքիան փակեց Հայաստանի հետ սահմանը՝ պայմանավորված արցախյան առաջին պատերազմով, իսկ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բոլոր փորձերի ընթացքում առաջ են քաշվել նախապայմաններ՝ կապված արցախյան հակամարտության հետ: Դրա լավագույն դրսևորումներից մեկը Ցյուրիխյան երկու արձանագրությունների՝ «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները չվավերացնելն էր՝ առաջ քաշված նախապայմանների պատճառով[1]:

2020թ սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծած լայնածավալ պատերազմում Անկարան Բաքվին տրամադրեց նախադեպը չունեցող ռազմական, քաղաքական, քարոզչական ու բարոյական աջակցություն: Թուրքիայի արտաքին գործերի նախարար Մևլութ Չավուշօղլուն Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ Բաքվում 2020 թ. հոկտեմբերի 6-ին կայացած հանդիպման ժամանակ հայտարարել է, որ Թուրքիան պատրաստ է Ադրբեջանին տրամադրել աջակցություն ցանկացած ոլորտում, եթե Բաքուն դրա կարիքն ունենա: Թուրքիայի արտգործնախարարն ընդգծել է, որ եկել է Բաքու, որպեսզի «մեկ անգամ ևս ցույց տա Թուրքիայի և թուրք ժողովրդի կողմից ցուցաբերվող աջակցությունը Ադրբեջանին»[2]:

Որո՞նք էին Թուրքիայի շարժառիթները այդքան ակնհայտ և աննախադեպ ծավալով հակամարտության մեջ ներգրավվելու համար՝

1) Արցախյան հիմնահարցը մշտապես կենսունակ է տարածաշրջանային անվտանգության տեսանկյունից, ուստի տարածաշրջանային խաղացողները չեն կարող անմասն մնալ այդ գործընթացից: Թուրքիայի ռազմական և քաղաքական ներգրավվածությունը 2020 թվականի պատերազմում կարող ենք բացատրել նաև վերջինիս տարածաշրջանային դերի բարձրացման ձգտումներով, որը և հաջողվեց, քանի որ վերջինս ուղղակիորեն դարձավ ակտիվ դերակատար արցախյան հիմնախնդրի հետագա ճակատագրի որոշման համատեքստում: Թուրքիայի ակտիվ ներգրավվածությունը պատերազմում պայմանավորում ենք նաև տարածաշրջանում ռուսական դերի թուլացման և սեփական ազդեցությունը մեծացնելու ցանկությամբ: Իրանը ևս փորձեր է իրականացնում տարածաշրջանային գործընթացներում ակտիվորեն ներգրավվելու, սակայն այս պարագայում ևս Իրան-Թուրքիա տարածաշրջանային մրցակցության պայմաններում Թուրքիան ևս կարողացավ ամրապնդել իր դիրքերը տարածաշրջանում:

2) Ամենակարևոր շարժառիթներից մեկը ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքները վերջնականորեն փակուղի մտցնելն էր, որոնք առանց այդ էլ աչքի չէին ընկնում իրենց արդյունավետությամբ և

---

[1] *E. Nalbandyan, "Turkey Has Gone Back on its Word", p. 1-2, Yerevan 2010, available at: https://www.europarl.europa.eu/meetdocs/2009_2014/documents/dsca/dv/dsca_20101201_10_/dsca_20101201_10_en.pdf*

[2] *www.tass.ru, "Глава МИД Турции заявил, что Анкара готова оказать Баку любую поддержку", 6 октября, https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/9639243?utm_source=hetq.am&utm_medium=referral&utm_campaign=hetq.am&utm_referrer=hetq.am*

ինտենսիվությամբ հատկապես վերջին տարիներին: Ակնհայտ է, որ բանակցություններն ընթանում էին ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահների՝ Ռուսաստանի Դաշնության, Միացյալ Նահանգների և Ֆրանսիայի համանախագահությամբ և Թուրքիան որևէ էական ազդեցություն չուներ այդտեղ: Պատահական չէ, որ տարիներ շարունակ Թուրքիան և Ադրբեջանը հանդես են եկել Մինսկի խմբի համանախագահների կազմում փոփոխություն անելու առաջարկությամբ, պնդելով, որ Ֆրանսիան պետք է իր տեղը զիջի Թուրքիային՝ այդպիսով ապահովելով ուժային բալանս համանախագահների շրջանում: Բանն այն է, որ թուրք-ադրբեջանական տանդեմը պնդում էր, որ ՌԴ-ն ՀՀ-ի ռազմավարական դաշնակիցն է, իսկ Ֆրանսիան ունի ակնհայտ հայամետ դիրքորոշում և միայն ԱՄՆ-ն է պահպանում չեզոքություն: Այդպիսով Թուրքիայի ներգրավվումը որպես համանախագահ որոշակի բալանսավորում էր ստեղծում: Պատերազմի ընթացքում և դրանից հետո էլ կարծես թե արցախյան հիմնախնդրի քննարկումը դուրս է եկել ԵԱՀԿ Մինսկի խմբի տիրույթից և տեղափոխվել է 2+2 ձևաչափի տիրույթ՝ Հայաստան, Ադրբեջան + ՌԴ, Թուրքիա, որը կրկին թուրք-ադրբեջանական տանդեմի ձգտումներից մեկն էր տասնամյակներ շարունակ: Թեև փորձեր արվում են բանակցային գործընթացը վերսկսելու և այն ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափ վերադարձնելու ուղղությամբ, բայց Թուրքիայի ներգրավվածությունն այդ գործընթացում արդեն իսկ արձանագրված փաստ է:

3) Թեև Թուրքիան աջակցում էր Ադրբեջանին հնարավոր բոլոր ոլորտներում, սակայն դա միանշանակ չէր կարող լինել Թուրքիայի բարի կամքի դրսևորումն Ադրբեջանի նկատմամբ: Տրամադրելով աննախադեպ օգնություն Ադրբեջանին՝ Թուրքիան կարողացավ մի քանի անգամ մեծացնել իր ազդեցությունը Ադրբեջանի թե՛ ներքին, թե՛ արտաքին քաղաքական կյանքում՝ ունենալով ճնշման և թելադրման բազմաթիվ նոր լծակներ:

4) Կարևոր շարժառիթներից մեկը, իհարկե, էներգետիկ շահերն էին: Չպետք է մոռանանք, որ Թուրքիա-Ադրբեջան հարաբերությունների հիմքում էականորեն ընկած են երկուստեք տնտեսական և էներգետիկ շահերը: Համագործակցության շրջանակները ներառում են գազի, նավթի, երկաթուղային ցանցի, ուղղակի ներդրումների և աջակցության տրամադրման ոլորտները: Թեև Ադրբեջանը չի հանդիսանում Թուրքիային նավթ մատակարարող պետությունների խոշոր հնգյակի մաս, սակայն Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի անխափան գործունեությունը հնարավորություն է տալիս Թուրքիային անխափան նավթ ստանալ Ադրբեջանից, բացի այդ տարանցիկ երկիր հանդիսանալ Ադրբեջանի համար նավթ փոխադրելու տեսանկյունից: Ադրբեջանը Թուրքիային գազ մատակարարող երրորդ խոշոր պետությունն է, որը միանշանակ փոխշահավետ գործարք է երկու երկրների համար, քանի որ ադրբեջանական գազը Թուրքիայում ամենաէժանն է: Թուրք-ադրբեջանական գազային գործարքի հիմքում ընկած են մի շարք ծրագրեր, որոնցից են Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարը, TANAP, TAP և այլն: Ակնհայտ է, որ հնարավոր ռազմական գործողությունների ոչ ցանկալի ընթացքը կարող էր վտանգի տակ դնել երկու պետությունների էներգետիկ անվտանգությունը:

5) Կարևոր և առանձնահատուկ տեղ պետք է հատկացնենք նաև ռուս-թուրքական հարաբերություններին, որոնք չափազանց փոփոխական են: Կարող ենք արձանագրել, որ այժմ արցախյան համակարտության կարգավորման հարցերի քննարկումը գտնվում է նաև ռուս-թուրքական տիրույթում, որի օրինակներից են ԼՂ հակամարտության գոտում հրադադարի և բոլոր ռազմական գործողությունների վերահսկման համար ռուս-թուրքական համատեղ կենտրոնի բացումը, երկու պետությունների նախագահների, արտաքին գերատեսչությունների ղեկավարների պարբերական շփումները և այլն:

Թեև քաղաքական առումով հսկայական է Թուրքիայի աջակցությունը Ադրբեջանին 2020 թվականի պատերազմի ընթացքում, սակայն առանց ռազմական աննախադեպ աջակցության Ադրբեջանը չէր կարող արձանագրել իր այսչափ հաջողությունները ռազմական գործողություններում: 2010 թ.

օգոստոսի «Ռազմավարական համագործակցության և փոխօգնության մասին» համաձայնագիրը էլ ավելի ամրապնդեց Թուրքիայի և Ադրբեջանի համագործակցությունը: Հատկապես ուշագրավ է, որ համաձայնագրի երկրորդ հոդվածը սահմանում է, որ «կողմերից մեկի՝ երրորդ պետության կողմից ագրեսիայի ենթարկման դեպքում մյուս կողմը պարտավորվում է ձեռնարկել անհրաժեշտ ամեն միջոց, այդ թվում՝ ռազմական հնարավորությունների և ունակությունների կիրառման միջոցով, միմյանց փոխադարձ աջակցելու համար»[1]: Սա հնարավոր զարգացումների դեպքում ուղղակի ռազմական աջակցության ցուցաբերման համար լիարժեք իրավունքներ է տալիս կողմերին:

2020թ. հուլիսի 27-ին Ադրբեջանի ՊՆ-ն հայտարարեց Ադրբեջանում Թուրքիայի ռազմաօդային ուժերի (ՌՕՈւ) հետ համատեղ զորավարժության անցկացման մասին: Հուլիսի վերջին Ադրբեջան ժամանեց Թուրքիայի ՌՕՈւ F-16 կործանիչների խումբը: Թուրքիայի ռազմատրանսպորտային ինքնաթիռներով Ադրբեջան և Նախիջևան էին բերվել նաև թուրքական հարվածային «Աթաք» և բազմաֆունկցիոնալ UH-60 ուղղաթիռներ: Թուրքական 5 միավոր F-16-երը Ադրբեջանում տեղակայվել էին Գյանջայի միջազգային օդանավակայանում, որն օգտագործվում էր միայն քաղաքացիական նպատակներով: Ուշագրավ է, որ նախկինում այս օդանավակայանը չէր ներգրավվում զորավարժություններին, թուրքական ինքնաթիռները տեղակայվում էին սովորաբար Եվլախի օդանավակայանում, որը Ադրբեջանի ԶՈւ ԱԹՍ-ների կենտրոններից մեկն է: Ինչպես նշում է Razm Info մասնագիտացված կայքը՝ առանձին ուշադրության է արժանի F-16-երի կազմը: Թեև առաջին անգամը չէր, որ Ադրբեջան էին ժամանում թուրքական F-16 կործանիչները, սակայն զորավարժությանը մասնակցելու պատրվակով ժամանած այս խումբը առանձնանում էր նրանով, որ դրա կազմում կային Թուրքիայի ՌՕՈւ 151-րդ և 152-րդ էսկադրիլաներին պատկանող ինքնաթիռներ: F-16-երը թեև բազմաֆունկցիոնալ կործանիչներ են և կարող են կատարել տարբեր առաջադրանքներ, սակայն ինքնաթիռների մեծ պարկ ունեցող երկրներում, այդ թվում և Թուրքիայում, էսկադրիլաներն ունենում են որոշակի «մասնագիտացում»: Այս կերպ՝ Ադրբեջան ժամանած 151-րդ, 152-րդ էսկադրիլաների ինքնաթիռները մասնագիտացած են հակառակորդի ՀՕՊ-ը ճնշելու գործում:

1. Մեծ է հավանականությունը, որ պատերազմից առաջ և դրա ընթացքում թուրքական ինքնաթիռներն իրենց թռիչքների ժամանակ զբաղվել են հայկական ՀՕՊ-ի տեղաբաշխման, կազմի, կառուցվածքի, մարտավարության ու «թույլ տեղերի» բացահայտմամբ:

2. Չի կարելի բացառել, որ այդ ինքնաթիռները պատերազմի ընթացքում մասնակցել են նաև հայկական ՀՕՊ ճնշման գործողություններին:

3. Եվ վերջապես, կարելի է ենթադրել, որ Ադրբեջանում թուրքական F-16-երի խնդիրներից էր նաև ՀՀ ԶՈւ ՍՈւ-30ՍՄ կործանիչների հնարավոր միջամտությունից Ադրբեջանին ապահովագրելը[2]:

Թուրքական կողմը չէր սահմանափակվել միայն F-16 կործանիչների տրամադրմամբ: Ադրբեջանական զինված ուժերի կազմում էին նաև Bayraktar TB2 անօդաչու թռչող սարքերը, որոնք զգալի խնդիրներ էին ստեղծում հայկական կողմի համար: Ուշագրավ է նաև, որ Թուրքիան Ադրբեջանին աջակցում էր ոչ միայն տեխնիկա տրամադրելու, այլև հրամանատարական անձնակազմի առկայությամբ, ով ապահովում էր զինտեխնիկայի թիրախային օգտագործումը:

Թուրքական կողմի ուղղակի մասնակցությամբ ռազմաճակատ էին տեղափոխվում վարձկան գրոհայիններ, ովքեր զգալի նշանակություն ունեին ռազմական գործողությունների ընթացքի վրա: Մարդու իրավունքների սիրիական դիտորդական կենտրոնի (SOHR) հետազոտության

---

[1] www.eurasianet.org, *"Azerbaijan-Turkey Military Pact Signals Impatience with Minsk Talks – Analysts", 2011, available at: https://eurasianet.org/azerbaijan-turkey-military-pact-signals-impatience-with-minsk-talks-analysts*

[2] www.razm.info, *«Թուրքիայի մասնակցությունը պատերազմին. Մաս Ա», 2021 թ., հասանելի է https://razm.info/147915, վերջին մուտքը՝ 11.05.2022*

արդյունքում պարզվել է, որ միայն Լեռնային Ղարաբաղում սպանվել է 293 գրոհային:

Արցախյան պատերազմին մասնակցած սիրացի գրահայիններ ամբողջ քանակը հայտնի չէ, սակայն ըստ որոշ տվյալների, ինչպես օրինակ Սիրիացիներն հանուն ճշմարտության և արդարության (STJ) կազմակերպության հրապարակած զեկույցի, մինչև 2020 թ. հոկտեմբերի 13-ը հավաքագրվել է առնվազն 2000 սիրիացի արցախյան ռազմաճակատ ուղարկելու նպատակով: Նրանց մի մասին 3 փուլով տեղափոխել են Ադրբեջան (250 մարդ յուրաքանչյուր փուլում)[1]:

Այսպիսով 2020թ սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծած լայնամասշտաբ պատերազմում Ադրբեջանը վայելում էր Թուրքիայի լիակատար աջակցությունը: Թուրքիայի ռազմաքաղաքական ներգրավվածությունը պատերազմում պայմանավորված էր վերջինիս ռազմաքաղաքական, տնտեսական, էներգետիկ և այլ շահերով: Թուրք-ադրբեջանական տանդեմի գործակցությունը հատկապես ակնհայտ էր ռազմական աջակցության ոլորտում, որի վկայությունը թուրքական զինված ուժերում հաշվառված զինտեխնիկայի և օդուժի առկայությունն էր ողջ պատերազմի ընթացքում, ինչպես նաև զինվորական բարձրաստիճան պաշտոնյաների մշտական ներկայությունը և հաճախ ուղղակի ներգրավվածությունը ռազմական գործողություններում: Հատկապես անհանգստացնող էր վարձկան գրոհայինների մասնակցությունը պատերազմում, քանի որ վերջինս սպառնալիք է ոչ միայն Ադրբեջանի, այլև տարածաշրջանային անվտանգության և կայունության համար: Հստակ կարող ենք արձանագրել, որ Ադրբեջանն առանց Թուրքիայի ռազմաքաղաքական աջակցության և հովանավորության չէր կարող ունենալ այն հաջողությունները, որը գրանցեց պատերազմի ընթացքում, իսկ Թուրքիայի ներգրավվածությունը պատերազմում ուղղակիորեն նպաստեց Թուրքիայի տարածաշրջանային դերի բարձրացմանը, և վերջինիս՝ արցախյան հակամարտության կարգավորման հարցում որպես վճռորոշ կողմ հանդես գալուն:

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

1. Շ. Քոչարյան, «Ինչու դեռևս կարգավորված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը», էջ 16, Երևան, 2015 թ., հասանելի է https://www.mfa.am/filemanager/Statics/Article_nkr_arm.pdf
2. www.razm.info, «Թուրքիայի մասնակցությունը պատերազմին. Մաս Ա», 2021 թ., հասանելի է https://razm.info/147915
3. www.war.karabakhrecords.info, «Վարձկանների մասնակցությունը Արցախյան 2-րդ պատերազմում. Թուրքիայի դերը», 2021 թ., հասանելի է՝ https://war.karabakhrecords.info/2021/07/09/terrorists-in-the-2nd-artsakh-war/ ,
4. www.tass.ru, “Глава МИД Турции заявил, что Анкара готова оказать Баку любую поддержку”, 6 октября,
5. E. Nalbandyan, “Turkey Has Gone Back on its Word”, p. 1-2, Yerevan 2010, available at: https://www.europarl.europa.eu/meetdocs/2009_2014/documents/dsca/dv/dsca_20101201_10_/dsca_20101201_10_en.pdf
6. www.eurasianet.org, “Azerbaijan-Turkey Military Pact Signals Impatience with Minsk Talks – Analysts”, 2011, available at: https://eurasianet.org/azerbaijan-turkey-military-pact-signals-impatience-with-minsk-talks-analysts

ՀՏԴ 9300

[1] *www.war.karabakhrecords.info, «Վարձկանների մասնակցությունը Արցախյան 2-րդ պատերազմում. Թուրքիայի դերը», 2021 թ., հասանելի է՝ https://war.karabakhrecords.info/2021/07/09/terrorists-in-the-2nd-artsakh-war/ , վերջին մուտքը՝ 1.05.2021*

Ալինա Վարդանյան
Գորիսի պետական համալսարան
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ,
բակալավր

Գիտական ղեկավար՝
պ.գ.թ., դոց. ***Հ. Սուքիասյան***

ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՅԼԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ՝ ԸՍՏ «ԿԱՐՄԻՐ ՌԱՇՊԱՐ» ԹԵՐԹԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ (1926-1928 ԹԹ.)

Հանգուցային բառեր *՝ «Կարմիր ռաշպար», անգրագիտություն, պայքար, սոցիալիզմ, կրթություն*

«Կարմիր ռաշպար» թերթում տպագրված համարներում ներկայացվում են կրթական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները, անգրագիտության դեմ պայքարը և բոլշևիկների կողմից ձեռնարկված միջոցառումները: Թերթում ներկայացվում է Զանգեզուրի գավառում տարվող կրթական աշխատանքները, դպրոցների գործունեությունը և առկա խնդիրները: Իրականացվող կրթամշակութային աշխատանքները, այս դեպքում՝ անգրագիտության վերացմանն ուղղված քայլերը լայնորեն լուսաբանվել են մամուլում: Գորիսում հրատարակված «Կարմիր ռաշպար» թերթը ևս իր հրապարակումներում առանձնահատուկ ուշադրություն էր հատկացնում Զանգեզուրի գավառում անգրագիտության վերացման աշխատանքներին:

Алина Варданян
ГСУ, Факультет гуманитарных наук, История,
4-ый курс

МЕРЫ ПО ЛИКВИДАЦИИ НЕГРАМОТНОСТИ В ЗАНГЕЗУРЕ ПО ПУБЛИКАЦИЯМ ГАЗЕТЫ "КАРМИР РАШПАР" (1926-1928 ГГ.)

Ключевые слова: *"Кармир Рашпар", неграмотность, борьба, социализм, образование.*

В выпусках газеты «Кармир Рашпар» рассказывается об изменениях, происходящих в образовательной жизни, о борьбе с неграмотностью, о мерах, предпринятых большевиками. Газета представляет просветительскую деятельность в Зангезурском велайете, деятельность школ, существующие проблемы. Проводимые просветительские и культурные мероприятия, в данном случае меры по ликвидации неграмотности, широко освещались в печати. Газета «Кармир Рашпар», издаваемая в Горисе, особое внимание в своих публикациях уделяет ликвидации безграмотности в Зангезурском велаяте.

Alina Vardanyan
GSU, Faculty of Humanities, History, 4th course

STEPS TO ERADICATE ILLITERACY IN ZANGEZUR, ACCORDING TO THE PUBLICATIONS OF "KARMIR RASHPAR" NEWSPAPER (1926-1928)

Keywords: *"Karmir Rashpar", illiteracy, struggle, socialism, education.*

The issues published in "Karmir Rashpar" newspaper present the changes taking place in the educational life, the fight against illiteracy, the measures taken by the Bolsheviks. The newspaper presents the educational activities in Zangezur province, the activities of schools, the existing problems. The ongoing educational and cultural activities, in this case the steps to eliminate illiteracy, were widely covered in the press. The "Karmir Rashpar" newspaper published in Goris pays special attention to the elimination of illiteracy in Zangezur province in its publications.

Զանգեզուրի կրթական կյանքում տեղի ունեցած իրադարձությունները լուսաբանված են «Կարմիր ռաշպար» գավառական թերթում: Թերթը հրատարակվել է 1921-1930 թթ., Գորիսում, որի խմբագիրն էր Գառնիկ Ղազարյանը [1,22]: Թերթի բազմաթիվ համարներում լուսաբանված են կարևոր նշանակություն ունեցող իրադարձություններ, որոնց միջոցով ընդհանուր առմամբ պատկերացնում ենք, թե խորհրդային կարգերի հաստատումից հետո ինչ փոփոխություններ էին տեղի ունեցել կրթական կյանքում, Խորհրդային Միությունը ինչ խթանիչ քայլեր ձեռնարկեց տնտեսության վերականգման համար: Թերթի համարներում տեղ են գտել Խորհրդային Հայաստանի Զանգեզուրի գավառի կրթական կյանքն արտացոլող բազմաթիվ համարներ, որոնցում ներկայացված էր, թե ինչպես է կրթական կյանքը կազմակերպվում խորհրդային կարգերի հաստատումից հետո, և դրան ուղղված ինչ քայլեր էին իրականացվում: Թերթը, գործելով խորհրդային ժամանակաշրջանում, քարոզել է մարքսիստական գաղափարները, ներկայացրել խորհրդային իշխանության վարած քայլերը, որոնք տանելու էին դեպի Խորհրդային Միության հզորացում, ինչպես նաև փորձում էր իր գաղափարները ներարկել հասարակության բոլոր շերտերում: Համարներում լուսաբանված է, թե ինչպիսի պայքար էր մղում իշխանությունը համատարած անգրագիտության դեմ և դրան ուղղված քայլեր ձեռնարկում, քանի որ պետք էին կրթված մարդիկ, որոնք լինելու էին այն հիմքը, որը կօգներ Միությունը հզորացնելու և առաջնակարգ դեր ստանձնելու: Այս նպատակների հաջող լուծման երաշխիքներից էր համարվում համատարած անգրագիտության վերացումը և գրագետ կադրերի օգտագործումը: Թերթի հրատարակված համարներում առանձին մասեր նվիրված էին գավառի կրթական կյանքին, գործող դպրոցներին: Ինչ բացթողումներ էին առկա դպրոցում, ուսուցիչներն ինչպես էին իրենց աշխատանքը իրականացնում, և բազմապիսի այսպիսի հարցեր էին տեղ գտնում թերթում: Թերթում ներկայացվում է, որ Սիսիանի 27 դպրոցներում սովորում էր 2269 աշակերտ, որոնցից՝ 1654 տղա, 615 աղջիկ: Այս ժամանակ դպրոցահասակ երեխաների թիվը հասնում էր 1452-ի, սակայն դպրոցների քիչ քանակը և մասնագետների պակասը հնարավորություն չէր տալիս, որ բոլորին կարողանային տեղավորել դպրոցներում և այս խնդիրը սկզբնական շրջանում շարունակում էր մնալ չլուծված: Աշակերտները տեղավորված էին 89 խմբակներում, և ուսումնական աշխատանքներն իրականացվում էին 2 ժամում: Այդ տարի՝ 1926 թ., սովորողների և ուսուցիչների թիվն ավելի շատ էր, սակայն դեռևս ուսուցիչների պահանջը զգացվում էր: Այս հանգամանքներից ելնելով էլ Գավլուսբաժինը սկսել էր ուշադրություն սևեռել 2-րդ աստիճանի դպրոցների վրա, որպեսզի նրանցից պատրաստեին ուսուցիչ մասնագետներ, քանի որ տարեցտարի ավելանում էր դպրոցների թիվը, և զգացվում էր մասնագետների խիստ պակաս [2,3]: Սա ցույց է տալիս այն գլխավոր խնդիրներից մեկը, որը ազդում էր կրթական կյանքի արդյունավետ կազմակերպման վրա, որը պարզ տեսանելի էր գավառում: Նույն խնդրին էր բախվել Անգեղակոթը, որտեղ ուսումնական աշխատանքները վերսկսվել էին 1926 թ. դեկտեմբերի 18-ից: Այստեղ սովորում էին 40-ից ավել աշակերտներ: Դպրոցում սովորում էին հայոց լեզու, թվաբանություն և բնագիտություն: Գյուղում նկատելի նշանակություն ուներ նաև գյուղատնտեսական գիտելիքների ուսուցանումը, սակայն դպրոցը չուներ համապատասխան ուսուցիչներ: Թերթը նշում է, որ այժմյան՝ 1926 թ. գյուղացին կարողանում էր գրել իր անունը, սովորել խորհրդային սահմանադրությունը և ծանոթանալ իր երկրի

ծազմանը [2,3]: Ստացվում է, որ արդեն կամաց-կամաց նկատելի էր դառնում, որ գյուղական շրջաններում մարդիկ տառաճանաչ էին դառնում և կարողանում էին տիրապետել տարրական գիտելիքների: Այս դրական տեղաշարժի հետ նույն կերպ զգացվում էր մասնագետների կարիք: Մասնագետների պակասի հետ զուգահեռվում էր դպրոցների առկայության խնդիրը, քանի որ արագ հնարավոր չէր միանգամից կառուցել ուսումնական հաստատություններ, և կային գյուղեր, որոնք չունեին դպրոց: Այդպիսի գյուղերից էր Գետթաղը, որը դեռևս չէր ունեցել դպրոց, որի մասին մտահոգված էր գյուղի բնակչությունը: Գյուղի երեխաները հարևան գյուղեր էին գնում սովորելու, սակայն ոչ բոլորն էին այդպես վարվում, և գյուղում կային երեխաներ, որոնք չէին ստանում կրթություն: Այս հանգամանքներից ելնելով՝ գյուղի բնակչությունը որոշել էր ամեն կերպ գյուղում բացել դպրոց: Դրա համար կազմակերպվել էին նվիրատվություններ, որի միջոցով էլ գյուղում կարողացել էին իրականացնել դպրոցի կառուցման աշխատանքները [2,3]: Թերթում ներկայացվում էր, թե ինչ արդյունքներ են գրանցել գավառում կրթության ասպարեզում: Ներկայացվում է, որ պետությունն իր բոլոր միջոցներն ուղղել էր, որպեսզի գավառներում բացվեն շատ դպրոցներ: Դպրոցների առկայությունը երաշխիք չէր գավառում կրթության ամբողջապես արդյունավետ իրականացմանը: Դրան զուգահեռվում էր մասնագետների ոչ լիարժեք պատրաստվածությունը: Մասնավորապես, դա պայմանավորված էր ոչ բավարար գիտելիքներով զինված մասնագետների առկայությամբ, որոնք պետք է անցնեին պարտադիր վերապատրաստումներ, որպեսզի կարողանային եթե ոչ ամբողջապես, ապա մեծամասամբ երեխաներին դարձնել գրաճանաչ [2,1]: Շարունակելով ներկայացնել թերությունները՝ թերթն անդրադառնում էր ուսուցիչների թույլ տված սխալներին, բացթողումներին: Այդպիսի դեպքի էր ուշադրություն դարձրել թերթը և ներկայացրել Մաղամուջ գյուղի դպրոցի ուսուցիչ՝ Մ. Բաղդասարյանին: Նա աշակերտների նկատմամբ թույլ էր տվել կոպիտ վերաբերմունք, երեխաներին ծեծել, հայհոյել: Այն ինչ, գյուղի բնակչությունը հարգանքով էր վարվել ուսուցչի նկատմամբ՝ նրան գյուղում բնակարան տրամադրելով [2,3]: Այստեղից պետք է նկատի ունենանք, որ ուսուցիչը գյուղերում ունեցել է մեծ պատիվ, և ամեն կերպ բնակիչները ձգտել են ուսուցչի համար գյուղում ստեղծել նպաստավոր պայմաններ, սակայն ոչ բոլոր դեպքերում են ուսուցիչները նույն վերաբերմունքը փոխանցել գյուղի բնակչությանը և ոչ լիարժեք կերպով իրենց աշխատանքն իրականացրել: Գավառում բնակվում էին նաև այլ ազգությունների ներկայացուցիչներ, որոնցից էին ադրբեջանցիները: Նրանց նկատմամբ կրթական առումով, ևս ուշադրություն էր սևեռվում, և բացվում էին նոր դպրոցներ: Գավառի դպրոցներում սովորում էին թուրք ազգությամբ՝ 169 աշակերտներ, որոնք կանոնավոր հաճախում էին դպրոց: Սկզբնական շրջանում թուրք չքավոր ընտանիքների աշակերտները հնարավորություն և ցանկություն չունեին սովորելու, սակայն ժամանակի ընթացքում նրանց ևս իրավունք վերապահվեց սովորելու դպրոցում [2,1]: Սակայն, ինչպես նկատում ենք, գավառում ապրող ադրբեջանցի բնակչությունը գտնվում էր հետամնաց վիճակում: Դրան նպաստում էր դպրոց չհաճախելը, դրա համար ձեռնարկվում էին միջոցներ՝ բարձրացնելու նրանց կրթական մակարդակը և գրաճանաչ դարձնելու: Ինչպես նշել ենք, խորհրդային կառավարության հիմնական նպատակներից էր գյուղերում լուսավորության տարածումը, անգրագիտության վերացումը և դպրոցահասակ բոլոր երեխաներին հավասարաչափ կրթությամբ ապահովելը: Գյուղական ազգաբնակչությունը կրթության դերակատարումն իր կյանքում շատ լավ էր հասկացել, և դրա վառ օրինակներից էր տարբեր գյուղերում բնակիչների կողմից սեփական միջոցներով ուսումնական հաստատությունների կառուցումը: Սակայն այս օրինակները ոչ բոլոր բնակավայրերում էին գործում, ինչպիսին՝ Անգեղակոթ գյուղն էր: Գյուղն ուներ դպրոց, սակայն ծնողները երեխաներին չէին ուղարկում այնտեղ՝ նրանց զրկելով կրթվելու իրավունքից: Դպրոցի փոխարեն ուղարկում էին գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու: Դպրոցում սովորում էր 116 աշակերտ, որից միայն՝ 42-ն էր բավարար ձևով հաճախում: Այդ

պայմաններից ելնելով էլ՝ լուսիրահանգիչը ժողով էր հրավիրել՝ փորձել քննարկելու ծնողների հետ այդ խնդիրը, սակայն ոչ ոք չէր մասնակցել ժողովին՝ փորձելով խուսափել իրենց երեխաներին դպրոց տանելու պարտավորությունից [2,3]: Այսինքն՝ կար անտարբեր վերաբերմունք ծնողների որոշ մասի կողմից երեխաների կրթություն ստանալու նկատմամբ, ինչի պատճառով երեխաների շրջանում քիչ էին գրաճանաչները, որն էլ բարդացնում էր կրթական աշխատանքները կազմակերպելը:

1926 թ. հունվարի 31-ին կայացել էր նիստ, որին մասնակցում էին ուսուցիչներ և ծնողներ: Քննարկման հարց էր բարձրացվել ցածր առաջադիմություն ցուցաբերող աշակերտների խնդրի քննարկումը: Նիստը ղեկավարում էր Գ. Պողոսյանը, որը սկզբից ներկայացրել էր, որ բոլորը պարտավոր էին աջակցել դպրոցին: Խոսելով աշակերտների ցածր առաջադիմության մասին՝ նշել էր, որ դա պայմանավորված էր նրանով, որ երեխաները ավելի շատ ներգրավված էին գյուղատնտեսական աշխատանքների մեջ, քան կրթական կյանքում: Դա կապված էր ծնողների ոչ ճիշտ վերաբերմունքի հետ, քանի որ նրանք պետք է ավելի շատ հանդես գային աջակցողի դերում և պարտավորված՝ երեխաներին ուղարկեին դպրոց: Այդպիսի վերաբերմունքը բացասական ազդեցություն էր թողել թե երեխայի կրթության վրա, թե պետության զարգացման: Քանի որ պետությունը ֆինանսական միջոցներ էր ուղղում և գյուղեր ուղարկում ուսուցիչների, որոնք պետք է դասավանդեին աշակերտներին, և այսպիսի ջանքերը ծնողների անտարբերության պատճառով հօդս էին ցնդում [3,13]:

Տնտեսական համակարգում զարգացում ապահովելու համար հարկավոր էին որակյալ բանվորական կադրեր: Այս խնդիրն այս շրջանում ավելի հրատապ էր դարձել, քանի որ զգացվում էր նոր բանվորական ուժի կարիք: Որակյալ բանվորների պատրաստման նպատակով այս ժամանակ առաջ էր քաշվում նրանց հետ անհատական ուսուցում կազմակերպելու տարբերակը [2,3]: Սա ևս փաստում է, որ համատարած անգրագիտության վերացման պատճառներից մեկը եղել է որակյալ մասնագետ բանվորների առկայությունն ապահովելը:

Այսպիսով, պարզ է դառնում, որ 1920-ական թվականներին Խորհրդային Միության կողմից ձեռնարկված միջոցառումները հնարավորություն են տվել կրճատել անգրագետների թիվը ու կարողանալ պատրաստել կատարելագործված բանվորներ, որոնք կկարողանային տիրապետել նորագույն տեխնիկային: Ժամանակի ընթացքում Զանգեզուրի գավառում մեծացավ գրաճանաչների թիվը և գավառը կարողացավ դուրս գալ խավարամտության կապանքներից:

Գրականություն

[1] Վ.Մ. Ամիրբեկյան, Սովետական տեղական մամուլը, Երևան, Հայկական ԳԱ, հրատ., 1964 թ., էջ 22-23:

[2] «Կարմիր ռաշպար», Գորիս, 1926 թ., №3, 1926 թ., №4, 1926 թ., №17, 1926թ., №23, 1926թ., №26, 1927 թ., №17, 1928 թ. , №2:

[3] ՀԱԱ, ֆ. 132, գ. 1, 546, թ. 13:

ՀՏԴ 323,1

Anna Harutyunyan
American University of Armenia
Professor: Dr. Vahram Ter-Matevosyan

FROM THE ARMENIAN NATIONALISM AND DISSENT TO THE KARABAKH MOVEMENT

Key words: *dissidence, nationalism, movement, Soviet Armenia.*

This paper aimed to argue that the independence of the country and the success of the Karabakh movement, in general, were not accidental events. As a result of the continuous and consistent struggle of at least two generations, which went in two directions - nationalist and dissident, it was possible to use the favorable geopolitical opportunity and launch a movement - the Karabakh movement, which not only led to independence and victory in the first Artsakh war but conditioned almost all spheres of Armenian life (political, social, economic, cultural, and so worth).

Анна Арутюнян

ОТ АРМЯНСКОГО НАЦИОНАЛИЗМА И ДИССИДЕНТСТВО К КАРАБАХСКОМУ ДВИЖЕНИЮ

Ключевые слова: *диссидентство, национализм, движение, Советская Армения.*

Анализируя влияние националистических и диссидентских движений на общественные круги Советской Армении, статья ставит своей целью дать ответы на аргумент о том, что кульминацией процессов, начавшихся с эпохи десталинизации и приведших к возрождению Армянского национализма и диссидентство, стало Карабахское движение и независимость Армении.

Աննա Հարությունյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՅԼԱԽՈՀՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Բանալի բառեր: *այլախոհություն, ազգայինականություն, շարժում, Խորհրդային Հայաստան:*

Վերլուծելով ազգայնական և այլախոհական շարժումների ազդեցությունը Խորհրդային Հայաստանի հասարակական շրջանակների վրա՝ աշխատությունը նպատակ ունի հիմնավորումել տալու այն փաստարկին, որ դեստալինիզացիայի դարաշրջանից սկիզբ առած և հայկական ազգայնականության և այլախոհության վերածննդին հանգեցրած գործընթացների գագաթնակետը դարձան Ղարաբաղյան շարժումը և Հայաստանի անկախությունը:

Introduction Perhaps the most critical event in the history of the Armenian nation in recent centuries was the creation and restoration of the Armenian statehood due to the Karabakh movement and the collapse of the Soviet Union. The Karabakh movement was significant not only for the final result of the movement (gaining independence) but also for shaping and governing the Armenian political thought and elites for about 30 years. The movement was a product of nationalist and dissident movements in Soviet Armenia since the 1950s and 1960s. The process of destalinization created a favorable environment for the effective

implementation of the movements mentioned above in the public circles of Soviet Armenia. In this context, this paper addresses the following research question: How Armenian nationalism and dissent promoted the emergence and success of the Karabakh Movement? Analyzing the impact of nationalist and dissident movements on the social circles of Soviet Armenia, the paper aims to provide answers to the argument that the culmination of processes that started from the destalinization era, which led to the reawakening of Armenian nationalism and dissent, was the Karabakh movement and Armenian independence.

Despite the importance of the Karabakh movement in Armenian public and political life, its motives belong to little-discussed, and studied topics. There were many essential realities behind the emergence of the Karabakh movement. In addition to its favorable geopolitical processes, the movement was the result of nationalist and dissident movements since 1950s and 1960s (Suny, 1993. 180-181). The development of these two movements are associated with the era of destalinization. However, nationalism and dissent were to some extent the result of the comprehensive repatriation of Diaspora Armenians and Stalin's territorial claims of Turkey after World War II. The end of World War II was followed by Stalin introducing specific claims of territories to Turkey (Kuniholm, 1980, cited in Saparov, 2018. 868). Regardless of the real reasons for the initiative and its subsequent manifestation, this event creates fertile ground for forming and developing nationalist and dissident movements in Soviet Armenia. In the context of this initiative, many thematic works related to the history and territorial affiliation of the Armenian nation were published (Saparov, 2018. 868-69). However, with this initiative, Stalin himself laid the groundwork for basic movements that, four decades later, led to a historic event in the Soviet Armenian reality (the Karabakh movement), which willy-nilly became another impetus of the collapse of the Soviet Union.

Besides, Stalin organized large-scale repatriation within the framework of which in the 1940s alone, about 100,000 Armenians arrived in Soviet Armenia to establish permanent residence (Laycock, 2012. 103). The vast majority of returnees come from Armenian communities in the Middle East (Saparov, 2018. 869). Since the majority of the Armenian communities formed in that region were Genocide survivors and their descendants, it is assumed that they were also the predominant returnees to Soviet Armenia. Repatriation is perhaps one of the most critical impetuses for the reinterpretation of the Armenian identity. The point is that the Armenians living in the Armenian communities have always kept on their conscious level the memories of the Genocide, the image of Turkey as the Enemy, and the injustices done to the Armenian people. After settling in Soviet Armenia, they gradually conveyed those thoughts and ideas to the locals. This process results in the anti-Turkish and irredentist nature of Armenian nationalism and dissent from the 1950s and 1960s onwards (Panossian, 2002. 227).

Although these two factors laid the foundations for nationalist and dissident movements, these movements would not have come to life if the systemic change had not taken place after Stalin's death. First of all, the Soviet system was Russian-centric in nature. This meant that the other nations of the Union had minority status. In addition to status, the central government exerted tremendous pressure on these minorities through policies of assimilation and Russification (Suny, 1993. 178). All this is compounded by the numerous political persecutions, repressions, and restrictions, which, as a result of their long-term nature, began to appear with the manifestation of nationalism in the period of destalinization. The beginning of destalinization was Nikita Khrushchev's "Secret Speech" to the Twentieth Congress of the Communist Party of the Soviet Union (Khrushchev, 1956, cited in Suny, 2003. 340). This secret speech "legalized" Stalin's violence, giving rise to a new impetus for nationalist aspirations. The most important result of Khrushchev's speech was that profound systemic changes occurred within the Soviet Union in almost all spheres, particularly in political

and cultural life. In the context of political reforms, practically all high-ranking officials of the Stalin era were replaced. There were turning points in the cultural context, as a result of which cultural and historical figures, formerly considered enemies of the system by Stalin, regained their former fame. People who were exiled were allowed to return (Suny, 1993. 180-81). In the Soviet Armenian reality, the process of destalinization led to the movement against Stalin, the culmination of which was the removal of the latter's memorial (Suny, 1993. 183). As already mentioned, repatriation took place mainly during the Stalin era, but the indirect consequences of the latter were manifested as a result of significant changes in the Soviet system. The identity and historical memories were there already; all that was lacking was the favorable environment that was provided in the late 1950s. One of the guarantees of the success of this process was the homogeneity of Soviet Armenia and the idea that Armenianness was in the subconscious of the people (Suny, 1993. 184). Each event in the country's domestic life was given a national character: the process of naming children, success in sports, reference to historical and cultural events, and so on (Ter-Matevosyan, 2018). Thus, the formation and development of the nationalist movement was not a homogeneous and casual process. Many processes, directly and indirectly, have contributed to the redefinition of national identity, which had been mainly expressed and materialized through the destalinization process. These realities, in turn, became the basis for the Karabakh movement and the struggle for Armenia's independence.

A turning point in nationalist and dissident movements during the Soviet era was the idea of events marking the 50th anniversary of the Genocide and the subsequent peaceful commemoration demonstration of thousands (Saparov, 2018. 862). This event was mainly connected with the expression of dissent in the public circles of Soviet Armenia. Dissent was the result of nationalist tendencies as far back as the 1950s (Iskandaryan, 2016. 31). At that time, nationalism in the Armenian reality was not anti-Russian in nature, unlike, for example, in Latvia, Lithuania, Estonia, or Georgia. It was anti-Turkish. This characteristic trait was passed on to the dissident movement in the 1960s. However, dissent in the Armenian reality also had anti-Soviet and anti-colonialist components (Panossian, 2002. 227-28).

Moreover, the Soviet Union was accused of injustices against Armenians. In this context, the emphasis was mainly on the Moscow Treaty of 1921. Armenian dissident groups fought for the return of the territories passed to Turkey and Azerbaijan under the Moscow Treaty and for unification with Soviet Armenia. Dissidents sometimes also had an anti-Russian nature, in which Tsarist Russia was sometimes accused of participating in the Genocide (Suny, n.d. 388. Marutyan, 2009. 237-38). Finally, dissent was not initially driven by the idea of independence but mainly expressed territorial claims. However, dissidents in Soviet Armenia eventually supplemented their struggle with the concept of independence, one of the biggest supporters of which, Paruyr Hayrikyan, spent about 17 years in Soviet prisons due to the struggle for independence. The dissident struggle and the goals and values put forward by the dissidents led to the Karabakh movement and Armenia's independence two decades later. First of all, the primary dimension of dissent, as already mentioned, was anti-Turkishness and territorial claims from Turkey and Azerbaijan. In this context, the trauma of the Genocide was significant. Since the formation of the Nagorno-Karabakh Autonomous Region within Soviet Azerbaijan, Armenians, who make up the majority of the population of Nagorno-Karabakh, had been subjected to regular discrimination and harassment. This situation had been at its peak since the late 1980s when violence in some areas escalated into ethnic cleansing (Cheterian, 2018. 884-887). In this context, the consequences of the dissident movement are pretty obvious. As a result, the Azerbaijanis are immediately identified with the Turks, the massacres with the threat of a new genocide. The consequences of dissent during the Karabakh movement are evident in such important documents as February

20, 1988, December 1, 1989, and the Declaration of Independence of August 23, 1990. These documents reflect realities such as the unification of Karabakh with Soviet Armenia (1988, 1989, 1990), the issues of injustices against the Armenian people, and the international recognition of the Genocide (1990) ("Karabakh in 1988: The beginning of the modern stage of national-liberation struggle | NKR", 2021. LLC, 2021). Thus, the dissident movement that lasted for almost two decades, the demands of which initially seemed unreal, achieved a tremendous historical result and led to the main events of the modern period of Armenian history - the Karabakh movement andt the restoration of the Armenian state.

If the manifestations of nationalism and dissent resulted from Khrushchev's thaw, then the Karabakh movement was the result of Gorbachev Perestroyka and Glasnost. In addition to the economic component, these reforms also gave specific powers to local authorities (Tompson, 1993. 87). The argument does not mean that these were the only reasons. In addition, the realities mentioned above created favorable environments for the Karabakh movement, which were based on certain radical reasons. As already mentioned, dissident and nationalist ideas have greatly influenced the Karabakh movement. During that period, the Soviet Armenian nationally-minded intelligentsia developed in parallel, the prominent members of which were scholars and academics, who later assumed the movement's leadership through the Karabakh Committee. Due to the latter's efficiency, the movement led to the desired results (Iskandaryan, 2016. 34).

Moreover, in a favorable environment, on the eve of the Karabakh movement, an ecological movement was taking place in Soviet Armenia. All this was happening a year before the outbreak of the movement; in 1987, the movement's main demands were related to the closure of the Metsamor Nuclear Power Plant, Lake Sevan, and the Nairit chemical plant(Libaridian, 1999. 25. Melkonian, 2001. 181-82). This non-political movement tested the vigilance and reaction of the Soviet authorities and the KGB. Filled with nationalist ideas, the future leaders of the Karabakh movement realized the importance and benefits of the moment. As a result, the ecological demands of this movement were gradually replaced by political. The main impetus was the decision made in Nagorno-Karabakh on February 20, 1988, demanding that Soviet Azerbaijan be transferred to the control of Soviet Armenia ("Karabakh in 1988: The beginning of the modern stage of national-liberation struggle | NKR", 2021.). This incident was one of the most important episodes of the Karabakh movement. Soviet Azerbaijan immediately responded through violent means. As a result, Armenian massacres took place in Sumgait, Azerbaijan, just nine days later (Cheterian, 2018. 892). This reality is further inflamed in nationalist tendencies formed by Armenian public circles for almost three decades. The disagreement with Stalin's decision over the loss of Artsakh had left its deep roots, which were to be expressed in the end. The impression was that the Armenians were finally waiting for a unique opportunity to restore ‘’historical justice’’.

Nature also indirectly contributed to the further development of the Karabakh movement. On December 7, 1988, a devastating earthquake shook the northern regions of Armenia (Doose, 2018. 925). It seemed that the Armenians should have given up on the Karabakh movement. However, history has shown that the earthquake was the last signal involving all layers of Armenians in the movement and then in the war. From this moment on, anti-Russian and pro-independence tendencies became widespread. Such a reaction of the Armenians was the result of two main circumstances. First, it was widely discussed that the earthquake resulted from an artificial explosion organized by the Soviet authorities, with which the authorities were trying to stop the movement (Pogosyan 1990, 9 cited in Doose, 2018. 930). The latter understood very well what a devastating blow the movement's success could inflict on the Soviet Union. The reality is that it happened, but this fact does not confirm that the earthquake resulted from intentionality. The second was that the catastrophe doubled the anger of the Armenians over the "continuing historical injustices." The

crimes committed by the Soviet Union against the Armenians, the nationalist ideas accumulated for almost three decades, the presence of leaders with higher education, the favorable environment within the Soviet Union, the decisions of February 20, 1988, and December 1, 1989, to unite the Nagorno Karabakh with Soviet Armenia; the trauma of the Genocide, the identification of Azerbaijan with the main enemy of the Armenians, Turkey, and the earthquake, with its consequences, increased the significance and importance of the idea of struggle in the Armenian identity, which found its embodiment in the Karabakh movement and its success.

Apart from the historical event, the Karabakh movement is essential in that its legacy has formed and remained the main component of the political life of the independent Republic of Armenia. All other issues, both external and internal, depended on the Karabakh issue. It is very important to distinguish the Karabakh movement from the Karabakh issue. The latter refers to the conflict and its implications in Armenian domestic life (Libaridian, 1999. 26). After the ceasefire, the Armenian political elites were unable to finally register the results of the 1994 ceasefire in further negotiations. The severe problem in this context was that the positions and bargaining of the Armenian ruling elites in the negotiations did not correspond to the public's mood. This dissonance eventually paid off as a result of the 45-day war, after which, almost a year later, Armenia pushed the Karabakh issue into the background for the first time in thirty years as an independent Republic, replacing the Republic of Armenia's territorial integrity and security agenda. Thus, the victory of the 1990s overshadowed the prospects for the development of independent Armenia for almost 30 years, as a result of which Armenia transformed from a victorious state into a defeated state, the obvious manifestation of which was the 45-day war in 2020.

Conclusion Indeed, the creation of the Soviet Union and the Sovietization of Armenia are the result of hard-won independence. However, there were some turning points in the years of the Soviet Union, which may not have been significant at first glance, but due to causal continuity led to the emergence of the Karabakh movement, which has been the cornerstone of Armenia's foreign and domestic policy for three decades.

This paper aimed to argue that the independence of the country and the success of the Karabakh movement, in general, were not accidental events. As a result of the continuous and consistent struggle of at least two generations, which went in two directions - nationalist and dissident, it was possible to use the favorable geopolitical opportunity and launch a movement - the Karabakh movement, which not only led to independence and victory in the first Artsakh war but conditioned almost all spheres of Armenian life (political, social, economic, cultural, and so worth).

Reference list

1. *Armenian Declaration of Independence.* (1990). Gov.Am. https://www.gov.am/en/independence/
2. Cheterian, V., (2018) *The Uses and Abuses of History: Genocide and the Making of the Karabakh Conflict,* Europe-Asia Studies, 70:6, 884-903, DOI: 10.1080/09668136.2018.1489634 https://doi.org/10.1080/09668136.2018.1489634
3. Doose, K., (2018) *The Armenian Earthquake of 1988: A Perfect Stage for the Nagorno-Karabakh Conflict.* Europe-Asia Studies, 70:6, 924-941, DOI: 10.1080/09668136.2018.1487679
4. Iskandaryan, A., Mikaelian, H. and Minasyan, S. (2016), *War, business and politics: informal networks and formal institutions in Armenia,* Caucasus Institute.
5. Laycock, J. (2012). *Armenian Homelands and Homecomings, 1945–9. Cultural and Social History,* 9(1), 103-123. https://doi.org/10.2752/147800412x13191165983079
6. Libaridian, G., (1999). *The challenge of statehood.* Blue Crane Books.

7. Marutyan, H. (2021). Iconography *of Armenian Identity: The Memory of Genocide and the Karabagh Movement* (Volume 1). Gitutyun Publishing House of N.
8. *Karabakh in 1988: The beginning of the modern stage of national-liberation struggle* | NKR. (1988). Nkr.Am. http://www.nkr.am/en/karabakh-national-liberation-movement
9. Panossian, R., (2009). Post-*Soviet Armenia. In L. Barrington (Eds.), After Independence,* (pp. 225-247). University of Michigan Press.
10. *"Report of Vladimir Semichastnyi to the Central Committee on Armenian Nationalists,* February 7, 1966", pp. 385-388 in Suny R., (2003) *The Structure of Soviet Union: Essays and Documents.*
11. Saparov A.,(2018) *Re-negotiating the Boundaries of the Permissible: The National(ist) Revival in Soviet Armenia and Moscow's Response,* Europe-Asia Studies, 70:6, 862-883, DOI:10.1080/09668136.2018.1487207 https://doi.org/10.1080/09668136.2018.1487207
12. Suny, R., (1993). *Looking toward Ararat.* Indiana Univ. Press.
13. Ter-Matevosyan, V. (2018, May 29). T*he Legacy of the First Republic of Armenia during the Soviet Era: The Tumultuous 1960s.* The Armenian Weekly. https://armenianweekly.com/2018/05/27/the-legacy-of-the-first-republic-of-armenia-during-the-soviet-era-the-tumultuous-1960s/
14. Tompson, W. J. (1993). *Khrushchev and Gorbachev as Reformers: A Comparison.* British Journal of Political Science, 23(1), 77–105. http://www.jstor.org/stable/194068

ՀՏԴ 327,5

Էլեն Շարոյան
Վանաձորի պետական համալսարանի
հումանիտար ֆակուլտետի
պատմության բաժնի մագիստրատի
e-mail: elen2099@mail.ru,
Գիտական ղեկավար՝
*պ.գ.դ., պրոֆեսոր, **Ֆ. Մովսիսյան***

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ ԴԱՏԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԹԵՀՐԱՆԻ «ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ

Բանալի բառեր՝ *հայ-ադրբեջանական հակամարտություն, ԵԱՀԿ Մինսկի խումբ, հայ պարբերական մամուլ, սփյուռքահայություն, լոբբիստական կազմակերպություն*

Զեկույցի նպատակն է ուշադրության արժանացնել Սփյուռքում գործող հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը և այդ գործունեության լուսաբանումը Թեհրանի «Ալիք» օրաթերթում: Թերթը տարածում է ՀՅԴ գաղափարները: Օրաթերթը, լուսաբանելով հակամարտության կարգավորման ուղղությամբ Հայ Դատի հանձնախմբի գործունեությունը, այն լուսաբանում է հայանպաստ դիրքերից՝ փորձելով ամեն կերպ իր ընթերցողների ուշադրությունը հրավիրել հակամարտությանը և այն լուծելու հայամետ տարբերակներին:

Элен Шароян

ОТГОЛОСКИ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО КОМИТЕТА ПО УРЕГУЛИРОВАНИЮ АРЦАХСКОГО КОНФЛИКТА В ТЕГЕРАНСКОЙ ГАЗЕТЕ "АЛИК"

Ключевые слова: *армянско-азербайджанский конфликт, армянская периодическая пресса, армянская диаспора, Минская группа ОБСЕ, лоббистская организация*

Цель доклада - привлечь внимание к деятельности армянских лоббистских организаций в диаспоре, освещая эту деятельность в ежедневной газете "Алик" в Тегеране. Газета содержит идеи АРФ, они были высказаны в публикациях газеты. Освещая деятельность Армянского национального комитета по урегулированию конфликта, газета освещает ее с проармянской позиции, пытаясь привлечь внимание своих читателей к проармянским путям урегулирования конфликта.

Elen Sharoyan

ECHOES OF THE ACTIVITIES OF THE ARMENIAN NATIONAL COMMITTEE FOR THE SETTLEMENT OF THE ARTSAKH CONFLICT IN THE TEHRAN NEWSPAPER "ALIK"

Keywords: *Armenian-Azerbaijani conflict, Armenian periodical press, Armenian Diaspora, The OSCE*

Minsk Group, Lobbying organization, war

The purpose of the report is to draw attention to the activities of the Armenian lobbying organizations in the Diaspora, covering these activities in the daily newspaper "Alik" in Tehran. The newspaper contains the ideas of the ARF, they were expressed in the newspaper's publications. Covering the activities of the ANCA for the Settlement of the Conflict, the newspaper covers it from a pro-Armenian position, trying to draw the attention of its readers to the pro-Armenian ways of resolving the conflict.

Սփյուռքում գործում են մի շարք կազմակերպություններ, որոնք ծավալում են հայրենասիրական լայն գործունեություն: Նրանց իրականացրած ծրագրերը կրում են ինչպես հասարակական-քաղաքական, այնպես էլ բարեգործական և մարդասիրական բնույթ: Այդ կազմակերպությունների երկարամյա և հետևողական գործունեությունը ուղղված է Հայոց Ցեղասպանության ճանաչման և Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացին:

Սույն հոդվածի նպատակն է ուշադրություն հրավիրել Սփյուռքում գործող հայկական խոշոր լոբբիստական կազմակերպություններից մեկի՝ Հայ Դատի հանձնախմբի գործունեության վրա, և ուսումնասիրել հանձնախմբի կատարած աշխատանքների լուսաբանման ինտենսիվությունը Իրանի Իսլամական Հանրապետության մայրաքաղաք Թեհրանում լույս տեսնող «Ալիք» օրաթերթի էջերում: «Ալիք» օրաթերթը լույս է տեսնում 1931 թվականի մարտի 22-ից, Թեհրանում, սկզբում որպես շաբաթաթերթ, 1935 թվականից՝ երկօրյա, իսկ 1941 թվականից՝ որպես օրաթերթ:

Ինչու՞ է անդրադարձ կատարվում հատկապես Թեհրանում լույս տեսնող «Ալիք» օրաթերթին: Առաջին հերթին, քանի որ օրաթերթը իր գաղափարաբանական ուղղվածությամբ կրում է Հայ հեղափոխական դաշնակցության ազդեցությունը և համեմատած Մերձավոր Արևելքում լույս տեսնող մյուս պարբերականներին, ավելի օպերատիվ է լուսաբանում Հայ դատի հանձնախմբի և տարբեր երկրներում գործող նրա գրասենյակների աշխատանքները[1]:

Ներկայումս Իրանում ապրում է 60-80.000 հայ[2]: Ի թիվս Իրանում լույս տեսնող մյուս թերթերի, «Ալիք»-ը առանձնանում է տեղեկատվության տրամադրման և մատուցման ձևով: Օրաթերթը միշտ տրամադրում է ծավալուն և համակողմանի տեղեկատվություն, հնարավորություն տալով ընթերցողին սեփական կարծիքն ու տեսակետը ձևավորել այս կամ այն իրադարձության վերաբերյալ:

1980-ական թվականների վերջին վերելք ապրած Արցախյան շարժումը հայոց նորագույն պատմության փառապանծ էջերից է և հայ ժողովրդի պայքարի ու վճռականության խորհրդանիշն է: 1988 թվականի փետրվարին սկսված Արցախյան ազգային-ազատագրական շարժումը, որն այնուհետև վերաճեց պատերազմի, ավարտվեց 1994 թվականի մայիսին: Ադրբեջանական կողմի խնդրանքով, Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ և ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների օգնությամբ մայիսի 5-ին Բիշքեկում Ռուսաստանի, Ղրղզստանի և ԱՊՀ միջնորդական խորհրդաժողովի միջնորդությամբ Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության խորհրդարանների ղեկավարները (Յ. Մամեդով, Կ. Բաբուրյան և Բ. Արաքցյան) ստորագրեցին արձանագրություն կրակի դադարեցման վերաբերյալ: Բիշքեկյան արձանագրությանը Ադրբեջանը միացել է ավելի ուշ՝ մայիսի 8-ին: Արդեն մայիսի 11-ին ՌԴ պաշտպանության նախարար Պավել Գրաչովի միջնորդական ջանքերով ՀՀ, ԱՀ պաշտպանության նախարարները և ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարը ստորագրում

[1] *http://armnational.am/ru/c/alik-daily-tehran:*

[2] *http://diaspora.gov.am/hy/pages/44/iran:*

են համաձայնագիր կրակը դադարեցնելու վերաբերյալ: Մայիսի 12-ին համաձայնագիրը ուժի մեջ մտավ: Սակայն հաջորդ օրը ադրբեջանական կողմը խախտեց այն: Վերջապես մայիսի 16-ին պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ մայիսի 17-ի ժամը 00-ից պետք է կրակը դադարեցվի: Ադրբեջանը մեկ ամիս անց տվեց իր համաձայնությունը[1]:

Ռազմական գործողությունների ավարտից հետո սկսվեց Արցախյան հակամարտության կարգավորման բանակցային փուլը: 1995 թվականի նոյեմբերի 17-ին Հայ Դատի Կանադայի հանձնախմբի պատվիրակությունը հանդիպում է ունենում Կանադայի արտաքին գործերի նախարարության բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Հանդիպման ընթացքում Հայ Դատի հանձնախմբի անդամները Կանադայի ԱԳՆ-ի ներկայացուցիչներին ներկայացնում են Արցախի պատմությունը, անցյալը և հետպատերազմյան շրջանում տիրող իրավիճակը: Կանադայի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչները նշում են, որ Կանադայի իշխանությունները խրախուսում են 1994 թվականի մայիսից հաստատված հրադադարի պայմանավորվածությունը: Կանադան նաև աջակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի անդամների գործունեությանը՝ ուղղված Արցախի հարցի կարգավորմանը: Հայ Դատի հանձնախմբի անդամները շեշտը դնում են այն հանգամանքի վրա, որ բանակցային գործընթացին վերաբերող ցանկացած քննարկման և հանդիպման պետք է մասնակցեն նաև Արցախի Հանրապետության ներկայացուցիչները[2]:

1996 թվականի մայիսին ԱՄՆ-ի Հայ Դատի հանձնախմբի հերթական ամփոփիչ նիստի ընթացքում ԱՄՆ-ի Հայ Դատի հանձնախումբի նախագահ Մուրադ Թոփալյանը իր ելույթում ընդգծեց, որ «հանձնախումբը լծվել է ամերիկեան ուղղակի օժանդակութիւն ապահովելու համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեանը, այս ձեւով փորձելով նաև մի բեռ թեթեւացնել Հայաստանի Հանրապետութեան ուսերից»: Հանձնախմբի նախագահի խոսքով՝ դա, իհարկե, շատ բարդ նախաձեռնություն է, սակայն հանձնախմբի անդամները ամեն ինչ անում են հաջողելու համար: Թոփալյանը, հանձնախմբի նշյալ ձեռնարկության մասին խոսելիս, այն բնութագրեց որպես փորձ՝ նոր մակարդակի վրա դնելու ԱՄՆ-ի հետ դաշնակցային հարաբերությունները[3]:

2003 թվականի փետրվարի 19-ին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցան անկախությունից ի վեր թվով 4-րդ նախագահական ընտրությունները: Երկրորդ փուլ դուրս եկան գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը և ընդդիմության միասնական թեկնածու Ստեփան Դեմիրճյանը: ՀՀ նախագահի պաշտոնում վերընտրվեց Ռոբերտ Քոչարյանը[4]:

Նախագահի պաշտոնում վերընտրվելուց մի քանի ամիս անց՝ մայիսի 7-ին, նախագահ Քոչարյանը Երևանում ընդունեց Հայ Դատի հանձնախմբերի ներկայացուցչական պատվիրակությանը, որի ընթացքում քննարկվել են հանձնախմբի անելիքները, պետական օժանդակությունը հանձնախմբի գործունեությանը: Նախագահը, իր հերթին ողջունելով հանձնախմբի անդամներին, նշել է, որ ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերը, գործելով աշխարհի տարբեր անկյուններում, տասնամյակներ շարունակ առաջատար դիրք են գրավում հայ ժողովրդի շահերի պաշտպանության, համահայկական խնդիրների լուծմանն աջակցելու գործում: Հանձնախմբերի այսպիսի գործունեությունն ու դրա տված պտուղները «պետութեան եւ Սփյուռքի ջանքերի, ներուժի միաւորման լաւագույն օրինակ է[5]»:

---

[1] *Տե՛ս Էդիկ Մինասյան, Հայաստանի երրորդ հանրապետություն, Երևան, 2013, էջ 160-161:*

[2] *Տե՛ս «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 25 հունվարի, 1995թ., թիվ 19, էջ 3:*

[3] *Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 25 մայիսի, 1996թ., թիվ 107, էջ 3:*

[4] *Տե՛ս Էդիկ Մինասյան, նշվ. աշխ., էջ 515:*

[5] *«Ալիք» օրաթերթ, 8 մայիսի, 2003թ., թիվ 88 էջ 1:*

2009 թվականի հուլիսի 10-11-ին Հայ Դատի կենտրոնական խորհրդի նախաձեռնությամբ Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում հրավիրվեց համահայկական խորհրդաժողով, որը նվիրված էր հայ-թուրքական հարաբերություններին և Արցախյան հարցի կարգավորմանը: Խորհրդաժողովին ներկա էր նաև Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: Երկու օր տևած քննարկումների արդյունքում խորհրդաժողովը հրապարակեց միացյալ բանաձև, որով աշխարհի 25 պետություններից ժամանած հայ պատվիրակները վճռականություն դրսևորեցին բոլոր միջոցներ գործի դնել ազգային, պետական շահի պաշտպանության համար և հակամարտության կարգավորման հարցում միասնականություն ցուցաբերել[1]:

Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը 2010 թվականի հունիսի 22-ին տարածեց պաշտոնական հայտարարություն, որում քննադատում էր Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում տեղի ունեցած միջադեպը դատապարտող՝ ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների հայտարարությունը՝ այն որակելով «թույլ»: Հայ Դատի հանձնախմբի գնահատմամբ՝ այդ հայտարարությունը Ադրբեջանի համար «անվճար անցաթուղթ է ապահովում դեպի պատերազմ»: Մինսկի խմբի համանախագահները երկուշաբթի օրը հրապարակած հայտարարությունում դատապարտել են ուժի կիրառումը և ափսոսանք հայտնել մարդկային զոհերի կապակցությամբ: Միջնորդները նաև ընդգծել են, որ «խաղաղ բանակցությունների միջոցով հակամարտության կարգավորմանը այլընտրանք չկա», և պատերազմը չի կարող դիտվել որպես հնարավորություն: Վաշինգտոնի Հայ Դատի գրասենյակի ղեկավար Արամ Համբարյանի գնահատմամբ՝ «Մինսկի խմբի համանախագահները բռնության կիրառումը ընդհանուր գծերով դատապարտելու փոխարեն պետք է ուղիղ քննադատության ենթարկեին ադրբեջանական վերջին հարձակումը»: Այդ հայտարարությունը, ինչպես գնահատել է Արամ Համբարյանը, «Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին ընձեռում է Լեռնային Ղարաբաղի դեմ վաղուց խոստացված պատերազմը սկսելու անվճար անցաթուղթ»[2]:

2014 թվականի հուլիսին ադրբեջանական կողմը կրկին խախտեց հրադադարի ռեժիմը: Հուլիսի 26-ից օգոստոսի 2-ը արցախա-ադրբեջանական շփման գոտում ընթացան ծանր մարտեր, որի արդյունքում հայկական կողմը տվեց 5 զոհ և 7 վիրավոր: Այս իրադարձություններին արձագանքեց նաև Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը, որի անդամներ Արամ Համբարյանը և Քեյթ Նահապետյանը օգոստոսի 8-ին հանդիպեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Ջեյմս Ուորլիքի հետ և նրան փոխանցեցին Հանձնախմբի նախագահ Քեն Խաչիկյանի նամակը: Նրանում մասնավորապես նշվում էր, Ադրբեջանի նախագահ Ալիևի կողմից սանձազերծված հարձակումները Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ճակատագրական էին ու տասնյակ մարդկանց կյանք խլեցին՝ միաժամանակ բացասաբար անդրադառնալով ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքների վրա[3]: Նամակի ամբողջական տեքստը տեղադրվեց Ալիք օրաթերթում, որի հերթական համարի հղումը տրված է ստորև[4]:

Որքան էլ միջազգային հանրությունը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հայտարարություններով և կոչերով հանդես գան, ազդակներ ուղարկեն ադրբեջանական ղեկավարությանը, ինչպես նախորդ դեպքերում, այնպես էլ հիմա ոչ մի ազդեցություն չունեցավ

---

[1] *Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 11 հուլիսի, 2009թ., թիվ 136, էջ 1:*

[2] *«Ալիք» օրաթերթ, 23 հունիսի, 2012թ., թիվ 125,,էջ 1:*

[3] ***Լիանա Մամյան**, Արցախյան հիմնախնդրի կարգավորումը և Հայաստանին ու Արցախին տրամադրվող ամերիկյան օգնության ապահովումը ամերիկահայ լոբբիստական կազմակերպության գործունեության առանցքում, Երևան, 2017թ, էջ 9:*

[4] *Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 10 օգոստոսի, 2014թ., թիվ 158, էջ 1:*

ադրբեջանական կառավարության վրա: Ողջ 2015 թվականի ընթացքում լարվածությունը թե՛ հայ-ադրբեջանական և թե՛ արցախա-ադրբեջանական սահմանին պահպանվեց: Լարվածությունն իր գագաթնակետին հասավ 2016 թվականի ապրիլին: Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը ադրբեջանական կողմը, խախտելով 1994 թվականի մայիսին կնքված զինադադարի դրույթները, լայնածավալ հարձակում սկսեց արցախա-ադրբեջանական շփման գոտու ողջ երկայնքով: Ապրիլյան պատերազմի վերաբերյալ հայտարարություններ տարածեցին ողջ աշխարհում գործող Հայ Դատի գրասենյակները: Ապրիլի 6-ին հայտարարությամբ հանդես եկավ նաև Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արմեն Համբարյանը: Համբարյանն իր ուղերձում հորդորում էր ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի վարչակազմին վերջ դնել Իլհամ Ալիևի կողմից սանձազերծած հարձակումներին Արցախում, որը վատթարագույնն էր 1994 թվականի զինադադարից հետո: Հայտարարության մեջ ուշադրություն էր դարձվում այն հանգամանքին, որ Վաշինգտոնում ԱՄՆ-ի ղեկավարության կողմից ջերմ ընդունելության արժանանալուց հետո, Ալիևը սանձազերծել է լայնամասշտաբ հարձակումներ: Համբարյանը նաև շեշտել է այն փաստը, որ ո՛չ ԱՄՆ-ի փոխնախագահ Ջո Բայդենը, ո՛չ էլ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերին Ալիևի հետ ունեցած հանդիպումների ժամանակ որևէ կերպ նրան չեն հորդորել գնալ իրադրության լարվածությունը թոթափելուն ուղղված քայլերի: Ադրբեջանի նախաձեռնած ռազմական գործողությունների արդյունքում հայկական կողմի զոհերի մեջ եղել են նաև քաղաքացիական անձինք[1]:

Ապրիլյան պատերազմից հետո Արցախյան հարցի կարգավորման խնդիրը և հատկապես Արցախի անկախության միջազգային ճանաչման հարցը դառնում են հայկական լոբբիստական կազմակերպությունների, այդ թվում՝ ԱՄՆ-ի Հայ Դատի հանձնախմբի գլխավոր խնդիրներից մեկը: Հայ Դատի հանձնախմբի նշանակալի գործողություններից է նաև 2018 թվականի դեկտեմբերին Լիբանանի Հայ Դատի կառույցի կոշտ արձագանքը «Washington Press» և լիբանանյան «Daily Star» օրաթերթերի հրապարակումներին, որոնցում վերջիններս Արցախի Հանրապետությունը ներկայացրել են որպես. «Ադրբեջանի մի մաս, որը 1994-ին «« «վեցամսեայ անջատողական պատերազմի աւարտից ի վեր գտնըւում է Հայաստանի աջակցութիւնը վայելող հայկական ազգային ուժերի վերահսկողութեան տակ»: «Ալիք» օրաթերթի դեկտեմբերի 13-ի համարում հրապարակված Հայ Դատի հանձնախմբի հայտարարության մեջ հանձնախմբի անդամները ընդգծում էին, որ նշված հրապարակումը ոչ միայն սխալ և կողմնակալ պնդում է, այլև ադրբեջանական պաշտոնական անհիմն պնդման մեջբերում: Կառույցը իր հայտարարության մեջ ուշադրության է արժանացրել նաև այն փաստը, որ Արցախը անկախ պետություն է և իր անկախությունը հռչակել է՝ հիմնվելով ԽՍՀՄ ներքին օրենքների և միջազգային օրենքների վրա[2]:

Արցախյան հակամարտության պատմությանն առնչվող կարևոր փաստաթուղթ հրապարակվեց ԱՄՆ-ի Հայ Դատի հանձնախմբի կողմից: Դա տեղի ունեցավ 2019 թվականի հուլիսին, երբ հանձնախումբը հրապարակեց Սպիտակ տան գաղտնի փաստաթուղթ: Համաձայն այդ փաստաթղթի՝ 1997 թվականի օգոստոսի 1-ին՝ Բիլ Քլինթոնի նախագահության շրջանում՝ Ադրբեջանի նախագահ Հեյդար Ալիևը երկկողմ հանդիպման ընթացքում, հայտնելով իր դիրքորոշումը եռակողմ (Հայաստան-ԼՂՀ-Ադրբեջան) բանակցությունների մասին, հայտնել է, դեմ չէ ԵԱՀԿ հովանու ներքո Արցախի՝ որպես 3-րդ բանակցող կողմ ներգրավվելուն: «Ուղղակի բանակցությունների համար Ադրբեջանը, Հայաստանը և ԼՂ-ն ներկայացված են Մինսկի խմբի գործընթացում: Մենք շարունակելու ենք սա»,- նշել է Հեյդար Ալիևը[3]:

---

[1] Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 6 ապրիլի, 2016թ., թիվ 66, էջ 3:
[2] Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 13 դեկտեմբերի, 2018թ., թիվ 260, էջ 3:
[3] Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 6 հոկտեմբերի, 2019թ., թիվ 206, էջ 1:

Հայ Դատի հանձնախմբի գործունեությունն ակտիվորեն լուսաբանող և Թեհրանում լույս տեսնող «Ալիք» օրաթերթի ապրիլի 27-ի համարում հայտնվեց տեղեկություն այն մասին, որ ապրիլի 23-24-ին Ուրուգվայի Հայ Դատի հանձնախմբի հրավերով և նախաձեռնությամբ Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարար Մայիս Մայիլյանի գլխավորած պատվիրակությունը ժամանել է Ուրուգվայի Արևելյան Հանրապետության մայրաքաղաք Մոնտեվիդեո: Այցի առաջին օրը Մայիս Մայիլյանը հանդիպում է ունենում Ուրուգվայի նախկին նախագահ Խոսե Մոխիկայի հետ: Զրույցի ընթացքում Մայիս Մայիլյանը բարձր է գնահատում Մոխիկայի և Ուրուգվայի իշխանությունների բարեկամական վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ: Նախագահ Մոխիկայի խնդրանքով՝ ԱԳՆ ղեկավարը անդրադարձ է կատարում Արցախի միջազգային ճանաչման հեռանկարներին. ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության պատմությանը և խաղաղ կարգավորման գործընթացին: Հանդիպմանը մասնակցում են նաև Հայ Դատի Ուրուգվայի և Կենտրոնական հանձնախմբի անդամները[1]:

2020 թվականի ընթացքում ևս Հայ Դատի հանձնախմբի տարբեր երկրներում գործող գրասենյակները շարունակում են ակտիվ աշխատանքը Արցախյան հակամարտության խաղաղ կարգավորմանը նպաստելու ուղղությամբ: Սակայն 44-օրյա պատերազմից հետո որոշակի փոփոխություններ են գրացվում հակամարտության կարգավորման հարցում, ուստի փոխվում է նաև Հայ Դատի գործունության վեկտորը՝ ուղղվելով դեպի Արցախի Հանրապետության անկախության ճանաչում:

Գրականություն

1. «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 25 հունվարի, 1995թ., թիվ 19, էջ 3:
2. «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 25 մայիսի, 1996թ., թիվ 107, էջ 3:
3. «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 8 մայիսի, 2003թ., թիվ 88, էջ 1:
4. «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 11 հուլիսի, 2009թ., թիվ 136, էջ 1:
5. «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 23 հունիսի, 2012թ., թիվ 125, էջ 1:
6. «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 10 օգոստոսի, 2014թ., թիվ 158, էջ 1:
7. «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 6 ապրիլի, 2016թ., թիվ 66 էջ 3:
8. «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 13 դեկտեմբերի, 2018թ., թիվ 260, էջ 3:
9. «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 6 հոկտեմբերի, 2019թ., թիվ 206, էջ 1:
10. «Ալիք» օրաթերթ, 27 ապրիլի, 2020., Թիվ 78, էջ 2:
11. **Մինասյան Է.,** Հայաստանի երրորդ հանրապետություն, Երևան, 2013թ.,:
12. **Մամյան Լ.,** Արցախյան հիմնախնդրի կարգավորումը եվ Հայաստանին ու Արցախին տրամադրվող ամերիկյան օգնության ապահովումը ամերիկահայ լոբբիստական կազմակերպության գործունեության առանցքում, Երևան, 2017թ.:
13. http://armnational.am/ru/c/alik-daily-tehran
14. http://diaspora.gov.am/hy/pages/44/iran

[1] *Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 27 ապրիլի, 2020., թիվ 78, էջ 2:*

ՀՏԴ 930.85

Աշխեն Ասրիյան
ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետ
Պատմություն 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝
պ.գ.թ., դոցենտ Ն.Պ.Սարումյան

ՇՈՒՇԻԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ 1992-2020թթ.

Բանալի բառեր: *Շուշիի ազատագրում, Շուշիի դպրոցներ, թատրոն, թանգարաններ, 44-օրյա պատերազմ, Ղազանչեցոց եկեղեցի, մշակութային ցեղասպանություն:*

Ադրբեջանական իշխանապետության տարիներին Շուշիի անկում ապրած մշակութային կյանքը սկսեց զարգանալ ազատագրումից անմիջապես հետո: Մեծ թափով առաջ էին գնում կրթական, թատերական, երաժշտական, գրադարանային ոլորտները, քաղաքում էին կենտրոնանում Արցախի թանգարանների զգալի մասը, մշակութային ու զբոսաշրջային գերատեսչությունները: Այս ամենը հնարավորություն տվեց Շուշին դարձնելու Արցախի մշակութային ամենակարևոր կենտրոնը: 44 օրյա պատերազմի արդյունքում քաղաքի՝ Ադրբեջանի վերահսկողության տակ հայտնվելուց հետո Ադրբեջանը սկսեց վարել մշակութային արժեքների ոչնչացման քաղաքանություն, ինչի հետևանքով այսօր Շուշիում գտնվող մշակութային արժեքների մի մասը ոչնչացված է, թանգարանները՝ կողոպտված: «Սպիտակ ցեղասպանությունը», որն այսօր շարունակվում է նաև Արցախի մյուս օկուպացված տարածքներում, ունի մեկ նպատակ՝ ջնջել բոլոր հայկական հետքերը՝ «մտացածին երկրի հնարովի պատմությունը» առավել արժանահավատ դարձնելու համար:

Ашхен Асриян

КУЛЬТУРНАЯ ЖИЗНЬ ШУШИ В 1992-2020 ГГ.

Ключевые слова: *Освобождение Шуши, шушинские школы, театр, музеи, 44-дневная война, церковь Газанчецоц, культурный геноцид.*

Культурная жизнь Шуши, пришедшаяся в упадок во времена азербайджанского владычества, начала развиваться сразу после освобождения. Активно развивалась образовательная, театральная, музыкальная, библиотечная сферы, в городе было сосредоточено большинство музеев Арцаха, отделов культуры и туризма. Все это позволило Шуши стать важнейшим культурным центром Арцаха. В результате 44-дневной войны, после перехода города под контроль Азербайджана, он начал проводить политику уничтожения культурных ценностей, в результате чего часть культурных ценностей в Шуши уничтожена и музеи разграблены. «Белый геноцид», продолжающийся сегодня на других оккупированных территориях Арцаха, преследует одну цель – стереть все следы армян, чтобы сделать более правдоподобной искусственную историю искусственно созданной страны.

Ashkhen Asriyan

THE CULTURAL LIFE OF SHUSHI IN 1992-2020.

Key words: *Liberation of Shushi, Shushi schools, theater, museums, 44-day war, Ghazanchetsots church, cultural genocide.*

The cultural life of Shushi, which fell on the years of Azerbaijani rule, began to develop immediately after the liberation. The educational, theatrical, musical, library spheres were actively developing, most of the museums of Artsakh, the departments of culture and tourism were concentrated in the city. This allowed Shushi to become the most important cultural center of Artsakh. As a result of the 44-day war, after the city came under the control of Azerbaijan, Azerbaijan began to pursue a policy of destroying cultural property, as a result of which part of the cultural property in Shushi was destroyed and museums were looted. The "White genocide" that continues today in other occupied territories of Artsakh has one goal - to erase all traces of Armenians in order to make the artificial history of an artificially created country more believable.

Խորհրդային իշխանության տարիներին Շուշիի մշակութային կյանքը խիստ անկում էր ապրել: Իրավիճակը փոխվեց 1992թ մայիսյան ազատագրական գործողություններից հետո, երբ մշակութային կյանքը սկսեց աստիճանաբար զարգացում ապրել և, արդեն, 1992-2020թթ. հասավ որոշակի հաջողությունների:

Առաջին հերթին զարկ տրվեց քաղաքի կրթական կյանքի զարգացմանը և 1992թ. հոկտեմբերի 5-ին ՀՅԴ Նիկոլ Աղբալյան ուսանողական միության մի խումբ երիտասարդների՝ Կամո Ավետիսյանի, Արտակ Դաբաղյանի, Արթուր Եղիազարյանի ջանքերով Շուշիում բացվեց «Արամ Մանուկեան» ազգային վարժարանը, որտեղ տարբեր տարիների տնօրեններ են եղել Արտաշես Տոռոզյանը, Արարատ Բարսեղյանը, Հովիկ Մուսայելյանը[1]: Վարժարանի շենքում հետագայում սկսել է գործել Մուրացանի անվան միջնակարգ (2009թ.՝ ավագ[2]) դպրոցը:

1992թ. գործել է Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ (2009թ-ից՝ հիմնական) դպրոցը: 2009-2012թթ. «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆինանսավորմամբ դպրոցի նախկին շենքը վերակառուցվել է[3]: 2016թ. ԼՂՀ Կառավարության հատուկ որոշմամբ Մուրացանի անվան ավագ դպրոցը միավորվել է Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի հետ[4], իսկ դպրոցի շենքում սկսել է գործել 1993թ. հիմնադրված Արսեն Խաչատրյանի անվան մշակութալուսավորական ուսումնարանը, որը 1999թ. վերանվանվեց *Խաչատրյանի անվան հումանիտար ուսումնարան*[5]:

1992թ. ամերիկահայ երգիչ և գեղանկարիչ Կարեն Ղարիբյանը որոշում է բացել երաժշտական մասնագիտացված հանրակրթական դպրոց: 1997 թ. սեպտեմբերից Շուշիում սկսում է գործել մեծանուն շուշեցի Դանիել Ղազարյանի անունը կրող հանրակրթական երաժշտական գիշերօրթիկ դպրոցը, որը սկզբնական 30 աշակերտների թիվը 2012-2013 ուստարում հասցրել է 102-ի, իսկ 2018-

---

[1] ***Բալայան Վ.***, *Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան, 2017, էջ 487:*

[2] *ԼՂՀ Կառավարության որոշում, Ավագ և հիմնական դպրոցների ցանկը հաստատելու և ԼՂՀ կառավարության 2006թ. նոյեմբերի 28-ի թիվ 575 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,N 363-Ն, 09.06.2009, Ստեփանակերտ:*

[3] https://www.himnadram.org/hy/1564254100.

[4] *ԼՂՀ Կառավարության որոշում, «Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոց» և «Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու և «Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ հոսքային դպրոց» ՊՈԱԿ ստեղծելու մասին, N 430-Ն, 04.08.2016:*

[5] ***Բալայան Վ.***, *նշվ. աշխ., էջ 488:*

2019 ուստարում՝ 206-ի:

Հաջողություններ են արձանագրվել արհեստագործական կրթության ապահովման ասպարեզում: 1993-1997թթ. գործել է քաղաքի պրոֆտեխուսումնարանը[1]: Ֆրանսահայ գործարար Եզնիկ Մոզյանի կտակով նախատեսված գումարով և ԼՂՀ կառավարության համաֆինանսավորմամբ կառուցվել է արհեստագործական ուսումնարան, որը բացվել է 2015թ. սեպտեմբերի 1-ին[2]:

Հաջողության հասավ նաև բարձրագույն կրթությունը զարգացնելու գործը: 1997-2003թթ. քաղաքում գործում էր «Ժողովրդական համալսարանը»: 2015թ. Շուշիում բացվեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Արցախի մասնաճյուղը (տնօրեն՝ կենսաբանական գիտությունների դոկտոր Վ. Հայրապետյան)[3]: ԼՂՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 28-ի որոշմամբ[4] հիմնադրվեց Շուշիի Տեխնոլոգիական համալսարանը, որն իր աշխատանքները սկսեց 2016թ. սեպտեմբերի 1-ից:

2013թ. Շուշիում սկսեց գործել Հ. Գյուրջյանի անվան կիրառական արվեստի ինստիտուտը, որը հարում էր Երևանի գեղարվեստի ակադեմիային: Ինստիտուտը մինչև 2020թ. ուներ մոտ 1000 անուն մասնագիտական գիրք[5]:

Հետպատերազմյան տարիներին քաղաքում մեծ տարածում գտավ թատերական կյանքը: Դեռևս 1891թ. հուլիսի 7-ին «Ռուզան» ներկայացման բեմադրությամբ բացվել էր Մկրտիչ Խանդամիրյանի անվան թատրոնը, որտեղ տարբեր տարիների բեմադրություններով ու դերակատարումներով հանդես են եկել Հ. Աբելյանը, Գ. Պետրոսյանը և ուրիշներ[6]: Թատերական կյանքը Շուշիում վերսկսվել է 1993թ., երբ մի խումբ արվեստագետներ, բնակություն հաստատելով քաղաքում, ստեղծեցին Երվանդ Մանարյանի անվան տիկնիկային, Սոս Սարգսյանի անվան մանկապատանեկան և Շուշիի դրամատիկական թատրոնները, որոնք 2000թ. պետական կարգավիճակ ստացան: ԼՂՀ կառավարության որոշումից հետո[7] 2008թ. հունվարի 7-ին թատրոնների միավորմամբ ստեղծվել է «Աստղիկ» մանկապատանեկան թատրոնը, որը մեկ տարի անց անվանակոչվել է Մկրտիչ Խանդամիրյանի անունով (տնօրեն,գեղարվեստական ղեկավար, ԼՂՀ ժողովրդական արտիստ Լեոնիդ Հարությունյան)[8]: 2014թ. քաջ գիտակցելով, որ շենքի բացակայության և սուղ ֆինանսական հնարավորության պայմաններում անհնար է երեք ուղղությամբ աշխատել, թատրոնը նախապատվությունը տվեց տիկնիկային ներկայացումներին: Նույն թվականին ԱՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ Շուշիի մշակույթի տանը բացվեց Արցախում առաջին ու միակ տիկնիկային դահլիճը:

Պատերազմից անմիջապես հետո Շուշիում մեծ թափ առավ թանգարանների գործունեությունը:

---

[1] ***Դաբաղյան Ա., Գաբրիելյան Մ.,*** *Շուշին 1992-2002թթ. Հայերի վերադարձը ազատագրված քաղաք, Երևան, 2004, էջ 74:*

[2] ***Բալայան Վ.****, նշվ. աշխ., էջ 489:*

[3] *Նույն տեղում:*

[4] *ԼՂՀ Կառավարության որոշում, «Շուշիի տեխնոլորգիական համալսարան» հիմնադրամ հիմնադրելու մասին, N911-Ն, 28.12.2015:*

[5] *https://www.artsakhtert.com/arm/index.php/culture-and-education/item/31301-2021-04-21-08-01-34.*

[6] ***Հայրապետյան Թ.,*** *Թատերական կյանքը Շուշիում, Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր, էջ 315:*

[7] *ԼՂՀ Կառավարության որոշում, «Թատերական ստուդիա», «Անի» ձայնագրման ստուդիա, «Վերնատուն» փոփ-ֆոլկ համույթ, «Ջազ նվագախումբ» համույթ, «Շուշիի «Աստղիկ» պետական մանկապատանեկան թատրոն պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին, N572, 30.11.2007:*

[8] *ԼՂՀ Կառավարության որոշում, «Արցախի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոն» և «Շուշիի «Աստղիկ» պետական մանկապատանեկան թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերանվանելու մասին, N 723, 28.10.2008:*

2013թ. ԼՂՀ Կառավարության որոշմամբ[1] Շուշի քաղաքի թանգարանները ստացան պետական կարգավիճակ, և ստեղծվեց «Շուշի քաղաքի թանգարաններ» ՊՈԱԿ-ը, որը ներառում էր 3 ստորաբաժանում՝ Շուշիի պատմության թանգարան, Շուշիի պատկերասրահ և Շուշիի կերպարվեստի թանգարան:

1992 թվականից Շուշիում սկսել է գործել Շուշիի պատմաերկրագիտական թանգարանը՝ 19-րդ դարի կեսերին կառուցված փոխգնդապետ Եսայի Ղարամեանցի առանձնատան շենքում[2]: 2014թ. թանգարանը վերանվանվեց Շուշիի պատմության թանգարան: Թանգարանի հավաքածուն ներկայացնում էր քաղաքի կենցաղը, հոգևոր մշակույթն ու պատմությունը՝ նեոլիթյան ժամանակաշրջանից մինչև մեր օրերը:

Շուշիում մեծ հռչակ է վայելել գորգերի թանգարանը, որը հիմնադրվել է 2011թ. սեպտեմբերի 2-ին՝ հավաքորդ Վարդան Ասծատրյանի կողմից և բացվել 2013թ.: Թանգարանում ներկայացված էին շուրջ 300 ձեռագործ գորգեր: Թանգարանի մշտական ցուցադրությունը ներառում էր 120 գորգ՝ «Խնձորեսկ», «Աստղագորգ», «Վիշապագորգ», «Ծաղկագորգ», «Արծվագորգ», «Ծաղկած խաչեր», «Պատկերագորգ» և այլն[3]:

2010-2013թթ. ընթացքում պրոֆեսոր Գրիգորի Գաբրիելյանցի աջակցությամբ ստեղծվել է կերպարվեստի թանգարանը, որը բացվել է 2013թ. մայիսի 9-ին[4]: Բացման առաջին տարում թանգարանն ունեցել է 473 ցուցանմուշ, որոնց թիվը 2018թ. կազմել է 630, իսկ 2020թ. դրությամբ՝ մոտ 800, որոնց մեծ մասը թանգարանին էին նվիրաբերվել աշխարհի տարբեր երկրներից: Թանգարանում ցուցադրվում էին Մ. Սարյանի, Մ. Ավետիսյանի, Գառզուի, Ա. Գալենցի, Տ. Շնչենկոյի և այլոց ստեղծագործությունները[5]: 2011 թվականից Իտալիայում բնակվող հայ քանդակագործ Հակոբ Ավետիսի նախաձեռնությամբ Շուշիում սկսեց կազմակերպվել ամենամյա քանդակագործության սիմպոզիում, որը առաջին տարիներին «Նարեկացի» արվեստի միության, ապա կերպարվեստի թանգարանի հարակից տարածքում կազմակերպվող խոշոր մշակութային միջոցառում էր[6]: 2019թ. հուլիսի 19-ին կերպարվեստի պետական թանգարանին հարակից տարածքում բացվեց քանդակների միջազգային 9-րդ սիմպոզիումը, որի ավարտին կերտված քանդակներից նույն տարածքում ստեղծվեց «Քանդակների պուրակը»:

Շուշիում 2014թ. բացվեց Գ. Գաբրիելյանցի անվան երկրաբանության պետական թանգարանը: Թանգարանի հավաքածուն ներառում էր 385 նմուշ 48 պետություններից, որոնց թիվն արդեն 2020թ. դրությամբ հասնում էր 480-ի: Նմուշները բերվել էին աշխարհի 40 երկրներից և ՌԴ 20 երկրամասերից: Թանգարանում ցուցադրվում էին հազվագյուտ տիպի ապարներ. ամենահինը՝ 1 միլիարդ 200 միլիոն տարեկան, Արցախից նմուշներից ամենահինը՝ 146 միլիոն տարեկան[7]:

2018թ. մայիսի 9-ին Շուշիում բացվեց Հայկական դրամի թանգարան, որտեղ ցուցադրվում էին տարբեր ժամանակաշրջանների շուրջ 700 մետաղադրամներ ու թղթադրամներ: Արցախին նվիրված ցուցադրությունը ներառում էր Տիգրանակերտ քաղաքից հայտնաբերված մետաղադրամներ, ինչպես նաև 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին Շուշիի դրամահատարանում հատված արծաթե

---

[1] *ԼՂՀ Կառավարության որոշումը «Շուշի քաղաքի թանգարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին, N 308-Ն, 30.05.2013:*

[2] https://www.yerkir.am/news/view/159873.html.

[3] ***Թովմասյան Գ.,*** *Զբոսաշրջային ռեսուրսների ի՞նչ հարստություն կորցրեց Արցախը, «Ամբերդ» ամսագիր, ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատ., Երևան, 2020, էջ 26:*

[4] https://hushardzan.am/archives/19255.

[5] ***Թովմասյան Գ.,*** *նշվ. աշխ. , էջ 22:*

[6] https://www.artsakhtert.com/arm/index.php/culture-and-education/item/23214-5.

[7] ***Թովմասյան Գ.,*** *նշվ. աշխ., էջ 26:*

մետաղադրամներ[1]:

Շուշիի ազատագրումից անմիջապես հետո Շուշիում սկսեց զարգանալ գրադարանային կյանքը: 1992թ. սեպտեմբերի 1-ից Շուշիում սկսեց գործել կենտրոնական քաղաքային գրադարանը, որի բացումը տեղի ունեցավ միայն 1993թ: Գրադարանի ավերված շենքը վերանորոգվեց 2010թ. մայիս-նոյեմբեր ամիսներին, որից հետո գրադարանը վերաբացվեց՝ արդեն նաև համալրված գրադարանային ֆոնդով[2]: Գրադարանը անվանակոչվել է արձակագիր Մովսես Յախշունցի անունով: Սկզբնավորման օրից գրադարանը համալրվել է հիմնականում նվիրատվության կարգով տուն-թանգարանների, հայ բարերարների, հայաստանյան խոշոր գրադարանների գրքային նվիրատվություններով՝ մոտ 18770 անուն գիրք, թերթեր ու ամսագրեր:

Դեռևս 19-րդ դարից սկսած Շուշիում սկսեց զարգանալ երաժշտական կյանքը: Հիշատակման արժանի է Շուշիի՝ «Անդրկովկասի կոնսերվատորիայի» մեծ դերը հայ երաժշտական գործիչների ձևավորման գործում[3]:

1992թ. սեպտեմբերին լիբանանահայ երաժիշտ Զաքար Քեշիշյանի կողմից հիմնադրվեց «Վարանդա» երգչախումբը: Երգչախումբը իր գործունեությունը իրականացրել է մանկական, պատանեկան և երիտասարդական կազմերով: Իր գործունեության 28 տարիների ընթացքում երգչախումբն ունեցել է 7-ից 25 տարեկան ավելի քան 700 սան, շուրջ 200 համերգներով հանդես է եկել տարբեր բեմերում[4], ինչպես նաև համագործակցել լիբանանյան «Կարկաչ» և «Այգ» երգչախմբերի հետ:

Շուշիում գործունեություն է ծավալել Շուշիի մանկական երաժշտական դպրոցը: 2006թ. դպրոցը վերանորոգվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի ջանքերով: 2014թ. ԼՂՀ Կառավարության որոշմամբ[5] վերանվանվել է «Շուշիի արվեստի դպրոց»:

Շուշիում երաժշտական կյանքի զարգացման գործում մեծ նշանակություն են ունեցել օպերաների պրեմիերաները. 2013թ. սեպտեմբերի 1-ին՝ Ա. Բաբանի «Արծվաբերդ» օպերան՝ Ռեալական ուսումնարանի բակում[6], 2014թ. սեպտեմբերի 1-ին Ա. Տերտերյանի «Կրակե օղակ» օպերան Շուշիի բերդում[7] և 2017թ. սեպտեմբերի 1-ին՝ Հ. Ստեփանյանի «Սասունցի Դավիթ» օպերան՝ Ռեալական ուսումնարանի բակում[8]:

Կրթական, թատերական, երաժշտական ոլորտների, գրադարանային կյանքի զարգացումը, Արցախի թանգարանների մեծ մասի, մշակութային և զբոսաշրջային գերատեսչությունների տեղափոխումը, մեծամասշտաբ մշակութային միջոցառումների կազմակերպումները հնարավորություն տվեցին վերականգնելու Շուշիի մշակութային դիմագիծը ու այն դարձնելու Արցախի մշակութային կենտրոններից մեկը:

2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված 44-օրյա պատերազմի արդյունքում Շուշին անցավ Ադրբեջանի վերահսկողության տակ: Ադրբեջանի կողմից քաղաքում սկսվեց մշակութային ցեղասպանություն: 2020թ. նոյեմբերի 25-ին ադրբեջանցիների կողմից տեղադրված տեսանյութերից մեկում

---

[1] *Նույն տեղում:*

[2] *https://www.panarmenian.net/arm/society/news/71195/.*

[3] ***Ասատրյան Ա.,*** *Երաժշտական կյանքը Շուշիում, Ադրբեջանի ցեղասպանական վարքը. պատմություն և արդիականություն, Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, էջ 300:*

[4] *https://artsakhpress.am/arm/news/92642/shushium-kayacel-e-varanda---ergchakhmbi---menahamergy.html.*

[5] *ԼՂՀ Կառավարության որոշում, Մի շարք պետական ոչ առևտրային կազմակերպություններ վերանվանելու և ԼՂՀ կառավարություն թիվ 14 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին, N635-Ն,29.09.2014 :*

[6] *https://armenpress.am/arm/news/731246.html.*

[7] *https://armenpress.am/arm/news/770652.*

[8] *https://www.azatutyun.am/a/28707448.html.*

ամբողջությամբ ավերված էր Շուշիի Սուրբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) վանքը[1]: Դեռևս պատերազմի ժամանակ՝ 2020 թ. հոկտեմբերի 8-ին, 2 անգամ հրթիռակոծվել է Սուրբ Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցին, իսկ Շուշին Ադրբեջանին անցնելուց հետո եկեղեցին ենթարկվել է վանդալիզմի՝ ոչնչացվել են եկեղեցու դարպասների հրեշտակները, ավելի ուշ ավերվել է եկեղեցու գմբեթը[2]:

Պատերազմից հետո թշնամուն է անցել Շուշիի թանգարանների նմուշների մեծ մասը, «Քանդակների պուրակը»: Ոչնչացումից հաջողվել է փրկել Գորգերի թանգարաների նմուշներից, որոնք, թեև ոչ ամբողջությամբ, բայց հնարավոր եղավ մի մասով տարհանել՝ շնորհիվ թանգարանի տնօրեն Վարդան Ասծատրյանի[3]:

Ընդհանուր առմամբ, այսօր՝ պատերազմից 1,5 տարի անց Ադրբեջանը շարունակում է Արցախի օկուպացված տարածքներում իրականացնել իրեն բնորոշ մշակութային ցեղասպանության քաղաքականությունը, որի հիմնական նպատակը մեկն է՝ ջնջել հայկականության բոլոր հետքերը Արցախից և փորձել նմանօրինակ քաղաքականությամբ աշխարհի համար արժանահավատ դարձնել արհեստականորեն ստեղծված երկրի պատմությունը:

[1] https://fip.am/13788.
[2] Նույն տեղում:
[3] https://hetq.am/hy/article/127924.

ՀՏԴ 327,8

Ջուլիետա Մարգարյան
Գավառի պետական համալսարան,
Հումանիտար մասնագիտությունների
ֆակուլտետ, «Պատմություն» բաժին, 1-ին կուրս
մագիստրատուրա
Էլ. հասցե: julya.margaryan1999@mail.ru

Գիտական ղեկավար՝
պ.գ.դ., պրոֆեսոր Վ.Գ. Թունյան
Էլ. հասցե tunyanvalery@rambler.ru

ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Բանալի բառեր՝ *Ապրիլյան պատերազմ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Հայաստան, Ադրբեջան, համաձայնագիր, ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտություն,* Հայաստանի Հանրապետության պաշտպանության *նախարարություն:*

Ապրիլյան քառօրյա պատերազմը ապացուցեց, որ հայ ժողովուրդն իր համախմբվածությամբ, վճռական պահին զինվորի ու բանակի կողքին ամուր կանգնելու հաստատակամությամբ անպարտելի է և միշտ պատրաստ է ինքնակազմակերպվելու, համախմբվելու, զինվորագրվելու հայրենիքի պաշտպանության սուրբ գործին: Քառօրյա պատերազմը հայրենասիրական դաստիարակության մերօրյա լավագույն օրինակն է:

Джулиета Маргарян

АПРЕЛЬСКАЯ ВОЙНА

Ключевые слова: *Апрельская война, Нагорно-Карабахская Республика, Армения, Азербайджан, соглашение, азербайджано-карабахский конфликт, Министерство обороны Республики Армения.*

Апрельская четырёхдневная война доказала, что армянский народ своей сплочённостью, упорством стоять рядом с солдатом и армией в решающий момент непобедим и всегда готов к сомоорганизации, сплочению, вступлению в священное дело защиты родины. Четырёхдневная война, является лучшим примером патриотического воспитания.

Julieta Margaryan

APRIL WAR

Keywords: *April war, Nagorno-Karabakh Republic, Armenia, Azerbaijan, agreement, Azerbaijan - Karabakh conflict, Ministry of Defense of the Republic of Armenia.*

The April four-day war proved that the Armenian people, by their unity, perseverance to stand next to the soldier and the army at a crucial moment, are invincible and are always ready for self-organization, unity, military holy cause of defending the Motherland.

The Four-day War is the best example of patriotic education these days.

28 տարի առաջ՝ 1994թ. մայիսի 12-ին, Ռուսաստանի Դաշնության միջնորդական ջանքերի շնորհիվ ուժի մեջ է մտել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Ադրբեջանի Հանրապետության կողմից կրակի և ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին անժամկետ եռակողմ համաձայնագիրը, որը ստորագրեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, Ադրբեջանը և Հայաստանը։

Փաստաթուղթը, ի տարբերություն նախորդների, նախատեսում էր ոչ թե կարճատև, այլ անժամկետ հրադադար և ըստ Ռուսաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչ Վ. Կազիմիրովի՝ ստորագրվել է մինչ այդ երբևէ չկիրառված պրակտիկայով։

«...Անհեթեթ փակուղի էր ստեղծվել. հակամարտող բոլոր կողմերը համաձայն էին հրադադարին, բայց գործն առաջ չէր գնում, քանի որ վերջիններս չէին համաձայնում, թե ում ստորագրություններն են լինելու փաստաթղթի տակ։ Ժամանակ ընդհանրապես չկար... Ոչ ստանդարտ որոշումներ էին պետք։ Ի վերջո պայմանավորվեցինք, որ համաձայնագիրը կստորագրեն կողմերի գլխավոր զինվորականները՝ հեռակա, ապա ֆաքսով այն կուղարկեն Մոսկվա։ Այդ պատճառով համաձայնագիրը չունի միասնական բնօրինակ կամ բոլոր երեք կողմերի ներկայացուցիչների կողմից ստորագրված օրինակներ», ավելի ուշ գրել էր Կազիմիրովը իր «Խաղաղություն Ղարաբաղին» գրքում[1]։

Համաձայնագրի կնքմանը նախորդել են ԱՊՀ պետությունների ղեկավարների խորհրդի 1994 թ. ապրիլի 15-ի հայտարարությունը՝ կրակի անհապաղ դադարեցման կոչով, ինչպես նաև Բիշքեկյան արձանագրությունը, որը 1994 թ. մայիսի 4-5-ը ստորագրել են Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնային Ղարաբաղի և Ղրղզստանի խորհրդարանների ղեկավարները, Ռուսաստանի Դաշնային խորհրդի նախագահը, Լեռնային Ղարաբաղի հարցով Ռուսաստանի նախագահի լիազոր ներկայացուցիչը և ԱՊՀ մասնակից պետությունների միջխորհրդարանական վեհաժողովի խորհրդի քարտուղարության ղեկավարը։ Անժամկետ համաձայնագիրը, որի շնորհիվ կասեցվել է Արցախի Հանրապետության և նրա ժողովրդի դեմ Ադրբեջանի առաջին ռազմական ագրեսիան, միջազգային հանրության կողմից դիտարկվում էր որպես այն ստորագրած կողմերի համար պարտադիր ուժ ունեցող փաստաթուղթ, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղում արյունահեղության վերսկսումը կանխելու և ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման համար պայմաններ ստեղծելու կարևոր գործիք։ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը, ԵԱՀԿ գործող նախագահը, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները՝ այդ թվում նաև պետությունների ղեկավարների մակարդակով արված համատեղ հայտարարությունների միջոցով, բազմիցս հայտարարել են տվյալ համաձայնագրի հետևողական պահպանման անհրաժեշտության մասին[2]։

Չնայած բոլոր ջանքերին, ադրբեջանական կողմը մշտապես խախտել է զինադադարը՝ պարբերաբար ռմբակոծելով արցախա-ադրբեջանական սահմանային հայկական դիրքերն ու ՀՀ սահմանամերձ գյուղերը։ Այս ամենին հայկական կողմը հաճախ պատասխանում էր պատժիչ

---

[1] *Ղարաբաղյան ժամանակագրություն, https://www.azatutyun.am/a/29935114.html, 24.04.2022:*

[2] *Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հայտարարությունը, http://www.nkr.am/hy/news/2021-05-12/may-12, 24.04.2022:*

գործողություններով:

2016 թվականի ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը Ադրբեջանի զինված ուժերը, խախտելով կրակի և ռազմական գործողությունների լիակատար դադարեցման մասին 1994 թ. մայիսի 12-ի և Հրադադարի ռեժիմի ամրապնդման վերաբերյալ 1995 թ. փետրվարի 6-ի համաձայնագրերը, նենգաբար հարձակվեցին Արցախի Հանրապետության վրա[1]՝ կիրառելով սպառազինությունների ողջ համալիրը, այդ թվում՝ զրահատեխնիկա, ծանր հրետանի և օդուժ: Գործողությունների առաջին իսկ ժամերից հակառակորդի թիրախ դարձան նաև խաղաղ բնակավայրերն ու քաղաքացիական անձինք, այդ թվում՝ դպրոցական երեխաները:

Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը ադրբեջանական ԶՈՒ ստորաբաժանումները ծանր զինատեսակներով (հրետանի, ԲՄ-21 ռեակտիվ կայանքներ, ականանետներ) հրետակոծությունից հետո անցնում են հարձակման Արցախի սահմանի հյուսիսարևելյան, հարավային և հարավարևելյան ուղղություններում: Համաձայն ՊԲ մամուլի ծառայության հաղորդագրության՝ հայկական ուժերն անցնում են պաշտպանության: Արդեն ապրիլի 2-ի առավոտյան (տեղական ժամանակով 9:10-ին) հայկական կողմը հայտնում է ադրբեջանական ԶՈՒ ստորաբաժանումների մարդկային կորուստների և հյուսիսային հատվածում ոչնչացված մարտական ուղղաթիռի մասին: Կարճ ժամանակ անց՝ հայկական պաշտոնական աղբյուրները հայտնում են ադրբեջանական զրահատեխնիկայի ոչնչացման մասին: Շուտով ադրբեջանական որոշ աղբյուրներ ևս գրում են ոչնչացված ուղղաթիռի մասին: Մոտ մեկ ժամ անց Արցախի պաշտոնական աղբյուրները հայտնում են, որ ադրբեջանցիների կողմից խաղաղ բնակավայրերի հրթիռակոծության հետևանքով զոհվել է 12-ամյա Վաղինակ Թաթուլի Գրիգորյանը, ևս երկու երեխա վիրավորվել են և տեղափոխվել հիվանդանոց (երեխաները՝ Արցախի Մարտունու շրջանի Զորավան գյուղից են): Կեսօրին Հայաստանի պաշտպանության նախարարությունը հայտնում է, որ Արցախի Լևոնարխ գյուղի մոտակայքում ոչնչացվել է ադրբեջանական դիվերսիոն-հետախուզական ջոկատ, և ադրբեջանական կողմը մեծ կորուստներ է կրել[2]: Միաժամանակ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտնում է, որ Ադրբեջանը իր վերահսկողության տակ է վերցրել «Էլեն Թեփե» բարձունքը և այլ բարձունքներ հայկական Թալիշ, Սեյսուլան գյուղերի շրջանում[3]:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, դատապարտելով Ադրբեջանի նախահարձակ գործողությունը, հայտնում է, որ ՀՀ ՊՆ-ն «միջազգային հանրության և հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ուշադրությունն է հրավիրում ստեղծված իրավիճակի վրա և ակնկալում է անհապաղ հասցեական միջամտություն»: Միաժամանակ ՊՆ-ն հայտնում է, որ «մշտական կապի մեջ է օտարերկրյա պետությունների ռազմադիվանագիտական ներկայացուցիչների հետ»: «Որքան էլ արդարացի է միջազգային հանրությանն ուղղված մեր պահանջն ու ակնկալիքը, այդուհանդերձ պետք է ապավինենք մեր ուժին»,-ասված է ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի հայտարարությունում[4]:

Կեսօրից հետո ՊԲ-ն հրապարակում է ադրբեջանական խոցված ԱԹՍ-ի բեկորների լուսանկարները և հայտնում, որ ՊԲ ստորաբաժանումները ռազմաճակատի հյուսիսային հատվածում շարքից հանել են 1, իսկ հարավարևելյան ճակատում՝ ադրբեջանական 2 տանկ, ինչպես

---

[1] Արցախի ԱԳՆ հայտարարությունը՝ 2016 թ. ապրիլյան պատերազմի 6-րդ տարելիցի կապակցությամբ, https://news.am/arm/news/694625.html, 24.04.2022:

[2] Ապրիլի 1-3-ի հայ-ադրբեջանական ռազմական գործողությունների համառոտ ամփոփագիր https://razm.info/81666, 24.04.2022

[3] Ապրիլյան պատերազմի ժամանակագրությունը https://razm.info/99426, 24.04.2022

[4] ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի հայտարարություն https://mil.am/hy/news/3961, 25.04.2022 :

նաև խոցել հակառակորդի երկրորդ ուղղաթիռը: Կեսօրից հետո ստացվում են նաև միջազգային առաջին արձագանքները. ՌԴ պաշտպանության նախարար Սերգեյ Շոյգուն հեռախոսազրույց է ունենում ՀՀ և ԱՀ պաշտպանության նախարարների հետ: Հայաստանի և Ադրբեջանի ԱԳ նախարարների հետ զրուցում է նաև ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը և հայտնում «իրադրության կարգավորման նպատակով ՌԴ ձեռնարկած քայլերի մասին»: Ռազմական գործողությունների ծավալման վերաբերյալ առանձին հայտարարությամբ իրենց մտահոգությունն են հայտնում նաև ԵԱՀԿ ՄԽ համանախագահները[1]:

Արդեն ապրիլի 3-ի դրությամբ Մարտակերտ քաղաքի վրա ադրբեջանական զինուժը ավելի քան 30 արկ էր նետել: Անվտանգության նպատակներից ելնելով տարհանվել էին շրջանի Թալիշ և Մատաղիս գյուղերը, մարտակերտցիները տեղակայվել էին ապաստարաններում[2]: Արցախի պաշտպանության բանակը հայտնել է, որ հայկական ստորաբաժանումները հայկական Թալիշ գյուղի ուղղությամբ հետ են վերցրել նախորդ օրը կորցրած կարևոր հենակետերից մեկը, հայկական կողմից վիրավորվել է երկու զինծառայող: Ռազմաճակատի հարավային մասում ոչնչացրել են ադրբեջանական զինված ուժերի երկու տանկ և հետևակի մարտական մեկ մեքենա: Ապրիլի 3-ի լույս 4-ի գիշերը շփման գծի ողջ երկայնքով հակառակորդը ականանետներով ու հրանոթներով շարունակել է արկակոծել ՊԲ առաջնային դիրքերն ու մերձակա հայկական բնակավայրերը: Այս մասին հայտնում է ՊԲ կայքը: Առավոտյան ժամը 07:00-ի սահմաններում առավել ինտենսիվ հրետակոծություններ են սկսվել շփման գոտու հարավարևելյան և հյուսիսարևելյան ուղղություններով: Ադրբեջանական բանակը կիրառում է 152 մմ հրանոթներ, «Գրադ» կայաններ և տանկեր: Հակառակորդի ագրեսիվ գործողությունները ճնշելու ուղղությամբ ՊԲ առաջապահ ուժերը ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները և վստահաբար իրականացնում իրենց առջև դրված մարտական խնդիրները[3]:

Ապրիլի 5-ին Արցախի ՊԲ-ն հայտնում է, որ օր օրի մեծացնելով կիրառվող զինատեսակի տրամաչափը՝ ապրիլի 4 լույս գիշեր 5-ին առաջնագծի հարավային ուղղությամբ Ադրբեջանի զինուժը կիրառել է «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ: Հենց այս ժամանակ էլ հակառակորդը շարունակում էր վարել բնակավայրերի և հենակետերի հրետակոծություն՝ ակտիվորեն կիրառելով անօդաչու թռչող սարքեր, որոնցից մեկն էլ ոչնչացվում է ՊԲ զինծառայողների կողմից: Միաժամանակ ապրիլի լույս 5-ի գիշերը և առավոտյան Ադրբեջանի զինուժը հրետակոծում է նաև Տավուշի հայկական դիրքերն ու որոշ բնակավայրեր: Բերդավան և Կոթի բնակավայրերի ուղղությամբ ադրբեջանական կողմը կիրառում է տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներ[4]:

Կեսօրից հետո նշվում է, որ Արցախի առաջնագծում իրավիճակը հարաբերականորեն հանգիստ է: Ավելի ուշ ՊԲ մամուլի քարտուղար Սենոր Հասրաթյանը հաստատում է, որ կողմերի միջև համաձայնություն է ձեռք բերվել ապրիլի 5-ի 12:00-ից կրակի դադարեցման մասին: Իր համաձայնությունը այս թեմայով հայտնում է նաև Ադրբեջանի ՊՆ-ն: Համապատասխան համաձայնություն է ձեռք բերվել Հայաստանի և Ադրբեջանի ԳՇ պետերի՝ Մոսկվայում հանդիպման ժամանակ[5]:

---

[1] *Ապրիլի 1-3-ի հայ-ադրբեջանական... https://razm.info/81666, 25.04.2022:*

[2] *Մարտակերտը ծանր հրետակոծության տակ https://web.archive.org/web/20160406141838/http://civilnet.am/2016/04/03/martakert-karabakh-frontline-escalation/#.VwUay-PP3IU, 25.04.2022 :*

[3] *Ադրբեջանը կրակում է 152 մմ հրանոթներով, «Գրադ» կայաններով և տանկերով https://razm.info/81727, 26.04.2022 :*

[4] *Ապրիլյան պատերազմի ժամանակագրությունը, https://razm.info/99426, 26.04.2022 :*

[5] *Նույն տեղում :*

2016 թվականի ապրիլին օդանավում լրագրողների հետ հանդիպման ժամանակ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հայտարարում է, որ հայկական կողմը ապրիլյան մարտերի հետևանքով կորցրել է 800 հեկտար տարածք[1]:

Հայկական զինված ուժերի և քաղաքացիական անձանց շրջանում մարդկային կորուստների մասին շրջանառվում են տարբեր թվեր: Հայկական մամուլի որոշ հրապարակումների համաձայն՝ հայկական կողմից զոհվել կամ սպանվել է ավելի քան 100 մարդ: Համաձայն ադրբեջանական մամուլի հրապարակումների՝ հայկական կողմից զոհվել կամ սպանվել է ավելի քան 100 մարդ: Համաձայն ադրբեջանական մամուլի հրապարակումների՝ հայկական կողմը զինծառայողների շրջանում ունեցել է 320 զոհ և ավելի քան 500 վիրավոր[2]:

Ինչ վերաբերվում է Ադրբեջանին, ապա այն մեծ հաշվով չկարողացավ լուրջ հաջողության հասնել և ստիպված էր բավարարվել Լելե թեփե բլրի և Թալիշի ուղղությամբ գրված բարձունքի վրա ադրբեջանական դրոշ ծածանելով[3]: Համաձայն ադրբեջանական մամուլի հրապարակումների՝ հայկական զինված ուժերի ռազմական գործողությունների հետևանքով զոհվել է 6 քաղաքացիական անձ[4]: Տարբեր լրատվամիջոցների, այդ թվում՝ համացանցի և միջազգային փորձագիտական աղբյուրների տվյալների համաձայն՝ ադրբեջանական կողմի կորուստների թիվը հասնում է շուրջ 1000-ի, իսկ վիրավորներինը՝ մոտ 2000-ի[5]:

2016 թվականի օգոստոսի 7-ին Հայաստանի երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը պատերազմը Ղարաբաղում Ադրբեջանի գերազանցող ուժերի նկատմամբ որակել է որպես հաղթանակ: Հայտարարությունում ասվում է .

«Այո, անշուշտ, դա հաղթանակ էր քանակական գերազանցությամբ, անսպասելիորեն հարձակված և իր զինանոցում եղած գրեթե բոլոր զենքերն օգտագործած հակառակորդի նկատմամբ»: Նախագահը նշել է, որ բանակը կարողացել է պաշտպանել հանրապետության բոլոր քաղաքներն ու գյուղերը, ինչպես նաև հակահարված տալ 1994 թվականից ի վեր հակառակորդի ամենախոշոր հարձակմանը[6]:

Անշուշտ, 2016 թ. ապրիլյան ագրեսիան «փորձաքար» դարձավ, այդ թվում նաև՝ ստուգելու միջազգային հանրության արձագանքը Ադրբեջանի կողմից ՄԱԿ-ի Կանոնադրության և միջազգային պարտավորությունների խախտման կապակցությամբ: Այն փաստը, որ վերոհիշյալ ապօրինի գործողությունները Բաքվի համար որևէ լուրջ քաղաքական և իրավական հետևանքներ չունեցան, էլ ավելի ամրապնդեց Ադրբեջանի իշխանությունների վստահությունն առ այն, որ ամեն ինչ թույլատրելի է, և ուժը գերիշխում է միջազգային իրավունքի նկատմամբ[7]:

Իր գործողություններով Ադրբեջանը խախտել է ՄԱԿ-ի Կանոնադրության դրույթները, ինչպես նաև ԵԱՀԿ, Եվրոպայի խորհրդի և ամբողջ միջազգային հանրության առջև ստանձնած իր հանձնառությունները: Մասնավորապես, Բաքուն խախտել է այնպիսի հիմնարար սկզբունքներ, ինչպիսիք են ուժի և ուժի սպառնալիքի չկիրառումը, վեճերի խաղաղ կարգավորումը, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը, իրավահավասարությունն

---

[1] *Քառօրյա պատերազմի ընթացքում հայկական կողմը 800 հեկտար տարածք է կորցրել. Սերժ Սարգսյան, https://armtimes.com/hy/article/85664, 26.04.2022:*

[2] *Сегодня годовщина апрельских побед азербайджанской армии https://ru.oxu.az/war/249405, 27.04.2022:*

[3] *https://www.civilnet.am/news/190295/ապրիլյան-4-օրյա-պատերազմ-արդյունքներ-դասեր-առասպելներ/:*

[4] *Сегодня годовщина апрельских побед... https://ru.oxu.az/war/249405, 28.04.2022:*

[5] *Ի՞նչ է տեղի ունեցել Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ. նոր մանրամասներ https://www.1in.am/2174537.html, 28.04.2022:*

[6] *Апрельская война 2016 года была победой Армении — Серж Саргсян https://rossaprimavera.ru/news/f770578b, 28.04.2022:*

[7] *Արցախի ԱԳՆ հայտարարությունը՝ 2016 թ. ապրիլյան պատերազմի 6-րդ տարելիցի կապակցությամբ https://news.am/arm/news/694625.html, 29.04.2022:*

ու սեփական ճակատագիրն ազատորեն տնօրինելու ժողովուրդների իրավունքը, միջազգային իրավունքով նախատեսված պարտավորությունների բարեխիղճ կատարումը[1]:

Ամփոփելով կարող ենք ասել, որ 4 օր շարունակ ադրբեջանական բանակը Արցախի հետ շփման գծի ողջ երկայնքով ծանր տեխնիկայի, հրետանու և ավիացիայի կիրառմամբ հարձակման փորձեր ձեռնարկելուց հետո կրելով կենդանի ուժի, տեխնիկայի զգալի կորուստներ և չհասնելով առաջադրված նպատակների իրականացմանը Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ ստիպված եղավ դադարեցնել ռազմական գործողությունները: Այնուամենայնիվ, Արցախի սահմանամերձ բնակավայրերի թիրախավորումը շարունակվեց մինչև ապրիլի վերջ: Ադրբեջանի զինված ուժերի կողմից իրականացվեցին խոշտանգումներ, կանխամտածված սպանություններ և մարմինների անարգումներ ինչպես Արցախի Հանրապետության զինծառայողների, այնպես էլ քաղաքացիական բնակչության նկատմամբ:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Թուրքիայի և միջազգային ահաբեկիչների ուղղակի մասնակցությամբ Ադրբեջանի նոր լայնածավալ ռազմական ագրեսիան կրկին վկայում է մեր հարևան երկրի բիրտ քաղաքականության մասին: Եվ այսօր էլ մենք կանգնած ենք լուրջ սպառնալիքների առջև, իսկ սա կրկին մեզ թելադրում է, որ մենք պետք է միշտ զգոն լինենք, բարելավենք մեր անվտանգային համակարգը և դասեր քաղենք թե քառօրյա և թե 44-օրյա պատերազմներից…

Գրականություն

Կայք էջեր

1. Ղարաբաղյան ժամանակագրություն, https://www.azatutyun.am/a/29935114.html, 24.04.2022
2. Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հայտարարությունը, http://www.nkr.am/hy/news/2021-05-12/may-12, 24.04.2022
3. Արցախի ԱԳՆ հայտարարությունը՝ 2016 թ. ապրիլյան պատերազմի 6-րդ տարելիցի կապակցությամբ, https://news.am/arm/news/694625.html, 24.04.2022
4. Ապրիլի 1-3-ի հայ-ադրբեջանական ռազմական գործողությունների համառոտ ամփոփագիր https://razm.info/81666, 24.04.2022
5. Ապրիլյան պատերազմի ժամանակագրությունը https://razm.info/99426, 24.04.2022
6. ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի հայտարարություն https://mil.am/hy/news/3961, 25.04.2022
7. Մարտակերտը ծանր հրետակոծության տակ,
a. https://web.archive.org/web/20160406141838/http://civilnet.am/2016/04/03/martakert-karabakh-frontline-escalation/#.VwUay-PP3IU, 25.04.2022
8. Ադրբեջանը կրակում է 152 մմ հրանոթներով, «Գրադ» կայաններով և տանկերով https://razm.info/81727, 26.04.2022
9. Քառօրյա պատերազմի ընթացքում հայկական կողմը 800 հեկտար տարածք է կորցրել. Սերժ Սարգսյան, https://armtimes.com/hy/article/85664, 26.04.2022
10. Сегодня годовщина апрельских побед азербайджанской армии https://ru.oxu.az/war/249405, 27.04.2022
11. Ի՞նչ է տեղի ունեցել Ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ. նոր մանրամասներ https://www.1in.am/2174537.html, 28.04.2022
12. Апрельская война 2016 года была победой Армении — Серж Саргсян https://rossaprimavera.ru/news/f770578b, 28.04.2022

[1] *Արցախի Հանրապետության արտաքին... http://www.nkr.am/hy/news/2021-05-12/may-12, 29.04.2022:*

13. Արցախի ԱԳՆ հայտարարությունը՝ 2016 թ. ապրիլյան պատերազմի 6-րդ տարելիցի կապակցությամբ https://news.am/arm/news/694625.html, 29.04.2022

ՀՏԴ 327.3

Knarik Jalatyan
American University of Armenia
Professor: Dr. Vahram Ter-Matevosyan

POLITICAL DEVELOPMENTS IN ARMENIA: FROM SOVIET TIMES TO THE POST-SOVIET ERA

Key words: *independence, movement, Artsakh, war, dissidents.*

Starting from the period of de-Stalinization, Armenian nationalism was based on the anti-Turkish element and carried the memory of the Armenian Genocide as a core factor. The silent approval of nationalistic sentiments of this kind eventually proved to be a miscalculation for the Soviet authorities: the smallest republic of the Union became the pioneer of dissident movements. Despite devastating earthquake and all-consuming wars, it was stable in its posture to take responsibility for its fate. However, fighting for Independence turned out to be easier than keeping Independence and its cornerstone in the face of Artsakh. It is hard to say whether the Armenian nation would agree to start the journey had it known that it would be this difficult, especially after the defeat in the Second Karabakh war. However, defining that defeat as definitive will lead the Armenian nation to irreparable losses. Beyond all the difficulties the defeat assumes, it's also a chance to reassess the past and make relevant conclusions. Perhaps, that is one thing that the Armenian nation still can do, to be able to continue the struggle which neither started yesterday nor is going to end tomorrow.

Քնարիկ Ջալաթյան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Բանալի բառեր: *անկախություն, շարժում, Արցախ, պատերազմ, այլախոհներ:*

Հաջորդ գոտու1 մասին ևս պահպանված տեղեկությունները սակավաթիվ են, վերոհիշյալ գոտին հայտնաբերվել է պատահականորեն հողագործական աշխատանքների ընթացքում: Արցախից հայտնաբերված սույն գոտին եզերված է ալիքաձև զարդանախշերով, որոնք, եթե դիտարկենք առանձին միավորներ, կարող ենք փաստել, որ վերոհիշյալ գոտին ունի նաև բջջաձև զարդանախշեր: Այս գոտին ևս պատկանում է ծիսական տիպի զարդանախշերով գոտիներին և օգտագործելով զուգորդման մեթոդը կարող ենք փաստել,որ տվյալ գոտին նման է ԼՓԵԹ-ի հնագիտության(ԼՓԵԹ1504) բաժնի ֆոնդում պահվող Վանաձորի Դիմաց թաղամասից հայտնաբերված գոտուն նաև պետք է նշել նաև, որ վերոհիշյալ գոտին նման է նաև ԼՓԵԹ-ում պահպանվող մեկ այլ՝ Լեռնապատից հայտնաբերված գոտուն (ԼՓԵԹ315):

Այսինքն կարող ենք եզրակացնել, որ Արցախից հայտնաբերված վերոհիշյալ գոտին թվագրվում է՝ մ.թ.ա.11-9-րդ դարերով:



Արցախից հայտնաբերված բրոնզե գոտին, նկար 8 (Manuel Gastelluccia with a preface by John Curtis,Transcaucasian Bronze Belts,BAR International series 2842, 287)

9.Manuel Gastelluccia with a preface by John Curtis,Transcaucasian Bronze Belts,BAR International series 2842, 287

ՀՏԴ 93/94

Արմեն Հովսեփյան
ԱրՊՀ Պատմության և իրավագիտության
ֆակուլտետ, Պատմություն 4-րդ կուրս

Գիտական ղեկավար՝
պ.գ.թ., դոցենտ ***Ն. Սարուման***

ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Բանալի բառեր: *Արցախ, բեկլարբեկ, բեկլարբեկություն, իշխանություն, մելիք, մելիքություն, շահական հրովարտակ, պետականություն, ռազմաքաղաքական միավոր:*

Հիմնվելով վիմագրական, արխիվային փաստաթղթերի և մելիքությունների մասին պատմագիտական տվյալների վրա՝ հավանական ենք համարում, որ մելիքությունը Արցախի քաղաքական կյանքում որպես պետականակերտ ինստիտուտ ծագել է XVI դարի երկրորդ քառորդում, և հետագա դարերում Արցախի մելիքները կարողացան դառնալ հայության ինքնավարության պահպանման երաշխիք, նպաստեցին հայկական ինքնատիպ մշակույթի պահպանմանն ու զարգացմանը և դարձան ապագա ազգային ազատագրական պայքարի գաղափարախոսներ և առաջնորդներ:

Армен Овсепян
АрГУ, Историко-юридический факультет,
История, 4-ый курс

ОБРАЗОВАНИЕ АРЦАХСКИХ МЕЛИКСТВ И ИХ ПОЛИТИКО-ПРАВОВОЙ СТАТУС

Ключевые слова: *Арцах, беклярбек, беклярбекство, власть, мелик, меликство, провозглашение шаха, государственность, военно-политическая единица.*

Опираясь на исторические данные о меликствах в литографических и архивных документах, мы считаем возможным, что меликство зародилось в политической жизни Арцаха как государственно-строительный институт во второй четверти XVI века.

В последующие века мелики Арцаха смогли стать залогом сохранения автономии армян, способствовали сохранению и развитию самобытной армянской культуры, стали идеологами и руководителями будущей национально-освободительной борьбы.

Armen Hovsepyan
ASU, Faculty of history and law, History, 4th course

THE ESTABLISHMENT OF THE MELGDOME OF THE ARTSAKH AND THEIR POLITICAL-LEGAL STATUS

Keywords: *Artsakh, belkarbek, backlash, power, melik, melgdome, favourable prodamation, statehood,*

military-political unit.

Based on historical data of lithographs and archival documents we consider that it is possible that the lordship a state-building institution in the political life of Artsakh was originated in the second quarter of the 16th century.

In the following centuries the meliks of Artsakh were able to become a guarantee for the preservation of Armenians autonomy. They contributed to the preservation of the original Armenian identity. They became ideologues and leaders of the national liberation struggle.

Վիրավոր, բայց կանգուն և անկախ Արցախի Հանրապետությունը ավելի քան 31 տարեկան է: Սակայն այդ անկախ պետականությունը ձեռք չի բերվել միանգամից, այլ հանդիսացել է վերջին ավելի քան 1500 երկար ու ձիգ տարիների պետականության կերտման գագաթնակետը: Պետականություն, որի շինարարությունը սկսվել է դեռևս V դարի վերջին թագավորության հիմնմամբ, շարունակվել XII դարի վերջին ձևավորված Խաչենի եռաճյուղ իշխանությունների կազմավորմամբ, ապա վերջիններիս տան հիմքի վրա XVI դարի երկրորդ քառորդում մելիքությունների ձևավորմամբ, այնուհետև XX դարի սկզբին Արցախի ժողովրդական կառավարության գոյությամբ, ապա նույն դարի առաջին քառորդում, որպես խորհրդային տիպի պետականություն, վերածվել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և ավարտվել XX դարավերջին համաժողովրդական հանրաքվեի միջոցով իր ազգային պետական կարգավիճակի բարձրացման հետևանքով այլևս անշրջելիորեն ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ հռչակմամբ:

Պետականության կերտման այս երկարատև գործընթացում յուրաքանչյուր ինստիտուտ իր զգալի նշանակությունն է ունեցել ողջ գործընթացի վրա և բարենպաստ հող հանդիսացել հաջորդ տիպի պետականության հաստատման, դրսևորման ու զարգացման համար:

Սույն հոդվածում մենք հանգամանորեն անդրադառնալու ենք այդ ինստիտուտներից մեկի՝ մելիքությունների ուսումնասիրությանը:

Արցախում և Սյունիքում պահպանված իշխանությունների մասին պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը գրել է. «Ներքին որևէ կապ չկար այդ երկու համայնքների միջև, բոլոր պարագաներում, դրանք չէին դառնում ազգային անկախության հանգրվաններ»[1]: Բայց և այնպես այդ կիսանկախ իշխանություններից առավել հզորը Արցախի մելիքություններն էին, որոնց ինքնիշխան տիրակալները՝ մելիքները, մի քանի դար շարունակ հանդիսացել են հայոց ազատագրական պայքարի դրոշակակիրներ[2]:

«Մելիքություն» հասկացությունը և դրան առնչվող այլ հարցեր բազմիցս քննության են առնվել ուսումնասիրողների և պատմաբանների կողմից, սակայն տվյալ հասկացությունը, որը բնութագրում է մի ամբողջ ինստիտուտ, մինչև օրս չի ստացել իր քաղաքագիտական ու պատմագիտական գնահատականը:

Պետք է ասել, որ Արցախի քաղաքական համակարգում մելիքությունը, որպես քաղաքական ինստիտուտ, անցել է ձևավորման բավականին երկար ճանապարհ:

Միջնադարյան Արցախի քաղաքական համակարգում, նախքան «մելիք» տերմինի գործածության մեջ մտնելն ու արմատավորվելը, տեղական ավատատեր-կառավարիչները՝ իշխանները, կոչվել են «պարոն» հայրենացված տիտղոսով[3]:

Հին հայ իրավունքի մասնագետ Խաչիկ Սամվելյանը, քննության առնելով «պարոն» տերմինը, գրել

---

[1] ***Հովհաննիսյան Ա.,*** *Դրվագներ հայ ազատագրության մտքի պատմության, հատոր երկրորդ, Երևան, 1957,էջ 89:*

[2] ***Մաղալյան Ա.,*** *Արցախի մելիքություններն և մելիքական տները XVII-XIX դդ., Երևան, 2007, էջ 31:*

[3] ***Նույն տեղում,*** *էջ 35:*

է. «Պարոն տերմինը Արևմտյան Եվրոպայի միջնադարյան ավատատիրական բարոն-baron բառի հնչյունական ձևափոխությունն է: Ամենայն հավանականությամբ՝ այդ տերմինը փոխանցվել է Զաքարյան Հայաստան Կիլիկյան հայ թագավորությունից… Մատենագրական ու արձանագրական աղբյուրներից կարելի է եզրակացնել, որ պարոն տերմինը նույնանիշ է իշխան բառին»[1]:

XVI դարի երկրորդ քառորդից սկսած Արցախի քաղաքական համակարգում սկսում է գործածվել «մելիք» տիտղոսը, որը, կիրառումից աստիճանաբար դուրս մղելով «պարոն» տիտղոսին և նույն դարի վերջից սկսած, արդեն, դառնում է ժամանակի ավատատեր-կառավարիչներին դիմելու հիմնական ձև:

Այս մասին Լեոն գրել է. «16-րդ դարի սկզբից է, որ Ղարաբաղի իշխողներն սկսում են «մելիք» տիտղոսը կրել, որը սեմական բառ է, և նշանակում է «թագավոր»: Այդ ժամանակից առաջ, նրանք սովորաբար «իշխան» տիտղոսով էին հիշատակվում»[2]:

Արաբերեն «մելիք» բառը նշանակում է <<իշխող, տիրակալ, թագավոր>>, իսկ նշանավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանը այն սերված է համարում «Mlk»՝ «տիրել», «իշխել» ընդհանուր սեմական արմատից[3]: Միջնադարում այդպես են կոչվել Առաջավոր Ասիայի մուսուլմանական երկրների տիրակալները, իսկ արդեն ուշ միջնադարում Արևելյան Հայաստանում՝ Իրանական տիրապետության շրջանում, <<մելիքներ>> էին կոչվում բնիկ ազնվականության մնացորդներից բարձրացած և իրենց որոշակի տիրույթներում վարչական արտոնություն ունեցող ավատատերերը: Մելիքներ կոչվում էին նաև գյուղերի, ավանների և քաղաքների թաղամասերի այն ավագները, որոնք պատասխանատու էին հարկերի հավաքման և գանձման համար:

Մելիքներից ոմանք իրենց հպատակությունն էին հայտնել օտար նվաճողներին՝ նրանց հանդեպ կատարելով բոլոր պարտավորությունները: Սակայն Սյունիքում և Արցախում մելիքները թեև ընդունել էին օտար նվաճողների հպատակությունն ու գերիշխանությունը, բայց ներքին կառավարման հարցերում, այսինքն՝ հարկահավաքման, դատավարության և այլն, ունեին գործելու լիակատար իրավունք և ինքնուրույնություն:

Արցախում և Սյունիքում մելիքական իրավունքը, թեև հաստատվում էր շահի հատուկ հրովարտակով կամ համաձայնագրով, սակայն այն, ըստ էության, ուներ ժառանգականության բնույթ: Այս հանգամանքը նպաստում էր մելիքական տների զորացմանը: Սակայն աղբյուրները ցույց են տալիս, որ մելիքական իրավունքը սկզբնապես հաստատուն ու անփոփոխ մի երևույթ չէր, այլ փոփոխվում էր այս կամ այն շահի կողմից, ենթարկվելով նրա կամքին ու հայկական աշխարհի նկատմամբ ունեցած վերաբերմունքին[4]:

Հայ քաղաքական իրականության մեջ մելիքական իրավունքին վերաբերող պատմությանը հայտնի առաջին հրովարտակը պատկանում է Իրանի շահ Թահմասպ I-ին[5]: XVI դարի երկրորդ կեսի սկզբին նա շահական հատուկ հրովարտակով հաստատել է Մելիք բեկի սեփականության իրավունքը Գեղարքունիք գավառի ութ գյուղերի նկատմամբ: Ի շարս բազմաթիվ նորամուծությունների՝ վերջինիս հրամանով է, մասնավորապես, որ այսուհետև «խան»-ի տիտղոսը ավելի բարձր է համարվելու, քան «սուլթան»-ինը[6]:

Բացի շահական հրովարտակներից, մելիքության ինստիտուտին առնչվող տեղեկություններ գտնում ենք նաև հայ մատենագիրների երկերում: Մասնավորապես, XVII դարի հայ պատմիչ Առաքել

---

[1] ***Սամուելյան Խ.,*** *Հին հայ իրավունքի պատմություն, հատոր առաջին, Երևան, 1939, 243 էջ:*

[2] ***Լեո,*** *Հատոր Երրորդ, գիրք առաջին, Երևան, 1973, էջ 16:*

[3] ***Աճառյան Հ.,*** *Հայերեն արմատական բառարան, հ.3, Երևան, 1977, էջ 635:*

[4] ***Ուլուբաբյան Բ.,*** *Խաչենի իշխանությունը X-XIVդդ., Երևան, 1975, էջ 417:*

[5] ***Բայբուրդյան Վ.,*** *Իրանի պատմություն, Երևան, 2005, էջ 303:*

[6] ***Петрушевский И.,*** *Азербайджан в XVI-XVII вв., Вып. I, Баку, 1949, с. 100:*

Դավրիժեցին, խոսելով օսմանյան թյուրքերի բռնություններից և հարկահանություններից նեղված վրացի, քուրդ և հայ իշխանների ու տանուտերերի մասին, գրել է, որ երբ վերջիններս իմանում են Շահ Աբբաս I-ի դեպի Անդրկովկաս նախատեսած արշավանքի մասին, 1603-1604 թթ. ընդառաջ են գնում և խնդրում, որ շահն իր «փրկարար» երթն արագացնի: Հայաստանից պարսից շահին ընդառաջ են գնացել «Աղվանից երկրից և հայոց ազգից գնացին Սարուխան բեկը և իր եղբայր Նազարը Ոսկանապատ գյուղից, Օղլան քեշիշը և իր եղբայր Ղալաբեկին՝ Հաթերք գյուղից, Ջալալբեկն իր եղբոր որդիներով Խաչենից, մելիք Սուջումը՝ Դիզակից, մելիք Փաշիկը՝ Քոչիզ գյուղից, մելիք Բարան՝ Բիրտա գյուղից, մելիք Հայկազը Քշտաղ գավառի Խանածախ գյուղից … »[1]:

Բացի մատենագրական աղբյուրներից, մելիքության ինստիտուտին առնչվող տեղեկություններ գտնում ենք նաև վիմագրական արձանագրություններում: Մասնավորապես, Վարանդայի մելիք Ավանը 1566 թ. խաչքար է կանգնեցրել իր ծնողների հոգու հանգստության համար՝ արձանագրելով, որ ինքը և իր հայրը կրել են <<մելիք>> տիտղոսը:

Հիմք ընդունելով Իրանի Շահ Թահմասպ I-ի հրովարտակը, իշխանության կենտրոնական և տեղական ապարատներում վերջինիս կատարած պետական շինարարության մասին աղբյուրներում եղած տեղեկությունները, ինչպես նաև Առաքել Դավրիժեցու հաղորդումն ու Վարանդայի մելիք Ավանի կանգնեցրած խաչքարի արձանագրությունը՝ կարելի է ասել, որ Արցախի ներքաղաքական կյանքում մելիքության ինստիտուտը սկզբնավորվել է XVI դարի երկրորդ քառորդում:

Մելիքության ինստիտուտի առաջացման սկզբում «մելիք» տերմինը շատ հաճախ հանդիպում էր երկակի նշանակությամբ, այսինքն՝ մի դեպքում «մելիք»-ը գյուղի կառավարիչն էր[2], մեկ այլ դեպքում՝ գավառի: Դա է վկայում Առաքել Դավրիժեցու հաղորդումը՝ Սուջումը Դիզակ գավառի մելիքն էր, Փաշիկը՝ Քոչիզ գյուղի, Հայկազը՝ Քաշտաղ գավառի և այլն[3]:

Սակայն շահ Աբբաս I-ի կառավարման շրջանից սկսած հստակեցվում է «մելիք» տիտղոսի շնորհումն ու այդ տիտղոսը կրող անձի իրավունքների և պարտականությունների շրջանակը: Սա, իհարկե, պատահական չէր: Բանն այն է, որ Աբբաս I-ը լուրջ բարեփոխումներ է իրականացնում իշխանության թե կենտրոնական, թե տեղական մակարդակներում՝ դրանով աստիճանաբար տերությունը վերածելով կազմակերպված պետության[4]:

Շահ Աբբասի իրականացրած պետական շինարարության մասին Իրանի պատմության մասնագետ Վահան Բայբուրդյանը, մասնավորապես գրել է.- «Շահ Աբասը թողել էր երկրի վարչական կառավարման համակարգը այն նույն ձևով, ինչ ժառանգել էր իր նախորդներից, սակայն նա այդ համակարգը դարձրեց ավելի ճկուն և արդյունավետ … »[5]:

Այժմ փորձենք պարզել, թե Արցախի հայ ազնվական տների ներկայացուցիչներից ով է առաջինը Իրանի շահական արքունիքից ստացել «մելիք» կոչվելու մասին հրովարտակ:

Մինչ օրս կատարված ուսումնասիրությունների համաձայն՝ Արցախի հինգ գավառների տիրակալներից առաջինը Իրանի շահից գավառի մելիք կոչվելու մասին հրովարտակ ստացել է Վարանդա գավառի մելիք Միրզաբեկը: Վերջինս իր ավագ եղբոր՝ Գեղարքունիքի գավառի մելիք Շահ-Նազարի հետ միասին, լեզգիների հետապնդումներից խուսափելու նպատակով, արտագաղթում է Գեղարքունիք գավառից և 1603 թ. բնակություն հաստատում Արցախի Վարանդա

---

[1] ***Դավրիժեցի Ա.,*** *Պատմություն, Երևան, 1988, էջ 26:*

[2] ***Լեո,*** *նշվ. աշխ., էջ 61:*

[3] ***Հասան-Ջալալյան Ս.,*** *Արցախի մելիքությունների կազմավորումն ու իրավաքաղաքական կարգավիճակը, էջ 278:*

[4] ***Петрушевский И.,*** *указ., соч, с., 72.*

[5] ***Բայբուրդյան Վ.,*** *Իրանի պատմություն, էջ 325:*

գավառի Ավետարանոց գյուղում[1]: Երեք տարի անց՝ 1606 թ., պարսից շահ Աբբաս I-ի հրովարտակով Միրզաբեկը նշանակվում է Վարանդա գավառի մելիքի պաշտոնում[2]: Ցավոք, չի պահպանվել Աբբաս I-ի հիշյալ հրովարտակը:

Մելիք նշանակվելու մասին պահպանված առաջին հրովարտակը վերաբերում է Վարանդայի մելիք Միրզաբեկի որդուն՝ Բաղի I-ին: Վերջինս 1633 թ. Իրանի շահ Սեֆի I-ի կողմից ստացել է Վարանդայի մելիք նշանակվելու մասին հրովարտակ, որի պատճենը հրապարակել է Մակար Բարխուտարյանցը, ով սխալմամբ հրովարտակի հեղինակ է համարել շահ Աբբաս I-ին (1587-1629), մինչդեռ այդ ժամանակ Իրանի շահը Սեֆի I-ն էր[3]:

Արցախի հինգ մելիքներից յուրաքանչյուրը ենթարկվում էր Գանձակում նստող Ղարաբաղի բեկլարբեկին: Բեկլարբեկերն իրենց ձեռքում էին կենտրոնացնում նահանգի ինչպես վարչական, այնպես էլ ռազմական իշխանությունը՝ հանդիսանալով տեղի զինված ուժերի հրամանատարը[4]:

Այսպիսով, «Անդրկովկասում Քարթլի-Կախեթի վրացական վալիության կողքին, առաջին անգամ ստեղծվում էր նաև «Մահալե խամսե» անվանվող հայկական առանձին բեկլարբեկություն, որն ընդգրկում էր պատմական Արցախն ու մինչև Արաքսի ափը ձգվող հարակից տարածքները[5]:

Արցախի մելիքությունների տարածքները պատկերացնելու համար նշենք, որ Գյուլիստանը մոտավորապես ընդգրկում էր այժմյան Ադրբեջանի կողմից բռնազավթված Շահումյանի շրջանը և Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի հյուսիս-արևելքը, Ջրաբերդը՝ Մարտակերտի շրջանի հիմնական մասը և Շահումյանի (նախկին Քարվաճառի) շրջանի արևելքը, Խաչենը՝ հիմնականում Ասկերանի շրջանը և Մարտակերտի շրջանի հարավը, Վարանդան՝ Ասկերանի շրջանի հարավը և Մարտունու շրջանը, իսկ Դիզակը՝ այժմյան Ադրբեջանի կողմից բռազավթված Հադրութի, նախկին Ջեբրայիլի ու Ֆիզուլու շրջանները:

Այսպիսով, հնարավորինս համակողմանիորեն քննելով Արցախի մելիքությունների կազմավորման ժամանակն ու իրավաքաղաքական ակունքները՝ կարող ենք ասել, որ մելիքությունները, ձևավորվելով XVI դարի երկրորդ քառորդում, իրենցից ներկայացրել են պետականության հատկանիշներով օժտված ռազմաքաղաքական միավորներ:

Հայկական ընդհանրական պետականության բացակայության պայմաններում նրանք հանդիսացել են պետականակիր սուբյեկտներ: Ահա Արցախում ժողովրդի և իշխանության այս միասնությունը դարձավ ազգային ինքնուրույնության պահպանման և հարատևման հիմնական գրավականը: Եվ այդ միասնական կենարար ուժը հզոր ազդակ դարձավ երկրի ազատագրության գործին: Արցախի լեռներում հետագա դարերում ծնվեց հայրենիքի՝ Մեծ Հայաստանի ազատագրության գաղափարը:

---

[1] ***Մաղալյան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 160-161:*
[2] ***Ուլուբաբյան Բ.,*** *նշվ. աշխ., էջ 132:*
[3] ***Մաղալյան Ա.,*** *նշվ. աշխ., էջ 59:*
[4] ***Բայբուրդյան Վ.****, Իրանի պատմություն, էջ 328:*
[5] ***Լեռ****, նշվ. աշխ., էջ 78:*

ՀՏԴ 941(479,25)

Իզաբելլա Սարգսյան
Արցախի պետական համալսարան
Պատմության և իրավագիտության ֆակուլտետ
Պատմություն 3-րդ կուրս
Ղեկավար՝ պ. գ. թ. Վ. Ա. Սաֆարյան

ՊԱՏԱՐԱ: «ՕԽՏԸ ԵՂՑԻՆ» ՈՐՊԵՍ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿ

Բանալի բառեր: *Արցախ, Պատարա, գյուղ, միջնադար, վանական համալիր, «Օխտը եղցի», խաչքար, արձանագրություն:*

Հոդվածում փորձ է կատարվում լուսաբանել Արցախի հնագույն բնակավայրերից Պատարայի պատմամշակութային ժառանգությունը և ընդգծել նրա դերը հայրենի տարածաշրջանի պատմաճարտարապետական հուշարձանների համատեքստում:

Ընդգծվում է, որ Պատարան Արցախի այն բնակավայրերից է, որտեղ հայ մարդն իր կենսագործունեությունը սկսել է մ. թ. ա. 1-ին հազարմյակից՝ շարունակելով մինչև մեր օրերը: Գյուղի շրջակայքում պահպանվում են շուրջ 200 հուշարձաններ, որոնցից մեկն էլ «Օխտը եղցի» վանական համալիրն է:

Изабелла Саркисян
Арцахский Государственный Университет
Специальность: «История»
Бакалавриат, III курс
Научный руководитель: к.и.н. В.А. Сафарян

ПАТАРА. “ОХТЫ ЕХЦИ” КАК ОБРАЗЕЦ СРЕДНЕВЕКОВОЙ АРХИТЕКТУРЫ

Ключевые слова. Арцах, Патара, деревня, средневековье, монастырский комплекс, «Охты ехци», хачкар, надпись

Автор статьи попыталась представить историко-культурное наследие Патары, одного из древних поселений Арцаха и подчеркнуть их роль в контексте исторических и архитектурных памятников родного края.

Подчеркивается, что Патара – одно из тех поселений Арцаха, где с I тысячилетия до н. э. и до сих пор жил и творил армянский народ. В окрестностях села сохранилось около 200 памятников, одним из которых является монастырь «Охты ехци».

Izabella Sargsyan
Artsakh State University
Speciality: “History”
Bachelor’s degree, III course
Scientific adviser: Ph. D. in History V.A.Safaryan

PATARA. «OKHTY YEGHTSI» AS AN EXAMPLE OF MEDIEVAL ARCHITECTURE

Key words. Artsakh, Patara, village, Middle Ages, monastery complex, «Okhty yeghtsi», khachkar, inscription.

The article tries to cover the historical and cultural heritage of Patara, one of the ancient settlements of Artsakh and emphasize their role in the context of historical and architectural monuments of the native region.

It is emphasized that Patara is one of the settlements of Artsakh, where the armenian man started his life activity in the 1st millennium B.C., continuing to the present day. About 200 monuments are preserved in the vicinity of the village, one of which is the monastery of «Okhty yeghtsi».

Պատարա գյուղը գտնվում է Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանում՝ պատմական Մեծ Հայքի Արցախ նահանգի Մեծառանք (Խաչեն) գավառում: Գյուղը հիմնված է համանուն գետակի ձախ կողմում՝ մի ջրաձորի արևելյան ափում: Նրա տարածքով են հոսում նաև Պատարա գետի Պիծի ու Խրավանդ վտակները: Մակերևույթը լեռնային է: Գյուղի արևմյան հատվածում է գտնվում Ղարաբաղյան լեռնաշղթայի Կուսանանց լեռնահատվածը, որի առանձին գագաթներ անցնում են 2800 մ բարձրությունից (Մարիամ՝ 2832 մ, Գայանե՝ 2823 մ)[1]: Այսպես, Պատարան գտնվում է բնության գողտրիկ վայրում՝ շրջապատված անտառապատ բլուրներով:

Պատարան (նախկինում՝ Պտրեցիք, խորհրդային շրջանում՝ Բաղարա) Արցախի հնագույն բնակավայրերից մեկն է համարվում: Ղևոնդ Ալիշանը նշում է, որ գյուղը Պտրեցիք է կոչվել իր մոտ գտնվող լեռան անունից [2], որը գտնվում է Գարգար և Խաչեն գետերի ջրբաժանում, ունի 800-900 մ բարձրություն:

Գյուղի անվան հետ կապված տարբեր ավանդություններ են պահպանվել գյուղացիների մոտ: Այսպես պատարեցի Գավրուշ Սարգսյանի հավաստմամբ՝ գյուղը *Պատարա* անունն է ստացել շրջակայքում առկա գյուղատեղիներում պահպանված ավերակ պատերից, Պատարա՝ պատերով

[1] ***Սարգսյան Ս., Առաքելյան Յ.,*** *Արցախի պատմական հուշարձանները, Պատարա, Երևան, 2006, էջ 5:*

[2] ***Բալայան Վ.,*** *Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր, Երևան, 2020, էջ 52:*

շրջապատված[1]: Իսկ գյուղի դպրոցի նախկին փոխտնօրեն Ռոմելա Առուստամյանի գրագրություններում պահպանվել է մի ավանդություն, ըստ որի՝ *Պատարա* անունը ծագել է *պատարագ* բառից: Միջնադարում շրջակա գյուղերի բնակչությունը կիրակնօրյա պատարագներին մասնակցելու նպատակով գալիս էր Պատարայի Սբ. Ամենափրկիչ եկեղեցին: Այսպես, Պատարան կարող ենք նաև ստուգաբանել որպես *պատարագ*[2]:

Պատարայում հայ մարդն իր գործունեությունը սկսել է առնվազն մ.թ.ա. 1-ին հազարամյակից և անընդհատ շարունակել մինչև մեր օրերը: Դրա մասին են վկայում նաև Պատարայում և նրա շրջակայքում պահպանված պատմամշակութային նշանակության շուրջ 200 հուշարձաններ:

Պտրեցիք, Արցախի իշխանական տների գլխավորությամբ, տարբեր դարաշրջաններում պայքարել են հայրենի երկրամաս թափանցած քոչվոր ցեղերի և օտար նվաճողների դեմ: Իրենց անվտանգությունը պահպանելու նպատակով հաճախ նրանք անմատչելի վայրերում կառուցել են բերդեր, ամրացված վայրեր:

Պատարայի գետահովտի ավազանը միջնադարում խիտ բնակեցված է եղել. այդ մասին են վկայում բազմաթիվ գյուղերի ավերակները, եկեղեցիները, վանքերն ու գերեզմանոցները, որոնք խիտ անտառներով ու թփերով են ծածկված: Բնակատեղիների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ գետի միջին և մանավանդ վերին հոսանքի հատվածները, որտեղ տեղանքը պաշտպանության տեսակետից առավել հուսալի է, ավելի խիտ էր բնակեցված: Պատարա գյուղից գետի հոսանքով վեր՝ թավուտ անտառներում, պահպանվում են մեկ տասնյակից ավելի գյուղատեղիներ և մի շարք ուշագրավ ճարտարապետական հուշարձաններ, որոնք միշտ էլ հետաքրքրել են ուսումնասիրողներին:

Ուշադրության է արժանի Պատարա գյուղից մոտ 8 կմ դեպի հարավ-արևմուտք (ուղիղ գծով՝ 4.5 կմ)՝ Պատարա գետի աջ կողմում՝ գետափից մոտ 1,2 կմ հեռավորության վրա, Դարպասուտ (նախկին Լեսնոյ) գյուղատեղիից հարավ տեղադրված «Օխտը եղցի» (Յոթ եկեղեցի) հնավայր-սրբավայրը: Տեղանքն ունի հրվանդանի տեսք, անտառածածկ է: Գտնվում է ծովի մակերևույթից 1187 մ բարձրության վրա: Այստեղ պահպանվում են կանգուն, կիսավեր կամ հիմնահատակ ավերված 12 տարբեր շինությունների մնացորդներ: Ելնելով հնավայրի «Օխտը եղցի» անվանումից՝ թյուրիմացաբար տարբեր կարգի շենքեր վերագրվել են եկեղեցուն և այդպիսով տեղում «տեսել» են յոթ եկեղեցի: Սակայն իրականում համալիրը բաղկացած է երեք եկեղեցուց, որոնցից մեկը կանգնած է առանձին, մյուս երկուսը կից են իրար: Վերջիններիցս արևելյանը հյուսիսից ունի ավանդատուն, իսկ հարավ-արևելքից նրան կից է մի փոքրիկ մատուռ: Գլխավոր կամ մեծ եկեղեցուն հյուսիսից կից է դամբարանատան կամ տապանատան թաղածածկ շենքը: Համալիրի հարավ արևելյան ծայրում ուղղանկյուն հատակագծով մի շենք կա, որը, հավանաբար, ծառայել է որպես գավիթ և արևմուտքից ունի մուտք: Նման մի այլ շենք, որի մուտքը բացվում է արևելքից, կիսավեր վիճակում պահպանվում է մեծ եկեղեցու հարավ արևմտյան անկյան մոտ, հիմնահատակ ավերված երկու այլ շենքերի մնացորդներ են պահպանվել համալիրից 6-7 մ հեռու: Վերջիններից արևմուտք տարածվում է խաչքարերով հարուստ գերեզմանոցը, ուր ևս նկատվում են երկու տարբեր շենքերի հետքեր (հավանաբար մատուռների):

Այսպիսով, հուշարձանախմբի «Օխտը եղցի» անվանումը զուտ ժողովրդական է և ոչ թե պատմական: Տեղում պահպանված 12 արձանագրություններից ոչ մեկում, ցավոք, չգտնվեց այս

---

[1] *Հարցազրույց գյուղի բնակիչ, 1982-96 թթ. և 2013-15 թթ. «Բալուջա» անտառտնտեսությանանտառապետ, 70 ամյա թոշակառու* ***Գ. Սարգսյանի*** *հետ:*

[2] *Հարցազրույց գյուղի բնակիչ, 1987 -2021 թթ. Պատարայի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի, դպրոցի նախկին փոխտնօրեն, 64 ամյա* ***Ռ. Առստամյանի*** *հետ:*

հուշարձանախմբի իսկական՝ հնագույն անվանումը[1]:

Միևնույն ժամանակ, Շ. Մկրտչյանը պնդում է, որ այստեղ իսկապես յոթ եկեղեցիներ են կառուցված, որոնցից չորսը մեկ ամբողջական շինություն են կազմում՝ իրենց դռներով և պատուհաններով, իսկ երեքը կառուցված են նրանց շրջապատում[2]:

Համալիրում փաստագրված 12 անձնագրությունից ոչ մեկում չգտնվեց սրբավայրի նախնական, հնագույն անվանումը: Հուշարձանախմբում շենքերի դասավորությունն ունի հետաքրքիր լուծում: Երկու միմյանց կից հնագույն եկեղեցիների և դրանցից արևելք ընկած երկու ուղղանկյուն հատակագծով շինությունների մուտքերը բացվում են դեպի փոքրիկ հրապարականման վայր, որը, հավանաբար, բակի նշանակություն է ունեցել: Այդ փոքրիկ տարածքն արևելքից զարդարում են կողք կողքի կանգնած խաչքարերը, որոնցից մեկի վրա կա 1185թ. արձանագրություն: Եկեղեցիների հորինվածքային կարևոր առանձնահատկությունն է ուղղանկյունաձև բեմը: Ավագ խորանի այդ կերպ լուծումը բավականաչափ տարածված և ընդունված է Արցախի հայ պատմամշակութային ճարտարապետության մեջ:

Համալիրի եկեղեցիները կառուցված են անտաշ և կոպտատաշ տեղական քարերով ու միացված են կրաշաղախով[3]: Ցավալի է, որ շենքերից ոչ մեկը ամբողջությամբ չի պահպանվել: Եկեղեցիների ներսում պահպանվում են ծեփի հետքերը: Համալիրի գլխավոր և նրան կից եկեղեցու հարավային ճակատներում պատի մեջ ազուցված են 10-րդ դարին բնորոշ զարդաքանդակներով խաչքարերի կտորներ: Տապանատան շենքը, որը միակ ամբողջական կանգուն շինությունն է համալիրում, տեղադրված է գլխավոր եկեղեցու հյուսիսային կողմում: Շենքի ներսում՝ արևելյան պատի տակ, եղել է չորս խաչքար, որոնցից մեկն է միայն տեղում, և հենց դա ունի թվակիր ամենահին արձանագրությունը: Խաչքարը կերտված է սպիտակ կրաքարից և ներկված է եղել կարմիր ներկով: Խաչի ստորին մասում պատկերաքանդակների շուրջը 10 տողանոց արձանագրություն է՝ 1158 թվագրությամբ[4]:

---

[1] ***Կարապետյան Ս.,*** *Պտրեցիք գետահովտի պատմաճարտարապետական հուշարձանները ըստ նորահայտ արձանագրությունների, <<Լրաբեր>>, 1984, հ. 7, էջ 75-76:*

[2] ***Մկրտչյան Շ.,*** *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1980, էջ 133:*

[3] ***Կարապետյան Ս.,*** *նույն տեղում, էջ 76:*

[4] *Նույն տեղում, էջ 77:*

ԹԻԻ
ՈԷ (1158) :ԷՐ: ԵՍ
ՍՄՊԱՏ ՈՐԴԻ
ՎԱՍԱԿԱ ԿԱՆ
ԳՆԵՑԻ ՋԽ
ԱՋՍ ՈՐԴ
ՈՅ ԻՄՈՅ ԴԱԻ
ԹՈՆԻՍ ՈՐ ԿԻԱ
ԱԻՐԵԱ ՓՈԽ
ԵՑԱԻ Ի ՔՍ

1163 թ. մի խաչքար ջարդվել ու բաժանվել է երեք մասի, որի կտորները գտնվում են առանձին կանգնած եկեղեցուց երկու մետր հարավ, որի բեկորներից մեկի վրա պահպանվել է արձանագրության մանրամաս և հեծյալի քանդակ[1]

Մեկ ուրիշ խաչքարի վրա, որը ընկած է առանձին կանգնած եկեղեցու մուտքի մոտ, պահպանվել է 1165 թ. արձանագրություն[2]:

Առանձին կանգնած եկեղեցուց մոտ 8 մ արևելք 1203 թ. արձանագրությամբ խաչքար է առկա, որի ստորին մասում հեծյալի քանդակ է, շուրջը պահպանվել է 8 տողանոց հետևյալ արձանագրությունը՝

Թ (ԻԻ) ՈԾԲ ԷՐ (1203 թ .)
ԵՍ ՎԱՐՀ
ԱՄ ԿԱՆԳ
ՆԵՑԻ Ջ
ԽԱՋՍ

[1] ***Սարգսյան Ս., Առաքելյան Յ.,*** *նշվ. աշխ., Երևան, 2006, էջ 9:*
[2] *Նույն տեղում:*

ՀԱԻԵՏ
ԻՔԱՅ
ՅԱՂԱ
ԻԻՍ ՅԻՇԵՅԷՔ [1]:

1216 թ. արձանագրությամբ երկու խաչքարերից մեկը գտնվում է բակի հարավային ծայրում և կոտրված է, իսկ երկրորդը՝ համալիրից մոտ 80 մ արևմուտք մի բարձունքի վրա, որի մոտ նկատվում են ինչ-որ շինության (հավանաբար մատուռի) հիմնապատեր: Առաջին խաչքարի արձանագրությունը, ըստ Ս. Կարապետյանի, հետևյալն է՝

Թ:Վ:ԱԿ:Ան:Ո:Կ:Ե: (1216),
ԷՐ ԵՍ ՀԱՅՐԱՅՊԵՏ ԿԱՆԳՆԵՅԻ ԶԽԱՉ
Ս ԻՄ ԿԵՆԴԱՆՈՒԹԵԱՄԲՍ ԲԱՐԵԽԱԻՍԻՆ
ԱՌՀԱ . . . . Ն . . . ՈՐԴԻՆ ՄԻԱԾԻՆ[2]:

«Օխտը եղցի» վանական համալիրի մուտք-անցակետը գտնվում է համալիրից մինչև 100-110 մ հարավ-արևմուտք: Ներկայումս պահպանվում է մուտք-դարպասի արևմտակողմ հատվածը (չափերը՝ 190×160×120սմ): Դատելով հետքերից՝ իրականում այն եղել է մոտ 3×4մ չափերի շինություն և հավանաբար ծառայել է որպես դեպի վանք տանող անցակետ: Անցակետի մուտքը (անցումը) եղել է արևմտյան կողմից[3]:

Այս ամենը ցույց է տալիս, որ վանքի տարածքը, ինչպես այլ վանքերի, եղել է պարսպապատ, որից ներկայումս գրեթե ոչինչ չի պահպանվում: Մուտքը կառուցված է եղել հիմնականում կոպտատաշ, խորանարդի բերված միջին չափերի կրաքարերով ու կրաշաղախով, վերաբերում է XII-XIIIդդ.: Հուշարձանի մասին պատմական աղբյուրներում ու այլ գրվածքներում տեղեկություններ չեն պահպանվել:

«Օխտը եղցի» վանական համալիրից 130 մ արևմուտք և ծովի մակերևույթից 1205 մ բարձրության վրա գտնվող գերեզմանոցն աչքի է ընկնում տարաբնույթ գեղաքանդակ խաչքարերով, որոնց թիվն անցնում է մեկ տասնյակից: Զբաղեցնում է փոքր տարածք՝ եկեղեցու շուրջը (չափեր՝ 40×40մ): Այստեղ, բացառությամբ մի քանի խաչքարերի, մյուս հուշակոթողները տեղահանված են, առկա են նաև ջարդվածներ: Այս հուշարձանը նույնպես վերաբերում է XII-XIIIդդ.: Հուշարձանի մասին պատմական աղբյուրներում ու այլ գրվածքներում տեղեկություններ չեն պահպանվել:

2020 թ. սեպտեմբերին (մինչ պատերազմը) ԱՀ Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայությունը շաբաթօրյակ էր կազմակերպել հուշարձանի տարածքում, որի ընթացքում հողի տակից ի հայտ են բերվել 12-13-րդ դարերի նոր խաչքարեր: Դրանք գտնվում է «Օխտը եղցի» վանական համալիրի բակի հարավային ծայրում[4]:

Այսպիսով, Պատարան և նրա շրջակայքի հուշարձանները, ի դեմս «Օխտը եղցի» վանական համալիրի, փաստում են, որ տվյալ բնակավայրը Արցախի հին և միջնադարյան բնակավայրերից մեկն է:

---

[1] ***Կարապետյան Ս.,*** *նույն տեղում, էջ 78:*
[2] *Նույն տեղում, էջ 78:*
[3] ***Մարգսյան Ս., Առաքելյան Յ.,*** *նշվ. աշխ., էջ 9:*
[4] ***ԱՀ Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայության*** *նորահայտ հուշարձանների փաստաթղթեր, թղթապանակ 7:*

ՀՏԴ 902/908

Հայկուշ Արզանյան
Գորիսի պետական համալսարան
Հումանիտար մասնագիտությունների
ֆակուլտետ, բակալավր
Գիտական ղեկավար՝
ասիստենտ Գ. Շաբունց

ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ

Բանալի բառեր՝ *Մխիթարյան միաբանություն, Մխիթար Սեբաստացի, Միքայել Չամչյան, Ղևոնդ Ալիշան կրթություն, մշակույթ:*

Հայ ժողովուրդը աշխարհի այն ժողովուրդներից է, որ կարողացել է դարերի ընթացքում ստեղծել մշակութային այնպիսի արժեքներ, որոնք ստացել են համաշխարհային մեծ հնչեղություն: Այդպիսի ճանաչման և համաշխարհային հնչեղության է հասել Մխիթարյան միաբանությունը: Այն փաստը, որ Մխիթարը և միաբանության շատ անդամներ դավանանքով եղել են կաթոլիկ, դա չի խանգարել նրանց ստեղծելու մեծարժեք գործեր, որոնք հայ միտքը հաղորդակից են դարձրել արևմտյան քաղաքակրթությանը:

Айкуш Арзанян

РОЛЬ КОНГРЕГАЦИИ МХИТАРИСТОВ В ОБРАЗОВАТЕЛЬНОЙ И КУЛЬТУРНОЙ ЖИЗНИ

Ключевые слова: *Конгрегация Мхитаристов, Мхитар Себастаци, Микаэл Чамчян, Алишан, образование, культура.*

Армянский народ один из народов мира, который смог создать культурные ценности, получившие большое признание во всем мире. Единство Мхитаряна добилось такого признания и мировой репутации. Тот факт, что Мхитар и многие члены общины были католиками, не помешал им создавать ценные произведения, доносившие армянскую мысль до западной цивилизации.

Haykush Arzanyan

THE ROLE OF THE MEKHITARIST CONGREGATION IN EDUCATIONAL AND CULTURAL LIFE

Key words- *Mekhitarist Congregation, Mkhitar Sebastatsi, Mikael Chamchyan, Alishan education, culture*

The Armenian people are one of the nations in the world that has been able to create such cultural values over the centuries that have gained great worldwide recognition. The Mkhitarist Congregation achieved such kind of worldwide recognition. The fact that Mkhitar and many member of the Mkhitarist Congregation were Catholics did not prevent them from creating valuable works which made the Armenian mind a

Գիտամշակութային և եկեղեցական գործիչ, լեզվաբան, բառարանագիր Մխիթար Սեբաստացին Մխիթարյան միաբանության հիմնադիրն է: Մխիթար Սեբաստացին հայ ազգի ակնառու դեմքերից է, իր տաղանդի և գործունեության շնորհիվ հայ ժողովրդից ստացել է *Լուսավորիչ* պատվանունը, որը տրվել է միայն Գրիգոր Լուսավորչին, Մեսրոպ Մաշտոցին և Խաչատուր Աբովյանին:

Հոդվածի նպատակն է ներկայացնել Մխիթարյան միաբանության ստեղծման դժվարին ճանապարհը, հիմնադրի և միաբանության այլ անդամների ծավալած բարեբեր գործունեությունը տարբեր բնագավառներում, այդ թվում՝ կրթական, հրատարակչական, գիտական: Ինչպես նաև հայ երիտասարդի համար երևան հանել անցյալի լուսավոր էջերը:

Պատմության էջերը ցույց են տվել, որ հայը օտար զավթիչների դեմ հաղթանակ է տարել ոչ միայն զենքով, այլև գրչով: Թեմայի արդիականությունը նրանում է, որ այսօրվա երիտասարդությունը պետք է քաջատեղյակ լինի Մխիթարյան միաբանության հայանպաստ գործունեության մասին, ինչպես նաև գիտակցի, որ ազգապահպանման գլխավոր սկզբունքներից մեկը կրթության և մշակույթի զարգացումն է: Ինչպես 18-րդ դարում, այսօր էլ հայ ժողովուրդն օրհասական պահերին բանեցնում է իր խելքը: Ուստի, Մխիթարյան միաբանության գործունեությունը որպես օրինակ ունենալով, հայ երիտասարդն իր կյանքի ուղենիշը պետք է դարձնի ուսումնատենչությունը, ջանասիրությունը և հայրենապաշտությունը, որը բնորոշ էր մխիթարյաններին:

Մխիթար վարդապետ Սեբաստացին ծնվել է Փոքր Ասիայի Սեբաստիա քաղաքում, 1676թ. փետրվարի 7-ին: Նրա հայրը՝ Մանուկի որդի Պետրոսը, վաճառական էր, իսկ մոր անունն էր Շահրիստան: Մխիթարը մկրտության ժամանակ ստացավ իր պապի անունը՝ Մանուկ, բայց նրան անվանում էին *Մխիթար* անունով, որը տրվեց նրան հոգևոր կոչման հետ: Մխիթարի հայրը՝ Պետրոսը, հարուստ վաճառականներից չէր: Մխիթարը այդքան էլ բարվոք չէր, ընչավետ չէր: Հայտնի չէ, թե ինչ տեսակ մարդիկ էին Մխիթարի ծնողները, այսինքն՝ ինչ կարգավիճակով էր նա տանը: Կարևոր էր այն, թե ինչ կրթություն ստացավ երեխան:

Մխիթար Սեբաստացու դերը մեծ է հայ իրականության մեջ, նա ամեն կերպ ցանկանում էր օգնել իր հայրենիքին: Առաջ շարժվելով իր գաղափարներով և երազանքներով՝ հասավ նրան, որ Վենետիկում ստեղծվեց և այժմ էլ գործում է իր անուն կրող Մխիթարյան միաբանությունը: Մխիթար Սեբաստացին, շատ անգամներ պայքարի մեջ մտնելով տարբեր հիվանդությունների դեմ, ծանր հիվանդանում և վախճանվում է 1749թ. ապրիլի 27-ին, 73 տարեկան հասակում:

Հայաստանի աբեղաները մականուն են տվել Մխիթար վարդապետ Սեբաստացուն՝ «Լավ չէ», պատճառը այն է որ Մխիթարը, տեսնելով անպատեհ մի բան, սովոր էր անընդհատ կրկնել. «Լավ չէ, լավ չէ»[1,17]:

Դեռևս 17-րդ դարի վերջերին Մխիթար Սեբաստացին ծրագրում է հիմնել հոգևոր միաբանություն և դպրոց: Հայաստանի քաղաքական անբարեհույս և տնտեսական ծանր պայմաններում դա խիստ դժվար իրագործելի ծրագիր էր: Պատահական չէ, որ այդ հույսերով երկարատև թափառաշրջիկ կյանքը՝ Սեբաստիայից Էջմիածին, Սևան, Բասեն, Հալեպ, Կիպրոս, Կ.Պոլիս, Էրզրում դարձյալ Կ.Պոլիս, սպասված արդյունքի չի հասցնում նրան: Հարկադրված իր մի քանի համախոհներով 1706թ. հեռանում է Կ.Պոլսից, քանի որ այդ ժամանակահատվածում այդտեղ է՛լ ավելի է բորբոքվում միջդավանական պայքարը: Այդ թեժ պայքարների ընթացքում Մխիթարը գալիս է այն եզրակացության, որ Հայաստանում միանգամայն հեշտ չի լինելու գլուխ բերել իր գործը: Նա նորից դառնում է իր նախկին գաղափարին՝ գնալ Եվրոպա, իր միաբանությունը եվրոպական ազատ միջավայրում հաստատելու և իր ծրագիրը իրականացնելու համար: Շուտով իր մոտ է կանչում այն

աշակերտներին, որոնց նա հայկական գավառներ էր ուղարկել՝ քարոզչություն, ուսուցչություն, նոր աշակերտներ պատրաստելու համար: 1701թ. սեպտեմբերին 8-ին՝ Աստվածածնի ծննդյան տոնին, բոլորը գալիս և հավաքվում են կապուչիների վանատանը: Մխիթարը սկսեց քննարկումներ անել իր աշակերտների հետ և հայտնեց, որ ժամանակի նման հանգամանքների բերումով չի կարելի միաբանությունը հաստատել ոչ Կ.Պոլսի մեջ և ոչ էլ Հայաստանի որևէ կողմում: Ուստի պետք էր ընտրել մի այնպիսի երկիր, որտեղ հարմար կլինի վանք և միաբանություն հաստատելու: Սկզբում ուզում էին ընտրել Լիբանանը, ուր կաթոլիկ մարիոնետներն ունեին առանձին պատրիարքություն: Բայց տարբեր տեղեկություններ հավաքելով՝ որոշում են, որ միաբանությունը պետք է հաստատել Հունաստանում՝ Մորեայի կողմերը, որ այն ժամանակ գտնվում էր Վենետիկի տիրապետության տակ[2,73]: Խորհրդակցությունից հետո Մխիթարը հայտնում է, որ միաբանությունը հաստատված է և իրեն նվիրում է Աստվածածնին:

Վենետիկի դեսպանը, որ միաժամանակ Մորեայի կառավարիչն էր, իր հովանավորության տակ է առնում Մխիթար վարդապետին: Նրա հանձնարարականներով տեղի իշխանները Մեթոնում տեղ են տալիս Մխիթարին և թույլատրում եկեղեցի ու մենաստան հիմնել: Գնալով աշակերտների թիվը ավելի էր մեծանում: Նա մշակում է վանական մի կանոնադրություն և իր աշակերտներից երկուսին ուղարկում Հռոմ՝ Կղեմես ԺԱ Պապի մոտ՝ այն հաստատելու համար: Սակայն ամեն ինչ այդքան էլ հեշտ չդասավորվեց: Պատճառը լատինամոլ կաթոլիկ հայեր են լինում, որոնք նախանձից կուրացած՝ ամեն տեսակ ինտրիգներով ձգտում էին տապալել Մխիթարի ծրագրած գործը: Պապի կողմից վավերացումը ձգվեց մինչև 1712թ., երբ վերջապես, հաստատվում է Մխիթարյանց կանոնադրությունը, և ինքը՝ Մխիթարն էլ անվանվում է *Աբբա*: Մխիթարին հաջողվում է իր իսկ կազմած հատակագծի համաձայն մի մենաստան և մի եկեղեցի կառուցել : Դրանից հետո արդեն միաբանությունը սկսում է աշխատել խաղաղ ու շինարար աշխատանքով: Հազիվ այս փոքր հաջողությունը ձեռք էր բերվել, երբ մի շատ ավելի մեծ դժբախտություն է պայթում Մխիթարի գլխին: Օսմանյան Թուրքիան պատերազմ է հայտարարում Վենետիկի դեմ. օսմանցիները արշավում են Մորեայի վրա. պաշարվում է Մեթոնը. իտալացիները անկարող էին դիմադրել թուրքական զորքին և ստիպված անձնատուր են լինում: Մխիթար Սեբաստացին ստիպված թողնում է ամեն ինչ և 11 միաբանների հետ մի հին նավով փախչում դեպի Վենետիկ: Վենետիկ հասնելուն պես Մխիթարը դիմում է տեղի ազդեցիկ մարդկանց, որպեսզի իրեն արտոնություններ տան, և հաստատի իր միաբանությունը: Բայց ծերակույտի հաստատած օրենքը թույլ չէր տալիս, որ Վենետիկում հիմնվեն կրոնական նոր միաբանություններ: Տարբեր արգելքներ և դժվարություններ հաղթահարելուց հետո Մխիթար Սեբաստացուն հաջողվում է ստանալ ծերակույտի համաձայնությունը՝ պայմանով, որ նա պետք է իր բնակությունը հաստատեր քաղաքից դուրս՝ հեռու մի տեղ: Մխիթարը ընտրում է Վենետիկի արևելյան մասում գտնվող կղզիներից մեկը, որը չնայած փոքր էր, բայց մեծ հարմարություններ էր ստեղծում: Այդ կղզում մշտական բնակիչներ չկային, այն մի լքված ու վայրի տեղ էր: Կղզում կար մի խարխուլ եկեղեցի, որը Աստվածաշնչի աղքատ Ղազարոսի անունն էր կրում. Հենց այդ անունով էլ կղզին կոչվում էր *Ս. Ղազար կղզի*: Մխիթարը որոշում է, որ իր միաբանությունը պետք է հաստատել հենց այդտեղ և խնդրում է մեծավորներին, որ իրեն շնորհվի այդ կղզին: Ծերակույտը ընդունում է Մխիթարի խնդրանքն, ու 1717թ. հրովարտակով այդ կղզին ճանաչվում է Մխիթարյանների սեփականությունը[2,74]: Իրեն հատուկ անսպառ եռանդով և շինարարական-կազմակերպչական տաղանդով Սեբաստացին սկսում է հարմարություններ ստեղծել, շինություններ կերտել բնակության համար: Կառուցվում է եկեղեցի և նրան առընթեր՝ դպրոց, որը համարվում է առաջին հայկական դպրոցը եվրոպական հողի վրա: Այդպես էլ սկսվում է նշանավոր Մխիթարյան միաբանության խոշոր հայանպաստ գործունեությունը, որի արդյունքները առ այսօր շոշափելի են:

Մխիթար Սեբաստացին կարճ ժամանակում կազմակերպում է միաբանության կյանքը և դպրոց հիմնում, ուր անմիջապես սկսում է եռուն, նպատակասլաց ու մեղվաջան աշխատանք: Իտալիայում հաստատվելու առաջին տարիներից Մխիթարը սկսում է լույս ընծայել իր ու միաբանության մյուս անդամների գրած կամ թարգմանած գրքերը՝ բացառապես կրոնական բովանդակությամբ: Մխիթարյանները մեզ են ժառանգել հսկայական գիտական մեծ գրականություն: Դրանք առանձին մենագրություններ են, դասագրքեր, ամսագրային հոդվածներ, ինչպես նաև հայ և օտարազգի հեղինակների երկերի հայերեն թարգմանություններ:

18-19-րդ դարերում Մխիթարյանների բնագիտական ինքնուրույն հրատարակած գործերն անցնում են հարյուրից: Ինքնին հասկանալի է դառնում, որ գիտականության աստիճանով դրանք նույնը չեն և չէին էլ կարող լինել: Ավելի խորը ուսումնասիրություններ կատարելով՝ պարզ է դարձել, որ հիշյալ ժամանակահատվածում Վենետիկի մխիթարյանների բնագիտական հրատարակությունները գերազանցում են վիեննականներին:

Մխիթարյանների բնագիտական ժառանգության անբաժան մասն են կազմում նրանց հրատարակած հանրագիտարանները, որոնք հայ բնագիտության պատմության ամենանշանավոր էջերից են: Ժամանակագրական կարգով նշեմ դրանցից մի քանիսը. Մ. Բժշկյանի «Ճեմարան գիտելեաց», Մ. Ռեստենի «Բառարան բժշկական բառից», Մ. Քաջունու «Բառգիրք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց», Ղ. Ալիշանի «Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն»:

Վենետիկում 1791-ին արևմտահայ աշխարհաբարով լույս է տեսել Ղուկաս Ինճիճյանի «Տեսութիւն համառօտ հին և նոր աշխարհագրութեան» 155 էջանոց աշխատությունը: Ճիշտ և ճիշտ հարյուր տարի անց՝ 1891-ին, կրկին Վենետիկում գրաբար լույս է տեսնում Մ. Քաջունու վերը հիշատակած «Բառգիրքի» առաջին և հետագայում՝ երկրորդ և երրորդ հատորները:

Մխիթարյանների լույս ընծայած բնագիտական ուսումնասիրությունները նվիրված են հետևյալ բնագավառներին՝ ֆիզիկա, քիմիա, բուսաբանություն, հանքաբանություն, երկրաբանություն, աշխարհագրություն, աստղագիտություն, անատոմիա, որտեղ որ խոսվում մարդու ծագման և զարգացման, նրա կառուցվածքի մասին: Թվարկված բնագավառներից պարզ է դառնում, որ մաթեմատիկան և բժշկությունը ընդգրկված չեն այդ ցանկում, քանի որ մխիթարյանները դրանք բնական գիտություն չէին համարում: 18-րդ դարում մխիթարյանների հրատարակած բնագիտական աշխատությունները սակավաթիվ են: Դրանք Վենետիկում լույս տեսած «Էփիմերտե»-ներն են և Վենետիկի Մխիթարյան միաբանության նշանավոր անդամ Ղուկաս Ինճիճյանի վերը հիշատակված աշխատությունը: Փաստորեն մխիթարյաններն իրենց բնագիտական երկերի ծանրակշիռ մասը հրատարակել են 19-րդ դարում: 19-րդ դարի առաջին քառորդի հրատարակություններում հատկապես հիշատակելի է Վենետիկի միաբանության անդամ Ղ. Օղուլգուլյանի՝ 1809-ին գրաբար լույս ընծայած 286 էջանոց «Ուսումնականութիւն նաւուղղութեան» շքեղ աշխատությունը [3,66]: Ժամանակակից գիտական տերմինաբանությամբ այս աշխատանքի վերնագիրը կլինի «Նավագնացության մաթեմատիկան»:

Մինչև 19-րդ դարի առաջին կեսը Մխիթարյան միաբանության բնագիտական հրատարակություններում հատկապես առանձնանում է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Մատթեոս Սաղաթելյանի՝ աշխարհաբարով գրված «Համառոտ բնական գիտություն» 528 էջանոց հիմնարար աշխատությունը: Հիշյալ գրքում խոսվում են ֆիզիկային, քիմիային, և օդերևութաբանությանն առնչվող հարցերի մասին: Այս աշխատության ուշագրավ կողմն այն է, որ Մ. Սաղաթելյանի հայ տպագիր աստղագիտական գրականության մեջ նշվում է, որ այսպես կոչված «հաստատուն աստղերը» նույնպես ունեն իրենց սեփական շարժումները:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ ֆիզիկայի, մեխանիկայի,

երկրաբանության, բուսաբանության, հանքաբանության, կենդանաբանության, տոմարագիտության, աստղագիտության, օդերևութաբանության հայատառ տպագիր աշխատությունների հեղինակները Մխիթարյան միաբաններն են: Հայ իրականության մեջ քիմիային և ֆիզիկային նվիրված տպագիր ամենածավալուն աշխատությունները հրատարակվել են Վենետիկում: Ցավոք պետք է նշել նաև այն փաստը, որ 19-րդ դարի երկրորդ կեսին Մխիթարյան միաբանության կողմից լույս տեսած բնագիտական որոշ աշխատություններ, գրաբար գրված լինելու պատճառով, հայկական ուսումնական հաստատություններում և ընթերցողների կողմից մեծ ընդունելության չեն արժանացել:

Մխիթարյան միաբանության բնագիտական ժառանգության անքակտելի մասն են կազմում նրանց հրատարակած՝ աստղագիտությանը և աշխարհագրությանը նվիրված աշխատությունները՝ քարտեզներ և ատլասներ: Հայատառ առաջին աստղագիտական տպագիր «Աստղալից երկինքը» քարտեզի համար ևս պարտական ենք Մխիթարյան միաբանությանը: 1749-ին Վենետիկում՝ իտալացի Անտոն Բորտոլիի տպարանում, լույս է տեսել Մխիթար Սեբաստացու Բառգիրք Հայկազեան լեզուի բառարանի առաջին հատորը: Ցավոք, Մխիթար Սեբաստացին չտեսավ այդ հիրավի կոթողային աշխատության ամբողջական հրատարակությունը: Առաջին հատորի վերջին մամուլների տպագրության օրերին նա ծանր հիվանդանում և մահանում է [3,68]:

Իր գոյության 300 տարվա ընթացքում Վենետիկի Մխիթարյան միաբանությունը հայ դպրության ու հայագիտական առարկաների և նյութերի լուսաշող կենտրոն է հանդիսացել:

Մխիթարյան մեծ երևելիներից է Միքայել Չամչյանը: Մեծանուն պատմաբանը ծնվել է 1738թ., Կ.Պոլսում: Ծննդավայրում նախնական կրթություն ստանալուց հետո տեղափոխվում է Վենետիկի Սուրբ Ղազար կղզի՝ ուսումը շարունակելու: 1779թ. լույս է տեսնում Չամչյանի առաջին հայագիտական ուսումնասիրությունը՝ Քերականությունը: Նրա գրչին են պատկանում նաև կրոնադավանաբանական բազմաթիվ գրքեր: Բայց ամենաարժեքավորը «Պատմութիւն Հայոց ի սկզբանե աշխարհի մինչև ցամ տեառն 1784» խորագիրը կրող եռահատոր աշխատությունն է [4,733]: Ժամանակի մեծ պատմաբանի այդ խոշոր գործը լույս է տեսել Վենետիկում, 1784-1786թթ. ընթացքում: Այդ երկի հրատարակումը, ինչպես նշել է հայ բազմավաստակ պատմաբան Լեոն, մի նոր դարագլուխ բացեց հայագիտության, հատկապես հայոց պատմագիտության զարգացման համար:

Հեղինակը յուրովի է մեկնաբնում այդ գործի ձեռնարկման դրդապատճառը: Գրքի առաջաբանում նա գրում է. «Բոլորին ցանկալի է ծանոթանալ իրենց ազգի սկզբնավորությանը, և տեղեկանալ նրա գլխով անցած իրադարձություններին: Այս պատճառով էլ այն ազգերը, որոնք ձեռնահաս եղան՝ հետամտեցին և գրեցին իրենց նախնիների պատմությունն ու նրանց գործորը: Այսպիսի հոգածություն թեև մեր ազգի մեջ էլ երևաց, բայց չծաղկեց, որովհետև քչերը ձեռնամուխ եղան այդ գործին ու օտարներից շատերն էլ մեր ազգի մասին գրեցին, բայց սխալներով լի, հերյուրանքներով ու ստերով, որով իսպառ նսեմացավ ծանոթությունը մեր ազգի մեջ եղած գործերին» [5,523-524] :

Չամչյանի Պատմությունը սկսվում է աշխարհաշինությունից, Հայկի ու Բելի պատմությունից և ավարտվում է 18-րդ դարավերջի դեպքերով: Այդպիսի խոշոր գործ կատարելով հանդերձ, Չամչյանի գերծ չի եղել իր ժամանակի ու շրջապատի սահմանափակությունից: Չամչյանը պատմական երևույթների և դեպքերի զարգացման ընթացքը մեկնաբանում է որպես աստծո կամեցողություն: Նա այդքան էլ մեծ ուշադրություն չի դարձրել հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքին և դասակարգային հարաբերություններին: Չամչյանը ավելի մեծ ուշադրություն է դարձրել կրոնական հարցերին՝ հաճախ դրանք դարձնելով պատմության առանցքը: Այնուհանդերձ, Չամչյանի «Պատմություն Հայոց» աշխատությունը խոշորագույն երևույթ է եղել հայ պատմագիտության մեջ:

18-րդ դարում իր անգնահատելի դերն է ունեցել նաև մեծանուն բանաստեղծ, բանասեր, մանկավարժ, պատմաբան և աշխարհագրագետ Ղևոնդ Ալիշանը: Ծնվել է 1820թ., Կ.Պոլսում:

Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ՝ 1838թ-ից: Ծավալել է վիթխարածավալ գիտամանկավարժական գործունեություն: Ալիշանը հայ ժողովրդի մտավոր մշակույթի պատմության էջերում հայրենիքի գաղափարի խորհրդանիշ է 19-րդ դարի կեսերից և շարունակում է մնալ այդպիսին: Ալիշանը եղել է Ֆրանսիայի ակադեմիայի Պատվո լեգեոնի դափնեկիր 1866թ., Իտալիայի Ասիական ընկերության, Մոսկվայի հնագիտական ընկերության, Վենետիկի ակադեմիայի, Պետերբուրգի հնագիտական ընկերության և Ենայի Փիլիսոփայության ակադեմիայի պատվավոր անդամ:

Ալիշանը 1848թ.ի ապրիլից <<Բազմավեպ>>-ի էջերում սկսում է վարել <<Քնար Հայկական>> խորագիրը կրող շարքը՝ *Նահապետ* ստորագրությամբ: <<Քնար Հայկական>>-ին զուգահեռ՝ Ալիշանը <<Բազմավեպ>>-ում 1849թ. սկսում է վարել <<Ծաղկաքաղ Հայաստան>> շարքը: Վերջինս Հայոց պատմության հերոսական դրվագները մեր պատմիչներից քաղված հատվածներով ներկայացնելու Ալիշանի առաձին փորձն էր:

Սկզբնական շրջանում <<Բազմավեպը>> երկշաբաթաթերթ էր, ապա հաջորդաբար դարձել է ամսագիր, եռամսյա և երկամսյա պարբերական: Հանդեսի էջերում մշտապես տեղ են գտել գիտական, աստվածաբանական, հայագիտական, պատմական, մատենագիտական, լեզվաբանական, գեղարվեստական, ուսումնական և հայ եկեղեցու պատմության մասին արժեքավոր նյութեր:

Առաջին նշանակալից քայլն այն էր, որ <<Բազմավեպ>>-ը ճիշտ լուծեց լեզվի՝ որպես ընթերցողների հետ հաղորդակցման միջոցի հարցը՝ այն հրատարակելով արևմտահայերեն: Եվ դա այն դեպքում, երբ աշխարհաբարի <<հակառակորդներ>> կային հենց միաբանության ներսում: <<Բազմավեպը>> դարձավ այն պարբերականներից մեկը, որը 19-րդ դարում ակտիվորեն անդրադառնում էր հայերենի, մասնավորապես արևմտահայերենի զարգացման գործընթացին, առաջարկում էր լուծումներ լեզվական տարբեր հարցերի առնչությամբ, փորձում նոր միջոցներ առաջարկել արևմտահայերենի կանոնարկման ուղղությամբ: Պարբերականի շոշափած բազմաթիվ հարցեր արդիական են նաև այսօր՝ պայմանավորված Սփյուռքի գոյությամբ՝ արևմտահայերենին ուղղված մարտահրավերներով հանդերձ:

1869թ. <<Բազմավեպում>> հրատարակում է <<Նշմարք և նշխարք ի Հայաստան աշխարհ>> գործը: Այն Հայաստանը ներկայացնելուց բացի նաև գեղարվեստական արտացոլումն է Ալիշանի փայփայած ու ազգակիցներին ուղղված ծրագրի՝ գնալ և ուսումնասիրել երկրի բնական հարստություններն ու պատմական հիշատակները: 1853թ. լույս է տեսնում <<Քաղաքական աշխարհագրությունը>> [6,6]: Նրա <<Տեղագիր Հայոց Մեծաց>>, <<Շիրակ>>, <<Սիսուան>>, <<Այրարատ>>, և <<Սիսական>> երկերն ի մի են բերում նշված նահանգների պատմությանը, աշխարհագրությանը, մշակութային կյանքին վերաբերող բոլոր ու ամեն տեսակ նյութերը, կատարում նրանց համադրական քննությունը, որի շնորհիվ էլ այս հատորները ստացել են հանրագիտական նշանակություն, դարձել հայագիտական անգերազանցելի կոթողներ:

Իրապես մխիթարյանների գործը շատ մեծ և անգնահատելի հայության համար: Նրանք առաջինը ջահ բարձրացրին հայ ազգի լուսավորության ճանապարհին: Շատ կենտրոններ այդ ջահի պայծառությունից ազդվել և մարել են: Շատ և շատ օտար ու հայ մտավորականներ լսելով և տեսնելով միաբանների կատարած գործունեությունը, ցանկություն էին հայտնում անցնել Վենետիկ և դառնալ համաշխարհային ճանաչում ստացած Մխիթարյան միաբանության անդամ:

Այսպիսով, պետք է ընդգծել, որ Մխիթարյանները ավելի են արագացրել հայ ազգի զարթոնքը, իսկ Մխիթար վարդապետ Սեբաստացին դարձել է այդ ճանապարհի ուղենիշը: Հայ ժողովուրդը պետք է շնորհակալ և երախտապարտ լինի Մխիթարյան միաբաններին, որովհետև նրանք դարավոր մթության մեջ գտնված մեր ազգի վրա լույս սփռողներն էին:

Գրականություն

[1] **Ա. Դոլուխանյան,** Վիկտոր Լանգլուայի գիրքը՝ նվիրված Մխիթարյան միաբանության հիմնադրման 300-ամյակի առթիվ, Երևան, 2017, էջ 17:

[2] **Պ. Շահբազյան,** Մխիթար Սեբաստացի, Էջմիածին, 1977, էջ 73, 74:

[3] **Ա. Փաշայան,** 18-19-րդ դարերում Վենետիկի Մխիթարյան միաբանության հրատարակած բնագիտական աշխատությունները, Էջմիածին, 1988, էջ 66, 68:

[4] Հայ ժողովրդի պատմություն (սկզբից մինչև XVIII դարի վերջը), Երևան, 1975, էջ 733:

[5] Հայ մշակույթի նշանավոր գործիչները V-XVIII դդ., էջ 523-524:

[6] **Վ. Դևրիկյան**, Հայր Ղևոնդ Ալիշանի գիտական և գրական ժառանգությունը, Երևան, 2021, էջ 6:

ՀՏԴ 101

Դավիթ Աքելյան
ԵՊՀ, Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ,
Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոն, ասպիրանտ
Էլ.փոստ՝ davidakelyan@gmail.com

Գիտական ղեկավար՝
փ.գ.դ. պրոֆեսոր Ա.Ս.Մանասյան

ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՇԽԱՐՀԻ ՆՅՈՒՏՈՆՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ *պատճառականություն, նյուտոնյան գիտական պատկեր, ժամանակակից գիտական պատկեր, դասական մեխանիկա, քվանտային մեխանիկա, ֆալիբիլիզմ*

Հոդվածում համեմատական մեթոդի կիրառմամբ քննարկվել է պատճառականության հիմնախնդրի համատեքստում նյուտոնյան և ժամանակակից գիտական պատկերներում տեղի ունեցող փոփոխությունները դասական ու ժամանակակից ֆիզիկական տեսությունների օրինակներով: Աշխատանքի արդյունքում եզրակացվեց, որ պատճառականության հիմնախնդրում ժամանակակից ֆիզիկական տեսությունների արմատական լուծումներն ու իրականության մեկնաբանությունը, ի դեմս հավանական դետերմինիզմի, լուծելի են դարձնում նախորդ տեսությունների կողմից մի շարք խնդիրներ, մասնավորապես ֆիզիկական իրականության միկրոսկոպիկ մակարդակում:

Давид Акелян

ПРОБЛЕМА ПРИЧИННОСТИ В КОНТЕКСТЕ НЬЮТОНОВСКОЙ И СОВРЕМЕННОЙ НАУЧНОЙ КАРТИНЫ МИРА

Ключевые слова: *причинность, ньютоновская научная картина, современная научная картина, классическая механика, квантовая механика, фалибилизм*

В статье с применением сравнительного метода обсуждались изменения, происходящие в ньютонской и современной научной картинах в контексте проблемы причинности на примерах классических и современных физических теорий. В результате работы было заключено, что радикальные решения современных физических теорий в проблеме причинности и интерпретация реальности в лице вероятного детерминизма делают решаемыми ряд проблем со стороны предыдущих теорий, в частности, на микроскопическом уровне физической реальности.

David Akelyan

THE PROBLEM OF CAUSALITY IN THE CONTEXT OF THE NEWTONIAN AND MODERN SCIENTIFIC PICTURE OF THE WORLD

Key words: *causality, newtonian scientific picture, modern scientific picture, classical mechanics, quantum mechanics, falibilism*

The article uses the comparative method to discuss the changes taking place in the Newtonian and modern scientific pictures in the context of the problem of causality on the examples of classical and modern physical theories. As a result of the work, it was concluded that the radical solutions of modern physical theories in the problem of causality and the interpretation of reality in the face of probable determinism make a number of problems solved by previous theories, in particular, at the microscopic level of physical reality.

Աշխարհի՝ գրեթե երկու հարյուր տարի տիրապետած նյուտոնյան գիտական պատկերն արդեն 20-րդ դարում փոխարինվեց աշխարհի ժամանակակից գիտական պատկերով, որտեղ, մինչև այդ գոյություն ունեցող հիմնարար տեսություններն ու ֆիզիկական իրականության նկարագրությանն ուղղված օրենքներն ու բացահայտումները պահպանվելով առաջ քաշվեցին աշխարհի ժամանակակից գիտական պատկերի լրացմանն ու բացահայտմանն ուղղված հիմնապես նոր մեթոդաբանական սկզբունքներ և տեսություններ, որոնցից շատերը փորձարարական ճանապարհով հաստատվելուց հետո համերաշխորեն ընդունվեցին գիտական հանրության կողմից:

Մի շարք հիմնախնդիրներ, մասնավորապես՝ տարածության և ժամանակի, ռեդուկցիայի և հատկապես պատճառականության հիմնախնդիրները, որոնք մարդկային մտքի զարգացման ողջ ընթացքում բազմիցս քննարկման են արժանացել, նորովի են իմաստավորվում աշխարհի նյուտոնյան և ժամանակակից գիտական պատկերների համատեքստում՝ իրենց ժամանակաշրջաններում ընդունված համարված գիտական տեսությունների կողմից ստանալով նոր ըմբռնումներ ու լուծումներ, որոնք էլ իրենց հերթին առաջ բերեցին որակական մի շարք փոփոխություններ աշխարհի նյուտոնյան և ժամանակակից գիտական պատկերներում:

Փորձարարական և գիտական աշխարհայացքի հաստատմանը զուգընթաց XVII դարում քննարկման դաշտ բերվեցին այնպիսի տեսություններ, որոնք կամ անտեսված էին, կամ չէին արժանացել գիտական հանրության ուշադրությանը: Դեկարտից հետո Նյուտոնն առաջիններից էր, ով ֆիզիկական իրականությունը բացատրելիս ընդունեց մատերիայի միատարրության և փոքրագույն մասնիկների փոխազդեցության գաղափարները և դրանց հիմքի վրա կառուցարկեց աշխարհի մասին իր հայեցակարգը:

Այսպես, Նյուտոնը շարունակում է տարրագույն մասնիկների՝ անտիկ ատոմիստական տեսությունների կողմից առաջադրված և հետագայում զարգացված ընդհանուր սկզբունքների տեղայնացումն իր տեսության շրջանակներում: Համաձայն ֆիզիկոսի՝ աշխարհի ֆիզիկական, մատերիական իրականությունը ոչ այլ ինչ է, քան տարրագույն, անբաժան մասնիկների՝ կորպուսկուլների ամբողջություն, որոնց մակարդակում տեղի ունեցող փոխազդեցություններն ու բոլոր միկրոփոփոխությունները պայմանավորում են աշխարհի մեխանիկական պատկերի ձևավորումը[1]:

Համաձայն դասական մեխանիկայի՝ եթե մենք կարող ենք որոշել տարրագույն մասնիկի կորդինատները և շարժման արագությունն ու ուղղությունը՝ իմպուլսը, կարող ենք նաև ասել, թե ժամանակի հաջորդ մոմենտին մասնիկը տարածության մեջ ինչ դիրք կզբաղեցնի: Նման խիստ որոշակի պատճառահետևանքային կապը թույլ է տալիս դասական մեխանիկայի կողմից առաջադրված ընդհանուր սկզբունքներով և մաթեմատիկական ապարատով հաշվարկել թե՛ երկրային և թե՛ երկնային օբյեկտների տեղաշարժերը տարածության մեջ[2]: Հետևաբար, դասական մեխանիկան սկզբունքորեն թույլ է տալիս որոշել մեխանիկական օբյեկտների վարքն ու տեղաշարժը,

[1] ***Барсегян А.***, *Лекции по философии. Онтологические проблемы, Ереван, «Лимуш», 2008, с. 101.*

[2] ***Манасян А.С.***, *Методологические принципы объективности научного знания и единство науки, Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 2002, с. 62.*

քանի որ նման իրականությունը կազմված է միատարր և միանման մասնիկների ամբողջությունից:

Այս ամենի հիմքում ընկած են այն հիմնարար օրենքները, որոնք դեռևս 1687թ-ին ձևակերպել է Նյուտոնը՝

1. Ամեն մի մարմին շարունակում է պահպանել դադարի կամ հավասարաչափ ուղղագիծ շարժման վիճակը, քանի դեռ հարկադրված չէ փոփոխել այդ վիճակը կիրառված ուժերի ազդեցությամբ:

2. Շարժման քանակի (իմպուլսի) փոփոխությունը համեմատական է կիրառված շարժիչ ուժին և տեղի է ունենում այն ուղղի ուղղությամբ, որով ազդում է ուժը:

3. Ազդումը միշտ ունի հավասար և հակադիր հակազդում, այլ կերպ, երկու մարմինների փոխազդեցությունները միմյանց հավասար են և հակառակ ուղղված[1]:

Նման օրենքների առկայությունը նյուտոնյան ֆիզիկայում վերջինս դարձնում է խիստ մեխանիստական, քանի որ սկզբունքորեն թույլ են տալիս որոշել համակարգի հնարավոր զարգացումն ու վիճակը ապագայում, եթե հայտնի է համակարգի ելակետային ու նախնական վիճակը: Այս պարագայում, իհարկե, խոսքը համակարգի համար իրադարձությունների զարգացման հաշվարկի իրագործման սկզունքորեն հնարավորության մասին է, քանի որ առանձին դեպքերում, եթե հարկ կա հաշվել միանգամից միլիոնավոր կամ միլիարդավոր նախնական վիճակների փոփոխության զարգացումը, ապա հնարավոր է, որ դա տվյալ պահին գործնականորեն իրագործելի չլինի, սակայն շարունակի լինել սկզբունքորեն հնարավոր, մինչև որ կլուծվեն խոչընդոտող տեխնիկական խնդիրները:

Պատճառականության հիմնախնդրում նյուտոնյան ֆիզիկայից բխող նման տեսակետն ընդունված է անվանել *միանշանակ դետերմինիզմ*, համաձայն որի՝ իրականությունում տեղի ունեցող ցանկացած գործընթաց սկզբունքորեն հնարավոր է կանխատեսել, եթե հայտնի են տվյալ գործընթացի ելակետային վիճակը և դրա վրա ազդող ուժերը: Նման մոտեցման պարագայում դասական մեխանիկայից կարելի էր բխեցնել նաև իրականության այնպիսի գործընթացների կանխատեսելիությունը, ինչպիսիք են մարդկային մտքի ընթացքը, կենդանի օրգանիզմների աճի դինամիկան ու որակական բնութագիրը և այլն: Մինչև դասական մեխանիկայի ընդունումը մատերիական իրականության նկատմամբ դետերմինիզմի կենսական լինելը ժամանակին արտահայտվել է նաև աշխարհի կարտեզիական գիտական պատկերում: Սակայն աշխարհի կարտեզիական գիտական պատկերում կա մի սկզբունքային տարբերություն. Դեկարտի տեսության շրջանակներում խիստ դետերմինիզմը գործում էր միայն մատերիական աշխարհի շրջանակներում, իսկ մարդկային կենսագործունեության տիրույթում և հատկապես գիտակցական գործընթացների առնչությամբ Դեկարտը թույլ էր տալիս պատահականության և անկանխատեսելի երևույթների գոյության հնարավորությունը: Հետագայում հիմնախնդրի շրջանակներում այս տեսակետը ևս ստացավ իր անունը՝ *դուալիստական դետերմինիզմ*[2]:

Սակայն նման դուալիստական մոտեցման կենսականության անկումը նյուտոնյան դասական մեխանիկայի հետ համեմատության համատեքստում առավելապես պայմանավորված էր դեկարտյան տեսակետի պակաս հիմնավորվածությամբ և նյուտոնյան միանշանակ դետերմինիզմի օգտին առավել մեծ թվով էմպիրիկ փաստարկների առկայությամբ:

Միևնույն ժամանակ միանշանակ դետերմինիզմի և դուալիստական դետերմինիզմի կողքին մի շարք մտածողների համար ընդունելի տեսակետ էր համարվում ինդետերմինիզմը, ըստ որի,

---

[1] ***Westfall S.R.***, *Encyclopaedia Britannica, Sir Isaac Newton, Encyclopaedia Britannica inc., 2016: (https://www.britannica.com/biography/Isaac-Newton, 30.04.2019).*

[2] ***Барсегян А.***, *Лекции по философии. Вводный курс, Ереван, «Лимуш», 2016, с. 72.*

իրականությունում կան որոշակի գործընթացներ կամ առնվազն մեկ գործընթաց, որը պատճառականությանը չի ենթակվում և կանխատեսելի չէ: Այսինքն, ինդետերմինիզմը իրականության պատկերում տեղ է հատկացնում նաև պատահական ու ոչ կանխատեսելի գործընթացների: Նման տեսակետի օգտին ժամանակին արտահայտվել են տարբեր մտածողներ և հոգևոր այրեր, մասնավորապես՝ Էպիկուրն ու Թովմա Աքվինացին:[1] Սակայն նույնիսկ աշխարհի գիտական պատկերի փոփոխության արդյունքում ի հայտ եկած առավել ընդարձակ ու հետագայում էքսպերիմենտալ ճանապարհով ստուգված տեսությունները չկարողացան հիմնախնդրի առնչությամբ տալ վերջնական ու միանշանակորեն ընդունելի պատասխաններ:

Ինչպես տեսանք նախորդ շարադրանքներում, ժամանակին ընդունված տեսությունների ու ժամանակի տիրապետող պատկերացումների փոփոխման հետ զուգընթաց հաճախ այս կամ այն հիմնախնդրի առնչությամբ մոտեցումներն ու տեսակետները նույնպես կարող են փոփոխվել՝ կրելով ազդեցություն տեսական և էմպիրիկ հետազոտություններից: 19-րդ և հատկապես 20-րդ դարում արձանագրված գիտատեխնիկական առաջընթացը և առհասարակ էքսպերիմենտալ գիտությունում տեղի ունեցող հաջողությունները հիմք հանդիսացան «դասական ժամանակների» և արդի հիմնախնդիրների վերաիմաստավորման և դրանց նկատմամբ այլընտրանքային ու առավել խորքային մոտեցումների մշակման համար:

Այս իմաստով խիստ կարևոր նշանակություն ունեն 20-րդ դարում առաջարկված հարաբերականության ընդհանուր տեսությունն ու վերջինիս նկատմամբ մրցակցող տեսություն դարձած քվանտային մեխանիկան, որի շրջանակներում մոդելավորված ու իրականացված էքսպերիմենտները նոր լույս սփռեցին մի շարք հիմնախնդիրների, մասնավորապես պատճառականության հիմնախնդրի վրա:

Քվանտային մեխանիկայի ծնունդն ընդունված է համարել 1927թ.-ը, երբ տեսության շրջանակներում առաջարկված հնարավոր մեկնաբանություններից մեկը՝ կոպենհագենյան մեկնաբանությունը, ընդունվեց որպես երևույթների ու գործընթացների առավել օբյեկտիվ նկարագրական մեկնաբանություն:[2] Հատկանշական է մեկնաբանության շրջանակներում առաջարկված «Էլեկտրոնային հրանոթի» էքսպերիմենտը, որի հետ է կապված պատճառականության հիմնախնդրի նոր մեկնաբանությունների ձևավորումը գիտության փիլիսոփայությունում և առհասարակ աշխարհի ֆիզիկական պատկերի նկարագրությանն ուղղված տեսություններում:

Մինչև քվանտային մեխանիկայի ի հայտ գալը, դեռևս 20-րդ դարի առաջին քառորդում հայտնի էին մասնիկի ու ալիքի վարքային և ընդհանուր որակական բնութագրերը, որոնց բացահայտմանն ուղղված մի շարք փորձարարական հետազոտություններ իրականացվել են դասական մեխանիկայի ձևավորումից ի վեր: Մինչև քվանտային մեխանիկայում էլեկտրոնների հետ կատարված էքսպերիմենտները, որոնց արդյունքում պարզ դարձան տարբրագույն մասնիկների մակարդակում քվանտային մի շարք էֆեկտների եղելությունը, համանման մտային և էքսպերիմենտալ այլ գիտափորձեր արվել են դեռևս 19-րդ դարում մասնիկների և ալիքների վարքի ուսումնասիրման նպատակով: Մակրոօբյեկտների նկատմամբ առարկայի ելակետային կետն ունենալու դեպքում հնարավոր է ստույգ կերպով ասել, թե ժամանակի հաջորդ պահին որտեղ է գտնվելու տվյալ առարկան, որի վառ արտացոլումն է էլեկտրոնային հրանոթի էքսպերիմենտը մակրոսկոպիկի առարկաների մասնակցությամբ:

Այսպես, եթե վերցնենք հրանոթ, որը տարբեր անկյան թեքություններով անընդհատ կարձակի

[1] *Տե՛ս նույն տեղում, էջ 67:*

[2] ***Հայզենբերգ Վ.**, Ֆիզիկա և փիլիսոփայություն, Երևան, «Անկյունաքար», 2016, էջ 54*

գնդակներ, որոնք ուղղված կլինեն երկու անցանելի անցքերով միջանկյալ պատի և պատից այն կողմ գտնվող ու մշտադիտարկվող վերջնակետային պատի ուղղությամբ, ապա կարելի է առանց դժարությունների չափել մշտադիտարկվող պատի կոնկրետ վայրում առանձին գնդակի հայտնվելու հավանականությունը: Նույնիսկ այն պարագայում, երբ անցքերից մեկը կլինի անանցանելի, իսկ մյուսը՝ անցանելի եկող գնդակի համար, նորից հնարավոր կլինի ճշգրտորեն որոշել մշտադիտարկվող պատի կոնկրետ հատվածի համար հարվածող գնդակների՝ տվյալ վայրում հայտնվելու հավանականությունը տրված անցքով դուրս գալու դեպքում: Երկու բաց անցքերի դեպքում մշտադիտարկվող պատի գրանցած տվյալների գրաֆիկական պատկերը ցույց կտա երկու անցքերի միջև ընկած միջանկյալ հատվածում գնդակների հայտնվելու բարձր ու ճշգրիտ հավանականությունը՝ հաշվի առնելով փոփոխված անկյան տակ սլացող ու մշտադիտարկվող պատի նույն ուղղությամբ ընթացող գնդակների հետագիծը՝ սկսած բաց անցքերով անցնելու մոմենտից: Հետևապես, առանձին անցքերի համար ստացված արդյունքների գումարը հավասար ու համարժեք է երկու բաց անցքերի դեպքում ստացված արդյունքին[1]:

Մակրոսկոպիկ առարկայի համար ներկայացված էքսպերիմենտի ճշգրտությունն ու կանխատեսելիությունը համանմանորեն տարածվում է նաև ալիքային բնույթ ունեցող երևույթների համար արված էքսպերիմենտների վրա՝ հիմք ընդունելով մակրոօբյեկտների առանձնահատկություններով պայմանավորված այն տարբերությունները, որոնք առաջ են գալիս՝ կապված երևույթների էություններով:

Այսպես, եթե վերցնենք ջրային մակերևույթի վրա ալիքներ առաջացնող աղբյուր, որի կողմից առաջ եկած շրջանաձև ալիքներն ուղղված կլինեն երկու անցանելի անցքերով միջանկյալ պատի և պատից այն կողմ գտնվող ու մշտադիտարկվող վերջնակետային պատի ուղղությամբ, ապա մշտադիտարկվող պատի գրանցած տվյալների գրաֆիկական պատկերը ցույց կտա երկու անցքերի միջև ընկած միջանկյալ հատվածում ալիքների ինտենսիվության բարձր ու ճշգրիտ պատկեր, որը, սակայն, կլինի որոշակիորեն տարբեր գնդակների դեպքում մշտադիտարկվող պատի գրանցած տվյալների գրաֆիկական պատկերից: Քանի որ ալիքները, սկսած երկու անցանելի անցքերից, տարածվում են երկու նոր ելակետերից, ապա մինչև մշտադիտարկող պատին հասնելը դրանք բարդվում են մեկը մյուսի վրա՝ առաջացնելով *ինտերֆերենցիա* կոչվող երևույթը[2]: Այս պարագայում առկա է ինտերֆերենցիայի կոնստրուկտիվ տարատեսակը, որի դեպքում իրար վրա բարդված ալիքների ինտենսիվությունն ուժեղանում է: Իսկ ահա այն դեպքում, երբ անցքերից մեկը կլինի անանցանելի, իսկ մյուսը՝ անցանելի տարածվող ալիքի համար, ապա այդ դեպքում ևս հնարավոր կլինի ճշգրտորեն որոշել մշտադիտարկվող պատի կոնկրետ հատվածի համար ընդառաջ եկող ալիքի՝ տվյալ վայրում դրսևորած բարձր ինտենսիվությունը տրված անցանելի անցքով դուրս գալու դեպքում: Գնդակների էքսպերիմենտի հետ համեմատության համատեքստում ինքնակնհայտ է դառնում էքսպերիմենտների ստացված արդյունքների տարբերությունը: Ալիքների պարագայում առանձին անցքերի համար ստացված արդյունքների գումարը հավասար ու համարժեք չէ երկու բաց անցքերի դեպքում ստացված արդյունքին, քանի որ երկու բաց անցքերի դեպքում դիտվում է կոնստրուկտիվ ինտերֆերենցիայի երևույթը[3]:

Մակրոսկոպիկ մակարդակում նման էքսպերիմենտների արդյունքներն ունեն կանխատեսելի

---

[1] ***Барсегян А.***, *Лекции по философии. Онтологические проблемы, Ереван, «Лимуш», 2008, с. 77.*

[2] *Ինտերֆերենցիան երկու կամ ավելի ալիքների գումարման արդյունքում տարածության մեջ ալիքի ամպլիտուդի ուժեղացման կամ թուլացման ֆիզիկական գործընթացն է, որի առաջացման համար անհրաժեշտ է կոհերենտ ու վերարտադրվող ալիքներ: Տե՛ս՝ The Editors of Encyclopaedia Britannica, Encyclopaedia Britannica, Interference, Encyclopaedia Britannica, inc., 2016: (https://www.britannica.com/science/interference-physics, 30.04.2019)*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 81:*

բնույթ, որը հայտնի էր գիտությանը մինչև քվանտային մեխանիկայի ի հայտ գալը և համապատասխանում էր դասական ֆիզիկայի կանխատեսումներին: Սակայն համանման փորձերը քվանտային մեխանիկայում միկրոսկոպիկ մակարդակում ցույց տվեցին, որ այն միանշանակությունն ու հստակությունը, որը կա մակրոսկոպիկ երևույթների աշխարհում, բնավ գոյություն չունի միկրոսկոպիկ մասնիկների դեպքում և չի համապատասխանում դասական ֆիզիկայի կանխատեսումներին:

Վերցնենք էլեկտրոնային հրանոթ, որը տարբեր անկյան թեքություններով որոշակի պարբերականությամբ կարձակի էլեկտրոններ, որոնք ուղղված կլինեն երկու անցանելի անցքերով միջանկյալ պատի և պատից այն կողմ գտնվող ու մշտադիտարկվող վերջնակետային պատի ուղղությամբ: Միկրոսկոպիկ մակարդակում մշտադիտարկող պատին էլեկտրոնի բախումն արձանագրվում է հատուկ սարքերի միջոցով, որն արտացոլում է պատին հասած էլեկտրոնների քանակն ու դրա մասին ուղարկում համապատասխան ազդանշան: Պայմանականորեն նշանակված A և B անցքերից A-ի դեպքում, եթե վերջինս անցանելի է, իսկ B-ն՝ ոչ, ապա առանց դժվարության հնարավոր կլինի ֆիքսել անցանելի անցքով դեպի մշտադիտարկվող պատի ուղղությամբ էլեկտրոնների պարբերական կրակահերթի ընթացքն ու արձանագրող սարքից եկող ազդանշանի ինտենսիվությունը: Համանման պատկերը կարելի է ստանալ նաև B անցանելի անցքի դեպքում, երբ A-ն անցանելի չէ:

Սակայն եթե նույն փորձը կրկնենք արդեն A և B անցքերի անցանելիության դեպքում, ապա տեղի կունենա տվյալ փորձի շրջանակներում անկանխատեսելին, ու կստեղծվի մի տարօրինակ պատկեր. երկու անցանելի անցքերով ընթացող էլեկտրոնների՝ մշտադիտարկվող պատում հայտնվելու գրաֆիկը կունենա ինտերֆերենցված ալիքների ինտենսիվային պատկեր: Նման արդյունքները հակասության մեջ են մտնում փորձի շրջանակներում տրված պարամետրերի հետ, քանի որ էլեկտրոնների արձակումն իրականացվում էր պարբերաբար, այսինքն՝ մեկական էլեկտրոնի արձակման սկզբունքով, որի դեպքում ինտերֆերենցված ալիքների պատկերը պետք է որ բացառվեր, քանի որ ինտերֆերենցիան հնարավոր է առնվազն 2 ալիքների առկայության դեպքում:

Էքսպերիմենտի նման արդյունքների բացատրման համար հնարավոր վարկած էր էլեկտրոնի ալիքային բնույթի մասին տեսակետը, որը, սակայն, նույնպես էքսպերիմենտալ ճանապարհով հերքվեց հետագայում: Այսպես, եթե էլեկտրոնն ունի ալիքային բնույթ, ապա երկու անցանելի անցքերով կարող է և ինտերֆերենցվել՝ տալով այն արդյունքը, ինչն արձանագրվեց նախորդ էքսպերիմենտի դեպքում: Դա հնարավոր է ֆիքսել այն դեպքում, եթե միջանկյալ պատի երկու անցքերի միջև գտնվող հատվածում տեղադրենք լույսի աղբյուր: A կամ B անցքերով անցնելու դեպքում լույսի աղբյուրը կլուսարձակի A կամ B անցքերի մոտ՝ արձագանքելով անցքերից մեկից դուրս եկող էլեկտրոնի շարժին: Այն դեպքում, երբ էլեկտրոնը կամ դրա ալիքը դուրս կգա երկու անցքերով էլ, ապա լուսարձակումը տեղի կունենա միաժամանակ երկու անցքերի հարևանությամբ: Սակայն ինչպես էքսպերիմենտի արդյունքները ցույց տվեցին, էլեկտրոնը դուրս է գալիս միշտ մեկ անցքով՝ միևնույն ժամանակ առաջացնելով ոչ ինտերֆերենցիոն գրաֆիկական պատկեր մշտադիտարկվող պատին բախվելիս[1]: Նման արդյունքների դեպքում, երբ լույսի առկայության պարագայում էլեկտրոնի վարքը դառնում է մասնիկային, կարելի է վիճակի պարզաբանմանն ուղղված մեկ այլ փորձ ձեռնարկել: Հայտնի է, որ ինչքան մեծ է լույսի մասնիկի ինտենսիվությունը, այնքան մեծ է լույսի տարրագույն մասնիկի էներգիան: Հետևապես, հնարավորինս իջեցնելով լույսի ինտենսիվությունը՝ կարելի է որոշակիացնել էլեկտրոնի վարքի անկայունությունը: Էքսպերիմենտի համար հաստատված նոր պայմանների դեպքում կարելի է արձանագրել, որ մինչև այն պահը, երբ

[1] *Տե՛ս նույն տեղում, էջ 85:*

լույսի ինտենսիվությունը դեռևս գտնվում է իր նախկին արժեքի վրա, հնարվոր է որոշել, թե որ անցքով է էլեկտրոնն անցնում միջանկյալ պատի միջով: Սակայն սկսած այն պահից, երբ լույսի ինտենսիվությունը հնարավորինս իջեցվում է, անհնար է դառնում որոշել, թե որ անցքով է էլեկտրոնը մուտք գործում, իսկ միևնույն ժամանակ մշտադիտարկման արդյունքում ձևավորված պատկերը ստանում է ինտերֆերենցիային հնարավորինս մոտ որակական բնութագիր:

Էքսպերիմենտից բխող նման անհասկանալի արդյունքների համար հնարավոր լուծման տարբերակ առաջարկեց դանիացի ֆիզիկոս Նիլս Բորը, որի ձևակերպած լրացչության սկզբունքը ենթադրում էր բնության կողմից եկող այնպիսի հիմնարար սահմանափակություն, որը թույլ չի տալիս մինչև վերջ հստակեցնել էքսպերիմենտալ փորձի շրջանակներում ստացված արդյունքները[1]: Ինչպես պնդում է Բորի լրացչության սկզբունքը. «Միկրոսկոպիկ մասնիկի ուսումնասիրման դեպքում կարելի է ստանալ տվյալներ կամ վերջինիս էներգիայի ու իմպուլսի մասին, կամ էլ մասնիկի՝ տարածաժամանակում զբաղեցրած դիրքի մասին: Այս երկու պատկերները փոխադարձաբար բացառում են միմյանց, բայց միևնույն ժամանակ նաև լրացնում են իրար»[2]:

Բորի առաջ քաշած սկզբունքն էլ ավելի փաստարկվեց և կուռ մաթեմատիկական ձևակերպում ստացավ գերմանացի ֆիզիկոս Վեռներ Հայզենբերգի անորոշությունների սկզբունքում.«Որքան որոշակիորեն է չափվում մասնիկի տեղը, այնքան անորոշ է դառնում մասնիկի իմպուլսը՝ արագությունն ու ուղղությունը, և ինչքան որոշակիորեն է չափվում մասնիկի իմպուլսը, այնքան անորոշ է դառնում մասնիկի կորդինատները»:[3]

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ կարող ենք վստահաբար պնդել, որ քվանտային մեխանիկայում մենք կարող ենք գործ ունենալ միայն հավանական երևույթների հետ: Հետևապես կարող է հարց առաջանալ, թե ինչպես պետք է գործ ունենալ իրականության մասը կազմող հավանական ու ոչ միանշանակ երևույթների հետ: Այս հարցի լուծումը մասամբ իր պատասխանը ստացավ Էրվին Շրյոդինգերի հավասարումում, որը թույլ է տալիս քվանտային մասնիկների մակարդակում ելակետային վիճակն ունենալու դեպքում որոշակիորեն հաշվարկել հնարավոր վերջնակետը: Հետևաբար Շրյոդինգերի հավասարումը թույլ է տալիս հաշվարկել մշտադիտարկվող պատի գրաֆիկական պատկերի վրա էլեկտրոնի հավանական տեղը, եթե հայտնի են դրա ելակետային կոորդինատները՝ միևնույն ժամանակ չտալով ելակետային ու վերջնակետային իրադարձությունների միջև ընկած հնարավոր գործընթացների նկարագրերը:

Քվանտային մեխանիկայից բխող կանխատեսումների դերը ժամանակակից աշխարհի գիտական պատկերում հիմնարար նշանակություն ստացավ հատկապես նույն գիտական պատկերի կազմի մեջ մտնող այլ տեսությունների հետ հարաբերությունների համատեքստում: Մասնավորապես, միանշանակ դետերմինիզմի գաղափարը, որը, աշխարհի նյուտոնյան գիտական պատկերում հիմնավորապես ամրապնդվելով, շարունակեց լինել հարաբերականության ընդհանուր տեսության համար տիրապետող մոտեցում պատճառականության հիմնախնդրում, բազմիցս կասկածի տակ դրվեց քվանտային մեխանիկայի տեսաբանների կողմից, որոնց ձևակերպած տեսությունից ու մեկնաբանությունից բխում էր պատճառահետևանքային կապերի հավանական բնույթի գաղափարը:

Համաձայն հավանական դետերմինիզմի՝ միկրոսկոպիկ մակարդակում մասնիկի վարքը չունի պատահական բնույթ, ինչպես համարում են ինդետերմինիստները և միևնույն ժամանակ չի կարող

---

[1] ***Манасян А.С.***, *Методологические принципы объективности научного знания и единство науки, Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 2002, с. 63.*

[2] ***Барсегян А.***, *Лекции по философии. Онтологические проблемы, Ереван, «Лимуш», 2008, с. 87.*

[3] ***Hilgevoord, Jan, Uffink, Jos***, *The Stanford Encyclopedia of Philosophy, The Uncertainty Principle, Stanford University, Zalta N. E. Winter 2012 edition: (https://plato.stanford.edu/entries/qt-uncertainty/ , 28.04.2019).*

որոշվել բացարձակ ստույգ կերպով, ինչին հակված են միանշանակ դետերմինիստները: Մասնիկի ոչ պատահական վարքը պայմանավորում է իրադարձությունների զարգացման հնարավոր ընտրանք, որից վերջինս չի կարող խուսափել, բայց և չի կարող թույլ տալ միանշանակորեն որոշել տրված ընտրանքի համար իրադարձությունների զարգացման միակ ու ճշմարիտ ուղղությունը: Այս առնչությամբ Մարիո Բունգեն ասում է. «Ըստ էության, քվանտային մեխանիկան դետերմինիստական է, սակայն միայն այն տարբերությամբ, որ վերջինս չի պաշպանում Լապլասյան դետերմինիզմը»[1] [2]:

Նույնիսկ այսօր, երբ կարծես թե բազմիցս հիմնավորված ու ապացուցված տեսությունները, ի դեմս հարաբերականության ընդհանուր տեսության և քվանտային մեխանիկայի, աշխարհի գիտական պատկերում տեղ գտած կամ ձգտող համանման տեսությունների առկայությունը դեռևս չի լուծում պատճառականության հիմնախնդրի անկյունաքարային հարցերը և դեռ ծանրաբեռնում է իրականության որակական բնութագրի նկատմամբ մեր ունեցած հարցերի բազմությունը:

Ֆիզիկական մի շարք գործընթացների հավանական բնույթի բացահայտումը աշխարհի գիտական պատկերում հանգեցրեց մի շարք նոր խնդիրների՝ կապված իրականության ճշմարիտ ու միանշանակ նկարագրությունների և դրանց վերաբերյալ ունեցած գիտելիքների հետ: Ստացվում է, որ ֆիզիկական իրականությունում կան մի շարք գործընթացներ, որոնք հնարավոր չէ միանշանակորեն նկարագրել և դրանց մասին ձեռք բերել ճշմարիտ ու վերջնական գիտելիքներ: Հենց սա հիմք ընդունելով՝ կարելի է բացատրել աշխարհի ժամանակակից գիտական պատկերում առկա և կոնվենցիոնալ բնույթ ունեցող մի շարք սկզբունքները՝ մասնավորապես ֆալիբիլիզմը, համաձայն որի, ցանկացած գիտական գիտելիք սկզբունքորեն վերջնական չէ և ճշմարիտ է միայն տվյալ ու որոշակի մեկնաբանության շրջանակներում, որն էլ իր հերթին կարող է տիրապետող լինել մինչև նոր և ավելի հստակ մեկնաբանության ի հայտ գալը[3]: Սա թույլ է տալիս ենթադրել ինչպես տարածության և ժամանակի ու պատճառականության, այնպես էլ այլ հիմնախնդիրների համատեքստում ձևավորվող մոտեցումների, մեկնաբանությունների և տեսակետների այնպիսի զարգացումներ, որոնք մոտ և հեռավոր հեռանկարներում կարող են հիմնապես փոխել ընդունված տեսությունների կարգն ու աշխարհի տվյալ գիտական պատկերը:

---

[1] *Լապլասյան դետերմինիզմն աշխարհը դիտարկում է որպես մեխանիկական գործընթացների ներփակ ամբողջություն, որտեղ իրադարձությունների զարգացման հնարավոր գործընթացների նկարագրման համար միանգամայն բավարար է մեխանիկական պատճառականության սկզբունքը: (Տե՛ս՝* ***Hoefer, Carl****, The Stanford Encyclopedia of Philosophy, Causal Determinism, Stanford University, Zalta N. E. Spring 2016 edition: (https://plato.stanford.edu/entries/determinism-causal/, 27.04.2019)*

[2] ***Бунге М.****, Философия физики, Москва, «Едиториал УРСС», Изд 2-е, стереотипное, 2003, с. 136*

[3] ***Hetherington S.****, The Internet Encyclopedia Philosophy, ISSN 2161-0002, Fallibilism, URL: https://www.iep.utm.edu/fallibil/#H11, 07.05.2019)*

ՀՏԴ 93/94:093

Հրանուշ Մաթևոսյան
Գորիսի պետական համալսարան, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ
բակալավրիատ
Էլ. փոստ՝hranushmatevosyan161@gmail.com

Գիտական ղեկավար՝
ասիստենտ Գ. Շաբունց

ՍՅՈՒՆՅԱՑ ՎԱՆՔԵՐՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԸՍՏ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ

Բանալի բառեր՝ *Սյունիք, Ստեփանոս Օրբելյան,վանք, եկեղեցի, հոգևոր-մշակութային ժառանգություն, Տաթև, Վահանավանք, Նորավանք:*

Ստեփանոս Օրբելյանը, ով հեղինակ է «Սյունիքի պատմություն»-ը աշխատության ներկայացրել է իր ապրած ժամանակում իրեն հայտնի Սյունյաց աշխարհի գրեթե բոլոր վանքերն ու եկեղեցիները, ինչպես նաև դրանց կառուցմանն առնչվող ավանդությունները: Սույն հոդվածում ներկայացնելով վանքերի ու եկեղեցիների հիմնադրումը՝ պետք է նշել, որ Սյունիքը, իսկապես, ունի հսկայական հոգևոր-մշակութային ժառանգություն, որը գրեթե ամբողջությամբ հասել, է մինչև մեր օրեր, սակայն Քաշաթաղի շրջանում հիշատակված հոգևոր-մշակութային ժառանգությունը այսօր գտնվում է Ադրբեջանի հանրապետության տիրապետության տակ:

Hranush Matevosyan

MONASTERIES AND CHURCHES OF SYUNIK, ACCORDING TO STEPANOS ORBELYAN

Keywords: *Syunik, Stepanos Orbelian, monastery,church, spiritual and cultural heritage, Tatev, Vahanavank, Noravank.*

Stephanos Orbelyan, who is the author of the history of Syunik, presented almost all the monasteries and churches of the Syunik world known to him during his life time, as well as the traditions related to their construction. Presenting the founding of monasteries and churches in this article, it should be noted that Syunik really has a huge cultural heritage, which has reached almost completely to our days, but the cultural heritage mentioned in the Kashatagh region is now under the control of the Republic of Azerbaijan.

Грануш Матевосян

МОНАСТЫРИ И ЦЕРКВИ СЮНИКА ПО СТЕПАНУ ОРБЕЛЯНУ

Ключевые слова: *Сюник, Степанос Орбелян, монастырь, церковь, духовное и культурное наследие, Татев, Ваганаванк, Нораванк.*

Степан Орбелян автор труда «История области Сисакан», где он представил нам на обозрение об известных ему монастырях, существующих в Сюникской области, и об обычаях связанных с их строительством. Духовно-культурное наследство Сюника сохранилось до наших дней, но к сожалению в Кашатахском районе сегодня это духовно-культурное наследство перешло под

контроль Азербаиджана.

Ստեփանոս Օրբելյանը 13-րդ դարի երկրորդ կեսի և 14-րդ դարի առաջին դարերի գործիչ է: Պատմիչը հեղինակ է «Սյունիքի պատմություն»-ը աշխատության: Սույն հոդվածում ներկայացնելու ենք Սյունյաց աշխարհի վանքերն ու եկեղեցիները ըստ Ստեփանոս Օրբելյանի: Կարևոր է թե՛ վանքերի, թե՛ եկեղեցիների ուսումնասիրությունը, քանի որ դրանք մեր պատմական հայրենիքի, մշակութային ժառանգության անքակտելի մասն են կազմում:

Օրբելյանն իր աշխատության մեջ հերթով թվում է այս աշխարհի վանքերն ու եկեղեցիները և դրանց հետ կապված ավանդությունները: Ըստ պատմիչի՝ Սիսական տան բոլոր վանքերի գլուխն ու շնորհաբաշխության աղբյուրը Տաթևն է: Վանքի մասին խոսելիս պատմիչը նշում է, որ տեղը շատ առողջարար է, հարթ, շրջապատված բարձր ու սրագագաթ լեռներով, կիսաշրջանաձև՝ կարծես կարկինով քաշած: Վանքի առջևում շատ խոր, դժվարամատչելի ծառապատ ձոր է՝ շատ ընդարձակ ու գեղեցիկ, որտեղով ահեղաձայն գոչգոչումով անցնում է Որոտան գետը: Այնտեղ, խիստ բարձր քարաժայռի վրա եկեղեցի կար՝ անշուք ու անտաշ քարերով կրաշաղախ շարված, շատ հին ժամանակներից, սուրբ Ներսեսի ու Սահակի օրերից[194]: Ըստ Օրբելյանի՝ վանքի առաջին եկեղեցին կառուցվել է 4-րդ դարում:

Խոսելով եկեղեցու կառուցման մասին՝ պատմիչը նշում է, որ Տեր-Հովհաննեսը կառուցեց եկեղեցին՝ երկնակամարի նման գմբեթահարկ, որպես հրեշտակների զբոսարան և մարդկանց՝ քավարան, տաշած վեմերով ու քերած քարերով...Նրա բարձրությունը հարյուր կանգուն էր, երկարությունը՝ քառասունութ, լայնությունը՝ քսանչորս: Եկեղեցին բացի ավագ խորանից ուներ չորս խորան ևս: Պատմիչը նշում է, որ Սաղմոսյան տաճարի նմանողությամբ կառուցել էր երկու հրաշակերտ սյուներ՝ բոյոսն ու հաքումը, որոնք ամուր կերպով միացված խարիսխներով և գեղեցկադիր ու բարձրաբերձ թակաղաղներով ամբողջապես վերցրած պահում են կամարակապ, քարակարկառ հարկի հսկայական ծանրությունը[207]: Սա ծառայում է որպես խորհրդանիշ երկու գլխավոր առաքյալների՝ Պետրոսի և Պողոսի համար: Նրանց նշխարներից դրվեցին այդ սյուների տակ. առաքյալների, հայրապետների, նահատակների՝ այնտեղ հավաքված բազմաթիվ սուրբ նշխարները դրվեցին եկեղեցու հիմքերի մեջ ու անկյուններում: Սուրբ Պողոս-Պետրոս տաճարի կառուցումը Հովհաննես եպիսկեպոսը ձեռնարկել է Սյունյաց գահերեց իշխան Աշոտ Սյունու և Շուշանիկ տիկնոջ պատվերով: Տաճարի հիմքը դրվել է 895 թվականին, իսկ շինարարությունն ավարտվել է 906 թվականին: Տասնմեկ տարում ավարտելուց հետո, եկեղեցու հարավային դռան դիմաց կանգնեցվում է մի զարմանալի սյուն՝ *սուրբ երրորդություն* անունով, երեսպատված մանր քարերով, երեսուն կանգուն բարձրությամբ: Օրբելյանի հիշատակած այդ զարմանալի սյունը մինչև այսօր պահպանված Տաթևի վանքի նշանավոր շարժական սյունն է: Այն, ինչ հիշատակում է Օրբելյանը վանքի կառուցման հետ կապված, սկսած եկեղեցին սրբատաշ քարերով պարսպելուց, վանքը՝ կոփածո քարերով, գաղտնարաններից մինչև արհեստանոցներ, մթերանոց-պահեստներ, սրբատներ ու գրատներ, աղոթատնից մինչև Սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների համար դամբարանատեղ, այս բոլորը հասել են մինչև մեր օրեր:

Տաթևին հաջորդում է մեծ առաքինարան Թանահատի վանքը: Ըստ Օրբելյանի՝ վանքը կառուցվել է Վերին Սյունիքի մի լեռան ստորոտի բարձրադիր տեղում՝ անտառի մեջ: Կառուցվել է Հայոց թվականից չորս հարյուր տարով ավելի առաջ, Սյունյաց իշխանների ու եպիսկոպոսների կողմից, Ստեփանոս սուրբ Նախավկայի անունով: Պատմիչը նշում է, որ վանքի սպասավորները իրենց զրկել էին աշխարհիկ կյանքի ցանկացած հաճույքից և մշտապես բնակվում էին վանքում: Սյունյաց իշխանները և եպիսկոպոսները հաճախ էին դիմում սպասավորներին, որպեսզի գոնե կիրակի օրերը թան, պանիր կամ յուղ ճաշակեն, բայց նրանք մերժում էին և միայն բավարարվում էին բանջարեղենով ու ընդեղենով: Այդ պատճառով կոչվեցին թանահատներ[167]:

Ապա Ստեփանոս Օրբելյանը հիշատակում է Սյունի վանքը, որի եկեղեցին չքնաղ ու նորակերտ ձևով, երկնանման գմբեթահարկ խորանով կանգնեցրել է մեծ բարեպաշտուհի Սյունյաց տիկին Վարազդուխտը՝ սուրբ Լուսավորչի անունով, հայոց թվարկությունից առաջ:

Վանքի առջև՝ գեղեցիկ հրապարակի մեջտեղում իշխանները կառուցում են արքունական տուն ու իշխանանիստ ապարանք. և ասում են, թե ամեն օր պատարագի ժամին եկեղեցի էին գալիս[281]: Սյունի վանքը կառուցվել է 7-րդ դարում, այն գտնվում է Սիսիան քաղաքից հյուսիս-արևմուտք:

Այնուհետև, Օրբելյանը հիշատակում է Կնեվանքը, որի մասին միայն հետևյալ տեղեկությունն է մեզ հաղորդում. նախրապան մանուկները արածեցնում էին եզների նախիրը և սկսեցին խաղալ. կտրելով մի կնյուն, խաչ պատրաստեցին ու դրեցին մի քարի վրա և սկսեցին երկրպագել ու ասել. «Ինչ որ երեցն ասում ու կարդում է, այն թող քո նկատմամբ լինի. այս եզներից երեքը թող քեզ մատաղ լինեն»: Ինչ որ նրանք խաղի ընթացքում արտահայտեցին, հոգի աստվածն նույնությամբ տնօրինեց: Եվ երբ երեկոյացավ, մանուկներն ուզեցին տուն գնալ: Թեև շատ ջանացին, բայց չկարողացան այն նվիրած մատաղացուները տեղից վեր հանել: Գնացին ու իմաց արեցին նրանց տերերին: Նրանք էլ գալով չկարողացան տեղներից շարժել: Մանուկներից պատճառը հարցրին, և նրանք խոստովանեցին ուղիղը:Այնուհետև քահանաներ կանչեցին ու խաչն օրհնել տվեցին: Եզները մորթեցին ու պատվեցին կնյունի տեղը: Այդ մասին տեղեկացրին Սյունյաց իշխաններին, որոնք եկան տեսնելու: Հրամայեցին այնտեղ եկեղեցի շինել: Եվ այն հաստատեցին կրոնավորների տուն: Բայց եկեղեցու մեջ կնյունի տեղում մի փոքրիկ փոս թողեցին: Եվ դեռ անշեն ժամանակից այդ փոսից ձեթ էր բխում, իսկ դա այնքան էր, որ ուրիշ ձեթի կարիք չէր զգացվում, և եկեղեցու կանթեղները նրանով էին սնվում: Դեռևս կա եկեղեցին, կնյունի տեղը, ինչպես և խաչը, որոնք վկայում են սրա անսուտ լինելու մասին[281]: Պատմիչը թերևս այսքանն է հիշատակում Կնեվանքի մասին՝ չտալով նրա տեղադրությունը, սակայն կան պատմիչներ, օրինակ Ղ.Ալիշանը վանքը տեղադրում է Վայոց ձորում, իսկ ահա Թ.Հակոբյանը՝ Ծղուկ գավառում:

Հաջորդը Վաղատնի վանքն է: Պատմիչը հիշատակում է, որ վանքը կառուցել է Շահանդուխտ թագուհին՝ աստվածային մի հիշեցումից մղված: Այս վայրը վաղուց ուխտադիր մարդկանց վայր էր, որովհետև այնտեղ վաղ ժամանակներից մի եկեղեցի կար սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով, որը պատմիչը կարծում է, որ հենց նրա կողմից էլ կառուցվել է, ապա վերաշինվել Ստեփանոս հոր և սուրբ ճգնավորի կողմից: Այն բուժում էր թունավոր օձերից խայթվածներից: Այդ պատճառով է, որ մեծ բարեպաշտ Շահանդուխտը կոփածո քարերով եկեղեցի է շինում՝ սուրբ Նախավկա Ստեփանոսի անունով, հայոց չորս հարյուր քառասունինը թվականին, այսինքն՝ 1000 թվականին: Եկեղեցու բակում շինում է նաև աղոթատուն՝ կրաշաղախ քարե շարվածքով, ինչպես նաև պահեստներ, արհեստանոցներ, և վանքը շրջափակում պարսպով: Վանքի համար սահմաններ է առանձնացնում Վաղատնից, նրան է հանձնում Գոմեր ագարակը: Շահանդուխտին վախճանվելուց հետո թաղում են այս եկեղեցու բակում: Այնուհետև 1006 թվականին Շահանդուխտի որդի Սևադան, ով Վասակ թագավորի եղբայրն էր, կառուցում է մի եկեղեցի՝ սուրբ Կարապետի անունով, իսկ եկեղեցու բակում՝ գավիթ: Նրանք նույնպես թաղված են այս եկեղեցու բակում: Ինչպես տեսանք, Վաղատնի վանքում Շահանդուխտը կառուցեց եկեղեցի, իսկ մի քանի տարի անց մի եկեղեցի էլ կառուցեց Սևադան: Վաղատնի վանքը կոչվում է նաև *Որոտնավանք*, որն այժմ գտնվում է Սիսիանի շրջանի Վաղուդի գյուղից 2 կիլոմետր հարավ՝ Որոտան գետի ձախ ափի վրա:

Շարունակելով թվել Սյունյաց աշխարհում եղած վանքերը՝ հաջորդը պատմիչը անդրադառնում է Նորավանքին: *Նորավանք* անունով վանքեր Սյունիքում երեքն էին, որից երկուսը՝ Վայոց ձորում, մեկը՝ Բղենում: Այստեղ խոսքը Բղենո Նորավանքի մասին է: Պատմիչը նշում է, որ Սիսական տոհմից Ստեփանոսը Տեր-Հովհաննես եպիսկոպոսի կողմից քահանայության աստիճան ստացավ, ապա որոշեց եկեղեցի կառուցել և այնտեղ կրոնավորների միաբանություն ու սպասավորների դասեր հաստատել: Ապա գալով կատարի վանքի հակառակ կողմը՝ մի շատ գեղեցիկ ու վայելուչ տեղ ընտրեց երկու ձորերի միջև հարթ մակերեսով մի լեռնաբազկի վրա և Հրահատ իշխանի օժանդակությամբ եկեղեցի կառուցեց:Ավարտելով եկեղեցու կառուցումը՝ ավելացնում է եկեղեցական գավիթներ, սրահներ ու կրոնավորների բնակարաններ: Նավակատիք է հրավիրում Սյունյաց եպիսկոպոս Տեր-Հակոբին: Վանքի դիմաց

հիմնում են բորոտանոցներ ու այնտեղ հավաքելով բազմաթիվ բորոտների՝ դարմանում էին։ Եվ այսպես ամեն տեսակ հարմարանքներով ու կարգ ու կանոնի հաստատումով վանքը ծաղկեցրեց հայոց երեք հարյուր ութսունհինգ թվականին[221], այսինքն՝ 936 թվականին։ Կարճ ժամանակ անց հայր Գեորգի ու Հովհաննես քահանայի կողմից այնտեղ կառուցվեց նոր եկեղեցի՝ շատ գեղեցիկ հորինվածքով, դռանն էլ՝ զարմանալի կամարներ՝ սքանչելի վարպետների ձեռքով հարմարեցված մեծ վեմերով ու խարսխավոր սյուներով[222]։ Ըստ պատմիչի՝ Բղենո Նորավանքը մշտապես գործող էր։

Հաջորդը Երիցավանքն է։ Այն գտնվում է Կապանի շրջանի Արծվանիկ գյուղից արևելք՝ բարձր սարահարթի վրա։ Այն հիմնադրել է Սյունյաց մետրոպոլիտ Երիցակը 5-րդ դարում։ Պատմիչը, խոսելով վանքի մասին, նշում է, որ այն մշտապես գործող է եղել։ Մշտապես գործող է եղել նաև Շատանյա վանքը, որի մասին պատմիչը գրեթե չի հաղորդում, նույնը նաև Գողորյա վանքի մասին։ Շատանյա վանքը ամենայն հավանականությամբ եղել է Բաղքում։ Օրբելյանը նշում է, որ երբ Վահանը հանկարծակի չար դևից զարնվելով տանջվում է, նա երկար ժամանակ հրաժարվեց աշխարհական կյանքից, կրոնավորի տարազ հագավ ու երկար ժամանակ ճգնում էր Տանձափարախի սուրբ վկայարանում և Շատանյա Վանքի խստակրոն, մեծահռչակ մշտնջենավորանոցում։

Օրբելյանը, շարունակելով Սյունյաց վանքերի շարքը, հաջորդը հիշատակում է Վահանավանքը։ Ձագիկ իշխանի որդի և Ջեվանշերի եղբայր՝ Վահանը, ով դիվահար մոլեգնության պատճառով կրոնավոր էր դարձել, կամենում է վանք շինել ու այնտեղ հաստատել մշտապաշտոն քահանաների կրոնավորական դասեր։ Գալիս է այն բարձր լեռան ստորոտը, որի վրա է Բաղաբերդի անառիկ ամրոցը, Աճանանի դիմաց գտնում է մի հարթ տեղ, շատ հարմար. նախ աղոթքներով տիրոջից խնդրում է հաջողեցնել իր ձեռնադրումը, ապա նույն գործին է հրավիրում իր կրոնակից վանականներին. սկսում է եկեղեցու շինարարությունը ու կանգնեցնում աստծու փառքի տուն՝ հույժ գեղեցիկ կառուցվածքով, գմբեթահարկ, եռախորան, ամուր միացված տաշածո վեմերով, և դարձնում կրոնավորների տուն[217]։ Վահանն իր անունով վանքը կոչում է *Վահանավանք*։ Սուրբ վանքի կառուցումը կատարվել է հայոց երեք հարյուր վաթսուն թվականին, այսինքն՝ 911 թվականին։ Այնուհետև Վահանի եղբոր՝ Ջեվանշերի որդի Վահանը դարձավ սուրբ միաբանության առաջնորդ։ Նա ավելացրեց բազմաթիվ շինություններ. եկեղեցու բակում կառուցեց մեծ աղոթատունը, շինեց եկեղեցու գավիթը՝ մեծամեծ հղկած վեմերով, երեսուն կանգուն բարձրությամբ։ Վանքի դռանը կամար կանգնեցրեց՝ վրան երկու խորան, Պողոս և Պետրոս սուրբ առաքյալների անվամբ։ Վահանավանքում կառուցումներ իրականացրին նաև Բաղքի Գրիգոր թագավորը, Շահանդուխտ թագուհին, Կատան, Սենեքերիմ թագավորը։

Վանքերի մեջ հաջորդը Տանձափարախն է, որի կրոնավորները խարազնազգեստ ու սակավապետ էին։ Օրբելյանը միայն այսքան տեղեկություն է հաղորդում Տանձափարախի մասին, իսկ Ղ. Ալիշանը ենթադրում է, որ այն պիտի եղած լինի Բաղքի հարավ արևմտյան կողմում՝ Կապան գետի վտակի հովտում։ Վահանավանքի մոտ է այն եղել, քանի որ Օրբելյանը Վահանավանքի սահմանները նշելիս հիշատակում է նաև Տանձափարախը։

Հաջորդը Լուսկեվանքն է, ապա Լիեվանքը, Քրոնից վանքը, Դաղեի վանքը, Կուռափաձորի վանքը, Ծիծառնո վանքը, Խաչատրո վանքը, Ձյունասարի վանքը։ Պատմիչը նշված վանքերի մասին շատ քիչ տեղեկություն է հաղորդում։ Լուսկեվանքի տեղադրության մասին Թ. Հակոբյանը նշում է, որ այն եղել է Արևիք գավառում։ Լիեվանքը նույնպես Արևիք գավառում է եղել։ Դաղեի վանքը տեղանշվում է Քաշաթաղ գավառում, որն 44-օրյա պատերազմի հետևանքով անցավ Ադրբեջանի տիրապետության տակ։ Կառափաձորի վանքը, Խաչատրո վանքը և Ձյունասարի պատմիչի թվարկումից երևում է, որ եղել են Քաշաթաղ գավառում։

Օրբելյանը Վայոց ձորի կողմում հիշատակում է Խոտակերից վանքը, Նորավանքը, մյուս Նորավանքը, Ցաղաց քարը, ապա Հերմոնի վանքը, Արատինից վանքը, Թանատեի վանքը, որտեղ գտնվում են սուրբ Ստեփանոսի նշխարները, Գնդայի վանքը։

Պատմիչը վկայում է, որ Խոտակերաց կամ Քարկոփ վանքի կառուցումից շատ առաջ,

խոտաճարակ ու քուրձ հագնող մարդիկ էին բնակվում Վայոց ձորի խորքերում, Հարսեկի բերդի սահմաններում, Արաստամուղ գյուղի մոտ, որը բարձր դիտանոցի նման նայում էր Շարուրի դաշտին[214]: Այդ մարդիկ հեռացել էին աշխարհիկ կյանքից ու բնակվում էին քարաժայռերի ու խոչաձորերի մեջ՝ մշտապես աղոթելով: Նրանցից ոմանք նեղ ձորակում էին բնակվում, որտեղ քաղցրահամ աղբյուրի մոտ մատուռ էին շինել ու այնտեղ էին կենում: Այն այժմ *Ուռռ քար* է կոչվում: Ոմանք էլ լայն ձորում շինել էին սենյակ ու այնտեղ էին ապրում: Դա *Հին վանք* են կոչում: Նրանց բուն կենտրոնատեղին Արաստամուղ գյուղի եկեղեցին էր, որի մեջ մի հարմար տեղ հաստատել էին ահարկու ու աստվածահրաշ սուրբ նշանը, որ *Խոտակերաց խաչ* է կոչվում: Պատմիչը վկայում է, որ մեր աշխարհի ավերումից հետո կրոնավորները ցրիվ եկան այս ու այն տեղ, մինչև Աշոտ իշխանի օրերը: Տեր-Հովհաննեսը Աշոտին տեղյակ է պահում իրողության մասին, իսկ նա հրամայում է նորից վերաշինել եկեղեցին ու վանքը: Աշոտի մահից հետո սաստիկ երկրաշարժից ավերվում են եկեղեցին ու վանքի բոլոր շինությունները, որի մասին եպիսկոպոսը տեղեկացնում է երանելի Շուշան տիկնոջը, և նա ասում է, որ կրկին վերաշինեն. «Որ չկորչի իմ տեր Աշոտի հիշատակը»: Աշոտի և Շուշանի հիշատակին եկեղեցու վրա փորագրեցին արձանագրություն. «Սրանից առաջ նախ եղել է Խոտակերաց վանք...Աշոտը ջանադրությամբ շինել էր սուրբ եկեղեցին ու միաժամանակ ամբողջ շինությունները զարդարել կրոնավորական դասերով...»: Այնուհետև նշվում է, որ Շուշանը կառուցում է սուրբ եկեղեցին Մարիամ Աստվածածնի անունով և պայման է դնում իր կառուցած հինգ եկեղեցիներում: Որից Աստվածածնի եկեղեցում իր ու Աշոտի հոգիների համար տարեկան երեք քառասունք կատարեն: Իսկ մյուս չորս եկեղեցիները լինեն իրենց որդիների արևշատության, հոգիների փրկության ու վանքի կարիքների համար: Օրբելյանը հիշատակում է, որ եկեղեցու պատին գրված արձանագրությունը եղել է հայոց երեք հարյուր հիսունինը թվականին, այսինքն՝ եկեղեցին պետք է որ վերաշինված լինի 910 թվականին:

Հաջորդը Ամաղուի Նորավանքն է, որը հետո դարձավ եպիսկոպոսարան: Պատմիչը հիշատակում է, որ Ցաղաց քարում չորս հարյուր իննսուն թվականին Գագիկի թագավորության օրոք Վարդիկ անունով մի վանահայր առաջին սուրբ հայրերի հանգստարանում շինում է երկու պայծառ եկեղեցի, մեկը գմբեթահարկ՝ սուրբ Կարապետի անունով, մյուսը՝ թեքակտուր հրաշալի կառուցվածքով: Այժմ Վանքը գտնվում է Եղեգիս և Ալայազ գյուղերից 6-7 կիլոմետր հեռավորությամբ մի բարձրադիր տեղում:

Պատմիչը Հերմոնի վանքի մասին վկայում է, որ այն այդպես է կոչվել Ահերմոն անունով ծերունու անունից: Այնուհետև պատմիչը վկայում է, որ սուրբ Ստեփանոսի աճյունը փոխադրում են Թանահատից վանքը[155], որի միաբաններն անդադար սպասավորություն էին կատարում՝ փափուկ կերակուրներից զերծ. այդ պատճառով էլ կոչվեցին թանահատներ: Գերեզմանի վրա մի փոքրիկ մատուռ շինեցին, որտեղ հետագայում՝ յոթ հարյուր քսանութ թվականին, տեղի բնակիչները կառուցեցին գմբեթահարկ եկեղեցի՝ կառուցվածքով, և սրբի տապանը դրեցին նրա հիմքերի մեջ:

Այնուհետև Օրբելյանն անդրադառնում է Գնդայի վանքին: Վանքի կառուցման մասին հետևյալն է հիշատակում. Երանելի և բարեպաշտ տիկին Սոփիան գնում է *Գնդեվանք* կոչված խորաձոր վայրը՝ այնտեղ գտնվող մենակյացների մոտ ուխտի: Այնտեղ կային վաղ ժամանակներից սուրբ նահատակների մեծաթիվ նշխարներ: Չիմացանք, թե դրանք ովքե՛ր կամ որտե՛ղից էին: Այնտեղ բազմաթիվ ու մեծամեծ բժշկություններ էին լինում: Տիկինը, տեսնելով և տեղը խիստ հավանելով, մտադրվում է եկեղեցի կառուցել և նրա մեջ հաստատել կրոնավորների դասեր: Դրա համար էլ նահատակները գիշերը երևալով խնդրում են կատարել այդ մտադրությունը: Ապա տիկինը վեր կենալով շտապ կերպով բերել է տալիս ճարտար քարագործ վարպետներ, սկսում շինարարությունը. վանքի առաջնորդ նշանակելով հայր Սարգսին և գործակալ՝ Եղիշե երեցին ու նկարչին և այն հանձնում է Տեր-Հակոբին՝ մեծ հագատարությամբ կատարելու ու ավարտելու: Մեծամեծ ճգնությամբ այնտեղ փայլում էր և *Գնդունի* կոչված մայր Սուփանը: Կանգնեցնում են աստծո տունը, նկարակերտ հորինվածքով զարդարում նրա

առաստաղն ու պատերը: Նավակատիք անելով մեծահանդես տոնախմբությամբ օրհնում են այն և անվանում սուրբ նահատակների անվանակոչությամբ ու հաստատում սպասավորների դասեր և կրոնավորների բազմություններ[231]: Երանելի Տիկինը վանքն անվանում է *Գնդեվանք*: Սա տեղի ունեցավ հայոց երեք հարյուր ութսունհինգ թվականին: Այնուհետև, հայոց չորս հարյուր քառասունութ թվականին սուրբ հայր Քրիստափորը կառուցում է եկեղեցու գավիթները:

Գեղամում Օրբելյանը հիշատակում է Մաքենյաց մեծ մենաստան վանաց վանքը, որը գտնվում է այժմյան Վարդենիսի շրջանում՝ Մաքենիս գյուղի եզրին, գետակի բարձրադիր աջ ափին, և մյուս Վանեվանքը,որի մասին պատմում է, որ Շապուհ Բագրատունին իր քույր մարիամի՝ Սյունյաց տիկնոջ իշխանության մեջ մտնող Վանեվանաց վանքում աստծո տուն է կանգնեցնում: Այն կառուցվել է 903 թվականին: Շողվագա վանքի մասին Օրբելյանը հիշատակում է, որ այն կառուցել է Մարիամը՝ սուրբ Պետրոս առաքյալի անունով: Այնտեղ միաբանություն է հիմնում՝ քահանաների բազմամարդ դասերով, իր տիրոջ՝ Սյունյաց իշխան Վասակի հոգու համար:

Օրբելյանը հիշատակում է նաև Նորավանքի եկեղեցու կառուցման մասին: Նա նշում է, որ Տեր-Սարգիս եպիսկոպոսը խորհրդակցում է մեծ Լիպարիտի հետ, և նրանք սկսում են միաբանվածությամբ, մեծարդյուն աշխատանքներով ու անչափ ծախսերով կառուցել Նորավանքի գեղաշեն եկեղեցին և յոթ տարում ավարտում են շենքը՝ ութ խորանով, հայոց վեց հարյուր յոթանասուներկու թվականին:

Գրականություն

1. Օրբելյան Ս. Սյունիքի պատմություն, Երևան, 1986թ., էջ 194, 207, 167, 281, 281, 221, 222, 217, 214, 155, 231:

ՀՏԴ 902/908

Լուսինե Ղարիբյան
Արցախի պետական համալսարան
Պատմության և իրավագիտության
ֆակուլտետ
Պատմություն, 3-րդ կուրս

Ղեկավար՝ պ.գ.թ. Ն.Պ. Սարումյան

ԳԻՇԵՑԻՆԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ

Բանալի բառեր՝ *Արցախ, Մարտունի, Գիշի, գիշեցի, պատերազմ, հոսպիտալ, «Մարտական խաչ», «Արիության» մեդալ, «Մարտական ծառայություն» մեդալ:*

Հոդվածում ներկայացվում է գիշեցիների ներգրավվածությունը 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից՝ Թուրքիայի անմիջական մասնակցությամբ և օտարերկրյա զինյալ ահաբեկիչների ներգրավմամբ սանձազերծված Արցախյան 44-օրյա պատերազմին: Նշվում են պատերազմի հետևանքով Գիշի գյուղի կրած նյութական վնասները: Տարբեր աղբյուրների օգտագործմամբ և հարցազրույցների միջոցով ներկայացվում է 8 զոհված գիշեցիների կենսագրությունն ու անցած մարտական ուղին, և ընդգծվում նրանց սխրանքները անհավասար մարտերում:

Лусине Гарибян

АРЦАХСКОЙ ВОЙНЫ

Ключевые слова: *Арцах, Мартуни, Гиши, гишинцы, война, госпиталь, «Боевой крест», медаль «за отвагу», медаль «Боевая служба».*

В статье представлено участие гишинцев в 44-дневной Арцахской войне, развязанной Азербайджаном 27-ого сентября 2020г. с непосредственным участием Турции и втягиванием иностранных боевиков. Представлены материальные ущербы села Гиши в результате войны. С использованием разных источников и интервью представлены биографии и пройденный боевой путь восьми погибших гишинцев и подчеркнуты их подвиги в неравных боях.

Lusine Gharibyan

THE RESIDENTS OF GISHI DURING THE ARTSAKH 44-DAY WAR

Key words. *Artsakh, Martuni, Gishi, resident of Gishi, war, hospital, "Fighting cross", medal of "Courage", medal "Combat service".*

In this article we try to elucidate the involvement residents of Gishi in Artsakh 44-days war wich begin the Azerbaijan with Turkey's direct participation and foreign armed terrorist's involvement. There are mentioned the material damages of the village Gishi after the war. Using different sources and an interviews are introduced the biography and the past military way of eight victims of Gishi and stressed

there courages in unequal fightings.

Արցախյան շարժումից հետո անկախ կարգավիճակ ձեռք բերած Արցախը 21-րդ դարում Այսրկովկասյան անկայուն տարածաշրջանում կարողանում էր շարունակել ապահովել իր անվտանգությունը: Սակայն իրավիճակը փոխվեց, երբ սրացումներ տեղի ունեցան 2016թ. ապրիլին, որն ավելի խորացավ 2020թ. սեպտեմբերից:

2016թ. ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը ադրբեջանական կողմը, խախտելով 1994թ. մայիսի 12-ի հրադադարի մասին համաձայնագիրը, լայնամասշտաբ հարձակում սկսեց շփման գծի ողջ երկայնքով: Ապրիլյան քառօրյա մարտական գործողություններից շուրջ չորս տարի անց հակառակորդը կրկին դիմեց զենքի ուժին: 2020թ. սեպտեմբերի 27-ի առավոտյան ադրբեջանական բանակը հրթիռահրետանային նախապատրաստությունից ու ԱԹՍ հարվածներից հետո հարձակման է անցնում շփման գծի ամբողջ երկարությամբ[1]՝ սկսելով ակտիվ հրետակոծություն. հրետակոծվում էին խաղաղ բնակավայրերը, այդ թվում՝ մայրաքաղաք Ստեփանակերտը[2]:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ հրավիրվեց Ազգային ժողովի արտահերթ նիստ: Երկրում հայտարարվեց ռազմական դրություն և համատարած զորահավաք՝ տասնութից բարձր տարիքային խմբերի համար[3]:

Եվ ինչպես Արցախյան շարժման առաջին իսկ օրերից ազատամարտիկների առաջին շարքերում էին քայլում գիշեցիները, և հայրենիքի պաշտպանության գործին էին լծվել տասնյակ երիտասարդներ, այս անգամ էլ գիշեցին ամենաակտիվ մասնակցությունն ունեցավ 44-օրյա չարաբաստիկ պատերազմին: Հենց նույն օրը գյուղի պահեստազորայինները մեկնեցին ճակատ և մեծ ավանդ ունեցան Մարտունու պաշտպանության գործում: Իսկ գիշեցի կանայք կատարում էին անհրաժեշտ թիկունքային մի շարք աշխատանքներ. հաց էին թխում, տարբեր ուտեստներ էին պատրաստում և ուղարկում ճակատ:

Վիճակը գնալով ծանրանում էր, և քանի որ շրջկենտրոն Մարտունին ահարկու ռմբակոծության էր ենթարկվում, պատերազմը սկսվելուց 2-3 օր անց Մարտունու հոսպիտալը տեղափոխվեց Գիշու դպրոցի շենքը (այդ ժամանակ ես գյուղում էի): Գյուղում տեղակայված հոսպիտալ էին տեղափոխում տարբեր աստիճանի վիրավորումների զինծառայողների՝ տարբեր ուղղություններից: Չնայած մոտակայքում անընդհատ կրկնվող ռմբակոծությանը և գլխավերևում պտտվող ԱԹՍ-ներին՝ բուժանձնակազմը կատարում էր իր առջև դրված խնդիրները:

44-օրյա պատերազմը, որն ուղեկցվում էր Ադրբեջանի կողմից միջազգային մարդասիրական և մարդու իրավունքների լայնածավալ խախտումներով, քաղաքացիական ենթակառուցվածքների և մշակութային հուշարձանների միտումնավոր թիրախավորմամբ, արգելված զինատեսակների կիրառմամբ և պատերազմական այլ հանցագործություններով, հանգեցրեց հազարավոր զոհերի և տասնյակ հազարավոր վիրավորների, տեղահանվածների և ավերածությունների: Պատերազմի ընթացքում գյուղի շուրջ 51 բնակելի տուն մասնակի վնասվել է, 154,49 հա արոտավայր և 173,48 հա վարելահող մնացել է թշնամու վերահսկողության տակ[4]: Պատերազմից հետո գյուղն ընդունեց տեղահանված 3 ընտանիքի՝ 14 հոգով. 2-ը՝ Շուշիից, 1-ը՝ Հադրութից[5]:

Գիշեցիները կռվել են ռազմաճակատի տարբեր մասերում և իրենց կյանքի գնով պաշտպանել հող հայրենին: Ցավոք, Արցախյան 44-օրյա պատերազմում նահատակվեցին 8 գիշեցիներ, 18-ն էլ վիրավորվեց[6]:

---

[1] http://www.nkrmil.am/news/view/2905

[2] https://www.panarmenian.net/arm/news/285524/

[3] https://www.1lurer.am/hy/2020/09/27

[4] *ԱՀ Մարտունու շրջանի Գիշի գյուղի համայնքապետարանի տեղեկություն (փաստաթուղթ):*

[5] *https://artsakhpress.am/arm/news/153141/restoration-work-being-carried-out-in-artsakhs-gishi.html*

[6] *Նույն տեղում:*

ԱՀ ՊԲ-ի լեյտենանտ Ռոման Նելսոնի Աղաբեկյանը ծնվել է 1998թ. մայիսի 12-ին, Մարտունու շրջանի Գիշի գյուղում: 2015թ. ընդունվել է Շուշիի տեխնոլոգիական համալսարանի «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» բաժինը: Կիսատ թողնելով ուսումը՝ 2016թ. զորակոչվել է ՊԲ շարքեր՝ պարտադիր ժամկետային զինծառայության: Ծառայել է Ասկերանի պաշտպանական շրջանում: Գերազանց ծառայության համար բազմիցս պարգևատրվել է պատվոգրերով և շնորհակալական նամակներով: Թե՛ դպրոցում և թե՛ ծառայության ժամանակ աչքի է ընկել սպորտային հմտություններով: Մասնակցել է վոլեյբոլի մրցությունների՝ արժանանալով «Լավագույն խաղացող» կոչմանն ու պարգևատրվել նվերներով և մեդալներով: Սպորտը և ռազմական գործը նրա տարերքն էին: Զորակոչվելուց հետո ծառայության է անցել ՊԲ-ում՝ որպես պայմանագրային զինծառայող: Եռամսյա դասընթացներ է անցել Երևանում: Ավարտելուց հետո նշանակվել է 3-րդ ՊՇ-ում՝ որպես դիրքի ավագ, հետո՝ դասակի հրամանատար[1]: Ծառայել է 11-րդ վաշտում՝ որպես կրակային աջակցման դասակի հրամանատար: Եղել է պարտաճանաչ սպա:

2020թ. 44-օրյա մարտական գործողություններին նա մասնակցել է առաջին իսկ օրվանից և աչքի ընկել իր խիզախությամբ ու քաջությամբ[2]: Մարտունու ուղղությամբ մղվող ծանր մարտերից մեկի ժամանակ Ռոման Աղաբեկյանը ձեռնամարտի մեջ է մտել հակառակորդի 36 հոգուց կազմված հատուկ ջոկատային խմբի հետ[3], թշնամուն պատճառել մեծաթիվ կորուստներ: Վաշտի կազմով պաշտպանել է Մարտունու ուղղությունը, դիմագրավել հակառակորդին՝ թույլ չտալով նրանց մխրճումը Մարտունի քաղաք, ինչպես նաև իրականացրել հակագրոհ և հետ շպրտել կարևոր բարձունք գրաված հակառակորդին:

Ստորաբաժանման ղեկավարումը Ռոման Աղաբեկյանը շարունակել է մինչև վերջին պահը՝ անգամ վիրավոր վիճակում: 44-օրյա պատերազմի ընթացքում ստացել է լեյտենանտի կոչում: Նոյեմբերի 9-ին՝ զինադադարից ժամեր առաջ, ի պաշտպանություն Արցախ աշխարհի և հայրենիքի փրկության՝ Ռոման Աղաբեկյանն էլ միացավ անմահների շարքին: Մարմինն ամփոփվել է գյուղի գերեզմանատանը:

ԱՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած բացառիկ քաջության և արիության համար ԱՀ նախագահի հրամանագրով հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով[4]:

Պայմանագրային զինծառայող Միհեր Արամի Ղարիբյանը ծնվել է 1990թ. փետրվարի 14-ին, Մարտունու շրջանի Գիշի գյուղում: 2005թ., ավարտելով Գիշու միջն. դպրոցի 8-րդ դասարանը, ընդունվել է Քրիստափոր Իվանյանի անվան ռազմական վարժարանը: Ծառայում էր Արցախի 3-րդ պաշտպանականում՝ որպես վաշտի հրամանատարի տեղակալ: Տիրապետում էր ռազմական գործի բոլոր նրբություններին և մարտ վարելու արվեստին:

Պատերազմի օրերին միշտ եղել է կրակի ամենաթեժ կետերում: Նրա ղեկավարած վաշտը մասնակցել է նաև Ապրիլյան քառօրյա պատերազմին: 44-օրյա պատերազմի օրերին մարտնչել է Զրականի, Հադրութի, Վարանդայի և Մարտունու համար մղվող մարտերում: Զրականի մարտերում 4 անգամ նրա ղեկավարած վաշտը հայտնվել է շրջափակման մեջ, և ամեն անգամ նա կարողացել է ճեղքել շրջափակման օղակը՝ թշնամուն պատճառելով կենդանի ուժի և զինտեխնիկայի զգալի կորուստներ: Նա, փրկելով իր ընկերների կյանքը, զոհվեց նոյեմբերի 1-ին Մարտունու համար մղվող մարտերում: Հուղարկավորվել է գյուղի գերեզմանատանը:

Միհեր Արամի Ղարիբյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով և «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով[5]:

Հետախույզ-գնդացրորդ Կամո Սանասարի Գրիգորյանը ծնվել է 2000թ. դեկտեմբերի 5-ին,

---

[1] *http://shushitech.am/*

[2] *https://fb.watch/cRl5_QbGZO/*

[3] *https://www.facebook.com/permalink.php?story_fbid=754337792118064&id=281507279401120*

[4] *Նույն տեղում:*

[5] *Հարցազրույց քրոջ՝ Դոնարա Ղարիբյանի հետ:*

Մարտունու շրջանի Գիշի գյուղում[1]: Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է ՀԱՊՀ (Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան)՝ «Լեռնային գործ և օգտակար հանածոների արդյունահանում» մասնագիտությամբ: 2019թ., ուսումը կիսատ թողնելով, զորակոչվել է ծառայության Հադրութում: Պատերազմը սկսվելուն պես մշտական տեղակայման վայրից շտապել է առաջնագիծ, որն արդեն հակառակորդն էր զբաղեցնում: Հակագրոհի արդյունքում մեծ կորուստներ պատճառելով թշնամուն՝ ընկերներով վերականգնել են բնագիծը: Զոհվել է սեպտեմբերի 28-ի լուսաբացին հակառակորդի արձակած արկի պայթունից՝ Կարախանբեյլիում: Մարմինն ամփոփվել է գյուղի գերեզմանատանը[2]:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն», «Արիության» մեդալներով և ՀԱՊՀ ուսանողական խորհրդի «Երախտագիտություն» մեդալով[3]:

Պարտադիր ժամկետային զինծառայող Գևորգ Արմոյի Առստամյանը ծնվել է 2001թ. հունվարի 4-ին, Մարտունու շրջանի Գիշի գյուղում: Դպրոցական տարիներին աչքի էր ընկնում հմուտ, կարգապահ և ընդունակ տեսակով: 2018 թ. ընդունվել է ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի «Զբոսաշրջություն» բաժինը: Ուսումը կիսատ թողնելով՝ 2019 թվականին ծառայության է անցել Հադրութի զորամասում, եղել է վարորդ[4]: Ծառայության ընթացքում սպայական անձնակազմի կողմից վաստակել էր սեր և հարգանք, աչքի ընկել խիզախությամբ և անվախ տեսակով:

Պատերազմի առաջին օրվանից մասնակցել է թեժ մարտերին Կարախանբեյլիի ուղղությամբ: Կրակի գոտուց դուրս է բերել վիրավորներին: Հոկտեմբերի 10-ին Հադրութում թշնամին խոցել է մեքենան: Գևորգը վիրավորվել է, սակայն կարողացել է դուրս գալ մեքենայից և պատսպարվել: 2 օր անց անհայտ պայմաններում կապ է հաստատել զինակից ընկերների հետ, սակայն կապն ընդհատվել է: Նրա մարմինը գտնվել է 9 ամիս անց՝ ԴՆԹ փորձաքննությամբ: Հուղարկավորվել է հուլիսի 15-ին, գյուղի գերեզմանատանը:

Գևորգ Առստամյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով[5]:

Գնդացրորդ Էդիկ Սերգեյի Բաղրյանը ծնվել է 2000 թ. հոկտեմբերի 25-ին, Մարտունու շրջանի Գիշի գյուղում: 2019 թ. հուլիսի 1-ին պարտադիր ժամկետային ծառայության է անցել Մատաղիսի զորամասի 2-րդ գումարտակի 4-րդ վաշտում, այնուհետև տեղափոխվել Թալիշ: Ծառայում էր զինվորականին վայել ձևով:

Կռվի առաջին օրվանից մարտի դաշտում էր: Կրակի գոտուց դուրս է բերել 30 զոհված զինակիցների: Ասում էր՝ եկել էին լեյտենանտի կոչում տալու, որ կարողացել էր Մատաղիսի թեժ կռվից իր վաշտի մնացած 16 զինվորներին դուրս բերել չեզոք գոտուց: Կռվել է մինչև հոկտեմբերի 14-ը և ընկել հանուն հայրենիքի Մարտակերտում: Մարմինը գտնվել է 5 օր հետո և հուղարկավորվել հոկտեմբերի 19-ին, գյուղի գերեզմանատանը:

Էդիկ Սերգեյի Բաղրյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» և զորամասի հրամանատարության կողմից «Անձնուրաց պաշտպան» մեդալներով[6]:

Ավագ լեյտենանտ Արմեն Ռուդիկի Բաբայանը ծնվել է 1974 թ. մայիսի 23-ին Մարտունու շրջանի Գիշի գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո Արմեն Բաբայանը մեկնել է ռազմաճակատ, մասնակցել Արցախյան առաջին պատերազմին և մինչև կյանքի վերջը նվիրվել Արցախյան գոյամարտին: 26 տարի անձնվիրաբար ծառայել է հայրենիքին. եղել է հակատանկային հրթիռային համալիրների դասակի հրամանատար[7]: 2020թ. 44-օրյա պատերազմի ժամանակ վիրավորում է ստացել հենց առաջին օրերին, բայց չի նահանջել. մնացել է իր դիրքում, զինվորների հետ: Նոյեմբերի 3-ին Մարտունու ուղղությամբ թշնամու հարձակման ժամանակ

---

[1] *https://youtu.be/1nNkmQQBBe4*

[2] *Հարցազրույց ընտանիքի անդամների հետ, 2021:*

[3] *https://www.facebook.com/polytechSC/posts/10159394238177999*

[4] *https://nurblog.info/2022/03/03/heros-gevorg-arstamyan/*

[5] *Հարցազրույց ընտանիքի անդամների հետ, 2022:*

[6] *Նույնի:*

[7] *https://youtu.be/Wbyi9O8d0F0*

նրան հաջողվում է ոչնչացնել հակառակորդի 3 տանկ՝ հետ շպրտելով նրանց: Նա անմահացավ նույն օրը՝ Մարտունու համար մղված պաշտպանական մարտերից մեկի ժամանակ, թշնամու անօդաչուի հարվածից: Հուղարկավորվել է «Եռաբլուր» զինվորական պանթեոնում: Ամուսնացած էր, ունի 3 որդի:

2020թ. սեպտեմբերի 27-ին հակառակորդի սանձազերծած լայնածավալ ռազմական գործողությունների ընթացքում Արցախի Հանրապետության պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության ու խիզախության համար Արմեն Բաբայանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով[1]:

Աշխարհազորային Իգոր Բաբկենի Բաղրյանը ծնվել է 1977թ. մարտի 16-ին, Մարտունու շրջանի Գիշի գյուղում: Մասնակցել է Ապրիլյան քառօրյա պատերազմին: Սեպտեմբերի 27-ին զորահավաքային զորակոչով մեկնել է Մարտունու 3-րդ պաշտպանականի դիրքեր:

Կռվել է հերոսաբար և կյանքը տվել հանուն հայրենիքի՝ նոյեմբերի 9-ին, Մարտունիում: Աճյունն ամփոփված է «Եռաբլուր» զինվորական պանթեոնում:

Իգոր Բաբկենի Բաղրյանը հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով[2]:

Էռնեստ Արշակի Ղարիբյանը ծնվել է 1963թ. նոյեմբերի 17-ին, Մարտունու շրջանի Գիշի գյուղում: Դպրոցն ավարտելով՝ սովորել է Թիֆլիսի ուսումնարանում՝ որպես էլեկտրիկ: 1981թ. զորակոչվել է խորհրդային բանակի շարքերը: Զորացրվելուց հետո վերադարձել է գյուղ և աշխատանքի անցել գյուղի կոլտնտեսությունում: 2010 թվականից աշխատում էր Մարտունու շրջանի «Արցախէներգո» ՓԲԸ-ում: Մասնակցել է Արցախյան առաջին գոյամարտին, ստացել «Մարտական ծառայություն» մեդալ: 44-օրյա պատերազմի ժամանակ որպես պահեստազոր իր պարտականությունները կատարելիս զոհվեց ԱԹՍ-ի հարվածից նոյեմբերի 9-ին: Հուղարկավորվել է գյուղի գերեզմանատանը: Ամուսնացած էր, ունի 3 զավակ[3]:

Այսպիսով՝ ինչպես Արցախյան առաջին և Ապրիլյան քառօրյա պատերազմների ժամանակ, այնպես էլ 44-օրյա պատերազմի օրերին գիշեցիները իրենց ավանդն ունեցան հայրենիքի պաշտպանության գործում:

---

[1] *https://www.artsakhpress.am/arm/news/160497/devotion-is-immortalityarmen-babayan.html*

[2] *Հարցազրույց կնոջ՝ Անահիտ Պետրոսյանի հետ, 2022թ.:*

[3] *Հարցազրույց ընտանիքի անդամների հետ, 2022 թ.:*

ՀՏԴ 392

Նարինե Բավեյան
Գավառի պետական համալսարան,
Պատմության ֆակուլտետ, բակալավր
Էլ. փոստ՝ narine.baveyan@mail.ru

Գիտական ղեկավար՝
ԳՊՀ դասախոս, պ.գ.թ., դոցենտ
Ա. Պողոսյան

ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *Երանոս, ավանդույթ, ամուսնություն, հարսանիք, օժիտ, հարսնացու, փեսացու, քավոր:*

Հոդվածում ներկայացրել ենք Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքի 20-րդ դարի ամուսնության և հարսանեկան սովորույթները: Թեման այսօր էլ արդիական է, քանի որ ժամանակակից հասարակությունը փոփոխվում է, փոխվում են արժեքներն ու հասկացությունները, մուտք են գործում ազգային երևույթներ: Ուստի պետք է պահպանել նախորդ սերունդների թողած կենսափորձը, սովորույթներն ու ավանդույթները, որոնցով առաջին հերթին պայմանավորված է մեր ազգային ինքնությունը: Բնականաբար, դրանք պետք է լրացվեն և հարստացվեն նոր պատկերացումներով, որոնք սակայն չպետք է խաթարեն հայոց բնորոշ ազգային դիմագիծը:

Narine Baveyan

MARRIAGE AND WEDDING OF YERANOS COMMUNITY IN THE 20 TH CENTURY

Keywords: *Blessed, tradition, marriage, wedding, dowry, bride, groom, godfather.*

In this article we have tried to present the 20th century marriage and wedding customs of Yeranos community of Gegharkunik region. The topic is relevant today, as modern society is changing, values and concepts are changing, anti-national phenomena are entering. Therefore, we must be able to preserve the life experience, customs and traditions left by previous generations, which first of all condition our national identity. Naturally, they must be supplemented, enriched with new manifestations typical of the time, which, however, should not distort the general description of the typical Armenian national, traditional feature.

Нарине Бавеян

БРАЧНЫИ И СВАДЕБНЫЕ ОБЫЧАИ ОБЩИНЫ ЕРАНОСА В 20 ВЕКЕ

Ключевые слова: *Еранос, традиции, брак, свадьба, приданое, невеста, жених, крёстный отец.*

В этой статье мы попытались представить вам брачные и свадебные обычаи 20 века общины Еранос Гегаркуникской области. Тема актуальна и сегодня, поскольку современное общество меняется,меняются ценности и понятия, входят антинациональные явления. Поэтому мы должны

сохранять жизненный опыт, обычаи и традиции, оставленные предыдущими поколениями, которыми в первую очередь обусловлена наша национальная личность. Естественно, что они должны быть дополнены, обогащены новыми идеями, для того времени новыми проявлениями, что, однако, не должно мешать общему описанию характерного армянского национального образа.

Սույն հոդվածում ներկայացված է Գեղարքունիքի մարզի Երանոս համայնքի 20-րդ դարի ամուսնության և հարսանիքի սովորույթները:

Թեման այսօր էլ արդիական է, քանի որ ժամանակակից հասարակությունները փոփոխվում են արագ տեմպերով, փոխվում են արժեքներն ու կանոնակարգերը և այս իրադարձությունների հետ մեկտեղ պետք է կարողանալ հնարավորինս պահպանել նախորդ սերունդների թողած կենսափորձը, սովորույթներն ու ավանդույթները:

Անտարակույս, վերը նշվածները վերաբերում են նաև ամուսնության և հարսանիքի արարողությանը: Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել ամուսնության և հարսանեկան ավանդույթները Երանոսում, հնարավորինս բացահայտել համամարզային ու համահայկական ընդհանրությունները և երանոսցիներին հատուկ որոշ առանձնահատկությունները, միաժամանակ զուգահեռներ որոնել Երանոս համայնքի 19-20-րդ դարերի ավանդական և ժամանակակից հարսանիքների միջև:

Երանոս համայնքը գտնվում է Գեղարքունիքի մարզում: Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 2050 մետր բարձրության վրա: Գյուղը կազմավորվել է 1828-1830 թվականներին: Երանոս համայնքի բնակիչները եկել են Ալաշկերտի Խաստուր գյուղից, իսկ 1845 թվականին էլ մի քանի ընտանիքներ եկել են Մուշից [1]:

19-20-րդ դարերում, ինչպես ամբողջ պատմական Հայաստանում, Երանոս համայնքում ևս սովորական երևույթ էր փոքր տարիքի աղջիկների ամուսնությունը: 20-րդ դարում Երանոսում աղջկան ամուսնացնում էին 14-17 տարեկանում, իսկ տղային՝ 18-25.: Այժմ աղջկան՝18-25, տղային՝ 22-30 [2] : Հնում, եթե 18 տարեկան աղջիկը դեռևս ամուսնացած չէր, ասում էին «տանը մնացած» կամ «դախացած» [3] :

Ըստ Ե.Լալայանի՝ Նոր Բայազետ գավառում 19-20-րդ դարերում ամուսնության տեսակ էր, երբ երկու գերդաստանի նահապետերը, ցանկանալով բարեկամանալ, ուխտում էին, որ իրենց գերդաստաններում տարբեր սեռի երեխաներ ծնվելու դեպքում պետք է ամուսնացնեն իրար հետ: Տարածված էր նաև օրորոցների վրա խազ քաշելով ամուսնացնելու սովորույթը[4]: Տարեցների պատմելով՝ Երանոս համայնքում նմանատիպ դեպքեր հազվադեպ է եղել, իսկ մեր ժամանակներում էլ այս ավանդույթը ամբողջությամբ մոռացված է:

Աղջկատես և «աղջիկ ճարել» (գտնել): Երանոս համայնքում աղջիկ ընտրելուց առաջ հաշվի էր առնվում մի քանի նախապայման՝ աղջիկը պետք է լիներ գեղեցիկ, խելացի, հունարով (շնորքով), և կարևոր նախապայման էր, որ լավ ընտանիքից լիներ, ինչպես ասվում էր, իրենց ընտանիքի հետ համապատասխան: Հարսնացուի ընտրությունը կամ վստահվում էր տղայի մորը, կամ հենց տղային[5]:

Խոսք առնել: Հարսնացուի ընտրությունից հետո մի որևէ բարեկամի խնդրում էին, որ խոսք բաց անի հարսնացուի ծնողների մոտ իրենց մտադրության մասին: Եթե իմանում էին, որ համաձայն են աղջիկ տալու, նոր գնում էին աղջկա ձեռքը խնդրելու: Այդպես էին վարվում և վարվում են, քանի որ մերժումը տղայի ու նրա ընտանիքի վարքը գցում էր, և շատ ծնողներ էլ անպատվություն էին համարում, որ ուրիշից մերժված երիտասարդին իրենց աղջիկ տան, մտածում էին, որ նախորդ աղջկան իրենց աղջկանից լավն են համարել:

---

[1] ***Մարտիրոսյան Վ.,*** *Երանոս I հատոր, Երևան, 2002, էջ 14:*

[2] ***Բավեյան Ն.,*** *Դաշտային ազգագրական նյութեր , Երանոս, 2022/հետ այսու՝ ԴԱՆ/:*

[3] ***Մարտիրոսյան Վ.,*** *նշվ. աշխ. , էջ 47:*

[4] ***Լալայան Ե.,*** *Նոր-Բայազետի գավառ կամ Գեղարքունիք, Ազգագրական հանդես, Թիֆլիս, 1907, էջ 9:*

[5] ***Բավեյան Ն.,*** *ԴԱՆ, Երանոս, 2022:*

Աղջիկ ուզել: Սովորաբար տղայի հայրը, հորեղբայրը կամ մոտիկ ազգականը նաև իրենց գործերը կազմակերպողն էին, գնում էին աղջկա տուն՝ աղջկա ձեռքը խնդրելու: Խնամախոսը, սկզբից խոսելով շատ տարբեր թեմաներից, հետզհետե սկսում էր «խոսք բացել» իրենց գալու բուն նպատակից:

Հիմնականում գովաբանում էին տղային և նրա ընտանիքին: Իսկ աղջկա ծնողները, որքան էլ ուզենային աղջկան տալ, այնուամենայնիվ առաջին անգամը միշտ մերժում են՝ պատճառաբանելով, թե ժամանակ չունեն, աղջկա ամուսնացնելու ժամանակը չէ կամ միջոցները չեն ներում: Իսկ հաջորդ անգամ, երբ խնամախոսները պնդում են, ժամանակ են խնդրում մտածելու. այս արդեն նշան է համարվում, որ մտադիր են տալու, այլ դեպքում կտրուկ կերպով մերժում են՝ բերելով տարբեր պատճառաբանություններ, օրինակ՝ դեռ աղջիկը փոքր է, չի հասկանում իր նիստ ու կացը, ամուսնացնելու ժամանակը չէ, իսկ այժմ՝ աղջիկը սովորում է կամ չի ցանկանում դեռ ամուսնանալ: Կարելի է նկատել, որ «աղջիկ ուզելու» ավանդույթը հիմնականում չի փոփոխվել:

Նշանդեք: Մի քանի օր անց տղայի հայրը իր բարեկամների հետ առանց փեսացուի գնում էին հարսնացուի տուն՝ տանելով «սկուտեղ», այսինքն՝ մի սկուտեղի մեջ մի գլուխ շաքար, խնձորներ, կոնֆետներ: Սրանց վրա դրված էր լինում հարսնացուի համար զարդեր և մի մատանի:

Հարսնացուն մյուս սենյակում կանանց կենտրոնում նստած սպասում էր իր նվերներին: Սկզբում նրան սկեսրայրը հանձնում է մատանի, իսկ հետո քահանան կամ քավորը առաջարկում էր տղամարդ հյուրերին տալ հարսնացուին «խալաթ» (նվեր): Հիմնականում նվերները լինում էին ոսկե կամ արծաթե դրամներ: Բարձրաձայն հայտարարվում էր յուրաքանչյուր ընծայողի անունը:

Սրանից հետո նախ տղամարդկանց և ապա կանանց ընթրիք էին տալիս, գյովնդ (կլոր պար) պարում և գրեթե առավոտյան արդեն գնում:

Այժմ Երանոսում նշանդրեքի ավանդույթը բավականին փոփոխություն է կրել. փեսան մասնակցում է նշանդրեքին, սկուտեղի փոխարեն տարվում է զամբյուղ՝ տարբեր մրգերով և բացի մատանուց ընծայում են տարբեր ոսկեղեն՝ ապարանջաններ, ականջօղեր, ոսկյա թևնոցներ և այլն: «Խալաթը» ևս տրվում է ոսկյա զարդերի տեսքով[12]:

Հարսնատես: Նշանդրեքից հետո փեսացուն մի գիշեր մի քիչ չոր միրգ և մի որևէ ընծա առած գնում էր աներանց տուն՝ իր հարսնացուին տեսնելու: Զոքանչը ընդունում էր նրան և ձևացնում, թե աներն այդ մասին չգիտի, եթե իմանա, կբարկանա: Այնուհետև հարս ու փեսան, հարսի փոքրիկ քույրը առանձնանում էին ու մինչև լուսաբաց զրուցում, սակայն հարսնացուն մինչև մի նվեր չստանար, չէր սկսի փեսացուի հետ խոսել: Սա կոչվում էր «խօսալէ» ընծա: Չխոսկանությունը Երանոսում ևս հարսնացուի առաքինությունն էր համարվում, և նա չէր խոսում փեսացուի ոչ մի բարեկամի հետ, բացի երեխաներից: Հարսնատես ավանդույթը այսօր չի պահպանվել: Բայց պատահում են ընտանիքներ, որտեղ պահպանվել է չխոսկանության ավանդույթը:

Նոր Բայազետի գավառում հարսնատեսի արարողությանը հաջորդում է «Փեսախում»-ը: Ըստ այս ավանդության՝ հարսնացուի ծնողները փեսացուին իր ընկերների հետ հրավիրում էին իրենց տուն ընթրելու և զվարճանալու: Հաճախ նաև փեսացուին նվերներ էին տալիս[3]: Երանոսցիները չեն ունեցել և չունեն նման ավանդույթ:

Հարսահանեք: Տոն օրերին (Համբարձմանը, Վարդավառին, Աստվածածնին, Ս.Խաչին) սկեսուրը մի որևէ բացօթյա տեղ հրավերք էր սարքում և հրավիրում հարսնացուին և իր ազգականուհիներին: Այդպիսի հրավերքները կոչվում էին հարսահանեք, այսինքն հարսին զբոսանքի հանելու հրավեր: Այս հրավերքին փեսացուն կամ որևէ տղամարդ չէր մասնակցում: Այժմ հարսնացուին հրավիրում են իրենց տուն կամ եկեղեցի տանում:

---

[1] ***Մարտիրոսյան Վ.***,*նշվ. աշխ., II հատոր, էջ 48-49:*

[2] ***Բավեյան Ն.***,*ԴԱՆ, Երանոս, 2022:*

[3] ***Լալայան Ե.,*** *նշվ. աշխ.,էջ 15:*

Փայեր: Բարեկենդանին, Ծաղկազարդին, Լուսավորիչին, Համբարձմանը, Աստվածածնին և Ս.Խաչին փեսացուի տանից հարսնացուին «փայ» (բաժին) նվերներ են ուղարկում՝ մի սկուտեղ չոր մրգեր, թխվածքներ, գլխի շալ, կոշիկներ, զարդեր և այլն: Հարսնացուի մայրն էլ ի պատասխան ընթրիքի է հրավիրում փեսացուին և իր ազգականներին: Կարելի է ասել, որ մերօրյա Երանոսում պահպանվել է այս գեղեցիկ ավանդույթը:

Տուն կանչել: Երբ ննջեցյալ էր լինում, խնամիներին կանչում էին իրենց տուն, մյուս խնամիները շաքար, գլխի աղլուխ, «բոխչա», այսինքն՝ գաթաներ էին ուղարկում: Երբ օտարությունից մեկը վերադառնում էր, խնամիները մի գլուխ շաքար էին ուղարկում՝ իբր «գալ-բարի»:

Ըստ Ե. Լալայանի՝ Նոր Բայազետ գավառում «տուն կանչելու» արարողությունը այլ իմաստ ուներ. այն բավականին տարբերվում էր Երանոս գյուղի ավանդույթից: Ըստ այդմ՝ երբ հարսանիքի օրերը մոտենում են, հարսնացուի բարեկամներն սկսում են հարսնացուին «տուն կանչել», հրավիրել իրենց մոտ մի երկու օր մնալու և որևէ ընծա են տալիս[1]:

Հարսանեկան պատրաստությունները սկսվում էին խնամիների փոխհամաձայնությամբ հարսանիքի օր նշանակելուց հետո:

Հարսանիք: Երանոս գյուղում հարսանիքը տևում էր երեք օր. եզ մորթելու օրը՝ «մսացու», հարսանիքի օրը և հարսանիքի հաջորդ օրը՝ խաշի օրը: Բայց հարկ է նշել, որ չունևոր դասը հարսանիքները անում էր գիշերով և քիչ մարդկանցով, հիմնականում ամենամոտիկ հարազատներով, քանի որ հնարավորությունները չէր ներում երեք օրվա համար պատրաստություններ տեսնել: Լինում էին դեպքեր, երբ խոսք առնելուց կամ նշան դնելուց հետո գիշերով հարսնացուին վերցրած գալիս էին տուն:

Այնուհետև կատարվում էին **ղալան կտրելու, քավորի թամբեհի (տեղեկացնել) և շորերը կարելու** արարողությունները: Հատուկ ուշադրություն էին դարձնում հարսի զգեստին ու արդուզարդին:

Հարսնացուի զգեստը: Երանոս գյուղի հարսնացուի զգեստները հիմնականում լինում էին կանաչ և կարմիր՝ վրան տարբեր զարդանախշեր: Զգեստը ներառում էր՝ պդոտ (կիսաշրջազգեստ), բուրդա (վերնաշապիկ), բաղդադին (գլխաշոր) և գոգնոց: Գլխաշորը այնպես էին կապում, որ հարսնացուի մազերը չերևային: Ցավոք, Երանոս համայնքում չի պահպանվել հարսնացուի զգեստի նմուշը:

Արդ ու զարդ: Հարսնացուի ճակատին կապում էին արծաթյա գլխազարդ, վզնոց, ապարանջան, մատանիները դնում էին բութ և ճկույթ մատներին: Հարկ է նշել, որ հարսացուի կերպարանքը կապված էր նաև գումարի հետ: Ունևոր դասը ավելի գեղեցիկ ու թանկարժեք զգեստներով և զարդերով էր զարդարում հարսնացուին: Իսկ չունևորները բավարարվում էին նրանով, ինչ որ կար. անգամ եղել են դեպքեր, երբ հարսնացուի զգեստը կարելու փոխարեն ուրիշից են վերցրել: Այժմ Երանոսում հարսանցուները հագնվում են 21-րդ դարին հարիր ձևով՝ ճերմակ զգեստ: Նշեմ նաև, որ չնայած հիմա ճերմակ զգեստն է համարվում աղջկա մաքրության նշանը, հնում կարմիրն էր դրա խորհրդանիշը:

Փեսացուի կերպարը: Փեսացուն հագնում էր սև կոստյում-շալվար, ձախ կողմում ամրացնում էին ծաղկեվարդ, ծաղկեվարդ էին ամրացնում նաև քավորին և ազաբ-բաշիին: Ընդունված էր փեսային և ազաբ-բաշուն կապել կոսպանդի (կանաչկարմիր), տղայի տանը կապում էին կանաչը (քանի որ տղան ամուսնանում է, արդեն կանաչել է), իսկ կարմիրը աղջկա տանն էին կապում (ի նշան աղջկա մաքրության): Այսօր այս ավանդույթը հիմնականում պահպանվել է [2]:

Տաշտադրեք: Հարսանիքից երկու օր առաջ՝ հիմնականում հինգշաբթի օրը, փեսայի տանը «տաշտադրեք» է լինում՝ հարսանիքի համար հաց պատրաստելու: Հավաքվում են հարս ու աղջիկ: Հացթուխը տաշտը դնում է հացատան մեջտեղը, մաղը ձեռքն առնելով՝ բարեմաղթում, որ ուրախության, բախտավորության հաց լինի, և ապա սպասում՝ իրեն նվերներ տան, որպեսզի

---

[1] *Նույն տեղում:*

[2] ***Բավեյան Ն.**,ԴԱՆ, Երանոս, 2022:*

սկսի ալյուրը մաղել: Նվերներն ստանալուց հետո հացթուխը սկսում է ալյուրը մաղել և հունցել, իսկ հրավիրված երիտասարդները, տաշտի շուրջը պար բռնած, երգում և պարում էին: Այնուհետև, մնում են մի քանի մոտիկ ազգականուհիներ՝ հաց թխելուն օգնելու: Հարսնացուի տանը տաշտադրեք տեղի չէր ունենում: Այս ավանդույթը ևս չի պահպանվել:

Եզմորթեք: Հաց թխելու հետևյալ օրը՝ ուրբաթ առավոտյան, մսի պատրաստությունն են տեսնում: Փեսացուի հայրը, իր ազգականներին հավաքելով, բերում է մի եզ (ճակատին սովորաբար կապված էին լինում կարմիր և կանաչ թելեր), որի ոտքերը կապում էին և պառկեցնում՝ երեսը դեպի արևելք դարձրած: Մսագործը նվերներ ստանալուց հետո ասում էր՝ «Աստված շնորհավոր անի», դանակով խաչ էր քաշում եզան կոկորդին և մորթում: Հարս ու աղջիկ երիտասարդների հետ, պարում էին: Այս ավանդույթը շատ ընտանիքներ մինչև օրս պահպանել են:

Խնդրանք: Եզմորթեքի միջոցին փեսացուի տանից մարդիկ են ուղարկում՝ բարեկամներին և ծանոթներին հարսանիքի հրավիրելու: Հիմնականում երկու երիտասարդներ էին գնում հրավեր անելու, իսկ տանտերը, ի նշան համաձայնության, հրավիրողներին նվիրում էր հավ: Հիմա նվիրատրություն չի կատարվում՝ ի նշան համաձայնության, բայց հիմա ևս երիտասարդներին է հանձնարարվում այդ գործը:

Հինա տանել: Մի սկուտեղի մեջ լցնում էին չոր մրգեր, շաքար և դնում անհրաժեշտ քանակի հինա, և այդ սկուտեղը ազգականի հարսը, երիտասարդ կանանց և աղջիկների հետ զուռնա-դհոլի ուղեկցությամբ պարեցնելով, տանում է հարսնացուի տուն: Այս ավանդույթին տղամարդիկ չէին մասնակցում: Հարսնացուի ձեռքերին գեղեցիկ նախշեր էր արվում հինայով, երբեմն նաև գրվում էր փեսացուի անվան առաջին տառը կամ ամբողջ անունը: Այժմ, ինչպես ամբողջ Հայաստանում, Երանոսում նույնպես այս ավանդույթը չի պահպանվել: Հինա տանելուց հետո հետաքրքիր ավանդույթ էր, այսպես ասած, «թուր ծախելու» սովորույթը, որն իրականացնում էին ջահել աղջիկները: Նրանք այն զարդարում էին և առանց նվերի չէին տալիս ազաբ-բաշուն, որն էլ իր հերթին հարսանիքից հետո «ծախում էր» փեսային:

Շորօրհնեք: Շորօրհնեքը տեղի էր ունենում թուր ծախելու ծեսից հետո: Փեսացուի այն հագուստը, որը փեսան կրելու էր պսակ գնալու օրը, տալիս էին քահանային, որպեսզի օրհնի: Գինի էին դնում հագուստի մոտ: Քահանան օրհնում էր հագուստը, գինին տալիս էր փեսացուին, քավորին և ազաբ-բաշուն, որպեսզի խմեն: Թագավորին ազաբ-բաշին էր օգնում հագնվել և սափրվել: Այժմ այս ավանդույթը չի պահպանվել, քանի որ քահանան տուն չի կանչվում:

Այնուհետև տեղի էր ունենում փեսացուին սափրելու ծեսը: Սափրիչը, «Աստված շնորհավոր անե» ասելով, սկսում էր ածիլել. շերտ-շերտ մազեր թողնելով՝ հարցնում էր. «Տղերք ջան, ով ա ուզում էս ածուն վեկալել»: Երբ սափրիչն ավարտում էր, բոլորը միասին բղավում էին. «Աստված շնորհավոր անի»[1]:

Ուսկապ (կոսպանտ)[2]: Հաջորդը ուսկապի ծեսն է, երբ զուռնա-դհոլով փեսացուն դուրս էր գալիս սենյակից և մի հարս (այժմ՝ աղջիկ) կանաչ կոսպանդի էր պարեցնելով կապում փեսայի աջ ուսին: Մեր ժամանակներում ազաբ-բաշուն ևս կոսպանդի են կապում:

Թագավորը քավորի, ազաբ-բաշու և բոլոր հարսանքավորների հետ դհոլ-զուռնայով ուղևորվում էր դեպի հարսնացուի տուն: Տղամարդիկ հավաքվում էին առանձին սենյակում, կենացներ ասում, այդ ընթացքում կանայք գնում էին հարսնացուին հագցնելու (նախապես քահանան օրհնում էր շորերը): Հարսնացուին հագցնելուց հետո գալիս էր եղբայրը՝ գոտին կապելու, այդ ընթացքում քրոջը բարեմաղթանքներ էր ասում: Հիմա եղբայրը գոտի կապելու փոխարեն քրոջ կոշիկներն է հագցնում. կոշիկների մեջ գումար է դնում հագցնելուց առաջ, որ քույրը իր հետ հաջողություն տանի ամուսնու տուն:

Քավորի և մեծերի բարեմաղթանքները լսելուց և օրհնություն ստանալուց հետո ուղևորվում

---

[1] *Լալայան Ե.,նշվ. աշխ.,էջ 23:*

[2] *ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, Հայոց լեզվի բարբառային բառարան, Երևան, 2002, էջ 73-170:*

էին դեպի եկեղեցի. առաջից գնում է զուռնա-դհոլը, ապա հարսը և փեսան՝ շրջապատված հարսանքավորներով: Պետք է նշել, որ հնում հարսնացուի հայրը և մայրը չէին գնում եկեղեցի:

Երբ հասնում էին եկեղեցի, ազաբ-բաշին ձեռքի թուրը բռնում է դռան կամարակալ քարին այնպես, որ հարսն ու փեսան անցնում են նրա տակով և մտնում եկեղեցի: Սա բացատրվում էր նրանով, որ ազաբ-բաշին արգելում է չարքերին՝ վնասելու նրանց: Միևնույն կերպ վարվում է նաև վերադարձին՝ ամեն մի դռնից մտնելիս:

Եկեղեցում արարողությունները վերջացնելուց հետո հարսանքավորները շարժվում էին փեսացուի տուն, բայց ոչ նույն ճանապարհով, որով եկել էին:

Փեսացուի տան բակում ճոխ սեղան էր բացված լինում: Փեսայի մայրը մոտենում էր, որդուն ու հարսին համբուրում և ներս հրավիրում: Շեմքի առաջ կտուրից չոր մրգեղեն էին շաղ տալիս հարսի ու փեսայի գլխին, մի լավաշ հաց գցում հարսի գլխին, որ նա ղսմաթով լինի, մի կճուճ էլ դնում էին փեսայի ոտքի տակ, որ կոտրի. սա ևս բացատրվում է այսպես՝ չար աչքից հեռու: Այժմ հարսի և փեսայի ուսերին լավաշ են գցում, մեղր ուտեցնում և երկուսի ոտքերի տակ էլ դնում են ափսե, որ կոտրեն: Ապա թագավորը գնում էր տղամարդկանց բաժին, իսկ հարսը՝ կանանց բաժին: Կանանց բաժնում հարսը չէր նստում, մինչև սկեսուրը մի ընծա չէր տալիս: Եվ երբ նստում է, իսկույն մի տղա երեխա բերում դնում են նրա գիրկը, որպեսզի առաջնեկը տղա լինի: Սա էլ մի փոքրիկ նվեր է տալիս երեխային: Այսօր ժամանակակից Երանոսում այս ավանդույթը պահպանվել է:

Այնուհետև հարսանիքը շարունակվում էր բարեմաղթանքներով, երգով և պարով մինչև լուսաբաց:

Հաջորդ առավոտը համարվում է հարսանիքի երրորդ և վերջին՝ խաշի օրը: Տղամարդիկ հավաքվում են, ուտում խաշը, պարում, երգում և արդեն կեսօրին հեռանում: Իսկ կանայք մնում են՝ հարսնացուի օժիտը բաց անելու համար: Մի կին նստում էր և բաց անում, ամեն ինչ ցույց տալիս և գովաբանում:

Երանոս գյուղում հարսի օժիտը կազմում էր մեկ հատ անկողին, մի գորգ, մի ջեջիմ (կարպետանման նեղ ու երկար բրդե գործվածք)[1], մի արկղ (սնդուկ), 1-2 հատ հագուստ, գուլպաներ և այլ անձնական իրեր:

Նաև նվերներ սկեսրայրին, տեգորը (ամուսնու եղբայր), քավորին և այլն[2]:

Հարսանիքից երեք-չորս օր անց հարսը ջուր էր տաքացնում և լվանում սկեսրայրի և տեգրերի գլուխներն ու ոտքերը: Նվերներ հարսը չէր ստանում:

Պետք է նշել, որ հարսն իրավունք չուներ երկու շաբաթ տանից դուրս գալու, որ ոչ մեկ աչքով չտար[3]:

Այսպիսով, ուսումնասիրելով Երանոս համայնքի 20-րդ դարի ամուսնության և հարսանիքի սովորույթները, կարելի է հանգել այն եզրակացությանը, որ Երանոս համայնքի բնակչությունը շուրջ մեկ դար անց, հնարավորինս հարմարվելով մշակութային ժամանակակից նորամուծություններին, այնուամենայնիվ, մեր ժամանակներում էլ փորձում է պահպանել նախնիների կենսափորձը և շարունակել հնուց եկած ավանդույթները:

---

[1] *ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀ բարբառային համապատկեր, գիրք 1,Գեղարքունիքի մարզ, Երևան, Ասողիկ, 2018, էջ 366:*

[2] ***Բավեյան Ն.**,ԴԱՆ, Երանոս, 2022:*

[3] *Նույն տեղում:*

ՀՏԴ 94(4/9)

Գրիգոր Սարգսյան
ԵՊՀ, Արևելագիտության ֆակուլտետ,
Իրանագիտություն,բակալավր 2-րդ կուրս
Էլ. փոստ՝grigor.sargsyan5@ysumail.am

Գիտական ղեկավար՝
բ.գ.թ. Վ. Ոսկանյան

ԻՐԱՆԱ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ և ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *Երկբևեռ աշխարհակարգ, սառը պատերազմ, սուվերեն պետություն, էներգետիկ ենթակառուցվածք, Իրան, Չինաստան:*

Մեծ է Մերձավոր Արևելքում և աշխարհում Իրանի և Չինաստանի դերի կարևորությունը, որը արտահայտվում է վերջիններիս համագործակցությամբ հիմնականում ընդեմ ԱՄՆ-ի, քանի որ ԱՄՆ-ն փորձում է պատժամիջոցներ սահմանել այս երկու տերությունների նկատմամբ, որոնք կարող են հանգեցնել աշխարհում երրորդ բևեռի ստեղծմանը՝ ԱՄՆ-ի և Ռուսաստանից հետո՝ի դեմս Չինաստանի և Իրանի: Այս երկրները ունեն նմանություններ, հատկապես իրենց փակ քաղաքական համակարգերի առումով: Տարածաշրջանային և համաշխարհային գերտերություն համարվող այս երկրները կարող են օրինակ ծառայել իրենց տնտեսական, ռազմական և քաղաքական ազատ համագործակցությամբ և Չինաստան Իրան 25-ամյա ռազմավարական համագործակցության մասին համաձայնագրով այն երկրներին, որոնք կախվածության մեջ են գտնվում Արևմտյան բևեռից:

Григор Саргсян

ИРАНО-КИТАЙСКАЯ ПОЛИТИКА И ОТНОШЕНИЯ

Ключевые слова*: биполярный миропорядок, холодная война, суверенное государство, энергетическая инфраструктура, Иран, Китай.*

Роль Ирана и Китая на Ближнем Востоке и в мире очень важна, что выражается в сотрудничестве последнего в основном против США, так как США пытаются ввести санкции против этих двух держав, что может привести к созданию третьего полюса после США и России, в лице Китая и Ирана. Эти страны имеют сходство, особенно в плане их закрытых политических систем. Эти страны, считающиеся региональными и мировыми сверхдержавами, могут служить примером в экономическом, военном и политическом сотрудничестве, а также в китайско-иранском соглашении о стратегическом партнерстве со странами, зависимыми от Запада.

Grigor Sargsyan

POLICY AND RELATION BETWEEN IRAN AND CHINA

Key words : *double-polar world order, cold war, souvereign state, energy infrastructure,*

Iran, China.

The role Iran and China in the Near East and in the world is very important , which is expressed in co – operation with the latter mainly againsed USA ,as the USA tried to use sanctions against these two powers, which can bring to third world war – the USA after Russia, China and Iran these countries have resemblance in their closed political system. These countries are considered to be regional worldwide superpowers, and could serve an example in economic, in military, in political co-operation, as well as, in agreement between Iran and China about strategy partners with the countries depending from the West.

1991թ. Խորհրդային Միության փլուզումը արմատական փոփոխության ենթարկեց սառը պատերազմի ժամանակաշրջանում ձևավորված երկբևեռ աշխարհակարգը, 20-րդ դարում, հատկապես ԽՍՀՄ-ի փլուզումից հետո, փորձեր արվեցին միաբևեռ աշխարհակարգի անցման և ամրապնդման համար: Միացյալ Նահանգները շարունակում էր ուժեղացնել իր դիրքերը և ազդեցությունն աշխարհում, սառը պատերազմին հաջորդող տարիների միաբևեռ աշխարհակարգը համեմատաբար կարճ կյանք ունեցավ և արագորեն սպառեց իր ռացիոնալ հնարավորությունները[1]:

1997թ.ապրիլին Մոսկվայում Ռուսաստանի և Չինաստանի միջև ստորագրվեց Ռուս-չինական հայտարարությունը՝ բազմաբևեռ աշխարհի և նոր աշխարհակարգի վերաբերյալ: Այս փաստաթղթով վերոհիշյալ երկրները ցույց էին տալիս ԱՄՆ քաղաքական գաղափարախոսության հետ իրենց անհամաձայնությունը և փորձում էին դիմակայել ԱՄՆ մենատիրությանը:Բացի այդ, միջազգային հարթակներում հայտնվեցին պետություններ (Չինաստան, Իրան, Հնդկաստան, Կորեա, Բրազիլիա, Ինդոնեզիա, Ճապոնիա),որոնք վճռականորեն էին տրամադրված բազմաբևեռ աշխարհակարգ ստեղծելու հարցում:

Դեռևս 2004 թվականին իրանական լրատվական աղբյուրներում արծարծվում էր Շանհայի համգործակցության կազմակերպությանը Իրանի անդամակցության հարցը: Սակայն Իրանը Հնդկաստանը և Պակիստանը կազմակերպության դիտորդի կարգավիճակ ստացան: Կարելի է փաստել, որ ՇՀԿ-ում այս կամ այն կարգավիճակով կենտրոնացել են 5 միջուկային տեխնոլոգիաներ ունեցող պետություններ: Իրանի միջուկային ծրագիրի աննախադեպ քաղաքական ձեռքբերումը հնարավորություն տվեց Իրանին մտնելու համաշխարային միջուկային ակումբ, որն իր անդրադարձն ունեցավ միջազգային հարաբերությունների վրա: Այս պայմաններում հետազոտողների համար նշանակալից հետաքրքրություն է ներկայացնում իրանա-չինական հարաբերությունների զարգացումը: ՉԺՀ-ն և ԻԻՀ-ն աստիճանաբար մրցակցության մեջ են մտնում ԱՄՆ-ի հետ աշխարհի տարբեր կետերում, հատկապես՝ Մերձավոր Արևելքում: Սակայն պետք է հասկանալ,որ ՉԺՀ-ի և ԻԻՀ-ի մոտեցումները շատ ավելի փափուկ են՝ ի տարբերություն ԱՄՆ-ի կոշտ դիրքորոշումների:

Չինաստանի հիմնական դաշնակիցը Մերձավոր Արևելքում Իրանն է: Եվ ինչպես նշում է Չինաստանի նախագահը՝ Սի Ցզինմպինը, իրանա-չինական հարաբերությունների զարգացումը ոչ միայն համապատասխանում է երկու երկրների հետաքրքրություններին, այլև դրական է անդրադառնում Մերձավոր Արևելքում հետագա կայունությոան վրա[2]: 2014 թվականին նրա ապրանքաշրջանառության ընդհանուր մակարդակը կազմել է 51 միլիարդ 85 միլիոն դոլար, որը 78% ավելի է, քան 2013 թվականին: Չինաստանը հանդիսանում է Իրանի նավթի հիմնական

---

[1] ***Նավասարդյան Ա.***, *<<Նոր աշխարհակարգի մարտահրավերները փոքր պետությունների դիվանագիտությանը>>, էջ8. http://www.diplomat.am/publ/authors/arman_navasardyan/1/40-1-0-1353 24.06.2015թ*

[2] , ***Թորոսյան Լ.,*** *Հայկական քաղաքագիտական հանդես,Երևան 2, 2020թ .:*
Նոր աշխարհակարգի ձևաորում, Չինաստանի էներգետիկ քաղաքականության և աշխարհաքաղաքական դերակատարության համադրության առանձնահատկությունները Մերձավոր Արևելքում,

ներմուծողը[1]: Պետք է նշել, որ Չինաստանը ակտիվորեն թափանցում է իրանական շուկա չինական ֆիրմաները աշխատում են հիմնականում նավթագազային հումքի և դրանց վերամշակման վրա: Ակտիվանում է համագործակցությունը մեքենաշինության բնագավառում: Չնայած այն բանին, որ Չինաստանը չի հանդիսանում խոշոր ավտոմոբիլային արտադրող չինական <<CHERY>> ավտոմոբիլային ընկերությունը իր առաջին արտասահմանյան գործարանը հիմնեց Իրանում, որը հնարավորություն տվեց նրան մտնել համաշխարհային շուկա[2]: Իրանա-չինական կապերի կարևոր ուղղվածություն է ներդրումային համագործակցությունը[3]: Չինական <<SINOPEC>>-ը նավթամշակում է կատարում հենց Իրանի հարավ արևմտյան մասում՝ Խուզեստանի Յդավարան վայրում, որի պահեստային պաշարները կազմում են 30 միլիարդ բարել նավթ[4]: Պայմանագրի գումարը կազմում է երկու միլիարդ դոլար: Բացի այդ, Իրանը հետաքրքրություն է ցուցաբերում չինական նոր տեխնոլոգիաների կիրառման նկատմամբ: Ինչ վերաբերում է օգտակար հանածոների վերամշակման համագործակցությանը, Չինաստանը նպաստում է Իրանի ռազմական արդյունաբերության զարգացմանը՝ նրան մատակարարելով հրթիռային տեխնոլոգիաներ: Իրանը պատրաստվում է գնել մեծ քանակությամբ չինական ռազմական կործանիչներ: Յուրաքանչյուր միավորի արժեքը կազմում է 41 միլիոն դոլար:

Գլոբալ աշխարհակառուցողական դիրքորոշման հարցում Չինաստանի և Իրանի դիրքորոշումները համընկնում են[5]: Կողմերը համոզված են բազմաբևեռ աշխարհի կառուցման անհրաժեշտության հարցում, որտեղ հիմնական միջազգային խնդիրները կլուծվեն համաշխարհային հասարակության բոլոր անդամների համագործակցությամբ, ոչ թե մեկ ուժի կողմից. և՛ Իրանը, և՛ Չինաստանը բացասաբար են վերաբերվում «բռնի ուժի» քաղաքականությանը: Այսպիսով, կարող ենք հասկանալ, որ Իրանը և Չինաստանը իրենց նմանատիպ լայնածավալ համագործակցությամբ և ներդրումներով լավ օրինակ են ծառայում զարգացող պետություններին և զարգացնում են իրենք հարաբերությունները տարբեր ոլորտներում՝ առանց միջամտելու որևէ երրորդ պետության գործերին:

Խոսելով Հասան Ռոհանինիի կառավարման մասին, պետք է նշել, որ Չինաստան կատարած իր այցի ժամանակ նա հանդես եկավ անսպասելի հայտարարությամբ, որ Իրանը մտադիր է զարգացնել համագործակցությունը երկու արևելյան տերությունների՝ Ռուսաստանի և Չինաստանի հետ: Նման հայտարարությանը արևմուտքը ԱՄՆ-ի գլխավորությամբ բացասաբար արձագանքեց: Արևմուտքի և ԱՄՆ-ի համար անսպասելի էր այս հայտարարությունը, քանի որ ենթադրվում էր, որ Ռոհանին զուսպ և արևմտամետ քաղաքական գործիչ է:

Բացի դրանից, 2016 թվականի հունվարին կայացավ ՉԺՀ-ի նախագահի այցը Թեհրան: Ուշագրավ է, որ ՉԺՀ-ի ղեկավարը դարձավ առաջին առաջնորդը, որը այցելեց Իրան Արևմուտքի սանկցիաների վերացումից հետո: Հանդիպման ընթացքում երկու երկրների առաջնորդները ստորագրեցին համաձայնությունների 17 փաթեթ[6]: Դրանցից առանձնապես արժե նշել համաձայնագիրը՝ բազմակողմանի ստրատեգիական գործընկերության և դրան հարակից 25 տարվա առևտրական հարաբերությունների զարգացման վերաբերյալ: Այդ ծրագրի հիմնական նպատակը հանդիսանում է ապրանքաշրջանառությունը. 10 տարվա ընթացքում հասցնել 600 միլիարդ դոլարի: Ստորագրվել է նաև հուշագիր՝ ատոմային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործելու վերաբերյալ:

---

[1] https://www.luys.am/img/artpic/small/edea3ab461effa3b700c08-China-iran-turkey.pdf

[2] https://www.nbcnews.com/id/wbna20246342

[3] https://www.ifri.org/fr/publications/briefings-de-lifri/washington-teheran-pourparlers-de- gaillaud_washington_teheran_2021 https://www.ifri.org/fr/publications/briefings-de-lifri/washington-teheran-pourparlers-de-vienne-jcpoa-peuvent-aboutir

[4] https://asia.nikkei.com/Economy/Foreign-oil-companies-chomp-at-the-bit-to-return-to-Iran

[5] *Թորոսյան Լ., Նոր աշխարհակարգի ձևավորում չինաստանի էներգետիկ քաղաքականության և աշխարհաքաղաքական դերակատարության համադրության առանձնահատկությունները Մերձավոր Արևելքում, Հայկական քաղաքագիտական հանդես,Երևան 2, 2020թ,*

[6] https://www.cnbc.com/2016/01/25/china-tilts-to-iran-as-xi-caps-visit-with-17-accords.html

Այսպիսով, փոխադարձ դիվանագիտական ջանքերի արդյունքում բեկում առաջացավ իրանա-չինական հարաբերություններում, որն ունի բոլոր հնարավորությունները դառնալու բազմաբևեռ: Չինաստանը Իրանի համար փրկության միջոց է տնտեսական փլուզումից խուսափելու համար, որը կարող էր տեղի ունենալ երկրի քաղաքական և տնտեսական հայացքների բևեռացման հետևանքով՝ կապված համաշխարհային երկրների, տվյալ դեպքում՝ ԱՄՆ-ի և Եվրոպայի հետ: Այսպիսով, կարող ենք գնահատել, որ ի տարբերություն շատ երկրների, Չինաստանը օգնում է իր դաշնակիցներին, այս դեպքում՝ Իրանին, որը կարողացավ Չինաստանի շնորհիվ խուսափել տնտեսական լրջագույն անկումից, և պետք է նշել, որ սա ինչ-որ չափով արդյունքն էր Իրանի նախագահ Հասան Ռոհանիի Չինաստան այցի ժամանակ իր հանդես եկած անսպասելի հայտարարության:

Փաստենք, որ Իրանի իշխանությունները համարում են, որ Չինաստանն այն երկիրն է, որը կարող է արմատական որոշումներ կայցնել և հետագայում կարող է դառնալ գերտերություն, մարտահրավեր նետել ԱՄՆ-ին: Արևմուտքից Իրանին ճնշում է ԱՄՆ–ն, արևելքից՝ արագ զարգացող Չինաստանը: Իրանը չի ցանկանա դառնալ առճակատման հարթակ այդ երկու հսկաների համար: Գերխնդիր է համարվում այն հարցը, թե ինչպիսին կլինի Իրանի ընտրությունը: Պետք է նշել, որ եթե Իրանը ընտրի Չինաստանին, ապա մշտապես ապահոված կլինի գնորդներով, քանի որ երկրի արտահանման 80%-ը կապված է նավթի և գազի արդյունաբերության հետ: Բացի այդ, չինական ներդրումների շնորհիվ էր Իրանի տնտեսությունը խուսափում փլուզումից, քանի որ այն փլուզման եզրին էր պատժամիջոցների արդյունքում, բայց Իրանը դիմադրեց այդ պատժամիջոցներին Չինաստանի ֆինանսական աջակցության շնորհիվ:

Եթե Իրանն ընտրի ԱՄՆ-ին, որը քիչ հավանական է, ապա այս դեպքում էլ նրան միանշանակ լավ հետևանքներ չեն սպասվում: Ի տարբերություն Չինաստանի, նույնիսկ եթե պատժամիջոցները վերացվեն ԱՄՆ-ի կողմից, արևմուտքի երկրներից թեկուզ մի քանիսը դժվար թե ներմուծեն իրանական նավթ և գազ: Այդ իսկ պատճառով ստեղծված իրավիճակով կարծես թե Իրանի և Չինաստանի համագործակցությունը շատ ավելի իրատեսական է: Չինաստանը ի դեմս Իրանի տեսնում է իր պոտենցիալ գործընկերոջը Ասիայի տարածքում: Ի հակադրություն Իրանի՝ արևելքում Սուդյան Արաբիան խթանիչ հնարավորություններ չի առաջարկի Չինաստանին: Այսպիսով, որքան էլ որ Չինաստանը ձգտի չեզոք երևալ ԱՄՆ-ի և Արևմուտքի առջև, Պեկինը անխուսափելիորեն ուղղված կլինի դեպի Իրան: Իրանը վճռական էր իր խոր մեկուսացումից դուրս գալու և համաշխարհային տնտեսության հետ վերամիավորվելու հարցում, ինչպես նաև Չինաստանի և ԱՄՆ-ի <<p5+1>> (5 + 1 խումբ (անգլ.՝ P5+1, E3+3), վեց մեծ տերությունների համաժողով, որոնք միավորել են իրենց ջանքերը Իրանի միջուկային ծրագրի օգտագործումը ռազմական նպատակներով կանխելու համար) ձևաչափով բանակցություններում դատավոր միջնորդ հանդես գալու հարցում: Բայց այդ բանակցությունները վերաբերվում էին Թեհրանի նկատմամբ երկարատև ստրատեգիային: Չինաստանի նպատակն է Իրանի հետ բազմակողմանի գործընկերության աստիճանական աճ ունենալ, որը հիմնվում է փոխըմբռման և փոխհարաբերության վրա, և Իրանին տեսնել որպես պոտենցիալ ուժ, որպես իր գործընկեր, որը կարող է գործունեություն ծավալել Արևելքում և Ասիական տարածաշրջանում, որտեղ շատերը Չինաստանի հզորացումը դիտում են որպես սպառնալիք: Չիանստանի նախագահ Խինջին Փինգի 2016 թվականին Իրան կատարած այցը քաղաքական բարի կամքի արտահայտություն էր: Չինաստանի և այլ տարածքների միջուկային բանակցությունների լայնածավալ համագործակցության վերաբերյալ Չինաստանի և Իրանի միջուկային բանակցությունները, Չինաստանի դերը ընդունելի գործողությունների ծրագրում այնքան էլ հասկանալի չեն: Իրանի միջուկային բանակցություններում առաջատար դերը պատկանում էր, իհարկե, ԱՄՆ-ին և Իրանին: Այնուամենայնիվ, Չինաստանը նշանակալից դեր խաղաց՝ համոզելու Իրանի առաջնորդներին բազմաթիվ շահութաբերության վերաբերյալ մասնավորապես Չինաստանի էական օժանդակությամբ, որ Իրանը կստանա, եթե իր միջուկային ծրագրով հարմարվի միջազգային կոնցեռնին: Պաշտպանելու համար Իրանի <<իրավունքների>> միջազգային

ճանաչումն ու ուրանի հարստացումը՝ Պեկինը Թեհրանի նկատմամբ ցուցաբերեց աճող ազդեցություն և պատրաստակամություն և ավելի ակտիվ դեր կատարեց Միջին Արևելքում Իրանի՝ ուրանի հարստացման ծրագրի նկատմամբ: Այսպիսով, կարող ենք փաստել Չինաստանի նվիրվածությունը Իրանին, քանի որ Չինաստանը վտանգելով իր հարաբերությունները, <<p5+1>>-(5 + 1 խումբ (անգլ.՝ P5+1, E3+3), վեց մեծ տերությունների համաժողով, որոնք միավորել են իրենց ջանքերը Իրանի միջուկային ծրագրի օգտագործումը ռազմական նպատակներով կանխելու համար) ձևաչափի անդամ երկրների հետ օժանդակեց Իրանի միջուկային ծրագրին և ուրանի հարստացմանը:

Սկսած 2012 թվականից՝ Չինաստանը կտրուկ կրճատեց Իրանից նավթի առևտուրը, չնայած որ այդպիսի կրճատումը ավելի շատ կապված էր ԱՄՆ-ի միակողմանի պատժամիջոցների հետ, քան ՄԱԿ-ի: Չինաստանի այս հաղորդագրությունն ուներ դիվանագիտական փոփոխությունների հետ կապված երկու պատճառ՝

1.Իրանի՝ միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների ձախողումը՝ կապված Իրանի հնարավոր միջուկային զենքի ծրագրի հետ, կարող էր հանգեցնել պատերազմի:

2.Եթե Իրանի և ԱՄՆ-ի միջև պատերազմից խուսափելը հնարավոր լիներ, համաձայնության կգային, և միջազգային արգելքները կվերացվեին:

Սակայն Չինաստանը պատրաստվում էր ընդարձակել օգնությունն Իրանին արդյունաբերական և տնտեսական զարգացման գործում: Չինաստանի պաշտոնատար անձինք մոտավորապես 2010-2011 թվականներին Իրանի միջուկային հարցի դիվանագիտական հարցի ձախողումը դիտում էին որպես հնարավոր նախապայման Իրանի և ԱՄՆ-ի միջև ռազմական բախման: Տնտեսական պատերազմը պարսկական ծովածոցում կլիներ մի նոր աղետ Չինաստանի համար, բայց ավելի մեծ աղետ կլիներ՝ դարձնելով այն ամբողջական ավերակ 1991 և 2003 թվակների տնտեսական պատերազմներից հետո: Ռազմական հակամարտությունը, որ առաջ էր եկել քաղաքական բանակցության ձախողման արդյունքում ԱՄՆ-ին շնորհում է ռազմական առավելություն Պարսկական ծովածոցում, որը չի բխում ո՛չ Իրանի և ո՛չ էլ Չինաստանի շահերից:

Չինաստանը գնահատեց Իրանի հավաստիացումներն առ այն, որ նա հետամուտ չէ զարգացնելու միջուկային զենք, և սրա հիման վրա աջակցեց Իրանի միջուկային հարստացման նախապատրաստումներին:

Ամիսներ տևած բանակցությունների ընթացքում Չինաստանը ստանձնեց միջնորդի դեր՝ հորդորելով երկու կողմերին գնալ փոխզիջման, հավասարակշռել և տալ համապարփակ վերջնական լուծում Իրանի միջուկային հարցին: Թեհրանը հետևեց Պեկինի խորհրդին՝ գնալ անհրաժեշտ զիջումների՝ միջուկային հարցի դիվանագիտական հարցի լուծման համար: Չինաստանի դերը համաձայնության հասնելու հարցում կարևոր ձեռքբերում էր իրանա-չինական համագործակցության մեջ :

Իրանա-չինական ռազմական համագործակցությունը միացյալ գործունեության գործողությունների ծրագրի՝ <<JCPOA>>-ի (Գործողությունների համատեղ համապարփակ ծրագիր (JCPOA)) քաղաքական համաձայնություն է Իրանի և մի խումբ պետությունների միջև, որոնք հայտնի են որպես 5 + 1՝ Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ շրջանակներում Իրանի արգելքների վերացմանը զուգընթաց: Նորմալ հարաբերությունների հաստատումը Իրանի և Արևմուտքի միջև ստեղծեց ցանկալի մթնոլորտ մեծ իրանա-չինական ռազմական համագործակցության համար:<<JCPOA>>-ն՝ գործողությունների համատեղ համապարփակ ծրագիրը, քաղաքական համաձայնություն է Իրանի և մի խումբ պետությունների միջև, որոնք հայտնի են որպես 5 + 1, Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ: Միացյալ համագործակցային ծրագրով բանակցությունները Իրանի նախագահ Հասան Ռոհանիի օրոք ընթանում էին հետաքրքիր արագությամբ[1]: 2014 թվականին Իրանի նախագահ Հասան Ռոհանիի՝ սեպտեմբերի

[1] https://www.armscontrol.org/factsheets/JCPOA-at-a-glance

այցը անշուշտ իր ազդեցությունն ունեցավ Չինաստանի բարձրակարգ որոշման վրա՝ զարգացնելու իրանա-չինական համագործակցությունը կենսական պաշտպանության հարթությունում[1]: Մի շարք չինական ռազմական տեխնիկաներ գրավիչ կլինեն Իրանի համար: Դրանցից շատերը զարգացվել էին ԱՄՆ-ին հակադարձելու համար և դարձել էին շատ հզոր: Չինաստանի ռազմավարությունը, ըստ որի՝ արգելվում էր ԱՄՆ-ի նավերի մուտքը Չինաստանի սահմանամերձ ջրային տարածքներ, նույնպես արժանանում էր Իրանի հավանությանը:

Տնտեսության բնագավառում Չինաստանը կհանդիպի եվրոպական ընկերությունների ուժեղ մրցակցությանը պայմանագրեր կնքելիս՝ բախվելով դրանց տեխնոլոգիական որակների առավելություններին: Անվտանգ տարածքում Չինաստանը կունենա համեմատաբար մեծ առավելություններ: Կա որոշակի հավանականություն, որ եվրոպական ռազմական համակարգը կարող է գերազանցել Չինաստանի կարողությունները, բայց անհավանական է, որ եվրոպական կառավարությունը ապահովի մասնակցություն կամ ծառայություն՝ ի դեմս ԱՄՆ-ի նորացված արգելքների: Դժվար թե եվրոպական որևէ երկիր խզի իր հարաբերությունները ԱՄՆ-ի հետ կամ օգնի իրանական ռեժիմին ճնշելու ներքին այլակարծությունը՝ խախտելով մարդու իրավական նորմերը[2]:

Ռուսաստանը կլինի Չինաստանի ռազմական մրցակիցը ռազմական բնագավառում, բայց Չինաստանը 30 տարուց ավելի է՝ աջակցում է Իրանին այդ բնագավառում: Բոլոր առաջատար ուժերից Չինաստանի համար թերևս ողջունելի է իրանցիների գերակա իշխանությունը Պարսից ծովածոցում,արևելքում և ամբողջ Ասիայում՝ Չինաստանի գերակա իշխանության հաստատման համար: Խոսելով Չինաստան-Իրան 25ամյա դարի պայմանագրի մասին՝ պետք է առանձնացնել Պեկինի և Թեհրանի ստորագրած 25 տարվա համագործակցության համաձայնագիրի մասին, քանի որ երկու երկրներն էլ ենթարկվում են պատժամիջոցների ԱՄՆ-ի կողմից: Համաձայնագիրը ստորագրվել է Թեհրանում, Իրանի արտգործնախարար Մոհամադ Զարիֆի և Չինաստանի արտգործնախարար Վանգի Յի-ի կողմից: Դրա մանրամասները պաշտոնապես դեռ չէն հայտարարվում սակայն <<The New York Times>>ի տեղեկություններով՝ շաբաթ օրը կնքված պայմանագրի համաձայն՝ Չինաստանը պարտավորվում է առաջիկա 25 տարիներին Իրանում շուրջ 400 միլիարդ դոլարի ներդրում կատարել, այդ թվում՝ բանկային և հեռահաղորդակցության ոլորտներում, իրանական նավահանգիստներում և երկաթուղիներում, թերթի տեղեկություններով՝ զգալի ներդրումներ են նախատեսվում նաև առողջապահության և տեղեկատվական տեխնոլոգիաների ասպարեզներում[3]: «Այս ամենի դիմաց, ըստ իրանցի պաշտոնյաների, Թեհրանը խոստանում է Չինաստանին անխափան կերպով նավթ վաճառել, այն էլ՝ շուկայականից զգալիորեն ցածր գներով», - գրում է<<The New York Times>>-ը՝ հիշեցնելով, որ առաջին անգամ նման համապարփակ պայմանագիր կնքելու նախաձեռնությամբ հանդես էր եկել Չինաստանի նախագահ Սի Ծինպինը 2016-ի հունվարին Թեհրան կատարած պաշտոնական այցի ժամանակ[4] : Չինաստանի արտգործնախարարի հավաստմամբ էլ՝ Պեկինը Թեհրանի հետ հարաբերություններում ամենաշատը գնահատում է այն իրողությունը, որ իրանական ղեկավարությունը զերծ է արտաքին ազդեցություններից: «Իրանը այլ պետությունների հետ հարաբերությունների վերաբերյալ անկախ որոշումներ է կայացնում: Այն նման չէ այլ պետությունների, որոնք իրենց որոշումները փոխում են մեկ հեռախոսազանգի ազդեցության տակ», - Թեհրանում հայտարարել է ՎանԻն: Այսպիսով այս դարի պայմանագիրը, որը կնքվել է Իրանի և Չինաստանի միջև, ճակատագրական է դառնում ամբողջ աշխարհի համար:

---

[1] https://www.fmprc.gov.cn/mfa_eng/zxxx_662805/t1159549.shtml

[2] **Лексина Е.А,** *Китайско-иранские отношения : Реалии и перспективы.*

[3] https://www.nytimes.com/2021/03/27/world/middleeast/china-iran-deal.html

[4] https://www.nytimes.com/2020/07/11/world/asia/china-iran-trade-military-deal.html

Գրականություն

1. **Թորոսյան Լ,** Նոր աշխարհակարգի ձևավորում. Չինաստանի էներգետիկ քաղաքականության և աշխարհաքաղաքական դերակատարության համադրության առանձնահատկությունները Մերձավոր Արևելքում,<<Հայկական քաղաքագիտական հանդես>>,Երևան, 2, 2020թ, (հղումը կատարվել է՝21,09,2021):
2. **Նավասարդյան Ա,** Նոր աշխարհակարգի մարտահրավերները փոքր պետությունների դիվանագիտությանը http://www.diplomat.am/publ/authors/arman_navasardyan/1/40-1-0-1353 24.06.2015Թ (հղումը կատարվել է՝21.09.2021):
3. **Лексина Е.А,** Китайско-иранские отношения : Реалии и перспективы, 21.06.2016г. (Дата обращения:21.09.2021).
4. https://www.luys.am/img/artpic/small/edea3ab461effa3b700c08-China-iran-turkey.pdf (հղումը կատարվել է՝21.09.2021):
5. https://www.nbcnews.com/id/wbna20246342 08,13, 2007s (հղումը կատարվել է՝21.09.2021):
6. https://www.ifri.org/fr/publications/briefings-de-lifri/washington-teheran-pourparlers-de-vienne-jcpoa-peuvent-abouti gaillaud_washington_teheran_ 06.09.2021s (հղումը կատարվել է՝21.09.2021):
7. URL:https://asia.nikkei.com/Economy/Foreign-oil-companies-chomp-at-the-bit-to-return-to-Iran 02,18,2016s (հղումը կատարվել է՝21.09.2021):
8. https://www.cnbc.com/2016/01/25/china-tilts-to-iran-as-xi-caps-visit-with-17-accords.html /25/01/2016s (հղումը կատարվել է՝21,09,2021):
9. URL:https://www.armscontrol.org/factsheets/JCPOA-at-a-glance (հղումը կատարվել է՝21.09.2021):
10. https://www.fmprc.gov.cn/mfa_eng/zxxx_662805/t1159549.shtml (հղումը կատարվել է՝21.09.2021):
11. https://www.nytimes.com/2021/03/27/world/middleeast/china-iran-deal.html 03/27/2021s (հղումը կատարվել է՝21.09.2021):
12. https://www.nytimes.com/2020/07/11/world/asia/china-iran-trade-military-deal.html 07/11/2020s (հղումը կատարվել է՝21.09.2021):

ՀՏԴ 93/94(091)

Տաթև Սարգսյան
Արցախի պետական համալսարան
Պատմության և իրավագիտության
ֆակուլտետ
Պատմություն 3-րդ կուրս
Ղեկավար՝
պ. գ. թ., դոցենտ Ն. Պ. Սարումյան

ՇՈՒՇԻԻ ՋԱՐԴԵՐԸ 102 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՎ ԱՅՍՕՐ

Բանալի բառեր՝ *Արցախ, Շուշի, Փանահ խան, կոտորած, համագումար, գեներալ-նահանգապետ, Ղազանչեցոց,Կանաչ ժամ:*

Հոդվածում ցույց է տրվում, որ Շուշին հայ ժողովրդի ամենահին բնօրրաններից մեկն է, որը հաճախակի է ենթարկվել հարձակումների և ավերածությունների:
Փորձ է կատարվել լուսաբանել Շուշիի դերը արցախահայության գոյապայքարում և քաղաքի հայկական տեսքի վերականգնումը. մշակույթի, տնտեսության զարգացումը:
Հոդվածում ներկայացվում են 102 տարի անց հայկական Շուշիի անկումը և մշակութային ավերածությունները թշնամու կողմից:

Татев Саркисян

ШУШИНСКАЯ РЕЗНЯ 102 ГОДА НАЗАД И СЕГОДНЯ

Ключевые слова-*Арцах,Шуши, Панах Хан, резня, конгресс, генерал-губернатор, Казанчецоц, Канач Жам.*

В статье указано, что Шуши является одной из древнейших колыбелей армянского народа, которая неоднократно подвергалась нападениям и разрушениям.
Сделана попытка осветить роль Шуши в выживании армян Арцаха и восстановления армянского облика, развитие культуры и экономики в городе.
В статье представлено падение армянского Шуши разрушение культуры спустя 102 года.

Tatev Sargsyan

THE SHUSHI MASSACRES 102 YEARS AGO AND TODAY

Keywords- *Artsakh, Shushi, Panah Khan, massacre, congress, governor-general, Ghazanchetsots, Kanach Zham.*

The attempt is made to highlight the role of Shoushi in the survival of the Armenians of Artsakh and the restoration of the Armenian characteristics of the city and development of culture and economy.
The article presents the fall of the Armenian Shoushi after 102 years and cultural destruction by the enemy.

Արդի ժամանակաշրջանում Շուշիի կորստով ողջ հայությունը կանգնել է փաստի առաջ, և չխոսել Շուշիի մասին սխալ կլիներ, որովհետև Շուշին հայկական բնակատեղի է եղել անհիշելի

ժամանակներից: Շուշին՝ որպես մշտական և բազմամարդ գյուղաքաղաք, հայտնի է 1752 թվականից, իսկ քաղաքի կարգավիճակ ստացել է Ռուսական կայսրության իշխանությունների կողմից՝ 1840 թվականին: Մինչ այդ Շուշին հայտնի էր որպես պաշտպանական հզոր կառույց, որը հայկական սղնախների հին պատնեշների վրա կառուցել է Ղարաբաղի Փանահ խանը[1]:

1813 թ. հոկտեմբերի 12-ին կնքված Գյուլիստանի հաշտության պայմանագրով ամբողջ Արցախը Շուշիի հետ միասին անցավ Ռուսական կայսրության տիրապետությանը[2]: Ռուսական տիրապետության հաստատումից հետո Շուշին տնտեսական լուրջ վերելք ապրեց:

1904 թ. տվյալներով[3]՝ Շուշի քաղաքում գործում էին 870 արհեստանոց, 3000 արհեստավոր, 2000 առևտրական: 1910 թ. տվյալներով[4]՝ այստեղ կային նաև երկու արդյունաբերական փոքր ձեռնարկություններ՝ 18 բանվորով: Շուշիի առևտրաարհեստագործական աշխույժ հարաբերությունների արտահայտությունն էին նաև երեք հյուրանոցները, 18 իջևանատներն ու հասարակական սննդի 94 օբյեկտները:

20-րդ դարի սկզբին Շուշին շարունակում էր մնալ տարածաշրջանի զարգացած քաղաքներից մեկը, դա էր պատճառը, որ տվյալ ժամանակաշրջանի Արցախի համար շրջադարձային իրադարձությունները տեղի էին ունենում հենցայս քաղաքում: Դա են փաստում նաև արցախահայության համագումարները: Առաջին համագումարը տեղի է ունեցել հենց Շուշիում՝ 1918թ. հուլիսի 22–28-ը[5], որին Լեռնային Ղարաբաղի բոլոր շրջաններից մասնակցում էին 180 պատգամավորներ:

Խորհրդակցական ձայնով մասնակցում էին նաև Շուշի քաղաքում գործող հասարակական հոսանքների ու կազմակերպությունների ներկայացուցիչներ: Համագումարն Արցախը հայտարարեց վարչաքաղաքական անկախ միավոր, ընտրեց Ազգային խորհուրդ և կազմեց նոր կառավարություն՝ կոալիցիոն սկզբունքով: Այն ստացավ «Ղարաբաղի ժողովրդական կառավարություն» անունը[6]:

Տվյալ ժամանակաշրջանում խորանում էին ազգամիջյան բախումները: Սակայն Ղարաբաղի իշխանությունները մտադիր էին հարցը լուծել խաղաղ ճանապարհով, ինչը չենք կարող նշել Ադրբեջանի ղեկավարության մասին, որը չէր հրաժարվել Ղարաբաղը նվաճելու իր ծրագրերից:

Հայաստանի օդը դեռ չէր մաքրվել մայիսյան կռիվների վառոդի ծխից, երբ թուրքական զորքերը *Ղազախ–Ադստաֆա* գծով շարժվեցին դեպի Բաքու՝ նպատակ ունենալով մի կողմից՝ կանխել գերմանացիներին, մյուս կողմից՝ գրավել Բաքուն և նախադրյալներ ստեղծել համաթուրքական նպատակների իրականացման համար[7]: Դեպի Բաքու շարժվող թուրքական բանակից առանձնացավ մի զորախումբ և Կովկասյան 2-րդ դիվիզիայի հրամանատարներից Ջեմիլ Ջահիդ բեյի գլխավորությամբ գնաց դեպի Ղարաբաղ ու բանակատեղի դարձրեց Աղդամը՝ Լեռնային Ղարաբաղի սահմանային դարպասներից մեկը: Թուրք զորահրամանատարը, վստահ իր ուժերին, ծրագրել էր սրընթաց գրոհով վերցնել Շուշին՝ Արցախ աշխարհի սիրտը և նրա հավերժության գրավականը:

Սեպտեմբերի սկզբին հակաարցախյան ծրագրեր որոճացող Ջամիլ Ջահիդ բեյը մի գրությամբ հայերից պահանջեց ընդունել Ադրբեջանի գերիշխանությունը և ոչ մի կապ չունենալ ո՛չ Զանգեզուրի,ո՛չ էլ այնտեղ նստած Անդրանիկի հետ[8]:

Պետք է պատասխան տրվեր, և արցախահայության ներկայացուցիչները հավաքվեցին իրենց

---

[1] ***Սիմոնյան Ա.,*** *Շուշիի ավերումը,նրա հայ բնակչության ջարդը.պատճառները,հետևանքներն ու պատմական դասերը,Երևան, 2021,էջ 59:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, էջ 61:*

[4] *Նույն տեղում:*

[5] ***Հարությունյան Հ.,*** *Շուշին արցախյան գոյապայքարում (1918-1920),<<Պատմաբանասիրական հանդես>> N1,Երևան, 2013, էջ 24:*

[6] *Նույն տեղում:*

[7] *Նույն տեղում:*

[8] ***Ուլուբաբյան Բ.,*** *Արցախի պատմությունը նախնադարից մինչև մեր օրերը, Երևան 1994,էջ 205:*

երկրորդ համագումարին, որը տեղի ունեցավ սեպտեմբերի առաջին կեսին, Շուշիում[1]:

Այն պետք է քննարկեր գավառի ներքին ու արտաքին կյանքին վերաբերող մի շարք հարցեր: Ջահիդ բեյի անունից երկու վերջնագիր է ստացվում՝ մեկն ուղղված Ղարաբաղի հայոց հոգևոր առաջնորդին, մյուսը՝ գավառի հայ ազգաբնակչությանը: Վերջնագիրը բովանդակում էր՝ երեք օրվա ընթացքում բոլոր զենքերը հանձնել տաճկական հրամանատարությանը և անձնատուր լինել: Երկրորդ համագումարը սեպտեմբերի 11-ի նիստում «Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը» վերանվանեց «Ղարաբաղի հայոց ժողովրդական խորհուրդ»[2]: Այն պիտի իրագործեր համագումարի ընդունած շատ կարևոր մի որոշում՝ ընտրեր Աղդամ մեկնող պատվիրակության անդամներին: Կազմվեց պատվիրակություն, որը սեպտեմբերի 15-ին մեկնեց Աղդամ ու ներկայացավ Ջահիդ բեյին: Վերջինս, որ արդեն տեղյակ էր համագումարի որոշումներին, առանց պատվիրակների խոսքը լսելու նրանց ներկայացրեց նոր պահանջներ. 1. հպատակվել Ադրբեջանի կառավարությանը, 2. զինաթափ լինել, 3. ճանապարհ տալ թուրքական և ադրբեջանական զորքերին՝ անցնելու Շուշի[3]:

1918 թ. սեպտեմբերի 17–22-ին տեղի ունեցավ արցախահայության երրորդ համագումարը կրկին Շուշիում: Պատգամավորների ընդհանուր թիվը հասնում էր 200-ի[4]: Միակամ որոշվեց՝ արյունահեղությունից խուսափելու համար առանց կռվի գնալ համաձայնության: Սեպտեմբերի 19-ին Աղդամ ժամանեց Կովկասում գործող թուրքական բանակի գլխավոր հրամանատար Նուրի փաշան: Նուրին վերջնագիր ուղարկեց Շուշիի հայությանը՝ պահանջելով զինաթափվել ու ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Երրորդ համագումարը սեպտեմբերի 20-ի նիստում Նուրի փաշայի վերջնագիրը քննարկելուց հետո որոշեց թուրքերի հետ բանակցելու համար նոր պատվիրակություն ուղարկել Աղդամ: Սեպտեմբերի 21-ին բանագնացների խումբը դուրս է գալիս Շուշիից: Սեպտեմբերի 22-ին թուրքական զորքը մտավ Լեռնային Ղարաբաղ: 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարով Թուրքիան զորքերը հետ քաշեց Անդրկովկասից, մաքրեց նաև Ղարաբաղը: Անդրկովկասում թուրք–գերմանական նվաճողներին փոխարինեցին անգլիացի «խաղաղարարները»: 1919 թ. հունվարի 15-ին Ադրբեջանի կառավարությունը հայատյաց Խոսրով բեկ Սուլթանովին նշանակեց Շուշիի, Զանգեզուրի, Ջեբրայիլի, Ջիվանշիրի գեներալ-նահանգապետ: Նորաթուխ նահանգապետը ժամանեց Շուշի փետրվարի 10-ին և բնակության վայր ընտրեց քաղաքի թաթարական թաղամասը:

1919 թ. փետրվարի 10-ից 21-ը Շուշիում գումարվեց արցախահայության 4-րդ համագումարը, որին մասնակցում էր 50 պատգամավոր: Արտահայտելով ժողովրդի միասնական կամքը՝ համագումարը որոշում է. «Չճանաչել Ադրբեջանի իշխանությունը հայկական Ղարաբաղի սահմաններում և բողոքել բրիտանական ներկայացուցչությանը, Բաքվի բրիտանական զորքերի հրամանատար Թոմսոնին, Հայաստանի Հանրապետությանը, Ադրբեջանի պառլամենտի նախագահին՝ Ադրբեջանի ոտնձգությունների դեմ»[5]:

Սուլթանովը հունիսի 2-ին Շուշիի ադրբեջանական թաղամաս մտցրեց քրդական մի բանդա՝ 3 հազար մարդ, ինչպես նաև 1500 զինված ադրբեջանական զորախումբ[6]: Հունիսի 2-ին և 3-ին Շուշիի հայկական թաղամասից բոլոր ադրբեջանցիները ծածուկ հեռացան ադրբեջանական թաղամաս: Հունիսի 3-ին թուրքական զորամասերը փակեցին Շուշիից դեպի Գորիս տանող խճուղին: Համակողմանի նախապատրաստությունից հետո՝ հունիսի 4-ին՝ առավոտյան ժամը 10- ին, Սուլթանովի հրամանով սկսվեց Շուշիի հայկական թաղամասի գնդակոծումը:

Եվ այդպիսի լարված իրավիճակում 1919թ. օգոստոսին, Շոշ գյուղում հրավիրվեց

---

[1] *Նույն տեղում:*

[2] ***Հարությունյան Հ.,*** *նշվ.աշխ., էջ 27:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Նույն տեղում:*

[5] *ՀԱԱ, ֆ. 252, ց. 1, գ. 1, թ. 18–19, ֆ. 200, ց. 1, գ. 193, մաս 1, թ. 223, տե՛ս* ***Հարությունյան Հ.****, Շուշին արցախյան գոյապայքարում (1918-1920), Երևան, 2013, էջ 36:*

[6] ***Հարությունյան Հ.,*** *նշվ.աշխ.,էջ 36:*

արցախահայության յոթերորդ համագումարը[1]: Զգտելով խուսափել նոր արյունահեղությունից՝ ժամանակ շահել և կենտրոնացնել առկա ուժերը, համագումարը գնաց փոխզիջման: Համագումարի կողմից ընտրված 16 հոգուց բաղկացած պատգամավորությունը օգոստոսի 22-ին Սուլթանովի հետ քննարկեց և ստորագրեց 26 կետից բաղկացած համաձայնագիր, որով Լեռնային Ղարաբաղը մինչև Փարիզի խաղաղության կոնֆերանսում հարցի վերջնական լուծումը իրեն ժամանակավորապես համարում է Ադրբեջանի սահմաններում: Ադրբեջանի զորքերը չեն մտնում Ղարաբաղ, երկրամասի գործերը առաջվա նման վարելու էին Հայոց Ազգային Խորհուրդը և հայության համագումարները[2]:

Սակայն Ադրբեջանական կողմը շարունակաբար խախտում էր համաձայնագրի պայմանները: Ավելին, 1920 թ. փետրվարի 19-ին Սուլթանովն իր կառավարության անունից Ղարաբաղի Հայոց Ազգային խորհրդին հայտարարեց, որ այլևս խաղաղության վեհաժողով գոյություն չունի, որ Ղարաբաղի հարցը պետք է լուծվի սեփական նախաձեռնությամբ, և Ազգային խորհրդից պահանջեց առաջիկա համագումարում վերջնականապես վճռել Ադրբեջանին ենթարկվելու հարցը: Ի պատասխան Սուլթանովի վերջնագրի՝ Ղարաբաղի Հայոց Ազգային խորհուրդը 1920 թ. փետրվարի 28-ին Շոշ գյուղում հրավիրում է 8-րդ համագումարը[3]: Համագումարը Շուշիում գումարելու Սուլթանովի ցանկությունը, կարելի է ասել, կատարվեց մասամբ: Բանն այն է, որ Ազգային խորհուրդը նախապես տեղեկացնում է համագումարի պատգամավորներին քաղաք չգալ, այլ հավաքվել Շոշ գյուղում: Սակայն չի հաջողվում այդ մասին տեղյակ պահել բոլոր պատգամավորներին: Դա էր պատճառը, որ համագումարին հրավիրված 127 պատգամավորներից 50-ը հավաքվեցին Շուշիում, իսկ 77-ը՝ Շոշ գյուղում[4]:

1920 թ. գարնանը Ղարաբաղում կենտրոնացված էր ավելի քան 10 հազար զինվոր: Շտապ կազմակերպվեց քրդական մի դիվիզիա: Շուշի ժամանեց Նուրի փաշան՝ 10 թուրք սպաների ուղեկցությամբ[5]:

1920թ. մարտի 22-23-ին՝ Նովրուզ բայրամի՝ Ամանորի օրերին, ադրբեջանական զորքերը և տեղի մահմեդականները, Մեծ Բրիտանիայի աջակցությամբ Ղարաբաղի գեներալ-նահագապետ նշանակված Խոսրով բեկ Սուլթանովի հրահանգով, ներխուժում են Շուշիի հայկական թաղամաս ու հիմնահատակ ավերում, թալանի, սրի մատնում այն, արյան խրախճանք կատարում Շուշիի հայկական թաղամասում[6]: Թիֆլիսում տպագրվող «Սլովո» թերթը 1920թ. ապրիլի 16-ին գրել է. «Քաղաքի հայկական մասում քարը քարի վրա չի մնացել»[7]: Մոտավոր տվյալներով՝ զոհվածների թիվը հասնում էր 10 հազարի:

Մի քանի հազար բնակիչների հաջողվեց, օգտվելով ամպամած եղանակից, խուսափել կոտորածից և հեռանալ քաղաքից Վարանդայի ուղղությամբ: «... Ողջ մնացածները թողեցին մեռնող «Փոքրիկ հայկական Փարիզը», ինչպես շատերը կոչում էին Շուշին»,- գրում է Շուշիի իրադարձությունների մասնակիցը[8]:

1920թ. կոտորածներից հետո Շուշին կարողանում է հառնել փլատակներից: Շուշիում, ինչպես նաև ողջ Ղարաբաղում հաստատվում են խորհրդային կարգեր: Զարգանում է Շուշիի մշակույթը, տնտեսությունը, և քաղաքը նորից դառնում է հայկական տարրի միավորիչ ուժը:

1992թ. Շուշիի ազատագրությունը նոր թափ է հաղորդում արցախյան գոյապայքարին: Կանգուն մնալով շուրջ 28 տարի՝ 2020թ. նոյեմբերը նորից ճակատագրական եղավ Շուշիի համար, քանի որ 2020թ. սեպտեմբերյան պատերազմից հետո հայկական Շուշին բռնազավթվեց թշնամու

---

[1] ***Բալայան Վ.,*** *Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը,Երևան, 2002, էջ 301:*

[2] ***Բալայան Վ.,*** *նշվ.աշխ., էջ 302:*

[3] ***Հարությունյան Հ.,*** *նշվ.աշխ., էջ 38:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Նույն տեղում, էջ 39:*

[6] ***Մարումյան Ն.****,Շուշիի 1920 թ. մարտյան ոճրագործությունը ներքաղաքական ու արտաքաղաքական գործընթացների համատեքստում,Երևան, 2021,էջ 250:*

[7] ***Բալայան Վ.,*** *նշվ.աշխ., էջ 278:*

[8] ***Մարումյան Ն.****, նշվ.աշխ.,էջ 251:*

կողմից:

44-օրյա պատերազմի ժամանակ չփոխելով իր հնամենի քաղաքականությունը՝ թշնամին շարունակում է մշակութային ջարդ իրականացնել Շուշիում: 2020 թվականի հոկտեմբերի 8-ին Ադրբեջանի զինված ուժերի կողմից թիրախավորվել և հրթիռակոծվել է Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին: Այս քայլով Ադրբեջանը կոպտագույնս խախտում է միջազգային իրավունքի նորմերը, ինչպես նաև ՄԱԿ-ի և Եվրոպայի Խորհրդի շրջանակներում իր իսկ կողմից ստանձնած պարտավորությունները: Մշակութային ժառանգության վայրերի միտումնավոր ոչնչացումը պատերազմի ընթացքում իրականացվող հանցագործություն է: Պատմությունը ցույց է տալիս, որ այլոց պատկանող քաղաքակրթական արժեքների նկատմամբ անհանդուրժողականության ցանկացած դրսևորում՝ մշակութային կամ կրոնական ժառանգությանը միտումնավոր վնաս հասցնելը կամ ոչնչացնելը պետք է դատապարտվի հաստատուն վճռականությամբ[1]:

Պատերազմից հետո Ադրբեջանը փոխում է Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց տաճարի պատմաճարտարապետական ամբողջականությունը: Ադրբեջանը Շուշիի Մայր տաճարի հետ կապված գործողություններ է իրականացնում առանց Հայ առաքելական եկեղեցու հետ խորհրդակցելու, ինչն ակնհայտորեն խախտում է հայ հավատացյալների կրոնի ազատության իրավունքը: Նույնքան մտահոգիչ է, որ Ադրբեջանը սկսել է եկեղեցու ճարտարապետական տեսքի փոփոխման աշխատանքներ կատարել մինչև ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետների գնահատման առաքելության կողմից աշխատանքների սկսումը: Ակնհայտ է, որ Ադրբեջանը դիտավորյալ արգելափակում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի փորձագետների մուտքը դեպի վտանգված հայկական մշակութային ժառանգության վայրեր՝ քողարկելու իր կողմից իրականացված պատերազմական հանցագործությունները: Ադրբեջանից պնդումներ են հնչում, որ Արցախում հայկական հետք չկա, և Ղազանչեցոցն էլ ուղղափառ եկեղեցի է՝ փորձելով այդպես արդարացնել իրենց հանցագործ արարքները[2]:

2020 թվականի պատերազմից անմիջապես հետո պայթեցվել է նաև Կանաչ ժամը: Վնասվել են գմբեթն ու զանգակատունը: Այսօր ադրբեջանցիները անհիմն հերքելով եկեղեցու հայկական պատկանելությունը և «չընդունելով» նախկինում կատարված վերանորոգումները, ձեռնամուխ են եղել կառույցը՝ որպես ռուսական եկեղեցի «վերափոխելու»աշխատանքներին[3]:

Չնայած զինադադարից հետո անցել է արդեն 2 տարի, բայց մենք անընդհատ ականատես ենք լինում թշնամու վանդալիզմին: Ցանկանալով ամեն կերպ վերացնել մեզ՝ հայերիս, նա կտրում է մեզ արմատներից: Եվ այսօր ուղղակի մեր խնդիրն է պայքարել տվյալ վանդալիզմի դեմ և պահպանել մեր հայկականությունը:

[1] https://escs.am/am/news/7277

[2] https://www.azatutyun.am/a/31237414.html

[3] https://monumentwatch.org/hy/monument/

ՀՏԴ 327.56(479.243)(063)

Կարեն Մարտիրոսյան
ԱրՊՀ, Պատմության և իրավագիտության ֆակուլտետ, իրավագիտության բաժին, 3-րդ կուրս,
Էլ. հասցե՝ karenmartirosyan2017@mail.ru

Գիտական ղեկավար՝
ի.գ.թ Տաթև Գևորգյան

«ՃԱՆԱՉՈՒՄ՝ ՀԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ» ՍԿԶԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր՝ *ղարաբաղյան հակամարտություն, ինքնորոշման իրավունք, ճանաչում՝ հանուն փրկության, պատմական Արցախ:*

ԼՂՀ միջազգային ճանաչման խնդրի համակողմանի ուսումնասիրությունը հանդիսանում է հոդվածի հիմնական նպատակը: ԼՂՀ-ն որևէ կարգավիճակով չի կարող լինել Ադրբեջանի կազմում՝ պայմանավորված վերջինիս կողմից Արցախի հայ բնակչության էթնիկ զտումների քաղաքականության և հայատյացության, Արցախի՝ պատմական Հայաստանի անբաժան մասը լինելու հանգամանքներով: Հանգամանքներ, որոնք անհրաժեշտ են դարձնում «անջատում՝ հանուն փրկության» սկզբունքի կիրառումը ԼՂ-ի նկատմամբ՝ «ճանաչում՝ հանուն փրկության» վերաձևակերպմամբ:

Карен Мартиросян

НЕОБХОДИМОСТЬ ПРИМЕНЕНИЯ ПРИНЦИПА «ПРИЗНАНИЕ РАДИ СПАСЕНИЯ» В КАРАБАХСКОМ КОНФЛИКТЕ

Ключевые слова: *карабахский конфликт, право на самоопределение, признание ради спасения, исторический Арцах.*

Основной целью статьи является всестороннее исследование вопроса международного признания НКР. НКР не может быть в составе Азербайджана ни при каком статусе из-за проводимой Азербайджаном политики этнической чистки армянского населения Арцаха и армянофобии, и связано с тем обстоятельством, что Арцах является неотъемлемой частью исторической Армении. Обстоятельства, делающие необходимым применение принципа «отделения ради спасения» к Нагорному Карабаху путем переопределения «признания ради спасения».

Martirosyan Karen

THE NEED TO APPLY THE PRINCIPLE OF "RECOGNITION FOR SALVATION" IN THE KARABAKH CONFLICT

Keywords: *Karabakh conflict, right to self-determination, recognition for the sake of salvation, historical Artsakh.*

The main purpose of the article is a comprehensive study of the issue of international recognition of

the NKR. The NKR cannot be part of Azerbaijan with any status due to the latter's policy of ethnic cleansing of the Armenian population of Artsakh and Armenophobia, and due to the fact that Artsakh is an integral part of historical Armenia. Circumstances make it necessary to apply the principle of "separation for the sake of salvation" to Nagorno-Karabakh by redefining "recognition for the sake of salvation".

2020թ. 44-օրյա պատերազմի արդյունքում ԼՂՀ տարածքի շուրջ 72%-ն օկուպացվեց Ադրբեջանի կողմից և Հայաստանին ու Արցախին պարտադրված ակտով ԼՂՀ-ը պարփակվեց նախին ԼՂԻՄ (4,400 կմ²) տարածքից փոքր (3,170 կմ² [10]) հողակտորի վրա: Չնայած աշխարհաքաղաքական որոշ վերադասավորումներին՝ ղարաբաղյան հակամարտությունն այդպես էլ չլուծվեց: Մասնավորապես, դեռևս շարունակում է անորոշ մնալ Արցախի ժողովրդի վերջնական կարգավիճակը: Փորձենք անդրադառնալ հակամարտության արդի փուլի հիմնախնդիրներին և կատարել համապատասխան եզրահանգումներ:

1994թ. ի վեր Արցախում տեղի է ունեցել պետականաշինության ակտիվ և աննախադեպ գործընթաց: 2006թ. դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքվեի արդյունքում ընդունվեց ԼՂՀ Սահմանադրությունը, ինչը միանշանակ նպաստեց Արցախի ինքնիշխանության՝ ի դեմս քաղաքական կենսունակ օրգանիզմի, վերջնական ձևավորմանը: Չնայած ծանր փորձություններին՝ ԼՂՀ-ը վերջին տասնամյակների ընթացքում լուրջ առաջընթաց է գրանցել պետականության կայացման գործընթացքում՝ ունենալով սեփական դրոշ, զինանշան ու օրհներգ, կառավարման պետական մարմիններ, ժողովրդի կողմից ընտրվող ներկայացուցչական մարմին՝ Ազգային ժողով, պաշտպանության բանակ, ոստիկանություն, դատական համակարգ և այլն, որոնք դե-ֆակտո հավաստում են ԼՂՀ գոյությունը: Մինչդեռ, այդ ինքնիշխանության լիարժեք իրացումն անհրաժեշտ է դարձնում միջազգային հանրության կողմից՝ ԼՂՀ անկախության դե-յուրե ճանաչումը: Ճանաչում՝ հանուն Արցախի ժողովրդի փրկության, ինչը, որպես այդպիսին, իրականություն չի կարող դառնալ Ադրբեջանի կազմում: Միջազգային իրավունքին հայտնի «remedial secession» («անջատում՝ հանուն փրկության») սկզբունքը Արցախի նկատմամբ պետք է կիրառվի՝ որպես «ճանաչում՝ հանուն փրկության», ինչը կարելի է բացատրել մի քանի փաստարկներով.

1/ Լեռնային Ղարաբաղը երբևէ չի եղել անկախ Ադրբեջանի կազմում: Չսևեռելով մեր ուշադրությունը վաղ պատմական անցյալի տվյալների ու իրադարձությունների վրա՝ նշենք, որ 1918-20թթ. ԼՂ-ն ինքնակառավարվող միավոր էր, որին ներհատուկ էին պետականության բոլոր ատրիբուտները: Փաստորեն հենց 1918թ. արցախահայությունն առաջին անգամ ինքնորոշվեց [2, էջ 3]: Արցախահայության լիազոր ներկայացուցիչների համագումարները (այսուհետ՝ ԱԼՆ) մերժել են մուսավաթական Ադրբեջանին ենթարկվելու՝ երկրամասին թուրքերի ներկայացրած պահանջը և վերահաստատել Հայաստանին միանալու՝ արցախահայության վճռականությունն ու քաղաքական կամքը: Բացի այդ, ԱԼՆ համագումարները ձևավորել են Ժողովրդական կառավարություն և Ազգային խորհուրդ, որոնք պետք է իրականացնեին երկրամասը կառավարելու լիարժեք գործառույթ՝ ռազմական, տնտեսական, քաղաքական, մշակութային բնագավառներում: Այն բանից հետո, երբ 1920թ. ապրիլին խորհրդային Ռուսաստանի 11-րդ բանակը տապալեց Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունն ու Ադրբեջանում հաստատեց խորհրդային կարգեր, ԱԼՆ 9-րդ համագումարը վերստին հռչակեց Արցախը՝ որպես Հայաստանի Հանրապետության անկապտելի մաս: Միայն 1921թ. բոլշևիկյան Կովբյուրոյի անօրինական որոշմամբ ԼՂ-ն ինքնավար մարզի կարգավիճակով միացվեց Ադրբեջանին: Արդեն 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂՀ անկախության հռչակման և դեկտեմբերի 10-ի հանրաքվեի արդյունքում ԼՂՀ-ը փաստորեն դուրս եկավ անմիջականորեն ԽՍՀՄ կազմից:

Այս հարցի օրինականության տեսանկյունից դիտարկենք 1990թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հարցերի լուծման շուրջ» օրենքը, որի 3-րդ հոդվածը սահմանում է. «Իր կազմի մեջ ինքնավար հանրապետություններ, ինքնավար մարզեր ու

ինքնավար շրջաններ ունեցող միութենական հանրապետություններում հանրաքվեն անցկացվում է առանձին՝ յուրաքանչյուր ինքնավարության համար: Ինքնավար հանրապետությունների և ինքնավար միավորների ժողովուրդները պահպանում են իրավունք՝ ինքնուրույն որոշելու ԽՍՀՄ կամ դուրս եկող միութենական հանրապետության կազմում մնալու հարցը, ինչպես նաև իր պետական-իրավական կարգավիճակի վերաբերյալ հարց առաջադրելու ուղղությամբ»: Այսինքն՝ ԼՂ-ն Ադրբեջանի կազմից անջատվելու խնդիր չի ունեցել: 1991թ. Ադրբեջանի ԳԽ-ի կողմից ընդունված ո՛չ «Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին» հռչակագիրը, ո՛չ «Ադրբեջանի պետական անկախության մասին սահմանադրական ակտը» և ո՛չ էլ «ԼՂԻՄ տարալուծման մասին» հրամանը չեն զրկել ԼՂ-ի ժողովրդին իր պետա-իրավական կարգավիճակն ինքնուրույն որոշելու՝ վերոնշյալ օրենքի ընձեռած հնարավորությունից: Դա բացատրվում է այն հանգամանքներով, որ «Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին» հռչակագրով և «Ադրբեջանի պետական անկախության մասին սահմանադրական ակտով» Ադրբեջանը, որպես ԱԴՀ (գոյություն է ունեցել 1918թ. մայիսի 28-ից մինչև 1920թ. ապրիլի 28-ը) իրավահաջորդ, հրաժարվում էր նաև ԱԽՍՀ իրավունքներից, ներառյալ՝ վերջինիս տարածքի նկատմամբ իրավունքից: Ինչ վերաբերում է 1991թ. նոյեմբերի 23-ի որոշմանը, որը հրապարակվել է ԽՍՀՄ լուծարումից հետո՝ ապա Ադրբեջանն իրավունք չուներ տարալուծել ԼՂԻՄ-ը՝ նման հարցերի լուծումը ԽՍՀՄ բարձրագույն պետական և կառավարման մարմիններին ենթակա լինելու ուժով: Բացի այդ, ԼՂ-ի հետ Բաքուն որևէ իրավական առնչություն արդեն չուներ: Հետևաբար, նման ակտն անորոշ ու անհեթեթ էր [2, էջ 5]:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Ադրբեջանը հրաժարվել է ԼՂ-ի նկատմամբ իրավունքներից և Ադրբեջանից անջատվելու խնդիր ԼՂ-ը չունի և չի ինքնորոշվել որևէ պետությունից բաժանվելու ակտով, քանի որ վերջինս երբևէ մաս չի կազմել անկախ Ադրբեջանին և 1991թ. սեպտեմբերի 2-ին հռչակվել ու նույն թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեով վերահաստատել է իր որոշումը՝ Ադրբեջանին իրավաբանորեն չպատկանող տարածքներում:

2/ **ԼՂՀ-ը համապատասխանում է պետականության հատկանիշների հիմնական մասին:** «Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին» 1993թ. Մոնտեվիդեոյի կոնվենցիայի 1-ին հոդվածը սահմանում է. «Պետությունը, որպես միջազգային իրավունքի սուբյեկտ, պետք է բավարարի հետևյալ չափանիշները՝ ա) մշտական բնակչություն, բ) սահմանված տարածք, գ) կառավարություն, դ) այլ պետությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողություն»:

Քննարկենք վերջին երկու չափանիշները: Նախ, «կառավարություն» եզրույթը կոնվենցիայում օգտագործվում է լայն իմաստով: Կառավարությունը ոչ միայն երկրի կառավարման բարձրագույն մարմինն է, այլև այն պետք է բնականոն կերպով գործի երկրի ողջ տարածքում և ներկայացնի ողջ երկիրը: ԼՂՀ կառավարությունը լիարժեք գործել է իր վերահսկողության տակ գտնվող ողջ տարածքում և այսօր էլ շարունակում է գործել ԼՂՀ չօկուպացված տարածքներում: Թերևս միայն «դ» չափանիշն է, որին ԼՂՀ-ը չի համապատասխանում, քանի որ ՄԱԿ անդամ պետությունները, որպես կանոն, խուսափում են պաշտոնական հարաբերություններ հաստատել չճանաչված պետությունների հետ: ԼՂՀ անկախությունը ճանաչել են միայն մասամբ ճանաչված Աբխազիան ու Հարավային Օսիան և չճանաչված Մերձդնեստրի Մոլդովական Հանրապետությունը: Այնուամենայնիվ, հետևողական դիվանագիտական աշխատանքի դեպքում բացառված չէ, որ մոտ ապագայում ԼՂՀ-ը, որպես անկախ պետություն, կարող է միջազգային ճանաչում ստանալ՝ հաշվի առնելով հատկապես այն հանգամանքը, որ հակառակ դեպքում կարող է իրական գոյաբանական սպառնալիք առաջանալ Արցախի ժողովրդի համար:

3/ **Ադրբեջանը վարում է Արցախի ժողովրդի էթնիկ զտման և հայաթափման քաղաքականություն, ինչը բացառում է որևէ կարգավիճակով Արցախի հայտնվելն Ադրբեջանի կազմում:** 1920թ. Ղարաբաղի Շուշի քաղաքում ադրբեջանցիները կոտորեցին և տեղահանեցին շուրջ 40 000 հայ [5]: Հետագայում Ադրբեջանի ցեղասպան էությունը նորովի դրսևորվեց, և

իրականացված քաղաքականության արդյունքնում փոխվեց Արցախի ժողովրդագրական պատկերը՝ 1923թ. 94,4%-ի համեմատ 1989թ. տվյալներով իջնելով 76,9%-ի: 1988թ. փետրվարի 26-29-ին «Մա՛հ հայերին», «Կորչե՛ն հայերը Սումգայիթից» և այլ կոչերով ադրբեջանցիները տեղական իշխանությունների թողտվությամբ Սումգայիթում, Բաքվում և Ադրբեջանի հայաշատ այլ բնակավայրերում հայերի սպանդ կազմակերպեցին [1, էջ 2]: Սումգայիթում պաշտոնական տվյալներով սպանվել էր 32 մարդ, խոշտանգվել ու ծանր վիրավորվել՝ ավելի քան 200-ը: Որոշ արխիվային տվյալների համաձայն՝ սպանվածների թիվը շատ ավելի մեծ է, սակայն այդ թիվը կոծկվել է՝ սպանված հայերի դիակները թաքցնելու ճանապարհով: Նույն հայատյաց քաղաքականությունը դրսևորվեց նաև Բաքվում, որի հետևանքով 1990թ. հունվարի 13-19-ին զոհվեց ավելի քան 100 հայ, իսկ քաղաքը, որտեղ ապրում էր 250 հզր. հայ, ամբողջովին հայաթափվեց [1, էջ 5]:

1991-1994թթ., 2016թ. և 2020թ. պատերազմների և դրանց միջակայքում ընկած ժամանակահատվածներում Ադրբեջանի կողմից գործադրվող բիրտ ուժը պատճառ հանդիսացավ, որ տուժեն, խոշտանգվեն ու զոհվեն ոչ միայն հազարավոր գերեվարված հայ զինվորականներ, այլև՝ բազմաթիվ քաղաքացիական անձինք:

Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունը վերահաստատում է Արցախի հայության համոզմունքը, ըստ որի՝ բացառված է որևէ կարգավիճակով Արցախի հայտնվելն Ադրբեջանի կազմում, ինչը կհանգեցնի նոր ցեղասպանության:

Ընդամենը վերջերս Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) նախագահ Վլադիմիր Պուտինը Դոնեցկի և Լուգանսկի ժողովրդական հանրապետությունները ճանաչելու հրամանագրերի հիմքում, ի թիվս այլ հիմնավորումների, դրեց Դոնբասում ցեղասպանության իրականացման փաստը [8]: Այդ նույն հիմքով պետք է ճանաչվի նաև ԼՂՀ-ը, որի բնիկ ժողովուրդն առնվազն հարյուրամյակ շարունակ ենթարկվում է պետականորեն ծրագրված ու կազմակերպված ցեղասպանության:

4/ Կոսովոյի միջազգային ճանաչման փորձը ստեղծում է այն իրավա-քաղաքական նախադրյալները, որոնք կարող են նախադեպ հանդիսանալ ԼՂՀ միջազգային ճանաչման համար: ՄԱԿ Արդարադատության միջազգային դատարանի (այսուհետ՝ ԱՄԴ) 2010թ. հուլիսի 22-ի ընդունած խորհրդատվական եզրակացությունը սահմանում է. «Դատարանը եզրահանգում է, որ 2008թ. փետրվարի 17-ի անկախության հռչակումը չի խախտում ընդհանուր միջազգային իրավունքը, Անվտանգության խորհրդի 1244 (1999) բանաձևը կամ Սահմանադրական շրջանակները: Հետևաբար, այդ հռչկագրի ընդունումը չի խախտում միջազգային իրավունքի ոչ մի համապատասխան դրույթ»: Ինքնորոշման իրավունքի ու վերջինիս ու տարածքային ամբողջականության սկզբունքների հարաբերակցության վերաբերյալ ԱՄԴ խորհրդատվական եզրակացությունը ամրագրում է. «Պետությունների պրակտիկան այս ժամանակահատվածում հստակորեն ցույց է տալիս, որ միջազգային իրավունքն անկախության հռչակման ոչ մի արգելք չի բովանդակել: 20-րդ դարի երկրորդ կեսի ընթացքում ինքնորոշման միջազգային իրավունքն այնպես է զարգացել, որ անկախության իրավունք է ստեղծել ոչ ինքնավար տարածքների ժողովուրդների և օտար տիրապետության գերակայության և շահագործման ներքո գտնվող ժողովուրդների համար: Շատ-շատ նոր պետություններ գոյություն են ձեռք բերել այս իրավունքի իրականացման արդյունքում» [6]: Պետք է հստակ արձանագրել, որ տարածքային ամբողջականության և ինքնորոշման սկզբունքները չեն հակասում իրար, ավելին՝ անկախության միակողմանի հռչակումը ինքնին անօրինական չէ, այլ՝ ընդունված պրակտիկա, եթե այն չի խախտում միջազգային իրավունքի նորմերը (ex injuria non oritur jus):

Այսպիսով, ԱՄԴ-ի 2010թ. հուլիսի 22-ի խորհրդատվական եզրակացության համակողմանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն կրում է համընդհանուր բնույթ նմանատիպ այլ խնդիրների դեպքում, քանի որ միջազգային պրակտիկայի մեկաբանումից է բխեցվում Կոսովոյի մասնավոր դեպքը: Բացի այդ, դատարանի նմանատիպ եզրակացությունները խաղում են նաև միջազգային իրավունքի աղբյուրի դեր [3, էջ 26]՝«որպես օժանդակ միջոց՝ իրավական նորմերը

սահմանելու համար» [7]:

Այն պետությունները, որոնք ճանաչել են Կոսովոյի անկախությունը, իրենց դիրքորոշումը հիմնավորում են հետևյալ փաստարկներով՝ ա/ մարդու իրավունքների կանոնավոր խախտումներ՝ Միլոշևիչի վարչակազմի կողմից, բ/ էթնիկ զտումների քաղաքականություն և գոյաբանական սպառնալիքի առկայություն՝ Կոսովոյի բնիկ ալբանացիների նկատմամբ, գ/ պետականություն ստեղծելու՝ Կոսովոյի կարողունակություն, դ/ բանակցային գործընթացի փակուղի, ե/ մարդու իրավունքների պաշտպանության՝ Կոսովոյի հանձնառություն:

Վերոգրյալ իրավա-քաղաքական չափանիշները վերաբերում են նաև ԼՂՀ-ին, քանի որ՝ 1/ ԼՂ-ի հայ բնակչության իրավունքները պարբերաբար կոպտորեն խախտվել են Ադրբեջանի կողմից, 2/ Բաքուն մինչ օրս իրականացնում է ԼՂ հայության էթնիկ զտումների համակարգված քաղաքականություն, 3/ ԼՂ-ն ունի կայացած պետական ինստիտուտներ, որոնք անկախության դեպքում ևս կարող են արդյունավետորեն իրականացնել երկրի կառավարումն ու իրենց իրավազորության սահմաններում հանձն առնել մարդու իրավունքների պաշտպանությունը, 4/ բանակցային գործընթացը 2020թ. պատերազմից հետո, ըստ էության, հայտնվել է փակուղում:

Այս պայմաններում ԼՂ-ն իհարկե *sui generis, որոշակի բնորոշ և եզակի հատկանիշներով* դեպք է, և բավարարում է բոլոր այն գործոնները, որոնք թույլ են տալիս Արցախի ժողովրդին պաշտպանվել գոյաբանական վտանգից: Այլևս առկա են այն բացառիկ հանգամանքները (մարդու իրավունքների լուրջ խախտումներ, էթնիկ զտման սպառնալիք կամ էթնիկ զտման կոնկրետ դեպքեր, մարդասիրական ճգնաժամ (հիշենք Ադրբեջանի կողմից գազամատակարարմանը դիտավորյալ խոչընդոտելը և այլն), որոնք լեգիտիմացնում են «անջատում՝ հանուն փրկության» սկզբունքի կիրառումը Արցախի նկատմամբ՝ որպես «ճանաչում՝ հանուն փրկության»: Նշենք, որ այդ բացառիկ հանգամանքները, հատկապես 2020թ. պատերազմից հետո, լիովին արդարացնում են վերոնշյալ սկզբունքի կիրառումը:

Ընդհարացնելով՝ նշենք, որ Արցախի լիակատար ինքնիշխանությունը վերջին շուրջ 30 տարվա ընթացքում այն հիմնաքարն է, որի վրա պետք է կառուցվի ԼՂՀ փուլային ճանաչման վերջին՝ վերջնական կարգավիճակի որոշման էտապը՝ միջազգային միջնորդների մասնակցությամբ: Փուլային ճանաչման գործընթացը բնութագրվում է ևս երկու տարրով՝ ընդհանուր սուվերենություն (ինքնիշխանություն և գործառույթների իրականացում՝ սահմանված տարածքում ենթակա պետական միավորի կողմից) [8] և հաստատությունների ձևավորում (քաղաքական և սոցիալական ենթակառուցվածքների ստեղծում և ինքնակառավարման ամրապնդում): Շուրջ 30 տարվա ընթացքում ԼՂՀ-ը ցույց է տվել գործառութային քաղաքական և սոցիալական համակարգի վրա ինքնիշխանություն գործադրելու իր կարողությունը, ստեղծել ու կատարելագործել քաղաքական ու տնտեսական ենթակառուցվածքներ, ներդրել ինքնակառավարման հուսալի կառուցակարգեր: Ավելին՝ մեր խորին համոզմամբ՝ այդ կառուցակարգերն առկա են եղել նաև 1918թ. դրությամբ և 1994թ. ի վեր հասել են զարգացման գագաթնակետին:

ԼՂ-ի ինքնիշխանությունը պետք է վերահսկվի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից: Ստեղծված իրավիճակում ավելի հավանական ու նպատակահարմար է, որ այդ գործառույթը ստանձնի ՌԴ-ը՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի համապատասխան մանդատով: Դա բացատրվում է մի քանի հանգամանքով: ***Նախ***, ՌԴ-ն «անջատում՝ հանուն փրկության» սկզբունքը կիրառել է արդեն մի քանի անգամ՝ Աբխազիայի, Հվ. Օսիայի, Դոնեցկի և Լուգանսկի դեպքում՝ արդարացնելով վերջիններիս ճանաչումը և հստակ արձանագրելով, որ Կոսովոյի դեպքը sui generis դեպք չէ և կարող է նախադեպ հանդիսանալ նմանատիպ հանգամանքներով այլ դեպքերում: Այդ դիրքորոշման վառ դրսևորումն է ՌԴ նախագահ Վ. Պուտինի արտահայտած դիրքորոշումը՝ ՄԱԿ Գլխավոր քարտուղար Ա. Գուտերեշի հետ հանդիպման ժամանակ, որի ընթացքում Պուտինը Դոնեցկի և Լուգանսկի անկախության ճանաչումը հիմնավորեց Կոսովոյի ճանաչման նախադեպով [9]:

Երկրորդ, Արցախում տեղակայված են ռուս խաղաղապահները, որոնք Արցախի բնակչության

անվտանգության երաշխավորի դեր են ստանձնել և այդ դերը պետք է շարունակեն ստանձնել այնքան ժամանակ, քանի դեռ չլուծված կմնա ղարաբաղյան հակամարտությունը: Խաղաղապահ առաքելությունը գոնե այս պահի դրությամբ չեզոքացնում է արցախցիների գոյաբանական սպառնալիքը և լուծում տարաբնույթ մարդասիրական հիմնախնդիրներ, ինչը հենց Արցախի փուլային ինքնիշխանության այն վերահսկողական կառուցակարգն է, որը միջազգային հանրության լայն կոնսենսուսի պարագայում կարող է հանգեցնել միջազգային ճանաչման՝ ՄԱԿ ԱԽ կողմից՝ Արցախում միջազգային քաղաքացիական և անվտանգային անձնակազմի տեղակայմամբ, ինչը կապահովի գլխավորապես ՌԴ-ը՝ Արցախի անվտանգության երաշխավորի ու տարածաշրջանում իր բացառիկ դերի շնորհիվ:

Բոլոր դեպքերում պետք է բացառվի ԼՂ կարգավիճակը Ադրբեջանի կազմում: Մինչև 2020թ. պատերազմն Ադրբեջանի կողմից առաջարկվող ներքին ինքնորոշումը չի չեզոքացնում այն գոյաբանական վտանգը, որը սպառնում է ԼՂ հայ բնակչությանը: Հաշվի առնելով այն փաստը, որ Ադրբեջանը չի ցանկանում անգամ քննարկել ԼՂ կարգավիճակի հարցը և նախագահ Իլհամ Ալիևը պաշտոնապես հայտարարում է, որ ղարաբաղյան հակամարտությունն այլևս լուծված է և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ադրբեջանը համակարգային կերպով խախտում է ԼՂ բնակչության իրավունքները՝ նպատակ հետապնդելով էթնիկ զտումների ենթարկել ու բռնի տեղահանել ԼՂ հայությանը, այս պայմաններում «անջատում հանուն փրկության»/«ճանաչում հանուն փրկության» սկզբունքի կիրառելիությունը ԼՂ-ի նկատմամբ առաջնային բնույթ ունի՝ իր «տարածքային ամբողջականությունը» պահպանելու՝ Ադրբեջանի պահանջի նկատմամբ:

Ինչպես նշված է 1991թ. սեպտեմբերի 2-ի ԼՂ անկախության հռչակագրում՝ ԼՂՀ-ը պետք է ճանաչվի առնվազն ԼՂԻՄ և հարակից Շահումյանի շրջանի սահմաններում, թեև իրականում աշխարհագրական Լեռնային Ղարաբաղը ներառում է նաև կենտրոնական ու հյուսիսային Արցախը, որն այժմ օկուպացված է Ադրբեջանի կողմից [4]: Իսկ թե ինչ ճանապարհով պետք է հասնել ԼՂՀ օկուպված տարածքերի դեօկուպացիային, ցույց կտան ժամանակն ու համապատասխան աշխարհաքաղաքական իրադրությունը: Հստակ է մի բան, որ միջազգային հանրության կողմից՝ առանց համապատասխան ճնշումներ գործադրելու ու Ադրբեջանի վարած հայատյաց քաղաքականությունն ու այդ պետության ցեղասպան ու հայաջինջ էությունն ուղղակիորեն դատապարտելու՝ ինքնորոշման իրավունքը, որպես վերջնական լուծում, իրացրած Արցախի հեռանկարը բավականին աղոտ է: ԼՂ-ի շուրջ բանակցությունները պետք է վարվեն կողմերի համար ընդունված ու ընդունելի (ԵԱՀԿ, ՄԱԿ) ձևաչափերով: Այդ տեսանկյունից բավականին կասկածելի է ղարաբաղյան հակամարտության հարցի փոխադրումն այլ ձևաչափեր, մասնավորապես՝ Թուրքիայի առաջարկած «6-ի պլատֆորմ», որը, ըստ էության, Թուրքիայի ձգտումն է՝ վերջնականապես մուտք գործել ու ամրապնդվել տարածաշրջանում: Հեռանկարային չէ նաև ԵՄ ձևաչափը՝ պայմանավորված նման հարցերի կարգավորման՝ ԵՄ հարուստ փորձի բացակայությամբ ու տարածաշրջանում միջազգային այլ դերակատարների «դոմինանտությամբ»:

Այնուամենայնիվ, անկախ պետությունների ճանաչումը թելադրվում է միջազգային հանրության գլխավորապես քաղաքական շահերով, քանի որ նրա անդամները ևս խնդիր ունեն սեփական տարածքում զսպելու անջատողական ձգտումները: Դա է պատճառը, որ ընդգծվեց Կոսովոյի դեպքի եզակիությունը, որպեսզի բացառվի «վտանգավոր նախադեպի» ստեղծումը: Ինչևէ, ղարաբաղյան հակամարտությունն իր բնույթով ևս sui generis դեպք է և Արցախի ժողովուրդը վաղ թե ուշ իրացնելու է իր ինքնորոշման իրավունքը՝ *միջազգային ճանաչման, հանրաքվեի անցկացման ու ՀՀ հետ վերամիավորվելու* քայլերի հաջորդականությամբ՝ վեր կանգնելով երկակի ստանդարտների քաղաքականությունից ու պատմական անարդարությունից:

Գրականություն

1. Հարությունյան Հ. Գ., Հայերի ջարդերը Սումգայիթում և Բաքվում, 6 էջ,
2. Մանասյան Ալ., Արցախյան հիմնախնդիր: Նորովի իմաստավորման ենթակա հարցեր, տպ. 21.11.2019թ., 17 էջ,
3. Քոչարյան Վ. Վ., Միջազգային իրավունք: Ուսումնական ձեռնարկ-Եր.: Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2002թ., 504 էջ: էջ 26,
4. Ջեյմս Ռ.Հուփեր և Փոլ Ռ. Ուիլյամս, Ձեռք բերված ինքնիշխանություն. քաղաքական ծավալ, Denver Journal of International Law and Policy, Vol. 31, 2002-03, pp. 355-372
5. Levon Chorbajian et al, “The Caucasian Knot: The History Politics of Nagorno Karabakh” (1994),
6. UN ICJ Advisory opinion, paragraph 79,
7. Статут Международного суда, статья 38,
8. https://regnum.ru/news/polit/3562351.html,
9. https://tass.ru/politika/14485101,
10. https://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/45972:

ՀՏԴ 343,2/.7

Սամվել Հակոբյան
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի մագիստրատուրայի 1-ին կուրսի սովորող
E-mail: samo.hakobyan.2019@mail.ru

Գիտական ղեկավար՝
ի.գ.թ., դոցենտ Հ.Պետրոսյան

ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԸՆՏՐԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր: Կալանք, մեղադրյալ, հետախուզում, իրավունք.

Անվիճելի է, որ խափանման միջոցներ ընտրելու ամբողջական իրավական կարգավորումից է կախված անձի և պետության միջև քրեադատավարական հարաբերությունների առաջացումը, փոփոխումը և դադարեցումը: Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու քրեադատավարական կառուցակարգերի մասին խոսելիս պետք է հաշվի առնել թե՛ պրակտիկայում առաջացող խնդիրները, թե՛ օրենսդրական ձևակերպումներում առկա բացերը: Հոդվածում ներկայացվել են պրակտիկայում հանդիպող որոշ հիմնախնդիրներ, և առաջ են քաշվել դրանց կարգավորմանն ուղղված ողջամիտ լուծումներ:

Ключевые слова. *арест, обвиняемый, розыск, право.*

Бесспорно, что возникновение, изменение и прекращение уголовного производства между лицом и государством зависят от полного правового регулирования выбора меры пресечения под стражу. Говоря об уголовно-процессуальных конструкциях избрания меры пресечения под стражу, следует учитывать как проблемы, возникающие на практике, так и пробелы в законодательных формулировках. В статье представлены некоторые проблемы, встречающиеся на практике и предлагаются обоснованные пути их решения.

Keywords. *Arrest, accused, wanted, right.*

There is no doubt that the emergence, modification and termination of criminal proceedings between a person and the state depend on the full legal regulation of the choice of a measure of restraint in custody. Speaking about the criminal procedural structures for choosing a measure of restraint into custody, one should take into account both the problems that arise in practice and gaps in legislative formulations. The article presents some problems encountered in practice and suggests reasonable ways to solve them.

Ժողովրդավարական և իրավական պետությունների օրակարգային խնդիրների շարքին կարելի է դասել քրեադատավարական ոլորտի համապատասխանեցումը անձի ազատության իրավունքի՝ միջազգային և ներպետական օրենսդրությամբ սահմանված չափանիշներին:

Քրեական գործի քննության ընթացքում մեղադրյալի կամ կասկածյալի պատշաճ վարքագիծն ապահովելու նպատակով հաճախ խափանման միջոց ընտրելու անհրաժեշտություն է առաջանում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամենախիստ խափանման միջոցը

կալանավորումն է, որը կիրառվում է միայն դատարանի որոշմամբ՝ մինչդատական վարույթում քննիչի կամ դատախազի միջնորդությամբ, իսկ դատարանում քրեական գործը քննելիս՝ մեղադրանքի կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ[1]:

Այս համատեքստում առանձնակի ուշադրության են արժանի այն իրավիճակները, երբ կալանավորումը որպես խափանման միջոց պետք է ընտրել հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ: Նկարագրված իրավիճակի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նախնական կալանքի միջնորդության քննությունը անցկացվում է մեղադրյալի բացակայությամբ, այսինքն՝ նախնական կալանքի քննության ժամանակ հնարավոր չի լինում ապահովել մեղադրյալի լսված լինելու իրավունքը, ինչը հետագայում, արդեն մեղադրյալի ներկայությամբ կալանավորման միջնորդությունը կրկին քննելու ընթացքում՝ իրացվում է:

Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը նախ և առաջ պետք է ստուգման ենթարկի հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու պայմանների առկայությունը: Այլ խոսքով՝ դատարանը պետք է գնահատի՝

- արդյո՞ք քննիչը ձեռնարկել է օրենքով սահմանված բոլոր հնարավոր միջոցները՝ մեղադրյալի ներկայությունը քննությանը ապահովելու ուղղությամբ,
- արդյո՞ք մեղադրյալի նկատմամբ հայտարարված է եղել հետախուզում,
- արդյո՞ք հայտարարված հետախուզումը չի կրում ձևական բնույթ:

Առաջին պայմանի՝ մեղադրյալի ներկայությունը քննությանը ապահովելու ուղղությամբ քննիչի կողմից օրենքով հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկած լինելու կամ չլինելու հանգամանքը պարզելու համար միջնորդությանը կից դատարան ներկայացված նյութերում պետք է առկա լինեն համապատասխան տեղեկություններ և փաստեր՝ մեղադրյալի կողմից քննությանը ներկայանալու մասին ծանուցագիր ուղարկելու, մեղադրյալի բնակության հասցե այցելություն կատարելու կամ հեռախոսազանգ կատարելու վերաբերյալ: Ընդ որում, ծանուցագիր ուղարկելու գործընթացը գնահատելիս դատարանը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, թե արդյո՞ք վարույթն իրականացնող մարմնի կողմից դատարանին ներկայացվել է հետծանուցման հավաստագիր, այսինքն՝ արդյո՞ք ծանուցագիրն առաքման կամ այլ եղանակով ստացվել է մեղադրյալի կողմից, թե ոչ: Միայն հետծանուցման հավաստագրի առկայության պայմաններում կարելի է փաստել, որ առկա է մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդության քննության առաջին պայմանը:

Ինչ վերաբերում է մեղադրյալի բնակության հասցե այցելություն կատարելու և հեռախոսազանգ կատարելու վերաբերյալ պայմանները գնահատելուն, ապա այդ մասով պետք է նշել, որ անկախ այն հանգամանքից, թե մեղադրյալի բնակության հասցեում մեղադրյալը և/կամ ընտանիքի անդամները կլինեն, թե ոչ, կամ կպատասխանեն հեռախոսազանգին թե ոչ, դատարանը այդ մասով պետք է հաստատված համարի վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ մեղադրյալի ներկայությունը քննությանը ապահովելուն ուղղված միջոց ձեռնարկած լինելու հանգամանքը: Այսինքն, «բնակության հասցե այց կատարելու մասին» և «հեռախոսազանգ կատարելու մասին» արձանագրությունների առկայությունը բավարար են նշված պայմանը հաստատված համարելու համար:

Ուշադրության է արժանի այն իրավիճակը, երբ ծանուցագիրը ստանում են մեղադրյալի ընտանիքի անդամները (մեղադրյալի հետ հարազատական կապ ունեցող անձինք), և/կամ մեղադրյալի բնակության հասցե այցելելու ընթացքում մեղադրյալի ընտանիքի անդամներն են տեղեկանում մեղադրյալին «փնտրելու» գործընթացի մասին, այսինքն՝ մեղադրյալը գտնվելիս չի լինում իր բնակության հասցեում: Նման իրավիճակը գնահատելիս պետք է

[1] *Մանրամասն տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 134-139-րդ հոդվածները (կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու կարգն ու պայմանները):*

հանգել ողջամիտ ենթադրության առ այն, որ մեղադրյալն ընտանիքի անդամներից տեղեկացել է իր նկատմամբ հնարավոր «սկսված կամ իրականացվող» քրեական հետապնդման մասին: Նման եզրահանգումը բխում է նաև *ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ԵԿԴ/0084/06/16 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներից:*[1]

Վերը շարադրված գործողությունների բացակայության պայմաններում պետք է արձանագրել, որ հայտարարված հետախուզումը կրում է ձևական բնույթ, որպիսի պայմաններում վարույթն իրականացնող մարմնի՝ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը պետք է մերժել:

Կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու պայմանների[2] առկայությունը հաստատված համարելուց հետո դատարանը պետք է անդրադառնա կալանավորման հիմքերի առկայության կամ բացակայության հարցի քննարկմանը:

Քննարկվող պայմանների առկայության դեպքում նախնական կալանքի հարցը քննարկելիս դատարանը կարող է հանգել ողջամիտ հետևության առ այն, որ առկա է մեղադրյալի կողմից քննությունից թաքնվելու բարձր հավանականություն: Միևնույն ժամանակ միջնորդությամբ նշված «կալանավորման հիմքերին» Դատարանը պետք է անդրադառնա հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկման ընթացքում:[3]

Հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու դեպքում (*ենթադրենք դատարանը մեղադրյալի կողմից վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու և քննությանը խոչընդոտելու հավանականությունը բարձր է գնահատել*), դատարանը որոշման (*օրինակ՝ 2020 թվականի հունվարի 15-ի թիվ ԵԴ/06825/06/20 որոշում*) եզրափակիչ մասում նշում է՝

«*ՀՀ քննչական կոմիտեի քննիչ Պ-ի միջնորդությունը բավարարել:*

*Թիվ 774***622 քրեական գործով մեղադրյալ Ն-ի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանավորումը՝ 2 (երկու) ամիս ժամկետով:*

---

[1] *Մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ծանուցման պատշաճ լինելը չպետք է պայմանավորել բացառապես նրանով, որ առկա է հենց հասցեատիրոջ, մասնավորապես՝ ենթադրյալ հանցանք կատարած անձի կողմից ծանուցագիրը ստանալու փաստը հաստատող տվյալ: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ ծանուցագիրը ստանալու փաստը հաստատող այդպիսի տվյալի բացակայության դեպքում ծանուցման պատշաճ լինելու հարցը լուծելիս անհրաժեշտ է բազմակողմանի վերլուծության ենթարկել այդ ուղղությամբ համապատասխան մարմինների կողմից ձեռնարկված գործողությունների քանակական և որակական կազմը, ծանուցվող անձի դրսևորած վարքագիծը, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք կարող են առանցքային նշանակություն ունենալ խնդրո առարկա հարցի լուծման համար: Վճռաբեկ դատարանի սույն դիրքորոշումը հիմնավորվում է նաև նրանով, որ հակառակ մեկնաբանության դեպքում, երբ վարույթ իրականացնող մարմին ներկայանալու վերաբերյալ ծանուցումները ենթադրյալ հանցանք կատարած անձի, օրինակ՝ ՀՀ-ից դուրս գտնվելու հանգամանքով պայմանավորված չստանալու դեպքում մեխանիկորեն համարվեն ոչ պատշաճ, ապա կարող է արհեստականորեն խոչընդոտվել նրանց հայտնաբերմանն ուղղված դատավարական հարկադրանքի միջոցների գործադրումը և անհնարին դառնա պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի կենսագործումը:*

[2] *Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մաս:*

[3] *2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08 որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.*

«Հիմք ընդունելով ՀՀ իրավական համակարգում Կոնվենցիայի բարձրագույն իրավաբանական ուժը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց անհապաղ դատարանի առջև ներկայացնելու՝ Կոնվենցիայով հստակ ամրագրված և Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում բազմիցս վերահաստատված պահանջի ներպետական երաշխավորման պահանջը՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ ներպետական օրենսդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը նախաքննության կատարման վայրի դատարանում: Դա հնարավորություն կտա նվազեցնել կամայական կալանավորման դեպքերը, ինչպես նաև կապահովի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության համար միջազգային պարտավորություն հանդիսացող պահանջների կատարումը»:

Կալանավորման սկիզբը հաշվել Մարտիրոս Արամի Ներսիսյանին արգելանքի վերցնելու պահից:

Որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում»:

Մեղադրյալ Ն-ին փաստացի արգելանքի տակ վերցնելուց հետո վերջինը ձեռք կբերի կալանավորի դատավարական կարգավիճակ և կպահվի քրեակատարողական հիմնարկում, քանի որ դատարանի *2020 թվականի հունվարի 15-ի թիվ* ԵԴ/06825/06/20 որոշմամբ ընտրված կալանավորման երկամսյա ժամկետը սկսում է հոսել: Այսինքն՝ ենթադրենք, մեղադրյալ Ն-ն փաստացի արգելանքի է վերցվել 2021 թվականի օգոստոսի 7-ին, այսինքն՝ վերջինին կալանքի տակ պահելու ժամկետը լրանում է 2021 թվականի հոկտեմբերի 7-ին:

Մեղադրյալ Ն-ին փաստացի արգելանքի վերցնելուց հետո վարույթն իրականացնող մարմինը կարող է միջնորդություն ներկայացնել դատարան՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը **կրկին քննելու** վերաբերյալ:

Ենթադրենք նման միջնորդություն վարույթն իրականացնող մարմինը դատարան է ներկայացրել 2021 թվականի օգոստոսի 9-ին, իսկ դատական նիստ է նշանակվել 2021 թվականի օգոստոսի 10-ին:

Մեղադրյալ Ն.-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը **կրկին քննելիս** դատարանը կամ պետք է որոշում կայացնի քննիչի միջնորդությունը մերժելու կամ բավարարելու վերաբերյալ: Այն պայմաններում, երբ դատարանը հաստատված չի համարում «հիմնավոր կասկածը» կամ կալանավորման որևէ հիմք, պետք է որոշում կայացնի միջնորդությունը մերժելու մասին:

Նկարագրված իրավիճակում դատարանը որոշման (*2021 թվականի օգոստոսի 10-ի թիվ ԵԴ/06825/06/20 որոշում*) եզրափակիչ մասում նշում է՝

*«ՀՀ քննչական կոմիտեի քննիչ Պ-ի միջնորդությունը՝ թիվ 774***622 քրեական գործով մեղադրյալ Ն-ի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց* ***կրկին*** *ընտրելու մասին, մերժել:*

Որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարան՝ հրապարակվելու պահից հնգօրյա ժամկետում»:

Նման պայմաններում մեղադրյալ Ն-ն պետք է ազատ արձակվի, իսկ նրա նկատմամբ վարույթն իրականացնող մարմինը պետք է ընտրի անազատության հետ չկապված խափանման միջոց: Ստացվում է, որ մեղադրյալ Ն-ն 2021 թվականի օգոստոսի 10-ից գտնվում է ազատության մեջ, ի հակադրումն դատարանի 2020 թվականի հունվարի 15-ի թիվ ԵԴ/06825/06/20 որոշման:

Նկարագրված օրինակում, ըստ էության, ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ.

- մեղադրյալի նկատմամբ նախնական կալանավորման հարցը վերստին քննող «*առաջին ատյանի դատարանը բեկանում է նույն անձի նկատմամբ նախնական կալանքի միջնորդությունը բավարարած առաջին ատյանի դատարանի որոշումը*»,
- խարխլվում է դատական ակտերի վերանայման ընթացակարգային տրամաբանությունը,
- խախտվում է դատարանների միջև առկա գործառութային կապը,
- առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը իրեն վերապահում է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի լիազորություններ:

Վերը նշված խնդիրների կապակցությամբ անհրաժեշտ են քրեադատավարական նոր կարգավորումներ, որի համատեքստում չի վնասվի արդարադատության շահը, հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին հնարավորություն կտրվի իրացնել իր կարգավիճակից բխող համապատասխան իրավունքները, չեն ծանրաբեռնվի իրավապահ և դատական մարմինները, ինչպես նաև կխնայվեն պետական ռեսուրսները:

Այն պայմաններում, երբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 130, 131 և 259-րդ հոդվածները ամբողջացնում են հետախուզման մեջ գտնվող մեղադրյալին հայտնաբերելու դեպքում ձերբակալելու, կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին

դատարան միջնորդություն ներկայացնելու հստակ կառուցակարգեր, գտնում ենք, որ հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ «նախնական» կալանք կարող է կիրառվել բացառապես այն դեպքերում, երբ մեղադրյալի նկատմամբ հայտարարված է լինում **միջազգային հետախուզում:**

Վերը հիշատակված դիրքորոշումը բխում է նաև ՀՀ կողմից վավերացված «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի և Քիշնևի կոնվենցիաների (այսուհետ՝ նաև Մինսկի և Քիշնևի կոնվենցիա), ինչպես նաև «Հանձնման մասին» Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Հանձնման մասին կոնվենցիա) պահանջների կատարման անհրաժեշտությամբ, քանի որ առանց կալանավորման մասին իրավասու մարմնի որոշման հնարավոր չէ իրականացնել մեղադրյալի միջազգային հետախուզում, նրա կալանավորում և հանձնում հայցող պետությանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ վարույթն իրականացնող մարմինը մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդություն պետք է ներկայացնի բացառապես այն դեպքում, երբ՝

- նախաքննական մարմինը ձեռնարկել է օրենքով սահմանված բոլոր հնարավոր միջոցները մեղադրյալի ներկայությունը քննությանն ապահովելու ուղղությամբ,
- վերոնշյալ գործողությունները կատարելու ընթացքում ձեռք են բերվել փաստական տվյալներ այն մասին, որ մեղադրյալը գտնվում է ՀՀ սահմաններից դուրս (օրինակ՝ սահմանահատումների պատմության ՍԷԿՏ համակարգից արտատպված տվյալներ),
- մեղադրյալի նկատմամբ հայտարարվել է միջազգային հետախուզում (այսինքն՝ վարույթն իրականացնող մարմինը որոշում է կայացրել միջազգային հետախուզում հայտարարելու մասին)։

Վերը թվարկված հանգամանքների միաժամանակյա առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված «նախնական կալանքի» միջնորդությունը կլինի իրավաչափ։ Քննչական մարմնի նման մոտեցման պարագայում կբացառվեն քրեադատավարական գործիքակազմի անհիմն և աննպատակահարմար կիրառման, ինչպես նաև պետական ռեսուրսների անհիմն վատնման դեպքերը։

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի լրացումը կարող է նպաստել վերոնշյալ գործելաոճի ձևավորմանը: Սույնով առաջարկում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ.

«*Ազատության կամ ներպետական հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության դեպքում քննիչը որոշում է կայացնում մեղադրյալին ձերբակալելու մասին: Որոշման մեջ նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, մեղադրյալի տվյալները, ձերբակալման հիմքը և պատճառը, ինչպես նաև հետաքննության այն մարմինը, որին հանձնարարվում է ձերբակալման իրականացումը։*»:

ՀՏԴ 343.2/.7

Պարույր Մարտիրոսյան
Արցախի պետական համալսարանի Պատմության և իրավագիտության ֆակուլտետի Իրավագիտության մասնագիտության առկա 4-րդ կուրսի ուսանող:
E-mail: martirosyanparuyr-4@asu.am

Գիտական ղեկավար՝
ի.գ.թ. Տ.Գևորգյան

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բանալի բառեր: *իրավաբանական անձ, քրեական պատասխանատվություն, պատասխանատվության մոդելներ*

Սույն հոդվածում անդրադարձ է կատարվել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հարցին: Վեր ենք հանել քննարկվող ինստիտուտի առանձնահատկությունները, հնարավոր թերություններն ու խնդիրները: Կատարված վերլուծության արդյունքում հանգել ենք հետևության, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը ներկայումս հանցավորության դեմ պայքարի անհրաժեշտ ու արդյունավետ ուղի է:

Ուսումնասիրվել է այս ինստիտուտի վերաբերյալ արտասահմանյան երկրների փորձը, մասնավորապես՝ մոդելները, պատժի համակարգը: Ըստ այդմ՝ արվել են եզրահանգումներ և առաջարկներ, որոնք, կարծում ենք, կնպաստեն ՀՀ քրեական նոր օրենսգրքի էական բարելավմանը:

Паруйр Мартиросян

УГОЛОВНАЯ ОТВЕТСТВЕННОСТЬ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ

Ключевые слова: *юридическое лицо, уголовная ответственность, модели ответственности*

В данной статье рассматривается уголовная ответственность юридических лиц. Выявлены особенности обсуждаемого института, возможные недостатки и проблемы. При этом указанные вопросы должны быть полностью, объективно и всесторонне проанализированы со всех сторон. В результате проведенного анализа мы пришли к выводу, что уголовная ответственность юридических лиц в настоящее время является необходимым и эффективным способом борьбы с преступностью.

Изучен опыт зарубежных стран относительно данного института, в частности, модели, системы наказания. В соответствии с этим сделаны выводы, предложения, направленные на решение поставленных вопросов, что, на наш взгляд, будет способствовать значительному совершенствованию нового Уголовного кодекса РА.

Paruyr Martirosyan

THE CRIMINAL LIABILITY OF LEGAL ENTITIES

Keywords. *Legal entity, criminal liability, models of responsibility*

This article addresses the criminal liability of legal entities. We have identified the peculiarities of the institute under discussion, the possible shortcomings and problems. Moreover, the mentioned issues should be fully, objectively and comprehensively analyzed from all angles. As a result of the analysis, we have come to the conclusion that criminal liability of legal entities is currently a necessary and effective way to fight crime.

The experience of foreign countries regarding this institution, in particular, the models, the punishment system, has been studied. According to that, conclusions have been made, proposals aimed at solving the issues raised, which, we think, will contribute to the significant improvement of the new RA Criminal Code.

Իրավաբանական անձանց կողմից կատարված հանցանքները թողնում են ծանրակշիռ հետևանքներ և հանգեցնում են այնպիսի վտանգների, ինչպիսիք են էկոլոգիական միջավայրի և մարդկանց առողջության դեգրադացումը: Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի՝ օրենսդրորեն միասնական հիմունքների ամրագրումը, իհարկե, դարձել է ժամանակի պարտադրանք: Աննպատակահարմար է, որ քրեական իրավունքը գործի միայն ֆիզիկական անձանց իրավախախտումների համար: Միայն ֆիզիկական անձանց, նույնիսկ իրավաբանական անձի բարձրաստիճան ղեկավարներին, պատասխանատվության ենթարկելը բավարար չէ: Դեռ ավելին, համալիր կառավարման մարմինները և որոշումների կայացման կոլեկտիվ գործընթացները կորպորատիվ ընկերություններում դժվարացնում են նման իրավախախտումների հայտնաբերումը և հետապնդումը: Միջազգային մի շարք կոնվենցիաներ, որոնց միացել է ՀՀ-ն, նշում են, որ պայմանավորվող յուրաքանչյուր կողմ պարտավորվում է իրավաբանական անձանց նկատմամբ նշանակել արդյունավետ, համաչափ և կանխարգելիչ պատասխանատվության միջոցներ[1]: Թեև իրավաբանական անձանց պատասխանատվության ինստիտուտը ամենևին նոր չէ, այնուամենայնիվ, իրավահամեմատական վերլուծությունը վկայում է, որ այն իր տեսական մշակվածության աստիճանով և իրավական կարգավորման ընդգրկվածությամբ էապես զիջում է ֆիզիկական անձանց պատասխանատվության ինստիտուտին:

Հոդվածի նպատակն է հնարավոր բոլոր տեսակետներից ներկայացնել իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի տարբեր երկրների և ՀՀ քրեական նոր օրենսգրքում ամրագրված իրավակարգավորումներն ու նորամուծությունները:

Հետազոտության օբյեկտ են հանդիսանում քրեական իրավունքում իրավաբանական անձի պատասխանատվությանը վերաբերող հասարակական հարաբերությունները: Հետազոտության առարկան քրեական իրավունքում իրավաբանական անձի պատասխանատվության ինստիտուտն է:

Այս ինստիտուտը նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության գործող ու նախկին ՀԽՍՀ քրեական օրենսգրքերով: Այն նաև ամրագրված չէ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում: Սակայն ՀՀ-ում օրենսդրական բարեփոխումների արդյունքում օրենսդիրը ամրագրեց այդ ինտիտուտը քրեական նոր օրենսդրությունում: Ինչ վերաբերում է Արցախի Հանրապետությանը, ապա դրա մասին դեռ վաղ է խոսել:

ՀՀ գործող օրենսդրության համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է միայն

[1]*Տե՛ս Կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան, Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ, Եվրոպայի խորհրդի՝ Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի կոնվենցիան:*

մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է քրեական օրենսգրքով սահմանված տարիքի[1]: Սակայն, ըստ նոր քրեական օրենսգրքի, քրեական պատասխանատվության ենթակա է նաև իրավաբանական անձը:

ՀՀ օրենսդրությամբ՝ իրավաբանական անձը՝ որպես սուբյեկտ, ամրագրված է այլ օրենսդրական ակտերում՝ անկախ ՀՀ քրեական օրենսգրքում՝ որպես այդպիսին սահմանված չլինելու պարագայում[2]: Այս հարցը քննելիս, անկասկած, պետք է անդրադառնանք 2005թ. նոյեմբերի 27-ին կատարված փոփոխություններին, որի արդյունքում Սահմանադրությունը լրացվեց 42.1-րդ հոդվածով, ըստ որի՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ: Ի շարունակություն՝ 2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունների արդյունքում այս նորմը կրկին ամրագրվեց՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների կիրառելիության իրավաբանական անձանց նկատմամբ» վերտառությամբ 74-րդ հոդվածում[3]:

Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ընդհանուր պայմանները և քրեաիրավական ներգործության միջոցները կարգավորվում են առանձին գլուխներով:

Իրավաբանական անձի գործունեությունը կազմակերպությունը կազմող մարդկանց գործունեությունն է, քանզի միայն մարդիկ են ունակ իրականացնելու գիտակցված կամային գործունեություն: Սակայն նրանց դերը իրավաբանական անձի գործունեության իրականացման գործում տարբեր է: Մի մասն իր գործողություններով իրավաբանական անձի համար ձեռք է բերում իրավունքներ և ստեղծում պարտականություններ, մյուսներն օժանդակում են ձեռքբերված իրավունքների իրականացմանը և պարտականությունների կատարմանը[4]: Իրավաբանական անձի կոլեկտիվի մասը կազմող այն քաղաքացիները, որոնք ընտրվում կամ նշանակվում են իրավաբանական անձի կամքի ձևավորման, նրա գործունեության ղեկավարման, իրավաբանական անձի համար իրավունքներ ձեռք բերելու և պարտականություններ ստանձնելու համար, կոչվում են *իրավաբանական անձի մարմիններ*: Այստեղից հետևում է, որ իրավաբանական անձի իրավունակությունը և գործունակությունը իրականացնում է ոչ թե իրավաբանական անձը, որպես այդպիսին, այլ նրա մարմինները[5]: Այդ պատճառով էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 57-ը սահմանում է, որ իրավաբանական անձը քաղաքացիական իրավունքներ է ձեռք բերում և քաղաքացիական պարտականություններ է ստանձնում իր մարմինների միջոցով [6]: Այդ պատճառով էլ իրավաբանական անձի մարմնի գործողությունները դիտվում են որպես իրավաբանական անձի գործողություններ: Իրավաբանական անձի համար քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ կարող են ձեռք բերել նաև ներկայացուցիչները, որոնք գործում են լիազորագրի հիման վրա[7]: Հոդվածով սահմանված պատասխանատու անձանց շրջանակը, որոնք կատարում են այնպիսի գործողություններ, որոնց համար իրավաբանական անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության, ընդգրկում է ոչ միայն ղեկավարության հանձնարարությունները կատարող անձանց, այլ նաև իրավաբանական անձի անունից գործելու լիազորություն ունեցող ցանկացած անձի: Այլ խոսքով՝ ներգրավված ֆիզիկական անձի զբաղեցրած պաշտոնը իրավական հետևանքների առումով որևէ նշանակություն չունի. իրավաբանական անձի

---

[1] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, 2003 թ, .հասանելի է՝ https://www.arlis.am/:*

[2] *Տե՛ս, օրինակ, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին», «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ համապատասխան օրենքները, ինչպես նաև հողային, մաքսային, հարկային, բնության և շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ օրենսդրական ակտերը:*

[3] *Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=100913 :*

[4] *Տե՛ս Гражданское право. Часть первая. Изд-во "Юристъ", 1997, էջ 79:*

[5] *Տե՛ս Տ. Բարսեղյան, ՀՀ քաղաքացիական իրավունք, I մաս, Եր., ԵՊՀ, հրատ., 2014թ. էջ 126:*

[6] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:*

[7] *Տե՛ս ՀՀ Տ. Բարսեղյան քաղաքացիական իրավունք, I մաս, Եր., ԵՊՀ, հրատ., 2014թ. էջ 127:*

շրջանակներում որպես պատասխանատու անձ գործելու լիազորություն ունեցող բոլոր անձինք կարող են պատճառ դառնալ իրավաբանական անձին պատասխանատվության ենթարկելու համար:

Համաձայն նոր օրենսգրքի 126-րդ հոդվածի՝ իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցներն են՝ տուգանքը, գործունեության որոշակի տեսակով զբաղվելու իրավունքի ժամանակավոր դադարեցումը, հարկադիր լուծարումը, Հայաստանի Հանրապետության տարածքում գործունեություն իրականացնելու արգելքը:

Ինչպես երևում է օրենսգրքի տրամաբանությունից, օրենսդիրը, ըստ էության, տարբերակում է նախատեսել ֆիզիկական և իրավաբանական անձանց դեպքում պատժի մասով՝ ֆիզիկական անձանց վերաբերյալ պատժի համակարգը նախատեսվել է առանձին գլխով, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ 21-րդ գլխով: Իրավաբանական անձի նկատմամբ կիրառվող քրեաիրավական ներգործության միջոցները օրենսգրքի Հատուկ մասի հոդվածների սանկցիաներով չեն նախատեսվում և նշանակվում են՝ հաշվի առնելով գլխով նախատեսված քրեաիրավական ներգործության միջոցների տեսակներն ու չափերը:

Օրենսդիրը նշել է այն հանգամանքները, որոնք հաշվի են առնվում իրավաբանական անձի նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցները նշանակելիս: Դրանք են՝ կատարված հանցանքի բնույթն ու վտանգավորության աստիճանը, հանցագործությամբ պատճառված վնասի բնույթն ու չափը, հանցագործությանը նպաստող պատճառներն ու պայմանները, հանցագործության հետևանքների չեզոքացմանն ուղղված իրավաբանական անձի ձեռնարկած միջոցները, օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց գործողությունները, իրավաբանական անձի բարեխիղճ մասնակիցների, բաժնետերերի կամ փայատերերի օրինական շահերը, որոնք չգիտեին և չէին կարող իմանալ կատարվող կամ կատարված հանցանքի մասին, իրավաբանական անձը բնութագրող հանգամանքները, այդ թվում՝ ֆինանսական շուկայում ունեցած դերը, ինչպես նաև դատվածությունը:

Եթե իրավաբանական անձի նկատմամբ նույն փաստի առթիվ նախկինում արդեն իսկ կիրառված է եղել գույքային բնույթի ոչ քրեաիրավական ներգործության միջոց, ապա տուգանքի նշանակման հարցը լուծելիս դատարանը հաշվի է առնում դրա բնույթն ու խստության աստիճանը: Քրեաիրավական ներգործության միջոցները ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ նշանակելիս դատարանը ֆինանսական համակարգի կայունության և ֆինանսական գործունեության ապահովման ռիսկերի գնահատման համար հաշվի է առնում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի՝ քրեաիրավական ներգործության տվյալ միջոցի կիրառման և դրա հետևանքների մասին տրամադրած կարծիքը:

Իրավաբանական անձանց պատասխանատվությունը շատ անգամ ի հայտ է եկել տարբեր երկրների օրենսդրության մեջ, կրել է էական փոփոխություններ կամ անհետացել:[1] Օրենսդիրները կորպորատիվ պատասխանատվության մասին սկսեցին խոսել միայն այն ժամանակ, երբ տնտեսությունում գլխավոր դերը խաղացին ոչ թե անհատ, այլ կոլեկտիվ սուբյեկտները: [2] Ներկայումս իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտը գոյություն ունի Ավստրալիայի, Բելգիայի, Հունգարիայի, Դանիայի, Չեխիայի Իռլանդիայի, Իսլանդիայի, Կանադայի, ՉԺՀ-ի, Նիդեռլանդների, Նորվեգիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Սլովենիայի, ԱՄՆ-ի, Ֆինլանդիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի և այլ երկրների օրենսդրություններում: [3]

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության երեք հիմնական տեսություններ[4].

---

[1] *Տե՛ս **Козочкин** И.Д., Уголовное право зарубежных государств.Общая часть., М.,2001 с 309:*

[2] *Տե՛ս **Додонов** В., Ответственность юридических лиц в современном уголовном праве,Законность, 2006. № 4, с 56 -59.*

[3] *Տե՛ս **Anca Iulia Pop**, նույն տեղում, էջ 3-5 :*

[4] *Տե՛ս **Смирнов Г.**, Уголовная ответственность юридических лиц на подступах к России, СПС «Гарант», с 150-158:*

1. Առաջին տեսության համաձայն՝ իրավաբանական անձը ֆիզիկական անձի հետ միաժամանակ հանդես է գալիս որպես հանցագործության ինքնուրույն սուբյեկտ:

2. Երկրորդ տեսության համաձայն՝ հանցագործության սուբյեկտ է միայն ֆիզիկական անձը, իսկ իրավաբանական անձը հանդիսանում է միայն քրեական պատասխանատվության սուբյեկտ:

3. Երրորդ տեսության համաձայն, որը կոչվում է *քվազի-քրեական*, իրավաբանական անձը հանցագործությանը մասնակցելու համար ենթարկվում է ոչ թե քրեական, այլ վարչական պատասխանատվության:

Իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը առավել բնորոշ է այն երկրներին, որոնց ազգային-իրավական համակարգը պատկանում է անգլո-սաքսոնական իրավական ընտանիքին (Մեծ Բրիտանիա, Կանադա, ԱՄՆ, Ավստրալիա, Նոր Զելանդիա): Մեծ Բրիտանիան հանդիսանում է կորպորատիվ միավորումների քրեական պատասխանատվության դասական մոդելի նախահայրը[1]: Անգլիայում իրավաբանական անձանց՝ որպես քրեական պատասխանատվության սուբյեկտի ճանաչումը տեղի ունեցավ 19-րդ դարի կեսերին[2]: Ամերիկայում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի զարգացումը սկսվել է գրեթե նույն ժամանակ և ընթացել է նույն ձևով, ինչպես և Անգլիայում[3] : 20-րդ դարի սկզբին ԱՄՆ Գերագույն դատարանը փաստարկեց, որ եթե քրեական իրավունքը տարածվեր միայն ֆիզիկական անձանց նկատմամբ, ապա «բազմաթիվ հանցանքներ կարող էին մնալ անպատիժ»[4] : Ավստրալիական քրեական օրենսգրքում իրավաբանական անձը կարող է մեղավոր ճանաչվել ցանկացած հանցագործության կատարման համար, ներառյալ այն հանցագործությունները, որոնք պատժվում են ազատազրկմամբ: Ավստրալիայում իրավաբանական անձը հիմնականում ճանաչվում է մեղավոր հովանավորչության համար[5]: Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 121-22-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձինք բացառությամբ պետությունը, քրեական պատասխանատվություն են կրում օրենքով կամ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում՝ իրենց մարմինների կամ ներկայացուցիչների կողմից իրավաբանական անձի օգտին կատարված հանցավոր գործողությունների համար: Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ գալիս ենք այն եզրահանգման, որ գոյություն ունեն իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության չորս հիմնական մոդելներ՝

1. նույնականացման մոդելը, որի դեպքում իրավաբանական անձի պատասխանատվության համար կարող է հիմք ծառայել միայն այն հանցանքը, որը կատարվել է վերահսկողություն իրականացնող աշխատակցի կողմից, այն է՝ ընկերության բարձրաստիճան ղեկավար օղակին պատկանող կամ ներկայացուցչական լիազորություններ ունեցող անձի կողմից.

2. ընդլայնված նույնականացման մոդելը, որի դեպքում իրավաբանական անձի պատասխանատվության համար կարող է հիմք ծառայել նաև ղեկավար օղակի կողմից իր աշխատակիցներին վերահսկելու անկարողությունը («վերահսկողության բացակայության կանոն»).

3. այլ անձի փոխարեն պատասխանատվության մոդելը, որի դեպքում իրավաբանական անձի պատասխանատվության համար հիմք կարող է ծառայել այն հանցանքը, որը կատարվել

---

[1] *Տե՛ս* ***Ситковский И.В.*** *Уголовная ответственность юридических лиц: дисс. … канд. юрид. наук. – М., 2003. 52-61:*

[2] *Տե՛ս* ***Волженкин Б.В,*** *Уголовная ответственность юридических лиц / Б.В. Волженкин // Санкт-Петербургский юрид. ин-т Генеральной прокуратуры РФ. - СПб., 1998. - 40 с. (Серия «Современные стандарты в уголовном праве и уголовном процессе»), с 12.*

[3] *Տե՛ս* ***Смольянинов Е.С,*** *Уголовно-правовые средства борьбы с преступлениями, совершенными с использованием организационно-правовых форм юридического лица: Автореф. дисс. … канд. юрид, наук. М., 2000, с. 10-16:*

[4] *Այս դրույթը հաստատվել է 1909 թվականին ԱՄՆի գերագույն դատարանի կողմից «Նյու Յորքի կենտրոնական և Հուդսոնի ջրային երկաթգիծ ընկերությունը ընդդեմ Միացյալ Նահանգների» գործով:*

[5] *Տե՛ս Уголовный кодекс Австралии 1995 г. / предисл. И.Д. Козочкина, Е.Н. Трикоз, Спб., 2002. с. 89:*

որևէ աշխատակցի կողմից իր աշխատանքային լիազորությունների շրջանակում և ընկերության շահերից ելնելով.

4. կազմակերպական մոդելը, որի դեպքում իրավաբանական անձի պատասխանատվությունը սահմանվում է՝ ելնելով իր կորպորատիվ մշակույթի թերություններից:

Ոչ մի մոդելի համաձայն՝ իրավաբանական անձինք պատասխանատվության չեն ենթարկվում պատասխանատու անձանց կողմից կատարված հանցանքի համար, եթե դրանք կատարվել են տվյալ անձի մասնավոր շահերից ելնելով[1] : Պատիժ նշանակելը քրեական պատասխանատվության իրագործման կարևորագույն փուլերից մեկն է: Այն, թե իրավաբանական անձանց կողմից հանցանք կատարելու դեպքում ինչպիսի պատժամիջոցներ է հարկավոր կիրառել, եղել է գիտական քննարկումների առարկա երկար ժամանակ և հաճախ նաև իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը մերժելու փաստարկ[2]: Ակնհայտ է նաև, որ իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցները իրենց ձևով ու բնույթով չեն կարող նույնացվել ֆիզիկական անձանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցներին[3] : Կոֆֆին նշում է. «Չկա հոգի, որ վիրավորենք, չկա մարմին, որ հարվածենք»[4] : Քրեական իրավունքի ուսումնասիրությանը նվիրված անգլիական մի աշխատությունում նշվում է. «Քանի որ կազմակերպությանը հնարավոր չէ արգելափակել, միակ հնարավոր պատժամիջոցը հանդիսանում է տուգանքը» :[5]

Չեխիայի քրեական օրենսգրքով՝ իրավաբանական անձանց նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ պատժամիջոցները՝ իրավաբանական անձի լուծարում, գույքի բռնագանձում, տուգանք, գույքի, ակտիվների կամ այլ ունեցվածքի բռնագանձում, որոշակի գործունեություն իրականացնելու արգելք, պետական տենդերներին մասնակցելու արգելք, ցանկացած պետական սուբսիդավորման արգելք, դատավճռի հրապարակում՝ պետական լրատվամիջոցներով[6]: Չեխիայի օրենսդիրը պատժամիջոցներից առանձնացնում է պաշտպանական կամ անվտանգության միջոցները, օրինակ՝ գույքի կամ այլ ունեցվածքի բռնագանձումը: Գույքի կամ այլ ունեցվածքի բռնագանձումը և տուգանքը միաժամանակ չեն կարող նշանակվել:

Հունգարիայի քրեական օրենսգրքով սահմանված իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության դրույթներին ավելացվել է նաև 2004 թվականին ընդունված «Քրեական իրավունքի համաձայն իրավաբանական անձանց նկատմամբ կիրառվող միջոցների մասին» ակտը, որով սահմանվում են հետևյալ քրեաիրավական միջոցները՝ տուգանք, իրավաբանական անձի գործունեության սահմանափակում, իրավաբանական անձի լուծարում[7]: Ֆրանսիայի քրեական օրենսգիրքը առանձնանում է պատիժների բազմազանությամբ: Օրենսդիրը թվարկում է այն բոլոր պատժամիջոցները, որոնք կարող են կիրառվել ընկերությունների նկատմամբ: Ամենատարածված պատժամիջոցը տուգանքն է, որը կիրառելի է բոլոր տեսակի իրավախախտումների համար: Որոշ դեպքերում տուգանքը կարող է փոխարինվել չեկերի թողարկման արգելքով կամ բռնագանձմամբ: Տուգանքի չափը որոշվում է ֆիզիկական անձանց

---

[1] *Տե՛ս* ***Ս. Գալյան****, Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնական մոդելները արտասահմանյան երկրներում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2015թ., էջ 466:*

[2] *Տե՛ս* ***James Gobert****, Controlling Corporate Criminality: Penal Sanctions and Beyond, 2 Web JCLI , հասանելի է՝ http://webjcli.ncl.ac.uk/1998/issue2/gobert2.html*

[3] *Տե՛ս* ***Khanna V****, Corporate criminal liability: what purpose does it serve? (1996) 109 Harvard Law Review 1477.*

[4] *Տե՛ս Coffe, Michigan Law Review, նույն տեղում,- էջ 79:*

[5] *Տե՛ս* ***Smith.Hogan****, Criminal Law/7th ed., p. Cp. Also Frisch in: Eser/Huber/Comils (eds.), Einzelverantwortung und Mitverantwortung im Strafrecht, Freiburg 1998 p. 182:*

[6] *Տե՛ս JUDr.Ing. Hana Skalická, Corporate Criminal Liability in the Czech Republic, TerraLex Practice Groups / JUDr.Ing. Հասանելի է՝ http://www.terralex.org/publication/p58cf9663e3/corporate-criminal-liability-in-the-czech-republicNewsletter - TerraLex /*

[7] *Տե՛ս file:///C:/Users/User/Desktop/Hungary%20-%20LE.pdf*

համար կիրառելի սահմանաչափի հիման վրա. ընկերության համար տուգանքի առավելագույն չափը չի կարող գերազանցել ֆիզիկական անձանց առավելագույնի հնգապատիկը, եթե ընկերությունը ռեցիդիվիստ է, ֆիզիկական անձանց համար նշանակվող տուգանքի առավելագույնի տասնապատիկը [1] : Գերմանիայում կիրառվում են հետևյալ քրեաիրավական բնույթի միջոցները՝ տուգանք, լուծարում, հանցավոր եկամուտների բռնագրավում, իրավունքների սահմանափակում կամ լիցենզիայից զրկում, պարտադիր վերահսկողության սահմանում: Գերմանիայի օրենսդիրը մերժում է դատավճռի հրապարակումը, քանի որ այն չափազանց դաժան կլինի կորպորացիաների համար: [2] Անգլիայում տարածված պատժամիջոցը տուգանքն է: Այնուամենայնիվ, քանի որ տուգանքների չափերը հաճախ չափազանց ցածր են, համեմատած կորպորացիաների ֆինանսական միջոցների և հանցագործության հետևանքով առաջացած վնասների, կիրառվում են նաև հանցանավոր եկամուտների բռնագրավում, լիցենզիայից զրկում, ընկերության համար փորձաշրջանի նշանակում[3]: Որոշ հեղինակներ պնդում են, որ անգլիական օրենսդրությունն պետք է վերանայի ինչպես կորպորատիվ իրավախախտումների նկատմամբ կիրառվող պատժամիջոցների բնույթը, այնպես էլ կորպորացիաներին քրեական պատասխանատվության ենթարկելու սկզբունքները[4]: Ի տարբերություն անգլիական պատժամիջոցների համակարգի՝ որոշ հեղինակների կարծիքով՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների օրենսդրությունն առաջարկում է պատժամիջոցների կիրառման նորարարական և արդյունավետ համակարգ, որի հիմնական նպատակներն են պատժի արդարության և համարժեքության ապահովումը: Համաձայն դաշնային օրենսդրության՝ հիմնական պատժամիջոցներն են՝ տուգանք, վնասի փոխհատուցում, վերականգնողական միջոցառումներ, հասարակական աշխատանքներ, փորձաշրջան: Նահանգային օրենքներով՝ կորպորացիաների նկատմամբ որպես պատժամիջոցներ կարող են կիրառվել լուծարումը կամ գործունեության որոշակի տեսակներով զբաղվելու սահմանափակումը: ԱՄՆ պատժի համակարգը հիմնված է հատուցման և կանխման սկզբունքների վրա: Հետևաբար, դատարանները տուգանքների չափերը հաշվարկելիս հիմնվում են հետևյալ դրույթների վրա:

Վերոնշյալ ուսումնասիրություններից կարելի է ենթադրել, որ Ֆրանսիայի, Չեխիայի օրենսդրությամբ սահմանված է պատժամիջոցների լայն տեսականի, իսկ ԱՄՆ պատժամիջոցների համակարգը նորարարական և արդյունավետ է, որն ընկերություններին առաջարկում է մեխանիզմներ՝ կանխելու և հայտնաբերելու կորպորատիվ հանցագործությունները, մինչդեռ անգլիական համակարգում բացակայում են ներկայացված պատժամիջոցներից շատերը: Ի համեմատ ամերիկյան համակարգի՝ ֆրանսիական համակարգը ավելի քիչ վերականգնողական է, քանի որ կորպորատիվ փորձաշրջանի կիրառությունը տարածված չէ:

Ուսումնասիրելով միջազգային փորձը՝ գալիս ենք այն եզրակացության, որ իրավաբանական անձանց պատասխանատվության ամենատարածված տեսակը տուգանքն է, այն սահմանված է բոլոր այն երկրներում, որտեղ առկա է կորպորատիվ քրեական պատասխանատվություն՝ բացառությամբ Ալբանիայի: Միևնույն ժամանակ, Դանիայի, Իսլանդիայի, ՉԺՀ-ի, Ֆինլանդիայի քրեական օրենսգրքերում իրավաբանական անձանց նկատմամբ որպես պատասխանատվության միակ տեսակ նախատեսված է տուգանքը[5] : Շվեյցարիայի, Շվեդիայի օրենսդրություններում նախատեսվում է միայն 2 պատժատեսակ՝ տուգանք և բռնագանձում:

---

[1] *Տե՛ս* ***Кузнецова Н.Ф,*** *Новый Уголовный Кодекс Франции. с. 36.*

[2] *Տե՛ս* ***Gunter Heine,*** *New Developments in Corporate Criminal Liability in Europe: Can Europeans Learn from the American Experience—or Vice Versa, 1998 St. Louis-Warsaw Transatlantic (1998). p. 131-138.*

[3] *Տե՛ս* ***C. Harding,*** *Criminal Liability of Corporations-United Kingdom , in La Criminalisation du Comportament Collectif: Criminal Liability of Corporations (H. de Doelder & Klaus Tiedemann (eds.), Kluwer Law Int'l, 1996, p. 381-382.*

[4] *Տե՛ս* ***C. Harding,*** *նույն տեղում-, էջ 382:*

[5] *Տե՛ս Criminal Liability of Companies in Denmark. Eighty years of experience. In: Adam, S., Colette- Basecqz N., Nithout M.: La responsabilité pénale des personnes morales en Europe / Corporate Criminal Liability in Europe. Bruges: La Charte, 2008, p 110.*

Տույժերը պետք է լինեն այնքան մեծ, որ ազդեցություն ունենան ընկերությունների վրա[1] :Տույժերը համարվում են ամենահաճախ կիրառվող պատժամիջոցները[2]: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ դրամական տույժերը որևէ կերպ չեն կարող զսպել ընկերություններին: Օտարերկրյա օրենսդրություններում իրավաբանական անձանց նկատմամբ հաճախ կիրառվող պատժատեսակներից է նաև բռնագանձումը: Գոյություն ունեն բռնագանձման հետևյալ տեսակները՝

1) հատուկ՝ հանցագործություն կատարելու համար օգտագործված կամ այդ նպատակով օգտագործման համար նախատեսված գործիքների բռնագանձում,

2) մասնակիորեն՝ հանցագործության կատարման արդյունքում ստացված կամ ձեռք բերված եկամուտների բռնագանձում,

3) ընդլայնված՝ բռնագանձման ենթակա է դատապարտված անձի գույքը, երբ հնարավոր չէ ապացուցել դրա ծագման օրինականությունը,

4) քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված բռնագանձում, որով թույլ է տրվում բռնագանձել ցանկացած գույք, որի ծագման օրինականությունը հնարավոր չէ ապացուցել[3]:

Բռնագանձումը՝ որպես պատժի միջոց, սահմանված է միջազգային մի շարք կոնվենցիաներում[4]: Լուծարումը «մահապատիժ» է իրավաբանական անձանց համար: Այն ամենախիստ հարկադրանքի միջոցն է, որը կիրառվում է հասարակությանը պաշտպանելու նպատակով: Սովորաբար դատարանի կողմից իրավաբանական անձի լուծարումը կարող է կիրառվել այն դեպքում, երբ պարզվել է, որ տվյալ իրավաբանական անձը հիմնադրվել է անօրինական նպատակով կամ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ մեծ մասամբ կապված է հանցագործություններ կատարելու հետ, կամ կատարել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություններ: Որոշ երկրներում սահմանափակվում է նաև այն իրավաբանական անձանց շրջանակը, որոնց նկատմամբ կարող է լուծարման ձևով պատիժ նշանակվել (Ռումինիա, Չեխիա և այլն):

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս տարբեր երկրների ժամանակակից քրեական օրենսդրության վերլուծությունը, բացի տուգանքից, կորպորացիաների նկատմամբ առավել հաճախ կիրառվում են հետևյալ սանկցիաները՝

1. հատուկ բռնագանձումը (Ալբանիա, Բելգիա, ԱՄՆ, Ֆրանսիա),
2. իրավաբանական անձի գործունեության սահմանափակում, այդ թվում՝ որոշակի գործունեությամբ զբաղվելու արգելք, ենթակառույցների կամ մասնաճյուղերի փակում (Հունգարիա, Բելգիա, Գերմանիա, Լիտվա, Ֆրանսիա),
3. իրավաբանական անձի գործունեության ժամանակավոր դադարեցում (Իսպանիա, Ֆրանսիա),
4. իրավաբանական անձի լուծարում (Ֆրանսիա, Հունգարիա, Բելգիա, Լիտվա, Մոլդովա, Նորվեգիա),
5. վճռի հրապարակում (Բելգիա, Ֆրանսիա, Չեխիա):

Ուսումնասիրելով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնահարցը՝ հանգել ենք այն հետևությանը, որ իրավաբանական անձի քրեական պատասխանատվություն նախատեսելը անհրաժեշտ է մի քանի պատճառներով. ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիաները պահանջում են կոռուպցիոն հանցագործությունների դեպքում իրավաբանական անձի նկատմամբ արդյունավետ պատասխանատվության մեխանիզմների կիրառում: Չնայած կոնվենցիաներով քրեական պատասխանատվություն նախատեսելու պահանջ չի պարտադրվում, սակայն քրեական պատասխանատվությունը

---

[1] *Տե՛ս Anca Iulia Pop, նույն տեղում, էջ 39:*

[2] *Տե՛ս Anca Iulia Pop, նույն տեղում, էջ 40:*

[3] *Քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված բռնագանձումը տարբերվում է նրանով, որ կարող է կիրառվել նույնիսկ այն դեպքում, երբ գույքի սեփականատերը որևէ հանցագործության համար չի դատապարտվել:*

[4] *Տե՛ս http://eur-lex.europa.eu*

շահեկան է: Արդարացված է նույն արարքի համար իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ միաժամանակյա պատասխանատվության սահմանումը, քանի որ, եթե քրեական պատասխանատվության ենթարկվի միայն հանցանք կատարած ֆիզիկական անձը, ապա տվյալ իրավաբանական անձի համար այն չի կարող ունենալ նախականխիչ նշանակություն: Շատ դեպքերում, թեև գործադիր տնօրենը ենթարկվում է քրեական պատասխանատվության, կազմակերպությունը շարունակում է իր հանցավոր գործունեությունը: Միևնույն ժամանակ, իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ միաժամանակյա պատասխանատվություն սահմանելը ենթադրում է, որ իրավաբանական անձը քրեական պատասխանատվություն պետք է կրի իր աշխատակցի կողմից հանցանք կատարելու համար այն դեպքում, եթե վերջինս իր գործողություններով տվյալ իրավաբանական անձին օգուտ բերելու նպատակ է հետապնդում կամ գործում է ի շահ տվյալ իրավաբանական անձի:

Հարկ է ընդգծել, որ նոր օրենսգրքով կարգավորված չեն այն դեպքերը, թե ինչպես է հաշվակցվում տուգանքը գործունեության որոշակի տեսակով փոխարինելիս, ինչպես նաև, երբ իրավաբանական անձը վճարել է տուգանքի մի մասը և խուսափում է մնացած մասը վճարելուց: Այս իրադրությունները պետք է օրենսդրորեն կարգավորվեն:

Նոր օրենսգրքով առաջարկվող պատասխանատվության միջոցների ցանկը չի ընդգրկում այնպիսի այլընտրանքային պատիժներ, ինչպիսիք են՝ վարչական հսկողությունը, դատական հսկողությունը, պարտադիր վերահսկողության սահմանումը, փորձաշրջանի սահմանումը և այլն: Հետևաբար, առաջարկում ենք իրավաբանական անձանց քրեաիրավական ներգործության միջոցների համակարգում ներառել նաև կանխարգելիչ բնույթի այնպիսի միջոցներ, ինչպիսիք են՝ փորձաշրջանի սահմանումը կամ դատական հսկողությունը:

Կատարված վերլուծության արդյունքում հանգել ենք հետևության, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը ներկայումս հանցավորության դեմ պայքարի անհրաժեշտ ու արդյունավետ ուղի է: Վերջում մեծ վստահությամբ կարող ենք նշել, որ տվյալ ինստիտուտի արդյունավետությունը կարող է բացահայտվել միայն պրակտիկ կիրառության դեպքում:

ՀՏԴ 343.2/.7

Արա Սարգսյան
Արցախի պետական համալսարան
Պատմության և իրավագիտության
ֆակուլտետ, բակալավրիատ
Իրավագիտություն 2-րդ կուրսի ուսանող
Էլ. փոստ՝ caroka@inbox.ru

Գիտական ղեկավար՝
ի.գ.թ. Տ.Գևորգյան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՏԱՊԱԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր՝ *Սահմանադրություն, սահմանադրական կարգ, քրեական օրենսգիրք, հանցանք, դիսպոզիցիա, հակասահմանադրական, քրեական պատասխանատվություն, պատիժ:*

Սահմանադրական կարգի հիմունքները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կարևորագույն գլուխներից է, քանի որ հենց այստեղ են զետեղված այն հիմնարար դրույթները, որոնք սահմանում են պետական իշխանության բնույթը, մարդու, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները և այլն: Սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցագործությունները ներկայումս առավել վտանգավոր հանցագործություններից են, քանի որ դրանք ուղղված են հենց Սահմանադրության կարևորագույն դրույթների դեմ: Սույն աշխատանքում կատարվել է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 300.1-ի հետազոտություն և վերլուծություն՝ օրենսդրական բացերն ու իրավական անորոշությունները պարզաբանելու նպատակով:

Ара Саргсян

ПРОБЛЕМА НЕСОСТОЯТЕЛЬНОСТИ КОНСТИТУЦИОННОГО СТРОЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевые слова: *Конституция, конституционный строй, уголовный кодекс, преступление, диспозиция, неконституционность, уголовная ответственность, наказание.*

Основы конституционного строя являются одной из важнейших глав Конституции Республики Армения, так как содержат основные положения, определяющие природу государственной власти, человека, его достоинство, основные права и свободы и т.д. Преступления против конституционного строя в настоящее время являются одними из самых опасных преступлений, так как направлены против важнейших положений Конституции. В данной работе проведено исследование и анализ статьи 300.1 УК РА с целью уточнения законодательных пробелов и правовых неопределенностей.

Ara Sargsyan

THE PROBLEM OF THE FAILURE OF THE CONSTITUTIONAL ORDER IN THE REPUBLIC OF ARMENIA

Keywords: *Constitution, constitutional system, criminal code, crime, disposition, unconstitutionality, criminal liability, punishment.*

The foundations of the constitutional order are one of the most important chapters of the Constitution of the Republic of Armenia, as they contain the main provisions that determine the nature of state power, a person, his dignity, fundamental rights and freedoms, etc. Crimes against the constitutional system are currently one of the most dangerous crimes, as they are directed against the most important provisions of the Constitution. In this paper, a study and analysis of Article 300.1 of the RA Criminal Code was carried out in order to clarify legislative gaps and legal uncertainties.

Սահմանադրական կարգի և պետական անվտանգության հիմքերի դեմ ուղղված հանցագործությունների համար պատասխանատվության խնդիրը շարունակում է արդիական մնալ ներկա փուլում: Հաշվի առնելով այդ հանցագործությունների հասարակական մեծ վտանգը, դրանց հակազդեցությունը պետք է լինի իրավապահ մարմինների գործունեության կարևոր ուղղություններից մեկը:

Սահմանադրական կարգի հիմքերի դեմ ուղղված հանցագործություններից լրջագույններից են՝ սպառնալիքներ սոցիալական կայունությանը, իշխանության գործունեությանը, պետության ինքնիշխանությանը և տարածքային ամբողջականությանը, իսկ որոշ դեպքերում՝ միջպետական հարաբերություններին, քանի որ իշխանությունը զավթած ուժերը կարող են փորձել ազդել միջազգային հարթությունում տեղի ունեցող գործընթացների վրա: Հակասահմանադրական հեղաշրջումները կարող են հանգեցնել պետության հետագա փոխանցմանը արտաքին վերահսկողությանը, երբ դրա ճակատագիրը որոշվում է խամաճիկ առաջնորդների կողմից, որոնք ավելի շատ արտահայտում են օտարերկրյա «կուրատորների», բայց ոչ երկրի բնակչության շահերը[1]:

Սահմանադրական կարգի հիմունքները Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կարևորագույն գլուխներից է, քանի որ հենց այստեղ են զետեղված այն հիմնարար դրույթները, որոնք սահմանում են պետական իշխանության բնույթը, մարդու, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները և այլն: Այդ իսկ պատճառով դրանց պաշտպանությանը պետք է առանձնահատուկ մոտեցում ցույց տալ: Այն ամրագրելով ընթացիկ օրենսդրության մեջ՝ օրենսդիրը սահմանել է դրա պաշտպանության, ինչպես նաև կանխարգելման մեխանիզմները: Սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցագործությունների հասարակական վտանգը ՀՀ սահմանադրական համակարգի խարխլումն ու կայունության խաթարումն է, այսինքն՝ հանցավոր ոտնձգության հիմնական օբյեկտները սահմանադրական համակարգի հիմքերն են: Սահմանադրական կարգի հիմունքների դեմ ուղղված հանցագործություններից է սահմանադրական կարգի տապալումը, որը ՀՀ իրավական համակարգում կարևոր ինստիտուտներից մեկն է:

Աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ հարցի պարզաբանումը, թե ինչ նշանակություն ունի սահմանադրական կարգի տապալման ինսիտտուտը ՀՀ քրեաիրավական համակարգում, թույլ կտա հստակ պատկերացում կազմել վերոնշյալ իրավական նորմի մասին, հատկապես, որ տվյալ ինստիտուտը պրակտիկայում չի կիրառվել ու հետազոտման առարկա չի հանդիսացել մինչ վերջերս տեղի ունեցած իրադարձություններն ու դրանցից բխող մի շարք գործընթացները:

Ուսումնասիրության առարկան ՀՀ քրեական օրենսգրքում «սահմանադրական կարգի տապալում» վերտառությամբ հոդված 300.1-ն է, որը սահմանում է,որ Սահմանադրական կարգը տապալելը՝ Սահմանադրության 1-ից 5-րդ հոդվածներով կամ 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված որևէ նորմը փաստացի վերացնելը, որն արտահայտվում է իրավական

[1] ***Хлебушкин Артем,*** *Уголовно-правовая политика Российской Федерации в сфере охраны оснсв констутиционного стройя, Санкт-Петербург 2016г., стр. 3.*

համակարգում այդ նորմի գործողության դադարեցմամբ, պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով, իսկ երկրորդ մասով սահմանում է,որ սույն հոդվածով նախատեսված հանցագործության նախապատրաստության փուլում դրան մասնակցող անձի կողմից հանցագործության նախապատրաստության մասին իրավապահ մարմիններին կամավոր հայտնած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից[1]: Հատկանշական է նաև այն փաստը, որ մինչև 2009թ. մարտի 18-ը ՀՀ քրեական օրենսգրքում «սահմանադրական կարգի տապալումը» հոդվածը, որպես առանձին հոդված չի եղել: Այն մտնում էր 300-րդ հոդվածի՝ «պետական իշխանությունը յուրացնելը» դիսպոզիցիայի մեջ[2]: Ուսումնասիրելով ՀՀ քրեական օրենսգրքերը՝ նախևառաջ պետք է նշել, որ երկու հոդվածների դիսպոզիցիաների միջև կան տարբերություններ: Անջատելով վերջինիս դիսպոզիցիայից սահմանադրական կարգի տապալումը՝ օրենսդիրը այն շարադրեց այլ հոդվածով, ու հատկանշական է այն փաստը, որ սահմանադրական կարգը տապալելը, ի տարբերություն ՀՀ 2003թ. խմբագրության քրեական օրենսգրքի, այն սահմանեց առանց «բռնությամբ» բառի: Այս հանգամանքը գնահատում ենք բացասական, քանի որ սրանով հանցագործության կատարման եղանակները ավելի են ընդլայնվում (օրինակ՝ ոչ բռնի ձևով), որը հետագայում կարող է վիճահարույց կիրառվել պրակտիկայում: Առավել կարևոր է այն փաստավորված հանգամանքը, որ քրեական օրենսգրքում այս փոփոխությունը կատարվել է 2008թ. մարտյան դեպքերից հետո: Սրան կանդրադառնանք մի փոքր ուշ:

«Սահմանադրական կարգը տապալելը» հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ Սահմանադրության վերոնշյալ հոդվածների փաստացի վերացումը համարվում է հանցագործություն, իսկ երկրորդ մասը որպես խրախուսական նորմ սահմանում է քրեական պատասխանատվությունից ազատվելը՝ սույն հանցանքի նախապատրաստման փուլում դրան մասնակցող անձի կողմից հանցագործության նախապատրաստության մասին իրավապահ մարմիններին կամավոր հայտնած անձին: Տվյալ հանցագործության սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձ, իսկ սուբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել միայն ուղղակի դիտավորությամբ, քանի որ տվյալ հանցանքը կատարելու համար անձը պետք է գիտակցի իր արարքի հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսի դրա վտանգավոր հետևանքները և ցանկանա դրանց վրա հասնելը: Օբյեկտիվ կողմը դրսևորվում է Սահմանադրության վերոնշյալ հոդվածների խախտումով, այսինքն՝ պետական իշխանության կառուցվածքը փոխելը, ժողովրդաիշխանության սկզբունքները խախտելը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ոտնահարումը և այլն: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ այն անձը ով խախտել է հոդված 300.1-ի դիսպոզիցիայում նախանշված պահանջները, այսինքն՝ Սահմանադրության 1-5-րդ հոդվածների և 6-րդ հոդվածի առաջին մասի նորմերի գործողությունը դադարեցրել է, ենթակա է քրեական պատասխանատվության:

Հարկ է նշել, որ 2009 թվականի մարտի 18-ին քրեական օրենսգրքում կատարված լրացումով[3] «սահմանադրական կարգի տապալումը» հոդվածի դիսպոզիցիայում հղում է կատարում 2005թ. խմբագրության Սահմանադրության հոդվածներին: Սակայն մեր ուսումնասիրություններից երևում է, որ ՀՀ Սահմանադրության 2015թ. փոփոխություններից հետո սույն քրեաիրավական նորմի դիսպոզիցիան չի փոփոխվել ու չի համապատասխանեցվել նոր ընդունված Սահմանադրությանը, որը մեր կարծիքով իրավական անորոշություն կարող է առաջացնել:

Կարևոր է նաև այստեղ ընդգծել նախադեպային իրավունքի առկայությունը: Սույն հոդվածի

---

[1] *ՀՀ Քրեական օրենսգիրք, փոփոխություններն ու լրացումները 2021թ. հունվարի 15-ի դրությամբ, Երևան, 2021թ., էջ 189-190:*

[2] *ՀՀ 2003թ. ապրիլի 18-ի Քրեական օրենսգիրք, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, URL: https://www.arlis.am/documentview.aspx?docid=22625 :*

[3] *ՀՀ Քրեական օրենսգիրք՝ 2009 թվականի մարտի 18-ի փոփոխություններով և լրացումներով, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, URL: https://www.arlis.am/documentview.aspx?docid=50241 :*

վերաբերյալ հատկանշական է ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումը[1], որտեղ վիճարկվում էր Ռոբերտ Քոչարյանի և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումների հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 300.1-ի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը: Դիմող Ռոբերտ Քոչարյանը բարձրացրել է վերոնշյալ հոդվածի՝ Սահմանադրության 72, 73, 78 և 79-րդ հոդվածների համապատասխանության հարցը: Դիմողը գտնում է, որ հոդված 300.1-ը ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որոշակիությամբ և չի ապահովում քրեաիրավական նորմի կանխատեսելիությանը ներկայացվող պահանջները: Նախևառաջ, որոշակի և կանխատեսելի չէ «իրավական համակարգում սահմանադրական նորմի գործողության դադարեցում» եզրույթը[2]: Այսինքն դիմող կողմը բարձրացրել է այն հարցը, որ նշված եզրույթը կարիք ունի բացահայտելու դրա սահմանադրաիրավական բովանդակությունը: Շարունակելով՝ դիմող կողմը նշեց նաև, որ իրավակիրառ պրակտիկայում սահմանադրական նորմի խախտումը նույնացվում է այդ նորմի գործողության դադարեցման հետ, և նշված դեպքում հնարավոր է, որ հետևյալ նորմերի ցանկացած խախտում դիտարկվի որպես սահմանադրական կարգի տապալում: Դիմողը նշեց, որ նորմի գործողության դադարեցումը դրսևորվում է ակտի փոփոխմամբ կամ ուժը կորցնելով, սակայն ոչ բոլոր դեպքերում է դա կարող համարվել սահմանադրական կարգի տապալում[3]:

Մեր կարծիքով՝ դիմող կողմը ճիշտ դիտարկում արեց, նախևառաջ, «իրավական համակարգում սահմանադրական նորմի գործողության դադարեցում» եզրույթի իմաստը, էությունը բացահայտված և պարզաբանված չէ, որի պատճառով էլ դժվար է հասկանալ, թե ինչ է նկատի ունեցել օրենսդիրը: Կարևոր է նաև այն հարցը, որ իրավակիրառ պրակտիկայում հետևյալ քրեաիրավական նորմը չի օգտագործվել, այսինքն՝ չկա դրա մեկնաբանության վերաբերյալ կայուն պրակտիկա: Հաջորդ դիտարկումը նույնպես կարևոր էր, քանի որ ոչ բոլոր դեպքերում է, որ նորմի փոփոխումը կամ դրա ուժը կորցրած ճանաչելը կարող է համարվել սահմանադրական կարգի տապալում: Դիտարկումների մասով պետք է նշել, որ երկուսն էլ խնդրահարույց հարցեր են, որոնք էլ որոշակի իրավական անորոշություն են առաջացնում:

Դիմող կողմը ներկայացրեց այն փաստը, որ Ազգային ժողովի նիստերի սղագրություններում օրենսդիրի կողմից ևս հավաստվել է նշված դրույթի՝ իրավական որոշակիության պահանջներին չհամապատասխանելու հանգամանքը: Ինչպես նաև դիմողն անդրադարձել է նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից նշված հանցակազմերի համեմատություններին[4]: Երկու տարբեր խմբագրությունների քրեական օրենսգրքերի տվյալ քրեաիրավական նորմի համեմատությունը ցույց է տալիս, որ հոդված 300.1-ը դիտարկվում է որպես նոր , ինքնուրույն հանցակազմ:

Քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք կատարելն է (ՀՀ ՔՕ հոդված 3), որից հետևում է, որ քրեական պատասխանատվության ենթակա է այն անձը, որի կողմից կատարվել է հանրորեն վտանգավոր արարք, որը նախատեսված է քրեական օրենսգրքի հատուկ մասով: Քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն, արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի: Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը

[1] *ՀՀ ՍԴՈ-1586, 26.03.2021թ.:*
[2] *Նույն տեղում:*
[3] *Նույն տեղում:*
[4] *ՀՀ ՍԴՈ-1586, 26.03.2021թ.:*

հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը[1]: Սույն հոդվածը սահմանում է քրեաիրավական նորմի հետադարձ ուժը, որի բովանդակությունից եզրակացնում ենք, որ այն, ելնելով մարդասիրական հիմունքներից, հետադարձ ուժ ունի միայն այն դեպքում, երբ վերացնում է արարքի հանցավորությունը, մեղմացնում է պատիժը կամ այլ կերպ՝ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը, իսկ արարքը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակը վատթարացնող նորմը հետադարձ ուժ չունի: Ինչպես նշեցինք աշխատանքի սկզբում, սույն հոդվածը լրացվել է քրեական օրենսգրքի 2009թ. փոփոխություններով, իսկ ՀՀ ՍԴ-ում վիճարկվող նորմի սահմանադրությանը համապատասխանելու հարցը վերաբերում էր նաև սրան: Այսինքն, այստեղ հոդված 300.1-ը չպիտի հետադարձ ուժ ունենա, քանի որ ենթադրյալ հանցանքը կատարվել է 2008թ., իսկ այդ նորմը ՀՀ ՔՕ-ում ընդգրկվել է 2009թ. փոփոխություններով, այն էլ հանցանք կատարած անձի վիճակը վատթարացնող նորմ է համեմատած մինչ այդ կատարված փոփոխությանը(ՀՀ ՔՕ, 2003թ.):

Անդրադառնալով ՀՀ Սահմանադրական դատարանի գործի վարույթին՝ պետք է նշել, որ դատարանը դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանին ու Վենետիկի հանձնաժողովին(«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով»)՝ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի խորհրդատվական կարծիքում նշված էր, որ քրեական օրենսդրության հետադարձ ուժի կիրառումը ի վնաս մեղադրյալի արգելվում է, այն չպետք է լայնորեն մեկնաբանվի ի վնաս մեղադրյալի, օրինակ՝ անալոգիայով: Իրավախախտումներն ու համապատասխան պատիժները պետք է սահմանված լինեն քրեական օրենքով: Հատկանշական է նաև այն փաստը, որ հանձնաժողովը ընգծեց՝ գործողությունը կամ անգործությունը քրեականացնելու նպատակով «բլանկետային հոման» կամ «հղում անելու մասին օրենսդրության» տեխնիկայի կիրառումն ինքնին անհամատեղելի չէ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջներին: Հղում կատարող դրույթը և հղում կատարված դրույթը, իրենց ամբողջության մեջ, պետք է հնարավորություն ընձեռեն շահագրգիռ անձին անհրաժեշտության դեպքում համապատասխան իրավաբանական խորհրդատվության օգնությամբ կանխատեսելու, թե իր վարքագծի ինչպիսի դրսևորումը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության[2]: Այսինքն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տված խորհրդատվական կարծիքը նույնպես ընդգծեց, որ քրեաիրավական նորմի հետադարձ ուժի կիրառումն ի վնաս մեղադրյալի անթույլատրելի է, ինչպես նաև անդրադարձավ տվյալ քրեաիրավական նորմի բովանդակության ոչ հստակ ու չբացահայտված լինելու հանգամանքին: Անշուշտ, կարծում ենք, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի տված խորհրդատվական կարծիքում տրված մեկնաբանությունները ճիշտ են, և հետևյալ նորմի բովադակությունը բացահայտված չէ, այդ իսկ պատճառով իրավական անորոշություն կարող է առաջացնել:

ՀՀ Սահմանադրական դատարանը դիմելով Վենետիկի հանձնաժողովին(«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողով»)՝ առաջադրեց հետևյալ հարցերը՝

1.արդյո՞ք Վենետիկի հանձնաժողովի անդամ պետությունների քրեական օրենքներում «սահմանադրական կարգի դեմ ուղղված» հանցագործությունները պարունակում են հղումներ սահմանադրություններին կամ դրանց կոնկրետ հոդվածներին,

2.ինչպե՞ս են Վենետիկի հանձնաժողովի անդամ պետությունների վերաբերելի իրավական ակտերում և, մասնավորապես, քրեական օրենքներում նկարագրվում «սահմանադրական կարգ», «սահմանադրական կարգի տապալում», «իշխանության յուրացում» եզրույթները, և արդյո՞ք

---

[1] ՀՀ Քրեական օրենսգիրք, փոփոխություններն ու լրացումները 2021թ. հունվարի 15-ի դրությամբ, Երևան, 2021թ., էջ 27:

[2] ՀՀ ՍԴՈ-1586, 26.03.2021թ.:

առկա են այդ եզրույթների դատական մեկնաբանություններ,

3.որո՞նք են հանցագործություն սահմանող օրենքին ներկայացվող որոշակիության պահանջի եվրոպական չափորոշիչները,

4.արդյո՞ք Վենետիկի հանձնաժողովի անդամ պետություններում առկա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 300.1-ի բովանդակությանը համանման հանցագործություն,

5. եթե այո, ապա ո՞րն է իրավական որոշակիության տեսանկյունից լավագույն փորձը[1]:

Կարծում ենք, որ նմանատիպ մոտեցումը ՍԴ-ի կողմից ճիշտ էր, քանի որ Հայաստանի Հանրապետությունում չկա սույն քրեաիրավական նորմը մեկնաբանող կայուն դատական պրակտիկա: Վենետիկի հանձնաժողովն իր խորհրդատվական կարծիքի մեջ նշել է՝

1.որոշ երկրներ կիրառում են *սահմանադրական կարգ* եզրույթը, մյուսները գերադասում են կիրառել *սահմանադրական համակարգ կամ ժողովրդավարություն* եզրույթները: Դա հաճախ ենթադրում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, ավելի կոնկրետ՝ սահմանադրական մարմինների բնականոն գործունեության դեմ ուղղված գործողություններ:

2.համապատասխան անդամ պետություններում սահմանադրական կարգը վերաբերում է սահմանադրական տարբեր սկզբունքներին (ինչպիսիք են՝ ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, ժողովրդավարական կարգը, իրավական պետություն, օրենքի գերակայությունը, իրավական ֆորմալիզմը, ուժերի հավասարակշռությունը), ինչպես նաև ընդգրկում են մարմիններ, որոնք սահմանված են համապատասխան սահմանադրություններով և դրանց պատշաճ գործունեությամբ:

3.Օրենքի հետևանքները նույնպես պետք է կանխատեսելի լինեն, ինչը նշանակում է, որ օրենքը պետք է հրապարակվի նախքան դրա կիրարկումը, և դրա հետևանքները պետք է կանխատեսելի լինեն, այսինքն՝ օրենքը պետք է լինի շարադրված բավարար ճշգրտությամբ և հստակությամբ, որպեսզի իրավունքի սուբյեկտները կարողանան դրսևորել համապատասխան վարքագիծ:

4.Անդամ պետություններն իրենց իսկ ազգային սահմանադրություններում և օրենսդրություններում տարբեր մոտեցումներ են ցուցաբերում սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցագործությունների առնչությամբ: Եթե անդամ պետություններում առկա են նման հանցագործություններ, և սահմանադրությունը համապատասխան հղում է պարունակում, ապա դրանք հաճախ սահմանում են Սահմանադրության բռնի և ապօրինի փոփոխությունը՝ որպես այս հանցագործության տարր, և սահմանադրությունը վկայակոչում են որպես ամբողջություն: Մյուս անդամ պետություններն անմիջականորեն հղում են կատարում սահմանադրական կարգը պահպանելու պարտականությանը՝ առանց այն սահմանելու: Այնուամենայնիվ, կարծես թե առկա չեն օրենսդրական դրույթներ, որոնք ուղղակի հղում կպարունակեն սահմանադրության կոնկրետ հոդվածներին:

5.Առկա է սահմանադրական կարգի, սահմանադրական կարգի տապալման, իշխանության յուրացման եզրույթների վերաբերյալ նախադեպային իրավունքի պակաս, որը վկայում է, որ հիմնականում այդ եզրույթները կարգավորող օրենսդրական դրույթներն առ օրս չեն կիրառվել: Սա իր հերթին վկայում է, որ առկա չէ լավագույն պրակտիկա՝ կապված այն փաստական հանգամանքների հետ, որոնցով պատիժ է նախատեսվում նմանատիպ հանցագործության, օրինակ պետական դավաճանության համար, որին կարող են առնչվել անդամ պետությունները: Ինչ վերաբերում է քրեական օրենսդրության հետադարձ ուժի արգելմանը և օրենքներում հանցավոր գործողությունների բավարար հստակ և ճշգրիտ սահմանումներ նախատեսելու պահանջին, ապա սահմանադրական կարգի հասկացությունների և սահմանադրական կարգի տապալման վերաբերյալ անճշտությունների քննադատությունները կարող են մեղմացուցիչ հանգամանք հանդիսանալ այն առումով, որ Վենետիկի հանձնաժողովի անդամ պետությունները եկել են կոնվերգենցիայի (միատեսակ մոտեցում)՝ թողնել այդ եզրույթները անորոշ և ոչ հստակ

[1] *Նույն տեղում:*

ձևակերպված[1]:

Վենետիկի հանձնաժողովի կարծիքում նույնպես առկա են այնպիսի մեկնաբանություններ, որոնք փաստում են ուսումնասիրության առարկա հանդիսացող ՀՀ քրեական օրենսգրքի «սահմանադրական կարգի տապալում» վերտառությամբ հոդված 300.1-ի ոչ բավարար հստակությամբ ու որոշակիությամբ ձևակերպված լինելու հանգամանքը: Երկու միջազգային տարբեր կառույցների տված կարծիքներում էլ, մեր կարծիքով, առկա են մի շարք կարևոր մեկնաբանություններ ու դրույթներ՝ սույն և ընդհանրապես բոլոր քրեաիրավական նորմերի վերաբերյալ: Ինչ վերաբերում է ՍԴ-ի կոնկրետ այս գործին, համամիտ ենք այն մտքին, որ սույն հոդվածը բավարար չափով հստակ չի ամրագրված և չի համապատասխանում 2015թ. կատարված փոփոխություններով Սահմանադրությանը:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ Սահմանադրական դատարանը, ելնելով գործի քննության արդյունքներից, որոշեց Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հոդված 300.1-ը ճանաչել Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր[2]: Փաստորեն, սույն հոդվածը չի համապատասխանում իրավական որոշակիության և համաչափության սկզբունքներին: Այս ամենի հետ պետք է նշել նաև, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը, որն ընդունվել է 05.05.2021թ-ին և ուժի մեջ է մտնելու 01.07.2022թ-ին, 420-րդ հոդվածով սահմանում է՝

1.Սահմանադրական կարգը տապալելը՝ Սահմանադրության 1-ին, 2-րդ, 3-րդ կամ 4-րդ հոդվածով, կամ 5-րդ, կամ 6-րդ հոդվածի 1-ին մասով, կամ 7-րդ հոդվածով նախատեսված նորմի գործողությունը փաստացի դադարեցնելը, պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով[3]: Նախնառաջ պետք է նշենք, որ սույն հոդվածը արդեն իսկ ՀՀ ՍԴ-ի կողմից ճանաչվել է Սահմանադրությանը հակասող և անվավեր, ուստի գտնում ենք, որ սույն քրեաիրավական նորմը չպիտի տեղ գտնի նոր քրեական օրենսգրքում: Ճիշտ է, այստեղ օրենսդիրը կատարել է փոփոխություններ, համապատասխանեցրել է այն 2015թ. խմբագրության Սահմանադրությանը, սակայն դրանով իսկ մեր կարծիքով չեն ապահովվել սույն նորմի որոշակիությունն ու համաչափությունը: Հոդվածի երկրորդ մասը դուրս է մնացել նախագծից, ինչպես նաև «իրավական համակարգում այդ նորմի գործողության դադարեցումը» եզրույթը օրենսդիրը նույնպես չի նախատեսել օրենսգրքի փոփոխություններում, ինչը մեր կարծիքով ինքնին ավելի է ընդգծում սույն նորմի ոչ բավարար հստակ ու որոշակի լինելը և կստեղծի իրավական անորոշություն իրավական համակարգում:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը, կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1.Նախնառաջ, ՀՀ ՔՕ հոդված 300.1-ը 2015թ. կատարված Սահմանադրության փոփոխություններից հետո, այն էլ էական, պետք է համապատասխանեցվեր նոր խմբագրության Սահմանադրությանը:

2.Քանի որ քննարկվող քրեաիրավական նորմը ՍԴ-ի կողմից ճանաչվել է Սահմանադրությանը հակասող և անվավեր, ապա առաջարկում ենք կամ լրիվությամբ հեռացնել ՀՀ քրեական օրենսգրքից, կամ ենթարկվի այնպիսի փոփոխությունների, որոնք թույլ կտան ավելի հստակ պատկերացում կազմել սույն քրեաիրավական նորմի մասին: Քանի որ չկա այս նորմի վերաբերյալ կայուն պրակտիկա, այն պետք է մեկնաբանվի այնպես, որ հետագայում չառաջացնի իրավական անորոշություն:

3.«Սահմանադրական կարգը տապալելը» քրեաիրավական նորմի դուրս բերումը «պետական իշխանությունը յուրացնելը» դիսպոզիցիայից մեր կարծիքով սխալ էր, այն էլ առանց «բռնությամբ» եզրույթի: Բացի այդ, բռնությամբ տապալելու եղանակը վերացնելը օրենսդիրի կողմից ըստ էության ընդլայնվեց հանցանքը կատարելու եղանակը, որը մեր կարծիքով իրավական կարգավորման խնդիր կստեղծի: Առաջարկում ենք, որ օրենսդիրը «սահմանադրական կարգը

---

[1] ՀՀ ՍԴՈ-1586, 26.03.2021թ.:

[2] ՀՀ ՍԴՈ-1586, 26.03.2021թ.:

[3] .ՀՀ Քրեական օրենսգրքի նախնագիծ, 05.05.2021, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=153080, 26.03.2021թ.:

բռնությամբ տապալելը» եզրույթը միացնի «պետական իշխանությունը յուրացնելը» դիսպոզիցիային կամ որպես սահմանադրական կարգի տապալման ինստիտուտ՝ օգտագործի այն երկրների փորձը, որոնց իրավական համակարգը զգալիորեն ավելի զարգացած է:

4.Առաջարկում ենք նաև վերանայել սանկցիայի չափը՝ այն ավելի խստացնելու նպատակով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրական կարգը ՀՀ Սահմանադրության կարևորագույն դրույթներ պարունակող գլուխ է, և տվյալ հանցանքը կատարող անձը պետք է ավելի խիստ պատժի ենթարկվի՝ հաշվի առնելով արարքի բարձր հասարակական վտանգավորությունը:

Գրականություն

1.ՀՀ Սահմանադրություն, 2005թ.:

2.ՀՀ Սահմանադրություն, 2015թ.:

3.ՀՀ Քրեական օրենսգիրք, 2003թ.:

4.ՀՀ Քրեական օերնսգիրք, 2021թ, փոփոխություններն ու լրացումները՝ 2021թ. հունվարի 15-ի դրությամբ:

5.ՀՀ Քրեական օրենսգրքի նախագիծ, 05.05.2021, ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝ 01.07.2022:

6. ԱՀ Քրեական օրենսգիրք, 2013թ.:

7.ՀՀ ՍԴՈ-1586, 26.03.2021թ.:

8.**Хлебушкин Артем**, Уголовно-правовая политика Российской Федерации в сфере охраны основы конституционного строя, Санкт-Петербург, 2016г.

ՀՏԴ 338.38

Արևիկ Ավանեսյան
ԱրՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ, բակալավր
Էլ.փոստ՝ arevik21avanesyan@mail.ru

Գիտական ղեկավար՝ տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի ավագ դասախոս Ա.Խ. Հայրապետյան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *հյուրանոցային ինդուստրիա, երկտեղանոց համարների գներ, օտարերկրյա զբոսաշրջիկներ, հյուրանոցային ծառայություններ, հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, արցախյան երրորդ պատերազմի հետևանքներ:*

Հոդվածի հիմնական նպատակն է ներկայացնել Արցախի Հանրապետությունում հյուրանոցային ինդուստրիայի զարգացման խնդիրները, հեռանկարները արդի պայմաններում: Նպատակից ելնելով՝ խնդիր է դրվել ուսումնասիրել ԱՀ հյուրանոցային ինդուստրիայի ներկայիս ցուցանիշները, ներկայացնել ԱՀ-ում զբոսաշրջության զարգացումը՝ որպես հյուրանոցային տնտեսության կայացման նախադրյալ: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ Արցախյան երրորդ պատերազմի հասցրած վնասները ԱՀ զբոսաշրջության, հատկապես հյուրանոցային ինդուստրիայի ոլորտում լուրջ են, և այդ հարցի լուծումը այսօր էլ շարունակում է հրատապ մնալ:

Аревик Аванесян

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ОБЪЕКТОВ ГОСТИНИЧНОГО ХОЗЯЙСТВА В РЕСПУБЛИКЕ АРЦАХ В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

Ключевые слова: *гостиничная индустрия, цены на двухместные номера, иностранные туристы, гостиничные услуги, гостиничное хозяйство, последствия третьей Арцахской войны.*

Мысль о том, что война в Арцахе нанесла большой ущерб отрасли и её восстановление остаётся злободневной проблемой.

Основная цель статьи – рассмотреть проблемы и перспективы развития гостиничной индустрии в республике Арцах в поствоенный период. Исходя из этого, автор попытался исследовать современные показатели гостиничной индустрии и представить развитие туризма в республике как предпосылку стабилизации гостиничного хозяйства.

Arevik Avanesyan

TRENDS IN THE DEVELOPMENT OF HOTEL FACILITIES IN THE REPUBLIC OF ARTSAKH IN CURRENT CONDITIONS

Key words: *hotel industry, double room prices, foreign tourists, hotel services, hotel facilities, aftermath of the Third Artsakh War.*

The main objective of the article is to present the problems of hotel development industry of the Republic

of Artsakh, prespectives in modern conditions. A task has been set based on the goal to study the present indicators of the Republic of Artsakh's hotel industry, to present the development of tourism in Artsakh as a prerequisite for the establishment of a hotel economy. It turned out from our analysis that the damages of Artsakh III war on Artsakh's tourism, especially in the area of industry is severe and the solution of this questions is still urgent today.

Զբոսաշրջային բիզնեսի հաջող աշխատանքը մեծապես կախված է իր ենթակառուցվածքների արդյունավետ գործունեությունից: Հյուրանոցային տնտեսության ոլորտը զբոսաշրջության կարևորագույն ենթակառուցվածքներից է: Մեր օրերում հյուրանոցային արդյունաբերության մեջ ներառված է ավելի քան 300 հազար հյուրանոց՝ աշխարհի 142 երկրներից:

Համաճարակի և պատերազմի հետևանքով ԱՀ-ում զբոսաշրջության կայուն զարգացման, ինչպես նաև դրա ենթակառուցվածքների, մասնավորապես՝ հյուրանոցային ինդուստրիայի զարգացման խնդիրներն ու հեռանկարները ԱՀ կառավարության ծրագրերի գերակա խնդիրներից են, և կոչված են բացահայտելու այս ոլորտում առկա ողջ խնդիրները, զարգացման ներուժը, ինչպես նաև այնպիսի քայլերի ձեռնարկումը, որոնք կնպաստեն առկա և հնարավոր ռեսուրսների օգտագործման արդյունավետացմանը:

ԱՀ-ում հյուրանոցային շուկայի զարգացման ճանապարհին առկա են մի շարք մարտահրավերներ ու խոչընդոտներ, որոնք անհրաժեշտ է հաղթահարել՝ զարգացման ներուժը առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու համար:

Հյուրանոցային շուկայի առկա խնդիրներն առնչվում են նրան, որ ԱՀ-ում զբոսաշրջային ենթակառուցվածքների վիճակը հնարավորություն չի ընձեռում ավելի շատ քանակով և բարձր վճարունակությամբ զբոսաշրջիկների սպասարկելու, չկա մշակված միասնական գնային համակարգ, հյուրանոցները մատուցում են սահմանափակ թվով ծառայություններ:

2019 թվականին Արցախում գործել է 92 հյուրանոցային տնտեսության օբյեկտ (ՀՏՕ)՝ 1930 մահճակալ/տեղով, որից 9-ը պատերազմի հետևանքով մնացել է ԱՀ վերահսկողությունից դուրս: 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ ԱՀ տարածքում գործում է 158 հյուրանոցային տնտեսության օբյեկտ: Ներկայումս Արցախում գործող հյուրանոցային տնտեսության օբյեկտների մեծ մասը տրամադրվել է թշնամու վերահսկողության տակ անցած Արցախի Հանրապետության համայնքների տարհանված բնակիչներին: Հանրապետությունում առկա է ազատ բնակֆոնդի բավականին լուրջ խնդիր, ինչի հետևանքով այդ բացը որոշ չափով լրացնում են գործող հյուրանոցները: Տեղահանված ընտանիքների՝ հյուրանոցներում բնակվելու ծախսերը փոխհատուցվում են պետության կողմից:[1]

Գծապատկեր 1. Վերլուծություն հյուրանոցային տնտեսության օբյեկտների (ՀՏՕ) ոլորտի

Հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեսակը	Մինչև պատերազմը	Պատերազմի արդյունքում	Պատերազմից հետո
Հյուրանոց	32	29	29
Իջևանատուն	6	1	6
Զբոսաշրջային տուն	50	49	62
Ընդհանուր	***88***	***79***	***97***

[1] www.artsakh.travel.am

վերաբերյալ

Հյուրանոցային տնտեսության օբյեկտների տեսակը	Նոր հաշվառված	Վերահաշվառված
Հյուրանոց	0	1
Իջևանատուն	3	2
Զբոսաշրջային տուն	15	1
Ընդհանուր	***18***	***4***

Գծապատկեր 2. Պատերազմից հետո հյուրանոցային տնտեսության օբյեկտների (ՀՏՕ) ցանկի փոփոխությունները[1]

Ներկայիս հագեցած հյուրանոցային շուկայում մրցակիցներից տարբերվելը և հյուրերի համար գրավիչ մնալը բավականին բարդ խնդիր է: Հյուրանոցի առաջխաղացման և կառավարման համար կարևոր է հասկանալ, թե որոնք են հյուրանոցի այն առանձնահատկությունները, որոնք գրավում են հյուրերին, ինչպես պետք է սահմանել համապատասխան գին՝ մատուցած ծառայությունների համար: Որպեսզի հյուրանոցային համալիրը շահութաբեր գործի, անհրաժեշտ է ապահովել միջինը տարեկան 45-47% զբաղվածություն:



Գծապատկեր 3. ԱՀ-ում հյուրանոցների երկտեղանոց համարների գները 2021թ.[2]

ԱՀ-ում զբոսաշրջիկների կողմից կատարվող բուն զբոսաշրջային ծախսերը բնութագրվում են ցածր ցուցանիշներով: Սա առաջին հերթին պայմանավորված է որակական և քանակական առումով սահմանափակ զբոսաշրջային արդյունքով և ծառայություններով: Արցախ ժամանած զբոսաշրջիկներից ստացված գումարը 2018 թ. կազմել է 2284,7 հազար ԱՄՆ դոլար, այսինքն՝ յուրաքանչյուր զբոսաշրջիկ միջինը ծախսել է 80 ԱՄՆ դոլար: Ըստ Արցախի ԱՎԾ տվյալների՝ կացության և հանրային սննդի ծառայությունների ծավալը 2018 թ. եղել է ընդհանուր ծառայությունների 5,2%-ը (3154.0 մլն դրամ, որից՝ կացության կազմակերպում՝ 769,3 մլն դրամ, հանրային սննդի կազմակերպում՝ 2744,7 մլն դրամ), որի 84,6%-ը բաժին է ընկել Ստեփանակերտին, 15,4%-ը՝ Արցախի մյուս շրջաններին: Զբոսաշրջային ծախսերը կարող են ավելանալ այլընտրանքային զբոսաշրջային արդյունքների ձևավորման և զարգացման,

[1] www.artsakhlib.am
[2] www.allhotels.am

զբոսաշրջային ծառայությունների որակի բարելավման և նոր, պահանջարկ վայելող զբոսաշրջային գրավչությունների զարգացման միջոցով:

ԱՀ-ում հյուրանոցային շուկայի զարգացման համար մեծ խնդիր են հարուցում նաև ոչ որակյալ սպասարկումն ու հաճախորդների հետ բանակցային հմտությունների, խորհրդատվության բացակայությունը: Սա նշանակում է, որ հյուրանոցային ոլորտում անհրաժեշտ է ցուցաբերել պրոֆեսիոնալիզմ, լինել որակյալ մասնագետ, ինչի պակասն այսօր Արցախում շատ է զգացվում: Հիմնականում զգացվում է այն մասնագետների կարիքը, ովքեր բարձրակարգ խորհրդատվությամբ կարողանում են ներկայանալ այնպիսի առանցքային ոլորտներում, ինչպիսիք են՝ սննդի և խմիչքի ոլորտները, ամրագրման, կառավարման, կենտրոնացված հաշվապահական գործառույթներինը և այլն:



Գծապատկեր 4. ԱՀ հյուրանոցային տնտեսությունում հիմնական գործունեությամբ զբաղված աշխատողների թիվը 2015-2019թթ.[1]

Պատկերված գրաֆիկից պարզ է դառնում, որ 2015-2019 թթ. հյուրանոցային տնտեսության օբյեկտներում զբաղված հիմնական աշխատողների թվաքանակը նվազել է միջինում 1.9 %-ով: Ուշադրության է արժանի այն փաստը, որ 2014-2018 թթ. նվազել է Արցախի Հանրապետության հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հիմնական զբաղվածություն ունեցող աշխատակիցների քանակը, իսկ ընդհանուր թվաքանակը աճել է: Ընդ որում, 2008 թ. նկատմամբ աշխատակիցների քանակը աճել է 5 անգամ:

ԱՀ-ում կան հյուրանոցային տնտեսության օբյեկտների կայացման համար անհաժեշտ բոլոր ռեսուրսները, որոնց նպատակային արդյունավետ օգտագործելու դեպքում այն կարող է դառնալ ազգային տնտեսության կարևորագույն բնագավառներից և նպաստել տարածքային համաչափ զարգացմանը:

ԱՀ հյուրանոցային տնտեսության օբյեկտների զարգացման, բարելավման ուղիներն են՝

1. հյուրանոցային տնտեսության օբյեկտների կայուն զարգացման ապահովման միջոցով նպաստել ԱՀ-ում զբոսաշրջության զարգացմանը,
2. ակտիվ և արդյունավետ մարքեթինգային քաղաքականության իրականացման միջոցով միջազգային շուկայում ապահովել Արցախի Հանրապետության՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ և գրավիչ երկրի նկարագրի ձևավորմանը, ներկայացմանն ու ամրապնդմանը,
3. նոր ու միջազգային չափորոշիչներին համապատասխանող հյուրանոցային տնտեսության օբյեկտների կառուցում, ինչը կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության եկամուտների ավելացմանը,

[1] *Տեղեկանք «2021 թ. զբոսաշրջության մրցակցության զեկույցի» վերաբերյալ*

4. մասնակցություն հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակի բարձրացման համար կազմակերպվող դասընթացներին, ինչն էլ ավելի կնպաստի այդ ոլորտում փորձի փոխանակման խորացմանը, ակտիվ և արդյունավետ համագործակցության կապերի ստեղծմանը, անձնակազմի պրոֆեսիոնալիզմի բարձրացմանը,

5. արտերկրների պահանջարկի շուկաներում (մասնավորապես՝ սփյուռքահայերի շրջանում) տեղեկատվական և քարոզչական աշխատանքների իրականացում,

6. բարենպաստ բիզնես միջավայրի ստեղծում[1]:

Այս կարգավորումները հնարավորություն կտան երկրի հյուրանոցային արդյունաբերությունում զարգացման նոր փուլ գրանցել, ինչն էլ իր հերթին կնպաստի Արցախում զբոսաշրջության զարգացմանը, քանի որ այն անմիջապես կախված է հյուրանոցային տնտեսության օբյեկտների կայացման աստիճանից: Հյուրանոցների կողմից մատուցվող ծառայությունների բարձրակարգ որակը, անձնակազմի արհեստավարժությունը, տեխնիկական հագեցվածության բարձր մակարդակը ավելացնում է տվյալ երկիր այցելող զբոսաշրջիկների հետաքրքրությունը:

ԱՀ Ազգային վիճակագրական ծառայությունը 2019թ. հոկտեմբերին հրապարակել է զեկույց՝ «Զբոսաշրջության ընտրանքային հետազոտության» վերաբերյալ: Հետազոտությանը մասնակցել է աշխարհի 41 երկրներից ԱՀ այցելած 393 զբոսաշրջիկ: Ընդ որում, այցելածների 69.7% ունի հայկական ծագում:

Ըստ հետազոտության արդյունքների՝ զբոսաշրջիկների 35.4% ԱՀ է ժամանել մարզական, մշակութային միջոցառումներին մասնակցելու, 28%-ը ՝ հանգստի և ժամանցի, 23.9%-ը՝ հարազատներին և ընկերներին այցելելու նպատակներով: Հարցվածների միայն 9.1%-ն է Արցախ այցելել մասնագիտական շրջագայության, 3.5%-ը՝ ուխտագնացության նպատակով, իսկ 4%-ին գրավել է Արցախի հիմնախնդիրը: Այլ պատճառ նշածների 4.8%-ը Արցախ է ժամանել ֆուտբոլի, իսկ 2.3% -ը՝ համահայկական խաղերի պատճառով: Ի դեպ հավելենք, որ զբոսաշրջիկները հնարավորություն ունեին Արցախ ժամանելու պատճառներից նշել մի քանի տարբերակ:

Գործնական նպատակով ԱՀ այցելածների 85.3%-ը և այլ երկրներ մեկնածների 70%-ը հանգրվանել է հյուրանոցում, համապատասխանաբար՝ 4.9%-ը և 30%-ը՝ բարեկամի կամ ընկերոջ տանը, հանգստի և ժամանցի նպատակով մեկնածների 21.8%-ը և ժամանածների 18.5%-ը՝ բարեկամի կամ ընկերոջ տանը, համապատասխանաբար՝ 65.5%-ը և 60.5%-ը՝ հյուրանոցում:

Հետազոտության ժամանակ ուսումնասիրվել է նաև մեկնողների կարծիքն այն մասին, թե ինչպես են նրանք գնահատում Արցախի Հանրապետության զբոսաշրջության ոլորտում գոյություն ունեցող ենթակառուցվածքների ծառայություններն ու հարմարությունները: 5 բալանոց գնահատման համակարգում առավելագույն գնահատականի չի արժանացել ոչ մի ծառայություն, ընդ որում՝ ամփոփված տվյալներով ամենացածր գնահատականին արժանացել են ներքին ճանապարհները՝ 3 բալ (միջին), և գների մակարդակը՝ 3.6 բալ (միջին), իսկ ամենաբարձրին՝ տեսարժան վայրերը՝ 4.5 բալ (լավ): Գնահատական տալու հարցում ակտիվ մասնակցություն են ունեցել 18-35 և 36-55 տարեկան տարիքային խմբերի զբոսաշրջիկները: Ընդհանուր հարցվածների 52.9%-ը հյուրանոցային ծառայությունների որակը գնահատել է գերազանց, 33.2% -ը՝ լավ, 12%-ը՝ բավարար, և 1,8% -ը՝ վատ:

[1] *«Զբոսաշրջության աջակցության ծառայություններ», ԱՀ Կառավարություն, 2011 թ., 13 հունվարի, N 78 Ն:*



Գծապատկեր 5. Մեկնողների կողմից տրված հյուրանոցային ծառայությունների և հարմարությունների որակի գնահատականները[1]

Հանդիսանալով Արցախի Հանրապետության տնտեսության ամենադինամիկ զարգացող ճյուղը (միջինը, օտարերկրյա զբոսաշրջիկների քանակի 40% աճ էր արձանագրվում)՝ զբոսաշրջությունը մեծապես տուժել է 2020 թվականի Covid 19-ի, ինչպես նաև Արցախյան երրորդ պատերազմի հետևանքով՝ նախորդ տարվա համեմատ 92%-ով: Ըստ ԱՀ զբոսաշրջության վարչության տեղեկատվության՝ 2021թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը Արցախի Հանրապետություն է այցելել 4391 օտարերկրյա քաղաքացի: 2020 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ ցուցանիշն աճել է 45,6%-ով, 2019 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել է 89,5%-ով: Հայաստանի Հանրապետությունից Արցախ ժամանող զբոսաշրջիկների թվաքանակը չի հաշվարկվում և հրապարկվում, այնինչ, զբոսաշրջության ոլորտի զարգացման վրա միանշանակ մեծ ազդեցություն ունեն նաև Հայաստանից ժամանած զբոսաշրջիկները, որոնք հանգրվանում են հյուրանոցային տնտեսության օբյեկտներում:



Գծապատկեր 6. ԱՀ այցելած զբոսաշրջիկների քանակը 2013-2021թթ. [2]

[1] *«Զբոսաշրջության ոլորտում անցկացված ընտրանքային հետազոտության զեկույց», ԱՀ ԱՎ, Ստեփանակերտ, 2019 թ., էջ 20:*

[2] www.stat.nkr.am

Ցավոք, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված Արցախյան երրորդ պատերազմի հետևանքով Արցախի շրջանների կորստի հետ մեկտեղ մենք կորցրինք նաև Արցախի զբոսաշրջային շրջանների մոտ 80%-ը: Վնասվել են հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, որոնցից 9-ը մեր վերահսկողությունից դուրս է մնացել, և ևս 8-ը՝ վնասվել: Ըստ որոշ նախնական գնահատումների՝ պատերազմի հետևանքով թշնամու վերահսկողության տակ անցավ Արցախի՝ շուրջ 2000 հուշարձան, այդ թվում՝ 13 վանական համալիր, 122 եկեղեցի, 52 ամրոց, 523 խաչքար և 4 մատուռ [1]:

Պատերազմի հետևանքով Ադրբեջանի վերահսկողության տակ անցավ ընդհանուր առմամբ՝ 121 համայնք, որտեղ առկա են զբոսաշրջային մեծ նշանակություն ունեցող շատ վայրեր և ռեսուրսներ, որն ահռելի կորուստ է: Արցախի հազարամյա պատմությունը վկայող այդ պատմամշակութային օբյեկտներն այսօր վտանգված են, դրանք շարունակաբար պղծվում և ոչնչացվում են թշնամու կողմից՝ հայկական հետքերը ջնջելու նպատակով, իսկ միջազգային ոչ մի կազմակերպություն չի շտապում Ադրբեջանի այդ մշակութային վանդալիզմին վերջ տալ:

Անկասկած, Արցախի բնության անկրկնելի հրաշալիքները և յուրօրինակ պատմամշակութային հնագույն հուշարձանները, հրաշագեղ բնությունը, ռեկրեացիոն բազմազան ռեսուրսները, մեղմ կլիմայական պայմանները, բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը, զուլալ ու մաքուր գետերը, հանքային սառը ջրերն ու աղբյուրները, ազգային համեղ խոհանոցը, հնի ու նորի համադրմամբ մշակույթը զբոսաշրջության ինդուստրիայի կազմակերպման համար լայն հնարավորություններ են ընձեռնում, և չնայած բոլոր խոչընդոտներին՝ Արցախն այսօր էլ մեծ ներուժ ունի զբոսաշրջության ոլորտում զարգանալու և աշխարհին իր բազմադարյա պատմություն ունեցող հայկական հարստությամբ ներկայանալու համար:

Գրականություն

1. Տեղեկանք «2021 թ. զբոսաշրջության մրցակցության զեկույցի» վերաբերյալ:
2. «Զբոսաշրջության աջակցության ծառայություններ», ԱՀ Կառավարություն, 2011 թ., 13 հունվարի, N 78Ն:
3. «Զբոսաշրջության ոլորտում անցկացված ընտրանքային հետազոտության զեկույց», ԱՀ ԱՎ, Ստեփանակերտ, 2019 թ., էջ 20:
4. www.stat.nkr.am
5. www.fip.am
6. www.artsakh.travel.am
7. www.artsakhlib.am
8. www.all.hotels.am

[1] www.fip.am

ՀՏԴ 330,3

Элен Мноян
Российско-Армянский университет
E-mail: mnoyanelen@gmail.com

ВЕНЧУРНОЕ ФИНАНСИРОВАНИЕ: ПРЕДПОСЫЛКИ ДЛЯ РАЗВИТИЯ В АРМЕНИИ

Ключевые слова: *венчурное финансирование, инвестиции, стартап, венчурный фонд.*

По мере увеличения количества стартапов в мире и их развития возрастает актуальность и роль венчурного финансирования. Задачей венчурных капиталистов является направление инвестиций в те стартапы, которым крайне тяжело получить финансирование из-за неопределенности данного стартапа и высоких рисков. Капиталисты выступают в роли посредника между предприятиями и инвесторами, что помогает минимизировать асимметрию информации. В последние годы Армения считается страной с высоким потенциалом для развития стартапов, имея в виду, что несмотря на небольшое население страны, существуют уже 2 стартапа-единорога армянского происхождения. В настоящее время количество венчурных фондов в Армении увеличивается, но они сталкиваются со многими препятствиями, связанными как с рыночными отношениями, так и с пробелами в законодательстве. В данной статье будут рассмотрены пути венчурного финансирования, а также текущая ситуация в Армении.

Elen Mnoyan

VENTURE FINANCING: PREREQUISITES FOR DEVELOPMENT IN ARMENIA

Keywords: *venture financing, investments, startup, venture fund.*

As the number of startups in the world and their development increases, the relevance and role of venture financing increases. The task of venture capitalists is to direct investments in those startups that are extremely difficult to get funding due to the uncertainty of this startup and high risks. Capitalists act as an intermediary between businesses and investors, which helps to minimize information asymmetries. In recent years, Armenia has been considered a country with a high potential for the development of start-ups, meaning that despite the small population of the country, there are already 2 start-up unicorns of Armenian origin. Currently, the number of venture capital funds in Armenia is increasing, but they face many obstacles related to both market relations and gaps in legislation. This article will examine the ways of venture financing, as well as the current situation in Armenia.

Էլեն Մնոյան

ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *վենչուրային ֆինանսավորում, ներդրումներ, ստարտափ, վենչուրային հիմնադրամ:*

Աշխարհում նորաստեղծ ձեռնարկությունների թվի աճին և դրանց զարգացմանը զուգահեռ մեծանում է վենչուրային ֆինանսավորման արդիականությունն ու դերը: Վենչուրային կապիտալիստների խնդիրն է՝ ուղղորդել ներդրումները դեպի այն ստարտափներ, որոնց համար չափազանց դժվար է ֆինանսավորում ստանալ վերջիններիս անորոշության և բարձր

ռիսկերի պատճառով: Կապիտալիստները հանդես են գալիս որպես միջնորդ բիզնեսի և ներդրողների միջև, ինչը օգնում է նվազագույնի հասցնել տեղեկատվական անհամաչափությունները: Հայաստանը վերջին տարիներին համարվում է ստարտափների զարգացման բարձր ներուժ ունեցող երկիր. չնայած երկրի փոքրաթիվ բնակչությանը, հայկական ծագումով արդեն 2 միաեղջյուր կա: Ներկայումս Հայաստանում ավելանում է վենչուրային կապիտալի հիմնադրամների թիվը, սակայն դրանք բախվում են բազմաթիվ խոչընդոտների՝ կապված ինչպես շուկայական հարաբերությունների, այնպես էլ օրենսդրության բացերի հետ: Այս հոդվածում կքննարկվեն վենչուրային ֆինանսավորման ուղիները, ինչպես նաև Հայաստանի ներկա իրավիճակը:

Венчурное финансирование предназначено в первую очередь для стартапов и новых проектов. Для финансирования последних были созданы венчурные фонды, где профессиональные посредники инвестируют в компании с большим потенциалом. В основном, денежные средства вкладываются в технологические стартапы с R&D основой. Следует отметить, что венчурные инвестиции считаются высокорисковыми, но в этом случае риск можно считать оправданным. Несмотря на неудачи, в случае успеха стартапа доход инвестора может быть огромным.

Однако важно учесть, что венчурные капиталисты отличаются от бизнес-ангелов несмотря на то, что оба инвестируют в молодые проекты. В случае бизнес-ангелов финансирование чаще всего осуществляется в стартапы на ранних стадиях. Отличительной чертой бизнес-ангелов и венчурных капиталистов является денежные средства, которые вкладывают. В первом случае используют собственные средства, в отличие от венчурных капиталистов, которые пользуются финансами фондов. Ангелы не стремятся к контролю над стартапами, хотя осуществляют активную и детальную проверку, а хотят быть участником проекта. Важным аспектом их деятельности является также консультирование и помощь в принятии управленческих решений, в случае отсутствия опыта и навыков предпринимателей. Венчурные же капиталисты могут вкладывать относительное большое количество денег, чем первые, но в отличие от бизнес-ангелов, у которых кроме финансовых перспектив важна также социальная ответственность, для венчурных капиталистов критически важно возврат своих инвестиций. Они осуществляют только стратегический мониторинг, не особо стремясь участвовать в управлении проекта.

Венчурное финансирование в стартапы может осуществляться разными способами: капиталисты могут приобрести обыкновенные или же привилегированные акции данного стартапа. Конечно, в дальнейшем данные акции могут быть проданы на бирже, а также возможен продолжительное получение дивиденда. В некоторых случаях, владельцы стартапа могут в дальнейшем выкупить акции у инвесторов, согласно заранее утвержденному графику, получив полный контроль над проектом.

Из-за нестабильной ситуации во всем мире и конфликта в Украине, инфляционной неопределенности и высоких рисков, стали ужесточены оценки технологических компаний и были приостановлены некоторые IPO (Первичное публичное предложение). Несмотря на это, как сообщает Forbs, имея в виду быстрый рост инвестиций, это не остановит развитие данного сектора [1].

Вместе с ростом ИТ-технологий в мире стремительно растет роль и значение стартапов и их финансирования. Рекордный рост венчурных инвестиций был зафиксирован в 2021 г., и он, скорее всего, будет непрерывным. Так, в прошлом году количество венчурных инвестиций достигло 621 миллиарда долларов, что на 111% больше, чем годом ранее (2020 соответствующий показатель составлял 294 млрд долларов, См. График 1). Почти половина инвестиций были осуществлены в Соединенных Штатах, 55% из которых прошлось на стартапы, находящихся на ранних стадиях развития [2].

График 1 Глобальное финансирование в годовом исчислении
Источник: CB Insights, State Of Venture 2021 Report, 2022



В 2021 году по сравнению с 2020 годом количество единорогов в мире увеличилось с 569 до 959. Так, всего за год количество последних увеличилось на 69%, и во многом это произошло за счет увеличения инвестиций в стартапы на более поздних стадиях. Стартапы из Армении также вошли в список стартапов-единорогов, что крайне важно для развития армянской экосистемы и для привлечения дальнейших инвестиций.

По оценкам Бизнес-школы IESE, на первом месте по рейтингу привлекательности страны для венчурного и частного капитала, очевидно, является США. На втором месте Великобритания, а Армения находится на 90-м из 125 стран. Соседние страны - Грузия и Азербайджан, находятся ниже в данном списке (См. Таблица 1)[3]

Таблица 1 Индекс привлекательности страны для венчурного и частного капитала, рейтинг 2021 г.
Источник: Бизнес-школа IESE, Александр Грох, Генрих Лихтенштейн, Карстен Лизер и Маркус Бизингер, 2021

№	Страна	Оценка
1	Соединённые Штаты	100
2	Великобритания	90,3
3	Япония	87,4
4	Германия	87,3
5	Канада	87,2
6	Сингапур	85
7	Китай	84,7
8	Австралия	84
9	Южная Корея	83,8
10	Франция	83,6
18	Новая Зеландия	76,7
90	Армения	32,90
92	Грузия	31,70
94	Азербайджан	30,30

Если отдельно рассмотреть Армению, увидим, что несмотря на улучшающееся состояние экосистемы в Армении, можно сказать, что по всем характеристикам Армения сильно отстает по показателям даже от азиатских стран (См. Рисунок 1). Исключение составляют показатели налогообложения и индекс защиты инвесторов и корпоративного управления, где Армения

находится в доволньно хорошем положении. В результате отдельного мониторинга индексных групп становится очевидным, что Республика Армения имеет преимущество перед указанными странами по налогообложению, в частности, Республика Армения по этому показателю находится на 40-м месте. Это говорит о благоприятном налоговом климате РА, чему способствует Закон РА «О государственной поддержке информационных технологий», согласно которому начинающие компании освобождаются от налога на прибыль на 5 лет, и уплачивают подоходный налог по ставке 10%. Факт упрощения и автоматизированности подачи отчетов, способствует созданию благоприятной налоговой среды. В 2023г. планируется усовершенствование данного законодательного акта, в связи чем добавятся некоторые отрасли также смогут воспользоваться льготами, предоставленными государством. Следующей группой показателей, где Армения имеет сравнительное преимущество, является группа «Защита инвесторов – корпоративное управление», по которой Армения занимает 43-е место. Самой слабой группой в индексе и в то же время имеющей значительный потенциал развития является группа «глубина рынка капитала». Показатели этой группы необходимы для инвестиционной привлекательности любой страны. Наличие рынка капитала еще более важно для венчурного капитала, так как рынок ценных бумаг обеспечивает возврат и ликвидность инвестиций, а финансовая система Республики Армения является банковско-централизованной.

Рисунок 1 Индекс привлекательности страны для венчурного и частного капитал Источник: Бизнес-школа IESE, Александр Грох, Генрих Лихтенштейн, Карстен Лизер и Маркус Бизингер, 2021



Политическая и экономическая стабильность являются чрезвычайно важной предпосылкой для венчурного финансирования. После 44-дневной войны 2020 года ситуация в Армении остается неопределенной, что снижает привлекательность страны для иностранных инвестиций, а постоянно напряженная ситуация между Арменией и Азербайджаном делает возврат финансирования рискованным для инвесторов. Таким образом, долгосрочная стабильная ситуация позволит увеличить объем инвестиций для улучшения внутреннего финансового положения.

Глобальные геополитические перестройки открыли перед Арменией новые возможности для развития своей экосистемы. Большое количество иностранных бизнесменов и сотрудников переносят свой бизнес в Армению, что может дать новый импульс развитию стартапов и сектора ИКТ в целом. Различные корпоративные организации и государственные учреждения стараются создать максимально благоприятную среду для сотрудников этих организаций.

Еще одной важной проблемой является отсутствие контролирующей организации для мониторинга венчурных инвестиций. Для некоторых стартапов приоритетом и целью являются не прогресс, а привлечение инвестиций. При отсутствии контроля со стороны инвесторов, средства могут иметь нецелевое использование, в результате, не достигнув ожидаемого результата. Решением может стать создание Национального венчурного фонда (НВФ), над созданием которого работает Министерство высокотехнологической промышленности. НВФ может вести свою деятельность как обычный венчурный фонд, так и как “фонд фондов” инвестируя вместе с зарубежными фондами методом совместных инвестиций (co-investment). В настоящее время ведутся работы для создания данного фонда[4].

Создание систематизированной венчурной системы создаст платформу для инвесторов и стартапов, которым из-за асимметрии информации и ряда других причин не удалось заключить деловые связи и коммуникацию. Данная платформа уменьшит издержки как для инвесторов, так и стартаперов; общие систематизированные нормы позволят объективнее и целесообразнее вкладывать средства в разные отрасли экономики, а улучшение законодательной базы облегчит жизнь для стартапов из разных отраслей, что положительно повлияет также на инвестиции и венчурное финансирование. Из-за нехватки денежных средств, в Армении в основном вложения осуществляются в стартапы на ранних стадиях, поэтому более зрелым стартапам приходится привлекать инвестиции из-за рубежа, а привлечение иностранных инвестиций, в свою очередь, может быть сильно активизировано благодаря данной платформе.

Можно заключить, что несмотря на многие трудности и задачи, поставленные перед нашей страной, Армения имеет довольно высокий потенциал для развития венчурной экосистемы, стартапов и высоких технологий. Для многих стран развитие венчурного финансирования отрасли стало стимулом для развития экономик данных стран.

Литература

1. *Forbs*, Alex Konrad, The World’s Best Venture Capital Investors In 2022, 2022 https://www.forbes.com/midas/
2. *CB Insights*, State Of Venture 2021 Report, January 12, 2022, https://www.cbinsights.com/research/report/venture-trends-2021/
3. *Бизнес-школа IESE*, Александр Грох, Генрих Лихтенштейн, Карстен Лизер и Маркус Бизингер, Индекс привлекательности страны для венчурного и частного капитала 2021, https://blog.iese.edu/vcpeindex/ranking/
4. Акоп Аршакян, В Армении будет создан Национальный венчурный фонд, 2019 г. https://rb.gy/wylbxa

ՀՏԴ 331

Անահիտ Վարդանյան
Մագիստրանտ, ՀՊՏՀ ԳՄ
anaitvardanyann@gmail.com

Ղեկավար՝ Հովհաննես ՈՒրումյան
Տեխն.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ ԳՄ
Hovhannes.Urumyan@gmail.com

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. *աշխատանքային ռեսուրս, աշխատուժ, վերարտադրություն, միգրացիա, ծնելիության մասնակի և հատուկ գործակիցներ, ինդեքսային վերլուծություն:*

Հոդվածում, ՀՀ բնակչության և աշխատանքի շուկայի վերարտադրության փոխկապակցությունները դիտարկելով տնտեսական անվտանգության առաջնահերթությունների շարքում, քննվում են վերջին տասը տարիների մակարդակների դինամիկան և դրանց շարժառիթները: Ինդեքսային վերլուծությամբ գնահատվում է աշխատուժի մակարդակի վրա ազդող հիմնական գործոնների ազդեցության աստիճանը՝ նախանշելով հիմնախնդրի պետական կարգավորման հիմնական ուղղությունները:

Anahit Vardanyan

STATISTICAL ANALYSIS OF RA POPULATION AND LABOR MARKET REPRODUCTION

Keywords *. labor resources, labor force, reproduction, migration, partial-specific birth rates, index analysis,*

Considering the interrelationships of the population of the Republic of Armenia and labor market reproduction among the priorities of economic security, the dynamics of the levels of the last ten years, their motives are discussed. Index analysis assesses the degree of influence of the main factors influencing the level of labor force, outlining the main directions of state settlement of the issue.

Анаит Варданян

СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ ВОСПРОИЗВОДСТВА НАСЕЛЕНИЯ И РЫНКА ТРУДА РА

Ключевые слова *. трудовые ресурсы, рабочая сила, воспроизводство, миграция, частичный, специальный коэффициент рождаемости, индексный анализ*

Рассматривая взаимосвязь населения Республики Армения и воспроизводства рынка труда с приоритетами экономической безопасности, обсуждаются динамика уровней за последние десять лет, их мотивы. Индексный анализ оценивает степень влияния основных факторов, влияющих на уровень рабочей силы, намечая основные направления государственного урегулирования проблемы.

Հայտնի է, որ հասարակության գլխավոր հարստությունը աշխատանքնային ներուժն է: Այն

պայմանավորված է ոչ միայն տվյալ երկրում այդ ռեսուրսների առկայությամբ, այլև դրանք տնտեսական շրջանառության մեջ արդյունավետորեն ընդգրկելու և օգտագործելու համար ձևավորված արտադրատնտեսական ու կառավարման համակարգով, առանձնապես մտավոր ռեսուրսների իրացման և դրանց վերարտադրության համար որոշակի նախադրյալների առկայությամբ: Այս առումով կարևոր դերակատարում ունեն ժողովրդագրական իրողությունները, և միանգամայն օրինաչափ է, որ աշխատանքի շուկայի և բնակչության վերարտադրողական գործընթացները դիտարկվում են շաղկապված:

Թեմայի արդիականությունը թելադրված է նաև վերջին տասնամյակներին ՀՀ աշխատանքի շուկային և ժողովրդագրական գործընթացներին հատուկ մտահոգություններով: Դրանք վերաբերում են բնակչության ծնելիությանը, ծերացման մակարդակին, արտաքին միգրացիային, ձևավորված ընտանիքի մոդելին: Վերջիններս, սոցիալ-տնտեսական դրդապատճառներ ունենալով, շոշափելի ազդեցություն են թողել սոցիալական և տնտեսական գործընթացների վրա: Դրանց զուգընթաց նոր մարտահրավերներ են առաջանում ինչպես բնակչության, այնպես էլ աշխատանքի շուկայի պարզ ու ընդլայնված վերարտադրության ներուժը նորովի գնահատելու և վերլուծելու առումով:

Հոդվածի նպատակը ՀՀ աշխատանքի շուկայի և բնակչության վերարտադրության առանձնահատկությունների ուսումնասիրությունն է, դրանց միտումների և սոցիալ-տնտեսական շարժառիթների ու փոխադարձ կապերի բացահայտումը, ինչպես նաև իրավիճակի բարելավման հիմնական ուղղությունները:

Աշխատանքի շուկայի վերարտադրության ցուցանիշներն ըստ ժամանակաշրջանի չեն համընկնում բնակչության վերարտադրության ցուցանիշներին: Աշխատուժի բնութագրական ցուցանիշների աճի տեմպերը փոփոխությունների են ենթարկվում բնակչության տարիքային կազմի փոփոխություններին համապատասխան, որոշակի ժամանակաշրջանի ընթացքում: Եթե բնակչության վերարտադրությունը պայմանավորված է բնակչության շարժի երեք ուղղություններում /բնական, մեխանիկական, սոցիալական/ տեղի ունեցող փոփոխություններով, ապա աշխատանքային տարիքի բնակչության մակարդակների փոփոխություններն անմիջականորեն կապված են աշխատանքային տարիք մուտք գործող և կենսաթոշակի անցնող բնակչության թվերի տարբերություններով: Արդյունքում, բնակչության ընդհանուր թիվը մնում է անփոփոխ, բայց ազդում է աշխատունակ տարիքի բնակչության թվի և սեռատարիքային կազմի վրա: Ուստի, կախված բնակչության վերարտադրության տեմպերից և աշխատունակ տարիքը գերազանցողների թվից, աշխատունակ տարիքի բնակչության թվի տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվի նկատմամբ փոփոխությունների է ենթարկվում: Աղյուսակ 1-ում բերված է 2011-2020 թթ. ՀՀ բնակչության և աշխատունակ տարիքի աշխատանքային ռեսուրսների (16 տարեկանից բարձր) բնակչության դինամիկան: Աշխատուժի վերարտադրության մակարդակների փոփոխությունը

Աղյուսակ 1. ՀՀ բնակչության և աշխատունակ տարիքի /16-63 տարեկան/ բնակչության դինամիկան 2011-2020 թթ.:

Տարեթիվը	Ամբողջ բնակչությունը	Այդ թվում		Աշխ. տարիքի ԱՌ մշտ. բն. կազմում %
		քաղաքային	գյուղական	
2011	3018,9	1911,3	1107,6	75,7
2012	3021,4	1912,7	1108,7	74,8
2013	3026,9	1917,5	1109.4	72,3
2014	3017,1	1914,1	1103,0	72,2
2015	3010,6	1912,9	1097,7	70,0
2016	2998,6	1907,0	1091,6	67,1
2017	2986,1	1901,4	1084,7	67,7

2018	2972,7	1895,8	1076,9	73,8
2019	2965,3	1894,9	1070,4	74,2
2020	2959,7	1892,1	1067,6	74,3

լիովին համապատասխանում է 16 տարի նախորդող տարիների ծնելիության մակարդակներին: Լինում են շրջափուլեր, երբ աշխատանքային տարիք մուտք գործողների թիվը ավելի ինտենսիվ է, քան աշխատանքայինից թոշակային տարիքի անցումը: Այսինքն՝ բնակչության կազմում աշխատանքային տարիքի բնակչության տեսակարար կշռի տատանումները ժողովրդագրական բնորոշ իրադարձությունների արձագանքներն են նշված ժամանակահատվածից հետո:

Այդ պատճառով աղյուսակում չի արտացոլված արցախյան վերջին պատերազմի հարուցած ժողովրդագրական վիճակագրական պատկերը, սակայն ակներև է, որ այն ժողովրդագրական նոր մարտահրավերի ազդակ է:

Շարունակվում է պահպանվել քաղաքային և գյուղական բնակչության մակարդակների շուրջ 7 % շեղումը, որի հետևանքը արտահայտվում է աշխատանքի շուկայի և բնակչության վերարտադրության փոխկապակցությունների բնութագրական ցուցանիշներում:

ՀՀ-ում աշխատանքային ռեսուրսների դինամիկան բոլոր փուլերում (*կազմավորման, բաշխման, օգտագործման)*, ինչպես նաև աշխատուժի վերարտադրության ռեժիմները (պարզ, ընդլայնված) բնութագրվում են աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական իրողություններով պայմանավորված յուրահատկություններով:

Աշխատանքային ներուժն ընդգրկում է ռեսուրսային ներուժի այն տարրերը, որոնք, արտադրության մեջ վերամշակվելով, վերածվում են տնտեսական արդյունքների:

Ժողովրդագրական միտումների տեսանկյունից հատկանշական է այն հանգամանքը, որ ըստ մարզային բաշխվածության՝ բնակչության թվաքանակի, աշխատանքային ռեսուրսների ցուցանիշների համադրումից պարզվում է. որ աշխատանքային ռեսուրսները, առանձին բացառություններով, ավելի քիչ չափով են կենտրոնացված Երևան քաղաքում, քան բնակչությունը:

Աշխատունակ տարիքի բնակչությունը 2011-2020 թթ. ժամանակահատվածում 2252,5 հազարից հասել է 1812,8 հազարի, այսինքն՝ նվազել է 24%-ով, իսկ աշխատուժի կազմում ընդգրկվածների թիվը 1185,2 հազարից 1052,4 հազարի՝ նվազելով 12,6%-ով: Անկումային միտումներ են արձանագրվել նաև աշխատուժի կազմում աշխատունակ տարիքի բնակչության դինամիկայում՝ 2011 թ.՝ 47,4%, 2020 թ.՝ 41,9 %:

Նույն պատկերն է նաև *աշխատուժ - աշխատանքային ռեսուրսներ, զբաղվածներ - աշխատուժ, զբաղվածներ - աշխատանքային տարիքի հաշմանդամներ* հարաբերակցություններում: Բնականաբար, նշված մարզերում միջին հանրապետականից բարձր է նաև պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը: Նշված ընդհանրական պատկերից շեղումներ են արձանագրված ՀՀ Լոռու, Շիրակի, Կոտայքի, Սյունիքի և Տավուշի մարզերում:

Իրավիճակի մասին պարզորոշ պատկերացում են տալիս աշխատունակ տարիքից բարձր բնակչության թվի և աշխատուժի կազմում ներառված մակարդակների համադրումները 2011-2020 թթ.:

Աղյուսակ 2. ՀՀ 16-63 տարեկան բնակչության և աշխատանքային ռեսուրսների ցուցանիշները

/հազ. մարդ/

	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
16-63 տ. բնակչ.	2 252,5	2 225,2	2 158,,7	2 112,6	2 094,5	2 065,4	2 052,2	1 958 ,5	1 947,8	1 812,8
Այդ թվում՝ աշխատուժի կազմում	1 185,2	1 175,1	1 172,8	1 163,8	1 133,5	1 072,6	1 006,2	1 048,5	1 077,4	1 052,4

Թեև աշխատուժի թվաքանակն աճել է, սակայն զբաղվածության ցուցանիշը հիմնականում դրսևորել է նվազման միտում: Նվազել է նաև աշխատուժից դուրս բնակչության թվաքանակը:

Միևնույն ժամանակ, առանձին մարզերում էական շեղումներ են արձանագրվել զբաղվածության և ոչ ֆորմալ զբաղվածության փոփոխությունների ցուցանիշներում:

Մյուս կողմից, դիտարկվող ժամանակահատվածում, չնայած որոշակի բարելավման, առկա են քանակական և որակական անհամապատասխանություններ՝ ըստ սեռատարիքային կազմի, կրթության մակարդակի, մարզային բաշխվածության, զբաղվածության պետական ծառայությունում հաշվառված շահառուների առանձին խմբերի ցուցանիշների և շահառուների յուրաքանչյուր խմբի գծով աշխատանքի տեղավորվածների ցուցանիշների դրսևորած միտումների:

Ինչպես ցույց տրվեց, բնակչության վերարտադրությունն աշխատանքի շուկայի վրա ուղղակի ազդեցություն ունի, քանի որ այն բնորոշում է մի կողմից աշխատուժի վերարտադրության, մյուս կողմից՝ աշխատանքային ռեսուրսների մակարդակները:

Աղյուսակից 3-ից պարզ է դառնում, որ բնակչության միջին թվաքանակի և աշխատանքային ռեսուրսների ու զբաղվածների թվաքանակի միջև կա սերտ ուղիղ կապ, ինչի մասին է վկայում կոռելացիայի գործակիցը, որը տատնվում է 0.71-0,73-ի

սահմաններում: Այսինքն՝ բնակչության միջին թվաքանակի 1 միավոր փոփոխությունը կբերի զբաղվածների թվաքանակի մոտավորապես 0.7 միավոր դրական փոփոխության:

Դիտարկենք 2005-2020 թթ. 16 տարվա ժամանակահատվածում ծնելիության մակարդակների և աշխատանքային ռեսուրսների փոխկապակցությունը ինդեքսային վերլուծության օգնությամբ: Որպես բազիսային համակցություն ընդունենք աշխատանքային ռեսուրսները, որոնց նկատմամբ որոշենք ծնելիության մասնակի

Աղյուսակ 3. ՀՀ ժողովրդագրության և աշխատանքային ռեսուրսների ցուցանիշները /հազ. մարդ/

Տարե թիվը	Մշտական բնակչութ.	Աշխատանք. ռեսուրսներ	Տղամարդ	Կին	Զբաղ-վածներ
2011	3 018,9	2 389.7	1017	1372,7	1 185.2
2012	3 021.4	2 286.3	1004,7	1256,1	1 175.1
2013	3 026.9	2 260.8	974,9	1214,2	1 172.8
2014	3 017.1	2 189.1	956,7	1223,5	1 163.8
2015	3 010.6	2 180.2	940,2	1166,4	1 133.5
2016	2 998.6	2 106.6	905,2	1106,2	1 072.6
2017	2 986.1	2 011.4	914,5	1256,9	1 006.2
2018	2 972.7	2 196,4	1022,7	1173,7	1 048,5
2019	2 965.3	2 201.1	1024,1	1177,1	1 077.4
2020	2 957,7	2200	1009,6	1190,4	1052,4

գործակիցները: Ակնհայտորեն կապված են ծնելիության հատուկ գործակցի նպտղաբեր տարիքի կանաց տեսակարար կշիռների հետ:

$$K_մ=k_h\ d \qquad (1)$$

Նշված առնչությունից ելնելով՝ կառուցենք փոփոխուն, հաստատուն կազմերով և կառուցվածքային տեղաշարժերով ինդեքսների համակարգը: Դրա համար կազմենք համապատասխան հաշվարկային աղյուսակ:

Օգտվելով (1) առնչությունից, որտեղ d-ն 15-49 տարիքի կանանց տեսակարար կշիռն է, ինդեքսը կլինի՝

$$I_{(k,d)} - \frac{\sum k_1 \times d_1}{\sum k_0 \times d_0} - \frac{0.004861}{0.1446} - 0,3$$,

իսկ ենթաինդեքսները՝

$$I_k = \frac{\sum k_1 \times d_1}{\sum k_0 \times d_1} = \frac{0.004861}{0.000594} = 0,81:$$

Աղյուսակ 4. ՀՀ ծնվածների և պտղաբեր տարիքի կանանց թիվն ըստ տարիքային խմբերի /հազար մարդ/

Տարիքային խմբերը	2005 թ.		2020 թ.	
	Կանանց թիվը	Ծն. թիվը	Կանանց թիվը	Ծն. թիվը
15-19	157,96	4,24	78,2	1,104
20-24	149,95	18,333	85,4	9,237
25-29	126,59	9,913	123,7	12,6
30-34	108,06	3,471	138,7	8,866
35-39	107,59	1,209	125,9	3,863
40-44	136,54	0,302	102	0,645
45-49	133,14	0,013	90,6	0,038

$$I_d = \frac{\sum k_0 \times d_1}{\sum k_0 \times d_0} = \frac{0.000594}{0.01446} = 0,04:$$

Ակներև է ինդեքսների փոխկապակցության մուլտիպլիկատիվ մոդելի ճշտությունը՝

$I_{(k,d)} = I_k \,.\, I_d$ (0,3=0,04 . 0,81):

Աղյուսակ 5.

K_{h0}	d_0	K_{h1}	d_1	$K_{h0}\, d_0$	$K_{h1}\, d_1$	$K_{h0}\, d_1$
0,03	0,07	0,01	0,005	0,0091	0,000005	0,00015
0,1	0,06	0,1	0,004	0,006	0,0004	0,0004
0,07	0,05	0,01	0,0006	0,0035	0,000006	0,000042
0,03	0,04	0,06	0,004	0,0012	0,00024	0,00012
0,01	0,04	0,03	0,001	0,0004	0,0003	0,00001
0,002	0,06	0,06	0,03	0,0012	0,00018	0,000006
0,0001	0,06	0,4	0,1	0,00006	0,004	0,000001
Ընդ.				0,1446	0,004861	0,000594

Ինդեքսային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2020 թ. 2005 թ-ի նկատմամբ ծնելիության մասնակի գործակիցը աճել է 30%-ով երկու գործոնների համատեղ ազդեցության արդյունքում, ընդ որում՝ տրոհելով գործոնների՝ ի հաշիվ կառուցվածքային տեղաշարժերի՝ 4%-ով, իսկ ծնելիության հատուկ գործակցի՝ շուրջ 8 անգամ: Այսինքն, աշխատանքային ռեսուրսների նկատմամբ ծնելիության մակարդակը գլխավորապես պայմանավորված է պտղաբեր կանանց թվով: Առանձնապես դա վերաբերում է 20-34 տարիքային խմբին:

2000-2019 թթ. քսան տարիների վիճակագրական տվյալների վերլուծություններով ստացվել է ծնվածների թվի /N/ կախվածությունը ամուսնությունների /A/ և զբաղված կանանց թվից /Z/: Ըստ դիտարկվող փոփոխականների՝ էլաստիկության միջին մասնակի գործակիցների արժեքները՝ $Э_A = 1.445\frac{16,55}{41,14} = 0.58$, $Э_Z = 0,005\frac{523.49}{41,14} = 0.06$, ինչը նշանակում է, որ եթե ամուսնությունների թիվը իր միջինի նկատմամբ մեծանա 1%-ով, ապա ծնվածների թիվը կաճի 0,58%-ով, իսկ կանանց զբաղվածության ազդեցությունը շոշոփելի չէ [2, 100-105]:

Ինդեքսային վերլուծության արդյունքներով դիտարկվող տասնամյա ժամանակահատվածում ծնվածների թիվը նվազել է 13%-ով, ընդ որում՝ տրոհելով գործոնների՝ ի հաշիվ կառուցվածքային տեղաշարժերի՝ 11%-ով, իսկ ծնելիության հատուկ գործակցի 2%-ով:

Պտղաբերության գործակցի դինամիկան, ըստ քաղաքային և գյուղական բնակչության, նույնպես լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս: Եթե գյուղական բնակչության այդ ցուցանիշը զգալիորեն գերազանցում էր քաղաքայինի մակարդակը, ապա 2012թ. հետո պատկերը փոխվում է՝ 2020 թ. ընդունելով 1,666 արժեքը քաղաքային բնակչության համար, որը 13,4%-ով գերազանցում է գյուղական բնակչության ցուցանիշը՝ 1,469: Այստեղ մենք առնչվում ենք տարածքային անհամաչափ զարգացման հիմնախնդրին, և այս առումով դրական տեղաշարժեր չեն նկատվում: ՀՀ բոլոր մարզերում կատարված մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համայնքների խոշորացման գործընթացը ոչ միայն չի նպաստում բնակչության վերարտադրության բարելավմանը, այլև հակասում է տարածքային համաչափ զարգացման հայեցակարգին, համենայն դեպս, սահմանամերձ բնակավայրերում պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերվեր [2]:

Ինդեքսային վերլուծությամբ ցույց է տրվել, որ մահացության ընդհանուր ինդեքսի փոփոխությունը գլխավորապես պայմանավորված է բնակչության տարիքային կառուցվածքի տեղաշարժերով՝ 16,8%, իսկ տարիքային գործակիցների ազդեցությամբ այն նվազել է 12%-ով [2, 100-105]:

Մահացության տարիքային գործակիցների վերլուծությունը ցույց է տալիս, որ մինչև 45 տարեկան բնակչության մահանալու ինտենսիվությունն աստիճանաբար նվազել է, իսկ դրան հակառակ աճել են 45-75 տարեկանների մահացության տարիքային գործակիցները: Դրա տեսանելի հետևանքներից մեկն այն է, որ տարեցտարի բարձրանում է հանրապետությունում մահացողների միջին տարիքը:

Հայտնի է, որ միգրացիոն գործընթացները ինտենսիվ են հատկապես նախկին վարչատնտեսական միավորների միջև, քանի որ դրա հնարավորությունն ընձեռում էին նախկինում հաստատված բազմաբնույթ կապերը: Բերված իրողությունները վկայում են այն մասին, որ արտագաղթի հիմնական պատճառը աշխատատեղերի բացակայությունն է: Հանրապետությունից բացակայողների 53%-ը երկիրը լքել է կամ գործազրկության պատճառով /33.8%/, կամ բավարար կենսամակարդակ չապահովող գործունեության պատճառով: Մեծ թիվ են կազմում նաև սոցիալական, բարոյահոգեբանական և Հայաստանի ապագայի նկատմամբ հավատի բացակայության պատճառով արտագաղթածները: Հատկանշական է, որ արտագաղթվածների ընդհանուր ծավալում 20-30 տարեկան բնակչության տեսակարար կշիռը կազմում է 17.9%:

Հարկ է նշել, որ արտագաղթը երկակի ազդեցություն է ունենում մարդկային կապիտալի թե՛ քանակական, թե՛ որակական արժեզրկման գործում: Ուստի աշխատանքի շուկայի պետական կարգավորման անհրաժեշտությունն առաջնահերթ խնդիր է, որն անկարելի է լուծել առանց զբաղվածության պետական իրատեսական քաղաքականության ծավալման: Ժողովրդագրական իրավիճակը գործազրկության և թերզբաղվածության հետ կանխորոշում են աշխատանքային շուկայի դրությունը և դրանից բխող միջոցառումների բնույթը: Անհրաժեշտություն է առաջանում բացահայտելու աշխատանքի, ապրանքային ու ծառայությունների փոխկապակցությունը և դրա հիման վրա աշխատուժի առաջարկի ու պահանջարկի հարաբերությունը կարգավորելու: Պետական քաղաքական ծրագիրը պետք է ներառի ուսուցման, մասնագիտացման բարձրացման գործառույթները, մանր և միջին գործարարությունը, ինքնազբաղվածությունը և դրանց բնականոն ընթացքի համար օրենսդրական դաշտի ապահովումը: Այսպիսով, պետական-ազգային քաղաքականության առանցքում աշխատատեղերի ստեղծումն է, որի համար պետք է վերակողմնորոշել տնտեսության բոլոր հատվածները: Այնպիսի միջավայրի ստեղծում, որը կնպաստի տեղական և օտարերկրյա ներդրողներին՝ ներառելու ինչպես հակամենաշնորհային, այնպես էլ մանր ու միջին բիզնեսները խթանող գործառույթներ, ազատ տնտեսական գոտիների

ձևավորման իրատեսական հնարավորություններ, հարկային, մաքսային բարեփոխումներ և այլն:

Համաշխարհային փորձը թույլ է տալիս կիրառել ավելցուկ աշխատուժի ժամանակավոր արտահանման պրակտիկան, որն հնարավորություն է տալիս թե պահպանելու քաղաքացիների մասնագիտական հմտությունները, թե կասեցնելու բարձր որակավորում ունեցող մասնագետների արտահոսքը երկրից:

Եվ պետության գերխնդիրը աշխատուժի արտահանության գործընթացը ներգաղթի հետ զուգակցելն է, որի համար անհրաժեշտ է մշակել առանձնահատուկ քաղաքականություն: Միայն հաշվեկշռված խելամիտ քաղաքականությամբ կարելի է բարեփոխել արտագաղթող-ներգաղթող բնակչության կառուցվածքը՝ պահպանելով երկրի աշխատանքային մասնագիտական ներուժը:

Գրականություն

1. **Խոջաբեկյան Վ.Ե.**, Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը, Երևան, 2001 թ., 480 էջ:
2. **Ուռումյան Հ.Հ. և ուր.**, «ՀՀ բնակչության վերարտադրությունը որպես տնտեսական անվտանգության բաղադրիչ», Գիտաժողովի նյութեր, Երևան, ԵՀ, 2021 թ.:
3. **Ուռումյան Հ.Հ. և ուր.,** ՀՀ տնտեսության նորաստեղծական զարգացման հիմնախնդիրները և դրանց ժողովրդագրական հետևանքները, Գիտաժողովի նյութեր, ՀՊՏՀ, Երևան, 2011 թ., էջ 234-240:
4. **Ուռումյան Հ. և ուր.**, «Մարդկային կապիտալը որպես տնտեսության մրցունակությունը բարձրացնող կռվան», ՀՊՏՀ գիտաժողովի նյութեր, 2012 թ., էջ 491-496:
5. **Ուռումյան Հ. և ուր.,** «ՀՀ տնտեսության նորաստեղծական զարգացման հիմնախնդիրները և դրանց ժողովրդագրական հետևանքները», ՀՊՏՀ գիտաժողովի նյութեր, 2011 թ., էջ 234-240:
6. **Ուռումյան Հ. և ուր.**, «Գիտելիքահենք տնտեսության հիմնախնդիրները ՀՀ-ում», Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, 2012 թ., հ.6., էջ 166-174:
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Ե., 2001-2020 թթ., էջ 21-47, 48-83, 114-143:

ՀՏԴ 308

Մարիամ Հարությունյան
Ասպիրանտ, ՀՊՏՀ ԳՄ
E-mail: mariam972014@gmail.ru

Շողիկ Հովհաննիսյան
Մագիստրանտ, ՀՊՏՀ ԳՄ
E-mail: Hovhannisyan.hovhannisyan.2018@mail.ru

Ղեկավար՝ Հովհաննես ՈՒրումյան
Տեխն.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ ԳՄ
E-mail: Hovhannes.Urumyan@gmail.com

ՀՀ-ՈՒՄ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Բանալի բառեր. *կենսամակարդակ, կյանքի որակ, էլաստիկության գործակից, ռեգրեսիոն մոդել, Ջինի գործակից, մարդկային զարգացման ինդեքս:*

Հոդվածում ներկայացվում է կյանքի որակը՝ որպես մարդու ամբողջական պահանջմունքների բավարարման կատեգորիա: ՀՀ մակրոտնտեսական միջավայրի և բնակչության կենսամակարդակի բնութագրական ցուցանիշների ֆոնի վրա գնահատվում է կյանքի որակը՝ կարևորելով առկա հիմնախնդիրները: Մատնանշվում են իրավիճակի բարելավմանն ուղղված առաջնահերթությունները:

Мариам Арутюнян
Шогик Ованесян

ОЦЕНКА КАЧЕСТВА ЖИЗНИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевые слова*: уровень жизни, качество жизни, коэффициент эластичности, регрессионная модель, коэффициент Джини, индекс человеческого развития.*

В статье качество жизни представлено как категория полного удовлетворения потребностей человека. Качество жизни оценивается на фоне характерных показателей и макроэкономической среды Республики Армения - выделив существующие проблемы. Обозначены приоритеты улучшения ситуации.

Mariam Haroutyunyan
Shoghik Hovhannisyan

ASSESSMENT OF THE QUALITY OF LIFE IN THE RA

Keywords*: standard of living, quality of life, coefficient of elasticity, regression model, Gini coefficient, human development index.*

The article presents the quality of life as a category of full satisfaction of human needs. The quality of life is assessed against the background of the characteristic indicators of the micro-economic environment of the Republic of Armenia and the living standards of the population using the existing problems.

«Կյանքի որակ» հասկացությունն առաջին անգամ գիտական շրջանառության մեջ է դրել քեմբրիջյան դպրոցի ներկայացուցիչ Ա. Պիգուն 20-րդ դարի սկզբին, «Բարեկեցության տնտեսական տեսությունը» աշխատությունում: «Կյանքի որակը» հասարակության բարեկեցության ամփոփ ցուցանիշ է և արտահայտում է մարդկանց պահանջմունքների բավարարման որակական մակարդակը: Այն ներառում է ոչ միայն երկրի սոցիալ-տնտեսական, այլև ժողովրդագրական, բնապահպանական, քաղաքական, անվտանգային, ինչպես նաև հոգևոր ոլորտի բաղադրիչները: Մյուս կողմից, ՀՀ-ն որդեգրել է սոցիալ-տնտեսական զարգացման ՍԾՏ հայեցակարգը, որի առանցքում մարդկային կապիտալն է իր խնդիրներով և մտահոգություններով: Ուստիև մշտապես արդիական ինչեղություն ունի կյանքի որակի գնահատումն ու բարելավման ուղիների ուրվագծումը:

Կյանքի որակը սերտորեն կապված է «կենսամակարդակ» կատեգորիայի հետ:

Բնակչության կենսամակարդակը վերաբերում է առողջության մակարդակի, հարմարավետության, նյութական ապրանքների և անհրաժեշտությունների հասանելիությանը՝ ներառելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են եկամուտը. բնակարանների մատչելիությունը, զբաղվածությունը, համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), գնաճը, տարեկան հանգստի ժամանակը, մատչելի (կամ անվճար) և որակյալ առողջապահության հասանելիությունը, կրթության որակն ու մատչելիությունը, կյանքի տևողությունը, հիվանդությունների մակարդակը, ապրանքների և ծառայությունների գինը, ենթակառուցվածքները, տնտեսական աճը, տնտեսական և քաղաքական կայունությունը, քաղաքական և կրոնական ազատությունը, բնապահպանության որակը, կլիման և անվտանգությունը: Կենսամակարդակը հիմնականում չափվում է այնպիսի ստանդարտներով, ինչպիսիք են մեկ անձի իրական եկամուտը և աղքատության մակարդակը: Այլ չափանիշներ են առողջապահության որակն ու հասանելիությունը, եկամտի աճի անհավասարությունը և կրթական ստանդարտները: Օրինակներ են որոշակի ապրանքների հասանելիությունը (ինչպես սառնարանների քանակը հազար մարդու համար) և կյանքի տևողությունը: «Ստանդարտի» հիմնական գաղափարը հակադրվում է կյանքի որակին, որը հաշվի է առնում ոչ միայն նյութական կենսամակարդակը, այլ նաև ավելի նյութական ասպեկտներ, որոնք կազմում են մարդկային կյանքը: Դրանցից են ժամանցի, անվտանգության, մշակութային ռեսուրսների, սոցիալական կյանքի, ֆիզիկական առողջության, շրջակա միջավայրի որակի հարցերը և այլն: Բարեկեցության ավելի բարդ չափման միջոցներ պետք է կիրառվեն, որպեսզի կատարվեն այնպիսի դատողություններ, որոնք ավելի հաճախ քաղաքական են և վիճահարույց: Նույնիսկ երկու ազգերը կամ հասարակությունները, որոնք ունեն միևնույն կենսամակարդակը, կարող են տարբերվել կյանքի որակի այնպիսի գործոններով, որոնք տվյալ երկիրը դարձնում են ավելի գրավիչ անհատի կամ խմբի համար [1,3,4]:

Կյանքի որակի ընդհանրական ցուցանիշներ են երկրի մշտական բնակչության թիվը և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, որոնք 2000-2020 թթ. համար ներկայացված են աղյուսակ 1-ում [7]:

Աղյուսակ 1. ՀՀ մշտական բնակչության թվաքանակի և ՀՆԱ-ի տվյալները 2000-2020թթ.

Տարեթիվը t	Բնակչ. թիվը /հազ. մարդ/ S_t	ՀՆԱ մեկ շնչի հաշվով /մլն. դր/ Q_t	Տարեթիվը t	Բնակչ. թիվը /հազ. մարդ/ S_t	ՀՆԱ մեկ շնչի հաշվով /մլն դր/ Q_t
2000	3226900	319606.5	2011	3018900	1244998
2001	3215300	365712.9	2012	3021400	1412081
2002	3208300	424670.9	2013	3026900	1505051
2003	3191200	509100.9	2014	3017100	1600420
2004	3173800	601154.9	2015	3010600	1675292
2005	3156000	710672	2016	2998600	1689886
2006	3136800	846783.3	2017	2986100	1863465
2007	3117400	1010228	2018	2972700	2024098
2008	3097300	1152045	2019	2965300	2215301
2009	3076800	1021077	2020	2959700	2165782
2010	3055200	1132562			

Բերված ցուցանիշների միտումները բացահայտելու համար կառուցվել են գծային ռեգրեսիոն մոդելներ՝ համակարգչային SPSS փաթեթի օգնությամբ: Ստացվել են բնակչության թվաքանակի և մեկ շնչին ընկնող համախառն ներքին արդյունքի տրենդների հետևյալ հավասարումները՝

$$S_t = 3245068.1 - 15597{,}5t \qquad (R^2=0.957) : \qquad (1)$$

Քանի որ ժամանակին առնչվող պարամետրի արժեքը բացասական է, ուրեմն մենք ունենք ՀՀ բնակչության նվազում:

$$Q_t = 636229.4 + 276336{,}8t \qquad (R^2=0.988) \qquad (2)$$

Ստյուդենտի t-չափանիշի արժեքները (1)-ի գործակիցների համար ստացվել են -21 և 341, իսկ (2)-ի համար՝ 40 և 5,2, որոնք մոդուլով մեծ են 2-ից, իսկ Ֆիշերի դիտվող արժեքները՝ համապատասխանաբար՝ $F_{դ1}=425.555$ և $F_{դ2}=1605$: Ըստ Ֆիշերի բաշխման աղյուսակի՝ կրիտիկական արժեքը՝ $F_{կր.}(20: 1:0.01)=8$, $F_{դ1} > F_{կր.}$: $F_{դ2} > F_{կր.}$, հետևաբար՝ ստացված երկու հավասարումներն էլ նշանակալի են 0,99 հուսալիությամբ: Առաջին հավասարման ռեգրեսիայի գործակիցը բացասական է, որը վկայում է բնակչության նվազման մասին, իսկ երկրորդում դրական է, ուրեմն ունենք ՀՀ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճ [7]:

Պատկերը հստակեցնում են աղյուսակ 2-ի տվյալները:

Աղյուսակ 2. ՀՀ բնակչության սոցիալական վիճակի հիմնական բնութագրական ցուցանիշները 2016-2020 թթ.

	2016	2017	2018	2019	2020
Միջին անվանական աշխատավարձ /հազ. դր/	174,5	177,8	172,7	182,7	189,7
Միջին իրական աշխատավարձ /հազ. դր/	169,4	176,2	170,2	175,2	184,9
Միջին կենսաթոշակ /հազ. դր/	40,4	40,6	40,5	40,4	44
Եկամուտների բաշխման Ջինի գործակից	0,375	0,359	0,36	0,381	0,363
Թոշակառուների թիվը	468,5	458,2	463,1	466,6	467
Կյանքի տևողությունը	75	75,4	75,9	76,5	73,5

Դիտարկվող հինգ տարիների ընթացքում միջին աշխատավարձի բարձրացումը համադրելի չէ գնաճի տեմպերին: Լուրջ մտահոգությունների տեղիք է տալիս միջին

կենսաթոշակի մակարդակը այն դեպքում, որ կենսաթոշակառուների տեսակար կշիռը բնակչության կազմում բավականաչափ մեծ է: Ջինի գործակցի չափավոր բաշխվածության մակարդակները չեն համապատասխանում իրական վիճակագրական պատկերին, որի հիմնական պատճառն այն է, որ եկամուտների շերտավորումներում չեն ներառվում կամ ճիշտ չեն ներկայացվում բարձր եկամուտներով բնորոշվող բնակչության խմբերը: Վերջինիս մասին են վկայում եկամուտների և ծախսերի բաշխման դեցիլային գործակիցները՝ $K_D=D_9/D_1$, որոնք ցույց են տալիս, թե քանի անգամ է 10% ամենաապահով բնակչության նվազագույն եկամուտը /ծախսը/ գերազանցում ամենաանապահով բնակչության եկամուտը /ծախսը/: 2019 թ. այն ընդունել է 9,8 և 5,2, իսկ 2020թ. 8,5 և 4,3 արժեքները: Այստեղ նույնպես թվացյալ դրական միտումները չեն համաչափելի գնաճային տրամաբանության հետ:

ՀՀ կյանքի որակի մասին շատ կարևոր և արտահայտիչ ցուցանիշ են բնակչության թվի փոփոխությունները, ինչի բացասական միտումներն արտացոլված են աղյուսակ 1-ում, և մարդու կյանքի միջին տևողության ցուցանիշը, որը համապատասխանում է կյանքի որակի և բարեկեցության ներկայիս պահանջներին:

Կյանքի որակի հետազոտություններում շարունակաբար ուսումնասիրվել են ինչպես արտագնա աշխատանքի, այնպես էլ բնակչության արտահոսքի հետ կապված հարցերը: Հայաստանում արտագնա աշխատանքի մեկնելու հնարավորությունը էականորեն մեղմում է աշխատաշուկայի լարվածությունը և բարձրացնում է արտագնա աշխատողի ընտանիքի բարեկեցության մակարդակը՝ մյուս կողմից բացասաբար անդրադառնալով բնակչության և աշխատանքի շուկայի վերարտադրության գործընթացների վրա [2.5]:

Աղյուսակ 3-ում բերված մեկ շնչի հաշվով եկամուտների և ամենաշատ օգտագործվող պարենային ապրանքների ցուցանիշներով գնահատենք դրանց

առաձգականության աստիճանը:

Աղյուսակ 3. Մեկ շնչի հաշվով միջին դրամական եկամուտները և ամենաշատ օգտագործվող պարենային ապրանքները 2019-2020 թթ.

Ցուցանիշները	2019 թ.	2020 թ.
Ամսական միջին դրամական եկամուտները մեկ շնչի հաշվով, դրամ	61076	71182
Հաց և հացամթերք. կգ	100,7	102,4
Մակարոնեղեն, կգ	7	7,1
Կաթ և կաթնամթերք, կգ	9,9	10,1

$$Э=(\Delta Y/Y):(\Delta X/X) \quad (3)$$

Օգտվելով Մարշալի (3) բանաձևից՝ ստանում ենք էլաստիկության գործակցի հետևյալ արժեքները՝

$Э_հ$ = 0,018:0:1655=0.1087 կամ 10,8 7%,

$Э_մ$ = 0.0143:0,1655=0.086 կամ 8,6%,

$Э_կ$ = 0,02:0.1655=0.122 կամ՝ 12.2 %:

Այսպիսով, դրամական եկամուտների 1%-ով աճի դեպքում դիտարկվող սննդամթերքի տեսակների սպառումը նույնպես աճում է, ընդ որում, առավել առաձգական են կաթնամթերքը և հացամթերքը:

Կյանքի որակը առավել ճշգրիտ բնութագրող միասնական ընդհանրական ցուցանիշ է համարվում մարդկային զարգացման համաթիվը, որը 1990 թվականին առաջարկվել է

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մասնակիցների կողմից: ՄԶԻ-ն բաղադրյալ ցուցանիշ է, որն արտացոլվում է կենսամակարդակը բնութագրող երեք կարևոր ցուցանիշներով: Դրանք են՝ կյանքի տևողության համաթիվը, կրթության համաթիվը և համախառն ազգային եկամտի (ՀԱԵ) համաթիվը:

Այն հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$HDI = \sqrt[3]{LEI \times EI \times II},$$

որտեղ HDI -ն մարդկային զարգացման համաթիվն է,

LEI -ը՝ կյանքի տևողության համաթիվն, EI -ը՝ կրթության համաթիվը,

II -ը՝համախառն ազգային եկամտի համաթիվը:

ՄԶԻ յուրաքանչյուր գործակցի համար սահմանված են առավելագույն և նվազագույն արժեքներ՝ ելնելով 1980-2019թթ. ընթացքում աշխարհում գրանցված մակարդակներից:

Յուրաքանչյուր ցուցիչի ինդեքսը, բացառությամբ ՀԱԵ ծավալի, հաշվարկվում է հետևյալ ելակետային բանաձևով.

$$\frac{x_i - x_{imin}}{x_{imax} - x_{imin}},$$

որտեղ x_i –ը ցուցիչի փաստացի արժեքն է, x_{imin}-ը , x_{imax} -ը՝ համապատասխանաբար ցուցիչի նվազագույն և առավելագույն արժեքները:

Աղյուսակ 4-ում ներկայացված է մարդկային զարգացման ինդեքսի դինամիկան 2015-2019 թթ.՝ հաշվարկված նշված մեթոդաբանությամբ երեք բաղադրիչների հիման վրա:

ՀՀ մարդկային զարգացման համաթիվը 2015թ. կազմել է 0.743, որի արդյունքում երկիրը դիտարկվող 189 երկրների շարքում զբաղեցրել է 84-րդ հորիզոնականը՝ կիսելով Ուկրաինայի հետ: 2016թ. այն կազմել է 0.749, համապատասխանաբար՝ 2017թ.՝ 0.755, 2018թ.՝ 0.760, 2019թ.՝ 0.776 [4]: 1990-2019թթ. ընթացքում ՀՀ դիրքերը մարդկային զարգացման ցուցանիշների տեսանկյունից բավականին բարելավվել են: Այդուհանդերձ, այս ցուցանիշով Հայաստանը 1990 թ. եզրափակում էր 0,8–ից բարձր ՄԶԻ-ով բնորոշվող երկրների ցանկը:

Հետպատերազմական իրավիճակը Հայաստանին պարտադրել է կյանքի որակին սպառնացող անվտանգային, բնապահպանական, բնակչության ազատ տեղաշարժվելու իրավունքի և այլ օրակարգային հիմնախնդիրներ:

Աղյուսակ 4. ՀՀ մարդկային զարգացման համաթվի դինամիկան 2015-2019 թթ.

	ՀՀ մարդկային զարգացման համաթիվը	***Նախորդ տարվա համեմատ աճել է (միավորով)***
2015թ.	*0.743*	*0.01*
2016թ.	*0.749*	*0.006*
2017թ.	*0.755*	*0.006*
2018թ.	*0.760*	*0.005*
2019թ.	*0.776*	*0.016*

Միջազգային հետազոտական կենտրոնների հրապարակած եզրակացություններով՝ վերջին տարիներին Հայաստանում մարդու իրավունքների և ազատությունների առումով արձանագրվում է նկատելի հետընթաց:

Այսպիսով, կյանքի որակի միտումների գնահատումը և բարելավումը ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային խնդիրներից են և պետք է մշտական տեղ գրավեն երկրի առաջնահերթությունների շարքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Մակարյան Ա., Բաբայան Ա**, ՀՀ-ում կյանքի որակի ցուցանիշի գնահատում (QL Index) . հետազոտության մեթոդաբանություն. Երևան, 2010թ:
2. **Մնացականյան Ա., Պետրոսյան Կ. Ուռումյան Հ.**, Կյանքի որակի բարելավման միտումները ՀՀ-ում, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում», Երևան, 2012թ. , էջ 70-75:
3. **Պետրոսյան Ա., Հակոբյան Գ.,** Կյանքի որակը բնութագրող բաղադրյալ ցուցանիշների անհրաժեշտությունը և հաշվարկման կարգը, «Բանբեր», Երևան, 2019, հ.1, էջ 92-107:
4. **Սալնազարյան Գ. Մ., Հարությունյան Մ. Մ.**, Կյանքի որակի գնահատման առանձնահատկությունները ՀՀ-ում «Տնտեսագիտություն», 2019 :№ 2: էջ 306-315:
5. **Ուռումյան Հ.Հ.** և ուր., «ՀՀ բնակչության վերարտադրությունը որպես տնտեսական անվտանգության բաղադրիչ» // Գիտաժողովի նյութեր, Երևան, ԵՀ, 2021 թ., էջ100-106:
6. **Магнус Я.Р., Катышев П. К., Пересецкий А. А.,** Экпнометрика, Москва, 2004:
7. ՀՎԿ տարեգրքեր 2000-2021 թթ.:

* https://www.armstat.am/file/doc/99528473.pdf

ՀՏԴ 338,48

Օֆելյա Մկրտչյան
Մագիստրանտ, ՀՊՏՀ ԳՄ
ofel.mkrtchyan@gmail.com

Ղեկավար՝ Հովհաննես ՈՒռումյան
Տեխն.գ.թ., դոցենտ, ՀՊՏՀ ԳՄ
Hovhannes.Urumyan@gmail.com

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Բանալի բառեր. *Զբոսաշրջություն, էկոտուրիզմ, ագրոտուրիզմ, տնտեսական զարգացում, ներգնա տուրզմ, համավարակ:*

ՀՀ զբոսաշրջությունը դիտարկելով սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն հիմնախնդիրների շարքում՝ միջազգային փորձի հիման վրա կատարվել է ոլորտի վերլուծություն և վեր հանվել ենթակառուցվածքների զարգացման հնարավորությունները: Գնահատելով ՀՀ զբոսաշրջության շուկայի առկա ներուժը, առանձնահատկությունները և զարգացման դինամիկան՝ ուրվագծվել են բարելավման հիմնական ուղղությունները:

Офеля Мкртчян

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА В АРМЕНИИ

Ключевые слова: *туризм, экотуризм, агротуризм, экономическое развитие, въездной тур, пандемия.*

Рассматривая туризм РА в ряду важнейших проблем социально-экономического развития, на основе международного опыта был проведен анализ сферы и выявлены возможности развития инфраструктур. Оценивая существующий потенциал, особенности и динамику развития рынка туризма РА, наметились основные направления улучшения.

Ophelya Mkrtchyan

TRENDS IN THE DEVELOPMENT OF TOURISM IN ARMENIA

Keywords*: tourism, ecotourism, agrotourism, economic development, inbound tour, pandemic.*

Considering tourism in the Republic of Armenia among the most important problem of socio-economic development, an analysis of the sphere was carried out on the basis of international experience and opportunities for infrastructure development were identified. Assessing the existing potential, features and dynamics of the development of the tourismmarket of the Republic of Armenia, the main directions of improvement have been outlined.

Զբոսաշրջությունը համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում հանդիսանում է երկրների տնտեսական համակարգերի արագընթաց զարգացող ճյուղերից մեկը: Զբոսաշրջությունից ստացվող համաշխարհային եկամուտները վերջին տասնամյակում աճել են շուրջ 7%-ով, միջազգային զբոսաշրջային այցելությունների թիվը գերազանցում է 1 մլրդը, իսկ ըստ ՄԱԿ ԶՀԿ փորձագետների կանխատեսումների՝ 2023թ. այն կկազմի 1.5 մլրդ: Զբոսաշրջությունը զարգացողերկրների համար ևս ձեռք է բերել ընդգծված սոցիալ-տնտեսական նշանակություն:

Անվիճելի է, որ զբոսաշրջությունը Հայաստանում ունի բավարար ներուժ՝ նպաստելու տնտեսության աճին և ծառայելու որպես այլ ճյուղերի այլընտրանք: Վերջինիս իրական նախադրյալներն են Հայաստանի բարենպաստ բնակլիմայական պայմանները, հարուստ

բնաշխարհը, ինչպես նաև հարուստ պատմամշակութային ժառանգությունը:

Հատկանշական է, որ զբոսաշրջության զարգացման գործընթացում վճռորոշ դերակատարում ունի ոլորտի՝ պետական կարգավորման քաղաքականությունը, և միանգամայն օրինաչափ է, որ 2003թ. <<Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին>> ՀՀ օրենքով ոլորտը հռչակվել է որպես տնտեսության գերակա ճյուղ: Այդուհանդերձ, վերջին տարիներին բնորոշ աշխարհաքաղաքական իրավիճակը, պատերազմի հետևանքները, առանձնապես համավարակը վատթարագույնս անդրադարձան ոլորտի վրա: Թեև նկատվում են իրավիճակի բարելավման միտումներ, սակայն անհրաժեշտություն է առաջանում զարկ տալ ներքին զբոսաշրջությանը՝ բացահայտելով առկա ռեսուրսները և դրանց գործադրման հնարավորությունները:

Հետևաբար, հաշվի առնելով զբոսաշրջության էական ներուժը հայաստանյան տնտեսական դաշտի բարեփոխումներում, ինչպես նաև պետական կարգավորման դերն այդ գործընթացում՝ ոլորտի գնահատման, վերլուծության ու դրա կատարելագործման խնդիրները արդիական հնչեղություն ունեն և պետք է դիտարկվեն ՀՀ սոցիալ-տնտեսական քաղաքականության օրակարգային դրույթների շարքում:

Ըստ մշտական բնակության և աշխատանքի վայրի՝ զբոսաշրջությունը լինում է **ներքին** և **միջազգային**:

Ներքին և արտագնա զբոսաշրջությունը միասնականորեն հանդես է գալիս որպես ազգային զբոսաշրջություն, իսկ ներքին և ներգնա զբոսաշրջությունը՝ որպես զբոսաշրջություն երկրի ներսում:

Զբոսաշրջությունը դասակարգվում է ըստ տարբեր հատկանիշների:

Վերջին տարիներին Հայաստանն աստիճանաբար բարելավում էր իր դիրքերը տուրիստական գրավչությամբ աչքի ընկնող երկրների շարքում:

2019թ-ին Համաշխարհային տնտեսական ֆորումի Զբոսաշրջության մրցունակության ինդեքսում Հայաստանը 140 երկրների շարքում գրավել էր 79-րդտեղը՝ նախորդ տարվա 89-րդի փոխարեն:

Զարգացումը կարող էր շարունակական լինել, քանի որ Հայաստանում դրական միտումն արդեն նկատելի էր թե՛ զբոսաշրջիկների թվաքանակի ավելացման, թե՛ նրանց աշխարհագրական բաշխվածության ընդլայնման առումով:

Եթե 2009 թ. առաջին եռամսյակում՝ հունվար-մարտ ամիսներին, Հայաստան ժամանած զբոսաշրջիկների թիվը կազմում էր շուրջ 86 600, ապա տասը տարի անց՝ 2019թ. նույն ժամանակահատվածում, այդ թիվը քառապատկվել էր՝ հասնելով 364 500-ի:

Չնայած համավարակով պայմանավորված խոչընդոտներին՝ Զբոսաշրջության կոմիտեն 2020 թ. համար բավական լավատեսական կանխատեսումներ ուներ. ակնկալվում էր, որ 2020թ. առաջին եռամսյակում Հայաստան ժամանողների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ կաճեր ևս 14%-ով կամ 34 000 այցելուով: Սակայն այժմ արդեն կարելի է փաստել, որ այս կանխատեսումը իրատեսական չէր:

Տուրիզմը Հայաստանում կորոնավիրուսի հետևանքով ամենից շատ տուժած ոլորտներից է: Տուրիստական ընկերությունները, հյուրանոցային ու հանրային սննդի օբյեկտները համավարակի տարածման ու փակ սահմանների հետևանքով շրջանառության ու եկամուտների շեշտակի անկում գրանցեցին: Նրանք կարողացան մի փոքր «շունչ քաշել» միայն ամռան ամիսներին ու սեպտեմբերին՝ ներքին զբոսաշրջության հաշվին: Սակայն, արցախա-ադրբեջանական սահմանին սեպտեմբերի վերջին թուրք-ադրբեջանական ուժերի սանձազերծած պատերազմը երկրորդ մեծ հարվածը հասցրեց ինչպես ամբողջ տնտեսությանը, այնպես էլ՝ զբոսաշրջության ոլորտին:

Անդրադառնանք նաև ՀՀ-ում համավարակի նահանջից և մեր երկրում տեղի ունեցող պատերազմական իրավիճակներից հետո զբոսաշրջության զարգացման միտումներին:

Ըստ Վիճակագրական կոմիտեի (ՀՀ ՎԿ) հրապարակած տվյալների՝ 2020 հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստան է ժամանել ընդհանուր առմամբ 327 735 օտարերկրյա զբոսաշրջիկ: Զբոսաշրջիկներիթիվը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ 77.5%-ով պակասել է: Նկատելի է, որ զբոսաշրջիկների հոսքը գրանցվել է հիմնականում առաջին եռամսյակում՝ 311 264 զբոսաշրջիկ: Երկրորդ եռամսյակում զբոսաշրջիկներ չեն ժամանել Հայաստան, իսկ երրորդ եռամսյակում՝ ընդամենը 16 471:[439]

Համավարակի տարածման ու փակ սահմանների պայմաններում կտրուկ նվազել է նաև Հայաստանից արտերկիր մեկնող զբոսաշրջիկների թիվը: 2020 թվականի ինն ամիսներին

[439] *Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, 13.02.2008 թ., www.armeniainfo.am*

Հայաստանից զբոսաշրջության նպատակով մեկնողների թիվը կազմել է 286 227, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 78.2%-ով:Նրանց գերակշիռ մասը՝ 275 716 մարդ, մեկնել է առաջին եռամսյակում:

Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության մշակման և իրականացման, Հայաստան այցելությունների աճի ապահովմանը նպաստող գործոններով և մարքեթինգային ակտիվ քաղաքականության իրականացման, *պետություն-մասնավոր հատված* համագործակցության արդյունքում 2020-2021 թվականներին կանխատեսվում էր ներգնա զբոսաշրջային այցելությունների քանակի շուրջ 14-15% միջին տարեկան աճ՝ վերջին տարիների 10 % միջին տարեկան աճի փոխարեն: Սակայն, ամբողջ աշխարհում COVID-19 կորոնավիրուսի դեմ պայքարի շրջանակներում տեղի ունեցող գործընթացները՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ տարբեր երկրների կողմից սահմանների ժամանակավորապես փակումը, ավիաընկերությունների կողմից սպասարկման դադարեցումը, ինչպես նաև ուղևորների տեղաշարժի սահմանափակումները, հանգեցրին ուղևորահոսքի մակարդակի կտրուկ նվազեցմանը:

2011-2020 թթ.ՀՀ զբոսաշրջության վիճակագրական պատկերը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.ՀՀ զբոսաշրջության հիմնական բնութագրական ցուցանիշները 2011-2020 թթ.

/հազար մարդ/

	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020
Ժամանել են	757,9	843,3	925	1203,8	1187,9	1259,7	1494,8	1651,8	1894,4	375,2
Մեկնել են	715	806,6	906,2	1198,6	1183,2	1262,7	1481,8	1622,8	1867,9	346,1

Ինչպես երևում է, զբոսաշրջության մակարդակները մինչև 2019 թ. բնութագրվում են շարունակական աճման միտումներով, իսկ 2020 թ. արձանագրվել է ավելի քան հինգ անգամ աննախադեպ անկման ցուցանիշ: Սա գլխավորապես պայմանավորված է համավարակի պարտադրած համակողմանի սահմանափակումներով: Այդուհանդերձ, հուսադրող է 2021թ. նախորդ տարվա համեմատությամբ 2,4 անգամ ավել, գրանցված զբոսաշրջիկների թիվը /870,3 հազար մարդ/, որը կարելի է առաջընթաց համարել, թեև այն համադրելի է 2012-2013 թթ. ցուցանիշների հետ:

Վերջին տասնամյակները նշանավորվել են միջազգային տնտեսության մեջ ներգնա զբոսաշրջության կշռի կտրուկ աճով, ինչին զուգահեռ բազմաթիվ զարգացած երկրներում այն բուռն զարգացում է ապրում: Աղյուսակ 2-ում բերված տասնամյա ժամանակահատվածի մակարդակների դինամիկան դրա խոսուն վկայությունն է:

Աղյուսակ 2. Ներգնա տուրիզմից ստացված մուտքերը 2010-2019թթ.

/մլն ԱՄՆ դոլար/

	2010	*2011*	*2012*	*2013*	*2014*	*2015*	*2016*	*2017*	*2018*	*2019*
Ստացված եկամուտը	*2,5*	*6,9*	*17,9*	*104,4*	*270,2*	*481,6*	*941*	*852*	*928*	*1030*

Ի թիվս զբոսաշրջության մակարդակները կանխորոշող վերոհիշյալ գործոնների, կարևոր դերակատարում ունեն սպառողական, պարենային գների և տրանսպորտային ծառայությունների գների ինդեքսները: Այն 2019-2020 բեկումնային տարիների համար գնահատեք Ա. Մարշալի էլաստիկության գործակցի օգնությամբ՝

Ԏ=ΔY/Y: ΔX/X (1)

Աղյուսակ 3. ՀՀ 2019-2020 թթ. սպառողական, պարենային ապրանքների գների և տրանսպորտային ծառայությունների ինդեքսները:

	2019 թ.	2020 թ.
Սպառողական ապրանքներ	1,007	1,037
Պարենային ապրանքներ	1,002	1,055
Տրանսպորտ	1,023	1,047

Հաշվելով (1) բանաձևով, ստանում ենք՝

$Э_{սպ.}$ = 0,038 կամ 3,8 %,

$Э_{պ}$ = 0,066 կամ 6,6%,

$Э_{տ}$ = 0,047 կամ՝ 4,7 %:

Էլաստիկության գործակիցները բոլոր նշված գործոնների համար բացասական նշաններ ունեն, որը նշանակում է, որ եթե սպառողական, պարենային ապրանքների և տրանսպորտային ծառայությունների գներն աճում են 1%-ով, ապա զբոսաշրջիկների թվերը կնվազեն համապատասխանաբար՝ 3,8%-ով, 6,6%-ով և 4,7%-ով: Պաշտոնական վիճակագրության տվյալներով՝ նշված երեք ուղղություններում նկատվում է գների շարունակական աճ, որոնք կհակազդեն զբոսաշրջության գործընթացների բարելավմանը:

Հայաստանի տարածքում գոյություն ունի յոթ կլիմայական գոտի, մեր երկիրն աչքի է ընկնում իր ինքնատիպ և հրաշալի բնությամբ ու բնական հուշարձաններով: Հայաստանում տարվա բոլոր չորս եղանակները շատ հստակ արտահայտված են. լանդշաֆտային և կենսաբանական բազմազանությունը, բնության կենդանի և անկենդան հուշարձանների հարստությունը, բնության տեսարժան վայրերը, ինչպես նաև անտառների կազդուրիչ ու բուժիչ բնակլիմայական պայմանները: Կենդանիներից շատերը, օրինակ՝ բեզոարյան այծերը, բնորոշ են միայն Հայաստանին: Այստեղ առկա են բնապահպանական լուրջ խնդիրներ, որոնք լուծելու համար պետք է ապահովել բնության հատուկ պահպանվող տարածքներն ու այլ բնական ռեսուրսներն անհրաժեշտ ենթակառուցվածքներով: Սա փոխկապակցված գործընթաց է, որն հնարավորություն կտա առավել արդյունավետ օգտագործել այդ ռեսուրսները, ինչն էլ կնպաստի առավելագույն եկամուտների ներգրավմանը և դրանց պահպանությանն ուղղվող միջոցների ավելացմանը:

Բացի այդ, բնության հուշարձանների շարունակական բացահայտման և գիտական հիմնավորվածությամբ ապահովման, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող նոր տարածքների ձևավորման դեպքում Հայաստանի զբոսաշրջային գրավչությունների ցանկը կարող է զգալիորեն ընդլայնվել՝ հնարավորություն ստեղծելով ձևավորել առավել մրցունակ զբոսաշրջային արդյունք:

Հայաստանն ակնհայտորեն օժտված է որոշակի յուրահատուկ առողջարանային ռեսուրսներով, ինչպես օրինակ՝ տարատեսակ և կոմպակտ տեղակայված ռադոնային ջրաղբյուրները, որոնք ունեն բուժիչ հատկություններ, սակայն անհրաժեշտ է ռեսուրսների հետագա ուսումնասիրություն և դասակարգում[440]: Անհրաժեշտ ներդրումների և առողջարանային գոտիների վերականգնման դեպքում **առողջարանային տուրիզմը,** լինելով զբոսաշրջության հնագույն ձևերից, Հայաստանում լայն հեռանկարներ ունի:

Հայաստանի ամբողջ տարածքում կան 230 բնական հուշարձաններ, որոնցից ամենաշատը գտնվում է Սյունիքի մարզում:

Ներկայումս Հայաստանում գործում են 3 պետական արգելոցներ (Խոսրովի, Շիկահողի, Էրեբունու), 25 պետական արգելավայրեր և 2 ազգային պարկ՝ Սևան և Դիլիջան:

ՀՀ-ում ժամանակի պահանջներին համահունչ զարգանում է **էկոտուրիզմը,** որը արագ զարգացող զբոսաշրջության ճյուղերից է, չի նախատեսում հարմարավետ կենցաղային պայմաններ և միտված է մշակութային, բնապահպանական, ճանաչողական նպատակների:

ՀՀ գյուղոլորտի բազմաճյուղ և ավանդական բնույթը իրական նախադրյալներ է ստեղծում **ագրոտուրիզմի** զարգացման համար, որը զբոսաշրջիկներին հնարավորություն է տալիս ծանոթանալու գյուղական կյանքին, անմիջականորեն մասնակցելու գյուղմթերքի արտադրության գործընթացին, վայելելու էկոլոգիապես մաքուր սննդամթերք և այլն, որոնք փոխադարձաբար նպաստում են գյուղարտադրության զարգացմանը, շուկայի ընդլայնմանը, ինչպես նաև գործազրկության մակարդակի կրճատմանը:

---

[440] *Տե՛ս, **Հարությունյան Շ.Լ.,** Զբոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն, Երևան, Զանգակ 97, 2004, էջ 61-65:*

Աշխուժություն է նկատվում **արկածային տուրիզմի** նկատմամբ, որը միավորում է ակտիվ հանգստի հետ կապված ճանապարհորդությունների տեսակները: Դրա տարատեսակներից է **էքստրեմալ տուրիզմը** /մասնավորապես՝ ալպինիզմը/, որին նպաստող պայմաններով Հայաստանն աշխարհում 3-րդ երկիրն է:

Հայաստանը գրավիչ է նաև **կրոնական զբոսաշրջության** առումով, որն, ըստ էության, ուխտագնացություն է սրբագործված վայրեր:

Հայաստանի եկեղեցիներն ու կրոնական բնույթի հուշարձանները բազմաթիվ են և կազմում են Հայաստանի պատմամշակութային հուշարձանների ավելի քան 15%-ը: Հայաստանի կրոնական մշակույթը բացառապես քրիստոնեական է:

Հեթանոսական շրջանից պահպանվել է Գառնու տաճարը: Հայաստանում առկա են նաև մահմեդական կրոնին պատկանող 7 հուշարձաններ:

Կրոնական հուշարձաններն ու այլ ռեսուրսներն անհրաժեշտ ենթակառուցվածքներով ու ներդրումներով ապահովելու պայմաններում դրանց արդյունավետ օգտագործման մակարդակը զգալի կբարձրանա, ինչը կնպաստի առավելագույն եկամուտների ներգրավմանը և դրանց պահպանությանն ուղղվող միջոցների ավելացմանը:

Այսպիսով, ՀՀ զբոսաշրջային ոլորտը՝ որպես ծառայությունների արտահանում, պետական հոգածության կարիք ունի՝ մեծ ներուժը իրացնելու համար: Այդ ճանապարհին առաջնային խնդիրներ են՝

ա. պետական և մասնավոր հատվածների համագործակցություն,

բ. մեծ ներդրումներ,

գ. միջազգային ստանդարտներին համապատասխանող զբոսաշրջային ծառայությունների մատուցում,

դ. զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացում,

ե. որակյալ կադրերի ապահովում,

զ. տեղեկատվական և իրավապայմանագրային դաշտերի բարելավում:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ օրենքը «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին», ընդունված 17.12.2003 թ., ՀՀՊՏ 2004.01.29/6 (305) Հոդ.106:
2. **Հարությունյան Շ.Լ.,** Զբոսաշրջության ինդուստրիա և աշխարհագրություն, Երևան, Զանգակ-97, 2004, էջ 61-65:
3. **Սուվարյան Յու., Շահնազարյան Ն., Առաքելյան Մ.,** «Զբոսաշրջության զարգացման ուղղությունները ՀՀ-ում», «Այլընտրանք» գիտական հանդես, ISSN 1829- 2828, Երևան, «Լիմուշ»:
4. **Голубчик, М.М.**, Политико-географические особенности развития отечественного туризма/ М.М. Голубчик. – Саранск: Изд-во Морд. ун-та. – 2000.
5. Туризм, гостеприимство, сервис: Словарь-справочник. М., 2002.
6. **Пирожник И.И.,** Основы туризма и экскурсионного обслуживания/ И.И. Пирожник. - Минск: Университетское изд-во/.

Էլեկտրոնային կայքեր

7. Հայաստանի ներգնա տուրօպերատորների միության պաշտոնական կայք: http://touroperator.am/ :
8. «Շիրակ» օդանավակայանի 2019 - 2020 թվականների հունվար-օգոստոս ամիսների հիմնական արտադրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկանք:
9. Զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, 13.02.2008 թ., www.armeniainfo.am:
10. «Զվարթնոց» օդանավակայանի 2019 - 2020 թվականների հունվար-օգոստոս ամիսների հիմնական արտադրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկանք:

ՀՏԴ 662,6/,9

Աննա Ծատուրյան
Երևանի պետական համալսարան
anna.tsaturyan2@ysumail.am
Գիտական ղեկավար՝
պրոֆ. Վ. Աբրահամյան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Բանալի բառեր. *այլընտրանքային էլեկտրաէներգիա, հողմաէներգետիկա, երկրաջերմային էներգետիկա, ռիսկեր, հիդրոէլեկտրական, արևային էներգիա։*

Այլընտրանքային էլեկտրաէներգիայի աղբյուրների բացահայտումը և կիրառումը յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման խթանիչ ուժերից մեկն է, որը հնարավորություն է տալիս ստանալ էլեկտրաէներգիա՝ խնայելով ավանդական սահմանափակ նյութական ու ֆինանսական ռեսուրսները։

Анна Цатурян

ИСПОЛЬЗОВАНИЕ АЛЬТЕРНАТИВНЫХ ИСТОЧНИКОВ ЭЛЕКТРОЭНЕРГИИ КАК СПОСОБ ПОВЫШЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ ЭФФЕКТИВНОСТИ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ)

Ключевые слова. *Альтернативная электроэнергия, энергия ветра, геотермальная энергия, риски, гидроэнергетика, солнечная энергия.*

Выявление и использование альтернативных источников электроэнергии является одной из движущих сил экономического развития любой страны, что позволяет получать электроэнергию, экономя традиционно ограниченные материальные и финансовые ресурсы.

Tsaturyan A.D.

USE OF ALTERNATIVE SOURCES OF ELECTRICITY AS AN ABILITY TO INCREASE ECONOMIC EFFECTIVENESS (FOR EXAMPLE, REPUBLIC OF ARMENIA)

Keywords. *Alternative electricity, wind energy, geothermal energy, risks, hydropower, solar energy.*

The identification and use of alternative sources of electricity is one of the driving forces behind the economic development of any country, which makes it possible to obtain electricity while saving traditionally limited material and financial resources.

Այլընտրանքային էլեկտրաէներգիա ասելով՝ հասկանում ենք վերականգնվող և շրջակա միջավայրի համար անվնաս էներգիայի աղբյուր։ Այլընտրանքային էներգիայի աղբյուրը վերականգնվող ռեսուրսն է, որը փոխարինում է նավթի, արդյունահանվող բնական գազի և ածուխի վրա աշխատող ավանդական էներգիայի աղբյուրներին, որոնք այրվելիս մթնոլորտ են արտանետում ածխաթթու գազ, ինչը նպաստում է ջերմոցային ազդեցության աճին և գլոբալ

տաքացմանը:
Այլընտրանքային էներգիան աճի մեծ արագություն է ցույց տալիս ամբողջ աշխարհում: Վերջին չորս տարիների ընթացքում նրա մասնաբաժինը էլեկտրաէներգիայի համաշխարհային սպառման մեջ կրկնապատկվել է՝ հասնելով 20%-ի: 2018 թվականին վերականգնվող էներգիայի ոլորտում ներդրումները հասել են 288,9 միլիարդ դոլարի: Համաշխարհային մասշտաբով արևային էներգիան մնացել է ներդրումների գլխավոր ուղղությունը՝ 2018 թվականին՝ 139,7 միլիարդ դոլար (22% անկում): 2018 թվականին հողմային էներգիայի ոլորտում ներդրումներն աճել են 2%-ով՝ հասնելով 134,1 միլիարդ դոլարի:

Հողմաէներգետիկայի ոլորտը Հայաստանում

Հողմաէներգետիկայի ոլորտը Հայաստանում այլընտրանքային էներգիայի զարգացման ամենահեռանկարային ուղղությունն է: Չնայած Հայաստանում առկա հողմային էներգիայի ստացման մեծ ներուժին՝ հողմակայանների կառուցման հետ կապված նախագծերի զգալի մասը դեռևս չի իրականացվել, թեև դրանց գործունեության համար պիտանի տեղանքները որոշվել են, որոշակի աշխատանքներ արդեն կատարվել և կատարվում են: Տեսականորեն հողմային էներգիայի ներուժը Հայաստանում կարելի է անսահման բարձր գնահատել, սակայն աշխարհագրական և լեռնային բարդ պայմանների պատճառով սահմանափակվում են կիրառման հնարավորությունները, որի պատճառով մեծանում են տեղափոխման ու տեղադրման ծախսերը: Հզոր հողմագեներատորների գործունեության համար պահանջվում են ավելի բարձր կայմեր ու երկար թիակներ, առաջանում են տեխնիկական խոչընդոտներ՝ հողմակայանների սարքավորումների փոխադրման և տեղակայման համար:

Երկրաջերմային էներգետիկան Հայաստանում

Հայաստանում երկրաջերմային ռեսուրսների ուսումնասիրությունն ու երկրաջերմային էներգետիկայի զարգացումը նույնպես հեռանկարային նշանակություն կարող են ունենալ, քանի որ Հայաստանի ընդերքում մագմային օջախների առկայությունը ենթադրում է երկրաջերմային ռեսուրսների մեծ պաշարներ: Երկրաջերմային կայանների կառուցման ծախսերը թեև թանկ են (1 կՎտ-ի համար 2000-4000 ամերիկյան դոլար սահմաններում), սակայն դրանցից էլեկտրաէներգիայի կամ ջերմային էներգիայի ստացման ինքնարժեքը համեմատաբար էժան է: Նշենք, որ երկրաջերմային կայանները ապահովում են Իսլանդիայի էլեկտրաէներգիայի 19%-ը և տաք ջրի ու ջեռուցման 87%-ը: Հայաստանում երկրաջերմային էներգիայի վատ ուսումնասիրության պատճառով դեռևս շատ բան ասել չենք կարող ամբողջ ներուժի և զարգացման հեռանկարների մասին: Հայաստանում նախատեսված է երկրաջերմային էլեկտրակայանի (ԵՋԷԿ) կառուցման ծրագիր, որը, ենթադրվում է, կունենա տեղակայման 25 ՄՎտ հզորություն, էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրությունը կկազմի 194.4 մլն կՎտ.ժ, իսկ գումարային ներդրումները՝ մոտ 39 մլն ԱՄՆ դոլար: ԵՋԷԿ-երի աշխատանքները կախված չեն եղանակային փոփոխություններից, և բնորոշ են հզորության գործակիցների առավել բարձր արժեքներ՝ մոտ 90-95%, իսկ հողմային, արեգակնային և փոքր հիդրոէլեկտրակայանները սեզոնայնության և եղանակի փոփոխության պատճառով աշխատում են կարողությունների 25-40 % չափով:

Հայաստանը ևս գտնվում է ակտիվ հրաբխային գոտում, ու ժամանակին Համաշխարհային բանկի կողմից Սյունիքում և Գեղարքունիքում տարվել են հետազոտական աշխատանքներ և հայտնաբերվել երկրաջերմային էներգիայի աղբյուրներ:

Հիդրոէներգետիկան Հայաստանում

Վերականգնվող էներգիայի ոլորտում այսօր Հայաստանում օգտագործում են հիմնականում հիդրոռեսուրսները: ՀՀ տարածքում կա 162 փոքր ՀԷԿ, ինչպես նաև երկու խոշոր հիդրոէլեկտրակայանների համալիրներ՝ Սևան-Հրազդան ու Որոտան: Հարկ է նշել, որ բնապահպանական տեսանկյունից՝ ՀԷԿ-երը բացասական ազդեցություն ունեն էկոհամակարգի վրա: Օրինակ՝ կարող են խանգարել ձկների տեղաշարժին, որը կենսատեսակի վերարտադրության հիմնական գրավականն է: Պետք է նշել, որ գոյություն ունեն նախագծային

լուծումներ, որոնք նվազագույնի կհասցնեն անգամ փոքր ՀԷԿ-ի կողմից բնությանը հասցնող վնասները:

Արևային էներգետիկան Հայաստանում

Հայաստանն ունի արևային էներգիայի մեծ ներուժ (1մ հորիզոնական մակերևույթի վրա արևային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կՎտժ/մ, իսկ հանրապետության տարածքի մեկ քառորդն օժտված է տարեկան 1850 կՎՏԺ/մ ինտենսիվությամբ արևային էներգիայի պաշարներով): Հայաստանում արտադրվում են արևային ջերմային կոլեկտորներ (ջրատաքացուցիչներ)՝ 1.38-4.12 մ ստանդարտ չափերով: Ջրատաքացուցչի 2.75 մ տարբերակը օրական արտադրում է 120 լ տաք ջուր:

Հայաստանում ստեղծված են բազմաթիվ մեխանիզմներ՝խթանելու վերականգնվող էներգետիկ աղբյուրների օգտագործումը: Օրինակ, համաձայն 2001 թ. մարտի 7-ին ընդունված «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի՝ տասնհինգ տարվա ընթացքում փոքր հիդրոէլեկտրակայանների կողմից և էներգիայի վերականգնվող այլ ռեսուրսների (հողմային, արեգակնային, երկրաջերմային և կենսազանգվածի) կիրառմամբ էլեկտրակայանների կողմից քսան տարվա ընթացքում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիան ենթակա է պարտադիր գնման՝ շուկայի կանոններով սահմանված կարգով:

Ներկայումս Հայաստանն իր ներքին ռեսուրսներով կարող է բավարարել էներգիայի ընթացիկ պահանջարկի միայն 35 տոկոսը: Հետևաբար՝ վերականգնվող էներգիայի ռեսուրսների զարգացումը կարևոր նշանակություն ունի երկրի էներգետիկ անվտանգության համար: Հիդրոէներգիայի արտադրությունը վերջին 20 տարվա ընթացքում խնդրի լուծման հիմնական շարժիչ ուժն է եղել: Էներգետիկ ներդրումների ռիսկերի գնահատումը ցույց է տվել, որ Հայաստանում ռիսկերի ընդհանուր մա 3 ակը գնահատվել է ցածր՝ գնահատման առաջին տարվանից սկսած (առաջին գնահատումը իրականացվել է 2018թ., և դրանից հետո Հայաստանի էներգետիկայի ոլորտում ներդրումային ռիսկերը մնում են նույնքան ցածր): Չնայած աճող ներդրումներին, վերականգնվող էներգիայի հզորությունների ծավալն աճում է ռիսկերի աճին համաչափ:

Վերականգնվող էներգետիկայի ոլորտում ռիսկերի կառավարումն ունի կարևոր նշանակություն: Անհրաժեշտ է նշել ռիսկերի կառավարման հետ կապված և վերականգնվող էներգիայի բոլոր տեսակներին բնորոշ ամենատարածված հատկանիշները: Վերականգնվող էներգիայի զարգացման ռիսկերը որոշելիս դրանք պետք է բաժանել հետևյալ կատեգորիաների՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական, բնապահպանական և իրավական: Վերականգնվող էներգետիկայի ոլորտի տնտեսական ռիսկերը շատ բազմազան են: Այդ ռիսկերը խմբավորվում են երեք կատեգորիաների՝ շուկայական, ֆինանսական և ռազմավարական: Շուկայական ռիսկերը ներառում են էլեկտրաէներգիայի գնից կախված եկամուտների անկայունություն, էլեկտրաէներգիայի պահանջարկի տատանումներ, շուկայում ածխաջրածինների հետ վերականգնվող աղբյուրների մրցակցություն: Վերականգնվող էներգիայի նախագծերի մշակողները լուրջ դժվարությունների են հանդիպում ֆինանսական աջակցություն ստանալու հարցում: Ռազմավարական ռիսկերը ներառում են հեղինակության ռիսկը: Հեղինակային ռիսկը համարվում է էներգետիկ ընկերությունների գործունեության հանրային ընկալման բացասական ազդեցության հնարավորությունը: Հեղինակային ռիսկի հետևանքները ազդում են սպառողների վերաբերմունքի և ընտրության վրա: Շատ առումներով, կորպորատիվ համբավը կառուցված է այն բանի վրա, թե որքան արագ և արդյունավետ վերականգնվող էներգիայի ընկերությունները կարող են ապահովել գործառնությունների, ներդրումների և նախագծերի թափանցիկությունը: Հաջողակ ընկերությունները գրավում են նոր հաճախորդներ և կերտում իրենց համբավը:

Վերլուծությունների հիման վրա առանձնացնենք մի շարք առավելություններ, որոնք կնպաստեն վերակագնվող էներգիայի զարգացմանը ՀՀ-ում և թույլ կտան.

Ø կրճատել կախվածությունը քաղաքականապես և տնտեսապես անկայուն համաշխարհային շուկաներից, ինչպիսիք են՝ բնական գազի և ածխի շուկաները,

Ø խնայողությունները և տնօրինվող կապիտալ պաշարները ներդնել ավելի արդյունավետ ոլորտներում,

Ø պահպանել շրջակա բնական միջավայրը վնասակար ազդեցությունից՝ ի տարբերություն չվերականգնվող հանածո ռեսուրսների արդյունահանումից և փոխակերպումից,

Ø նպաստել նոր արդյունավետ ոլորտների ներդրումային քաղաքականության զարգացմանը, որը կհանգեցնի ՀՀ տնտեսության աճին,

Ø ստեղծել գիտական և արդյունաբերական ներուժի համագործակցման նոր ոլորտ, որը հիմնված կլինի առկա բնական պայմանների և այլընտրանքային էներգիայի աղբյուրների զարգացման վրա։

Եզրակացություն

1. Հայաստանում հատկապես հեռանկարային են համարվում հողմակայանները:
2. Արևային ֆոտովոլտային կայանները թեև կապիտալատար և թանկ տեխնոլոգիաներ են, սակայն միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում անկասկած արդյունավետ և տնտեսապես շահավետ կլինեն:
3. Երկրաջերմային էներգիայի ներուժի արդյունավետ յուրացման դեպքում այն նույնպես էապես կնպաստի էներգետիկ անվտանգությանը:
4. Արևային էներգիայի այլ տեխնոլոգիաները նույնպես հեռանկարային են մեր տնտեսության համար, նույնիսկ ներկա պայմանների համար որոշ տեսակի տեխնոլոգիաների շահագործումը ձեռնտու է:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակ ունի մինչև 2030 թվականը արևային էներգիայի արտադրության մասնաբաժինը օգտագործվող էլեկտրաէներգիայի ընդհանուր ծավալում հասցնել առնվազն 15%-ի կամ 1.8 մլրդ կՎտժ-ի։ Այդ նպատակով կկառուցվեն շուրջ 1000 ՄՎտ հզորությամբ արևային կայաններ՝ ներառյալ ինքնավարները:

Առաջիկա յոթ տարիների ընթացքում էլեկտրաէներգիայի արտադրության բնագավառում կներդրվի շուրջ 1.5 մլրդ ԱՄՆ դոլար:

Ռեսուրսների սպառման և շրջակա միջավայրի բացասական օգտագործման մտահոգությունների պատճառով վերակագնվող էներգիայի օգտագործումը ներկայացնում է մի տարբերակ, որը հաճախ գերադասելի է չվերակագնվող էներգիայի օգտագործումից։

Գրականություն

1.http://test.journals.sci.am/index.php/nuaca2/article/view/3082/2654
2.https://www.shsconferences.org/articles/shsconf/pdf/2021/12/shsconf_sahd2021_01010.pdf?fbclid=IwAR36-bMheVvu7iUibpCucdrN5I0pjXjsMRIO66gHyuZ6saeSS6JaXJUwj1g
3.https://www.oecd.org/environment/outreach/Armenia_Energy%20subsidies_Armenian%20version.pdf
4.http://www.mtad.am/u_files/file/1/13RAZM.pdf
5.https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=160773
6.https://www.iea.org/topics/world-energy-outlook
7.http://www.minenergy.am/page/416

ՀՏԴ 336,1

Նարինե Պետրոսյան
ՀՊՏՀ Տնտեսության կարգավորման և ՄՏՀ ֆակուլտետ, մագիստրանտ
E-mail: petrosyan.nar.99@gmail.com

Գիտական ղեկավար՝
տ.գ.թ., դոցենտ Ք.Վարդանյան

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՑ, ԵՎ ԴՐԱ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ՝ ԻԲՐԵՎ ԳԼՈԲԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐ

Բանալի բառեր՝ *պետական պարտք, կառավարում, ֆինանսավորում, կոնվերսիա, գլոբալ հիմնախնդիր:*

Տարիներ շարունակ պետական պարտքը եղել և մնում է համաշխարհային ֆինանսատնտեսական համակարգի անքակտելի մասը: Պետության ներսում ներքին և արտաքին ազդակների ճնշմամբ առաջացող տարաբնույթ շոկերը, տնտեսական ճգնաժամերը, քաղաքական, սոցիալական և այլ բնույթի փոփոխություններն անմիջականորեն հանգեցնում են պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության և նրա գործիքակազմի իրավիճակին համապատասխան փոփոխությունների: Պետական ծախսերի ֆինանսավորման անհրաժեշտությունն էլ առաջացնում է բյուջեի պակասուրդի ծածկման տարբեր ուղիների օգտագործման անհրաժեշտություն: Ներկայումս զարգացած շուկայական տնտեսությամբ երկրները բյուջեի պակասուրդի ծածկման նպատակով օգտագործում են ազատ դրամական միջոցների ներգրավման մեթոդը: Արդյունքում ձևավորվում է պետական պարտքը, որի կառավարումը վերածվում է պետության տնտեսական քաղաքականության կարևորագույն բաղադրիչի:

Наринэ Петросян

ГОСУДАРСТВЕННЫЙ ДОЛГ КАК СРЕДСТВО ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ И ЕГО УПРАВЛЕНИЕ КАК ПРОБЛЕМА МИРОВОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ СИСТЕМЫ

Ключевые слова: *государственный долг, управление, финансирование, конверсия, глобальные проблемы*

Государственный долг на протяжении многих лет является неотъемлемой частью мировой финансово-экономической системы. Различные потрясения, экономические кризисы, политические, социальные и другие изменения, вызванные подавлением внутренних и внешних импульсов внутри государства, напрямую приводят к изменениям экономической политики, проводимой государством и его инструментами. Необходимость финансирования государственных расходов также вызывает необходимость использования различных способов покрытия бюджетного дефицита. В настоящее время страны с развитой рыночной экономикой используют метод привлечения свободных средств для покрытия дефицита бюджета. В результате формируется государственный долг, управление которым становится ключевым компонентом экономической политики государства.

Narine Petrosyan

PUBLIC DEBT AS A MEANS OF ECONOMIC DEVELOPMENT AND ITS MANAGEMENT AS A PROBLEM OF THE WORLD ECONOMIC SYSTEM

Keywords: *public debt, management, financing, conversion, global problems*

Public debt has been an integral part of the global financial and economic system for many years. Various shocks, economic crises, political, social and other changes caused by the suppression of internal and external impulses within the state directly lead to changes in the economic policy pursued by the state and its instruments. The need to finance public spending also necessitates the use of various methods to cover the budget deficit. Currently, countries with developed market economies use the method of attracting free funds

to cover the budget deficit. As a result, public debt is formed, the management of which becomes a key component of the state's economic policy.

Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրը միշտ էլ կարևորվել է ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների կողմից: Հիմնախնդրի կարևորությունը հատկապես աճեց 2008թ. ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո, երբ ակնհայտ դարձավ պարտքի կառավարման մեխանիզմների և գործիքակազմի անկատարությունն աշխարհի բազմաթիվ երկրներում: Պետական պարտքի հիմնախնդրին ընդհանրապես և դրա կառավարման գործընթացին մասնավորապես անդրադարձ են կատարել քեյնսյան և դասական տնտեսագիտության ներկայացուցիչները, ովքեր պարտքի էության, նշանակության և դրա կառավարման վերաբերյալ առաջարկել են իրենց տեսակետները: Պետական պարտքի կառավարման հիմնախնդրին անդրադարձել են աշխարհի բազմաթիվ երկրների տնտեսագետներ, որոնք փորձել են ներկայացնել պարտքի կառավարման վերաբերյալ իրենց տեսլականը կամ նորովի սահմանել այն: Պետական պարտքի կառավարման գործընթացում կարևոր նշանակություն ունեցավ Փարիզյան ակումբի ստեղծումը, որին անդրադարձել և պարտքի վերաձևակերպման գործընթացում նրա ունեցած դերն է ներկայացրել Ա. Սարգսյանցն իր աշխատանքում[9]:

Հայաստանյան աղբյուրները նույնպես անդրադարձ են կատարել պետական պարտքի կառավարման հիմնախնդրին: Մասնավորապես՝ իրենց «Շուկայական տնտեսության հիմունքները» գրքում Ա. Մարկոսյանը և Ռ. Սաֆարյանը, անդրադառնալով պարտքի կառավարման խնդրին, նշել են, որ պարտք ներգրավելիս յուրաքանչյուր երկրի կառավարություն պետք է հաշվի առնի այն կարևոր հանգամանքը, որ պարտքի ներգրավման արդյունքում ստեղծված հավելյալ արդյունքը հնարավորություն տա սպասարկել այն[4]:

Որքան էլ մեծածավալ են միջազգային ասպարեզում պետական պարտքի և դրա կառավարման վերաբերյալ ուսումնասիրությունները, միևնույն է, դրանք չեն կարողացել ստեղծել մեկ միասնական այնպիսի կառավարման մեխանիզմ, որը հնարավորություն կտար ապահովել պարտքի կառավարման արդյունավետությունը: Ուստի լավագույն տարբերակը կարելի է համարել կառավարման ազգային մեխանիզմների ստեղծումը՝ հիմքում ունենալով հաջողված երկրների փորձը:

Պետական պարտքը բարդ և բազմաբնույթ տնտեսական կատեգորիա է, որի

ձևավորման հետ կապված պետական մարմինների և ֆինանսական հաստատությունների

միջև ձևավորվում է հարաբերությունների բարդ և փոխկապակցված համակարգ՝ կապված այդ պարտքի սպասարկման և մարման՝ որպես լրացուցիչ ֆինանսական պարտավորության հետ:

Լինելով բավականին բազմաբնույթ տնտեսական երևույթ՝ պետական պարտքը չի կարող դիտվել որպես բացառապես դրական կամ բացասական գործոն: Սա առավելապես պայմանավորված է այն գնահատելու դժվարությամբ: Անցյալի և ներկայի տնտեսագետները մեծ ուշադրություն են դարձնում տնտեսության վրա պետական պարտքի հնարավոր բոլոր ուղղակի և անուղղակի ազդեցությունների ուսումնասիրությանը:

Դեյվիդ Հյումը, անդրադառնալով պետական պարտքի խնդրին, նշել է, որ պետությունը պարտքի ներգրավման մեխանիզմին դիմում է պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորելու համար, քանի որ հարկերի բարձրացմամբ միջոցների ներգրավումը հասարակական դժգոհության տեղիք կարող է տալ, ինչն էլ ձեռնտու չէ քաղաքական իշխանությանը: «Հետևաբար, ցանկացած կառավարություն գրեթե անխուսափելիորեն չարաշահելու է պարտքը: Արդյունքում կա՛մ ազգը կկործանի պետական պարտքը, կա՛մ պետական պարտքը կկործանի ազգը»[14]: Հյումի այս մոտեցումն, իհարկե, չափազանցված է, քանի որ մինչ օրս պարտքը չի ոչնչացրել որևէ ազգի, բայց մեծ վնաս է հասցրել մի շարք երկրների, և այն պատճառով, որ նրա հետ անզգուշորեն են վարվել: Հյումն առաջին անգլիացի հեղինակներից մեկն էր, ով ուշադրություն հրավիրեց պետական պարտքի վրա: Նրան դուր չէր գալիս այն տարածված միտքը, որ «հասարակությունը չի աղքատանում պետական պարտքի պատճառով, քանի որ այն պարտք է հիմնականում իրենց, և ոմանց նրանք այնքան եկամուտ են բերում, որքան խլում են ուրիշներից»: Հյումը կտրականապես մերժում էր այս գաղափարը՝ այն հայտարարելով «մակերեսային համեմատության» «անսկզբունքային» արդյունք[13]:

Ադամ Սմիթը գտնում էր, որ պետական պարտքը համեմատելի է «միակողմանի

փողոցի հետ՝ երբ մուտք գործես, չես կարող հետ դառնալ»[7]: Նրա տեսանկյունից՝ ներքին և արտաքին պետական պարտքը հավասարապես բացասական ազդեցություն են ունենում տնտեսության վրա: «Ասում են, որ հասարակության պարտքի տոկոսները վճարելիս աջ ձեռքը վճարում է ձախով: Փողը չի հեռանում երկրից, և ազգը չի աղքատանում: Այս մոտեցումն ամբողջովին հիմնված է մերկանտիլիստական

համակարգի բարդության վրա»: Ըստ Սմիթի՝ կառավարությունն իր պարտատերերին
անուիտետ է վճարում սովորաբար ավելի բարձր տոկոսադրույքով, քան այլընտրանքային ներդրումների եկամտաբերությունն է: Անուիտետի ապահովության վրա փոխառություն վերցնելով կամ անուիտետը այլ մարդկանց վաճառելով՝ պարտատերերը ստանում են նոր կապիտալ պետությանը վարկի դիմաց: Բայց այս նոր կապիտալը պետք է որ գոյություն ունենար երկրում և, ինչպես ցանկացած այլ կապիտալ, օգտագործվեր տնտեսության մեջ: Դա նոր է պետության վարկատուների համար, բայց ոչ երկրի: Չնայած այն փոխարինում է պետությանը փոխառված կապիտալին, բայց արդյունքում երկրում ոչինչ չի փոխվում, ու միայն մի ձեռքից անցնում է մյուսը: Սմիթը գտնում էր, որ սա հանգեցնում է երկրի աղքատացման: Նման արդյունքը հնարավոր է, եթե մենք ենթադրենք ինչպես Սմիթը, այսինքն՝ պետությունը, իր քաղաքացիներից կապիտալ փոխառելով, ոչնչացնում է այն: Սակայն, որոշ փորձագետներ գտնում են, որ պետք է հաշվի առնել նաև այն, որ փոխառված կապիտալը պետությունը կարող է ներդնել տնտեսության առավել արտադրողական ճյուղում և արդյունքում ստեղծել ավելի մեծ հավելյալ արդյունք, քան եթե այն մնար քաղաքացու ձեռքում: Ինչ վերաբերում է արտաքին պարտքին, ապա նրա տոկոսագումարների վճարումը Սմիթը դիտարկում էր որպես ազգային հարստության կորուստ կամ նվազում, քանի որ դրանք հոսում են այն երկիր, որը պարտքը սպասարկող երկրի վարկատուն է: Սմիթը նշել է. «Հսկայական պարտքերը, որոնք այժմ ճնշում են և երկարաժամկետ հեռանկարում գուցե ոչնչացնեն Եվրոպայի բոլոր մեծ ազգերին, առաջընթաց են ապրում»[15]:

Ըստ *«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի՝* պետական պարտքը Կառավարության պարտքի և Կենտրոնական բանկի արտաքին պարտքի հանրագումարն է[1]: Պետական պարտքի բաղադրիչներն են ներքին պետական պարտքը, արտաքին պետական պարտքը և պետական երաշխիքները:

Պետական պարտքի կառավարումը ցանկացած երկրում, այդ թվում նաև ՀՀ-ում իրականացվող մակրոտնտեսական քաղաքականության առանցքային բաղադրիչն է, քանի որ այն դիտվում է որպես պետական բյուջեի անհավասարակշռության կարգավորման, պարտքային պարտավորությունների ներգրավման և դրանց ճիշտ ու ժամանակին սպասարկման, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացող տնտեսական աճի որոշիչ գործոն:

Պետական պարտքի կառավարումը պետական իրավասու մարմինների կողմից ձեռնարկվող միջոցառումների ամբողջություն է՝ միտված պետական պարտքի մեծության, կառուցվածքի և սպասարկման մեծության կարգավորմանը[5]:

Առավելապես տարածված է այն մոտեցումը, թե պետական պարտքի կառավարումը ենթադրում է նվազագույնի հասցնել դրա սպասարկման ծախսերը[8]: Ասվածի տակ անհրաժեշտ է հասկանալ այն, որ պետական համապատասխան մարմինները փորձում են հնարավորինս խելամիտ կերպով և ժամանակահատվածում իրականացնել նոր պարտքային միջոցների ներգրավումը, ինչը չի նվազեցնի դրա սպասարկման պետական հնարավորությունը և հետագայում նաև չի խոչընդոտի նոր միջոցների ներգրավմանը: Այսինքն՝ վերելքի փուլում պետությունը խուսափում է երկարաժամկետ վարկերի ներգրավումից, իսկ անկման փուլում իրականացվում է հակառակը՝ ներգրավվում են երկարաժամկետ վարկեր և երկարացվում պարտքային պարտավորությունների ժամկետները: Սակայն նոր փոխառությունների ներգրավումը նույնպես պետք է ունենա որոշակի սահման, ինչը բխում է երկրի տնտեսական անվտանգության ապահովման և նոր միջոցների հետագա ներգրավման ու դրանց սպասարկման անհրաժեշտությունից: Այս ամենից զատ անհրաժեշտ է հաշվի առնել այն, որ փոխառությունների ներգրավումից և դրանց սպասարկումից բացի պետական պարտքի կառավարման գործընթացում անհրաժեշտ է կարևորել այդ միջոցների օգտագործման ուղղությունները, քանի որ դրանց ճիշտ և նպատակային օգտագործումը հիմք է դառնում պետական պարտքի հետագա սպասարկման համար: Այսպես՝ եթե պետությունը ներգրավված փոխառությունները օգտագործում է նախկինում վերցված փոխառությունների սպասարկման համար, ապա սա պարունակում է լուրջ ռիսկեր երկրի հետագա վարկունակության, միջոցների ոչ նպատակային օգտագործման, համաշխարհային ֆինանսական համակարգում երկրի հեղինակության անկման, ներպետական սոցիալական, տնտեսական լարվածության առաջացման և դրանց հետ ածանցված բազմաթիվ խնդիրների հետ կապված՝ ընդհուպ մինչև դեֆոլտի ռիսկեր: Այն դեպքում, երբ ներգրավված փոխառություններն օգտագործվում են նպատակային, նպաստում են նոր ավելացված արժեքի ստեղծմանը և մակրոմակարդակում կարող են հանգեցնել տնտեսական ցուցանիշների բարելավման, ապա կարելի է ասել, որ ներգրավված փոխառություններն օգտագործվել են արդյունավետ, և ինչպես արդեն նշվեց, այն հիմք է դառնում այդ պարտքի հետագա սպասարկման համար:

Թեև տնտեսության պետական կարգավորման գործընթացում հատկապես և հասարակության

սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման, պետության միջազգային հեղինակության և դրանից բխող այլ կարևոր գործընթացների դեպքում մասնավորապես, առանցքային նշանակություն ունի պետական պարտքի ներգրավումը՝ որպես պետական ծախսերի ֆինանսավորման աղբյուր, այնուամենայնիվ, մինչ օրս չկա մեկ միասնական սահմանում ինչպես պետական պարտքի, այնպես էլ դրա կառավարման շուրջ:

Համաձայն ԱՄՀ-ի և Համաշխարհային բանկի՝ Պետական պարտքի կառավարման ուղեցույցի՝ պետական պարտքի կառավարումը կարելի է բնութագրել որպես պետական պարտավորությունների կառավարման ռազմավարության ձևավորման և իրականացման գործընթաց՝ անհրաժեշտ ռեսուրսների պահանջվող քանակի ներգրավման, ռիսկերի և ծախսերի ընդունելի մակարդակի ապահովման և այլ նպատակներ, որոնք կարող է սահմանել տվյալ երկրի կառավարությունը[2]:

Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի տնտեսագետները վերոնշյալ զեկույցում խոստովանում են, որ վատ կառավարվող պետական պարտքը դարձավ այն կարևոր գործոնը, որը խթանեց տնտեսական ճգնաժամը շատ երկրներում: Այս ճգնաժամերը ընդգծել են պետական պարտքի կառավարման առողջ ռազմավարության մշակման անհրաժեշտությունը: Որքան էլ պատասխանատու մարմիններին հաջողվի իրականացնել համակարգված մակրոտնտեսական քաղաքականություն, այնուամենայնիվ, եթե պետական պարտքի կառավարումը մղվում է հետին պլան, ապա ճգնաժամը դառնում է անխուսափելի: Միևնույն ժամանակ, եթե առկա մակրոտնտեսական քաղաքականությունն անարդյունավետ է, ապա նույնիսկ պետական պարտքի կառավարման լավ կազմակերպված համակարգը չի կարողանա կանխել ճգնաժամը: Այսպիսով, պետական պարտքի կառավարումը դառնում է մակրոտնտեսական քաղաքականության կարևոր բաղադրիչ, և միայն դրանց համակարգված ու փոխհամաձայնեցված կիրառումը կարող է հիմք դառնալ հետագա ճգնաժամերից խուսափելու և տնտեսական աճ ապահովելու համար:

Պետական պարտքի կառավարումը՝ որպես բարդ երևույթ, պետք է դիտվի նեղ և լայն իմաստով: *Լայն իմաստով*՝ պետական պարտքի կառավարումը պետք է հասկանալ պետության՝ որպես վարկառուի գործունեության հետ կապված տնտեսական

քաղաքականության ուղղություններից մեկի ձևավորում: Այն բաղկացած է ոչ միայն պետական պարտքի ոլորտում քաղաքականության ընդհանուր ձևավորումից, այլև պետական պարտքի սահմանների հաստատումից և լրացուցիչ միջոցների ներգրավման ապահովումից: Պետական պարտքի կառավարումը *նեղ իմաստով* ներկայացնում է պարտքային պարտավորությունների տեղաբաշխման, պարտքի սպասարկման և մարման հատուկ միջոցառումների համախումբ: Բացի այդ, տնտեսագետները կարևորում են

«երկիր-պետական պարտքի կառավարման սխեման՝ ռազմավարությունը, որն ընկալվում է որպես պարտքի կառուցվածքի ընտրություն, այսինքն՝ տարբեր տեսակի պարտքային պարտավորությունների հարաբերակցության ձևավորում: Որոշակի ռազմավարություն ընտրելիս պետությունը պետք է պատշաճ կերպով գնահատի պարտքի ներգրավման արդյունքում սպասվող ծախսերը, ծախսերի փոփոխության ռիսկը և պարտքի կառուցվածքը[12]: Պարտք ունեցող շատ երկրներ ձգտում են արդյունավետորեն կառավարել իրենց պարտքը, և հետևաբար նրանց նպատակները պարտքի կառավարման հարցում շատ հաճախ համընկնում են: Այսպիսով, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) երկրների 72% -ը որպես պետական պարտքի կառավարման հիմնական նպատակ նշում է ծախսերի նվազեցումը և ռիսկերի հաշվառումը[12]: Օրինակ՝ *Մեծ Բրիտանիան* ձգտում է պահպանել պետական պարտատոմսերի տարեկան առք ու վաճառքը՝ կենտրոնանալով երկարաժամկետ ծախսերը նվազագույնի հասցնելու և ռիսկը հաշվի առնելու վրա: Իր հերթին, *Դանիայի* կառավարությունը, երկարաժամկետ վարկերի արժեքը նվազեցնելով, փորձում է պահպանել ռիսկը ընդունելի մակարդակում, ստեղծել և զարգացնել լավ գործող ֆինանսական շուկա[6]: Այսպիսով, եթե շատ երկրներ իրենց պետական պարտքի կառավարման գործընթացում հետապնդում են նմանատիպ նպատակներ, ապա նրանց կողմից կիրառվող մեթոդները նույնպես հիմնականում նույնական կլինեն:

Միջազգային պրակտիկայում լայնորեն կիրառվում են պետական պարտքի կառավարման հետևյալ մեթոդները.

- պարտքի չեղարկում (դեֆոլտ),
- պարտքի մասնակի դուրսգրում,
- վերակազմավորում կամ վերակառուցում,
- վերաֆինանսավորում,
- կոնվերսիա:

Միջազգային փորձի հիման վրա կարող ենք փաստել, որ առկա է պարտքի չեղարկման երկու հիմնական պատճառ.

1. նոր քաղաքական ուժերի իշխանության գալը,
2. պետության անվճարունակությունը:

Այս մեթոդի օգտագործումը կապված է պարտապան երկրի համար մի շարք բացասական հետևանքների հետ, որոնցից առանձնացվում են հիմնականները. վստահության կորուստ, նոր պարտքի ներգրավման հետագա հնարավորությունների սահմանափակում, արտաքին առևտրի նվազման հավանականություն, ներքին շուկայի անկայունություն, երկրից ֆինանսական կապիտալի արտահոսք[10]: Պարտքային պարտավորությունների *մասնակի դուրսգրումը* հասկացվում է որպես դրանց դադարեցում և, համապատասխանաբար, պետական պարտքի ծավալի նվազում, եթե կան օրենքով սահմանված հիմքեր: Այս մեթոդի կիրառումը բնորոշ է ցածր եկամուտ և միևնույն ժամանակ բարձր պարտք ունեցող երկրներին: Պարտքի չեղարկմանը համեմատ դուրսգրման ազդեցությունն ավելի բարենպաստ է համարվում պարտապան երկրի համար, քանի որ նոր ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը պահպանվում է: Եթե ո՛չ չեղարկումը, ո՛չ էլ պարտքի դուրսգրումը չեն կարող դիտվել որպես լավագույն տարբերակ, կողմերը դիմում են *վերակազմավորման կամ վերակառուցման*:

«Վերակառուցում» տերմինը վերաբերում է պարտքերի սպասարկման, վճարման ժամանակացույցի վերանայմանը, պարտքերի մարման նոր և ավելի ընդունելի ժամանակացույցի ստեղծմանը՝ տոկոսավճարների արտոնյալ ժամանակահատվածի երկարացման և հիմնական մարման ժամկետի ավելացման միջոցով: Վերակառուցումը կարող է օգնել՝ վերականգնելու պետության կողմից պարտքերը սպասարկելու ունակությունը: Պետական պարտքի կառավարման այս մեթոդը տարածված է: Դրա ապացույցը Փարիզի ակումբի շրջանակներում 1989-ից 1993 թվականներին պարտքի վերակազմավորման ավելի քան 400 պայմանագրերի կնքումն է[11]:

Այն դեպքում, երբ պարտապան պետությունը ներգրավում է նոր փոխառություններ՝ գոյություն ունեցող պարտքը մարելու համար, ապա տեղի է ունենում *վերաֆինանսավորում*: Հաճախ լրացուցիչ ֆինանսական միջոցներ տրամադրվում են նույն վարկատուների կողմից, որոնցից վերցված վարկերի սպասարկման նպատակով էլ պարտապան երկրները նոր վարկային միջոցներ են ներգրավում: Այս գործընթացը նման է

պարույրի, որն ուղեկցվում է պարտքերի անվերջ կուտակումով և դրա վճարումների

աճով: Միևնույն ժամանակ, տնտեսական զարգացման հնարավորությունները սահմանափակվում են:

Կոնվերսիան ենթադրում է պարտքի փոխարինումը այլ պարտավորություններով, որոնք բարելավում են վարկառուի ֆինանսական դրությունը (կամ տվյալ ժամանակահատվածում, կամ ապագայում): Փոխարինումը կարող է ներառել պարտքային պարտավորությունների փոխանակումը սեփականության, ազգային արժույթի, ազգային ակտիվների, բաժնետոմսերի, պարտատոմսերի, ապրանքների մատակարարման, ֆինանսական ակտիվների և այլնի հետ: Կոնվերսիոն սխեմաների օգտագործումը թույլ է տալիս նվազեցնել ընդհանուր պարտքը և օգնում է ներգրավել օտարերկրյա ուղղակի ներդրումներ: Կոնվերսիան լայն տարածում ուներ Լատինական Ամերիկայի երկրներում, որոնք 1980-ականների կեսերից մինչ 1990-ականների սկիզբը ծանր պարտքային ճգնաժամ էին ապրում:

Կարելի՞ է արդյոք նոր պարտք վերցնել: Այո, կարելի է ավելացնել պետական պարտքը, բայց դրա համար Կառավարությունը պետք է ունենա հստակ սահմանված և չափելի նպատակներ ու առաջնահերթություններ: Պետք է հստակ իմանալ, թե ինչ է խոստանում կառավարությունը և ինչ է հանրությունը ստանալու հարյուրավոր միլիոն դոլարներ պարտք վերցնելուց և ներդրումներ կատարելուց հետո: Այսինքն, մենք պետք է հստակ իմանանք, թե որտեղ ենք հիմա, ինչի ենք ձգտում, ինչպես ենք մեր ներկա իրավիճակից հասնելու մեր երազած իրավիճակին և ունե՞նք արդյոք դրա համար անհրաժեշտ կարողություններն ու ընթացակարգերը: Այլապես, վերջում կարող է ստացվել մի իրավիճակ, որ պարտքն ունենք, իսկ ցանկալի արդյունքը՝ ոչ: Կառավարությունը պետք է ունենա կոռուպցիայի դեմ պայքարի համակարգ, որը կհայտնաբերի առավել ռիսկային գոտիները և հսկողության գործիքներ ու ընթացակարգեր կունենա: Կառավարությունը պետք է իրական միջոցառումներ ձեռնարկի ստվերային տնտեսության կրճատման ու «դիտարկվող» տնտեսության տեսակարար կշռի ավելացման ուղղությամբ և Հայաստանում անկանխիկ տնտեսություն ձևավորելու պարտավորություն ստանձնի: Դա ստվերային տնտեսության կրճատման ուղղությամբ արմատական քայլ կլինի: Պետական պարտքի կառավարումն իրականացվում է թափանցիկության,

հաշվետվողականության, կանխատեսելիության և հրապարակայնության սկզբունքներով: Պետական պարտքի կառավարումն իրականացնում են ՀՀ ֆինանսների նախարարությունը և ՀՀ Կենտրոնական բանկը՝ իր պարտքի մասով[1]:

Ֆինանսների նախարարությունում գործում է հատուկ կառուցվածքային ստորաբաժանում (Պետական պարտքի կառավարման վարչություն), որն իրականացնում է ՀՀ պարտքային ցուցանիշների շարժի, ռիսկայնության վերլուծություն, միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումներ և դրանց հիման վրա ԿԲ-ի հետ համատեղ մշակում պարտքի կառավարման համապատասխան գործիքակազմը[3]:

ՀՀ-ում պարտքի կառավարումն իրականացվում է կառավարության պարտքի կառավարման ռազմավարության հիման վրա, որը ներառվում է միջնաժամկետ ծախսային ծրագրում (ՄԺԾԾ): Այն ներկայացնում է ՀՀ պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման համար անհրաժեշտ փոխառու միջոցների ներգրավման, ինչպես նաև ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ռիսկերի կառավարման ռազմավարությունը: Հրապարակվում է տարեկան պարբերականությամբ և նպաստում է կառավարության պարտքի կանխատեսելի ու թափանցիկ կառավարման ապահովմանը:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը պարզաբանում է պարտք ներգրավելու քաղաքականությունը՝ ներառելով կառավարության պարտքի կառավարման ուղենշային ցուցանիշները, բացահայտում է կառավարության պարտքի կառավարման հետ կապված ռիսկերը, ինչպես նաև նախանշում է այն սկզբունքները, նպատակադրումներն ու իրականացվելիք միջոցառումները, որոնց ներքո կառավարությունը չի վտանգի հարկաբյուջետային քաղաքականության կայունությունը[3]: ՀՀ կառավարության պարտքի ցանկալի պորտֆելի ձևավորման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվում են ծախսերի և ռիսկերի վերլուծություններ՝ կիրառելով նաև Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից մշակված մոտեցումները: Վերլուծությունները հնարավորություն են ընձեռում գնահատել ՀՀ կառավարության պարտքի պորտֆելի ծախսերի ու ռիսկերի ցուցանիշները և դրանց վրա հնարավոր շոկերի ազդեցությունները:

Ընդհանուր առմամբ, ՀՀ կառավարության պարտքի կառավարման ռազմավարությունը ներկայացնում է ծախսերի և ռիսկերի համադրման հնարավոր տարբերակներից նախընտրելին, որն այլ կերպ անվանվում է *հիմնական հնարավոր սցենար*, և որի ընտրության հիմքում ընկած է ընդունելի ծախսերով ֆինանսական կարիքի
բավարարումը և պարտքի կայունությունը: Պետական պարտքի կառավարում մակրոտնտեսական քաղաքականության հզոր գործիք է: Նրա հմուտ օգտագործմամբ պետությունը կարող է հաջողությամբ լուծել ինչպես ընթացիկ խնդիրները, այնպես էլ նպաստել ներդրումային վարկանիշի բարձրացմանը, նոր ներդրողների համար պետական արժեթղթերի գրավչության բարձրացմանը և ազգային շահերի իրականացմանը:

Այսպիսով, պետական պարտքը նշանակալի դեր է խաղում ցանկացած պետության տնտեսական համակարգում և հանդիսանում է նրա ֆինանսական համակարգի բաղկացուցիչ մասը: Կարող ենք փաստել, որ հասարակության կյանքի սոցիալ- տնտեսական, մշակութային զարգացումը ներկայումս անմիջականորեն համարվում է պետության կարգավորման ոլորտը, ուստի պետության կողմից մշակված ռազմավարությունը, դրանից բխող մարտավարական քայլերը, այդ թվում նաև պետական պարտքի կառավարման խնդիրներն ու նպատակները պետք է բխեն կարգավորման վերոնշյալ ոլորտների արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունից: Ժամանակակից աշխարհում պետական պարտքը բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման լիարժեք աղբյուր է: Ավելին՝ այն կարելի է որակել որպես բավականին հակասական երևույթ: Տնտեսագիտական մտքի զարգացման հետ մեկտեղ, ինչպես տեսանք, նրա ազդեցության վերաբերյալ տեսակետները տատանվում էին՝ դասականներին բնորոշ լիակատար մերժումից մինչև քեյնսյան դիտարկումը՝ որպես պետական քաղաքականության բաղկացուցիչ մաս: Իրականությունն ապացուցեց, որ այսօր աշխարհում ոչ մի պետություն չի կարող զոյատևել առանց վարկեր ներգրավելու: Իրոք, պետական պարտքը՝ որպես բարդ տնտեսական ֆենոմեն, մեծ ազդեցություն ունի տնտեսական, քաղաքական և սոցիալական ոլորտների վրա: Եթե պետական պարտքը պատշաճ և արդյունավետ չի կառավարվում, ապա այն կարող է անդառնալի վնաս պատճառել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, https://www.arlis.am/documentview.aspx?docid=119036
2. ԱՄՀ և ՀԲ, Պետական պարտքի կառավարման ուղեցույց, https://www.imf.org/external/np/mae/pdebt/2000/eng/index.htm

1. ՀՀ Ֆինանսների նախարարության Պետական պարտքի կառավարման վարչության կանոնադրություն, սեպտեմբեր, 2018, https://www.minfin.am/website/images/website/gorcaruytner/470-L.pdf
2. Մարկոսյան Ա., Սաֆարյան Ռ., Շուկայական տնտեսության հիմունքները, Եր., 2002:
3. Տիգրանյան Ի.Տ., Տնտեսության պետական կարգավորում, Երևան, Տնտեսագետ, 2015, էջ 324:
4. Алехин Б.И., Государственный долг: учеб. пособие. М., 2011, с. 153-154.
5. Головачев Д.Л., Государственный долг: российская и мировая практика. М., 1998, с. 14.
6. Русайкина А. М., Управление государственным долгом, Пенза, 2001, с. 11.
7. Саркисянц А. Г., Парижский и Лондонский клубы: реструктуризация долга, 2002.
8. Селезнев А.З., Государственный долг и внешние активы: учеб.пособие / под ред.проф. В.Ю. Катасонова, М., 2010. с. 54.
9. Селезнев А.З., Государственный долг и внешние активы: учеб.пособие / под ред.проф. В.Ю. Катасонова, М., 2010, с. 58.
10. Anthony M., The design and Use of Strategic Benchmarks - some findings in OECD markets.14th OECD Global Forum on Public Debt Management and Emerging Government Securities Markets.Budapest, 2004.December 7-8.
11. Hume, David, “Of Public Credit,” Essays Moral, Political and Literary, Vol.I, New ed.; London, 1882, p. 366. Original edition published in 1742.
12. Hume, David, Writings on economics. Edited and introduced by E. Rotuein, London, Thomas Nelson and Sons Ltd, 1955.
13. Smith A., An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations, 1776, Book Five, Charter I. Part 1, http://www.ecn.bris.ac.uk/het/smith/wealbk05

ՀՏԴ 331,5

Ռոզա Աբրահամյան
Գավառի պետական համալսարանի
տնտեսագիտական ֆակուլտետի
ֆինանսներ /ըստ ոլորտի/ բաժնի 2-րդ կուրսի
ուսանողուհի՝
էլփոստ՝ abrahamyanroza531@gmail.com

Գիտական ղեկավար՝
տ. գ.թ., դոցենտ Գայանե Խաչատրյան՝
էլփոստ՝ khachatryangayane.gkh@mail.ru

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՓՄՁ) ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր՝ *ձեռնարկատիրություն, ՓՄՁ, պետական աջակցության քաղաքականություն, տնտեսական աճ, շուկայի հասանելիություն, գործարար միջավայր:*

Հայաստանի Հանրապետության ՓՄՁ-ներն ունեն նորարարական գաղափարներ և տեխնոլոգիա ընդունելու, ներդնելու, գեներացնելու բարձր ունակություն, միջազգայնորեն մրցունակ են և ներառված ինչպես տարածաշրջանային, այնպես և գլոբալ արժեշղթաներում:

Կարելի է պնդել, որ ՀՀ-ում պետության արդյունավետ կառավարումը նպաստում է մասնավոր հատվածի աճին ու զարգացմանը: Պետության հիմնական առաքելությունն է ստեղծել նորարարական ու մրցունակ ՓՄՁ-ների ձևավորման և աճի համար բարենպաստ միջավայր:

Роза Абрамян

ВОПРОСЫ РАЗВИТИЯ МАЛОГО И СРЕДНЕГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА (МСП) В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевые слова: *предпринимательство, МСП, политика государственной поддержки, экономический рост, доступ к рынку, бизнес-среда.*

Малые и средние предприятия (МСП) в Республике Армения обладают высокой способностью внедрять инновационные идеи, инвестировать и создавать технологии, которые конкурентоспособны на международном уровне, включены как в региональные, так и в глобальные производственно-сбытовые цепочки.

В результате изучения темы можно утверждать, что эффективное управление государством в Республике Армения способствует росту и развитию частного сектора. Основной миссией государства является создание благоприятной среды для роста инновационных, конкурентоспособных МСП.

Roza Abrahamyan

ISSUES OF SME DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

Keywords: *Entrepreneurship, SMEs, government support policy, economic growth, market access, business environment.*

SMEs in the Republic of Armenia have a high capacity to adopt innovative ideas, invest and generate technology, are internationally competitive, are included in both regional and global value chains.

As a result of the study of the topic, it can be argued that the effective governance of the state in the Republic of Armenia contributes to the growth and development of the private sector. The main mission of the state is to create a favorable environment for the growth of innovative competitive SMEs.

Ժամանակակից շուկայական տնտեսությունում փոքր ու միջին ձեռնարկատիրությունը (ՓՄՁ) հանդիսանում է տնտեսական համակարգի կարևորագույն բաղկացուցիչներից մեկը, որը, անշուշտ, առանձնակի դեր է խաղում տնտեսության կայունության և կայուն զարգացման գործում: ՓՄՁ հատվածը հանդիսանում է ցանկացած զարգացած տնտեսական համակարգի անբաժանելի և օբյեկտիվորեն անհրաժեշտ տարր, առանց որի տնտեսությունն ու հասարակությունն ամբողջությամբ չեն կարող գոյություն ունենալ և զարգանալ:

Հարկ է հավելել, որ ՓՄՁ-ների դերը հսկայական է երկրի տնտեսության զարգացման, նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խավի ձևավորման, երկրում սոցիալական և քաղաքական կայունության ապահովման գործում:

Անշուշտ, Հայաստանի Հանրապետությունում կայուն տնտեսական աճի ապահովման քաղաքականության համատեքստում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումն է կոչված ապահովելու երկրի տնտեսական աճի կայունությունը՝ տնտեսությանը հաղորդելով նորարարական ուղղվածություն և ճկունություն: ՓՄՁ-ն իր առանձնահատկություններով և զարգացմամբ ընձեռած հնարավորություններով այն անկյունաքարն է, որը նշանակալի ազդեցություն ունի երկրի տնտեսական զարգացման վրա՝ ապահովելով զգալի սոցիալ-տնտեսական արդյունք և տարածքային համաչափ զարգացում:

Ժամանակակից աշխարհում ՓՄՁ-ները գտնվում են պետության կողմից իրականացվող տնտեսական քաղաքականության կենտրոնում:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն, որի գործունեությունն ուղղված է ՀՀ կառավարության՝ ՓՄՁ աջակցության ծրագրերի իրականացմանը:

Կենտրոնն օգնում է սկսնակ և արդեն գործող ՓՄՁ-ներին ճիշտ ուղով սկսել բիզնեսը:

Ազգային կենտրոնի հիմնական նպատակն է բարձրացնել ՓՄՁ-ների մրցունակությունը՝ առաջնորդվելով գիտելիքահեն տնտեսության սկզբունքներով, դառնալ վստահելի գործընկեր փոքր և միջին բիզնեսին՝ հաջողության հասնելու իր ճանապարհին՝ տրամադրելով բարձրորակ գործարար լուծումներ և ծառայություններ:

Հավելենք նաև, որ ազգային կենտրոնի կողմից տրամադրվող գործարար խորհրդատվությունը, ուսուցողական և վերապատրաստման դասընթացները նպաստում են սկսնակ և գործող ՓՄՁ սուբյեկտների ձեռնարկատիրությանն առնչվող գիտելիքների մակարդակի բարձրացմանը, գործարար հմտությունների զարգացմանը, ինչը հանգեցնում է ՓՄՁ սուբյեկտների գործունեության արդյունավետությանն ու մրցունակությանը:

Փոքր և միջին ձեռնարկությունները Հայաստանի տնտեսության բոլոր ոլորտներում զբաղեցնում են կարևոր դիրքեր, իսկ դրանցից մի քանիսում կազմում են համապատասխան ոլորտների հիմքը: 2008-2011 թթ. ՓՄՁ-ները, համաձայն տարբեր գնահատականների միջինացված ցուցանիշի, աշխատանքով ապահովել են մոտ 100 հազար մարդու: Հատկապես այն ոլորտներում, որտեղ ՓՄՁ-ների արտադրողականությունը համեմատելի է խոշոր ձեռնարկությունների արտադրողականության հետ (այդպիսի ճյուղերն են՝ արդյունաբերությունը, հատկապես մշակող արդյունաբերությունը, շինարարությունը, ծառայությունների և անհատական ծառայությունների ոլորտները), դրանք տնտեսական աճի ապահովման, արտահանման աճի և աշխատատեղերի ստեղծման կարևոր աղբյուր են: Այսպիսով՝ ՓՄՁ-ների ստեղծման և հաջող գործունեության խրախուսումը տնտեսության վերը նշված ոլորտներում կառավարության տնտեսական քաղաքականության գերակայություններից է:

ՓՄՁ-ների ուղղակի աջակցությունը շեշտադրվում է նաև այն պատճառով, որ մանր և միջին

ձեռնարկատերերի թվի ավելացումը երկրում միջին խավի ձևավորման կարևոր գործոն է:

ՓՄՁ-ների ուղղակի աջակցության հիմնական քաղաքականությունները ներառելու են.

Ø պետական վարկային երաշխավորությունների փորձի շարունակությունը և ընդլայնումը այն գործող և սկսնակ փմձ-ների համար, որոնք ունեն արտահանման, ներմուծման փոխարինման կամ գիտելիքների արտադրության ներուժ՝ գերակայություն տալով մարզերում գործող ձեռնարկություններին:

Ø ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովումը՝ գրավի կամ դրա իրացվելիության անբավարարության, բարձր ռիսկերի և այլ խոչընդոտների վերացման և կառավարման գործիքների միջոցով:

Ø պետական գնումների համակարգի հասանելիության ապահովումը ՓՄՁ-ների համար: Պետք է վերանայվեն պետական գնումների այն ընթացակարգերը, որոնք առանց արդարացի հիմնավորման նպատակի խոչընդոտներ են ստեղծում համապատասխան ոլորտում գործող փմձ-ների համար:

Նշված ուղղակի քաղաքականությունների, ինչպես նաև ընդհանուր շրջանակային միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է տնտեսությունում ՓՄՁ-ների դերի բարձրացում: Այսպես, 2025 թվականին ՓՄՁ-ների ավելացրած արժեքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կաճի՝ 2012-ի՝ մոտ 40 տոկոսից հասնելով 60 տոկոսի: Որպես ՓՄՁ-ների մրցունակությունը բնորոշող հիմնական ցուցանիշ՝ կաճի նաև աշխատանքի արտադրողականությունը: Ներկայումս, կախված տնտեսության ճյուղից, Եվրամիության երկրների ՓՄՁ-ների արտադրողականությունը 3-ից 5 անգամ ավելի է հայկական ձեռնարկությունների համանման ցուցանիշից: Մինչև 2025 թվականը հայկական ՓՄՁ-ների աշխատանքի միջին արտադրողականությունը կաճի 2-3 անգամ՝ նպաստելով նաև արտահանման մեջ ՓՄՁ-ների արտադրանքի տեսակարար կշռի աճին [1]:

Այժմ անդրադառնանք ՀՀ-ում ՓՄՁ-ների վերաբերյալ տվյալներին և դրանց վերլուծությանը:



Գծապատկեր 1. Փոքր ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին, քանակ[1]

2019 թվականին փոքր ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում ամենամեծ թիվը կազմել է քաղաք Երևանում: Երկրորդ տեղում փոքր ձեռնարկատիրությունների թվով Կոտայքի մարզն է, երրորդ տեղում՝ Արմավիրի մարզը:

[1] *Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, 2020, https://www.armstat.am/am/?nid=82&year=2021:*



Գծապատկեր 2. Միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականին, քանակ[1]

Միջին ձեռնարկատիրությունների թիվը Հայաստանի Հանրապետությունում 2019 թվականի դրությամբ Երևան քաղաքում կազմել է 545, երկրորդ տեղում միջին ձեռնարկությունների թվով Կոտայքի մարզն է, իսկ երրորդ տեղում՝ Լոռու և Սյունիքի մարզերը:



Գծապատկեր 3. Փոքր և միջին ձեռնարկատիրությունները Հայաստանի Հանրապետությունում 2020 թվականին, քանակ[2]

2020 թվականին փոքր ձեռնատիրությունների թիվը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 465-ով, իսկ միջին ձեռնարկատիրությունների համեմատ՝ 48-ով. ընդ որում, Երևան քաղաքում փոքր ձեռնարկությունների թիվը 2020 թվականին 2019 թվականի համեմատությամբ նվազել է 373-ով, իսկ միջին ձեռնարկատիրություններինը՝ 43-ով:

---

[1] *Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, 2020, https://www.armstat.am/am/?nid=82&year=2021:*

[2] *Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, 2021, https://www.armstat.am/am/?nid=82&year=2021:*



Գծապատկեր 4. 2019 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի ու տնտեսվարողների չափերի, դրամ[1]

2019 թվականին միջին ձեռնարկություններում միջին ամսական անվանական աշխատավարձով առաջին հորիզոնականում Սյունիքի մարզն է՝ 339018 դրամ ցուցանիշով, երկրորդ տեղում մայրաքաղաք Երևանն է, իսկ երրորդ տեղում՝ Արագածոտնի մարզը:

Փոքր ձեռնարկություններում 2019 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձով առաջին տեղում Երևան մայրաքաղաքն է, երկրորդ տեղում՝ Սյունիքի մարզը, երրորդ տեղում՝ Վայոց ձորի մարզը:



Գծապատեր 5. 2020 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձն ըստ

[1] *Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, 2020, https://www.armstat.am/am/?nid=82&year=2021:*

Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի ու տնտեսավարողների չափերի, դրամ[1]

2020 թվականին միջին ամսական անվանական աշխատավարձը չնչին գերազանցում էր 2019 թվականի միջին ամսական աշխատավարձին:

Նշենք, որ 2019 թվականի ընթացքում ՀՀ-ում ՓՄՁ-ների կողմից արտադրված ապրանքների ու մատուցված ծառայությունների ծավալը կազմել է 2814528.4 մլն դրամ, որից 33704.5 մլն դրամը բաժին է ընկնում հանքարդյունաբերության, 486153.5 մլն դրամը՝ մշակող արդյունաբերության, 256207.1 մլն դրամը՝ շինարարության, 1423477.9 մլն դրամը՝ մեծածախ և մանրածախ առևտրի, 125244.3 մլն դրամը՝ կացության և հանրային սննդի կազմակերպման, 109997.4 մլն դրամը՝ տեղեկատվության և կապի և այլ որոտներին:

2020 թվականին ՀՀ-ում ՓՄՁ-ների կողմից արտադրված ապրանքների ու մատուցված ծառայությունների ծավալը կազմել է 2723027.4 մլն դրամ, որից 24308.5 մլն դրամը բաժին է ընկնում հանքարդյունաբերության, 498062.7 մլն դրամը՝ մշակող արդյունաբերության, 293370.4 մլն դրամը՝ շինարարության, 1377564.3 մլն դրամը՝ մեծածախ և մանրածախ առևտրի, 66282.1 մլն դրամը՝ կացության և հանրային սննդի կազմակերպման, 138243.9 մլն դրամը՝ տեղեկատվության և կապի և այլ որոտներին:

Հավելենք նաև, որ 2019 թվականի ընթացքում ՀՀ-ում տնտեսական գործունեություն իրականացրած տնտեսվարողների վարձու աշխատողների թվաքանակը փոքր ձեռնարկատիրություններում կազմել է 79807 մարդ, իսկ միջին ձեռնարկատիրություններում՝ 72332 մարդ:

2020 թվականին փոքր ձեռնարկատիրություններում վարձու աշխատողների թվաքանակը 2019 թվականի համեմատությամբ նվազել է 7805-ով, միջին ձեռնարկատիրություններում՝ 2296-ով:

Բացի այդ, 2019 թվականին համախառն ավելացված արժեքը ՀՆԱ-ի նկատմամբ գերփոքր, փոքր և միջին ձեռնարկություններում կազմել է 26.0%, որից 6.6%-ը բաժին է ընկնում արդյունաբերությանը, 2.9%-ը՝ շինարարությանը, 9.0%-ը առևտրին, 7.5%-ը ծառայություններին, իսկ 2020 թվականին համախառն ավելացված արժեքի մասնաբաժինը ՀՆԱ-ում գերփոքր, փոքր և միջին ձեռնարկություններում կազմել է 26.3%, որից 7.5%-ը բաժին է ընկնում արդյունաբերությանը, 3.4%-ը՝ շինարարությանը, 9.0%-ը առևտրին, 6.4%-ը ծառայություններին:

Այսպիսով, վերլուծությունները փաստում են, որ 2019 թվականին ՓՄՁ-ներն իրենց զարգացման մակարդակով և հնարավորություններով հիմնականում գերազանցում են 2020 թվականի տվյալներին:

ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարության մեջ նշվում է, որ ՀՀ-ում ՓՄՁ ոլորտի ուժեղացման, մրցունակության բարձրացման համար կարևորվում են հետևյալ ռազմավարական ուղղությունները՝

- ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացում,
- ՓՄՁ սուբյեկտների կարողությունների և ձեռնարկատիրական մշակույթի զարգացում,
- ՓՄՁ սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովում,
- ՓՄՁ զարգացման համար բարենպաստ ինստիտուցիոնալ և իրավական միջավայրի ապահովում [2]:

ՓՄՁ ֆինանսական ռեսուրսների հասանելիության ապահովման համար պետությունը նպատակ է հետապնդում ավելացնել աջակցության ծրագրերի գործիքակազմը:

ՓՄՁ սուբյեկտների կարողություններն ու ձեռնարկատիրական մշակույթը զարգացնելու նպատակով առաջարկվում է անշարժ գույքի այլընտրանքային գրավի կիրառությանը առնչվող օրենսդրական և ինստիտուցիոնալ դաշտի, գործարարության միջավայրի զարգացում, ինչպես

[1] *Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, 2021, https://www.armstat.am/am/?nid=82&year=2021:*

նաև ֆինանսական գրագիտության բարձրացում:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ Հայաստանի Հանրապետությունում պետության կողմից ճիշտ ռազմավարության որդեգրումը, գործարար միջավայրի զարգացման հնարավորությունները, բարենպաստ միջավայրի ապահովումը կարող են նպաստել ՓՄՁ զարգացմանը:

Հիմք ընդունելով կատարված ուսումնասիրություններն առաջարկում ենք՝

- Աջակցել գործարարության կայացմանը՝ ներառյալ կարողությունների և հմտությունների զարգացումը, գործարար պլանավորման և սկսնակ գործարարներին ֆինանսների հասանելիության ապահովման միջոցառումները: Մշակել առանձին ծրագրեր, որոնք ուղղված կլինեն կանանց և երիտասարդների շրջանում գործարարության զարգացմանը:

Կանանց շրջանում բիզնեսի զարգացման համար ՀՀ-ում գործում են բազմաթիվ կազմակերպություններ, որոնցից մեկը «Գործարար կանանց աջակցման բիզնես-կենտրոն հիմնադրամ» ՀԿ-ն է:

- Ցուցաբերել ուղղակի աջակցություն գործող և սկսնակ ՓՄՁ-ներին՝ շուկաների հասանելիության ապահովման, ինչպես նաև տեղեկատվական օգնության նպատակով: Ձեռնարկություններին տրամադրել աջակցություն ինտերնետային կայքերի, գովազդային վահանակների, ապրանքների փաթեթավորման և բրենդավորման համար:
- Իրականացնել կրթական և խորհրդատվական աջակցություն՝ հատկապես, եթե շուկայական գործող մեխանիզմները չեն ապահովում դրանք կամ կապված են մեծ տրանսակցիոն ծախսերի հետ:
- Նպաստել գործարար ծառայություններ մատուցող ընկերությունների կարողությունների զարգացմանը:

Գրականություն

1. ՀՀ 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշում:
2. ՓՄՁ զարգացման 2020-2024 թթ. ռազմավարություն, ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի N 1443-Լ որոշում:
3. Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, 2020 թ.:
4. Փոքր և միջին ձեռնարկատիրությունը Հայաստանի Հանրապետությունում, 2021 թ.:

ՀՏԴ 662,6/9

Արծրուն Նաջարյան
Հայկ Մարգարյան
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի տնտեսագիտություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողներ
Էլփոստ՝ najaryanarcrun@gmail.com
hayk.margaryan2002@mail.ru

Գիտական ղեկավար՝
տ.գ.թ.,դոցենտ Սամվել Ամիրխանյան
Էլփոստ՝ s.amirkhanyan@gsu.am

ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԻԶՆԵՍՈՒՄ

Բանալի բառեր՝ *ֆոտովոլտային կայան, ռեսուրս, հարթ արևային կուտակիչ, էկոլոգիական աղետ, հանածո վառելիք, այլընտրանքային էներգիա:*

Ներկայումս աշխարհում և Հայաստանում լայն կիրառում է գտնում արևային էներգիայի օգտագործումը, որի շնորհիվ խնայվում են մեծ ռեսուրսներ և կանխվում բազմաթիվ էկոլոգիական աղետներ: ՖՎ կայանների օգտագործումը բիզնեսում խնայում է էներգետիկ ծախսեր, որն անդրադառնում է արտադրանքի ինքնարժեքին: Վերականգնվող էներգիան օրեցօր դառնում է ավելի էժան, ավելի հուսալի և արդյունավետ:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունն ունի մեծ ներուժ՝ կապված իր աշխարհագրական դիրքի, ինչպես նաև զարգացող պետություն լինելու հետ, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է փոխել էներգիայի արտադրության և սպառման եղանակը՝ ապավինելով էկոլոգիապես մաքուր այլընտրանքային էներգիային:

Арцрун Наджарян
Айк Маргарян

ЭФФЕКТИВНОСТЬ ИСПОЛЬЗОВАНИЯ СОЛНЕЧНОЙ ЭНЕРГИИ И ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ В БИЗНЕСЕ

Ключевые слова*: фотоэлектрическая станция, ресурс, плоский солнечный аккумулятор, экологическая катастрофа, ископаемое топливо, альтернативная энергия*

В настоящее время в мире широко применяется использование солнечной энергии, в Армении, благодаря чему экономятся большие ресурсы, предотвращаются многие экологические катастрофы. Использование фотоэлектрических установок в бизнесе экономит затраты на электроэнергию, что влияет на себестоимость продукции. Возобновляемая энергия с каждым днем становится дешевле, надежнее и эффективнее.

Следует отметить, что Республика Армения имеет большой потенциал в силу своего географического положения, а также того, что является развивающейся страной, поэтому необходимо изменить способ производства и потребления энергии, опираясь на экологически чистую альтернативную энергию.

Artsrun Najarian
Hayk Margaryan

SOLAR ENERGY EFFICIENCY AND BUSINESS APPLICATIONS

***Keywords**: photovoltaic power plant, resource, flat solar battery, environmental disaster, fossil fuel, alternative energy*

Currently, the use of solar energy is widely used in the world, in Armenia, due to which large resources are saved, many ecological disasters are prevented. The use of PV plants in business saves energy costs, which affects the cost of production. Renewable energy is becoming cheaper, more reliable and more efficient day by day.

It should be noted that the Republic of Armenia has great potential due to its geographical location, as well as being a developing country, that is why it is necessary to change the way of energy production and consumption, relying on ecologically clean alternative energy.

Արեգակնային էներգիան Արեգակից ճառագայթվող լույսն ու ջերմությունն է, որն օգտագործվում է մի շարք զարգացող տեխնոլոգիաներում, որոնք են՝ արևային ջեռուցումը, լուսագալվանիկան (ֆոտովոլտաիկա), արեգակնային ճարտարապետությունն ու արհեստական ֆոտոսինթեզը:

Արեգակնային էներգիան վերականգնվող էներգիա է: Արեգակնային էներգիայի ծավալն այն դարձնում է էլեկտրաէներգիա ստանալու լավագույն միջոցներից մեկը:

Նշենք, որ Էներգիայի միջազգային գործակալությունը 2011 թվականին փաստել է. «Արեգակնային էներգիան անսպառ, էկոլոգիապես մաքուր և ավելի էժան էներգիայի աղբյուր է, որի օգտագործումը հսկայական օգուտներ կտա և՛ բնակչությանը, և՛ Երկիր մոլորակին: Այն կավելացնի էներգետիկ անվտանգությունը, ավելի սակավ ռեսուրսներ ունեցող երկրները կթուլացնեն իրենց կախումը ավելի շատ ռեսուրսներ ունեցող երկրներից: Արեգակնային էներգիայի օգտագործումը կազդի վառելիքի գնի իջեցման վրա, այն կիջեցնի նաև գլոբալ տաքացմանն ուղղված ռեսուրսների ծավալները»:

Այս առավելություններն ունեն համաշխարհային նշանակություն:

Հարկ է հավելել , որ այս ոլորտի զարգացման համար անհրաժեշտ են մեծ ներդրումներ, բայց այս ամենը արդարացված է, քանի որ այն երկարաժամկետ է և ավելի արդյունավետ:

Արևային էներգետիկան մեծ ներուժ ունի աշխարհում, քանի որ և՛ գազի, և՛ էլեկտրաէներգիայի գներն օրեցօր աճում են:

Ժամանակակից տեխնոլոգիաները, որոնք շատ ավելի անվտանգ և արդյունավետ են, արդիական են դառնում արևային էներգիայի օգտագործմամբ:

Անշուշտ, Հայաստանի Հանրապետությունը չունի բավարար ռեսուրսներ էներգետիկ պաշարներ ստեղծելու համար: Դրանք կազմում են կարիքների բավարարման միայն 35%-ը :

2006 թվականից սկսած Հայաստանում սկսեցին խոսել արևային էներգիայի զարգացման և կիրառման մասին, իսկ 2014 թվականին նախագիծը ստացավ պետական ֆինանսավորում ու հաստատվեց կառավարության կողմից: Կառավարության կարծիքով՝ Հայաստանը ամբողջությամբ կարող է անցնել էլեկտրաէներգիայի այլընտրանքային աղբյուրների օգտագործմանը:

Նշենք, որ ՀԷԿ-երի և ՋԷԿ-երի օգտագործումը հանգեցնում է էկոլոգիական աղետների, ծախսատար է և վտանգավոր:

Ներկայումս ՀՀ-ում օգտագործվում է արևային էներգիայի երկու ուղղություն:

1. Ֆոտոէլեկտրական փոխակերպիչներ: Ֆոտովոլտային փոխակերպիչներում օգտագործվում է ֆոտոէֆեկտի երևույթը, երբ Արեգակի ճառագայթային էներգիան

փոխակերպվում է էլեկտրականի՝ շրջանցելով ջերմային էներգիայի ստացման միջանկյալ փուլը: Ֆոտոէլեկտրական բջիջներում արևի ճառագայթումը վերածվում է հաստատուն հոսանքի, որի մեծությունը կախված է արևի ճառագայթման հոսքից: Մեկ տան տիպային այդպիսի համակարգը սովորաբար ունի 1.5-ից մինչև 3 կՎդ պիկային հզորություն:

Նկար 1. Ֆոտովոլտային կայանը տանիքի վրա

2. Հարթ արևային կուտակիչներ՝ ջրի տաքացման համար: Յուրաքանչյուր ընտանիքի համար, միջին հաշվով, օրական անհրաժեշտ է 120-240 լիտր կենցաղային տաք ջուր: Այդ պահանջարկը կարելի է ապահովել առանց հանածո վառելիքի այրման և ջերմոցային գազերի արտանետման: Տեղադրելով 2-4 մ մակերեսով արևային ջրատաքացուցիչներով արևային համակարգ՝ կարելի է խնայել 50-100 հազ. դրամ՝ բնական գազի դեպքում, և 110-220 հազ. դրամ՝ էլեկտրաէներգիայի դեպքում: Հարթ արևային կուտակիչները կարելի է օգտագործել նաև բիզնեսում:

Նկար 2. Արևային ջրատաքացուցիչ

Նշենք, որ ներկայումս աշխարհում մեծ մասշտաբով զարգանում է ֆոտովոլտային կայանների արտադրությունը: Գծապատկեր 1-ում նշված է ֆոտովոլտային մոդուլների արտադրությունը և արտահանումը Չինաստանի մասշտաբով, և արտադրությունը՝ համաշխարհային մասշտաբով:



Գծապատկեր 1. Ֆոտովոլտային մոդուլների արտադրությունը և արտահանումը Չինաստանի մասշտաբով, և արտադրությունը՝ համաշխարհային մասշտաբով 2011-2018 թվականներին,ԳՎ[1]:

Գծապատկեր 2-ում նշված է Արեգակնային ՖՎ կայանի տեղադրման միջին արժեքը 2010-2018 թվականներին:



Գծապատկեր 2. Արեգակնային ՖՎ կայանի տեղադրման միջին արժեքը 2010- 2018 թվականներին, մեկ կՎտ-ը ԱՄՆ դոլարով[2]:

Ներկայումս ՀՀ-ում տրամադրվում են էլեկտրաարդյունավետության բարձրացման նպատակով երկարաժամկետ վարկեր՝ ցածր փաստացի տոկոսադրույքով: Հայաստանի չգազաֆիկացված համայնքներում՝ 5%-ում տրամադրվում են վարկեր՝ արտոնյալ պայմաններով:

Անշուշտ, Հայաստանի Հանրապետությունն ունի մեծ ներուժ՝ կապված իր աշխարհագրական դիրքի, ինչպես նաև զարգացող պետություն լինելու հետ:

Արևային էներգիան բիզնեսում կարող է օգտագործվել երկու ձևով.

1. որպես բիզնես՝ ֆոտովոլտային կայանների միջոցով,

[1] *Աղբյուրը՝ https://evconsulting.com*
[2] *Աղբյուրը՝ https://evconsulting.com*

2. որպես ձեռնարկության էներգետիկ պահանջները բավարարող միջոց:

Որպես բիզնես՝ ֆոտովոլտային կայան կարող է տեղադրել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ: Ֆիզիկական անձի դեպքում մինչև 150 կՎտ/ժամ արևային կայանի տեղադրումը լիցենզիա չի պահանջում և չի հարկվում՝ ըստ ՀՀ հարկային օրենսգրքի: Իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նույն պայմաններով, այդ սահմանաչափը հասցվել է 500 կՎտ/ժամի:

Ձեռնարկությունների համար էներգաարդյունավետության բարձրացումը ամենաարագ և մատչելի միջոցն է՝ կրճատելու էներգիայի սպառումը և թափոնները էլեկտրաէներգիայի արտադրության համաժամանկյա իջեցման և տնտեսական աճի բարձրացման պաշարի ստացման դեպքում: Այդ իսկ պատճառով արևային էներգիան կարող է դառնալ բիզնեսի գլխավոր էներգիայի աղբյուրը:

Ըստ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության՝ եթե գործարարը ցանկանում է կառուցել արևային էլեկտրակայան, ապա անհրաժեշտ է.

1. ընտրել տեղանքը (ընտրությունը հնարավոր է կատարել՝ օգտվելով արևային ուղեցուցային քարտեզից),

2. ձեռք բերել հողօգտագործման իրավունք և ըստ անհրաժեշտության համապատասխանեցնել հողի նպատակային նշանակությունը՝ փոխելով այն «էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների» հողերի,

3. կազմել ներդրումային (գործարար) ծրագիր,

4. էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար այցելել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի էլ.կայք՝ www.psrc.am «տեղեկություն ներդրողին» բաժին,

5. դիմել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու համար,

6. մասնագիտական անվճար խորհրդատվության համար դիմել Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամին՝ www.r2e2.am և/կամ Գերմանա-հայկական հիմնադրամին՝ www.gaf.am,

7. կատարելով վերոնշյալ լիցենզիայի պայմանները՝ կառուցել արևային էլեկտրակայան:

Գրականություն

1.Էներգետիկայի հայկական գործակալություն, https://energyagency.am/
2.Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, http://www.minenergy.am/
3. Ecostep walking green, https://ecostep.am/
4. https://www.pveducation.org/ru/
5. https://evconsulting.com/hy/

ՀՏԴ 330,3

Արեգա Հովհաննիսյան
ԳՊՀ, տնտեսագիտական ֆակուլտետ,
ֆինանսներ(ըստ ոլորտի), 2-րդ կուրս
Էլփոստ՝ hovhannisyanarega907@mail.ru

Գիտական ղեկավար՝
տ.գ. թ.,դոցենտ Գայանե Խաչատրյան
Էլփոստ՝ khachatryangayane.gkh@mail.ru

ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

Բանալի բառեր՝ *արտահանում, տնտեսական աճ, արտաքին շուկա, ՀՆԱ, միջազգային կառույցներ, տնտեսական կայունություն, արտարժույթային եկամուտ:*

Այսօր աշխարհի շատ երկրներ վարում են արտահանմանը միտված քաղաքականություն՝ տնտեսական մեծ աճի նպատակ հետապնդելով: Ուսումնասիրության հիմնական նպատակն է բացահայտել արտահանման ազդեցության առանձնահատկությունները և առաջարկել ուղիներ, ուսումնասիրել պետության կողմից իրականացվելիք ռազմավարական քայլեր, որոնք կնպաստեն արտահանումը խթանող քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:Հոդվածում առաջադրված կարևորագույն խնդիրն է հանդիսանում արտահանումը խթանող քաղաքականության վեր հանումը ՀՀ-ում:

Арега Ованнисян

ЭКСПОРТНАЯ ПОЛИТИКА И НОВЫЕ ПУТИ СТИМУЛИРОВАНИЯ ЭКСПОРТА РА

Ключевые слова: *экспорт, экономический рост, внешний рынок, ВВП, международные структуры, экономическая стабильность, валютная выручка.*

В настоящее время многие страны мира проводят политику, которая направлена на увеличение экспорта, с целью добиться большего экономического роста. Основная цель исследования-выявить особенности влияния экспорта и предложить пути, изучить осуществляемые государством стратегические шаги, которые будут способствовать повышению эффективности экспортно-стимулирующей политики, выявление путей, стимулирующих экспортную политику.

Arega Hovhannisyan

POLICY STIMULATING EXPORTS TO ARMENIA AND INDENTIFICATION OF WAYS

Keywords: *export, economic growth, foreign market, GDP, international structures, economic stability, foreign exchange earnings.*

Today, many countries of the world are pursuing export-oriented policies with the goal of achieving great economic growth. The main purpose of the study is to identify the peculiarities of the impact of exports and suggest ways to study the strategic steps carried out by the state that will contribute to improving the effectiveness of export-stimulating policy. The most important task set in the article is to remove the export-stimulating policy in the Republic of Armenia.

Արդի պայմաններում ապրանքների և ծառայությունների արտահանման որակական ու ծավալային աճը յուրաքանչյուր պետության տնտեսական և սոցիալական կայունության համար ունի անվիճելի կարևորություն: Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում է փոքր տնտեսություն ունեցող պետություն՝ արտահանման աճի հետ ապահովելով տնտեսական արագընթաց աճ՝ ի տարբերություն ներքին սահմանափակ պահանջարկի բավարարման հետևանքով ունեցած տնտեսական աճի: Վերջինս հնարավորություն է տալիս բաց և փոքր տնտեսությանը մտնել արտաքին շուկա, այն ինքնըստինքյան դառնում է արտարժույթային եկամտի աղբյուր, որն էլ իր հերթին կարևորվում է այն հանգամանքով, որ ապահովում է երկրում ֆինանսական կայունության, արտաքին պարտքի մարման, ինչպես նաև ներմուծվող ապրանքների վճարման գործընթացը:

Թեմայի արդիականությունը կայանում է նաև նրանում, որ երկրները առաջնահերթ նպատակ են հետապնդում ինտեգրվելու համաշխարհային տնտեսությանը և ունենալու իրենց ուրույն տեղը միջազգային տնտեսական գործընթացներում: Այս ամենից անմասն չի մնում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Անհրաժեշտ է նկատել, որ զուտ արտահանման մեծությունը (արտահանման և ներմուծման տարբերությունը) ունի ուղղակի ազդեցություն ՀՆԱ-ի վրա, հետևաբար, արտահանման ծավալների աճն արդեն դրական երևույթ է տնտեսության համար: Մյուս կողմից այն տնտեսությունները, որոնք բնութագրվում են ՀՆԱ-ի նկատմամբ արտահանման մեծ ծավալներով, զգալի կախվածության մեջ են գտնվում արտաքին շուկաներից, ուստի արտաքին շուկաներում տեղի ունեցող տատանումները կարող են նշանակալի ազդեցություն ունենալ այդ տնտեսությունների վրա[1]:

Վերջին մի քանի տարիների կտրվածքով արտահանումների ծավալը ՀՆԱ ցուցանիշի ձևավորման ծախսային բաղադրիչների կազմում շարունակաբար դրսևորել է աճի միտում, մասնավորապես, 2016թ.՝ 33,1 տոկոս, 2017թ.՝ 37,3 տոկոս, 2018թ.՝ 37,5 տոկոս, 2019թ.՝ 38 տոկոս[2]: Իսկ 2020 թվականից ի վեր որոշակի շեղումներ են գրանցվել COVID-19 համավարակի՝ մուտքի-ելքի սահմանափակումների հետ կապված:



Գծապատկեր 1. Արտաքին և փոխադարձ առևտրի ամփոփ ցուցանիշներ

[1] Տե՛ս United nations development programme, "Towards human resilience: Sustaining MDG Progress in an Age of Economic Uncertainty", 2011, էջ 25:

[2] Տե՛ս ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր, էջ 36:

Հայաստանի Հանրապետությունում 2020 և 2021 թվականներին[1]

Գծապատկեր 1-ի ամփոփ ցուցանիշներն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում, որ և՛ արտահանումը, և՛ ներմուծումը ՀՀ-ում 2021 թվականի դեկտեմբերին 2020 թվականի դեկտեմբեր ամսվա նկատմամբ աճ են գրանցել. արտահանման դեպքում՝ 114,3%, ներմուծման դեպքում՝ 127,7%, իսկ ապրանքաշրջանառությունը ՀՀ-ում 2021 թվականի դեկտեմբերին 2021 թվականի նոյեմբերի նկատմամբ կազմել է 103,7%:

Արտաքին տնտեսական հարաբերությունների կարգավորման և արտահանման խթանման քաղաքականության վարումը յուրաքանչյուր պետության ներկա և հեռանկարային ծրագրերում բավականին մեծ տեսակարար կշիռ ունի, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունում: Նշված սկզբունքն իրագործվում է և՛ գործադիր, և՛ օրենսդիր մարմինների համագործակցության արդյունքում: ՀՀ կառավարության «2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր»-ի համաձայն՝ ձեռնարկվել են քայլեր ինչպես տեղական, այնպես էլ միջազգային շուկաներում տարատեսակ տեղական արտադրանքների ներկայացվածության, արտահանման շուկաների դիվերսիֆիկացման և արտահանման խթանման ապահովման ու զարգացման ուղղությամբ[2]: Վերջինս կարևորում է նախ և առաջ ավանդական գործընկերների հետ հարաբերությունների բարյացակամության կայունություն և ամրապնդում, նոր համագործակցության ընդլայնում և խորացում տարբեր հնարավոր և ելքային ուղղություններով: Առանձնակի կարևորություն է տալիս

- տեղական շուկայի ռեսուրսների օգտագործման տեսանկյունից տեղական և ԵԱՏՄ անդամ արդյունաբերական ընկերությունների միջև կոոպերացիոն կապերի զարգացմանը և Հայաստանում կլաստերների ձևավորմանը,
- Եվրասիական տնտեսական միության ինստիտուցիոնալ զարգացմանը,
- ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) առևտրի և առևտրին առնչվող հարցերի ուղղությամբ ամրագրված դրույթների և պայմանավորվածությունների արդյունավետ իրականացմանը,
- ԵՄ-ի Արևելյան գործընկերության շրջանակներում երկկողմ և բազմակողմ ձևաչափերով համագործակցությանը, ինչպես նաև Արևելյան գործընկերության ներքո Հայաստանի համար առաջնահերթ նախաձեռնությունների և ընթացիկ ծրագրերի արդյունքների թիրախային ներդրմանը Հայաստանի Հանրապետության տնտեսությունում:

Նախատեսվում է նաև համագործակցության ընդլայնումը և խորացումն Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) հետ՝ առևտրի դյուրացման, արտաքին շուկաների ընդլայնման և շուկաների մատչելիության մեծացման նպատակով[3]:

Արտահանման խրախուսմանն ուղղված եղանակներն իրացվում են տարատեսակ մեթոդների կիրառման արդյունքում՝ ազգային արժույթի արժեզրկում, հարկային և վարկային արտոնություններ, սուբսիդիաներ, արտահանման ապահովագրություն (ՀՀ-ում 2013 թվականի հոկտեմբերի 23-ին արտահանման խթանմանն ուղղված քաղաքականության շրջանակներում ՀՀ Կառավարության որոշմամբ ներդրվել է «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ԱՓԲԸ-ն: Վերջինս տրամադրում է ապահովագրություն ՀՀ ռեզիդենտ արտահանող ընկերությունների կողմից մատակարարված ապրանքի դիմաց օտարերկրյա գնորդի կողմից չվճարման հետևանքով կրած ֆինանսական վնասներից: Հավելենք նաև, որ ընկերության միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետությունն է[4]), արտաքին շուկաների մասին տեղեկատվության տրամադրում, օտարերկրյա ներդրումների ներգրավում և այլն:

Այս մոտեցումների շրջանակներում կարող ենք անդրադարձ կատարել և ձեռքբերում համարել

---

[1] *Տե՛ս https://www.armstat.am/file/article/sv_12_21a_411.pdf:*

[2] *Տե՛ս ՀՀ կառավարության պաշտոնական կայքէջ՝ www.gov.am:*

[3] *Տե՛ս https://www.gov.am/files/docs/4586.pdf, էջ 27-28:*

[4] *Տե՛ս Գլխավոր - Export Insurance Agency of Armenia/Экспортное страховое агенство Армении/Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն (eia.am)- պաշտոնական կայքէջ:*

այն հանգամանքը, որ 2014 թվականին ներդրվեց հայկական OVOP հայեցակարգը, որում ներգրավված է ավելի քան 24 վերահսկող, հիմնականում՝ չրերի, պանրի, գինիների արտադրության ոլորտներում գործունեություն ծավալող կազմակերպություն[1]:«Մեկ համայնք, մեկ արտադրանք» հայեցակարգը ծառայում է իր նպատակին՝ կարևորելով և՛ աշխարհագրական դիրքը, և՛ արտադրանքի մասնագիտացումը, ինչպես նաև վերջիններիս միասնությամբ արտադրության ընդլայնումը, որն էլ կտանի արդեն իսկ բավականին մեծ ծավալների արտահանման:

Արտահանման պետական կարգավորման և զարգացման մեխանիզմների կիրառման համատեքստում կարևորվում է նաև միջազգային հարթակներում գործունեության ուսումնասիրումը, այդ թվում՝ անդամակցությունը համաշխարհային ոլորտային կառույցներին և կնքված համաձայնագրերը ՀՀ ու տարբեր երկրների միջև:

Միջազգային կառույցներում ՀՀ ներկայացվածության և գործունեության ծավալման շրջանակներում առաջին հերթին դիտարկվում է անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը: ՀՀ-ն 2015 թվականի հունվարի 2-ից պաշտոնապես հանդիսանում է ԵԱՏՄ անդամ: Եվրասիական շուկա Հայաստանից հիմնականում արտահանվում են ծխախոտ, խմիչքներ, կոշկեղեն, տեքստիլ, միրգ, բանջարեղեն, պահածոյացված բանջարեղեն, թարմ ձուկ և խեցգետին: Որպես դրական դիտարկենք այն միտումը, որ դեպի ԵԱՏՄ երկրներ արտահանվում են պատրաստի ապրանքներ, այլ ոչ թե հումք:

Հզոր կառույց է հանդիսանում նաև Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), որին ՀՀ-ն պաշտոնապես անդամակցում է 2003 թվականի փետրվարի 5-ից ի վեր՝ դառնալով ԱՀԿ 145-րդ անդամը[2]:

Նկատենք, որ Հայաստանի Հանրապետությունը նաև անմասն չի մնում արտահանման արտոնությունների համակարգից, որը տրամադրվել է զարգացող երկրների կողմից: Ահա այդպիսի արտոնյալ առևտրային ռեժիմ էր GSP+, որից, ցավոք, 2022 թվականի հունվարի 1-ից սկսած չենք կարող օգտվել՝ զրկվելով բավականին մեծ հնարավորություններից (ցածր ու ցածր-միջին եկամտով երկրներին թույլատրվում է ավելի քան 6200 ապրանքատեսակ արտահանել Եվրամիության շուկա՝ զրոյական կամ նվազեցված մաքսատուրքերով)[3]:

Վերոգրյալ փաստերի հիման վրա կարևոր է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության արտահանման աշխարհագրական ուղղությունները:



[1] *Տե՛ս Հայաստանում «Մեկ գյուղ, մեկ արտադրանք» գործողությունների ժողովածու., Երևան, էջ 15: https://openjicareport.jica.go.jp/pdf/12249801_03.pdf:*

[2] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ՝ https://mineconomy.am/page/90:*

[3] *Տե՛ս https://armenpress.am/arm/news/1067958.html:*

Գծապատկեր 2. ՀՀ արտահանման կառուցվածքը 2020 և 2021 թվականներին՝ ըստ երկրների խմբային դասակարգման[1]

Գծապատկեր 2-ից ակնհայտ է, որ 2020 և 2021 թվականներին ՀՀ արտահանումը ԱՊՀ և ԵՄ ունի կայուն մակարդակ, տեղի է ունեցել ոչ ակնառու փոփոխություն՝ 2021 թվականին 2020 թվականի նկատմամբ ԱՊՀ արտահանումը ունեցել է 1 տոկոսային նիշով աճ, իսկ ԵՄ-ն՝ 1 տոկոսային նիշով նվազում:2021 թվականին դեպի ԱՊՀ երկրներ արտահանման փոփոխությունը կապված է ԵԱՏՄ-ում Ռուսաստանի Դաշնության ավելի քան 1 տոկոսային նիշի ավելացման, Բելառուսի 0,1 տոկոսայի նիշի նվազման հետ:Հավելենք նաև, որ այլ երկրների արտահանման տեսակարար կշիռը նվազել է ավելի քան 2 տոկոսային նիշով, որը հետևանքն է դեպի ԱՄԷ, Շվեյցարիա, Բրազիլիա և Իրաք ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների նվազման:

Վերը շարադրվածից ուշագրավ է անդրադարձ կատարել ՀՀ ապրանքատեսակների արտահանման տեսակարար կշիռների փոփոխությանը, ուսումնասիրել առավելագույն և նվազագույն ծավալներով արտահանվող ապրանքատեսակները:

Աղյուսակ 1.

ՀՀ արտահանման ծավալների խոշոր փոփոխությունները 2021 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին 2020 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ՝ ըստ ապրանքային բաժինների[2]

Ապրանքային բաժին	*Աճի տեմպ, %*	*Ապրանքային բաժին*	*Աճի տեմպ, %*
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	90,2	Փայտ և փայտյա իրեր	184,1
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	70,4	Արվեստի ստեղծագործություններ	170,3
Սարքեր և ապարատներ	55,6	Կոշկեղեն, գլխարկներ, հովանոցներ	155,9

Ընդհանուր առմամբ, փայտ և փայտյա իրեր արտահանումը գրանցել է թռիչքային աճ՝ ի հակադրություն 2019 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին 2018 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ գրանցված բացասական ցուցանիշի՝ 41,2%: Նշված ցուցանիշի ակնառու փոփոխությունը վկայում է ՀՀ-ում այս ոլորտի մեծ առաջընթաց:

Իսկ ամենամեծ բացասական փոփոխությունը գրանցված է *սարքեր և ապարատներ* ապրանքատեսակների բաժնում՝ դրամային արտահայտությունը 27 388,9 հազ. դոլար է:

Բացի վերը նշված ՀՀ վիճակագրության ցուցանիշների դասակարգումից, յուրաքանչյուր տարի միջազգային վիճակագրությունը ևս հրապարակում է արտահանվող 10 մեծածավալ ապրանքատեսակները՝ ըստ տարբեր երկրների կտրվածքի և համապատասխան ծավալային ցուցանիշների՝

- հանքաքար, խարամ, մոխիր՝ 746,8 մլն ԱՄՆ դոլար (ընդհանուր արտահանման 29,6%-ը),
- ակնեղեն, թանկարժեք մետաղներ՝ $365,5 մլն (14,5%),
- ծխախոտ, արտադրված փոխարինիչներ՝ $254,6 մլն (10,1%),
- ըմպելիքներ, ոգելից խմիչքներ, քացախ՝ $239,7 մլն (9,5%),
- ալյումին՝ $104,7 մլն (4,2%),
- երկաթ, պողպատ՝ $104,6 մլն (4,2%),
- հագուստ, աքսեսուարներ (ոչ տրիկոտաժե կամ հյուսված)՝ 93,6 միլիոն դոլար (3,7%),
- հանքային վառելանյութեր՝ ներառյալ նավթը՝ 74,3 մլն դոլար (2,9%),

[1] *Տե՛ս https://www.armstat.am/file/article/sv_12_21a_411.pdf:*

[2] *Տե՛ս ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբեր, արտաքին հատված:*

- մրգեր, ընկույզներ՝ $57,3 մլն (2,3%),
- ձուկ՝ 49,7 միլիոն դոլար (2%)[1]:

Ուշադրություն դարձնենք նաև այն հրատապ ու այժմեական խնդրին, թե ինչպիսի ազդեցություն կունենան Ռուսաստանի դեմ պատժամիջոցները Հայաստանի վրա:

Վերլուծություններն օգնում են արտահանմանը խթանող այնպիսի քայլերի ծրագիր կազմել և ձեռնարկել, ինչպիսիք են հայկական արտադրանքի բրենդների գովազդների, միջազգային ասպարեզում ցուցահանդեսների կազմակերպում, սեփականատերերի կողմից անմշակ հողերի հանձնում վարձակալության՝ պոտենցիալ աշխատողների կողմից և՛ հողերի պարարտացման, և՛ գործազրկության նվազման, և՛ նոր արդյունքի ստեղծման նպատակով, ու վերջինիս արտահանում այլ երկրներ:

Հարկ է հավելել, որ երկրում ուսման մակարդակի բարելավումը հանգեցնում է տնտեսության թռիչքային առաջընթացի, ուստի նպատակային է համարվում ամուր հիմքերի վրա պահել և կայունացնել բուհական կրթությունը, որն էլ իր հերթին կնպաստի մասնագետների գործնական հմտությունների բարելավմանը, կիրառմանը տնտեսության տարբեր ոլորտներում: Հայաստանի Հանրապետությունում արտահանումը խթանելու նպատակով առաջարկվում է կիրառել նաև շուկայագիտության ոլորտի ժամանակակից մեթոդներն ու նորամուծությունները: Վերջինս հնարավոր է իրականացնել տարբեր վերապատրաստումների, գիտական հետազոտությունների իրականացման արդյունքում: Արդյունքում մասնագետները կկիսվեն իրենց փորձով, կստեղծվեն համագործակցային նոր կապեր, և կմշակվի արտահանման զարգացման հեռանկարային տեսլական:

Այսպիսով՝ կարող ենք նշել, որ արտահանման խթանմանը նպաստում են արտաքին տնտեսական հարաբերությունները՝ տնտեսական տարաբնույթ գործարքների միջոցով կարգավորումը և երկրների միջև փոխգործակցությունը: Հայաստանի Հանրապետությունում արտահանումը խթանող քաղաքականությունը տնտեսական աճի առանցքային նախապայմաններից մեկն է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջազգային շուկա ներթափանցելիս չառաջանա առևտրային հաշվեկշռի պակասորդ: Ի վերջո, անհրաժեշտություն է առաջանում պետություն-մասնավոր համագործակցության ներքո ծավալել համակարգային գործունեություն, որտեղ առկա են արտահանման զարգացմանն նպաստող մի շարք ուղիներ, որոնք կարող են նպաստել ոլորտի զարգացմանը:

Գրականություն

1. United nations development programme, “Towards human resilience: Sustaining MDG Progress in an Age of Economic Uncertainty”, 2011:
2. ՀՀ 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր:
3. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ www.armstat.am:
4. ՀՀ կառավարության պաշտոնական կայքէջ www.gov.am :
5. Գլխավոր - Export Insurance Agency of Armenia/Экспортное страховое агенство Армении/Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն (eia.am)- պաշտոնական կայքէջ:
6. Հայաստանում «Մեկ գյուղ, մեկ արտադրանք» գործողությունների ժողովածու., Երևան: https://openjicareport.jica.go.jp/pdf/12249801_03.pdf:
7. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջ՝ https://mineconomy.am/page/90:
8. armenpress.am:
9. worldstopexports.com:

[1] *Տե՛ս https://www.worldstopexports.com/armenias-top-10-exports/ , 2020թ.:*

ՀՏԴ 622:533.3/.9

Լիլիա Բադիկյան
ԳՊՀ, Տնտեսագիտական ֆակուլտետ
«Տնտեսագիտություն» բաժին, 2-րդ կուրս
Էլ. փոստ՝ liliabadikyan@gmail.com

Գիտական ղեկավար՝
տ. գ. թ., դոցենտ Սամվել Ամիրխանյան
Էլ. փոստ՝ s.amirkhanyan@gsu.am

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Բանալի բառեր՝ *հանքարդյունաբերություն, տնտեսության զարգացում, պղնձի արտահանում, բնապահպանական հիմնախնդիրներ, պոչամբար, հանքահարստացման թափոններ, հետախուզական աշխատանքներ:*

Հանքարդյունաբերությունը Հայաստանի տնտեսության կարևոր շարժիչ ուժերից է հանդիսանում: Չնայած տնտեսական օգուտներին՝ հանքարդյունաբերությունը կարող է հանգեցնել նաև երկարաժամկետ բացասական բնապահպանական, սոցիալական ու տնտեսական հետևանքների: Դա պահանջում է լիարժեք պատկերացում կազմել շրջակա միջավայրի և հասարակության վրա հանքարդյունաբերության զարգացման ապագա ազդեցության մասին: Ոլորտի կառավարման համակարգը պետք է որդեգրի ավելի պատասխանատու վարքագիծ, որտեղ առաջնային կհամարվեն հասարակության կյանքի որակի ապահովումը և՛ ներկայում, և՛ ապագայում:

Лилия Бадикян

ПРОБЛЕМЫ ГОРНОДОБЫВАЮЩЕГО СЕКТОРА И ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ В АРМЕНИИ

Ключевые слова: *Горное дело, экономическое развитие, экспорт меди, экологические проблемы, хвостохранилище, минеральные отходы, геологоразведочные работы.*

Горнодобывающая отрасль является одним из потенциальных драйверов экономики Армении. Несмотря на экономические выгоды, горнодобывающая промышленность также может привести к долгосрочным негативным экологическим, социальным и экономическим последствиям. Это требует полного понимания будущего воздействия горнодобывающей отрасли на окружающую среду и общество. Система управления сектором должна быть более ответственной, при котором качество жизни общества является приоритетом как сейчас, так и в будущем.

Lilia Badikyan

PROBLEMS OF THE MINING SECTOR AND DEVELOPMENT TENDENCIES IN ARMENIA

Keywords*: Mining, economic development, export of copper, environmental issues, tailings, mineral waste, exploration work.*

The mining industry is one of the potential drivers of the Armenian economy. Despite the economic

benefits, the mining industry can also lead to long-term negative environmental, social and economic consequences. It requires a full understanding of the future impact of the mining environment and society. The management system of the sector should adopt a more responsible behavior, where the quality of life of the society will be given priority both now and in the future.

Տնտեսության կարևոր շարժիչ ուժերից է հանքարդյունաբերությունը, որը միաժամանակ երկարաժամկետ բացասական ազդեցություն ունի նաև շրջակա միջավայրի վրա: Հենց այսպիսի առանձնահատկություններով է պայմանավորված հանրային մեծ ուշադրությունը և վերահսկողությունը հանքարդյունաբերական գործունեության նկատմամբ:

Չնայած հանքարդյունաբերությունը ՀՀ տնտեսության կարևոր ճյուղերից է, սակայն այն զարգանում է առանց պաշարների կայուն օգտագործման երկարաժամկետ ծրագրի, հարկման, շրջակա միջավայրի պահպանության պատշաճ օրենսդրության և բնապահպանական ու սոցիալական հետևանքների գնահատման [1] :

Հանքարդյունաբերության դերը Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման մեջ բավականին հակասական է: Որոշ հետազոտողներ պնդում են, որ, հանքային ռեսուրսների չվերականգնվող լինելու պատճառով, անհրաժեշտ է հանքերը պահպանել, որպեսզի սերունդները հնարավորություն ունենան օգտվելու հանքահումքային, իսկ հանքային ռեսուրսներից ստացված պատրաստի արտադրանքը երկրորդային վերամշակման ենթարկել: Մյուսները պնդում են, որ հանքարդյունաբերական գործունեությունը պետք է համապատասխանեցվի արդի գիտական նվաճումներին, միջազգային լավագույն փորձին ու ստանդարտներին:

Հանքարդյունաբերությունը էական դեր է խաղում Հայաստանի տնտեսության զարգացման գործում: Հանքարդյունաբերության ոլորտի բաժինը 2021թ. ՀՆԱ-ում կազմել է շուրջ 5%:

Հանքարդյունաբերության ոլորտը հանդես է գալիս որպես քաղաքային կենտրոններից դուրս համեմատաբար բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծման, արտահանման եկամուտների, օտարերկրյա ուղղակի ներդրումների աղբյուր:

Արտաքին առևտրում ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի դերը հատկանշվում է արտահանման ցուցանիշների տարեցտարի մեծացմամբ: Հանքահումքային մթերքների արտահանման կառուցվածքում շոշափելի մասնաբաժին ունի պղնձի, ցինկի, մոլիբդենի և թանկարժեք մետաղների հանքաքարերի արտահանումը:

Կարող ենք արձանագրել, որ արտահանման մեջ առաջատարը տարիներ շարունակ եղել է պղինձը՝ ամենամեծ մասնաբաժինն ունենալով: Ստորև ներկայացված են Հայաստանից պղնձի խտանյութի արտահանման ծավալները:



Գծապատկեր 2. Պղնձի խտանյութի արտահանումը Հայաստանից, 2015-2020 թթ, հզ, տոննա[2]

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, պղնձի արտահանումը Հայաստանում տարեցտարի աճող դինամիկա է գրանցում: Վերջին 5 տարիների կտրվածքով՝ 2019 թվականին գրանցվել է պղնձի արտահանման ամենաբարձր ցուցանիշը: Առաջիկայում պղնձի արտահանումը կրկին կգրանցի աճող դինամիկա՝ հաշվի առնելով թե՛ գործող հանքավայրերի ակտիվ շահագործումը, թե՛ միջազգային շուկայում պղնձի չնվազող պահանջարկը: Հայկական պղնձի ամենամեծ ներմուծողը Չինաստանն է:

Չնայած տնտեսական օգուտներին՝ հանքարդյունաբերությունը կարող է հանգեցնել նաև երկարաժամկետ բացասական բնապահպանական հետևանքների: Ուշադրությունը նման խնդիրների նկատմամբ աստիճանաբար լրջանում է, և անշուշտ,հանքարդյունահանումը պետք է կատարվի էկոլոգիապես և սոցիալապես պատասխանատու եղանակով: Դա պահանջում է լիարժեք պատկերացում կազմել շրջակա միջավայրի և հասարակության վրա հանքարդյունաբերության զարգացման ապագա ազդեցության մասին: Անդրադարձ կատարենք մի քանի կարևոր բնապահպանական հիմնախնդիրներին:

Բնապահպանական լուրջ հիմնախնդիր է մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների աղտոտումը, քանի որ տեխնոլոգիական գործընթացի վերջում բաց թողնված կեղտաջրերը աղտոտում են մոտակա ջրային աղբյուրները և սպառնում հանքավայրի շրջակայքում քաղցրահամ ջրի պաշարներին:

Հանքարդյունաբերությունը կարող է վնաս պատճառել նաև հողային ռեսուրսների մի հատվածին, որը շատ ավելի մեծ է, քան բուն հանքավայրը: Այս վնասի հետևանքները կարող են շարունակվել հանքի փակվելուց շատ երկար տարիներ, որի հետևանքով հողային ռեսուրսները տնտեսական այլ գործունեության համար դառնում են ոչ պիտանի, այն էլ Հայաստանի պես սակավահող երկրում:

Բաց եղանակով հանքերի շահագործումը խիստ բացասաբար է ազդում ոչ միայն կենսաբազմազանության, այլև բնակչության բարեկեցության և առողջության վրա: Բնակչության մոտ առաջացնում է հիվանդությունների սրացում, հողատարածքների մակերեսի փոքրացում, գյուղական արտադրանքի չափերի նվազում, եկամուտների անկում:

Բաց եղանակով հանքերի շահագործումն առավել մտահոգիչ է անտառային տարածքներում, որի ցավալի օրինակը Թեղուտում պղնձամոլիբդենային հանքի շահագործումն էր: Մինչ հանքի շահագործումը Թեղուտի մերձակա անտառը Հայաստանում հարուստ կենսաբազմազանությամբ ամենալավ պահպանվածն էր համարվում:

Հայաստանում պոչամբարների շահագործման և նախագծման հետ կապված մի շարք խնդիրներ կան: Հիմնականն այն է, որ պոչամբարները կառուցված են վերընթաց բարձրացման նախագծով, այն էլ այնպիսի սեյսմավտանգ երկրում, ինչպիսին Հայաստանն է: Իսկ միջազգային փորձն անընդունելի է համարում սեյսմավտանգ անկայուն տարածքում նման ձևով պոչամբարների կառուցումը, քանի որ փլուզման վտանգը շատ մեծ է: Վառ օրինակ է կրկին Թեղուտի հանքի պոչամբարը: Այն կառուցված է 8 բալանոց սեյսմիկ գոտում՝ վերընթաց բարձրացման նախագծով: Չնայած հատակում երեսպատված է, սակայն աղտոտող ջրերը կարող են արտահոսել վերին՝ չերեսպատված մասից և խառնվել ստորերկրյա ջրերին [1]:

Աշխարհում թափոնների ամենամեծ ծավալն արտադրվում է հանքարդյունաբերության ոլորտում:

Ստորև ներկայացված է Հայաստանի հանքահարստացման թափոնների ծավալը:



Գծապատկեր 1. Հանքահարստացման թափոնների ծավալը 2015-2020թթ, մլն մ³ [4]

В течение определенного периода времени правительство Армении не прислушивалось к технологическому и стартап-сообществу страны, а законы не обновлялись с учетом новых бизнес-структур и условий труда. Тем не менее, это, наконец, произошел в 2015 году.

Правительство наконец-то поняло, что поддержка технологического сектора, на который приходится пять процентов всего ВВП страны, может быть чрезвычайно выгодной для страны, в которой нет портов и две из четырех границ закрыты для торговли. В немалой степени это произошло благодаря постоянным лоббистским усилиям Союза предприятий информационных технологий

(UITE), тесно сотрудничавшего с законодателями. Правительство, UITE и международные партнеры определили четыре основные цели принятия этого закона:

- повышение конкурентоспособности в отрасли;
- расширение возможностей и обучение высокооплачиваемой квалифицированной рабочей силы;
- предоставление капитала для исследований и разработок;
- привлечение прямых иностранных инвестиций.

Новое законодательство распространяется на стартапы, технопарки, технологические центры, инкубаторы и акселераторы, а также образовательные и исследовательские организации. Попадание в одну из этих категорий не дает автоматически права на получение налоговых льгот, поскольку правительство требует подачи заявления на получение дополнительной специальной лицензии. Компании должны создаваться и действовать в соответствии с законом о государственной поддержке сферы информационных технологий (ИТ), а их деятельность ограничена третьей статьей того же закона.

Таким образом, чтобы иметь право на участие в этой новой программе, компания должна быть так или иначе вовлечена в технологическую сферу. Это могут быть софтверные и интернет-компании; консультационные услуги, вычислительные системы, интеллектуальный анализ данных или услуги хостинга; сетевое администрирование или интернет-СМИ; и те, кто работает в сфере образования и исследований в области ИТ. Кроме того, компания должна быть независимой. Это также означает, что компании, являющиеся филиалами иностранных организаций, также не соответствуют требованиям.

Компании с более чем тридцатью сотрудниками исключены. Компании, имеющие право на эту новую налоговую льготу, не могут продавать или иным образом передавать результаты своей деятельности по сертификату другим резидентам или хозяйствующим субъектам Республики Армения, работающим в сфере информационных технологий, кроме как в образовательных целях. Новый закон требует, чтобы правомочные компании предоставляли ежеквартальные отчеты, подтверждающие, что стартап продолжает соответствовать требованиям.

Все, что вам нужно, это следующее: документ заявки; доказательство того, что ваш стартап является недавно созданным юридическим лицом (ваша компания должна быть зарегистрирована не ранее, чем за 3 месяца до принятия закона, чтобы соответствовать требованиям); письменное описание главных директоров; письменное заявление, содержащее имена, должности и контактную информацию ваших сотрудников; список акционеров; и доказательство того, что компания не является местным филиалом иностранной компании.

В апреле 2019 года парламент Армении принял пакет изменений и дополнений в закон «О государственной помощи сфере информационных технологий», которые продлевают срок действия вышеуказанных налоговых льгот. В результате срок подачи заявления и получения справки о налоговых льготах продлен до 31 декабря 2022 года. [3] [4]

Закон РА «О патентах»

С 1 июля 2021 года вступает в силу Закон РА «О патентах», регулирующий имущественные и личные отношения по созданию изобретений, их правовой охране и использованию.

Еще в ноябре 2018 года Армянская коллегия адвокатов США сформировала комитет по интеллектуальной собственности и информационным технологиям, целью которого является содействие процессу разработки предложений и решений по устранению правовых недостатков в секторе. В состав рабочей группы вошли лучшие специалисты-практики и юристы Армении и Диаспоры, представители государственного и частного секторов, высших учебных заведений, депутаты НС. В результате совместной работы, проведенной рабочей группой по внесению изменений и предложений в Закон РА «О патентах», в Армении появилась возможность патентовать программы для ЭВМ.

С принятием нового закона Армения становится второй страной в мире после США, запатентовавшей компьютерное программное обеспечение. Надежная защита программного

обеспечения создаст в Армении благоприятные условия для стартапов и новаторов для создания интеллектуальных ценностей и их патентования в Армении. Внесенные изменения, а также скорость и простота оформления патентного процесса в Армении создадут предпосылки для более благоприятного позиционирования Армении в регионе и инновационного и устойчивого технологического развития страны, а также для содействия экономическому росту. [5]

Налоговые льготы для IT-стартапов

С 2015 года в законодательстве Армении предусмотрен специальный правовой режим налоговых льгот для армянских ИТ (и некоторых инженерных) стартапов. Согласно «Закону Армении о государственной поддержке ИТ-сектора» армянские компании (или индивидуальные предприниматели) в течение 3 месяцев после регистрации могут обратиться в специальную аттестационную комиссию для получения сертификата и пользоваться налоговыми льготами в течение следующих 5 лет.

Налоговые льготы подразумевают:

· 0% корпоративный подоходный налог (вместо 20% от чистой прибыли вне общего налогового режима),

· 10% подоходный налог с работников (вместо 21% общего налогового режима).

Чтобы получить сертификат соискателя ИТ-стартапа, необходимо соответствовать определенным критериям, таким как:

· разработка программного обеспечения, консалтинг в области компьютерных технологий, управление компьютерными системами, обработка данных, веб-разработка, веб-хостинг, услуги хостинга, разработка электронных систем (подразумеваются также инженерные стартапы), ИТ-образование и т. д.,

· Не более 30 сотрудников,

· акционеры ИТ-стартапа-заявителя не должны владеть (на момент и за 3 года до подачи заявки) акциями другого армянского ИТ-стартапа или быть индивидуальным предпринимателем (работающим в ИТ-секторе),

· ИТ-стартап-заявитель не должен быть дочерним предприятием другого юридического лица и т. д.

Конечно, сертифицированным ИТ-стартапам необходимо соблюдать определенные ограничения при работе по льготному налоговому режиму. Процесс выдачи сертификата занимает максимум 30 дней с момента подачи заявления.

За 7 лет реализации указанный сертификат получили 1185 ИТ-стартапов. [6]

Занятость в технологическом секторе

Рабочая сила в ИТ-секторе составляет около 2,5% от общей занятости в стране. Большинство технических специалистов (62,9%) заняты в сегменте программного обеспечения и услуг, остальные заняты в сфере телекоммуникаций.

По мере того, как страна делает успехи, многие армяне, родившиеся за границей, хотят подключиться к растущей инфраструктуре или вернуться и принять участие в прогрессе и переменах, которые в настоящее время формируются.

«НерУж» инициирован и организован в декабре 2018 года Аппаратом главного уполномоченного по делам диаспоры и Министерством высокотехнологической промышленности и рядом других организаций. Это стартап-программа диаспоры для молодых предпринимателей армянского происхождения, которые хотят привезти свои стартап-идеи и проекты в Армению. Программа рассчитана на армян диаспоры в возрасте 18–35 лет. В программе могут принять участие те, кто базируется в Армении, проживает в стране не менее последних шести месяцев и имеет стартап в следующих секторах: сельское хозяйство, туризм, инновационные технологии.

Образование и рынок труда

Но проблема номер 1 — это нехватка старших талантов.

Как правило, выплата конкурентоспособной заработной платы не считается серьезной проблемой в рамках экосистемы. Отрасль способна платить зарплату там, где это необходимо, за талант, который оправдывает деньги. Проблема заключается не в невозможности заплатить сумму, необходимую для хорошего таланта, а в том, чтобы найти сам талант. Кроме того, некоторые потенциальные сотрудники на рынке время от времени ожидают высокой заработной платы и продвижения по службе в виде получения более высоких должностей. Во многих случаях роль, например, «старшего разработчика» в Армении может рассчитывать на такую же зарплату, как и в Европе или США, но их база знаний и набор навыков обычно несопоставимы.

Не хватает высококвалифицированных специалистов не только в области технологий, но и в области управления продуктами, развития бизнеса, продаж и маркетинга. Эти наборы навыков крайне редко встречаются в Армении, особенно на старшем уровне. Это происходит по разным причинам, в том числе из-за отсутствия качественного образования в этих областях, непонимания других рынков и определенных социальных стереотипов.

Молодые таланты не являются большой проблемой, так как свежие выпускники университетов все еще недостаточно квалифицированы, чтобы покинуть Армению и уехать на работу в другие страны, поэтому их достаточно, чтобы присоединиться к компаниям в Армении.

Рекомендации:

· провести реформы в вузах в виде построения внутри сильного делового менеджмента, радикальной смены профессорско-преподавательского состава и корректировки образовательных программ;

· приглашение спикеров из ведущих технологических компаний присоединиться к университетским лекциям и проводить практические занятия;

· создание механизмов, позволяющие студентам получить доступ к реальным проблемам и проектам для работы;

· привлечение инструкторов из отрасли, где это необходимо, может быть краткосрочным решением;

· предоставление студентам доступ к финансированию для бакалаврских исследований;

· стимулирование инвестиций в образовании со стороны крупных компаний.

· организация структурированных информационных кампаний среди студентов о востребованных в отрасли навыках;

· привлечение лучших экспертов из ведущих технологических хабов (Европа и Силиконовая долина) к предпринимательским образовательным программам и процессам в течение года. Это обеспечит предпринимателям доступ к сети и знаниям за пределами Армении и облегчит их вход в эти центры. Эксперты должны привлекаться в рамках предпринимательских образовательных программ в качестве EIR или коучей.

Основными проблемами в экосистеме являются отсутствие финансирования, отсутствие знаний о потребностях клиентов, трудности с продажей на мировых рынках, отсутствие знаний о рыночных тенденциях, неспособность привлекать качественные таланты, особенно иностранные таланты, как в Армении, так и за рубежом.

Упомянутые вопросы, связанные с финансированием, касались правил и процессов, сумм грантов и наличия возможностей. Проблемы, связанные с доступом к рынкам, включают ограниченное понимание глобальных рынков, отсутствие деловых знаний и навыков, отсутствие капитала, а также отсутствие ресурсов, вложенных в развитие бизнеса, как упоминалось в интервью.

Другой важной проблемой является отсутствие развитии экосистемы и стимулирования роста в регионах. Причины - плохая инфраструктура, нехватка знающей и квалифицированной рабочей силы, языковой разрыв и трудовая этика.

В качестве пробелов, мешающих развитию экосистемы, также стоит отметить недостаточный уровень осведомленности и ложное представление населения о предпринимательстве и технологической индустрии.

Рекомендации

Обзор существующих схем грантов:

· упростить процессы управления грантами для стартапов, так как они тратят значительное количество ресурсов на административные процессы после получения грантов;

· иметь больше возможностей для финансирования в экосистеме за счет включения большего количества схем грантов, связанных с существующими образовательными стартап-программами;

Синхронизация предпринимательского образования и финансирования:

· предоставить достаточное финансирование стартапам, принятым в программы инкубации стартапов и пре-акселерации, чтобы их основатели могли оставить свои рабочие места и полностью посвятить себя развитию компании;

· продвигать больше образовательных программ для начинающих учредителей за границей, уделяя особое внимание сбору средств.

Расширение знаний о мировом рынке:

· разработать и внедрить систематические программы обмена для основателей стартапов в США и ЕС для лучшего понимания рыночного контекста и деловой культуры в этих регионах;

· выделить специальные средства начинающим образовательным учреждениям для покупки доступа к уникальной информации и рыночным знаниям от ведущих мировых поставщиков аналитических данных и знаний

Региональное развитие:

· продолжить строительство инфраструктуры в виде улучшения дорог в регионы, отелей и обеспечения минимального уровня жизни для компаний, чтобы рассмотреть возможность открытия филиалов в регионах;

· разрабатывать и предлагать многонациональным компаниям стимулы для работы в регионах;

· стимулировать компании к работе с вузами в регионах, открывая конкретные направления и обучая студентов актуальным для отрасли знаниям и навыкам;

· предоставить налоговые льготы компаниям и специалистам, работающим из регионов, особенно тем, кто занимается образовательной деятельностью;

Образование и рынок труда:

· провести реформы в вузах в виде построения внутри сильного делового менеджмента, радикальной смены профессорско-преподавательского состава и корректировки образовательных программ;

· создать механизмы, позволяющие студентам получить доступ к реальным проблемам и проектам для работы;

· стимулировать инвестиции в образование со стороны крупных компаний. Сделать вклад в развитие образования и рынка труда легким, создав четкие механизмы;

· упростить, стимулировать и прояснить процесс привлечения иностранных талантов в Армению: иметь четкие механизмы, налоговые льготы, плавные процессы, четкие инструкции, доступную информацию для людей из-за рубежа, например, о визе, праве на работу и т. д.

Недавние достижения

В 2021 году, первом послевоенном году, страна столкнулась с огромными проблемами. Волна политической нестабильности, столкновения на границе и кризис с военнопленными породили море заголовков, которые заставили смотреть в будущее страны с пессимизмом. Но технологический сектор страны жил в параллельной реальности.

За последние 18 месяцев технологические стартапы в Армении получили первую волну серьезных инвестиций, общая сумма которых составила более 200 миллионов долларов США для компаний, которые были основаны и базируются в Армении. Также Picsart стал первым единорогом в Армении, достигнув оценки более 1 миллиарда долларов после их последнего раунда финансирования в 2021 году. Стартапы, основанные армянами со всего мира, также добились успеха в привлечении капитала. ServiceTitan и Disqo, базирующиеся в Лос-Анджелесе компании с офисами в Ереване, получили значительные инвестиции в размере 700 млн долларов и 85 млн долларов соответственно.

Помимо венчурного финансирования, армянские стартапы также блистали на Product Hunt, платформе, которую учредители используют для демонстрации своей продукции миру. Затем пользователи голосуют за свои любимые продукты, которые ранжируются ежедневно, еженедельно и ежемесячно. Продукты, созданные армянскими стартапами, не раз появлялись в списках лидеров Product Hunt, но более примечательными были награды, которые они получили на 7-й ежегодной премии Golden Kitty Awards, церемонии награждения, на которой отмечаются самые инновационные продукты в широком спектре категории. Podcastle, стартап из Еревана, занимающийся преобразованием текста в речь, стал победителем в категории «Аудио и голосовой инструмент года». Lucky Carrot, платформа признания коллег и вовлечения сотрудников, была удостоена награды SaaS (программное обеспечение как услуга) «Продукт года». Наконец, самая важная награда «Продукт года» была присуждена Softr, стартапу, основанному двумя армянскими соучредителями в Берлине, который позволяет создавать веб-приложения без написания кода.

Появление стартапов – это важный переход, произошедший в технологическом секторе Армении за последние 5-10 лет, который обещает стать основой будущего развития отрасли в Армении.

Стартап-экосистема Армении все еще находится в зачаточном состоянии. Есть много проблем, которые необходимо преодолеть, чтобы сектор стал более конкурентоспособным на глобальном уровне. Но стартап-экосистема Армении — пример того, как постсоветская страна с непростой историей независимости стремится построить цифровое, инновационное государство.

Литература

1. Закон Республики Армения «Об обществах с ограниченной ответственностью» // URL: http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1298&lang=rus.
2. Закон Республики Армения «О предприятиях и предпринимательской деятельности» дата признания недействительным 01.01.1999 // URL: https://www.arlis.am/documentview.aspx?docid=94.
3. Закон Республики Армения «О государственной содействии в сфере информационных технологий» // URL: http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=5184&lang=rus.
4. Закон Республики Армения «О государственном содействии инновационной деятельности» // URL: https://www.arlis.am/documentview.aspx?docid=79627.
5. Закон Республики Армения «О патентах» // URL: https://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=132367.
6. Налоговый кодекс Республики Армения // URL: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=137404.
7. Закон Республики Армения «О государственной поддержке малого и среднего предпринимательства» // URL: https://www.arlis.am/documentview.aspx?docID=64617.
8. Закон Республики Армения «Об иностранных инвестициях» // URL: http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1552&lang=rus.
9. Palagashvili L., Suarez P. «Technology Startups and Industry-Specific Regulations» // https://www.fraserinstitute.org/sites/default/files/technology-startups-and-industry-specific-regulations.pdf
10. Гиносян К.А., Кеян С.Э.: «Стартап экосистема Армении и роль акселераторов в ее развитии» // http://edoc.bseu.by:8080/bitstream/edoc/93606/1/Ginosyan_K.A._109_114.pdf
11. Doing Business in Armenia// URL: https://dialog.am/storage/files/posts/posts_27842001742_Doing_Business.pdf.
12. Перспективы инновационной политики 2020: Восточная Европа и Южный Кавказ // URL: https://unece.org/sites/default/files/2021-09/RU-Sub-regional_Innovation_Policy_Outlook_2020_ARMENIA_CHAPTERS.pdf.
13. Стартапы в Республике Беларусь: Актуальные вопросы развития // URL: https://cyberleninka.ru/article/n/startapy-v-respublike-belarus-aktualnye-voprosy-razvitiya (дата обращения: 05.12.2021).

ՀՏԴ 308

Լուսինե Դավթյան
ԱրՊՀ Տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի մագիստրանտ

Գիտական ղեկավար՝
տ.գ.թ. դոցենտ Ռ. Յա. Մանգասարյան

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Հիմնաբառեր՝ *ժողովրդագրական, մարտահրավերներ, զբաղվածություն, բնակչության ծերացում, արտագաղթ, գործազրկություն, ծնելիություն, մահացություն, ամուսնություն, ամուսնալուծություն, տնտեսական աճ, կենսամակարդակ*

ԼՂՀ ժողովրդագրական ներկա իրավիճակը լուրջ սպառնալիք է պետության և ազգային անվտանգության համար: Հանրապետության համար հրատապ խնդիր է ժողովրդագրական նոր քաղաքականության որդեգրումը, ինչը կկանխի ժողովրդագրական բացասական երևույթների խորացումը և կստեղծի առկա իրավիճակը շտկելու և ժողովրդագրական զարգացման կայուն ու հետևողական միտումներ ապահովելու ծանրակշիռ նախադրյալներ: Երկում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների վրա բացասական ազդեցություն ունեն գործազրկությունը, ծնելիության ցածր ցուցանիշը, արտագաղթը, բնակչության ծերացումը: Ժամանակակից ժողովրդագրական մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է առաջին հերթին մշակել տնտեսական աճի համալիր ծրագրեր:

Лусине Давтян

АКТУАЛЬНЫЕ ВЫЗОВЫ ДЕМОГРАФИЧЕСКОЙ ПОЛИТИКИ

Ключевые слова: *демография, вызовы, занятость, старение населения, эмиграция, безработица, рождаемость, смертность, брак, развод, экономический рост, уровень жизни.*

Сегодняшняя демографическая ситуация НКР представляет собой серьезную опасность для национальной безопасности и государства. Для страны претворение новой демографической политики позволит предотвратить углубление негативных демографических тенденций и создать существенные предпосылки для исправления данной ситуации и обеспечения устойчивых и последовательных тенденций демографического развития. Происходящие в стране демографические процессы оказывают негативное воздействие на безработицу, низкие показатели рождаемости, эмиграция, старение населения. Для решения демографических задач необходимо, в первую очередь, разработать комплексную программу обеспечения экономического роста.

Lusine Davtyan

ACTUAL CHALLENGES OF DEMOGRAPHIC POLICY

Key words: *demographic, challenges, employment, population aging, emigration, unemployment, birth rate, mortality rate, marriage, divorce, economic growth, standard of living.*

Current demographic situation of NKR constitutes a grave threat to the state and national security.

Adoption of a new policy that would prevent deepening of adverse demographic tendencies and would create mighty prerequisites to ensure sustainable and consistent tendencies for the development of demography. Demographic processes that has been underway in the country bears negative impact of unemployment, low birth rate, immigration, ageing of population. To meet the current demographic challenge, it is firstly necessary to adopt an integral economic growth programme.

20-րդ դարի վերջին և 21-րդ դարասկզբին տեղի ունեցած հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական արմատական փոփոխությունները նշանակալի ազդեցություն ունեցան հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա: Սոցիալական նոր իրողությունների հետևանքը եղավ այն, որ սկսեց արագորեն անկում ապրել ծնելիությունը, բարձրացավ մահացության մակարդակը, նվազեց կյանքի սպասվող միջին տևողությունը, խաթարվեց ամուսնաընտանեկան արժեքների համակարգը, խարխլվեցին հայկական ավանդական ընտանիքի հիմքերը, ավելացան ամուսնալուծությունները, իսկ ամուսնությունները պակասեցին, նվազեց բնակչության բնական աճի ցուցանիշը: Լայն տարածում ստացան սոցիալ-ժողովրդագրական այնպիսի ցավագին երևույթներ, ինչպիսիք են արտագաղթը, փախստականությունը, տեղահանվածությունը և այլն, որոնց հետևանքով փոխվեցին բնակչության սեռատարիքային համամասնությունները, և բնակչությունը սկսեց արագորեն ծերանալ:

2020 թվականին Հայաստանը և Արցախը դարձան պատերազմի մասնակից, որը խլեց մեր երիտասարդության զգալի մասը: Պատերազմին մասնակցող երիտասարդները արդեն իսկ ժողովրդագրական հիմնախնդրի աճի տարիներից էին: Իսկ հետագայում՝ մի քանի տարի անց, կսկսի նոր ժողովրդագրական, ավելի լուրջ խնդիր, երբ Հայաստանում և Արցախում կնվազի ծնելիության թիվը: Պատերազմին մասնակից տղաներից որոշները ձեռք են բերել առողջական, հոգեբանական խնդիրներ, ինչը կարող է հանգեցնել ամլության խնդրին կամ միգուցե առողջական խնդիրներով երեխաների ծննդին: Այս նույն հիմնախնդիրն է շոշոփում նաև ռուս-ուկրաինական պատերազմը, որը սկսել է 2022թ. փետրվարի 24-ին:

Ժողովրդագրական հիմնախնդրի էությունը առաջին հերթին կապված է բնակչության աճի բարձր տեմպերի հետ, որոնք հանգեցնում են նրանց՝ պարենով, բնակարանով, աշխատանքով, կրթությամբ ապահովելու խնդիրներին, մեծանում է բնակչության խտությունը հատկապես խոշոր քաղաքներում, ավելանում է բնական միջավայրի նկատմամբ ճնշումը, աճում է հիվանդությունների քանակը, սրվում է քրեածին իրադրությունը և այլն:

Ներկայումս աշխարհի բնակչությունն արագորեն աճում է: Եթե մեր թվարկության սկզբին աշխարհի բնակչությունը կազմում էր մոտ 250 միլիոն մարդ, ապա 2000թ. այն հասավ 6 միլիարդի, իսկ այժմ այն կազմում է ավելի քան 7,7 միլիարդ մարդ: Մինչև 2025 թվականի ժողովրդագրական կանխատեսումը հասցրել է արդեն մի քանի անգամ փոփոխվել: 1990-ական թվականներին ՄԱԿ-ի փորձագետները գտնում էին, որ աշխարհի բնակչությունը 2010 թվականին կհասնի 7,2 միլիարդի, 2020-ին՝ 8 միլիարդի, իսկ 2025-ին՝ 8,5 միլիարդի: Այս տվյալները հնչել են Ռիո դե Ժանեյրոյի վեհաժողովում: Սակայն կապված բնակչության աճի տեմպերի էական նվազման հետ՝ այս թվերը փոխվեցին, 2025 թվականի համար այն նվազեց մինչև 7,8 միլիարդ մարդու: Մինչև 2050 թվականի համար ժողովրդագրական կանխատեսումը ենթադրում է, որ աշխարհի բնկաչությունը կհասնի 8,9 մլրդ մարդու:

Ընդհանուր առմամբ, որպես հիմնական ժողովրդագրական գործընթացներ կարող ենք առանձնացնել հետևյալը.

- բնակչության բնական աճ.
- զուտ միգրացիա.
- բնակչության ընդհանուր աճ.
- բնակչության տարիքային և սեռային կառուցվածք.

- պտղաբերության մակարդակի նվազում.
- զարգացած երկրներում բնակչության ծերացում.
- զարգացած երկրներ ներգաղթի աճ:

Համաշխարհային ժողովրդագրական խնդիրները շոշափում են ողջ մարդկության շահերը, հետևաբար, դրանց կարգավորումը հնարավոր է միայն համատեղ ջանքերով: 1969 թվականին աշխարհի ժողովրդագրական խնդիրների լուծմանն աջակցելու համար կազմակերպվել է ՄԱԿ-ի բնակչության գործունեության հատուկ հիմնադրամ (ՄԱԲՀ): Այն մշակել է ՄԱԿ-ի «Բնակչության ծրագիրը», մի շարք ուսումնասիրություններ է իրականացրել պտղաբերության ոլորտում, աջակցել է միջազգային և ազգային կրթական հաստատություններին՝ ժողովրդագրության գծով մասնագետներ պատրաստելու համար և այլն:

ԱՀ ժողովրդագրական քաղաքականության հիմնական ուղղություններն են.

1. ծնելիության խթանում՝ երեխաներ ունենալու և մեծացնելու համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով,
2. երիտասարդ ընտանիքների ձևավորման գործընթացների վրա նպատակային ներազդման միջոցով բնակչության ամուսնական կառուցվածքի բարելավմանը, ամուսնաընտանեկան արժեքների համակարգի պահպանմանն ու զարգացմանը նպատակաուղղված ծրագրերի իրականացում,
3. կյանքի միջին տևողության ավելացում,
4. վերարտադրողական տարիքի անձանց արտագաղթի ծավալների նվազեցում,
5. ներգաղթի խթանմանն ուղղված համարժեք քաղաքականության մշակում,
6. բնակչության ժողովրդագրական ծերացման ազդեցության հաղթահարում,
7. բնակչության առողջության և հատկապես վերարտադրողական առողջության վիճակի բարելավում,
8. ընդհանուր կրթական մակարդակի, բնակչության գիտելիքների և սեռական ու վերարտադրողական կուլտուրայի բարձրացում,
9. սոցիալական բոլոր խմբերի վերարտադրողական առողջ կյանքի համար հավասար պայմանների ապահովում:

2020թ. ԱՀ-ում տեղի ունեցած 44-օրյա պատերազմը հանգեցրեց սոցիալ-տնտեսական ցուցանիշների էական փոփոխությունների, այդ թվում նաև ՀՆԱ-ի կտրուկ նվազման:

2021թ. հունվարի 1-ի դրությամբ՝ ԱՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 148.9 հազ. մարդ և 2020թ. տարեսկզբի համեմատ ավելացել է 0.1 տոկոսով: 2021թ. տարեսկզբին քաղաքային բնակչության մասնաբաժինը կազմել է 57.2 տոկոս, գյուղականը՝ 42.8 տոկոս: 2021թ. տարեսկզբին ԱՀ մշտական բնակչության կազմում 49.0 տոկոսը կազմել են տղամարդիկ, 51.0 տոկոսը՝ կանայք:

Տղամարդկանց և կանանց մահացության տարբեր մակարդակներով պայմանավորված, տարբեր է նաև տղամարդկանց և կանանց կյանքի սպասվող միջին տևողության ցուցանիշները ծննդյան պահից: Կյանքի սպասվող միջին տևողությունը ծննդյան պահից 2020թ. տղամարդկանց համար կազմել է 61.2 տարի,իսկ կանանց համար՝ 78.2 տարի:

2020թ. ընթացքում, ըստ քաղաքացիական կացության գրանցումների, ԱՀ-ում արձանագրվել է 1668 ծնունդ, որից 23-ը կազմել են բազմապտուղ ծնունդները: Ծնվածների ընդհանուր թվաքանակից 1659-ը կազմել են կենդանի ծնվածները, իսկ 9-ը՝ մեռելածինները: Նախորդ տարվա համեմատ կենդանի ծնվածների թվաքանակը նվազել է 21.7 տոկոսով, իսկ ծնելիության ընդհանուր գործակիցը,որը բնութագրում է հաշվետու ժամանակաշրջանում ծնվածների թվաքանակը 1000 բնակչի հաշվով, կազմել է 11.1 պրոմիլ: Մոր միջին տարիքը երեխայի ծննդյան ժամանակ 2020թ. կազմել է 28.1 տարեկան,իսկ առաջին երեխայի ծննդյան ժամանակ՝ 24.7 տարեկան: 2020թ. ըստ ծննդի հաջորդականության՝ երրորդ և հաջորդող կարգի ծնունդների մասնաբաժինը կազմել է ընդամենը կենդանածինների 34.1 տոկոսը:

2020թ. ԱՀ-ում արձանագրվել է 1529 մահվան դեպք, իսկ մահացության ընդհանուր գործակիցը՝ 1000 բնակչի հաշվով, կազմել է 10.3 պրոմիլ: 2020թ. մահվան դեպքերից 977-ը կամ

63.9% կազմել են տղամարդիկ, իսկ 552-ը կամ 36.1%՝ կանայք: 2020թ. հանրապետությունում մանկական մահացության գործակիցը (կյանքի առաջին տարում), 1000 կենդանի ծնվածի հաշվով, կազմել է 7.2 պրոմիլ:

2020թ. նախորդ տարվա համեմատ 62.1 տոկոսով նվազել են գրանցված ամուսնությունները և կազմել 317 դեպք: Արձանագրված ամուսնալուծության դեպքերը 2019թ. համեմատ նվազել են 44.0%-ով և կազմել 116 դեպք: Ամուսնության միջին տարիքը տղամարդկանց շրջանում 2020թ. կազմել է 29.5, իսկ կանանց մոտ՝ 25.6 տարեկանը, իսկ առաջին ամուսնության միջին տարիքը, համապատասխանաբար, 27.8 և 24.3:

2021թ. հունվարի 1-ի դրությամբ ԱՀ մշտական բնակչության կառուցվածքում 0-15 տարեկան երեխաների տեսակարար կշիռը կազմել է 25.9%, աշխատունակ տարիքինը՝ 61.0%, իսկ աշխատունակ տարիքից բարձր բնակչության տեսակարար կշիռը՝ 13.1%:

2020թ. միգրացիոն տեղաշարժերի տարեկան ցուցանիշների մշակման արդյունքում՝ միջպետական միգրացիայի ուղղությունների վերաբերյալ ստացված տվյալների համաձայն, այդ բնութագրիչներով հանրապետությունում հաշվառման կանգնած 411 մարդուց 87.3 տոկոսը ժամանել է ՀՀ-ից, 12.7տոկոսը՝ այլ երկրներից, իսկ հաշվառումից դուրս գրված 452 մարդ մեկնել է ՀՀ: 2020թ. միգրացիայի մնացորդի ցուցանիշը բացասական է և կազմել է 41:

Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով Արցախում ավելի է մեծացել սոցիալական լարվածությունը: Ստեղծված իրավիճակում այն մեղմացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը նույնպես իր գործուն աջակցությունը ցուցաբերեց՝ մշակելով և իրագործելով մի շարք ծրագրեր: Դրանք են՝

· Արցախում հաշվառված քաղաքացիներին աջակցության միջոցառում: Օժանդակության ձևը՝ միանվագ դրամական օգնություն՝ Արցախում հաշվառված քաղաքացիների համար նվազագույն ամսական աշխատավարձի չափով (68,000 ՀՀ դրամ), ինչպես նաև կեցավայրի համար տրամադրվում է լրացուցիչ աջակցություն՝ 15,000 դրամի չափով այն շահառուներին, ովքեր չունեն սեփականության (այդ թվում՝ բաժնային) իրավունքով Հայաստանի Հանրապետությունում գտնվող անշարժ գույք:

· Պատերազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում հաշվառված քաղաքացիների աջակցության միջոցառում: Օժանդակության ձևը՝ միանվագ 300 000 ՀՀ դրամին համարժեք դրամական օգնություն: Տրամադրվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախում գտնվող Արցախի քաղաքացիներին, որոնք ունեն Ադրբեջանի վերահսկողության տակ անցած Արցախի համայնքի հաշվառում:

· Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիներին ժամանակավոր հյուրընկալողների ծախսերի փոխհատուցման վեցամսյա սոցիալական աջակցության միջոցառում: Օժանդակության ձևը՝ 30,000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր հյուրընկալած չափահաս անձի համար՝ ՀՀ-ում, 45 000 ՀՀ դրամ՝ յուրաքանչյուր հյուրընկալած չափահաս անձի համար՝ Արցախում,

· Պատերազմական գործողությունների հետևանքով քաղաքացիական անձանց շրջանում զոհերի ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական աջակցության միջոցառում:

Օժանդակության ձևը՝

- 5 000 000 ՀՀ դրամ՝ անձի զոհվելու դեպքում, տրվում է զոհվածի ընտանիքին,
- 3 մլն ՀՀ դրամ՝ անձի 1-ին խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում,
- 2 մլն ՀՀ դրամ՝ անձի 2-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում,
- 1 մլն ՀՀ դրամ՝ անձի 3-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերելու դեպքում,
- 3 մլնՀՀ դրամ՝ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում:

· Արցախի Հանրապետությունում հաշվառված և հաշվառման հասցեում գտնվող բնակելի անշարժ գույքը Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի պատճառած ավերածությունների հետևանքով կամ այլ պատճառներով կորցրած քաղաքացիների աջակցության միջոցառում: Օժանդակության ձևը՝ ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ 250,000 ՀՀ դրամ:

· Արցախի Հանրապետությունում հաշվառված կամ փաստացի բնակված քաղաքացիներին 4 ամիս ժամկետով ամսական դրամական օգնություն: Աջակցությունը տրամադրվում է ԱՀ հաշվառում ունեցող քաղաքացիներին 2021 թվականի մարտ-հունիս ամիսների համար, յուրաքանչյուր ամիս՝ 68 000 դրամ չափով:

· Նախատեսվում է իրականացնել նոր ծրագիր, որից կարող են օգտվել ֆիզիկական և իրավաբանական այն անձինք, որոնք ունեն մինչև 2020 թվականի սեպտեմբերի 27-ը ստացած հիպոթեքային, բիզնես և սպառողական վարկեր ու փոխառություններ: Մասնավորապես, հիփոթեքային վարկերի համար 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 1-ը ժամանակացույցով նախատեսված բոլոր վճարումները Արցախում փաստացի ապրող քաղաքացիներին փոխհատուցվելու են պետության կողմից՝ մինչև 30 մլն դրամ չափով: Բայց 5 տարվա ընթացքում բնակտարածքը վաճառելու դեպքում աջակցության գումարը վերադարձվելու է պետությանը:

Արցախի Հանրապետության քաղաքացիների համար անվտանգ, բարեկեցիկ ու արժանապատիվ կյանքի ապահովման համար ԱՀ նախագահի կողմից ևս մշակվել է ծրագիր, որը ներառում է նախագահի և գործադիր իշխանության գործունեության ոլորտային հիմնական առաջնահերթությունները և Հանրապետության զարգացման նախանշվող ուղիները 2020-2025թթ. ժամանակահատվածում:

ԱՀ-ում 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գործազրկությունը մեծ էր երիտասարդների շրջանում: Գործազրկության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 30-34 տարիքային սահմաններում, ընդհանուր գործազուրկների թվի մեջ կազմել է 24,4%:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դա պայմանավորված է հիմնականում մասնագիտական կողմնորոշման համակարգի բացակայությամբ, աշխատաշուկայի ներկայիս պահանջներին երիտասարդների մասնագիտական կրթության և որակավորման անհամապատասխանությամբ, աշխատանքային փորձի բացակայությամբ:

Հանրապետությունում ձևավորված ժողովրդագրական իրավիճակի և դրա հետ կապված հիմնախնդիրների դիտարկման և լուծման ուղիների հիմնավորման արդյունքում, կատարել ենք հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները՝

· ԱՀ ժողովրդագրական իրավիճակի համար օրախնդիր են ներքոհիշյալ հարցերը.

1. բնակչության բնական և մեխանիկական աճի տեմպերի ցածր մակարդակը,
2. բնակչության ծերացումը,
3. միգրացիան,
4. ծնելիության ցածր և մահացության բարձր մակարդակը և այլն:

Իսկ այդ ժողովրդագրական մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է առաջին հերթին մշակել անվտանգային և տնտեսական աճի համալիր ծրագրեր, որոնք բնակչության զբաղվածության կարգավորման և կենսամակարդակի բարձրացման ելակետային պայմանն են:

· Հաշվի առնելով վերջին տարիներին ԱՀ-ում տեղի ունեցած ժողովրդագրական զարգացումների միտումները՝ առաջարկում ենք իրականացնել.

1. ժողովրդագրական քաղաքականությանն ուղղված ռազմավարության մշակում,
2. ծնելիության և բազմազավակության խթանման արդյունավետ ծրագրերի իրականացում՝ հատկապես 3-րդ, 4-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի ծննդյան նյութական խրախուսման ավելացումը,

3. հայրենադարձությանը և նպատակային վերաբնակեցմանը միտված խոշոր ծրագրերի իրականացում՝ պետական և մասնավոր միջոցներով,

4. միգրացիոն գործընթացների կարգավորում և բնակչության տարածքային տեղաբաշխման անհամաչափության մեղմում,

5. կայուն տնտեսական աճի ապահովում:

· Ծնելիությունը խթանելու և ընդլայնված վերարտադրություն ապահովելու նպատակով առաջարկում ենք՝

1. երիտասարդ ընտանիքներին ընտանեկան բիզնեսով զբաղվելու կամ ունեցած բիզնեսը զարգացնելու համար երեխաների թվաքանակից կախված երկարաժամկետ արտոնյալ պայմաններով գյուղատնտեսական կամ բիզնես վարկերի տրամադրում,

2. մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող մայրերին՝ մինչև երեխայի 3 տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար տրամադրել փոխհատուցում՝ մինչև երեխայի 3 տարեկան դառնալը՝ դայակ վարձելու կամ վճարովի հիմունքներով այլ եղանակով երեխայի խնամքը կազմակերպելու համար,

3. երիտասարդ ընտանիքներին գյուղական վայրերում երեխաների թվաքանակից կախված անասունների, գյուղատնտեսական տեխնիկայի արտոնյալ պայմաններով կամ անվճար տրամադրում,

4. անչափահաս երեխա ունեցող մայրերի համար սահմանել ճկուն աշխատանքային գրաֆիկ, կրճատ աշխատաժամանակ՝ աշխատավարձի պահպանմամբ:

ՀՏԴ 338,5

Ալլա Սարգսյան
Գավառի պետական համալսարան
Էլեկտրոնային հասցե՝ allasargsyan@bk.ru

Գիտական ղեկավար՝
տ.գ.թ., դոցենտ Գայանե Խաչատրյան

ԳՆԱՃԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Բանալի բառեր: *Գնաճային միտումներ, իրական տնտեսություն, վերաֆինանսավորման տոկոսադրույք, դրամավարկային քաղաքականություն, սպառողական զամբյուղ, պարենային մթերքներ, գյուղատնտեսություն:*

Գների կայունության ապահովումը երկարաժամկետ հեռանկարում հանդիսանում է յուրաքանչյուր երկրի կայուն սոցիալ-տնտեսական աճի ապահովման, մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման և բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևոր նախադրյալներից մեկը: Արդի պայմաններում, հաշվի առնելով տեղի ունեցող փոփոխությունները առավել քան երբևէ անհրաժեշտ է, որպեսզի գնաճային միտումները լինեն մանրամասնորեն ուսումնասիրված, իսկ իրականացվող քաղաքականությունը՝ նպատակային, արդյունավետ ու փոխկապակցված, ինչպես տնտեսության իրական հատվածի այնպես էլ արժութային ու հարկաբյուջետային քաղաքականությունների հետ:

Alla Sargsyan

ENSURING PRICE STABILITY IN THE LONG RUN

Key words: *Inflationary trends, real economy, refinancing rate, monetary policy, consumer basket, food products, agriculture.*

Ensuring price stability in the long run is one of the important preconditions for ensuring sustainable socio-economic growth of each country, improving macroeconomic indicators and raising the living standards of the population. In the current conditions, taking into account the changes taking place, it is more than ever necessary for the inflation tendencies to be studied in detail, and the implemented policy to be targeted, effective and interconnected with both the real sector of the economy and the monetary and fiscal policies.

Алла Саргсян

ОБЕСПЕЧЕНИЕ ЦЕНОВОЙ СТАБИЛЬНОСТИ В ДОЛГОСРОЧНОЙ ПЕРСПЕКТИВЕ

Ключевые слова: *Инфляционные тенденции, реальная экономика, ставка рефинансирования, денежно-кредитная политика, потребительская корзина, продовольственные товары, сельское хозяйство.*

Обеспечение ценовой стабильности в долгосрочной перспективе является одной из важных предпосылок обеспечения устойчивого социально-экономического роста каждой страны, улучшения макроэкономических показателей и повышения уровня жизни населения. В текущих условиях, с учетом происходящих изменений, как никогда необходимо детальное изучение инфляционных тенденций, а проводимая политика должна быть адресной, эффективной и взаимосвязанной как с реальным сектором экономики, так и с монетарной и фискальной политики.

Գների կայունության ապահովումը երկարաժամկետ հեռանկարում հանդիսանում է յուրաքանչյուր երկրի կայուն սոցիալ-տնտեսական աճի ապահովման, մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման և բնակչության կենսամակարդակի բարձրացման կարևոր նախադրյալներից մեկը: Այս համատեքստում աշխարհի գրեթե բոլոր երկրներում խնդիրը գտնվում է կենտրոնական բանկերի ուշադրության կենտրոնում: Ասվածը տեղայնացվում է նաև Հայաստանի Հանրապետության դեպքում, մասնավորապես «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում ամրագրված է, որ վերջինիս հիմնական խնդիրն է հանդիսանում երկրի ներսում գների կայունության ապահովումը[1]:

Նկատենք նաև, որ *գների կայունություն* ասվածը չի ենթադրում անփոփոխ գներ, այլ դրանց կանխատեսելի, կայուն և դանդաղ աճ: Գնաճի ընդհանուր ցուցանիշը երկրի ներսում ձևավորվում է մի շարք ապրանքատեսակների ու ծառայությունների գների փոփոխությունների համադրման և միջինացված հաշվարկի հիման վրա: Այդ ապրանքատեսակները և ծառայությունները ներառված են սպառողական զամբյուղի կազմում, որի շրջանակներում որոշակի պարբերականությամբ և մեթոդաբանությամբ իրականացվում է մշտադիտարկում, ինչի արդյունքների ամփոփումը արտացոլում է տվյալ ժամանակահատվածի կտրվածքով գնաճային միտումները: Ավելացնենք նաև, որ շատ տեսաբանների կարծիքով՝ չափավոր գնաճը դիտվում է որպես տնտեսության իրական հատվածի ակտիվացման խթաններից մեկը, միաժամանակ գնաճային ցուցանիշների միջև միջակայքային մեծ տարբերությունները կարող են ունենալ հակառակ ազդեցություն, և տեղի կունենա տնտեսական անկում ու ճգնաժամ:

Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ներկայացված պաշտոնական տվյալների՝ արդի ժամանակահատվածում սպառողական զամբյուղը ներառում է 450 անուն ապրանք և ծառայություն, ընդ որում՝ պարենային ապրանքների կշիռը կազմում է 45,89 տոկոս, ոչ պարենային ապրանքներինը՝ 22,24 տոկոս, իսկ ծառայություններինը՝ 31,87 տոկոս[2]: 2021 թվականին նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի նկատմամբ փոփոխություններ են դիտվել նաև ըստ առանձին ապրանքախմբերի տեսակարար կշիռների: Մասնավորապես, «Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ենթախմբի տեսակարար կշիռը 2021 թվականի վերջի դրությամբ կազմել է 37,2 տոկոս, ինչը 2,1 տոկոսային կետով պակաս է 2020 թվականի վերջի ցուցանիշից: Վերջինիս ձևավորման վրա ազդել է *հացաբուլկեղեն, մսամթերք, ձուկ և կարտոֆիլ* հոդվածների գծով դիտված ՍԳԻ աճը, որպես հակադրություն դիտվել է նվազումը *շաքար, մրգեր՝ թարմ կամ սառեցված* հոդվածներում: ՍԳԻ ցուցանիշի ձևավորման կազմում տեսակարար կշռի մյուս նկատելի փոփոխությունը դիտվել է «Տարբեր ապրանքներ և ծառայություններ» կետում՝ 1,2 տոկոսային նիշով, որը եղել է առավելապես *Կանանց մազերի հարդարման ծառայություններ և ոչ էլեկտրական պարագաներ* հոդվածների աճի ու *ոսկերչական զարդեր* հոդվածի տարեկան կտրվածքով նվազման արդյունք[3]:

Ստորև դիտարկենք, թե վերջին 3 տարիների կտրվածքով, ըստ առանձին ամիսների, ինչպիսի շարժընթաց է դիտվել գնաճի ցուցանիշների հետ կապված՝

---

[1] *Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, հոդված 4,* https://www.arlis.am/documentview.aspx?docID=64633

[2] *Տե՛ս ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջ, Դրամավարկային քաղաքականություն, նպատակ* https://www.cba.am/am/SitePages/mpobjective.aspx

[3] *Տե՛ս «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականի հունվար-դեկտեմբերին» Վիճակագրական տեղեկագիր* https://www.armstat.am/file/article/cpi_12_2021-arm.pdf



Գծապատկեր 1. ՀՀ գնաճային միտումների շարժընթացը 2019-2021 թվականների ընթացքում և 2022 թվականի հունվար-փետրվար պարբերաշրջանում[1]

Ինչպես տեսնում ենք, գծապատկեր 1-ում 2019 և 2020 թվականներին գնաճի ցուցանիշը եղել է համապատասխան ԿԲ կանխատեսումների և այն ռազմավարությանը, որը վերջինս որդեգրել է 2007 թվականից, այն է՝ ՀՀ-ում գնաճի նպատակային թիրախ է սահմանված 4 տոկոսը՝ +-1,5 տոկոս տատանման միջակայքով: Այնուամենայնիվ, 2020 թվականի դեկտեմբերին դիտվել է գնաճի կտրուկ արագացման միտում՝ նախորդ ամսվա համեմատ աճելով 1,8 տոկոսային կետով: Նկատենք նաև, որ ԿԲ-ն՝ որպես արձագանք շեշտակի աճի, նույն ժամանակահատվածում բարձրացրել էր վերաֆինանսավորման տոկոսադրույքը 1,0 տոկոսային կետով: Ըստ ներկայացված հաշվետվության՝ դիտարկվող պարբերաշրջանում դիտված գնաճը պայմանավորված էր առաջարկի գործոնով: Միաժամանակ նշենք, որ նման շեշտակի աճը կանխատեսելի չէր եղել նաև ԿԲ-ի կողմից, համաձայն որի սպասումների՝ 2020 թվականի վերջին 12-ամսյա գնաճի ցուցիչը չպետք է գերազանցեր 2,5 տոկոսի շեմը:

2021 թվականի դեկտեմբերի դրությամբ 12-ամսյա գնաճը կազմել է 7,7 տոկոս՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1,9 տոկոսային կետով: 2021 թվականի ընթացքում որոշ ապրանքատեսակների գծով գնաճը դիտվել է երկնիշ ցուցիչով, մասնավորապես՝ սննդամթերքը և ոչ ալկոհոլային խմիչքները թանկացել են 11,2 տոկոսով, իսկ ալկոհոլային խմիչքն ու ծխախոտը՝ 9,3 տոկոսով: Զգալի գնաճ նկատվել է նաև *տրանսպորտ* ենթաբաժնում՝ 9,1 տոկոս, նկատենք նաև, որ այս ցուցանիշն ընդգրկում է նաև բենզինի, անվադողերի, մեքենաների ընթացիկ և ոլորտի հետ կապված մնացած ծախսերը[2]: Ստորև դիտարկենք նաև, թե 2021 թվականի դեկտեմբերի դրությամբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ որ ապրանքախմբերի կազմում ինչպիսի գնաճային ցուցանիշներ են դիտվել՝

ü 2021 թվականի հունվար-դեկտեմբերի ցուցանիշը 2020 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ (տոկոս)- սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք՝ 11,2, ալկոհոլային խմիչք և ծխախոտ՝ 9,3, հագուստ և կոշիկ՝ 8,1, բնակարանային ծառայություններ, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ՝ 1,3, առողջապահություն՝5,4, տրանսպորտ՝ 9,1, կապի ծառայություն՝ 0,9, հանգիստ և մշակույթ՝ 3,8, կրթություն՝ 1,8, ռեստորաններ և հյուրանոցներ՝ 3,2 տոկոս:

ü 2022 թվականի հունվար-մարտի ցուցանիշը 2021 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ /տոկոս/- սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք՝ 12,1 /եռամսյակի կտրվածքով՝ 6 տոկոս/,

---

[1] *Տե՛ս ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, գնաճի հաշվետվություններ, Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն 2019-2021թթ.*

[2] *Տե՛ս «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականի հունվար-դեկտեմբերին» և «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի հունվար-մարտին» վիճակագրական տեղեկագիր*
https://www.armstat.am/file/article/cpi_12_2021-arm.pdf
https://www.armstat.am/file/article/cpi_03_2022-arm.pdf

ալկոհոլային խմիչք և ծխախոտ՝ 7,9 /3,1/, հագուստ և կոշիկ՝ 9,1 /-1/, բնակարանային ծառայություններ, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ՝ 3,4 /3,6/, առողջապահություն՝ 1,2 /1,3/, տրանսպորտ՝ 4,0 /0,9/, կապի ծառայություն՝ 0,1 /0,2/, հանգիստ և մշակույթ՝ 10,6 /2,7/, կրթություն՝ 1,4 /0/, ռեստորաններ և հյուրանոցներ՝ 5,3 /0,8/ տոկոս[1]:

Ինչպես փաստում են վերոնշյալ տվյալները, դիտարկվող 2 պարբերաշրջանների դեպքում ամենախոշոր գնաճը դիտվել է *սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչք* հոդվածում, մասնավորապես, 2022 թվականի առաջին եռամսյակի ընթացքում միայն աճը կազմել է 6 տոկոս, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 12,1 տոկոս: Ինչպես ցույց են տալիս վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված պաշտոնական տվյալները, ցուցանիշի աճը 12-ամսյա կտրվածքով առավել նկատելի դիտվել է հետևյալ բաժիններում՝ հացաբուլկեղեն և ձավարեղեն՝ 8,4-13, հաց՝ 7,9-14, միս՝ -0,1-9,9, թռչնամիս՝ 5,1-24,3, ձու՝ 12,7-78,2, կարտոֆիլ՝ -18,9-77,4 տոկոս:

Ոլորտային կառուցվածքի առանձին դիտարկումն ունի կարևոր նշանակություն նաև տնտեսության իրական հատվածի իրավիճակը վերլուծելու տեսանկյունից: Ինչպես տեսանք, սննդամթերքի գծով տեղի ունեցած գնաճը դիտվել էր հիմնականում գյուղատնտեսական արտադրանքների գծով. միաժամանակ ուսումնասիրելով նույն ժամանակահատվածի գյուղատնտեսական արտադրանքների ծավալները՝ գալիս ենք այն եզրահանգման, որ իրականում գնաճի արագացված տեմպ է արձանագրվել գյուղատնտեսության ոլորտի արտադրանքի ծավալային կրճատման հետևանքով, մասնավորապես՝



Գծապատկեր 2. 2021 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքի ցուցանիշները 2020 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ[2]:

Ինչպես տեսնում ենք, գծապատկեր 2-ում դիտարկված 3 գյուղատնտեսական արտադրատեսակների գծով ուսումնասիրվող ժամանակահատվածում դիտվել է ծավալային կրճատում՝ հացահատիկ, հատիկընդեղեն՝ 37,7, կարտոֆիլ՝ 16,6, բանջարեղեն՝ 10,6 տոկոս: Ծավալային կրճատումները հանգեցրել են շեշտակի գնաճի, մասնավորապես՝ ցորենի գինը 2021 թվականի վերջին մեկ կիլոգրամի դիմաց կազմել է 150 դրամ, իսկ 2020 թվականին՝ 130 դրամ, համապատասխանաբար՝ կարտոֆիլ՝ 154 դրամ նախկին 112-ի փոխարեն:

Վերևում ներկայացվածը գնաճի առաջացման ներքին պատճառներից մեկն էր. այն է, երբ առկա է պահանջարկ, սակայն իրական տնտեսության որոշ հատվածներ նվազեցնում են առաջարկը, արդյունքում ընթացիկ սպառման պահանջարկը գերազանցում է առաջարկին, և տեղի է ունենում գնաճ, միաժամանակ կրճատվում են խնայողությունները, հետևաբար վարկային ռեսուրսները, որին էլ իր հերթին հետևում է տնտեսական ակտիվության նվազումը: Նկատենք նաև, որ այս

[1] *Տե՛ս «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականի հունվար-դեկտեմբերին» և «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի հունվար-մարտին», Վիճակագրական տեղեկագիր:*
https://www.armstat.am/file/article/cpi_12_2021-arm.pdf
https://www.armstat.am/file/article/cpi_03_2022-arm.pdf

[2] *Տե՛ս «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին», Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն.* https://www.armstat.am/file/article/sv_12_21a_122.pdf

կետում, երբ առաջանում է առաջարկի ու պահանջարկի անհավասարակշռություն և դիտվում է գների աճ, ի հայտ են գալիս վերջինիս վրա ազդող արտաքին գործոնները: Մասնավորապես, շղթայական զարգացումների սկզբունքով երկրները փորձում են առաջացած պակասուրդը լրացնել ի հաշիվ ներմուծումների ծավալային աճի: Ստորև դիտարկենք այդ շղթայական կախվածությունը գնաճի վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ու գործընթացների համատեքստում՝

Ներքին սպառման շուկայում պահանջարկի գերազանցում առաջարկին:

Պակասուրդի լրացում ի հաշիվ ներմուծումների ծավալային ավելացման: Առաջանում է արտարժութային ռիսկ, որը կարող է խորացնել գնաճային միտումները:

Տնտեսության ակտիվության նվազում, խնայողությունների կրճատում, մակրոտնտեսական ցուցանիշների վատթարացում:

Արտաքին առևտրի, հատկապես ներմուծումների դեպքում արտարժութային տատանումների ռիսկը ձեռք է բերում առանձնակի նշանակություն, քանի որ ՀՀ-ում արտադրության ոլորտներից շատերն իրենց գործունեությունը կազմակերպում են հումքի ներկրման հիման վրա, ուստի փոխարժեքի միջակայքային ու երկարատև տատանումների արդյունքում, տնտեսվարողների մեծ մասն ունենալով արտադրանքի բարձր ինքնարժեք, կբարձրացնի ապրանքի գինը: Այս դեպքում խոշոր կազմակերպությունները արտադրանքի քանակի հաշվին կկարողանան զսպել ռիսկը, արդյունքում մրցակցությունից դուրս կմղեն փոքր ու միջին ձեռնարկություններին:

Գնաճային միտումները՝ որպես երկրների տնտեսական զարգացումը խթանող կամ խոչընդոտող գործոն, մշտապես գտնվում են միջազգային տարբեր կառույցների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, Fitch Ratings միջազգային վարկանշային գործակալությունը 2022 թվականի մարտի 19-ին հրապարակած զեկույցում կանխատեսել է, որ հաշվետու տարում ՀՀ-ում գնաճի տեմպերը կարագանան՝ կազմելով շուրջ 8,5 տոկոս, որը ավելի բարձր նշաձող է, քան ԿԲ կողմից նախանշված ցուցանիշը[1]: Միաժամանակ նշվում է, որ առաջիկայում հնարավոր է վերաֆինանսավորման տոկոսադրույքի շարունակական բարձրացում, որը սակայն արդյունքային տեսանկյունից արդարացված չի լինի, քանի որ Հայաստանում դիտվում է դոլարայնացման բարձր մակարդակ: Նկատենք նաև, որ վերջին մեկ տարվա կտրվածքով ՀՀ ԿԲ-ն արդեն իսկ 6 անգամ բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ևս 2 անգամ՝ 2022 թվականի ընթացքում: Նկատենք նաև, որ այս պահին սահմանված վերաֆինանսավորման տոկոսադրույքը կազմում է 9,25 տոկոս, ինչը հակառեկորդ է համարվում 2015 թվականից ի վեր[2]:

Ռուսաստանի Դաշնությունում տեղի ունեցող իրադարձությունները երկարաժամկետում կարող են ունենալ բացասական հետևանքներ ՀՀ տնտեսության վրա: Հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ ՌԴ-ն հանդիսանում է Հայաստանի առևտրային հիմնական գործընկերը՝ ապրանքների արտահանման 28, ներմուծման 37 տոկոս ցուցանիշով, ինչպես նաև օտարերկրյա ուղղակի ներդրումների ու դրամական փոխանցումների 40 տոկոսը ստացվում է հենց Ռուսաստանի կողմից: Ավելացնենք նաև, որ կան որոշակի ապրանքատեսակներ, որոնց գծով արտահանման հիմնական երկիր է համարվում հենց ՌԴ-ն: Այդպիսի ապրանքատեսակներն են՝ տրիկոտաժե հագուստ, քիմիական արտադրանք, ձկնեղեն, բանջարեղեն և մրգեր՝ տեսակարար կշիռը՝ 93,8-99,5 տոկոս: Վերջինս բավականին ռիսկային կարելի է դիտարկել, քանի որ

[1] *Տե՛ս Fitch Ratings միջազգային վարկանշային գործակալության պաշտոնական կայքէջ, https://www.fitchratings.com/research/sovereigns/fitch-affirms-armenia-at-b-outlook-stable-18-03-2022?fbclid=IwAR0nCxcgDamzohPQuCoYWPV3CtpovaOEs9kpjXJnNqBTaabMmALv4W3O6dE*

[2] *Տե՛ս ՀՀ ԿԲ պաշտոնական կայքէջ, https://www.cba.am/am/SitePages/fmompiinterestrates.aspx*

արտահանումների կազմում թե՛ ծավալային, թե՛ փոխարժեքային տատանումները ներքին շուկայում կարող են հազնեցնել բացասական ազդեցությունների: Այս համատեքստում ընդգծենք նաև *հայկական դրամ-ռուսական ռուբլի* տատանումները, որոնք միջակայքային առումով բարձր տատանողական են, հետևաբար առավել ռիսկային: Ինչպես փաստում են վիճակագրական տվյալները, ռուբլու նկատմամբ հայկական դրամի արժևորումն ուղեկցվում է դոլարի նկատմամբ հայկական դրամի արժեզրկմամբ: ՀՀ ԿԲ կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի շարունակական բարձրացումը վերջին ժամանակահատվածում նպատակ էր հետապնդում այս գործընթացները որոշակիորեն զսպելու ու կարգավորելու:

Հավելենք նաև այն, որ ԿԲ կողմից ներկայացված գնաճի հաշվետվությունների ուսումնասիրությունները փաստում են, որ հատկապես վերջին մի քանի տարիների կտրվածքով, որպես գնաճային միտումների զսպման առաջնահերթ գործիք՝ ՀՀ-ում գործում է վերաֆինանսավորման տոկոսադրույքը: Զսպման մեխանիզմ է հանդիսանում նաև բաց գործառնությունների իրականացումը, որը կիրառելիության ծավալային տեսանկյունից զգալիորեն զիջում է տոկոսադրույքի փոփոխությունների իրականացմանը: Մասնավորապես, բաց գործառնությունները ֆինանսական շուկայում տեղի են ունեցել իրացվելիության ներարկման նպատակով և կրել են կարճաժամկետ բնույթ՝ մինչև 7 օր կտրվածքով, հետևաբար վերջիններիս արդյունավետությունը հնարավոր չէ ճշգրիտ գնահատել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեկշաբաթյա ժամանակահատվածում հետևանքները չէին կարող դրսևորվել թե՛ ֆինանսական շուկայում և՛ թե ֆինանսական համակարգում:

Եզրակացություն

Ամփոփելով վերջին մի քանի տարիների կտրվածքով ՀՀ գնաճային միտումները և վեր հանելով ինչպես վերջինիս առաջացման պատճառները, հնարավոր հետևանքները, այնպես էլ Կենտրոնական բանկի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության առանցքային դրույթները՝ ներկայացնում ենք հետևյալ եզրահանգումները և առաջարկությունները՝

1. Դրամավարկային քաղաքականությունը, ինչպես նաև միջանկյալ նպատակների սահմանումը համապատասխան գերատեսչությունների կողմից հնարավորինս մոտ պետք է լինեն տնտեսության իրական հատվածին: Մասնավորապես, քաղաքականության մշակման հիմքում անհրաժեշտ է առավել կարևորել պարենային ապրանքախմբերը, քանզի վերջիններս հանդիսանում էին սպառողական զամբյուղի գերակշիռ բաղադրիչներ: Ասվածը վերաբերում է հատկապես տեղական արտադրությանը և մասնավորապես գյուղատնտեսության ոլորտին:
2. ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության գործիքների ուսումնասիրումը ցույց տվեց, որ գնաճային միտումների զսպման գործիքների համախմբում առավել լայն տարածում ունի վերաֆինանսավորման տոկոսադրույքի փոփոխությունը, իսկ *գործառնություններ բաց շուկայում* գործիքը այդքան էլ գործածական չէ: Վերջինիս կիրարկումը հնարավորություն կտա առաջին հերթին դիվերսիֆիկացված եղանակով արձագանքելու գնաճային տատանումներին՝ գործընթացը առավել նպատակային դարձնելով, և երկրորդ հերթին՝ խթան կհանդիսանա Հանրապետության տարածքում ֆինանսական շուկաների աշխուժացման, արդյունքում՝ տնտեսական ակտիվության:

Այնուամենայնիվ, երկարաժամկետ հեռանկարում գնաճային միտումների արդյունավետ ու նպատակային կառավարում ապահովելու տեսանկյունից պետք է դրամավարկային քաղաքականությունը ավելի մոտ բերել տնտեսության իրական հատվածին, ինչպես նաև ստեղծել նպաստավոր պայմաններ՝ արդյունքում ունենալու փոխկապակցված արժութային ու դրամավարկային քաղաքականություններ, հաշվի առնելով երկրի զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև համաշխարհային շուկայում տեղի ունեցող փոփոխությունները:

Գրականություն

1. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին», 29.08.1996:
2. «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2021 թվականի հունվար-դեկտեմբերին» և «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի հունվար-մարտին», վիճակագրական տեղեկագրեր:
3. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին, Գներ և սակագներ, Արտաքին և փոխադարձ առևտուր:
4. ՀՀ Կենտրոնական բանկ, գնաճի հաշվետվություններ, Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն 2019-2021թթ.:
5. https://www.cba.am/am/sitepages/default.aspx -ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջ:
6. https://armstat.am/am/ -ՀՀ Վիճակագրական Կոմիտե պաշտոնական կայքէջ:
7. https://www.fitchratings.com/research/sovereigns/fitch-affirms-armenia-at-b-outlook-stable-18-03-2022?fbclid=IwAR0nCxcgDamzohPQuCoYWPV3CtpovaOEs9kpjXJnNqBTaabMmALv4W3O6dE - Fitch Ratings միջազգային վարկանշային գործակալության պաշտոնական կայքէջ:

ՀՏԴ 659.1

Արմինե Սեյրանյան
Գավառի պետական համալսարանի
Տնտեսագիտական ֆակուլտետի
«Տնտեսագիտության» բաժնի
3-րդ կուրսի ուսանողուհի

Գիտական ղեկավար՝
Աստղիկ Հովեյան
էլ փոստ՝
astghikhoveyan@gmail.com

ԱՊՐԱՆՔԱՆԻՇԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բանալի բառեր: *Բրենդ, համքարություն, գովազդ, տարբերանշան, զարգացվածություն, սեփական ձեռագիր,հազորդագրություն, նախադրյալներ, ցուցանիշ*

Հոդվածում քննարկվել են դեռ հին ժամանակների բրենդների ձևավորման ընթացքը և ներկայումս ձևավորվող բրենդների նախադրյալները: Համեմատություն է կատարվել տարբեր երկրների և հայկական բրենդների ձևավորման միջև: Փորձել ենք պարզել բրենդի ձևավորման նախադրյալները և գտնել նոր բրենդներ Հայաստանում: Փորձել ենք պարզել, թե ինչ ռազմավարությամբ են շարժվում և ինչպիսի խնդիրներ կան Հայաստանում գործող և նորաբաց բրենդներում:

Армине Сейранян

ПРОЦЕССЫ РАЗРАБОТКИ ПРОДУКЦИИ В АРМЕНИИ

Ключевые слова. *Бренд, солидарность, реклама, логотип, разработка, собственный почерк, композиция, предпосылки, показатель*

В статье рассматривается процесс формирования брендов древних времен, предпосылки развития брендов в настоящее время. Было проведено сравнение «формирования армянских брендов» в разных странах. Мы попытались выяснить предпосылки для формирования бренда և найти новые бренды в Армении. Мы попытались выяснить, какой стратегии они придерживаются, какие проблемы есть у вновь открытых брендов, работающих в Армении.

Armine Seyranyan

PRODUCT DEVELOPMENT PROCESSES IN ARMENIA

Key words. *Brand, solidarity, advertising, logo, development, own handwriting, composition, prerequisites, index*

The article discusses the process of brand formation in ancient times, the prerequisites for the development of brands at the present time. A comparison was made of the "formation of Armenian brands" in different countries. We tried to find out the prerequisites for brand formation և to find new brands in Armenia. We tried to find out what strategy they follow, what problems the newly opened brands operating in Armenia have.

Ապրանքանիշը ԴՈՒՔ եք:
Ապրանքը այն է, ինչ դուք անում եք ուրիշների համար:
(Անդրես Պերես Օրտեգա)

Դեռևս Հին Հռոմում արտադրողները արտադրանքի վրա դնում էին սեփական դրոշմանիշը: Այս երևույթը հատուկ նշանակություն ձեռք բերեց այն ժամանակ, երբ առևտուրն ընդգրկեց ողջ Եվրոպան և տարածվեց դեպի Մերձավոր Արևելք: Դրոշմանիշը վկայում էր ապրանքի ինքնությունը, բացի այդ այն օգնում էր առավելապես անգիտակից բնակչությանը ճանաչելու անհրաժեշտ ապրանքները:[1]

Միջին դարերում շրջանառության մեջ հայտնվեցին նոր տեսակի ապրանքանիշեր՝ համքարության նշանները: Համքարությունը միևնույն արհեստով զբաղվող արհեստավորների միությունն է[2]: Յուրաքանչյուր համքարություն ուներ հեշտ ճանաչելի ապրանքանիշ կամ լոգոտիպ: Այս շրջանում ապրանքանիշերն ունեին նույն նշանակությունը, ինչ-որ Հին Հռոմում: Արդյունաբերական հեղափոխության ժամանակներում ապրանքային նշանը դարձավ ընկերությունների արդյունավետ ակտիվ: «Տարբերանշան» անվանումն ի հայտ է եկել 19-րդ դարի սկզբին տպագրության մեջ որպես լիգատուրա բառի հոմանիշ, քանի որ նշանակում էր երկու կամ ավել տպագրական տառատեսակի միավորների միացություն: Առաջացել է արտադրության զարգացման, ապրանքի արտահանման և մրցակցության ժամանակաշրջանում: 19-րդ դարի երկրորդ կեսին տարբերանշան էին անվանում ցանկացած կլիշե, որը հարկավոր չէր ամեն անգամ հավաքել:

20-րդ դարում տարբերանշան էին անվանում կազմակերպության կամ ապրանքի անվանման ուրվագիրը, կամ այն ներկայացնող պայմանական նշանը: Ներկայումս ոմանք տարբերանշանը համարում են ապրանքանիշի միայն բառային մասը, իսկ այլք՝ գրաֆիկական և տառատեսակային մասերը միասին:

Տարբերանշանը մեծ դեր ունի շուկայում ընկերության կամ ապրանքի նույնականացման համար: Գրանցված ապրանքանիշը ընկերությանը պաշտպանում է անազնիվ մրցակցությունից: Սպառողի ընկալմամբ տարբերանշանի կամ ապրանքանիշի առկայությունը այս կամ այն ապրանքի որակի երաշխիքն է: Առանց տարբերանշանի արտադրանքը կոչվում է անանուն:

Գոյություն ունեն բազմաթիվ ընկերություններ, որոնք արտադրում են նույնաբնույթ ապրանքներ/մատուցում միատեսակ ծառայություններ: Այս իրավիճակում մեծապես բարձրանում է գովազդի դերը, որը կայանում է հետևյալում՝ ապրանքը, ծառայությունը, կազմակերպությունը, ապրանքային նշանը դարձնել բրենդ:

Ուսումնասիրության արդյունքում ունենք 2022թ-ի Գովազդի տեսակների արդյունավետության ցուցանիշները, տոկոսներով՝



Գծապատկեր 1.**2022թ-ի գովազդային ցուցանիշներ,%**

և արդյունքում (գծապատկեր 1) տեսնում ենք, որ առավել արդյունավետ է սոցցանցերում իրականացվող գովազդի տեսակը՝ ըստ իրականացված հարցումների:

[1] *https://m.mamul.am/am/post/3570*
[2] *https://m.mamul.am/am/post/3570*

Բրենդը դա **ապրանքի, ծառայության, ընկերության, բիզնեսի տարբերակիչ կնիք է:** Այլ կերպ ասած, մենք կարող ենք ասել, որ դա այն անվանումն է, որով հայտնի է այդ ապրանքը (ծառայություն, ընկերություն, բիզնես) և որով այն ձեռք է բերում ինքնություն, ինչը նշանակում է, որ երբ այն անվանվում է, բոլորը հստակ գիտեն, թե ինչին է դա վերաբերում:

Ապրանքային նշանների վերաբերյալ մի շարք երկրներում գործող օրենսդրությունները, որպես կանոն, չեն սահմանում ապրանքային նշաների հասկացությունը:

Ավստրիայի օրենսդրությունը սահմանում է, որ ապրանքային նշաններ կարող են լինել այն պայմանական նշանները, որոնք ծառայում են ապրանքաշրջանառության մեջ մեկ ընկերության ապրանքներն ու ծառայությունները այլ ընկերությունների նմանատիպ ապրանքներից և ծառայություններից տարբերելու համար: Մեծ Բրիտանիայի օրենդրությունը սահմանում է, որ ապրանքային նշանը դա ցանկացած պայմանական նշանն է, որն ունի մեկ ընկերության ապրանքներն ու ծառայություններն մեկ այլ ընկերության նմամանատիպ ապրանքներից և ծառայություններից տարբերելու հատկանիշ:

ԱՄՆ օրեսդրությունը սահմանում է, որ ապրանքային նշանները դրանք ցանկացած բառերը, անունները, սիմվոլները կամ նշաններն են կամ դրանց ցանկացած համակցությունները, որոնք ճանաչվել և օգտագործվում են արտադրողի կամ վաճառողի կողմից իրենց ապրանքները անվանակոչելու համար և դրանք այլ արտադրողների կամ վաճառողների նմանատիպ ապրանքներից տարբերելու հատկություն ունեն:

«Ապրանքային նշանների մասին ՀՀ օրենքն»[1] այս առումով տարբերվում է այլ երկրներում գործող նույն ոլորտը կարգավորող օրենսդրություններից: Օրենքի 1-ին հոդվածը սահմանում է, թե որ նշանները կարող են որակվել որպես ապրանքային նշաններ: Համաձայն Օրենքի 1-ին հոդվածի՝ ապրանքային և սպասարկման նշանները (այսուհետ նաև՝ ապրանքային նշան) այն նշաններն են, որոնցով որևէ իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ապրանքները և ծառայությունները համապատասխանաբար տարբերվում են այլ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի նույնատիպ ապրանքներից և ծառայութուններից:[2]

Որպես ապրանքային նշաններ կարող են գրանցվել գրաֆիկական տեսքով ներկայացվող նիշերը, մասնավորապես՝

1) բառերը, անունները կամ կարգախոսները.

2) տառերը կամ թվերը.

3) նկարները, պատկերները կամ խորհրդանշանները.

4) եռաչափ պատկերները, մասնավորապես ապրանքի կամ դրա փաթեթավորման (տարայի) արտաքին տեսքը.

5) հոլոգրամմաները, գույները, գույների համակցությունները կամ կոմպոզիցիաներ.

6) ձայնային ազդանշանները.

7) սույն մասի 1-6-րդ կետերում թվարկված նիշերի ցանկացած համակցությունները:

Հայաստանում գործող 30 բիզնեսների (որոնք գտնվում են վերջին 10 տարիներին բացված և գործող բիզնեսների շարքերում) հարցումն արդյունքում պարզեցինք որ՝ ապրանքանիշի համար առանձնացված անուն ունեն 86,7%, մնացած 13,3%-ը չունեն անուն:Այն հարցին՝ստեղծել են, թե պատվիրել,100% պատասխաններում բոլորը ստեղծել էին իրեց բրենդի անունը:

Ուշագրավ է թե ինչ սկզբունքով են ընտրել անունը:

Դիտարկենք գծապատկեր 2-ը՝ 30 բրենդների 10%-ը անունը դրել են սեփական անունով կամ անունի մի փոքր ձևակերպած տարբերակը:10%-ը դրել են երեխաների անունով, 21%-ը քաղաքի անունով, 28%-ը ներառել են մարքթինգային գործիք, իսկ 31%-ը՝ անունը դրել են ելնելով ապրանքի կամ ծառայության բնույթից:

[1] *https://www.arlis.am/documentview.aspx?docid=69110*

[2] *https://brandon.am/blog/category/brending*



Գծապատկեր 2. **30 բրենդների անունների ընտրման տեսակներ**

Բրենդերը կարելի է առանձնացնել վաճառված ապրանքների, գների սեգմենտի և հետագա զարգացման քաղաքականության շնորհիվ: Բոլոր առկա կորպորացիաները բաժանվում են հետևյալ տեսակների, ինչպիսիք են `

1. **«Ընտանիք»** -համապատասխան կատեգորիայի արտադրանք՝ օրինակ, օծանելիք և կոսմետիկա:
2. **«Սպիտակ»** - բրենդի արտադրած ապրանքները վաճառվում են բացառապես խանութների ցանցում:
3. **«Պայքար»** - այս տեսակի ապրանքանիշերը առավելագույն ծախսերը ծախսում են PR- ի ապրանքների առավելագույն վաճառքի ժամանակ:
4. **«Անձրևանոց»** - ապրանքանիշի ճանաչումը թույլ է տալիս վաճառել նույն ապրանքը տարբեր անուններով:
5. **Համատեղ** - երկու հայտնի արտադրողների միություն, որոնք միասին ստեղծում են մեկ ապրանք:
6. **Ընդլայնելով** -այն, որ նման բրենդի կանոնադրության մեջ ցանկություն է պարբերաբար ավելացնել մասնաճյուղերի քանակը և արտադրանքի ծավալը:

Բրենդի ձևավորման շատ կարևոր պայման է տարբերանշանի(լոգո)-ի առկայությունը:

Տարբերանշան կամ **պատկերանիշ, լոգոտիպ** (կրճատ **լոգո**) (հունարեն բառ գումարած դաջվածք, տպված), կազմակերպության կամ ապրանքի լրիվ կամ կրճատ անվանման ինքնօրինակ ուրվագիրը:

Հարցման արդյունքում պարզեցինք,որ 2022թ-ին գործող 30 բիզնեսների 90%-ն ունեն լոգո,իսկ 10%-ը ոչ:90% ունեցածների 86,7% անձամբ են ստեղծել,իսկ 13,3% պատվիրել են:Պատվիրելու



դեպքում մի մասը վճարել են 30,000 դրամի չափով,իսկ մյուս մասը պատվիրել են, բայց չեն վճարել ելնելով որոշ պայմանագրերից:

Գծապատկեր 3. Հաջողվածության , ճանաչվածության մակարդակը, %

Գծապատկեր 3-ում երևում է, որ 30 բրենդների 6,70% կարծում են, որ ճանաչված և հաջողված չեն, 76.70%-ը կարծում են, որ մասամբ եմ ճանաչված և հաջողված,իսկ 6,70% բրենդները իրենց համարում են ճանաչված և հաջողված:

Հարցման արդյունքում փորձեցինք տեսնել թե ինչպես է գնահատվում բրենդինգի գործունեությունը Հայաստանում և ունեցանք այսպիսի արդյունք՝



Գծապատկեր 4 Գնահատական, %

Ելնելով գծապատկեր 4-ից նկատում ենք, որ բրենդինգի գործունեությունը Հայաստանում գնահատվում է 3% վատ,47 % բավարար և 50 % լավ:

Բրենդ ձևավորելու նախադրյալները Հայաստանում գնահատվում է 53,3% լավ, 43,3% բավարար և 3,4% վատ:

Հաղորդագրությունների հիմնական մասում ասվում է «Խրախուսենք հայկականը»,մյուս մասում ասվում է «Բարձր որակ», «Մենք Լավագույնն ենք», «Գեղեցիկ ապրանքային տեսք և բարձր որակ», «Թող ձեր երազանքները բարձր թռչեն», «Միշտ հաղթանակած» և այլն:

Հարցման ընթացքում շոշափվեցին մի քանի հայտնի Հայկական բրենդներ, որոնցից կառանձնացնենք Alex Textil,Elina,Armenia,Time Armenia,Grand Candy և այլն:

Առանձնահատուկ ուշադրություն դարձրեցինք այն հարցին, թե ինչպիսի պլաններ ունեն հետագա գործունեության համար: Պատասխանների հիմնական մասում ասվում էր այն մասին, որ բրենդը միջազգային ճանաչում ստանա: Կային նաև այսպիսի պատասխաններ՝ նորարարական լուծումներ փնտրել բիզնեսի առաջխաղացման համար, խանութներ բացել Հայաստանյան տարբեր մարզերում,կազմակերպել աշխատանքը տնից, կապված աշխարհաքաղաքական իրավիճակից,բրենդը զարգացնել այնքան որպեսզի 80% ճանաչում ապահովվի,կազմակերպել նաև օնլայն աշխատանք,վերաբրենդավորվել և այլ պատասխաններ:

Առաջարկություններ

1. Շատ բիզնեսի սեփականատերեր, անձնական բրենդ զարգացնելով, բավարար ուշադրություն չեն դարձնում իրենց բիզնեսի բրենդինգի հատկանիշներին: Ընտրում են այլ գույներ, տառատեսակներ, գրաֆիկա և հաղորդակցման ոճ: Սա կարող է շփոթեցնել ձեր լսարանին: Ձեր անձնական բրենդը պետք է համակարգված լինի ձեր բիզնեսի դիրքի հետ:

2. Ձեր պատմությունը ձեր բիզնեսի առավել յուրահատուկ առանձնահատկությունն է: Ձեր պատմությունը դարձրեք ձեր անձնական բրենդի մի մասը:

3. Ձեր պատմության հետ ծանոթանալը թույլ կտա մարդկանց զգալ իրենց նույն ալիքի վրա ձեզ հետ: Դուք կարող եք ձեր պատմությունը տեղադրել սոցիալական ցանցերի էջերում, ստեղծել շնորհանդես, գիրք և շատ այլ բաներ:

4. Երբ բացում եք ձեր սիրտը, դուք ոգեշնչում եք մարդկանց և նրանց հետ կապվում եք ավելի խորը: Կիսվեք իրական էմոցիաներով: Թող մարդիկ իմանան ձեր արժեքների մասին: Խոսեք այն մասին, թե ինչն է ձեզ համար կարևոր:

5. Արժեքավոր առաջարկությունը կարճ բացատրությունն է այն բանի, թե ով եք դուք, ինչ եք անում և ինչու է ձեր որոշումը լավագույնը:Հստակ, պարզ և հասկանալի: Եթե դուք կարողանաք ամեն ինչ ճիշտ ձևակերպել, ապա արժեքավոր առաջարկությունը կդառնա հզոր ուժ հաճախորդներին գրավելու համար:Ունեցեք արժեքավոր առաջարկություն:

6. Իրականացրեք հետազոտություն և հրապարակեք արդյունքները:

7. Զարգացրեք ձեր սեփական ձեռագիրը:

8. Աճը հասցրեք նոր մակարդակի:

9.Տարբերվեք մյուսներից, դարձեք ավելի բարձր մակարդակի պրոֆեսիոնալ, ով չի ունենա հաճախորդի պակաս:

10. Բրենդները զարգացրեք այնքան, որ ունենաք միջազգային ճանաչում,և նպաստեք ամբողջ աշխարհում Հայկականի տարածմանն ու ճանաչմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրեցինք հին ժամանակների բրենդների ձևավորման ընթացքն,տեսանք թե ինչ աստիճանակարգով է այն հասել ներկայիս արդյունքներին: Ներգրավված հարցումն ցույց տվեց, թե ինչպիսին է բրենդինգի գործունեությունը Հայաստանում, ինչպիսի նախադրյալներ և նորարարություններ կան բրենդինգի ոլորտում: Պարզեցինք, թե զովազդի որ ձևն են կիրառում արդի ժամանակներում: Տեսանք թե ինչպես է ձևավորվում բրենդի անունը, ինչպիսի տարբերակներ են կիրառում այն ընտրելիս: Պարզեցինք, թե քանի տոկոս բրենդներն ունեն լոգո: Բացահայտեցինք մի քանի նոր հայկական բրենդներ, որոնք ճանաչում են ստացել Հայաստանում: Եվ իմացանք, թե արդի գործող բրենդներն ինչպիսի պլաններ ունեն հետագա գործունեության համար:

Գրականություն

1. Ալան Դիբ-«1-էջանոց մարքեթինգային պլան», «Էդիթ Պրինտ» հրատարակչություն, էջ 117-120
2. Լիլիթ Շաքարյան-«Բրենդի կառավարում», «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ» հրատարակչություն,գլուխ 1 էջ 7:
3. https://brandon.am/blog/category/brending
4. https://www.arlis.am/documentview.aspx?docid=69110
5. https://m.mamul.am/am/post/3570

ՀՏԴ 656,1

Мариам Дарбинян
Российско- Армянский университет.
darbinyan.mariam@student.rau.am

ЭКОНОМИЧЕСКАЯ ЭФФЕКТИВНОСТЬ ИСПОЛЬЗОВАНИЯ ПРЯМЫХ И СМЕШАННЫХ ПЕРЕВОЗОК ГРУЗОВ

Ключевые слова: *транспортная логистика, прямые перевозки, смешанные перевозки, прямые-смешанные перевозки.*

Повышение эффективности организации грузоперевозок является одним из главных направлений повышения эффективности и конкурентоспособности экономики страны. Использование логистических методов управления в сфере организации грузоперевозок позволяет сихронизировать взаимодействие и оптимизировать взаимоотношение между всеми звенями в логистических цепях поставок.

Մարիամ Դարբինյան

ԲԵՌՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ՄԻՋՄՈԴԱԼ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ *տրանսպորտային լոգիստիկա, ուղղակի փոխադրումներ, միջմոդալ փոխադրումներ, ուղղակի-բազմամոդալ փոխադրումներ:*

Բեռնափոխադրումների կազմակերպման արդյունավետության բարձրացումը երկրի տնտեսության արդյունավետության և մրցունակության բարձրացման հիմնական ուղղություններից է: Բեռնափոխադրումների կազմակերպման ոլորտում լոգիստիկայի կառավարման մեթոդների օգտագործումը թույլ է տալիս սինխրոնիզացնել փոխգործակցությունը և օպտիմալացնել հարաբերությունները լոգիստիկ մատակարարման շղթայի բոլոր օղակների միջև:

Mariam Darbinyan

ECONOMIC EFFICIENCY OF THE USE OF DIRECT AND MIXED CARGO TRANSPORTATION

Key words: transport logistics, direct transportation, multimodal transportation, direct-multimodal transportation.

Increasing the efficiency of the organization of cargo transportation is one of the main directions for increasing the efficiency and competitiveness of the country's economy. The use of logistics management methods in the field of organizing cargo transportation allows you to synchronize the interaction and optimize the relationship between all links in the logistics supply chains.

Введение.

Сфера транспорта играет важную роль в развитии экономики страны, так как обеспечивает своевременную транспортировку товаров между организациями различных отраслей экономики страны и обеспечивает условия для нормального развития производства и обращения, содействует развитию межрегиональных связей. От работы транспорта во многом зависит эффективная деятельность торговых организаций и производственных предприятий, так как прямым образом влияет на ритмичность выполнения графиков деятельности в этих организациях. Рациональное использование транспортных средств позволяет более оперативно осуществлять доведение многих миллионов тонн товаров от производства до конечных потребителей и сократить расходы на перевозку товаров, которые занимают значительную долю в общих издержках.

Перевозка товаров осуществляется железнодорожным, автомобильным, водным, воздушным и гужевым транспортом.

Автомобильный транспорт используют для перевозки грузов преимущественно на короткие расстояния. Для этих целей служат автомобили, автомобили-тягачи, прицепы и полуприцепы.

Для перевозки товаров на длинные расстояния используют железнодорожный транспорт.

Перевозка товаров также осуществляется речным и морским транспортом, которые играют особенно важную роль для снабжения северных, восточных и других отдаленных районов.

Сравнительно небольшую долю в общем, грузообороте занимает воздушный транспорт, используемый для транспортирования срочных грузов, а также для доставки товаров в труднодоступные районы.

Для перевозки товаров на не большие расстояния используют гужевой транспорт.

Транспортная система - совокупность транспортно-логистической сети и системы администрирования, формируемая компанией для реализации своей обеспечивающей стратегии (тактики).

Перевозки грузов являются важной и неотъемлемой частью мировой экономики, благодаря которой осуществляется перемещение материального потока через национальные границы стран и обеспечивается обмен товарами и услугами по всему миру.

Последнее время многие предприятия и организации уделяют все больше и больше внимания транспортировке как ключевой логической функции предприятия. Результатом этой работы является снижение затрат или снижение темпов роста затрат по сравнению с результатами прошлых лет. Значительно больше внимания уделяется опыту организации логистических операций зарубежных фирм.

Материал и методы.

Транспортная логистика – новая основополагающая дисциплина в высших транспортных учебных заведениях всех уровней обучения, которая органически дополняет цикл <<Рыночных >> фундаментальных дисциплин: <<Маркетинг>>, << Рынок транпортных услуг и транспортной техники >> и др. Появление << Транспортной логистики>> заставило в корне пересмотреть такие традиционные учебные курсы, как прикладная математика, информатика, управление отраслью и предприятием, технология перевозных процессов, организация коммерческой работы, отраслевая экономика и др. Транспортная логистика ни в коей мере не подменила указанные курсы, она заложила принципиально новый фундамент и интегральную и глобальную парадигмы, на которых должны строиться современное предпринимательство и бизнес, ибо логистика- технология будущего.

Главная цель логистического управления состоит в организации необходимых синергических связей (древнегреч. synergia - сотрудничество, содружество) для придания системе эмерджентных свойств (англ, emergence - возникновение, появление нового), то есть таких новых свойств и возможностей организованного целого, которыми не обладают составляющие систему части по отдельности. Наличие синергических связей позволяет увеличивать общий эффект до величины большей, чем сумма эффектов составляющих целое частей, если они действуют независимо друг от друга.

В системе логистического управления синергические связи охватывают все контакты между поставщиками и потребителями с точки зрения выполнения заказов. Услуга клиенту становится результатом объединенных усилий составных частей единого целого. Отличительной особенностью таких усилий является их взаимозависимость, поэтому они суммируются не арифметически, а алгебраически, то есть «работают» друг на друга и на конечный системный эффект, а не на оптимизацию отдельных собственных частных результатов. Рост одних издержек компенсируется сокращением других. Например, повышение расходов на хранение и поддержание запасов возмещается снижением затрат на всю систему товародвижения. Товарораспределительная система с большим количеством складов имеет более высокие стоимость запасов и издержки хранения, чем система с меньшим количеством складов при прочих равных условиях. Однако получаемая при этом экономия на магистральных перевозках и снижение или отсутствие дефицита в запасах могут компенсировать дополнительные складские расходы.

Достоверная информация об оценках объема сбыта также влияет на потребность в материалах и транспортных средствах, на объемы запасов, обеспечивает стабильность выполнения заказов, снижение продолжительности цикла их осуществления и ритмичность отгрузки товаров. В результате - снижается стоимость услуги и повышается конкурентоспособность транспортной организации.

Логистический подход к управлению экспедиторскими и агентскими транспортными фирмами привел к необходимости более глубокого анализа особенностей их работы. С одной стороны это привело к слиянию их капитала и части транспортного капитала с промышленным и торговым, следствием чего явилась передача экспедиторских и агентских операций транспортным подразделениям экспортно-импортных отделов промышленных предприятий. С другой стороны, происходит передача всего комплекса транспортных операций специализированным экспедиторским фирмам. Это, в первую очередь, относится к предприятиям нефтехимии, элеваторной, маслобойной и других отраслей промышленности, имеющим разветвленную владельцами собственного подвижного состава (специализированных вагонов, автофургонов, цистерн), причалов, элеваторов и погрузочно-разгрузочных устройств в портах. Примером такой комплексной фирмы является фирма «Лексау-Шарбо», которая специализируется на перевозках продукции германских химических комбинатов собственным подвижным составом с перевалкой через

принадлежащие ей причалы. Фирма контролирует производственный процесс, следит за движением вагонов, автомобилей и контейнеров, в случае необходимости корректирует графики перевозок, следит за наличием страховых резервов тоннажа, вагонов и контейнеров.

Следует отметить, что в последние годы транспорт, обладая колоссальным стратегическим ресурсом, выполняет базовую функцию в потоковых процессах.

Сегодня как никогда актуальны задачи увеличения объемов перевозок, повышения эффективности деятельности многочисленных отечественных грузовых и пассажирских перевозчиков и т.д.

В данной работе рассмотрены именно перевозки грузов, их эффективность и актуальность в нашей жизни.

Различают прямые, смешанные и прямые- смешанные грузоперевозки.

Так как Армения и Арцах находятся в транспортно блокаде и не функционируют основные транспортные коридоры Армении, применяются смешанные грузоперевозки при экспортировании товаров.

Прямые грузоперевозки – это популярный способ доставки, который позволяет сэкономить время и обеспечивает сохранность груза. Перевозки, выполняемые таким образом, сокращают расходы на доставку и характеризуются высокой надежностью. Ими пользуются предприятия, различные компании и частные лица.

Прямые грузоперевозки предполагают использование одного вида транспорта. Это их главная особенность, которая повышает надежность доставки ввиду того, что груз не перемещают дополнительно, он не нуждается в промежуточном хранении на складе, поэтому риск его порчи или хищения снижается практически к нулю. У сотрудников транспортной компании доступ к грузу минимальный. Перевозить этим способом можно различные категории товаров, включая опасные, негабаритные и живые грузы, товары с ограниченным сроком хранения или особыми требованиями к доставке.

Среди основных преимуществ прямых перевозок можно выделить следующие:

· Минимальное время доставки. Груз получают у отправителя и быстро перевозят получателю. В логистической цепи не предусмотрен завоз груза на терминалы, погрузка и выгрузка на разные виды транспорта, что позволяет оптимизировать сроки доставки товара, уменьшает количество остановок и задержек в дороге.

· Минимальное перемещение грузов снижает риск их повреждения или хищения. В прямых грузоперевозках используют минимум циклов погрузки и разгрузки товаров: их загружают на транспорт у отправителя, а разгружают у грузополучателя. Это особенно важно для хрупких, опасных и ценных грузов.

· Дополнительные услуги грузчиков не требуются, не нужно промежуточное хранение товара, которое применяют при мультимодальных грузоперевозках. Это позволяет сократить расходы на перевозки грузов прямыми рейсами.

Прямые перевозки грузов выполняют преимущественно наземным и воздушным транспортом. Выбор конкретного транспортного средства обусловлен типом и объемом груза, требованиями к сроку доставки, расположением начальной и конечной точки.

Для оптимизации транспортного процесса иногда бывает необходимо использовать смешанные перевозки, в которых могут участвовать более двух видов транспорта. Такие грузоперевозки можно разделить на: мультимодальные, интермодальные и раздельные перевозки. В заключенном договоре смешанной грузоперевозки прописываются права и взаимные обязанности транспортного оператора и грузоотправителя. Данный договор должен иметь документальное соглашение, которое является гарантией исполнения грузоперевозки.

Мультимодальная грузоперевозка – это международная смешанная транспортировка груза из одной страны в другую. В данном виде перевозки оператор – грузоперевозчик отвечает за организацию, осуществление и безопасность всего перевозочного процесса. Мультимодальный транспортный оператор разрабатывает всю транспортную схему перевозки и контролирует ее исполнение на всех этапах. Данная система работы позволяет заключить и оформить единый договор мультимодальной смешанной перевозки.

Международная мультимодальная схема смешанной перевозки должна быть выгодна отправителю груза. Оператор также заинтересован в получении прибыли. Обязательными условиями перевозки являются высокое качество, безопасность, и сроки. Эти вопросы решаются уже в начале планирования. Выбирается оптимальный маршрут, виды транспорта, способ упаковки или тара для груза. Заключаются договора с предприятиями – субподрядчиками.

На всех этапах перемещения грузов, мультимодальные перевозки контролируются современными электронными системами мониторинга. Информация о движении груженых транспортных средств может опережать, сопровождать или завершать транспортирование груза. Систематический обмен данными необходим для качественной работы всей логистической транспортной цепи.

Отличительная особенность интермодальных грузоперевозок – использование в транспортном процессе сторонних предприятий. Количество транспортных договоров зависит от числа участников всего транспортного процесса.

Признаки раздельной перевозки – несколько транспортных договоров, последовательность взаимных действий участников транспортного процесса, отсутствие единого тарифа перевозки.

Степень эффективности смешанных перевозок значительно зависит от использования передовых современных технологий. Очень важными моментами смешанных перевозок являются их умелая организация и технология перевозочного процесса. Координация в слаженной работе всех звеньев транспортной цепочки зависит от развития инфраструктуры.

Транспорт удовлетворяет одну из важнейших потребностей человека — потребность в перемещении. Однако практически ни один вид транспорта (кроме, пожалуй, автомобильного, и то не всегда) не может самостоятельно обеспечить полный цикл перемещения по схеме «от двери до двери» или «от дома до дома». Такое перемещение возможно лишь при четком взаимодействии отдельных частей транспортного комплекса. Организация работы такого комплекса, как единая транспортная система, является одновременно и сложной задачей, и насущной для экономики страны потребностью, которая соответствует интеграционным тенденциям социально-экономического развития человечества, достижениям научно-технического прогресса и стратегическим интересам страны.

При смешанных перевозках доставка груза осуществляется последовательно несколькими видами транспорта с передачей груза в пунктах перевалки с одного вида транспорта на другой.

Развитие сферы транспорта и повышение уровня эффективности организации грузоперевозок прямым образом влияют на эффективность деятельности отдельных предприятий и экономики страны в целом.

В Пекине 14-15 мая лидеры 28 стран мира принимали участие в саммите "Один пояс - один путь", посвященном инициированному Китаем проекту нового "Шелкового пути" (НШП). О начале этого проекта председатель КНР Си Цзиньпин объявил осенью 2013 года. Его цель - создать сеть автомобильных и железных дорог, морских путей и трубопроводов через Европу, Африку и Азию, которые соединят разные точки мира с Китаем. КНР нужны сырье и энергоресурсы, а в обратном направлении будут идти китайские товары.

Специально для финансирования проектов НШП Пекин учредил одноименный фонд объемом порядка 50 млрд долларов. Еще около 100 млрд долларов планируется привлечь через созданный по инициативе Китая Азиатский банк инфраструктурных инвестиций (AIIB).

Амбициозный проект КНР сопровождается всеобъемлющей коммуникационной стратегией. Китайские власти подчеркивают, что к проекту могут присоединиться все желающие и он сулит выгоду всем участникам.

Участие в данном проекте экономически целесообразно для нашей страны, так как может стать участником транспортных путей “Север-Юг” и “Юг-Запад”. Ожидаемый объем транзитного грузооборота за год может составить 160-180 млн. т.

Литература.

1. <<Логистика>>: Ю.М. Неруш, 4-е издание, переработанное и дополненное, 2006г Москва
2. << Транспортная логистика>>, Л.Б. Миротина, 2005г Москва
3. <<Логистика>>, В. И. Степанов, 2006г Москва
4. <<Логистика>>, В. В. Дыбская, Е. И. Зайцев, В.И. Сергеев, А. Н. Стрелигова, 2011г Москва
5. https://otherreferats.allbest.ru/transport/00246830_0.html
6. https://www.freepapers.ru/98/jekonomicheskaya-jeffektivnost-ispolzovaniya-pryamyh-smeshannyh/243771.1640732.list3.html
7. https://otherreferats.allbest.ru/transport/00034071_0.html
8. http://bestlogistika.com/smeshannye-gruzoperevozki/
9. https://www.dissercat.com/content/povyshenie-effektivnosti-smeshannykh-perevozok-vneshnetorgovykh-gruzov
10. http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_30650/43c05fe2f04b5ba1334df551118df2624ad16b3b/
11. https://unece.org/DAM/trans/publications/Transport_Belarus_2013r.pdf

ՀՏԴ 338.48

Թամարա Համբարձումյան
ԵՊՀ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, Երկրաբանություն, 3-րդ կուրս
E-mail: Hambardzumyant2001@mail.ru

Մարիամ Տաշյան
ԵՊՀ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ, Սերվիս, 3-րդ կուրս
E-mail: Mariam.tashyan@mail.ru

Գիտական ղեկավար՝
է.գ.թ. դոցենտ ***Վահան Մանուկյան***
E-mail: v.manukyan@ysu.am

ԳԵՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ (ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Բանալի բառեր՝ գեոպարկ, գեոտուրիզմ, դեստինացիա, զբոսաշրջություն:

Աշխատանքում ներկայացված են գեոտուրիզմի զարգացման նախադրյալները Վայոց Ձորի օրինակով: Նպատակը մարզում առկա գեոտուրիստական ռեսուրսների ուսումնասիրությունն ու վերլուծությունը, դրանց երկրաբանական առանձնահատկությունների բացահայտումը և վերջիններիս զբոսաշրջային գրավչության ներկայացումն է: Արդյունքում ուսումնասիրվել են գեոպարկերը ու կազմվել է զբոսաշրջային երթուղի: Հաշվի առնելով այս հանգամանքը առաջարկում ենք ավանդական զբոսաշրջության ձևերից անցում կատարել զբոսաշրջության արդի ձևերին՝ հենվելով մարզի գեոտուրիստական ռեսուրսների վրա:

Tamara Hambardzumyan, Mariam Tashyan

PRECONDITIONS FOR THE DEVELOPMENT OF GEOTOURISM IN ARMENIA (BY THE EXAMPLE OF THE PROVINCE VAYOTS DZOR)

Key words: Geopark, geotourism, destination, tourism.

There are elucidate the preconditions for the development of geotourism on the example of the province Vayots Dzor in the article. The main goal is to study and analyze the geotourist resources existent in the province, to discover their geological features, and to present their attraction as a tourist destination . As a result, the geoparks were studied and a tour was created. Taking into consideration this circumstance, we suggest to make a transition from traditional tourism to modern tourism, relying on the geotourism resources of the province.

Тамара Амбардзумян, Мариам Ташян

ПРЕДПОСЫЛКИ ДЛЯ РАЗВИТИЯ ГЕОТУРИЗМА В АРМЕНИИ (НА ПРИМЕРЕ ВАЙОЦДЗОРСКОЙ ОБЛАСТИ)

Ключевые слово: Геопарк, геотуризм, дестинация, туризм.

В статье представлены предпосылки развития геотуризма на примере Вайоцдзорской области. Цель: изучить и проанализировать имеющиеся в регионе геотуристические ресурсы, выявить их геологические особенности и представить их туристическую привлекательность. В результате

были изучены геопарки и создан туристический маршрут. Учитывая это обстоятельство, мы предлагаем осуществить переход от традиционных форм туризма к современным формам туризма, опираясь на геотуристические ресурсы региона.

Ներածություն: Գեոտուրիզմը բնորոշվում է որպես տուրիզմի տեսակ, որը հնարավորություն է տալիս ճանաչել ֆիզիկաաշխարհագրական, երկրաբանական, կենսաբանական օբյեկտները, էկոհամակարգերը, պատկերացնել նրանց տեղն ու դիրքը երկրի մակերևույթի վրա, ծանոթանալ այդ օբյեկտների հատկանիշներին և պատկերացում կազմել նրանց տարածաժամանակային փոփոխությունների, երկրաբանական պրոցեսների մասին [1]: Մեր երկրում գեոտուրիզմը զարգացման լայն հնարավորություններ ունի, և աշխատանքում ներկայացրել ենք ՀՀ-ում գեոտուրիզմի զարգացման նախադրյալները Վայոց Ձորի մարզի օրինակով:

Խնդրի դրվածք: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և վերլուծել Վայոց Ձորի մարզում գեոտուրիզմի նախադրյալները, բացահայտել դրանց երկրաբանական առանձնահատկությունները և ուսումնասիրելով գեոպարկերը՝ ներկայացնել դրանց զբոսաշրջային գրավչությունն ու կազմել զբոսաշրջային երթուղի:

Բուն հետազոտություն: Ըստ Ջ. Նիտայի և Ու. Միգա-Պիատեկի՝ ժամանակակից գեոտուրիստների հետաքրքրությունների կատեգորիաներն են.

1) գեոմորֆոլոգիական կառույցները (ժայռեր, քարանձավներ, հրաբուխներ, լճեր),

2) տարբեր երկրաբանական և տեկտոնական ձևեր (տարբեր տեսակի օգտակար հանածոներ, հնէաբանական գտածոներ),

3) երկրաբանական պրոցեսներ (երկրաշարժեր՝ դրանց հետևանքները, գեյզերների ժայթքումները, ծովի մակընթացությունները),

4) մարդածին ձևափոխված լանդշաֆտներ (բացահանքերի կառուցում),

5) երկրաբանական և ինժեներական գործունեության արդյունքներ (թունելի կառուցում, հանքարդյունաբերական գործընթաց),

6) մշակութային ժառանգության տարրերն ու առարկաները (քարե քաղաքներ, պալեոլիթյան, մեզոլիթյան և նեոլիթյան մշակույթների գործիքներ),

7) ներկայացված գտածոների ցուցադրման ձևերը (երկրաբանական և հնէաբանական թանգարաններ) [2]:

Հետաքրքրությունների ցանկին կարող ենք ավելացնել նաև **գեոպարկերը**: Գեոպարկերն աշխարհագրական տարածքներ են, որոնց հիմքում առանձնահատուկ տեսարժան և երկրաբանական ժառանգությունն է: Զուգորդվելով պատմական, հնագիտական, մշակույթային բաղադրիչներով՝ գեոտուրիզմի հեռանկարային զարգացումը լրացուցիչ խթան կլինի մասնավոր ձեռներեցության և տնտեսության կայուն զարգացման համար: Գեոպարկերը հանդիսանում են միակ, միասնական աշխարհագրական տարածքները, որտեղ միջազգային կարևորություն ունեցող բացառիկ երկրաբանական օբյեկտները և լանդշաֆտները կառավարվում են հետազոտական, պահպանման, կրթական և կայուն զարգացման ամբողջական հայեցակարգով՝ ընդգրկելով տեղական համայնքների ուժերն ու հնարավորությունները [3]:

Վերոնշյալ բոլոր հետաքրքրություններն առկա են Վայոց Ձորի մարզում, որով էլ բացատրվում է մարզի ընտրությունը: Բացի այդ, 2021թ. ՀՀ ԳԱԱ-ի կողմից կազմված «ՀՀ երկրաբանական վտանգների գեոպարկի ստեղծման նախադրյալները» գիրք-ատլասում ընդգրկված ու բացահայտված է հենց այս մարզի երկրաբանական առանձնահատկությունները, այդ թվում՝ գեոպարկերը:

Տեղայնացնենք առանձին գեոտուրիստական հետաքրքրությունները Վայոց Ձորի մարզում ու ներկայացնենք դրանք՝ զբոսաշրջային գրավչության տեսանկյունից:

Վարդենյաց լեռնանցք

Տարածաշրջանի և տարածքի երկրաբանական կառուցվածքը ներկայացված է ստորին

պալեոցենի կրաքարերով, գրավելիտներով, ավազաքարերով և վերին էոցենի կոնգլոմերատներով, ավազային կրաքարերով և գրավելիտներով՝ ծածկված պլիոցենի հասակի բազալտներով և չորրորդական ու ժամանակակից էլուվիալ, դելուվիալ-կոլուվիալ, պրոլուվիալ խճային, խճավազային, կոպճային, ավազակավային և կավավազային գոյացումներով [3]:

Տարածքի երկրաբանական նկարագիրը փաստում է զբոսաշրջային գրավչության բազմազանությունների մասին: Բացի այդ, այստեղ է գտնվում Օրբելյան քարավանատունը (իջևանատուն), որը կառուցվել է Վարդենյաց լեռնանցքի հարավային հատվածում՝ Սելիմ լեռան վրա, ունի ծովի մակարդակից 2410 մ բացարձակ բարձրություն: 1332 թ. իշխան Չեսար Օրբելյանի միջոցներով կառուցված լինելով՝այն ի թիվս նման մի շարք այլ շինությունների որպես իջևանատուն է ծառայել Մետաքսի ճանապարհի՝ Հայաստանով անցնող առևտրականների համար [5]: Հայտնի է, որ Մարկո Պոլոն անցել է այս տարածքով և նկարագրել է, թե ինչպես էին հայերը ապրում դժվարանցանելի լեռների մեջ:

Այսպիսով. տվյալ դեստինացիան՝ իր հարուստ պատմությամբ, տարատեսակ ավանդույթներով (կապված անվան առաջացման հետ) [6], երկրաբանական տարրերի բազմազանությամբ, հանդես է գալիս որպես մրցակցային սուբյեկտ:

Վայոցսար

Վայոցսար հրաբուխը գտնվում է Վայոց Ձորի մարզում՝ Հերհեր և Մալիշկա գետերի միջև, Կարմրաշեն գյուղից 3 կմ հարավ-արևմուտք: Հրաբուխն առանձնանում է խարամային կոնի (1600 մ հիմքի տրամագծի և 330 մ հարաբերական բարձրությամբ) հիանալի պահպանվածությամբ: *Վայոցսար* հրաբուխի ծավալային լավային ժայթքման արդյունքում ձևավորվել է բավականին ընդարձակ՝ 70-75 կմ² մակերեսով լավային հոսք, հզորությունը տատանվում է 2-ից 30 մետրի սահմաններում: Վայոցսարը հիանալի պահպանված խոշոր չափսերի մոնոգեն հրաբուխ է (խարամային կոն), ունի 2586.3 մ բացարձակ բարձություն:

Հրաբխային մարմնի վրա առկա են ոչ խորը ուղղահայաց բացվածքներ (գծային ձորակներ, բարրանկոսներ), որոնք տարածվում են խառնարանից դեպի հիմքը: Բարրանկոսներն առաջացել են ջրային հոսքերի էրոզիոն ակտիվության հետևանքով: Կոնը կազմված է հիմնականում լապիլների չափայնության փխրուն խարամներից: Հրաբխի հյուսիսային մասում առկա են մի քանի ոչ մեծ խարամային ավազների բացահանքեր, որտեղ արտահայտված է խարամների շերտայնություն՝ կապված ստրոմբոլիան տիպի էքսպլոզիվ ժայթքումների իմպուլսների հետ: Կոնի լանջերին արտահայտված են համակենտրոն աստիճանաձև հատվածները, որոնք արտացոլում են կոնը կազմող փխրուն, ոչ կոնսոլիդացված նյութի գրավիտացիոն նստեցումները: Խարամային կոնի հիմքի հարավարևմտյան մասում տեղակայված են հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք ձգված բեկորային գլանաձև լավային էքստրուզիաներ, որոնք խցանել են լավաների արտավիժման հրաբխային ճեղքերը, որտեղից սկիզբ են առնում 2 գեներացիաների լավային հոսքերը: Երկու փուլերի վերջում ճեղքի լայնությամբ հոսել է 700 մ երկարությամբ և 300 մ լայնությամբ (հզորությունը հասնում է 20 մ) ոչ մեծ լավային հոսք: Լավային գլանի հյուսիսարևմտյան մասում առկա են մի խումբ փոքր բլրակներով արտահայտված օքսիդացված լավաներ, խարամներով և լապիլներով: *Երևան-Մեղրի* ավտոմայրուղու *Մալիշկա-Վայք* հատվածն անցնում է լավային հոսքի միջով, այստեղ կարելի է տեսնել լավային հոսքի կտրվածքը և բլոկային բնույթը [3]:

Զբոսաշրջության տեսանկյունից տեղանքը կարող է օգտագործվել քայլարշավների, լեռնագնացության կամ ֆոտո-տուրերի համար: Ընդ որում, Վայոցսարի գագաթին կա մատուռ, որը նույնպես մեծ հետաքրքրություն կարող է առաջացնել զբոսաշրջիկների շրջանում [7]:

Այսպիսով, դեստինացիան իր բնական-երկրաբանական ու պատմամշակութային ռեսուրսներով հանդերձ հանդիսանում է հզոր խթան գեոտուրիզմի զարգացման համար:

Ջրովանք

Ջրովանքը գտնվում է Արփա գետի միջին հոսանքի ավազանում: Երկրատեղանքը հասանելի է

ամենագնացներով, եղանակը բարենպաստ է գարնան, ամռան, աշնան ամիսներին: Երկրատեղանքի մերկացումը լավ պահպանված է, երկարությունը 1,4 կմ է, լայնությունը՝ 750 մ, ընդհանուր մակերեսը՝ 0,92 կմ²: Տեղամասը գտնվում է Եղեգնաձորի սինկլինորիումի հարավարևմտյան թևում՝ Արփիի անտիկլինալի միջուկում, որտեղ մերկանում են վերին դևոնի՝ ուշ ֆրան, վաղ ֆամենի տերիգեն նստվածքները: Արփիի անտիկլինալը համարվում է խոշոր բրախիանտիկլինալ կառույց՝ հյուսիս-արևելք – հարավ-արևմուտք տարածմամբ [3]:

Ջրովանքի երկրատեղանքը ներառում է մոտ 360 մլն տարի հասակ ունեցող նստվածքային ապարները՝ ներկայացված քվարցիտներով, կրաքարերով, կավային թերթաքարերով և ավազաքարերով: Վերջիններս ծածկված են դեղնավուն նումուլիտային կրաքարերով, որի հասակը գնահատվում է մոտ 40 մլն տարի: Նստվածքագոյացման հետևանքով երկրատեղանքի շերտերի միջև ժամանակային տարբերությունը կազմում է մոտ 320 մլն տարի, որի շնորհիվ այն դառնում է միջազգային նշանակության դեստինացիա՝ գրավելով զբոսաշրջիկների ուշադրությունը: Հատկապես ավելի երիտասարդ նստվածքներում տեսանելի են բազմաթիվ խզվածքներ, վրաշարժեր, որոնք առաջացել են ընդհանուր հյուսիս-հարավ կրճատման, սեղմման արդյունքում լեռնագոյացման ընթացքում, որն ուղեկցվել է օվկիանոսի հետնահանջով (ռեգրեսիա) [3]:

Գեղատեսիլ ձորակի վերջնամասում են գտնվում ջրառատ աղբյուրներ, որոնցից մեկի հարևանությամբ քարանձավային սրբատեղին է (Ջրովանք): Քարայրն ունի կարստային ծագում, կան ստալակտիտներ, ստալագմիտներ: Ձորի սկզբնամասում է գտնվում *Էրթիջ* հնավայրը՝ գյուղատեղիով, գերեզմաններով և ամրոցով:

Հարկ է նշել, որ դեստինացիան արդեն իսկ օգտագործվում է զբոսաշրջային նպատակներով [8], սակայն դեռևս չի համարվում ամենապահանջվածներից մեկը: Այն ունի մեծ պոտենցիալ՝ դառնալու ՀՀ լավագույն դեստինացիաներից մեկը՝ իր յուրահատուկ տեղադրությամբ ու բերդից բացվող հրաշք տեսարաններով, գետի և ժայռերի գեղեցիկ համադրությամբ սրբավայրով, ինչպես նաև հարակից ջրվեժով [8]:

Արենիի քարանձավ

Քարանձավների համալիր Հայաստանի հարավարևելյան մասում՝ Վայոց Ձորի մարզի Արենի գյուղում՝ Արփա գետի ափին: Գտնվում է Եղեգնաձորից 12 կմ հեռավորության վրա և ընկած է Արփա գետի հովտում: Քարանձավը գտնվում է Արենի գետի ձախ ափին: Այն բաղկացած է 3 սրահներից, ունի մոտ 500 մ² մակերես, որի մեծ մասը դեռևս ուսումնասիրված չէ, քանի որ տարածքը սահմանափակ է, և նոր պեղումները կարող են փակել անցումներն ու վնասել արդեն հայտնաբերված հնագիտական հուշարձանները: Քարանձավում առնվազն չորս մետր մշակութային շերտ կա: Ներքին՝ նեոլիթական շերտերը պատկանում են պղնձեքարի դարին: Հանդիպում են նաև հոմոէրեքտուսի (լատ.՝ Homo erectus) հետքեր, որոնք բնակվել են ավելի քան երկու միլիոն տարի առաջ մեր տարածաշրջանում: Քարանձավը դասվում է կլաստոկարստային քարանձավների դասին, քանի որ ձևավորվել է կրաքարային կոնգլոմերատների մեջ [4]:

Հայտնի է նաև «Թռչունների քարանձավ» անվանումով: 2010 թ. այստեղ հայտնաբերվեց աշխարհի ամենահին կոշիկը: 2011 թ. հունվարին հայտնաբերվեց նաև աշխարհի առաջին գինեգործարանը: Սկսած 2007 թվականից իրականացվում են հնագիտական պեղումներ, որոնց արդյունքում հայտնաբերվել են մ.թ.ա. 4200-3500 թվականներին վերագրված բազմաթիվ գտածոներ՝ բուսական մնացորդներ, ամանեղեն, խաղողի, ծիրանի կորիզներ, եղեգից պատրաստված գործվածքներ, կանացի զանգեր, մումիֆիկացված այծի մարմնի մաս և այլն [4]:

Վերոնշյալ պեղումների արդյունքները նախադրյալ են ինչպես գեոտուրիզմի, այնպես էլ մշակութային, էթնիկ և ճանաչողական զբոսաշրջության զարգացման համար: Բացի այդ ուսումնասիրություններից, ստացված ողջ տեղեկատվությունը բերել է մեկ միանշանակ եզրահանգման. Արենիի քարանձավում հայտնաբերվել է գենեգործական մի ողջ համալիր, ընդ որում՝ ներկայումս համարվում է աշխարհում հնագույնը և թվագրվում է մ. թ. ա. IV հազարամյակին: Սա իր հերթին նույնպես ստեղծում է գրավչություն՝ զբոսաշրջային

հետաքրքրությունների և տպավորությունների տեսանկյունից: Արենիի քարանձավը կարող է ամենացանկալի վայրերից մեկը դառնալ զբոսաշրջիկների համար:

Հորբատեղ

Գտնվում է Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի շրջանում: Տեղանքը հայտնի է իր հանքային ջրով: Այն իր ջերմաստիճանային բնութագրով սառն աղբյուրների շարքում է՝ 18.5 C^0: Այս ջուրն իր կազմով դասվում է Հայաստանում ոչ հաճախ հանդիպող բորաբեր, հազվագյուտ հիմնային մետաղներ պարունակող ջրերի շարքին: Ունի բարձր հանքայնացում՝ 11 մգ/լ, ջրածնային ցուցիչը 6.68 է, իսկ ընդհանուր կոշտությունը կազմում է 25.8, ինչը մոտ 3.5 անգամ ավելի է, քան խմելու քաղցրահամ ջրի համար ՀՀ-ում ընդունված նորմն է: Այս ջրի կազմում հայտնաբերվել են նաև մեծ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հազվագյուտ տարրեր. բոր (77316 մկգ/լ), ծծումբ (213896 մկգ/լ), արսեն (14121 մկգ/լ), բրոմ (15773 մկգ/լ) և այլն [3]:

Զգալի դեբիտով այս հանքային ջուրն առայժմ գեյզերի տեսքով շատրվանում է, հոսում դեպի Արտաբուն գետը և կորչում: Հորբատեղի երկրատեղանքի հարևանությամբ Արտաբուն գետի ձախ ափին առկա է գեղեցիկ աններդաշնակություն, ուր մերկանում են միջին էոցենի հրաբխանստվածքային ապարները, որոնք կտրված են վրաշարժերով: Համալիրը ծածկված է Նեոգենի սյունաձև հրաբխային լավաներով [3]:

Տեղանքը կարող է օգտագործվել և՛ բուժական, և՛ ճանաչողական զբոսաշրջության մեջ, որպես բնական ռեսուրս: Հանքային ջրի պուլսացիոն շատրվանող հորատանցքը, որի քիմիական կազմը քլորիդհիդրոկարբոնատային, նատրիում-կալցիումային է և նմանակն է հանրահայտ Արզնի հանքավայրի որոշ հորատանցքերի ջրերի և Հանքավանի «Տաք ջրի», կարող է դառնալ բուժառողջարանային զբոսաշրջության զարգացման նախադրյալ: Վերջինս փաստում է գեոռեսուրսների՝ տուրիզմի այլ տեսակների զարգացման մեջ՝ նախադրյալ հանդիսանալու մասին: Շատրվանումը սկսվում է դանդաղ, ապա ջրի շիթը հասնում է մոտ 2 մ բարձրության, հետո միանգամից անհետանում: Սա իր հերթին կարող է նպաստել տեղանքի զբոսաշրջային գրավչության և մրցունակության բարձրացմանը: Տեղանքը ներառված է զբոսաշրջային փաթեթներում [10], սակայն ունի ոչ այնքան բարձր հասանելիության մակարդակ:

Ամփոփելով հետազոտության արդյունքները՝ նկատում ենք, որ զբոսաշրջությունը Վայոց Ձորի տնտեսության առավել դինամիկ զարգացող ոլորտներից մեկն է և համարվում է տնտեսության գերակա ճյուղ: Մարզն ունի ներքին և արտաքին զբոսաշրջության զարգացման մեծ հեռանկարներ: Այժմ զբոսաշրջության ձևերի մեջ տեղի են ունենում որակական փոփոխություններ: Պասիվ հանգստի ձևերից անցում է կատարվում դեպի ավելի ակտիվ ձևերը [11]: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ եզրակացնում ենք, որ ավանդական զբոսաշրջության ձևերից պետք է անցում կատարել զբոսաշրջության արդի ձևերին՝ հենվելով մարզի գեոտուրիստական ռեսուրսների վրա: Ընդ որում, զբոսաշրջության բնագավառում վերջին տարիներին արձանագրվել է ոչ միայն որակական, այլև քանակական աճ: 2016 թվականի առաջին 6 ամիսների ընթացքում զբոսաշրջիկների թիվը հասել է 8000-ի: Զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները՝ ճանապարհները, հյուրանոցային տնտեսությունը, սննդի ու զվարճանքի օբյեկտները, բարձրացել է մատուցվող ծառայությունների որակը [11]: Սա իր հերթին նպաստում է զբոսաշրջիկների գոհունակության բարձրացմանը և զբոսաշրջային հոսքերի ավելացմանը:

Հաշվի առնելով Վայոց Ձորի գեոտուրիստական ռեսուրսները և դրանց հնարավորությունները՝ կազմել ենք զբոսաշրջային երթուղի՝ հետևյալ ուղղություններով (Տե՛ս նկար 1) .

1. *Արենիի քարանձավ-Ջրովանք – 7 րոպե, 6.5 կմ*
2. *Ջրովանք-Վայոց Սար- 40 րոպե, 28 կմ*
3. *Վայոց Սար-Հորբատեղի գեյզեր- 1 ժամ, 46 կմ*
4. *Հորբատեղի գեյզեր- Վարդենյանց լեռնանցք- 40 րոպե, 31 կմ:*



Նկար 1. Վայոց Ձորի գեոպարկային երթուղու սխեմատիկ քարտեզ

- Երթուղին սկսում ենք Արենիից:
- Մեկնարկը՝ 09.00, վերադարձը՝ 20.00: Տևողությունը՝ 1 օր՝առանց գիշերակացի:
- Տուրի ինքնարժեքը 1 անձի համար՝ 6 հոգանոց խմբի դեպքում՝ 8000 դրամ:
- Փաթեթի մեջ ներառված են՝

Ø տրանսպորտային ծառայությունը, ընդ որում՝ ամենագնացներով, քանի որ տարածքը լեռնային է,

Ø զբոսավարի ծառայությունը (հայերեն),

Ø ԱԱՀ-ն:

- Քարանձավի մուտքավճարը (1000) ներառված չէ:
- Փաթեթի միջինացված արժեքը 9500-10000 դրամ:

Երթուղին նախատեսված է բոլոր տիպի զբոսաշրջիկների համար, մասնավորապես՝ քայլարշավների սիրահարների համար, քանի որ 1-ին ուղղության մեջ անհրաժեշտ է անցնել մոտ 1 կմ (մոտ 15 րոպե) կիրճի միջով, և 2-րդ ուղղության մեջ՝ 2 կմ (մոտ 30 րոպե) ՝ սարը բարձրանալու համար: Երթուղին կարող է օգտագործվել նաև ֆոտոտուրերի (Վայոց Սար), էքստրեմալ զբոսաշրջության սիրահարների, լեռնագնացների համար են:

Գրականություն

[1] ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ, բնագիտական թանգարանները որպես գեոտուրիզմի զարգացման գործոն գիտաժողովի առաջին շրջաբերական, Երևան 2019, 10 էջ

[2] **Nita J., Myga-Piatek U.** Geotourist potential of post-mining regions in Poland. Bulletin of Geography – Physical Geography Series. 2014. № 7. P. 139–156.

[3] ՀՀ երկրաբանական վտանգների Գեոպարկի ստեղծման նախադրյալները, Երևան ՀՀ ԳԱԱ "Գիտություն" հրատարակչություն 2021, 218 էջ

[4] https://www.armgeo.am/areni-cave/ Հղումը կատարվել է՝ 01. 04. 2022

[5]https://web.archive.org/web/20100523220925/http://armenianow.com/hy/news/10683/amap_rediscovering_silk_road_armen Հղումը կատարվել է՝ 02. 04. 2022

[6] https://www.civilnet.am/news/136279/ Հղումը կատարվել է՝ 03. 04. 2022
[7] https://www.youtube.com/watch?v=4XxcNK2zdKc Հղումը կատարվել է՝ 02. 04. 2022
[8] https://www.hamshen.am/hy/tours/hiking-ertij-jrovank Հղումը կատարվել է՝ 03. 04. 2022
[9] Վայոց Ձորի մարզպետարանի կայք էջ,
https://web.archive.org/web/20131029191138/http://vdzor.gov.am/husharc1/ Հղումը կատարվել է՝ 04. 04. 2022
[10] https://onewaytour.com/hy/regular-daily-tours/horbategh-yegheghis-zorats-tachar/ Հղումը կատարվել է՝ 04. 04. 2022
[11] http://www.mtad.am/files/docs/1779.pdf Հղումը կատարվել է՝ 04. 04. 2022

ՀՏԴ 330.5

Յանա Բեգլարյան
ԱրՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
E-mail:beglaryan.yana@bk.ru

Գիտական ղեկավար՝
տ.գ.թ., դոցենտ Նարինե Ավանեսյան

ԱՀ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ *ՀՆԱ, տնտեսական ակտիվության ցուցանիշ, պարենային անվտանգություն, արդյունաբերական քաղաքականություն, տնտեսության ֆինանսական խորություն:*

Հոդվածի հիմնական նպատակն է վերլուծել ԱՀ հետպատերազմյան տնտեսության իրավիճակը և բացահայտել արդի խնդիրներն ու զարգացման հեռանկարային ուղիները: Նպատակից ելնելով՝ խնդիր է դրվել ուսումնասիրել ԱՀ տնտեսությունը հետպատերազմյան ժամանակաշրջանում, ԱՀ տարածքում գործող ֆինանսական միջնորդների գործունեության հիմնական ցուցանիշները նշված ժամանակաշրջանում, վերլուծել և գնահատել ԱՀ արդյունաբերության իրավիճակը պատերազմից հետո:

Яна Бегларян

АНАЛИЗ ПОЛОЖЕНИЯ ПОСЛЕВОЕННОЙ ЭКОНОМИКИ РА

Ключевые слова: *ВВП, показатель экономической активности, продовольственная безопасность, промышленная политика, финансовая глубина экономики.*

Основной целью статьи является изучение и анализ положения послевоенной экономики Республики Арцах и выявление актуальных проблем и перспективных путей развития. Цель состояла в том, чтобы изучить экономику Республики Арцах в послевоенный период, изучить основные показатели деятельности финансовых посредников, действовавших на территории Арцахской Республики в послевоенный период, проанализировать и оценить состояние промышленности Арцаха после войны.

Yana Beglaryan

ANALYSIS OF THE SITUATION IN THE POST-WAR ECONOMY OF THE REPUBLIC OF ARTSAKH

Key words: *GDP, indicator of economic activity, food security, industrial policy, financial depth of the economy.*

The main purpose of the article is to study and analyze the situation of the post-war economy of the Republic of Artsakh and to identify current problems and promising ways of development. The goal was to study the economy of the Republic of Artsakh in the post-war period, to study the main performance indicators of financial intermediaries operating in the territory of the Artsakh Republic in the post-war period, to analyze and assess the state of the industry of Artsakh after the war.

Արցախի Հանրապետության տնտեսական և բանկային նոր գործունեության ձևավորման սկիզբը կարելի է համարել 90-ականները, երբ հիմնարար փոփոխություններ տեղի ունեցան քաղաքական, դրա հետ մեկտեղ՝ տնտեսական կյանքում: 1991 թվականի սեպտեմբերի 2-ի

ժողովրդական հանրաքվեի արդյունքներով Լեռնային Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների շրջանային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նիստը, բոլոր մակարդակի խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ, ընդունեց հռչակագիր՝ ԼՂՀ հռչակելու մասին: 1992-ի Անկախության հռչակագրում խոսվում էր նաև ապագա տնտեսական հարաբերությունների մասին. «ԼՂՀ տնտեսությունը հիմնված է սեփականության բոլոր ձևերի հավասար իրավունքների սկզբունքի վրա և ԼՂՀ բոլոր քաղաքացիներին ապահովում է տնտեսական կյանքին լիարժեք և ազատ մասնակցության հավասար հնարավորություններ»: Ցավոք, 1991 թվականին տնտեսական բարեփոխումների իրականացումը հնարավոր չէր թվում՝ կապված Ադրբեջանի հետ զինված հակամարտության սկսվելու հետ[1]:

Արցախի Հանրապետությունը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում: Հիմնականում ունի լեռնային մակերևույթ: Համեմատաբար ցածրադիր ու հարթավայրային են հարավը և արևելքը: Արևմուտքից սահմանակցում էր Հայաստանի Հանրապետությանը, հարավից՝ Իրանին, իսկ արևելքից և հյուսիսից՝ Ադրբեջանին: Արցախի Հանրապետության ընդհանուր տարածքը 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 11803,16 կմ^2 և վարչատարածքային առումով բաժանված էր 8 շրջանների՝ ք. Ստեփանակերտ, Մարտունու, Շուշիի, Մարտակերտի, Քաշաթաղի, Ասկերանի, Հադրութի, Շահումյանի շրջաններ:

ԱՀ-ն մինչև 2020թ. արձանագրել է բավականին հուսադրող զարգացումներ սոցիալ-տնտեսական թերևս բոլոր հատվածներում: 2015-2019թթ. տնտեսական աճը կազմել է 13,1%:

Սակայն իրավիճակը փոխվեց 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով, որն ավարտվեց Արցախի և Հայաստանի համար մարդկային, տարածքային և տնտեսական ծանր կորուստներով: Պատերազմական գործողությունների հետևանքով 8 վարչական շրջաններից ԱՀ-ի կազմում են մնացել մայրաքաղաք Ստեփանակերտը, Մարտակերտի շրջանի զգալի մասը, Մարտունու և Ասկերանի շրջանի մի մասը և Շուշիի շրջանի որոշ գյուղական համայնքներ: Արցախի Հանրապետությունը կորցրել է իր տարածքի 75 %-ը:

Տարածքների հետ միասին, ԱՀ-ն զրկվել է նաև տնտեսական գործունեության ապահովման կենսական նշանակության մի շարք ենթակառուցվածքներից: Պատերազմի հետևանքները բազմաշերտ ու բազմամակարդակ են և դեռ ավելի շատ են ի հայտ գալու ժամանակի ընթացքում: Ներկա իրավիճակում բազմաթիվ հրատապ խնդիրներ են առաջ եկել տնտեսության մեջ:

Տնտեսության մեծ մասը կաթվածահար է եղել, ինչը համապատասխան կերպով արտացոլվել է մակրոտնտեսական տարեկան ցուցանիշներում: ՀՆԱ-ն 2020թ. կազմել է 270,9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 342,5 մլրդ դրամի դիմաց՝ հանգեցնելով 22,4 տոկոս տնտեսական անկման, որի շուրջ 9,2 տոկոսային կետը կազմում է արդյունաբերությունը՝ ներառյալ էներգետիկան, 6,4 տոկոսային կետը՝ առևտուրը և ծառայությունները, 2,4 տոկոսային կետը՝ շինարարությունը, 2,1 տոկոսային կետը՝ գյուղատնտեսությունը: 2021թ. ՀՆԱ-ն կազմել է 249,4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 12,7 %-ով, իսկ 2019թ. համեմատ՝ 27,2 %-ով:

Պատերազմը, կարելի ասել, աղետալի հետևանքներ է թողել Արցախի տնտեսության, մասնավորապես, գյուղատնտեսության վրա: Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2020 թվականին կազմել է 56 472,5 մլն դրամ՝ կազմելով նախորդ տարվա ցուցանիշի 78,3 %-ը, իսկ 2021թ. կազմել է 30310,8 մլն դրամ՝ կազմելով նախորդ տարվա ցուցանիշի 48,9 %-ը: Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշի մակարդակի այսքան իջեցման պատճառ են հանդիսացել պատերազմի հետևանքով ԱՀ տարածքային կորուստները:

2019թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի ամենից մեծ տեսակարար կշիռը բաժին էր ընկնում Քաշաթաղի շրջանին, սակայն պատերազմական գործողությունների արդյունքում գյուղատնտեսական նշանակության տարածքների կորստի պատճառով իջել է գրեթե բոլոր շրջանների գյուղատնտեսության մակարդակը, իսկ ամենից մեծ վնասը կրել են թշնամուն անցած շրջանները՝ մասնավորապես Հադրութի շրջանը, Շուշին, Քաշաթաղի շրջանը:

[1] *Н. Аванесян, Анализ становления и развития банковской деятельности на территории Арцаха, Научные чтения, Издательство АрГУ, 2018, с. 97.*

Հետպատերազմյան շրջանում գյուղատնտեսության ամենից մեծ տեսակարար կշիռն ապահովել է Մարտունու շրջանը՝ 25,4 %, և Ասկերանի շրջանը՝ 24,0 %:





Գծապատկեր 3. ԱՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքն ըստ շրջանների 2019թ. և 2020թ., մլն դրամ[1]

Արցախի՝ նախքան ռազմական գործողություններն առկա ավելի քան 130 հազար հա վարելահողերի շուրջ 75 տոկոսը, ոռոգման համակարգի ենթակառուցվածքների զգալի մասը մնացել է հակառակորդի վերահսկողության գոտում:

Մասնավորապես, եթե նախկինում Արցախը հացահատիկային մշակաբույսերի բերքի արտադրության մասով գերակատարում էր 1 բնակչի հաշվով նախանշված շեմը՝ ստացված բերքի մի մասը արտահանելով ՀՀ, ապա Հայաստանը նույնպես կբախվի հացահատիկի նոր մատակարարներ փնտրելու խնդրին: Հակառակորդի տիրապետության տակ անցած Հադրութի, Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում էր գտնվում երկրի հացահատիկային մշակաբույսերի աճեցման 47,4 % (560241,5 ց) գումարային ներուժը, իսկ եթե դրան էլ գումարենք միայն մասամբ Արցախի «նորացված» սահմաններում մնացած Ասկերանի, Մարտունու և Շուշիի շրջանների համախառն բերքի առնվազն կեսը (235948,1 ց կամ ընդհանուրի 20 %-ը), ապա պարզ կդառնա, որ Արցախը զրկվել է հացահատիկային բերքի համախառն ներուժի առնվազն 67,4%-ից: Այս ցուցանիշում ներառված չեն Մարտակերտի շրջանի՝ թշնամու կողմից գրավված այն տարածքները, որոնք հնարավոր է՝ ընդգրկում են նաև հացահատիկային ցանքատարածություններ:

Այգեգործության ճյուղում կորուստները բավականին մեծ են: Մինչև պատերազմը Արցախում առկա 7000 հա բազմամյա տնկարկներից մեզ են մնացել շուրջ 2500 հա այգիներ:

Պատերազմի հետևանքով Արցախում առկա անասնագլխաքանակը կրճատվել է ավելի քան 50 տոկոսով: Այսպիսի իրավիճակը պայմանավորված է նրանով, որ տնային կենդանիների գլխաքանակի գերակշիռ մասն ամբողջությամբ կամ մասնակիորեն կենտրոնացված էր Ադրբեջանի իշխանության տակ անցած Արցախի վարչական շրջաններում: Հետևաբար՝ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, կարող ենք առաջիկայում Արցախում և Հայաստանի Հանրապետությունում կանխատեսել մսամթերքի առաջարկի անկում, որը կուղեկցվի համապատասխան գնաճով[2]:

Արտաքին միջավայրի ազդեցությամբ պայմանավորված անկայունությունը թիրախավորում է նաև ֆինանսական համակարգը: Վերջինը մի կողմից չափազանց զգայուն է, մյուս կողմից՝ բազմարկչի էֆեկտով նույնիսկ փոքր թվացող խնդիրները կարող է բազմապատկել՝ հանգեցնելով անկանխատեսելի հետևանքների: Ըստ այդմ, հատկապես հետպատերազմյան շրջանում

---

[1] *ԱՀ ԱՎԾ, Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին, Տեղեկատվական եռամսյակային զեկույց, էջ 16:*

[2] ***Փախչյան Ա.**, Արցախի տնտեսական ներուժը «նոր սահմանազատումից» հետո. սահմանից անդին մնացած հնարավորություններ..., Տեղեկագիր 6, Ամբերդ, Երևան, 2020թ., էջ 17-18:*

չափազանց կարևոր է ֆինանսական համակարգում տեղի ունեցող գործընթացների մշտադիտարկումը[1]:

Արցախի տարածքում 2021թ. դրությամբ գործում է հայաստանյան 7 բանկերի 25 մասնաճյուղ: ԱՀ տնտեսությունում ֆինանսական միջոցներ ձեռք են բերվում հիմնականում բանկերի միջոցով, այսինքն, վարկային շուկայի բնութագրիչ հիմնական ցուցանիշը՝ տնտեսության ֆինանսական խորությունը, հիմնականում ապահովվում է բանկերի միջոցով՝ կազմելով շուրջ 60%, ինչը նշանակում է, որ տնտեսության մեջ մեծ է բանկերի ներգրավվածության աստիճանը:

Ֆինանսական միջնորդության քանակական արտահայտությունն իր էությամբ դրսևորվում է երկրի տնտեսության չափման հիմնական գործիքի՝ ՀՆԱ-ի հետ համադրմամբ, այսինքն՝ տնտեսությանը տրամադրած վարկեր/ՀՆԱ ցուցանիշի միջոցով, որը 2019թ. կազմել է 56,3 %, 2020թ.՝ 76,1 %, 2021թ.՝ 25 %: 2020թ. ավանդների ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 2,8 %-ով, իսկ 2021թ.՝ նախորդ տարվա համեմատ աճել է 9,4 %-ով:



Գծապատկեր 4. ԱՀ ՀՆԱ-ի, ավանդների, բանկային հատվածի և ոչ բանկային հատվածի վարկային ներդրումների ծավալների դինամիկան 2019-2021թթ., մլն դրամ[2]

Պատերազմը լուրջ վնասներ է հասցրել նաև արդյունաբերության ոլորտը: Համաձայն ԱՀ 2020 թ. վիճակագրական տարեգրքի՝ Արցախի արդյունաբերության մասնաբաժինը երկրի ՀՆԱ կառուցվածքում կազմել է 28,5 %: Այսպես՝ 2019թ. Արցախի Հանրապետությունում, ընդհանուր առմամբ, արտադրվել է 164,9 մլրդ դրամի արդյունաբերական արտադրանք, որի գերակշիռ մասը՝ 48,2 %-ը, բաժին է ընկնում մայրաքաղաք Ստեփանակերտին, որին հաջորդում է Մարտակերտի շրջանը (39,7%): Ամբողջովին կամ մասնակիորեն Ադրբեջանի Հանրապետության տիրապետության տակ անցած շրջանները բնութագրվում են արդյունաբերական արտադրանքի թողարկման համեստ կարողություններով:

Արցախի Հանրապետության շրջանները 2020թ. սկզբին	**Ամբողջ արդյունաբերությունը (մլն դրամ/%)**	Արդյունաբերությունն՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների			
		հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի	մշակող արդյունաբերություն	էլեկտրական ության,գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	ջրամատակարարում,կոյուղի , թափոնների կառավարում և վերամշակում

[1] *Խաչիկյան Ս., Քթոյան Ա., Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, ՏԼԱ, Երևան, 2021թ., էջ 51:*

[2] *ԱՀ ԱՎԾ, Արցախի Հանրապետության ֆինանսների վիճակագրություն, Ստեփանակերտ, 2021թ., էջ 122-130:*

		շահագործում			
Ստեփանակերտ	**79597.5 (48.2)**	2379.5 (3.78)	60712.1 (85,7)	16058.3 (52,7)	447.6 (61,1)
Ասկերան	**5146.2 (3.1)**	633.8 (1,01)	3303.1 (4,7)	1106.4 (3,7)	102.9 (14,1)
Հադրութ	**2689.4 (1.6)**	2.7 (0,00)	1915.1 (2,7)	736.8 (2,4)	34.8 (4,7)
Մարտակերտ	**65468.6 (39.7)**	58899.5 (93,58)	801.6 (1,1)	5726.2 (18,8)	41.3 (5,6)
Մարտունի	**4565.0 (2.8)**	4.2 (0,00)	3272.7 (4,6)	1210.9 (4)	77.2 (10,5)
Շահումյան	**1735.7 (1.1)**	-	123.6 (0,2)	1612.1 (5,3)	-
Շուշի	**778.5 (0.5)**	7.0 (0,01)	195.3 (0,2)	554.2 (1,8)	22.0 (3)
Քաշաթաղ	**5018.9 (3.0)**	1008.8 (1,6)	553.6 (0,8)	3449.6 (11,3)	6.9 (1)
Ընդամենը	**164999.8 (100)**	**62935.5 (38.1)**	**70877.1 (43.0)**	**30454.5 (18.5)**	**732.7 (0.4)**

Գծապատկեր 7. Արցախի արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ շրջանների 2019թ., մլն դրամ[1]

ԱՀ արդյունաբերական արտադրության ծավալը 2020թ. կրճատվել է 36,3 տոկոսով, այդ թվում՝ միայն դեկտեմբեր ամսվա ընթացքում՝ 60 %-ով: Այնուհետև՝ 2021 թվականի հունվարին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ արդյունաբերական արտադրության ծավալը կրճատվել է 15,2 %-ով:



Գծապատկեր 8. ԱՀ արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան 2017-2021թթ.[2]

Արդյունաբերական արտադրության ծավալի կտրուկ նվազումը գրանցվել է արդյունաբերության բոլոր ճյուղերում: Նշված ցուցանիշն առավել մեծ չափով պայմանավորվել է նրանով, որ հանքարդյունաբերության ոլորտում 2021 թվականի հունվար ամսում աշխատանքներ գրեթե չեն իրականացվել (նվազումը՝ 99.9%):

Առաջնահերթությունների թվում ենթակառուցվածքային խնդիրներն են: Էլեկտրաէներգիայի արտադրությունը 2020 թվականի դեկտեմբեր ամսում կազմել է ընդամենը 20 մլն կՎտ՝ նախորդ

[1] *ԱՀ ԱՎԾ, Արցախի վիճակագրական տարեգիրք, 2020թ., Արդյունաբերություն, էջ 208:*
[2] *www.stat-nkr.am*

տարվա նույն ժամանակահատվածի՝ շուրջ 100 մլն կՎտ-ի փոխարեն: 2021թ. հունվարին էլեկտրաէներգիայի արտադրությունն Արցախում կազմել է 7,3 մլն կՎտ:

Շինարարական աշխատանքների ծավալը 2021թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 48,3 %-ով:



	I	II	III	IV	V	VI	VII	VII	IX	X	XI	XII
2019թ.	1534,8	5673,1	3360,1	5300,5	3082,4	8596,8	6982,5	3714,6	3806,1	3837,7	4455,7	14286,9
2020թ.	1629,4	7993,9	4076,1	2857,5	2607,7	4611,4	5155,2	5032,6	5277,5	0,0	0,0	11028,0
2021թ.	769,7	1594,7	5643,1	5859,0	4087,2	7222,9	4928,7	6734,0	6602,5	6396,9	8180,3	16533,3

Գծապատկեր 9. Իրականացված շինարարության ծավալներն ըստ ամիսների, 2019-2021թթ. հունվար-դեկտեմբեր (մլն դրամ)[1]

Կատարված հետազոտությունների և վերլուծությունների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ պատերազմը լրջորեն խաթարել է Արցախի ողջ տնտեսական դաշտը, տնտեսության բոլոր ոլորտներում արձանագրվել է անկում, աղետալի վնասներ է կրել Արցախի գյուղատնտեսությունը: Ստեղծված իրավիճակը վկայում է այն մասին, որ Նպատակային քաղաքականության կիրառման, առկա ներուժի լիարժեք օգտագործման միջոցով հնարավոր է մեծացնել ագրոպարենային համակարգի կայունությունը: Արդյունաբերության ոլորտը կանգնել է լուրջ խնդիրների առաջ: Արցախի ներկայիս փոքր տարածքը, աշխարհագրական դիրքը վկայում է, որ արդյունաբերության ոլորտում հետագա զարգացում գրանցելու համար անհրաժեշտ է վեր հանել ապրանքների և ծառայությունների այն համախումբը, որոնց արտադրության գծով երկիրը կարող է հասնել առավելությունների: Սա, իր հերթին, պահանջում է մրցակցային առավելությունների գնահատման և բացահայտման համար հստակ չափորոշիչների մշակում: Այլ խոսքով՝ խնդիրը գիտականորեն հիմնավորված չափորոշիչների և դրանց օգնությամբ ուրվագծվող արդյունաբերական քաղաքականության մասին է, որը պետք է տարեցտարի կատարելագործվի:

Գրականություն

1. ԱՀ ԱՎԾ, Արցախի վիճակագրական տարեգիրք, 2020թ., Արդյունաբերություն, էջ 208:
2. ԱՀ ԱՎԾ, Արցախի Հանրապետության ֆինանսների վիճակագրություն, Ստեփանակերտ, 2021թ., էջ 122-130:
3. ԱՀ ԱՎԾ, Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին, Տեղեկատվական եռամսյակային զեկույց, էջ 16:
4. **Խաչիկյան Ս., Քթոյան Ա.**, Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, ՏԼԱ, Երևան, 2021թ., էջ 51:
5. **Փախլյան Ա.**, Արցախի տնտեսական ներուժը «նոր սահմանազատումից» հետո. սահմանից անդին մնացած հնարավորություններ..., Տեղեկագիր 6, Ամբերդ, Երևան, 2020թ., էջ 17-18:
6. www.stat-nkr.am
7. https://ichd.org

[1] *ԱՀ ԱՎԾ, ԱՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թվականի հունվար-դեկտեմբերին, էջ 17-18:*

ՀՏԴ 336.2

Յուլիա Սարգսյան
ԱրՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ,
բակալավրիատի ուսանող
Էլ. փոստ՝ yuliasargsyan.2001@mail.ru

Գիտական ղեկավար՝
ավագ դասախոս Ալեքսանյան Արևիկ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *ՀՆԱ, պետական պարտքի շեմ, պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցություն, շղթայական աճի տեմպ, պարտքային բեռ:*

Հոդվածի հիմնական նպատակն է ուսումնասիրել ՀՀ պետական պարտքի կառուցվածքը և վեր հանել պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները: Հոդվածի շրջանակներում վերլուծվել է պետական պարտքի դրսևորման առանձնահատկությունները տարբեր երկրներում, ՀՀ պետական պարտքի կառուցվածքը՝ ըստ տարբեր հատկանիշների:

Юлия Саргсян

СТРУКТУРА ГОСУДАРСТВЕННОГО ДОЛГА РА И ВОПРОСЫ УПРАВЛЕНИЯ

Ключевые слова*: ВВП, порог государственного долга, отношение государственного долга к ВВП, темп роста цепи, долговая нагрузка*

.

Основная цель данной статьи - изучить структуру государственного долга РА, поднять вопросы управления государственным долгом. Исходя из цели, была поставлена задача проанализировать особенности выражения государственного долга в разных странах, провести анализ структуры государственного долга РА.

Yulia Sargsyan

THE STRUCTURE OF THE RA PUBLIC DEBT AND MANAGEMENT ISSUES

Key words: *GDP, public debt threshold, public debt / GDP ratio, chain growth rate, debt burden*

The main purpose of this article is to study the structure of the RA public debt, to raise the issues of public debt management. Based on the goal, the task was set to analyze the peculiarities of public debt expression in different countries, to make an analysis of the structure of the RA public debt.

Պետական պարտքը պետության տնտեսական ռազմավարության իրագործմանը նպաստող, բյուջետային կարգավորման կարևորագույն գործիքներից մեկն է: Պետական փոխառությունները բյուջետային պակասուրդի ֆինանսավորման հզոր ոչ գնաճային աղբյուր են: Պետական պարտքի կառավարումը միջոցառումների ամբողջություն է, որոնք ուղղված են պարտքի ծավալի և կառուցվածքի կարգավորմանը, նոր փոխառությունների ներգրավմանը և պայմանների որոշմանը, պետական փոխառությունների շուկայի կարգավորմանը, պարտքային խնդիրների հակաճգնաժամային կառավարման միջոցառումների իրականացմանը, պարտքի մարմանը և սպասարկմանը, պետական երաշխիքների տրամադրման պայմանների որոշմանը, փոխառու

միջոցների արդյունավետ օգտագործման նկատմամբ հսկողության իրականացմանը:[1] Պետական պարտքի կառավարումն իրականացվում է թափանցիկության, հաշվետվողականության, կանխատեսելիության և հրապարակայնության սկզբունքներով:[2] Գծապատկեր 1-ում ներկայացված է զարգացող և զարգացած երկրների Պետական պարտքի բեռի դինամիկան 2000-2020թթ.:



Գծապատկեր 1. Զարգացող և զարգացած երկրների Պետական պարտքի բեռի (պետական պարտք/ՀՆԱ, %) դինամիկան 2000-2020թթ.[3]

Ինչպես ցույց է տալիս գծապատկերը, զարգացած երկրներում պետական բյուջեի մեծ պակասուրդները հանգեցրեցին պետական պարտք/ՀՆԱ-ի 30% կուտակման: Պետական պարտքը արդեն 2011թ. հատեց ՀՆԱ –ի նկատմամբ 100% մակարդակը, որը սկսած երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից երբևէ չէր արձանագրվել: Հարկ է նշել, որ Համաշխարհային պարտքի մակարդակն COVID-19 համաճարակի հետևանքով աճել է 2020 թվականին՝ կազմելով 226 տրիլիոն դոլար:

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,429.6 մլրդ դրամ կամ 9225.6 մլն ԱՄՆ դոլար: Աղյուսակ 1-ում ներկայացված է ՀՀ պետական պարտքի կառուցվածքը 2019-2021 թթ.:

	31.12.2019		31.12.2020		31.12.2021	
	մլրդ դրամ	% ՀՆԱ-ի նկատմամբ	մլրդ դրամ	% ՀՆԱ-ի նկատմամբ	**մլրդ դրամ**	**% ՀՆԱ-ի նկատ-մամբ**
ՀՀ պետական պարտք	3,512.0	53.7	4,164.3	67.4	***4 429,6***	**63.4**
ՀՀ կառավա-ության պարտք	3,277.3	50.1	3,923.9	63.5	**4 209,8**	**60.3**
արտաքին պարտք	2,540.1	38.8	2,926.2	47.3	***2 972,4***	**42.6**
ներքին պարտք	737.2	11.3	997.6	16.1	***1237,4***	**17.7**
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտք	234.7	3.6	240.4	3.9	**219,8**	**3.1**

[1] *Вавилов Ю. Я. Государственный долг, Москва Перспекива 2007, стр.217*
[2] *«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, Երևան, 2008թ.*
[3] *https://www.imf.org/external/datamapper/NGDP_RPCH@WEO/OEMDC/ADVEC/WEOWORLD*

Աղյուսակ 1. ՀՀ պետական պարտքի կառուցվածքը 2019-2021 թթ. [1]

Ինչպես ցույց է տալիս աղյուսակ 1-ը՝ 2021թ. նախորդ տարվա համեմատ ՀՀ պետական պարտքի ծավալն աճել է 265,3 մլրդ դրամով (544,7 մլն ԱՄՆ դոլարով) կամ 6,4%-ով, այդ թվում՝ ՀՀ կառավարության պարտքի ծավալն աճել է 285,9 մլրդ դրամով (587 մլն ԱՄՆ դոլարով) կամ 7,2%-ով, իսկ ՀՀ ԿԲ-ի արտաքին պարտքի ծավալը դրամային արտահայտությամբ նվազել է 20,6 մլրդ դրամով կամ 8,5%-ով: Գծապատկեր 2-ում ներկայացված են ՀՀ կենտրոնական բանկի և կառավարության պարտքի տեսակարար կշիռները:



	2019	2020	2021
ՀՀ կենտրոնական բանկի պարտք	6,7	5,8	5,0
ՀՀ կառավարության պարտք	93,3	94,2	95,0

Գծապատկեր 2. ՀՀ կենտրոնական բանկի և կառավարության պարտքի տեսակարար կշիռները 2019-2021թթ.(%)[2]

Գծապատկերից պարզ է դառնում, որ Կառավարության պարտքը կազմում է պետական պարտքի գերակշիռ մասը:



Գծապատկեր 3. 2000-2020թթ. ՀՀ պետական պարտք և ՀՀ պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշների դինամիկան[3]

Պետական պարտքը բնութագրող ընդհանրական ցուցանիշներից է Պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը: ՀՀ-ում պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության աճը սկսվել է 2009 թվականից: Պետական պարտքը 2021թ-ին 2000թ.-ի համեմատ աճել է 8,7 անգամ, նախորդ տարվա համեմատ՝ 1,06 անգամ կամ 6 տոկոսով: Պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2021թ-ին 2000 թ-ի համեմատ աճել է 1,3 անգամ, նախորդ տարվա համեմատ նվազել 0,94 անգամ կամ 5,9 տոկոսով: Պետական պարտքի շղթայական աճի տեմպը դիտարկվող ժամանակահատվածում միջինում կազմել է՝ 114,4 տոկոս, ընդ որում առավելագույն արժեքը եղել է 2009թ.-ին,

[1] *ՀՀ Ֆինանսների նախարարություն, Ամսական վիճակագրական տեղեկագրեր, https://minfin.am/hy/page/hashvetvutyunner_e_vichakagrutyun1/*

[2] *ՀՀ Ֆինանսների նախարարություն, Ամսական վիճակագրական տեղեկագրեր, https://minfin.am/hy/page/hashvetvutyunner_e_vichakagrutyun1/*

[3] *https://minfin.am/hy/page/petakan_partqi_veraberyal_ampop_tvyalner/*

նվազագույնը՝ 2010թ.: Պետական պարտք/ՀՆԱ շղթայական աճի տեմպը դիտարկվող ժամանակահատվածում միջինում կազմել է՝ 104,5 տոկոս, ընդ որում առավելագույն արժեքը եղել է 2009թ.-ին, նվազագույնը՝ 2005թ.:



Գծապատկեր 4. ՀՀ կառավարության պարտքի արժութային կառուցվածքը 2010-2020թթ[1]

ՀՀ կառավարության պարտքի ներկայիս պորտֆելը կրում է փոխարժեքի մեծ ռիսկ, քանի որ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պարտքի գերակշիռ մասը՝ 75.6%-ը ներգրավված է արտարժույթով (նախորդ տարվա համեմատ նվազել է 3.65 տոկոսային կետով): Արտարժութային պարտքի մեծ կշիռը պարտքի պորտֆելում երկկողմ և բազմակողմ արտաքին վարկատուների կողմից տրամադրված փոխառությունների գերակայության, ինչպես նաև 1.0 մլրդ ԱՄՆ դոլար ծավալով շրջանառության մեջ գտնվող եվրապարտատոմսերի երկու թողարկումների առկայության հետևանք է: 2020 թվականին արտարժութային կարճաժամկետ պարտքի կշիռը միջազգային պահուստների մեջ ցուցանիշը նվազել է նախորդ տարվա նկատմամբ 1.8 տոկոսային կետով և կազմել է 8.7%:

Չնայած ՀՀ-ում պետական պարտքը կառավարվում է մի շարք նորմատիվ-իրավական ակտերով, այնուամենայնիվ առկա են մի շարք հիմնախնդիրներ: Նախ նշենք, որ 2021թ. 2008թ.-ի համեմատ պետական պարտքը աճել է 3844 մլրդ դրամով կամ 6,5 անգամ:

ՀՀ-ում պետական պարտքի կառավարման առաջին հիմնախնդիրը պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության բարձր ցուցանիշն է: Պետությունը անընդհատ փոփոխության է ենթարկում պետական պարտքի մասին գործող օրենքը կամ բյուջետային համակարգի մասին ՀՀ օրենքը, քանի որ հակառակ պարագայում օրենքների որոշ դրույթներ իրար հակասում են: Բացի այդ պետական պարտքի շղթայական աճի տեմպը վերջին տարիներին միշտ գերազանցում է պետական բյուջեի դեֆիցիտի և ՀՆԱ-ի շղթայական աճի տեմպերին:

[1] *https://minfin.am/hy/page/tarekan_hashvetvutyunner/*



Գծապատկեր 5. Պետական պարտքի, ՀՆԱ-ի, դեֆիցիտի շղթայական աճի տեմպը 2018-2021թթ.[1]

Դիտարկվող ժամանակաշրջանում պետական պարտքի շղթայական աճի տեմպը միջինում կազմել է 108%, ՀՆԱ-ի շղթայական աճի տեմպը՝ 106,1%, իսկ պետական բյուջեի դեֆիցիտի շղթայական աճի տեմպը՝ 129.9%: Դա բացասական երևույթ է, քանի որ պետական պարտքի ներգրավման հիմնական նպատակը պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումն է, սակայն ստացվում է, որ պետությունը չի կարողանում արդյունավետ կառավարել իր պետական պարտքը:

Պետական պարտքի կառավարման հաջորդ հիմնախնդիրը ՀՀ-ում 1 բնակչին բաժին ընկնող պետական պարտքի բավականին բարձր ցուցանիշն է: Ինչպես երևում է գծապատկերից 6-ից՝ ՀՀ-ում 1 բնակչին ընկնող դրամական ամսական եկամուտները 2020թ. կազմում են 61,3 դրամ, իսկ պետական պարտքը՝ 1406,9 մլն դրամ: Սա բավականին լուրջ հիմնախնդիր է, քանի որ հանգեցնում է նաև սերունդների պարտքի աճի:



Գծապատկեր 6. ՀՀ-ում 1 շնչի հաշվով պետական պարտքի գումարի և դրամական

[1] *Հիմքը՝ ՀՀ ֆինանսների նախարարության և Վիճակագրության կոմիտեի կողմից հրապարակվող հաշվետվությունները*

եկամուտների համեմատական վերլուծությունը 2011-2020թթ.(%)[1]

Այս ամենին գումարվում է նաև այն հանգամանքը, որ ՀՀ-ում վերջին տարիներին կտրուկ աճել է բնակչության պարտքային բեռը: Այս առումով կարելի է օգտվել «CEIC Data» տեղեկատվական հարթակից, որը տրամադրում է տվյալներ աշխարհի տարբեր երկրներում տնային տնտեսությունների պարտքային բեռի վերաբերյալ:



Գծապատկեր 7. Տնային տնտեսությունների պարտքային բեռը ՀՆԱ-ում 2016-2020թթ.(%)[2]

Գծապատկեր 7-ում ներկայացված են տարբեր երկրներում բնակչության պարտքային բեռը ՀՆԱ-ում: Ինչպես ցույց են տալիս գծապատկեր 7-ի տվյալները, 2020թ. Հայաստանում տնային տնտեսությունների պարտքային բեռը ՀՆԱ-ում կազմել է 26,9%, տարածաշրջանի երկրների համեմատ Հայաստանը զիջում է միայն Վրաստանին, որտեղ նույն տարում տնային տնտեսությունների պարտքային բեռը ՀՆԱ-ում կազմել է 41,9 %: Թշնամի երկրում այդ ցուցանիշը 9,3% է: Հատկանշական է, որ ԵԱՏՄ (Եվրասիական տնտեսական միություն) երկրներում Հայաստանի այս ցուցանիշը ամենաբարձրն է, որին հաջորդում է Ռուսաստանը (20,2%), ամենացածր ցուցանիշը արձանագրվել է Ղրղզստանում (5,7%):

Կատարված հետազոտությունների և վերլուծությունների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ Պետական պարտքը ցուցաբերում է շարունակական աճի միտում: Պետական պարտքի կառուցվածքում գերակշիռ մաս է կազմում ՀՀ կառավարության պետական պարտքը, արտարժույթով ներգրաված վարկերը, արտաքին պարտքը: ՀՀ պետական պարտք / ՀՆԱ ցուցանիշը իր առավելագույն չափին է հասել 2020թ. – ին՝ կազմելով 67,4 %: ՀՀ-ում պետական պարտքի կառավարման գլխավոր հիմնախնդիրը պետական պարտք/ ՀՆԱ հարաբերակցության բարձր ցուցանիշն է, որը գերազանցում է օրենքով սահմանված չափանիշը: Հիմնախնդիր է նաև այն փաստը, որտեղ 1 բնակչի հաշվով պետական պարտքի գումարը գերազանցում է 1 շնչի հաշվով դրամական եկամուտներին, որը մեծագույն բեռ է հանդիսանում ապագա սերունդների համար: Հայաստանը մեծ կախվածություն ունի արտաքին վարկատուներից, պետական պարտքի պորտֆելը խոցելի է հատկապես ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի տատանումների նկատմամբ, ներքին պարտքի շուկան սահմանափակ է ինչպես իր ծավալներով, այնպես էլ ներդրողների կառուցվածքով:

Գրականություն

1. «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, Երևան, 2008թ.
2. Вавилов Ю. Я. Государственный долг, Москва Перспекива 2007, стр.217
3. www.imf.org
4. www.minfin.am
5. https://www.ceicdata.com/en

[1] *Հիմքը՝ ՀՀ ֆինանսների նախարարության և Վիճակագրության կոմիտեի կողմից հրապարակվող հաշվետվությունները*

[2] *CEIC Data, Indicators, Household Debt: % of GDP, https://www.ceicdata.com/en*

ՀՏԴ 342,7

Սաթենիկ Միրաքյան
Երևանի Պետական Համալսարան
miraqyansatenik@gmail.com

Գիտական ղեկավար՝
տ.գ. դ., պրոֆեսոր Վ. Ա. Աբրահամյան

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Բանալի բառեր՝ *գյուտարարություն, գյուտ, ռիսկային երևույթներ, կառավարում, արդյունավետություն, արտոնագիր*

Հետազոտությունը նվիրված է գյուտարարության կազմակերպման ժամանակ ի հայտ եկող ռիսկային երևույթներին և դրանց կառավարմանը: Առաջ եկող հնարավոր ռիսկային երևույթները ենթարկված են դասակարգման, այնուհետև յուրաքանչյուր դասի համար ներկայացված են կառավարման հնարավոր ուղիներն ու աշխատանքի արդյունավետ կազմակերպման սկզբունքները:

Сатеник Миракян

ПУТИ УПРАВЛЕНИЯ ФАКТОРАМИ РИСКА ВО ВРЕМЯ ИЗОБРЕТАТЕЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Ключевые слова- *изобретательская деятельность, изобретение, факторы риска, управление, эффективность, патент*

Исследование посвящено факторам риска, которые возникают во время изобретательской деятельности и управлению этими факторами. Возникающие потенциальные факторы риска классифицируются, а затем для каждого класса представляются возможные способы управления и принципы эффективной организации работы.

Satenik Mirakyan

WAYS TO MANAGE RISK FACTORS DURING INVENTIVE ACTIVITIES

Key words*-inventive activity, invention, risk factors, management, efficiency, patent*

The research is devoted to the risk factors that arise during inventive activities and the management of these factors. Emerging potential risk factors are classified, and then for each class possible ways of managing and principles of effective organization of work are presented.

Ներածություն

Գյուտարարությունը՝ որպես նորարարության, նորարարական մոտեցման դրսևորում, ցանկացած կազմակերպության արդյունավետ և մրցունակ գործունեության անհրաժեշտ հիմքն է հանդիսանում: Նոր լուծումների շնորհիվ հնարավոր է ոչ միայն թողարկել նոր

արտադրանք, գտնել նոր իրացման շուկաներ, այլև անհամեմատ ավելի հեշտացնել արտադրության և իրացման գործընթացները՝ պայմանավորված նոր սկզբունքների, մոտեցումների ներդրմամբ: Հարկ է նշել նաև, որ նման գործունեությունից շահում է ոչ միայն գյուտարարություն իրականացնող կազմակերպությունը, այլև վերջնական հաշվով ողջ հասարակությունը:

Իհարկե, այս գործընթացը զերծ չի մնում անորոշություններից. գյուտարարի գործունեության ճանապարհին մշտապես առկա են ռիսկային երևույթներ, և առանց դրանց գիտակցման, դասակարգման և կառավարման հնարավոր չի լինի հասնել սահմանված նպատակներին՝ ձևակերպված խնդրի լուծմանը: Առանձնացնենք ռիսկերի այն տեսակները, որոնք մեծ հավանականությամբ կարող են առաջանալ գյուտարարության կազմակերպման ժամանակ, անդրադառնանք նաև դրանց կառավարման ուղիներին:

1.Ֆինանսական կամ ներդրումային ռիսկային երևույթներ

Ակնհայտ է, որ գյուտարարության կազմակերպումը կապված է մեծ ծախսերի և շարունակական ներդրումների հետ: Տվյալ պարագայում քննենք ֆինանսական ռիսկը՝ պայմանավորված ֆինանսական կորուստների առաջացման հետ ներդրումային նախագծի իրականացման ժամանակ: Ֆինանսական ռիսկերի կառավարումը ներկայումս ավելի է հեշտացել գյուտարարությամբ զբաղվող կազմակերպությունների համար: Եթե նախկինում կազմակերպությունը ստիպված էր իրականացնել գյուտարարությունը միայն սեփական միջոցներով, ապա այժմ վերջինս կարող է ներգրավել ֆինանսական միջոցներ այլ կազմակերպություններից՝ այդպիսով նաև որոշ չափով ֆինանսական ռիսկի սեփական բեռը թեթևացնելով (օրինակ՝ վենչուրային կապիտալի ներգրավումը, բիզնես հրեշտակների մասնակցությունը և այլն):

2.Ժամանակային ռիսկային երևույթներ

Գյուտարարության գործընթացը ժամանակատար է: Սակայն մերօրյա աշխարհում ժամանակը խիստ սահմանափակ ռեսուրս է, որը կարող է ծառայել իր օգտագործողի դեմ: Սա հիմք է հանդիսանում ռիսկային երևույթների առաջացման համար: Դիտարկենք երկու հնարավոր իրավիճակ, երբ՝

- մինչ գաղափարը կստանա նյութական տեսք, շարունակ փոփոխվող շուկայական պայմաններում այն կարող է դառնալ բարոյապես հնացած,
- խնդիրը կարող է ոգեշնչել ոչ միայն մեկ գյուտարարի, այլև մի քանիսին, ինչը ավելի կսրի արագության խնդիրը, ինչպես նաև կառաջացնի դժվարություններ արտոնագրի ստացման հարցում:

<<Ժամանակ>> ռեսուրսի հետ օպտիմալ աշխատանքի համար բանալի է հանդիսանում ժամկետների օպտիմալ պլանավորումը: Գյուտարարության գործընթացի արդյունավետության ապահովման համար նախ և առաջ պետք է փորձել պլանավորման փուլում սահմանել խելամիտ ժամկետներ, հնարավորինս սեղմ, սակայն բավարար: Այլ կերպ ասած, այդ ժամկետները պետք է լինեն իրատեսական, հակառակ դեպքում կունենան հակառակ էֆեկտը ժամանակային ռիսկի չեզոքացման վրա:

3. Օպերացիոն ռիսկային երևույթներ

Պլանավորման փուլում մանրամասն սահմանվում են որոշակի չափանիշներ՝ կապված արտադրանքի որակական, արտաքին և այլ ամենատարբեր բնութագրերի հետ, ինչպես նաև սահմանափակումներ գյուտարարության գործընթացում արվելիք ծախսերի, ժամկետների, աշխատակիցների թվաքանակի վերաբերյալ: Օպերացիոն ռիսկային երևույթները պայմանավորված են հենց պլանավորման գործընթացներով. ստացված արդյունքը կարող է չհամապատասխանել սահմանված չափանիշներին, ծախսերը կարող են գերազանցել պլանավորվածը և այլն: Նմանատիպ ռիսկային երևույթների կառավարումը դարձյալ մեծապես պայմանավորված է պլանավորման փուլով. հարկավոր է հստակ սահմանել, թե իրականում ինչ և ինչքան է անհրաժեշտ (հատուկ արդյունքներ և թիրախներ) գործունեության

նպատակին հասնելու համար, ապա նաև վերահսկողական գործառույթների պատշաճ իրականացում:

4.Արտոնագրի ստացման հետ կապված ռիսկային երևույթներ

Գյուտին իրավական պահպանություն վերապահելու համար անհրաժեշտ պայման է այն արտոնագրային իրավունքի օբյեկտ ճանաչելը: Արտոնագրման գործընթացում առաջացող հնարավոր ռիսկային երևույթների աղբյուր են.

- արտոնագիր չստանալը,
- արտոնագրի ստացման նպատակով արված ծախսերի հետգնումը:

Ամենապարզ ռիսկը արտոնագիրը չստանալն է: Ոչ բոլոր հայտերի ներկայացումն է, որ պարտադիր հանգեցնելու է արտոնագրի ստացման: Կարող է որոշվել, որ գյուտը պարզապես արտոնագրելի չէ, քանի որ ընդունակ չէ բավարարել ներկայացվող պահանջները:

Արտոնագրի ստացման համար հայտի ներկայացումը ծախսատար գործընթաց է: Եթե նույնիսկ արտոնագիրը տրամադրվում է, դրա օգնությամբ դեռ պետք է շուկա դուրս գալ ու գումար աշխատել՝ այդպիսով փորձելով հետգնել կատարված ծախսերը, ինչը ոչ միշտ կարող է հաջողվել: Արտոնագրի ստացմամբ պայմանավորված ռիսկային երևույթների չեզոքացման համար հարկավոր է նախքան հայտի ներկայացումը համոզված լինել գյուտի՝ արտոնագրունակության պայմաններին բավարարման հարցում:

Եզրակացություն

Գյուտարարությունը՝ որպես նորարարության, նորարարական մոտեցման դրսևորում, ցանկացած կազմակերպության արդյունավետ և մրցունակ գործունեության անհրաժեշտ հիմքն է հանդիսանում: Նոր լուծումների շնորհիվ հնարավոր է ոչ միայն թողարկել նոր արտադրանք, գտնել նոր իրացման շուկաներ, այլև առհասարակ անհամեմատ ավելի հեշտացնել արտադրության և իրացման գործընթացները՝ պայմանավորված նոր սկզբունքների, մոտեցումների ներդրմամբ: Բնականաբար, այս ամենն ապահովում է գործարարի հիմնական նպատակի իրականացումը՝ ցածր ծախսեր, ուստի և բարձր շահույթ: Սակայն նման գործունեությունից շահողը ոչ միայն գյուտարարություն իրականացնող կազմակերպությունն է, այլև վերջնական հաշվով ողջ հասարակությունը:

Գյուտարարության ողջ գործընթացը պահանջում է հետևողականություն, հաշվետվողականություն, որը պետք է ուղեկցի գյուտարարին գյուտի ստեղծումից մինչը վերջինիս իրավական պահպանությունն ապահովելու փուլը:

Գյուտարարությունը խթան է հանդիսանում տնտեսական ու սոցիալական զարգացման համար, որի ապահովման համար անհրաժեշտ է հաշվի առնել առաջացող հնարավոր ռիսկային երևույթները և իրականացնել դրանց արդյունավետ կառավարում:

Գրականություն

1. Բարսեղյան Տ.Կ. , Հովհաննիսյան Ա.Ա.- Մտավոր սեփականության իրավունք
2. Грачева М. В., Ляпина С. Ю. Управление рисками в инновационной деятельности, М.: Юнити,2013
3. Балдин К. В., Певредеряева И. И., Голов Р. С. Управление рисками в инновационно-инвстиционной деятевльности предприятия: Учебное пособие, М.: ИТК “Дашкова и К”, 2012
4. https://www.cram.com/essay/The-Importance-Of-Inventions/FK7YYJ6HLCXXQ
5. https://www.beboss.ru/bizideas/all/7-innov
6. https://zipordering.com/operational-plan/inventory-risk.html?fbclid=IwAR2ZTKfkGRhr21lZuUVmAb967CfMd8yfeTrRP15bC8kDLNtiPj2d07TFWQc
7. https://www.inventorsdigest.com/articles/dont-ignore-4-letter-word-risk/?fbclid=IwAR1N93NVzNbieQwdP_FquS2RbTT8Yz1Yoh1wK-KJyv7Sh8b-FPTxHr1eE6c
8. https://smallbusiness.chron.com/risk-inventor-assume-filing-patent-invention-76927.html

9. https://www.zewskicorp.com/blog/8-challenges-inventors-face-with-new-product-design?fbclid=IwAR3LnyTdCkdPCFfpnDM2gVsBoDU6GABEvSGB-Yb1ZjwgRAX1gmF9qopG39Y
10. https://www.rand.org/pubs/research_reports/RRA838-1.html?fbclid=IwAR3kEXFIIf7tiOAaC-Kdbyasx_LR0V6LntPqMkWYCKDpGDyihxTM2c1Xxnk
11. https://hbr.org/2013/04/innovation-risk-how-to-make-smarter-decisions?fbclid=IwAR063q7QS-aLrohQvVKBmcx0kAwebIHaJYGqU8Ix2wEF2YuEsz0FkW0BvUM
12. https://www.businessinsider.com/9-important-tips-for-managing-financial-risk-2013-4?fbclid=IwAR063q7QS-aLrohQvVKBmcx0kAwebIHaJYGqU8Ix2wEF2YuEsz0FkW0BvUM

ՀՏԴ 338.48

Տիգրան Դավթյան
Շիրակի պետական համալսարանի
հումանիտար գիտությունների և արվեստի
ֆակուլտետի
զբոսաշրջության բաժնի 2-րդ կուրսի
ուսանող
E-mail: tigrandavtyan55555@gmail.com

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հիմնաբառեր՝ *քաղաքակրթական ճգնաժամ, արժեքային հիմնախնդիր, հայկական քաղաքակրթություն, Հայ Առաքելական Եկեղեցի:*

Հոդվածում անդրադարձ է կատարվում ժամանակակից քաղաքակրթական ճգնաժամի հաղթահարման փուլում հայկական քաղաքակրթության առաքելության իրացման հնարավորությունների ուսումնասիրմանը, և այդ ամենի համատեքստում քննության է առնվում Հայ Առաքելական Եկեղեցու դերակատարումը:

Առաջադրված խնդիրների (ժամանակակից քաղաքակրթական ճգնաժամի բնորոշում և դրա հաղթահարմանն ուղղված մասնագիտական գնահատականների վերլուծություն) լուծման համար օգտվել ենք վերլուծության, համադրման, տեսական ընդհանրացման գիտական մեթոդներից:

Ստացված եզրակացությունները կարող են օգտակար լինել պետական ու ազգակեցական քաղաքականության ոլորտներում:

Тигран Давтян

АРМЯНСКАЯ АПОСТОЛЬСКАЯ ЦЕРКОВЬ В КОНТЕКСТЕ АРМЯНСКОЙ НАЦИОНАЛЬНОЙ МИССИИ

Ключевые слова: *Цивилизационный кризис, проблема ценностей, Армянская цивилизация, Армянская Апостольская Церковь.*

В статье затрагивается вопрос изучения возможностей реализации миссии армянской цивилизации на этапе преодоления современного цивилизационного кризиса, и в контексте всего этого рассматривается роль Армянской Апостольской Церкви.

Для решения поставленных задач (определение современного цивилизационного кризиса и анализ профессиональных оценок, направленных на его преодоление) мы воспользовались научными методами анализа, сопоставления, теоретического обобщения.

Выводы, полученные в результате статьи, могут быть полезны в сфере государственной и национальной политики.

Tigran Davtyan

THE ARMENIAN APOSTOLIC CHURCH IN THE CONTEXT OF THE ARMENIAN NATIONAL MISSION

Key words: *Civilizational crisis, problem of values, Armenian civilization, Armenian Apostolic Church.*

The article touches upon the issue of studying the possibilities of realizing the mission of the Armenian civilization at the stage of overcoming the modern civilizational crisis, and in the context of all this, the role of the Armenian Apostolic Church is considered.

To solve the tasks set (definition of the modern civilizational crisis and analysis of professional assessments aimed at overcoming it), we used scientific methods of analysis, comparison, theoretical generalization.

The conclusions obtained as a result of the article can be useful in the field of state and national policy.

Նախաբան

Ժամանակակից քաղաքակրթական ճգնաժամն իր խորքային դրսևորումներով ունի հաղթահարման անհրաժեշտություն, որի համար անզոր են դրա առաջացման և վերարտադրման պատճառ հանդիսացող, արդեն իրենց սպառած քաղաքական և տնտեսական համակարգերը:

Ի տարբերություն նախկին երեք մեծ հեղափոխությունների, ներկայիս՝ չորրորդ, տեխնոլոգիական հեղափոխությունը[1], որը որպես զենք ուղղված է համայն մարդկությանը, ոչնչացնում է արարող մարդ տեսակի գոյությունը: Ինչին նպաստում են ժամանակակից տեխնոլոգիական գործիքներն ու դրանց միջոցով տարածվող ինֆորմացիան, որոնց գլխավոր նպատակը մարդկության տոտալ վերահսկումն ու կառավարումն է:

Վերոնշյալ երևույթների հաղթահարման համար անհրաժեշտ է նոր, արդարահեն, Արարչակենտրոն աշխարհակարգի ձևավորումն ու հաստատումը[2], որն ի զորու կլինի հանել աշխարհն այս ճգնաժամի սպառնալիքներից ու դրանց հետևանքներից, ինչն ըստ էության, հանդիսանում է հայ ազգային առաքելության մի մասը, և մենք խնդիրը կդիտարկենք հատկապես այս տեսանկյունից:

Բովանդակություն

Առկա քաղաքակրթական խոր համակարգային ու համընդհանուր ճգնաժամը[3] և դրա հետևանքով դրսևորվող երևույթներն ունեն իրենց խորքային պատճառները: Գլխավորներից մեկը քարոզվող կեղծ արժեքներն են, որոնք մարդկանց դարձնում են (դարձրել են) եսասեր, սպառող, ապարժեք, նյութապաշտ և ապաբարոյական, հեշտ կառավարվող բիոռոբոտներ[4]: Ինչն էլ իր հերթին թույլ չի տալիս գիտակցելու և հասկանալու մեր օրերում սպառնալիքների վտանգավորության աստիճանը, հետևաբար նաև խոչընդոտում է հասարակական ու պետական կյանքի կազմակերպմանը, ըստ այդմ էլ նաև ազգային առաքելության իրագործմանը:

Մեր օրերի թիվ մեկ խնդիրն է հասարակական գիտակցության վերափոխումն ու վերակոդավորումը[5]: Մարդը իր էությամբ լինելով ստեղծող ու կյանքն ավելի լավը դարձնող, հոգևոր և մարմնավոր էակ, կյանքի իմաստը ներկայիս ժամանակներում փորձում է գտնել սխալ մեթոդներով:

Այսօրվա՝ Աստծու գոյության մերժման նախապայմանով առաջնորդվող աշխարհը, որպես կարևոր գերխնդիր, փորձում է ազատվել Աստծու ստեղծած մարդ տեսակից[6], որի գոյությունը խանգարում է այսպես կոչված աշխարհի կառավարիչներին: Ինչի համար կիրառվում են մի շարք գործիքներ: Մասնավորապես՝ մարդուն սահմանելով իբրև գերագույն արժեք և տալով ամենաթողությամբ փաթեթավորված կեղծ ազատություն, դարձնում են նրան միայն իրավունքներ ունեցող քաղաքացի, որով իրապես ստացվում է սահմանափակել իրական մարդկային ազատությունն ու արարող էությունը: Հաջորդ գործիքը քարոզվող, հեշտ ու պրիմիտիվ արժեքներն են, որով ստացվում է մարդուն կտրել սոցիալական կապերից ու պարտականություններից: Ինչի արդյունքում էլ այդ արժեքները մուտք են գործում հասարակական ամենօրյա կյանք:

Հաջորդ բացասական երևույթը, որը բխում է վերը թվարկվածներից, մարդկանց առաջարկված «ինքն, իրեն համար ապրելու» կյանքի բանաձևն է, որն էլ հստակ կերպով մղում է մարդուն իր

---

[1] ***Ներսիսյան Ա.,*** *'Հայկական քաղաքակրթության հայտը նոր աշխարհակարգի հաստատման գործընթացում', էջ 2, www.artsakhlib.am:*

[2] *Նույն տեղում,էջ 4:*

[3] *Նույն տեղում,էջ 2:*

[4] *Նույն տեղում, էջ 3:*

[5] *Նույն տեղում,էջ 2:*

[6] *Նույն տեղում:*

«սեփական երջանկության» կառուցմանը: Ինչից առաջ են գալիս սեփական շահերի և կարիերայի բավարարման համար ապրելը, որոնք հաճախ վեր են դասվում ազգային ու պետական շահերից և թույլ չեն տալիս գիտակցելու ընդհանուր հասարակության երջանկության ու բարեկեցության դեպքում սեփականի լիարժեք լինելու հանգամանքը: Կտրվելով իրական կյանքից և կամա թե ակամա հայտնվելով թերաժեքության մեջ՝ մարդը փորձում է այլ միջոցներ գտնել այդ ամենի հաղթահարման համար, որոնք էլ ավելի են խորացնում առկա իրավիճակը:

Վերջին տասնամյակներում ձևավորված մշակույթը ստեղծեց և ազգայինի քողի տակ հասարակությանը մատուցեց կեղծ ազգային արժեքներ, որոնք սխալ կարծիք ու տպավորություն ստեղծեցին ազգայինի վերաբերյալ: Ինչի հետևանքով ազգայինը սկսեց ընկալվել որպես սխալ, բռնի, ճնշող, վանող, անազատ, հին և նախկին: Ինչի պատճառով էլ այժմ զգացվում է ազգայինի նորովի ու իրական ներկայացման, մատուցման ու կիրառման կարիք:

Ներկա ժամանակներում առանցքային նշանակություն ունեցող հարցերը մղվում են երկրորդ պլան կամ առհասարակ անտեսվում են: Նշվածը վերաբերում է նաև Հայ Առաքելական եկեղեցու դերի ու նշանակության ընկալմանը, որը դարեր շարունակ եկեղեցիների միջոցով գծել է մեր հայրենիքի իրական սահմանները Հայկական լեռնաշխարհում: Ըստ էության, այն մեր միակ առողջ բջիջն է, որի ակտիվ գործունեությունը միայն կարող է առողջացնել մեր ամբողջովին ախտահարված ազգային օրգանիզմը: Ընդհանուր առմամբ լինելով անտեսված իր իսկ զավակների կողմից՝ չի գիտակցվում նրա ամբողջական էությունն ու առաքելությունը, որը սահմանափակվում է միայն մշակութային քրիստոնեությանը տուրք տալով կամ ավելի փոքրանալ և տեղավորվել մոմ վառել-չվառելով: Պատճառներից մեկը աշխարհում առաջինը քրիստոնեությունն ընդունած ազգի լիարժեք կերպով ու կենցաղով իրական քրիստոնեաներ չլինելն է, որի հետևանքով քրիստոնեությունը հանրության լայն շրջանակների մոտ ընկալվում է որպես «թույլ կրոն»: Մի խնդիր, որին բազմիցս առնչվում է Հայ Առաքելական Եկեղեցին ազգային առաքելության համատեքստում:

Վերը նշվածից հետևում են ազգային կյանքում բացասական մյուս դրսևորումները: Մասնավորապես՝ անտարբեր վերաբերմունքը կրթության նկատմամբ, որը լավագույն դեպքում ընկալվում է միայն սեփական բարեկեցության ապահովման միջոց: Բացասական վերաբերմունք կա նաև զինվորական ծառայության հանդեպ, որը հիմնականում դիտարկվում է միայն խաղաղ ժամանակների համար (որից էլ բանակում առաջ են գալիս բացասական երևույթները) և ընկալվում որպես «անիմաստ ու անկապ» երկու տարիների կորուստ, ինչը տալիս է պետությանը պարտք չմնալու և հետախուզման մեջ չլինելու՝ հանգիստ ապրելու պայման: Աշխատանքի անցնելու պարագան ևս առավել շատ միտված է անձնական կարիքներին ու շահերին, որտեղ չի նկատվում մարդկանց (հատկապես երիտասարդների) ի սրտե գործին նվիրվելու ջանք ու շահագրգռվածություն: Գրեթե նույն վերաբերմունքն է նաև ընտանիք կազմելու հարցում, ինչն այսօր առավել շատ ընկալվում է որպես հոգս, քան թե ազգային նպատակների ու առաքելության իրականացման պայման:

Դեռևս չկա անհրաժեշտ չափով ազգային և համամարդկային առաքելության ընկալման գիտակցություն և պարտավորություն, որը կմղեր այդ նպատակների իրականացմանը, ինչի արդյունքում էլ կբարելավվեր համընդհանուր կյանքը: Հակառակ դեպքում հնարավոր է մնալ միայն պատկերացնողի կամ կողքից դիտողի դերում: Ինչի հետևանքը այսօր ցայտուն կերպով տեսանելի և անտարբեր վերաբերմունքն է ազգային-պետական հարցերին, մասնավորապես՝ վերջին 44-օրյա պատերազմի պատճառով մարդկային ու տարածքային կորուստներին և ի հայտ եկած մարտահրավերներին:

Հայ ազգային-քրիստոնեական կյանքին առնչվող կարևոր և առանցքային հարցերը, որոնք լուսաբանման անհրաժեշտություն ունեն և պետք է ստանան անհապաղ լուծումներ, հետևողական կերպով՝ քարոզչական մեխանիզմների գործի դրմամբ, քողարկվում են «կրոնական և քաղաքական» անցանկալի թեմաների քողի տակ՝ մղվելով երկրորդ պլան: Հատկապես երիտասարդ սերնդին փորձում են ձևավորել իբբրև «չեզոք և քաղաքակիրթ»,

«կրոնական և քաղաքական թեմաներ չքննարկող» քաղաքացիներ, որի միջոցով էլ ստացվում է նրանց ազգային նպատակներից ու առաքելությունից առանձնացնելը՝ դարձնելով ապարժեք աշխարհաքաղաքացիներ:

Վերոնշյալ երևույթների հաղթահարման և ազգային առաքելության համատեքստում, առանցքային դերակատարություն կարող է և պետք է ստանձնի Հայ Առաքելական եկեղեցին, ով կանգնած է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին մարտահրավերների առաջ: Սրանք կարող են ունենալ ինչպես բացասական՝ խանգարող, այնպես էլ դրական ազդեցություն, որը հնարավորություն կտա գտնելու հաղթահարման նոր՝ 3-րդ հազարամյակին բնորոշ մեթոդներ ու ռազմավարություն:

Համամարդկային առաքելության համատեքստում նպատակը համամարդկային կենսագործունեության պահպանումն ու Արարչակենտրոն, արդար, իրապես ազատ, նոր աշխարհակարգի հաստատումն է, որը հաջորդում կամ բխում է ազգային առաքելությունից և չի կարող լիարժեք կերպով իրականություն դառնալ առանց համախոհների ու դաշնակիցների: Ովքեր այս պարագայում կարող են լինել ոչ թե նավթ, գազ կամ այլ թանկարժեք ռեսուրսներ ունեցող ազգերն ու պետությունները, այլ Արևելյան հնագույն ուղղափառ եկեղեցիների ընտանիքը՝ ովքեր առանց շեղվելու կիսում են մեզ հետ նույն դավանանքը և ընդունում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որպես համայն քրիստոնյաների հոգևոր կենտրոն: Ինչն էլ իր հերթին մեզ տալիս է հիմք, պատասխանատվություն և պարտավորություն՝ ստանձնելու այդ առաքելությունը:

Արևելյան հնագույն ուղղափառ եկեղեցիները[1], քրիստոնյա Արևելքում կազմավորված եկեղեցիներն են, որոնք, մերժելով Քաղկեդոնի ժողովը, կազմել են Ընդհանրական եկեղեցում առանձին դավանական ընտանիք: Արևելյան հնագույն ուղղափառ եկեղեցիներն իրենց դավանանքով հետևորդներն են Ալեքսանդրիայի քրիս-տոսաբանության և աստվածաբանության, որոնք հաղթանակել և ուղղափառ են ճանաչվել առաջին երեք տիեզերական ժողովներում: Ընդունելով միայն երեք տիեզերական ժողովների դավանանքային վճիռները՝ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները գտնում են, որ Նիկիայի Ա (325), Կ. Պոլսի Բ (381), Եփեսոսի Գ (431) տիեզերաժողովները բանաձևել են քրիստոնեական կրոնի և հավատի հիմնական սկզբունքները, այն է՝ Որդու Աստվածությունը, Սուրբ Երրորդության, Մարդեղության և Փրկագործության խորհուրդները: Հետագայի նորամուծությունները նրանք համարում են ալեքսանդրյան աստվածաբանական ավանդությանը հակասող:

Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները, դավանելով միաբնակությունը (Miaphysitism), մերժում ե ն եվտիքեսությունը (Monophysitism), նեստորական և քաղկեդոնական երկա-բընակությունը (Dyophysitism), և կանգնել են դավանական այն սկզբունքների վրա, որոնք ավանդվել են Աստվածաշնչով, երեք տիեզերական ժողովներով և եկեղեցու հայրերի ուսուցումներով:

Արևելյան հնագույն ուղղափառ եկեղեցիներն են՝

- Հայաստանյայց առաքելական եկեղեցին (10 մլն[2]՝ Հայաստան, Սփյուռք),
- Ղպտի ուղղափառ եկեղեցին (10մլն[3]՝ Եգիպտոս, Մերձավոր Արևելք),
- Եթովպական ուղղափառ եկեղեցին (40 մլն[4]՝ Եթովպիա, Աֆրիկա),
- Էրիթրեական ուղղափառ եկեղեցին (3 մլն[5]՝ Էրիթրեա),
- Ասորի ուղղափառ եկեղեցին (5,5մլն[6]՝ Սիրիա, Իրաք, Լիբանան, Իսրայել, Թուրքիայի հարավ-արևելք և Իրան),

---

[1] ***Ղազարյան Ա.***, *«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 146:*

[2] *Ըստ ՀԱԵ պաշտոնական կայքի տվյալների, https://www.armenianchurch.org:*

[3] *Ըստ Ղպտի ուղղափառ եկեղեցու պաշտոնական կայքի տվյալների, https://www.copticchurch.net:*

[4] *Ըստ Եթովպական ուղղափառ եկեղեցու պաշտոնական կայքի տվյալների, http://www.ethiopianorthodox.org/:*

[5] *Ըստ Էրիթրեական ուղղափառ եկեղեցու պաշտոնական կայքի տվյալների, https://www.tewahdo.org:*

[6] *Ըստ Ասորի ուղղափառ եկեղեցու պաշտոնական կայքի տվյալների, www.syrian-orthodox.com:*

· Հնդկաստանի Մալաբար ասորական ուղղափառ եկեղեցին (4 մլն[1]՝ Հնդկաստան,Մերձավոր Արևելք),

Մենք կարծում ենք, որ զբոսաշրջու0000,,թյան ոլորտի զարգացման արդյունավետ ռազմավարության ձևավորման հիմնական խնդիրները պետք է ներառեն.

· ոլորտի զարգացման ողջամիտ նպատակների և խնդիրների որոշում՝ երկրի առկա ներքին զբոսաշրջային, ռեկրեացիոն և տնտեսական ներուժը և արտաքին միջավայրի զարգացման միտումները հաշվի առնելով,

· զբոսաշրջության ոլորտում աշխարհի լավագույն փորձի համապարփակ ուսումնասիրություն և դրա հարմարեցում հայրենական պայմաններին,

· կարգավորող դաշտը և տուրիստական ծառայությունների որակը համապատասխանեցնել համաշխարհային չափանիշներին,

· օտարերկրյա փորձի օգտագործմամբ զբոսաշրջության ոլորտի կադրային վերապատրաստման համակարգի կատարելագործում,

· զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման պետական ծրագրի մշակում և իրականացում,

· շուկայի ներկա իրավիճակի և դրա զարգացման կանխատեսումների վերլուծության հիման վրա զբոսաշրջային ապրանքների բարելավման և դիվերսիֆիկացման ուղղությունների և դրանց վաճառքի ամենահեռանկարային շուկաների զարգացման ուղղությունների որոշում,

· ոլորտի համար երկարաժամկետ մարքեթինգային և գովազդային ծրագրի մշակում, որը համապատասխանում է դրա զարգացման ռազմավարական նպատակներին և խնդիրներին,

· համաշխարհային շուկայում զբոսաշրջային ապրանքների հայրենական ապրանքանիշերի ստեղծում և առաջխաղացում, որոնք բարելավում են Ռուսաստանի զբոսաշրջության ոլորտի արտաքին իմիջը և մեծացնում նրա ներդրումային գրավչությունը:

Հավելված 13. Միջազգային զբոսաշրջության ոլորտի զարգացման ռազմավարությունները

Ոլորտի զարգացման ռազմավարությունը պետք է նպաստի զբոսաշրջության և հանգստի ծառայությունների արտադրության գործոնների արդյունավետ օգտագործմանը, շարունակական բարելավմանը և նորացմանը՝ ուղղված.

· պետության, առանձին շրջանների և կենտրոնների աշխարհագրական դիրքի բնական առավելությունների օգտագործումը արդյունավետ տարանցիկ քաղաքականություն վարելու, հարևան երկրների հետ միջսահմանային զբոսաշրջային փոխանակումների ընդլայնման և հաղորդակցության համակարգի մշակման միջոցով,

· ազգային բնական, պատմական և մշակութային ժառանգության պահպանությունն ու վերականգնումը, կանոնակարգային դաշտի բարելավման, ռեկրեացիոն և զբոսաշրջային տարածքների կարգավիճակի օրենսդրական հատկացման և դրանց ֆոնդի ընդլայնման, ռեկրեացիոն և զբոսաշրջային տարածքների կարողությունների գիտականորեն հիմնավորված նորմերի պահպանման, ներքին և զբոսաշրջային տարածքների ներգրավման միջոցով,

· արտաքին ներդրումներ զբոսաշրջային օբյեկտների վերակառուցման և բարեկարգման համար,

· ընդհանուր տնտեսական և մասնագիտացված ենթակառուցվածքների բարելավում՝ օգտագործելով կապիտալ ներդրումների ոլորտները պետական և մասնավոր հատվածների միջև, բաժանելով առկա համաշխարհային պրակտիկան,

· ներքին և արտաքին կապիտալի ներհոսքի համար մակրո և միկրո մակարդակներում բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծում, խոշոր ներդրումային ծրագրերի իրականացմանը պետության անմիջական մասնակցությունն ու աջակցությունը,

· կադրերի պատրաստման և խորացված վերապատրաստման համակարգի կատարելագործում՝ հաշվի առնելով ազգային զբոսաշրջային և ռեկրեացիոն համալիրի մասնագետների իրական և ապագա պահանջմունքները.

· տեղեկատվական և վերլուծական բազայի ստեղծում՝ ներառյալ կարգավորող, վիճակագրական, ծրագրային, գիտական, կրթական, մեթոդական, գովազդային և տեղեկատվական, առևտրային բնույթի նյութեր, զբոսաշրջության շուկայավարման հետազոտությունների ազգային կենտրոնի ստեղծման միջոցով համապատասխան կազմակերպչական ենթակառուցվածքի ձևավորում,

· զբոսաշրջության ոլորտում վիճակագրական հաշվառման համակարգի կատարելագործումը՝ գիտական վերլուծության տեղեկատվական բազան ընդլայնելու և արդյունավետ կառավարման որոշումների մշակման նպատակով, տեղական վիճակագրական ապարատը համահունչ դարձնելով ընդհանուր ընդունված միջազգային չափանիշներին և ԱՀԿ առաջարկություններին,

· օտարերկրյա այցելուների անվտանգության ապահովումը կանխարգելիչ միջոցառումների և ներքին գործերի մարմինների ուժեղացված վերահսկողության միջոցով զբոսաշրջային տարածքներում օրինականության և կարգի նկատմամբ,

· օտարերկրյա այցելուների ընդունման հեռանկարային ուղղությունների առաջնահերթ մշակում՝ լրացնելով զբոսաշրջության զարգացման ազգային ծրագիր, որպես հիմնական ծրագրային փաստաթուղթ:

ՀՏԴ-902/908

Գոհար Խաչատրյան
Արցախի պետական համալսարան
Պատմության և իրավագիտության
ֆակուլտետ
Պատմություն 3-րդ կուրս
Ղեկավար՝ պ. գ. թ. ***Ն. Պ. Մարումյան***

ՄԱՐՏՈՒՆԵՑԻՆԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ

Բանալի բառեր- *Արցախ, Մարտունի, մարտունեցիներ, պատերազմ, 2020, սեպտեմբեր, հոկտեմբեր, շքանշան, «Արցախի հերոս», «Մարտական խաչ»:*

Հոդվածում փորձ է արվում լուսաբանել մարտունեցիների ակտիվ մասնակցությունը թուրք-ադրբեջանական հրոսակների կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծած 44-օրյա պատերազմին: Հարցազրույցների միջոցով յուրովի վեր են հանվում որոշակի տվյալներ և ներկայացվում «Արցախի հերոս» և «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիրների կենսագրությունն ու անցած մարտական ուղին, ընդգծվում մարտունեցիների հերոսական գործողությունները և նրանց ներդրած ավանդը Արցախի պաշտպանության գործում :

Гоар Хачатрян

МАРТУНИЙЦЫ ВО ВРЕМЯ 44-ДНЕВНОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЫ

Ключевые слова. *Арцах, Мартуни, мартунийцы, война, 2020, сентябрь, октябрь, орден, «Герой Арцаха», «Боевой крест».*

В данной статье делается попытка осветить активное участие мартунийцев в 44-дневной войне, развязанной турецко-азербайджанскими бандами 27 сентября 2020 года. Посредством интервью своеобразно предоставляются определенные сведения, представляется биография и пройденный боевой путь орденоносцев - «Герой Арцаха» и «Боевой крест» 1-й степени, подчеркивается героические действия мартунийцев и их вклад в борьбе за защиту Арцаха.

Gohar Khachatryan

THE MARTUNIANS DURING IN THE 44-DAY ARTSAKH WAR

Key words. *Artsakh, Martuni, the Martunians, war, 2020, September, October, order, "Hero of Artsakh ", "Battle Cross".*

The article attempts to underline the active involvement of the Martunians in the 44-day war, unleashed by Turkish-Azerbaijani thugs on 27 September 2020. Through interviews, certain information is provided specifically, also is presented curriculum vitae and combat path of holders of the orders "Hero of Artsakh" and "Battle Cross" 1st degree and is emphasized the heroic actions of the Martunians and their contribution to the defense of Artsakh.

Արցախն այն տարածաշրջանն է, որի շուրջ քաղաքական խմորումներ են ընթանում, և այսօր Կովկասյան տարածաշրջանում Արցախի ինքնության, ազատության, անկախության հետ կապված յուրաքանչյուր խնդիր մեզ համար կարևոր է ու ճակատագրական: Արցախը հատկապես իր ձայնը բարձրացրեց 1988 թ.՝ ծավալելով Արցախյան շարժումը, որը գերտերությունները սխալ մեկնաբանեցին: Արցախի անկախությունն աշխարհաքաղաքական տեսանկյունից ձեռնտու չէր

հարևան երկրներին: Դրա համար էլ արցախցիների ձեռքբերումները 1992-1994 թթ. պատերազմից և խաղաղության պայմանագրի կնքումից հետո խանգարեցին գերտերությունների քաղաքական շահերին, քանի որ դրանք խաչվում էին Արցախում: Դրա մասին է վկայում 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմը, որը ևս ցույց տվեց, որ արցախցին անհանդուրժող է ու անկոտրուն: 2020 թ. սեպտեմբերին թշնամին նորից դիմեց սադրանքների, և ծավալվեց լայնամասշտաբ պատերազմ: Ռմբակոծվում էին մայրաքաղաք Ստեփանակերտը, Մարտունին, Մարտակերտը, Հադրութը, ինչպես նաև մի շարք բնակավայրեր:

Առաջին հարվածները տեղացին Մարտունու վրա: Արձակված հենց առաջին հրթիռից եղան մարդկային կորուստներ՝ 2 քաղաքացիական զոհ՝ ութամյա Վիկտորյա Գևորգյանն ու Էլլադա Բալայանը, և 2 վիրավոր:

Ի պատասխան Ադրբեջանի հրահրած պատերազմի՝ Արցախում հայտարարվեց ռազմական դրություն և ընդհանուր զորահավաք: Ինչպես Արցախյան առաջին և Ապրիլյան պատերազմների ժամանակ, այնպես էլ Արցախյան երկրորդ պատերազմի օրերին Հայաստանը կանգնած էր Արցախի կողքին:

Մարտունեցիները ևս մի մարդու պես համախմբվեցին և իրենց կյանքի գնով պաշտպանեցին հայրենի հողը: Նրանք անհավասար մարտերում խիզախորեն պայքարում էին ամեն մի թիզ հողի համար, իսկ մարտերը թեժանում էին:

Մարտունին ռմբակոծվում էր ամեն օր՝ տարբեր զինատեսակներից և ինքնաթիռներից: Պատերազմի չորրորդ օրը՝ հոկտեմբերի 1-ին, քաղաքում համարյա քաղաքացիական բնակչություն չէր մնացել, երբ քաղաք էին այցելել տարբեր լրատվամիջոցների աշխատակիցներ՝ Civilnet-ից, Լը Մոնդից և այլն[1]: Նրանց (լրագրողների)՝ Մարտունիում գտնվելու ժամանակ քաղաքը սկսեց ռմբակոծվել Գրադ կայանքից: Ուղեկցող մարտունեցի Գրիշա Նարինյանը[2] մահացու վիրավորում ստացավ, իսկ հայ ու ֆրանսիացի լրագրողները՝ տարբեր տեսակի բեկորային վնասվածքներ:

Նույն օրը Մարտունի քաղաքում հրթիռակոծությունից զոհվեց նաև Մարտունու ԱԱԾ պետի տեղակալ Արմեն Հովսեփյանը[3]:

Մարտունեցիները 2020թ. սանձազերծված պատերազմի հենց առաջին օրից կռվել են ռազմաճակատի տարբեր մասերում՝ իրենց կյանքի գնով պաշտպանելով Արցախ աշխարհը: Կորուստները մեծ էին: Բուն քաղաքից զոհվել են 50 հայորդիներ, վիրավորվել՝ 87-ը, 2-ը համարվում են անհետ կորած[4]: Նրանցից Արթուր Աղասյանն արժանացել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչմանը[5], կան նաև «Մարտական խաչ», «Արիության», «Մատական ծառայություն» շքանշաններին արժանացած մարտունեցիներ:

Արթուր Գրիգորիի Աղասյանը ծնվել է 1997 թ. ապրիլի 7-ին, ԱՀ Մարտունի քաղաքում: Ուսումը կիսատ թողնելով՝ բանակ է զորակոչվել 2015 թ. հուլիսի 27-ին: 5 ամիս ծառայել է Մատաղիսում, որից հետո դեկտեմբերի 27-ին տեղափոխվել է Թալիշ՝ որպես ջոկի հրամանատար: 2016 թ. ապրիլին գրագետ կազմակերպել է իր դիրքի պաշտպանությունը՝ արժանի հակահարված հասցնելով «Յաշմա» հատուկ ջոկատայիններին, և փրկել զինվորների կյանքը: Ապրիլյան պատերազմից հետո նա ՀՀ նախկին նախագահ Սերժ Սարգսյանից անձամբ ստացել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշան[6]: Մասնակցել է նաև 2020թ. 44-օրյա պատերազմին և զոհվել հոկտեմբերի 2-ին, Թալիշում: Արթուրի մասունքները հայտնաբերվել են հուլիսի 14-ին…

ԱՀ նախագահ Արայիկ Հարությունյանը հայրենիքի պաշտպանության ու անվտանգության ապահովման գործում Արցախի Հանրապետությանը մատուցած բացառիկ ծառայությունների,

[1] https://www.google.com/amp/s/www.civilnet.am/news/

[2] Ի դեպ, Գրիշա Նարինյանը ապրիլյան պատերազմում զոհված Վլադիմիր Նարինյանի եղբայրն է:

[3] Հետմահու արժանացել է «Արիության համար» մեդալի:

[4] ԱՀ Մարտունու քաղաքապետարանի տեղեկություն (փաստաթուղթ):

[5] https://aparaj.am/voske-artciv-shkhanshanakir-arthur-aghasyan/

[6] https://panarmenian.net/m/arm/interviews/

ցուցաբերած քաջության ու անձնական արիության համար Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի N զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի 6-րդ վաշտի հրամանատար, կապիտան Արթուր Գրիգորիի Աղասյանին հետմահու շնորհված «Արցախի հերոս» բարձրագույն կոչման «Ոսկե արծիվ» շքանշանը հանձնեց Արթուրի հորը:

Արթուր Աղասյանի հրաժեշտի արարողությունը տեղի է ունեցել 2021թ. հուլիսի 18-ին, Մարտունու Հաղթանակի հրապարակում՝ Մոնթե Մելքոնյանի հուշակոթողի մոտ: որտեղ մարտունեցիները վերջին հրաժեշտն են տվել հերոս հայորդուն: Հուղարկավորվել է Մարտունու գերեզմանատանը[1]:

Արժևորման արժանի է Սամվել Կառլենի Ղահրամանյանը, որը ծնվել է 1968 թ. հունիսի 15-ին, ԱՀ Մարտունի քաղաքում: 1987-1989 թթ. անցել է պարտադիր ժամկետային ծառայության: Ծառայել է ՌԴ-ում: Զորացրվելուց հետո վերադարձել է հայրենիք և որպես սպա համալրել ՊԲ ԶՈՒ շարքերը: Մասնակցել է Արցախյան առաջին գոյապայքարին: Ծառայում էր ՊԲ-ի 3-րդ ՊՇ-ի 3-րդ հրաձգային գումարտակի 7-րդ հրաձգային վաշտում՝ որպես ենթասպա: «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ էր:

Հոկտեմբերի 11-ին ամբողջ վաշտի կազմով մեկնել էին Հադրութ, որտեղ ինքնապաշտպանական մարտեր մղելով՝ ընկել էին շրջափակման մեջ: Երկար ժամանակ օգնության սպասելով՝ մարտ էին վարել՝ անզիջում ու կատաղի: Զոհվել է Հադրութի Քոշբեկ գյուղի մատույցներում՝ թշնամու ԱԹՍ-ի հարվածից: Հետմահու պարգևատրվել է «Արիության» և «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշաններով: Հուղարկավորվել է հունվարի 14-ին, Մարտունու գերեզմանատանը[2]:

19-ամյա Վահե Միհրանի Ջիվանյանը ծնվել է 2001 թ. հուլիսի 21-ին, ԱՀ Մարտունի քաղաքում: 2019 թ. անցել է պարտադիր ժամկետային ծառայության ԱՀ ՊԲ-ի 3-րդ ՊՇ-ի 3-րդ հրաձգային գումարտակի 7-րդ հրաձգային վաշտում: Հոկտեմբերի 11-ին Հադրութ մեկնած 72 հոգանոց վաշտի կազմում էր նաև Վահեն: Վահեի դին հայտնաբերեցին դեկտեմբերի 5-ին: Նրա աճյունը ամփոփված է Քերթի գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Մատական ծառայություն» և «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշաններով[3]:

Հրետանավոր Միեր Վեսմիրի Մկրտչյանը ծնվել է 1976 թ. հունվարի 28-ին, ԱՀ Մարտունի քաղաքում: Ուսումն ավարտելուց հետո զորակոչվել է ԱՀ ՊԲ՝ որպես ժամկետային զինծառայող: Մասնակցել է Արցախյան առաջին պատերազմին և ստացել լեյտենանտի կոչում: 1993 թ. զբաղեցնում էր ականանետային մարտկոցի հրամանատարի պաշտոնը: Պատերազմի ավարտից հետո իր գործունեությունը շարունակել է Մարտունու 3-րդ ՊՇ-ում: Հրետանու, տեխնիկայի և սպառազինության պետի պաշտոնը զբաղեցնելով՝ Մ. Մկրտչյանն ակտիվորեն մասնակցել է ապրիլյան պատերազմին և արժանացել «Մարտական ծառայություն» և «Գարեգին Նժդեհ» մեդալներին:

Ակտիվորեն մասնակցել է Արցախյան երկրորդ պատերազմին՝ իր ուրույն ավանդն ունենալով հրետանու գործունեության մեջ: Սակայն հոկտեմբերի 11-ին թշնամու ԱԹՍ-ի հարվածից զոհվել է նաև Միեր Մկրտչյանը: Նրա հուղարկավորությունը տեղի է ունեցել 2020 թ. հոկտեմբերի 12-ին, Մարտունու գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Արիության» և «Մարտական խաչ» 1-րդ աստիճանի շքանշաններով[4]:

Ռաֆիկ Ավշարի Խաչատրյանը հերոսական կյանք է ունեցել: Ծնվել է 1970 թ. օգոստոսի 23-ին, ԱՀ Վարանդայի (Ֆիզուլի) շրջանի Հորադիզ գյուղում: 1988-1990 թթ. ծառայել է նախկին ԽՍՀՄ բանակում: Ծառայությունն անցել է Մոնղոլիայի Հանրապետության Չիտա քաղաքում: Մասնակցել է Արցախյան առաջին պատերազմին: Գերազանց տիրապետում էր աղրբեջաներենին և հմուտ հետախույզ էր: Ավոյի՝ Մոնթե Մելքոնյանի աչքերն ու ականջներն էր

[1] https://aparaj.am/voske-artciv-shkhanshanakir-arthur-aghasyan/

[2] Հարցազրույց Վեներա Սուլեյմանյանի և Բորիկ Բաղդասարյանի ընտանիքի անդամների հետ, Մարտունի, 2021:

[3] Նույն տեղում:

[4] Հարցազրույց Միեր Մկրտչյանի դուստր Անի Մկրտչյանի հետ:

դարձել, թիկունքն ու զինակից ընկերը: Մասնակցել է Ապրիլյան պատերազմին և արժանացել «Արիության» մեդալի:

2020 թ. սեպտեմբերին կամավորագրվել և մեկնել էր մարտի դաշտ: Մասնակցել էր մի շարք մարտական գործողությունների: Սակայն հոկտեմբերի 22-ին՝ Մաճկալաշենի պաշտպանության ժամանակ, «Խազազի յալում» անմահացել է նաև Ռաֆիկ Խաչատրյանը: Ռաֆիկի մարմինը գտնվեց նոյեմբերի 20-ին, իր սեփական մեքենայից քիչ հեռու: ԴՆԹ հետազոտությունից հետո՝ հունվարի 10-ին, Ռաֆիկ Խաչատրյանին հուղարկավորեցին Մարտունու գերեզմանատանը՝ Արցախյան առաջին պատերազմում զոհված եղբոր՝ Ռուդիկի կողքին: Հետմահու արժանացել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի[1]:

Հայրենիքին իր կյանքն է տվել նաև Իգոր Զորիկի Բաբայանը: Նա ծնվել է 1973 թ. փետրվարի 7-ին, ԱՀ Մարտունի քաղաքում: 1988 թ. ընդունվել է Բելառուսի ռազմական ինստիտուտը, որտեղ սովորել է 3 ամիս: Երբ սկսվում է Արցախյան շարժումը, Իգորը, ծնողների կամքին հակառակ, վերադառնում է հայրենիք և մասնակցում Արցախյան առաջին պատերազմին:

2020 թ. սեպտեմբերի 27-ին թշնամու կողմից սանձազերծված պատերազմին Իգոր Բաբայանը միանում է առաջին իսկ րոպեներից: Ոչնչացնելով թշնամու մեծաքանակ կենդանի ուժ՝ հոկտեմբերի 26-ին Շեխեր գյուղի մատույցներում քաջի մահով ընկնում է նաև Իգոր Բաբայանը: Հուղարկավորվել է դեկտեմբերի 4-ին, Մարտունու գերեզմանատանը: Հետմահու պարգևատրվել է «Արիության» և «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշաններով[2]:

Կապիտան Արա Վլադիմիրի Բալայանը ծնվել է 1976 թ. դեկտեմբերի 23-ին, ԱՀ Մարտունի քաղաքում: 1994-97 թթ. պարտադիր զինվորական ծառայության է անցել ԱՀ ՊԲ-ի Մատաղիսի զորամասում: 2004 թ. ծառայության է անցել ԱՀ ՊԲ-ի 2-րդ ՊՇ-ում՝ որպես տանկային վաշտի հրամանատարի տեղակալ: Այնուհետև տեղափոխվել է ԱՀ ՊԲ-ի 6-րդ ՊՇ: 2016 թ., ստանալով կապիտանի կոչում, նշանակվում է տանկային վաշտի հրամանատար:

Նա մասնակցել է Ապրիլյան պատերազմին, այնուհետև Արցախյան երկրորդ պատերազմին: Արայի ջոկատը թեժ մարտեր է մղել Մատաղիսի մատույցներում՝ ճակատային տարբեր հատվածներով: Նոյեմբերի 1-ին թշնամու ԱԹՍ-ի կողմից թիրախավորվում է նաև Արա Բալայանի տանկը: Վիրավոր կապիտանը, սթափ դատելով իրավիճակը, վերցնում է զենքը և շարունակում մարտ վարել, որտեղ էլ ընկնում է քաջի մահով՝ թշնամու մահացու հրազենային կրակոցից: Արա Բալայանը հուղարկավորվել է 2021թ. հունվարի 25-ին, Մարտունու գերեզմանատանը: Հետմահու արժանացել է «Մարտական ծառայություն» և «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշաններին[3]:

Ազատամարտիկ Նվեր Հենրիկի Աբրահամյանը ծնվել է 1974 թ. մայիսի 29-ին, ԱՀ Մարտունի քաղաքում: 14 տարեկան էր, երբ սկսվեց Արցախյան առաջին պատերազմը: Սկզբում ընկերների հետ հերթապահում էր ճանապարհներին և հսկում Մարտունու ծայրամասերը: Այնուհետև, մտնելով ինքնապաշտպանության ջոկատ, մարտնչում էր ավագ եղբոր՝ Միհրի հետ: 1991 թ. վերջերից մասնակցել է առաջին ազատագրական գործողություններին: Նա մասնակցում էր այն հրետանային կետերի ոչնչացմանը, որտեղից հրետակոծվում էր Մարտունին: Ապա դարձել էր ինքնապաշտպանության ջոկատներից մեկի հրամանատարը: Մարտերից մեկում Նվերը գլխից ծանր վիրավորվեց, բայց վերքերը հազիվ բուժելով՝ դարձյալ վերադարձավ ճակատ: Կռիվներին մասնակցել է Մարտունու շրջանում, Սարսանգի շրջակայքում, Քարվաճառում (Քելբաջար), Կովսականում (Կուբաթլու), Մարտակերտում, Օմարում: Արցախյան առաջին պատերազմում զոհվեց եղբայրը՝ Միհր Աբրահամյանը:

Նվեր Աբրահամյանը մասնակցել է նաև Ապրիլյան պատերազմին, այնուհետև Արցախյան երկրորդ պատերազմին: Հոկտեմբերի 2-ից անհետ կորած էր համարվում Նվերի որդին՝ Միհրը: Նոյեմբերի 3-ին, Միհրին այդպես էլ չգտած, Մարտունու պաշտպանության ժամանակ զոհվել է

[1] Հարցազրույց Վեներա Սուլեյմանյանի և Բորիկ Բաղդասարյանի ընտանիքի անդամների հետ, Մարտունի, 2021:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

Նվեր Աբրահամյանը: Հուղարկավորվել է Մարտունու գերեզմանատանը: Հետմահու արժանացել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանին[1]:

Մարտունեցի Շիրազ Աշոտի Ուլուբաբյանը ծնվել է 1972 թ. սեպտեմբերի 1-ին, ԱՀ Մարտունի քաղաքում: Նա բանակում չէր ծառայել, քանի որ շուտ էր ամուսնացել և 2 որդիների հայր էր: Բայց այդ փաստը չէր կարող նրան ետ պահել հայրենիքի պաշտպանության գործից: Ալենը՝ ավագ որդին, ծառայում էր ՊԲ շարքերում: Մինչև նոյեմբերի 2-ը հայր ու որդի միասին ծառայում էին հանուն հայրենիքի: Սակայն նոյեմբերի 3-ին Մարտունու «Գյադուկ» կոչվող տեղամասում թշնամու հրթիռակոծության հետևանքով զոհվեց Շիրազ Ուլուբաբյանը՝ կնոջ ծննդյան օրը: Շիրազ Ուլուբաբյանի աճյունն ամփոփված է Եռաբլուր զինվորական պանթեոնում: Հետմահու արժանացել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի[2]:

Հայրենիքի նվիրյալ Սեյրան Յուրիի Առստամյանը ծնվել է 1973 թ. ապրիլի 3-ին, ԱՀ Մարտունի քաղաքում: 1991 թ. զորակոչվել է ԽՍՀՄ բանակի շարքերը: 1992 թ. ծնողներն այդպես էլ չիմացան, թե ինչպես հաջողվեց Սեյրանին թողնել ծառայությունը կիսատ և վերադառնալ Արցախ: Արցախյան առաջին պատերազմի ակտիվ մասնակից էր Սեյրան Առստամյանը: Պաշտպանում էր Ղուրուչուխ բարձունքը, որտեղ էլ ստացել է ծանր վիրավորում: Սակայն փոքր-ինչ ապաքինվելուց հետո վերադառձել է նույն դիրքը՝ երկրորդ կարգի հաշմանդամություն ստացած: Սեյրան Առստամյանը մասնակցել է նաև քառօրյա պատերազմին:

Արցախյան երկրորդ պատերազմի օրերին մասնակցել է մի շարք մարտական գործողությունների: Ցավոք, վերջին մարտական գործողության ժամանակ օգնության հասնելով վիրավոր ընկերոջը և պաշտպանելով Մարտունու կարևորագույն բարձունքներից մեկը՝ «Կոհակը»՝ անմահացել է դիպուկահարի կրակոցից: Սեյրան Առստամյանի աճյունը ամփոփված է Եռաբլուր զինվորական պանթեոնում: Հետմահու արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի[3] :

Հերոսություններով աչքի է ընկել նաև Օնիկ Ջամբուլաթի Հովսեփյանը,որը ծնվել է 1989 թ. հունվարի 1-ին, ԱՀ Մարտունի քաղաքում: Կիսատ թողնելով ուսումը՝ անցել է պարտադիր ժամկետային ծառայության, որի ընթացքում արժանացել է մի շարք գովասանագրերի: Մասնակցել է Ապրիլյան պատերազմին: Երբ սկսվել է Արցախյան երկրորդ պատերազմը, Օնիկը կրկին իր տեղում էր: Նա փրկել է բազմաթիվ վիրավորների՝ անգամ ամենաթեժ պահերին հանելով նրանց մարտադաշտից, և արտահերթ կրակոցների ներքո նրանց հասցրել հիվանդանոց:

Նոյեմբերի 9-ին՝ Մարտունու ուղղությամբ հարձակման վերջին օրը, զանգեցին, և Օնիկն ու ընկերները շտապեցին դիրքեր: Երբ լուր ստացան, որ ընկերներից Սեյրանը վիրավոր է, և տղաների օգնությունն է պետք, Օնիկն առանց երկմտելու գնաց փրկելու վիրավոր ընկերոջը: Երբ շտապում էր Սեյրանին օգնելու, ընկերներից Սլավիկը՝ դեմքի շրջանում լուրջ վիրավորում ստացած, դեպի իրեն էր գլորվում: Վերջինս տարբեր շարժումներով փորձում էր Օնիկին հասկացնել, որ մոտ չգնա, քանի որ վտանգավոր է, սակայն Օնիկը, իր բնույթին համաձայն, հասավ ընկերոջը, բռնեց ձեռքը ու այդ նույն պահին էլ անմահացավ դավադիր թշնամու դիպուկահարի կրակոցից: Օնիկ Հովսեփյանի աճյունը ամփոփված է Եռաբլուր զինվորական պանթեոնում: Հետմահու արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի[4]:

Երեք պատերազմների մասնակից Լեոնիկ Էդուարդի Օհանյանը ծնվել է 1967 թ. մայիսի 6-ին, ԱՀ Մարտունի քաղաքում: 1985-87 թթ. ծառայել է ԽՍՀՄ բանակի շարքերում: Արցախյան առաջին պատերազմի մասնակից էր, պատերազմի ընթացքում վիրավորվել էր, սակայն ապաքինվելուց հետո նորից շարք էր վերադարձել: Պարգևատրվել էր «Արիության» մեդալով: Մասնակցել էր Ապրիլյան պատերազմին: Արցախյան երկրորդ պատերազմի հենց առաջին օրը անդամագրվել է

[1] https://www.1tv.am/hy/video/

[2] Հարցազրույց Վեներա Սուլեյմանյանի և Բորիկ Բաղդասարյանի ընտանիքի անդամների հետ, Մարտունի, 2021:

[3] Հարցազրույց Վեներա Սուլեյմանյանի և Բորիկ Բաղդասարյանի ընտանիքի անդամների հետ, Մարտունի, 2021:

[4] Նույն տեղում:

աշխարհազորի գումարտակին: Մասնակցել է Մարտունու պաշտպանությանը: Նոյեմբերի 9-ին՝ հերթափոխի ժամանակ, Կարվինի հարակից տարածքում ռազմական կործանիչի հարվածից մարտիրոսվեց նաև Լեոնիկ Օհանյանը: Հուղարկավորված է Մարտունու գերեզմանատանը: Հետմահու արժանացել է ԱՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի[1]:

Այսպիսով, կարելի է ընդգծել, որ մարտունեցիներն իրենց ավանդն են ունեցել Արցախի պաշտպանության գործում:

[1] Նույն տեղում:

ՀՏԴ 314,1

Davit Serobyan
American University of Armenia
Instructor: Dr. Vahram Ter-Matevosyan

TURKISH IDENTITY AND THE DENIAL OF ARMENIAN GENOCIDE

Key words: genocide, identity, denial, Turkism.

The process of national construction in the 1920s was carried out by forming a new identity, which played a huge role in determining any aspect of political and social life in the recently proclaimed Turkish Republic. Many reasons why Turkey continues to deny the Genocide are primarily related to the understanding of history, the place of other nations in this history and, most importantly, Turkish identity. In this process, education was used as the main tool for the formation of a new Turkish history, in which there was no place for events that humiliated the Turkish people, such as the Genocide. In general, the denial of the Armenian Genocide and the characteristics of Turkish identity are interconnected. This article aims to reveal some aspects of Turkish identity, such as Turkism and Turkish exclusivity, which are reflected in the official position of the policy of denial. It argues that the glorification of Turkism is an integral part of Turkish identity, which eliminates the notion that Turks can commit any kind of genocide.

Դավիթ Սերոբյան

ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՒՄԸ

Բանալի բառեր: *ցեղասպանություն, ինքնություն, ժխտողականություն, թուրքիզմ:*

1920-ական թվականների ազգաշինության գործընթացն իրականացվում էր նոր ինքնության ձևավորմամբ, որը հսկայական դեր է խաղացել ներահոչակ Թուրքիայի Հանրապետության քաղաքական և սոցիալական կյանքի բոլոր բնագավառում: Պատճառներից մեկը, թե ինչու է Թուրքիան շարունակաբար ժխտում ցեղասպանությունը, առաջին հերթին կապված է պատմության ըմբռնման, այդ պատմության մեջ այլ ազգերի դիրքի և ամենակարևորը թուրքական ինքնության հետ: Այս գործընթացում կրթությունն օգտագործվել է որպես հիմնական գործիք՝ կերտելու թուրքական նոր պատմություն, որտեղ տեղ չունեին թուրք ազգին նվաստացնող իրադարձությունները, ինչպիսին է Ցեղասպանությունը: Ընդհանուր առմամբ, Հայոց ցեղասպանության ժխտումը և թուրքական ինքնության որոշ առանձնահատկություններ փոխկապակցված են: Այս հոդվածը նպատակ ունի բացահայտելու թուրքական ինքնության որոշ ասպեկտներ, ինչպիսիք են թուրքիզմը և թուրքական բացառիկությունը, որոնք արտացոլված են ժխտողական քաղաքականության պաշտոնական դիրքորոշման մեջ: Այս հոդվածը պնդում է, որ թուրքիզմը թուրքական ինքնության անբաժանելի մասն է, որը բացառում է այն գաղափարը, որ թուրքերը կարող էին ցեղասպանություն գործել:

Давид Серобян

ТУРЕЦКАЯ ИДЕНТИЧНОСТЬ И ОТРИЦАНИЕ ГЕНОЦИДА АРМЯН

Ключевые слова: *геноцид, идентичность, отрицание, тюркизм.*

Процесс национального строительства в 1920-х годах осуществлялся путем формирования новой идентичности, которая играла огромную роль в определении любого аспекта политической и социальной жизни в недавно провозглашенной Турецкой Республике. Многие причины, по которым Турция продолжает отрицать Геноцид, в первую очередь связаны с пониманием истории, места других народов в этой истории и, самое главное, с турецкой идентичностью. В этом процессе образование использовалось как основной инструмент для формирования новой турецкой истории, в которой не было места событиям, унижающим турецкий народ, таким как Геноцид. В целом, отрицание Геноцида армян и характеристики турецкой идентичности взаимосвязаны. Эта статья направлена на раскрытие некоторых аспектов турецкой идентичности, таких как тюркизм и турецкая исключительность,

которые отражены в официальной позиции политики отрицания. В нем утверждается, что прославление тюркизма является неотъемлемой частью турецкой идентичности, что исключает представление о том, что турки могут совершить какой-либо геноцид.

The nation-building process in the 1920s was carried out by shaping a new identity that played a huge role in determining any aspect of political and social life in the newly proclaimed Republic of Turkey. Many reasons why Turkey keeps denying the Genocide largely have to do with the understanding of history, the place of other nations in that history, and most importantly Turkish identity. Since the declaration of independence, the Republic of Armenia was determined to stand in support of the international recognition of the Genocide which became one of the main reasons to keep the Armenian-Turkish border close (Supreme Council of Armenia, 1990). Nevertheless, after President Erdogan offered condolences for the mass killings of Armenians in the Ottoman Empire calling it a 'shared pain' in 2014 (BBC, 2014) it seemed Turkish stance could be softened on this issue leading to the improvement of Armenian-Turkish relations. However, in the next year, the government of Turkey shifted the remembrance day of the Gallipoli Campaign from 18 March to April 24 the commemoration day of the victims of the Armenian Genocide to distract the attention of the international community from the centennial of the Genocide that Armenians were about to commemorate (Aybak, 2016, 135). This paper aims at revealing some aspects of Turkish identity like Turkism and Turkish exceptionalism that is reflected in the official stance of the denial policy. The research question of this paper is: What is the role of Turkish identity in the denial policy of the Armenian Genocide? This paper argues that the glorification of Turkism is an integral part of Turkish identity that excludes the notion that Turks could commit genocide.

Turkism the glorification of the Turkish nation and racial components superiority of Turks over other nations are the integral parts of Turkish identity (Xypolia, 2016, 111). One of the main objectives of the nation-building in Turkey was to make citizens out of subjects and spread patriotism in them in order to get rid of a mass disappointment for territorial losses of the Ottoman Empire after the truce in Mudros (Zürcher, 2014, 136). However, the territorial losses and the fear that Turkey could lose more territories (Sèvres Syndrome) (Libaridian, 2021, 227) generated revanchism and nationalism over years in Turkey not only towards external forces but also within Turkey towards ethnic minorities. Since the establishment of the Republic Kemalists launched a process of building a new identity in which Turkism and racial components dominate (Xypolia 2016, 114). This is evident even in the name of the republic. Turkey is a multiethnic country. Kemalists could have named the newly proclaimed Republic Turkiyeli which has territorial meaning embracing all ethnicities equally, but it was named Turkey that is an ethnic identifier and excludes other ethnicities (Oran, cited in Brennan, S & Herzog, 2014, 35). In other words, they called it the republic of Turks. Racialization is also reflected in the sixty-sixth article of the current Constitution of Turkey that states all citizens of Turkey are considered Turks (UNHCR, 1982). The newly proclaimed Republic also experienced demographic change where the Turkish population became the majority for the first time (Zürcher, 2014, 140). Armenians among other Christian communities were given only the status of a religious minority mostly to get rid of Armenian identity and accelerate Turkification of these communities (Libaridian, 2021, 301). The gradual racialization of Turkish identity and discriminations against minorities led to the Kurdish insurgency and violence in the 1970s and the mass mobilization of Kurds around the Kurdish Party (Tezcür, 2015, 7, 11). However, the nation-building process and reshaping of Turkish identity by Kemalists are mutually related. Kemalists reshaped the understanding of their identity based on Turkism and the glorification of Turkish history where other ethnicities have an inferior status that over years led to hardening the stance of the Turkish government on any issue related to other ethnicities.

The second factor of denial is the idea of Turkish exceptionalism and a self-centered understanding of history. In one of his speeches, Erdogan accused China, Serbia, and Israel of committing genocides but defended Omar Al-Bashir, former president of Sudan accused of committing a crime against humanity by the International Criminal Court, saying Muslims are incapable of committing genocide (Aybak, 2016, 133). In his article published in 2014, Ahmet Davutoğlu former Prime Minister of Turkey argues that Ottoman Empire did not suppress Armenian identity and even promoted many Armenians to high positions. He goes even further accusing Armenia of distorting 'just history' and 'just memory' taking the Turkish position of the history of the Ottoman Empire for granted (Davutoğlu, 2014). These statements of Turkish leadership largely have to do with the idea of Turkish exceptionalism that in its turn is based on the Turkish History thesis. This thesis suggests that Turks are an ancient and great race (Çağaptay, 2002, 69). According to it, many European states were originated after the Great Migration that took place from Central Asia the homeland of Turks to Europe

setting the foundation of Western civilization (Xypolia, 2016, 116). Glorification of Turkish nation and history based on Turkish History Thesis excludes the notion that this ancient race could commit genocide. Even though Erdogan shared his condolences for the mass killings of Armenians in the Ottoman Empire he did not accuse Young Turks for the crime, but The War saying that both Turks and Armenians suffered greatly and equally because of The First World War.

Since the proclamation of the Republic Turkish leadership worked hard to eliminate the Armenian Genocide from the political memory of the country (Üngör, 2014, 157). According to Üngör the most important tool Kemalists used in shaping Turkish identity was education. They removed any event from Ottoman History that could humiliate or weaken the identity Kemalists were so eager to instill and the Armenian Genocide was among those events (Üngör, 2014, 150-154). Although Turkish leadership tried to bury the Genocide once and for all denying all the evidence of it, there is a fact that Armenians became deprived of the homeland they had been living in for thousands of years and there must be a reason for that (Libaridian, 2021, 302-303). State control of education shaped a new history in the imagination of the young Turkish generation where the Genocide does not exist. However, the refusal of the international recognition of the Genocide has been one of the conditions for Turkey to start diplomatic affairs with Armenia. Whereas it is the redline for the Armenian government and one of the main objectives fixed by in the declaration of independence of Armenia.

All in all, the denial of the Armenian Genocide and the characteristics of Turkish identity are mutually related. The nation-building in Turkey ended up with the creation of an identity in which racial components and Turkism dominate warranting the inferior status of other ethnicities. Gradual racialization of Turkish identity caused discrimination and inequality towards other ethnicities leading to protests and even violent insurgencies like in the case of Kurds. The glorification of Turkism and Turkish exceptionalism is an integral part of Turkish identity that gradually eliminated the notion that Turks are capable of committing genocide. In this process, education was used as the main tool to shape a new Turkish history where events humiliating the Turkish nation like the Genocide does not have a place. In this history, Turks are depicted as an ancient and great race, founders of other nations including Western civilization. These ideas eliminated the Armenian Genocide from the political memory of Turkey and set the foundations of the denial policy for the future governments.

References

1. Aybak, T. (2016). *Geopolitics of denial: Turkish state's 'Armenian problem.'* Journal of Balkan and Near Eastern Studies, 18(2), 125–144.
2. BBC. (2014, April 23). *Turkey offers condolences to Armenia over WWI killings*. BBC News.
3. Brennan, S & Herzog, M. (2014). *Turkey and the politics of National Identity: Social, economic and cultural transformation.* I.B. Tauris.
4. Çağaptay, S. (2002) *Reconfiguring the Turkish nation in the 1930s,* Nationalism and Ethnic Politics, 8:2, 67-82
5. Davutoğlu A. (2014). *Turkish-Armenian Relations in the Process of De-Ottomanization or "Dehistoricization": Is a "Just Memory" Possible?* Turkish Policy Quarterly.
6. Libaridian, G. (2021). *Hayastan-Turkia: petakanutyun, patmutyun, qaxaqakanutyun]; Armenia-Turkey: statehood, history, politics*. Antares
7. Tezcür G. M. (2015) *Violence and nationalist mobilization: the onset of the Kurdish insurgency in Turkey,* Nationalities Papers, 43:2, 248-266
8. The Supreme Council of the Armenian Soviet Socialist Republic. (1990, August 23). *About Armenia - Armenian Declaration of Independence* - The Government of the Republic of Armenia.
9. UNHCR. (7 November, 1982). *Constitution of the Republic of Turkey.* UNHCR.
10. Üngör U. (2014) *Lost in commemoration: The Armenian genocide in memory and identity,* Patterns of Prejudice, 48:2, 147-166
11. Xypolia I. (2016) *Racist Aspects of Modern Turkish Nationalism,* Journal of Balkan and Near Eastern Studies, 18:2, 111-124
12. Zürcher E. J. (2014). *Young turk legacy and nation building, the: From the Ottoman Empire to atatürk's Turkey*. I.B. Tauris.

Բովանդակություն

Բանասիրություն

Մարիամ Ամիրխանյան
ԼԵԶՎԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՀԵՆ ՄՈՏԵՑՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑՈՒՄ..... 3

1. *Մարթա Աղաջանյան*
ԿՆՈՋ ՆԵՐԱՇԽԱՐՀԻ ՀԱՐԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՄԱՄԻՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ..... 12

2. *Դիանա Կասյան*
ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՍԱՊԱՏՃԵՆՈՒՄՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԱՄՈՒԼՈՒՄ..... 18

3. Էլեոնորա Պետրոսյան
ԴԱՍԱԿԱՆ ՊՈԵԶԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՐԳՈՒ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ..... 23

4. *Գայանե Միրզոյան*
ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ՄՈՒՐԱՅԱՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐԸ «ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ՄԻԱՆՁՆՈՒՀԻ» ՎԻՊԱԿՈՒՄ..... 28

5. *Էդիտա Հալաջյան*
«ՈՒՐԻՇԻ ՀԱՄԱՐ ՖՈՍ ՓՈՐՈՂԸ ԻՆՔԸ ԿԸՆԿՆԻ ՄԵՋԸ» ՀԵՔԻԱԹԻ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԵՐԹԱԳԱՅՈՒՄՆԵՐԸ..... 36

6. *Աննա Դավթյան*
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՊԱՏՄԱՎԵՊԵՐՈՒՄ..... 41

7. *Միրանուշ Ադամյան*
ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱԿԱՀԱՅ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ..... 48

8. *Հովհաննես Սարգսյան*
ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ՍԻՍԱԿԱՆ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 54

9. *Մելանյա Թևոսյան*
ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆԻ «ԲԻԲԼԻԱԿԱՆ ՄՈՏԻՎՆԵՐ» ՇԱՐՔՈՒՄ..... 59

10. *Մելինե Սարգսյան*
"REUTERS" ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ..... 65

11. *Ռուզաննա Բեգլարյան*
ԿՈՐՈՒՍՅԱԼ ԳՅՈՒՂԱՇԽԱՐՀԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՀԱԿՈԲ ՄՆՁՈՒՐՈՒ ԱՐՁԱԿՈՒՄ..... 69

12. *Սոնա Մուսայելյան*
ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ-ՄՈՌԱՑՈՒԹՅՈՒՆ-ՊԱՅՔԱՐ ԿՈՆՑԵՊՑԻԱՆ ԷԼԻՖ ՇԱՖԱՔԻ «ՍՏԱՄԲՈՒԼԻ ԲԻՃԸ» ՎԵՊՈՒՄ..... 74

13. *Ստելլա Շահինյան*
ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՕՎԻԴԻՈՒՍԻՑ ՄԻՆՉԵՎ ԿԱՖԿԱ)..... 80

14. *Վոլա Արզումանյան*
ԱԲՍՈՒՐԴԻ ԴՐԱՄԱՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ..... 86

Պատմություն և քաղաքագիտություն

15. *Խաչիկ Աբաջյան*
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ..... 95

16. *Ալինա Վարդանյան*
ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՅՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՅԼԵՐԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ՝ 101

ԸՍՏ «ԿԱՐՄԻՐ ՌԱՇՊԱՐ» ԹԵՐԹԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ
(1926-1928 թթ.)……
Աննա Հարությունյան
ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՅԼԱԽՈՀՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ…… 105
17. *Էլեն Շարոյան*
ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ՀԱՅ ԴԱՏԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԹԵՀՐԱՆԻ «ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ…… 111
18. *Աշխեն Ասրիյան*
ՇՈՒՇԻԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ 1992-2020թթ…… 117
19. *Ջուլիետա Մարգարյան*
ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ…….. 123
20. *Քնարիկ Ջալաթյան*
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ…… 130
21. *Լուսինե Գրիգորյան*
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ՝ ԿԱՊԵԼՈՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐԸ…… 136
22. *Միքայել Բաղալյան*
ԱԶԿ-Ի ՎԵՐԵԼՔԸ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՍԼԱՄԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ…… 141
23. *Sose Simavoryan*
THE INFLUENCE OF SAUDI ARABIAN THINK TANKS ON THE POLICYMAKING PROCEDURES IN THE GULFREGION…… 145
24. *Սյուզաննա Քամալյան*
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿՇՐՋԱՆ…… 151
25. *Ալլա Ծատինյան*
ԳՈՒԳԱՐՔԻՑ ԵՎ ԱՐՑԱԽ-ՈՒՏԻՔԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԵՐԿԱԹԵՂԱՐՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ…… 156
26. *Արմեն Հովսեփյան*
ԱՐՑԱԽԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ…….. 163
27. *Իզաբելլա Սարգսյան*
ՊԱՏԱՐԱ: «ՕԽՏԸ ԵՂՅԻՆ» ՈՐՊԵՍ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿ…… 168
28. *Հայկուշ Արզանյան*
ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ…….. 174
29. *Դավիթ Աքելյան*
ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՇԽԱՐՀԻ ՆՅՈՒՏՈՆՅԱՆ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ…… 181
30. *Հրանուշ Մաթևոսյան*
ՍՅՈՒՆՅԱՑ ՎԱՆՔԵՐՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԸՍՏ ՍՏԵՓԱՆՈՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ.. 189
31. *Լուսինե Ղարիբյան*
ԳԻՇԵՑԻՆԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ…… 195
32. *Նարինե Բավեյան*
ԵՐԱՆՈՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄՈՒՄՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՄ…… 200
33. *Գրիգոր Սարգսյան*
ԻՐԱՆԱ-ՉԻՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ…… 206
34. *Տաթև Սարգսյան*

ՇՈՒՇԻԻ ՋԱՐԴԵՐԸ 102 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՎ ԱՅՍՕՐ..... 213
Կարեն Մարտիրոսյան
«ՃԱՆԱՉՈՒՄ՝ ՀԱՆՈՒՆ ՓՐԿՈՒԹՅԱՆ» ՄԿԶԲՈՒՆՔԻ ԿԻՐԱՌԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 218
35. *Սամվել Հակոբյան*
ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԸՆՏՐԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 225
36. *Պարույր Մարտիրոսյան*
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ..... 230
37. *Արա Սարգսյան*
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՏԱՊԱԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 239

Տնտեսագիտություն

38. *Արևիկ Ավանեսյան*
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ..... 247
39. *Էլեն Մնոյան*
ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ..... 254
40. *Անահիտ Վարդանյան*
ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... 259
41. *Մարիամ Հարությունյան, Շողիկ Հովհաննիսյան*
ՀՀ-ՈՒՄ ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ..... 266
42. *Օֆելյա Մկրտչյան*
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ..... 272
43. *Աննա Ծատուրյան*
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)..... 277
44. *Նարինե Պետրոսյան*
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ՝ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻՑ, ԵՎ ԴՐԱ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ՝ ԻԲՐԵՎ ԳԼՈԲԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽՆԴԻՐ..... 281
45. *Ռոզա Աբրահամյան*
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՓՄՁ) ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 288
46. *Արծրուն Նաջարյան, Հայկ Մարգարյան*
ԱՐԵՎԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԻԶՆԵՍՈՒՄ..... 295
47. *Արեգա Հովհաննիսյան*
ՀՀ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽԹԱՆՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ..... 300
48. *Բաղիկյան Լիլիա*
ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ..... 306
49. *Հակոբ Մանուկյան*
ԵԱՏՄ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ..... 311
50. *Մեղա Քոչարյան*
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ..... 317
51. *Վերոնիկա Հարությունյան*
*ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ*..... 324
52. *Վիլեն Մնացականյան*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ*..... 329
53. *Հռիփսիմե Գաբրիելյան*
*ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՓՈՔՐ ԲԱՑ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)*..... 337
54. *Անուշ Գրիգորյան, Դավիթ Իսկանդարյան*
*ՍՏԱՐՏԱՓ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ՝
ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*..... 346
55. *Լուսինե Դավթյան*
ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ.... 354
56. *Ալլա Սարգսյան*
ԳՆԱՃԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ..... 360
57. *Արմինե Մելրանյան*
ԱՊՐԱՆՔԱՆԻՇԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ..... 367
58. *Մարիամ Դարբինյան*
*ԲԵՌՆԵՐԻ ՈՒՂՂԱԿԻ ԵՎ ՄԻՋՄՈԴԱԼ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ*..... 373
59. *Թամարա Համբարձումյան, Մարիամ Տաշյան*
ԳԵՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ (ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՕՐԻՆԱԿՈՎ)..... 377
60. *Յանա Բեգլարյան*
ԱՀ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ... 384
61. Յուլիա Սարգսյան
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ..... 390
62. *Սաթենիկ Միրաքյան*
ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ..... 396
63. *Տիգրան Դավթյան*
ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ..... 400
64. *Սոնյա Սահակյան*
ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ ԸՍՏ «ԴՈՒԻՆԳ ԲԻԶՆԵՍ» ԶԵԿՈՒՅՑԻ..... 406
65. *Նոննա Հովսեփյան*
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱՆ ԻՆՏԵԳՐԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼ..... 411
66. *Աննա Ավանեսյան*
ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ և ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ..... 449
67. *Գոհար Խաչատրյան*
ՄԱՐՏՈՒՆԵՑԻՆԵՐԸ 44-ՕՐՅԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ..... 478
68. *Դավիթ Սերոբյան*
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԽՏՈՒՄԸ..... *484*

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
(հոդվածների ժողովածու)

SCIENTIFIC READINGS
(collection of articles)

НАУЧНЫЕ ЧТЕНИЯ
(сборник статей)

Տեխնիկական խմբագիր՝ Ռ.Հովսեփյան

Հանձնված է շարվածքի՝ 26.09.2022թ.: Ստորագրված է տպագրության՝ 29.10.2022թ.
Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ; Ծավալը, 60,5 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 100:
Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան,
Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ. (047) 94-04-91, ֆաքս (047) 97-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀ հրատարակչություն՝ հեռ. (097) 34-01-86,
e-mail printery.asu@mail.ru

Основатель – Арцахский государственный университет
г.Степанакерт, ул.Мхитара Гоша 5,
тел. (047) 94-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ: тел. (097) 34-01-86

Founder - Artsakh State University,
5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (047) 94-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house: Tel. (097) 34-01-86